ԶԱՐԻԿ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՉԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՆՈՐՄ ԵՎ ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՐՑԵՐ

ԵՐԵՎԱՆ 2007

ՀՏԴ 809.198.1
ԳՄԴ 81.2Հ
Ա 458

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի հայոց լեզվի ամբիոնի երաշխավորությամբ

Խմբագիր բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Լ. Եզեկյան**

Գրախոս՝ բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Խ. Բադիկյան**

Ուսումնասիրությունը ձևաբանական նորմի ամբողջական քննության, նրա փոփոխության պատճառների բացահայտման փորձ է՝ ձևաբանական նորմով սահմանված օրինաչափությունների վերհանմամբ, դրանցից կատարված, կատարվող շեղումների պարզաբանմամբ, զուգածևություններում, զուգիմաստություններում կողմնորոշվելու նպատակաուղղվածությամբ:

Նախատեսված է ուսուցիչների, աշակերտների, ուսանողների, նաև նրա՛նց համար, ովքեր հետևում են կամ ուզում են հետևել իրենց խոսքին:

Ա $\frac{4602020100}{774\ (01)2007}$ 2007թ. ԳՄԴ 81.2Հ

ISBN 978-99941-0-178-8

© Զարիկ Աղաջանյան, 2007թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ 5

ԼԵԶՎԱԿԱՆ ՆՈՐՄ 9
Համակարգ, նորմ, խոսք 24
Լեզվի նորմավորումը 32

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ-ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՆՈՐՄ 39
Ավանդույթը և ձևաբանական նորմը 46
Խոսակցական լեզուն և ձևաբանական նորմը 54
ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՆՈՐՄԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ 67
Համաբանությունը և ձևաբանական նորմի փոփոխությունը .82
Ստեղծագործական լեզուն և ձևաբանական նորմի փոփոխությունը .88
ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ-ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՇԵՂՈՒՄՆԵՐ 106
ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ-ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱՁԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ 113
ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ-ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ՆՈՐՄ 136
Զուգաձևությունները գոյականական համակարգում 136
Ա. Հոլովական զուգաձևություններ 144
Զուգաձևությունները սեռական-տրական հոլովում 147
Զուգաձևությունները բացառական և գործիական հոլովներում 159
Զուգաձևությունները ներգոյական հոլովում 163
Հնչյունափոխական զուգաձևություններ 165
Բ. Զուգաձևությունները թվի քերականական կարգում 170
Գ. Հատկանվանական զուգաձևություններ 200
Դ. Զուգաձևություններն առկայացման կարգում .223
Ե. Զուգաձևություններն անձի և իրի քերականական կարգում . 233

ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ-ԲԱՅԱԿԱՆ ՆՈՐՄ . 242
ԶՈՒԳԱՁԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՅԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 242
Ա. Բայակազմական-լծորդափոխական զուգաձևություններ . 245
Բ. Բայակազմական-հիմքափոխական զուգաձևություններ 253
Գ. Դերբայական զուգաձևություններ . . 279
Դ. Զուգաձևությունները եղանակային ենթահամակարգում 280
Զուգաձևությունները ժխտական խոնարհման համակարգում 300
Զուգաձևությունները անկանոն բայերի մանրահամակարգում 314
Ե. Կրկնասեռ բայեր 325

Կրկնասեռության արտահայտությունը 338
ա/ Չեզոք // ներգործական մանրակաղապարը 341
բ/ Ներգործական // չեզոք մանրակաղապարը 348
գ/ Կրավորական // չեզոք մնրակաղապարը 350
ՉԵՎԱԲԱՆԱԿԱՆ-ԴԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ ՆՈՐՄ 380
ՇԵՂՈՒՄՆԵՐ ԵՎ ՋՈՒԳԱՋԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ 380
ՉԵՎԱԲԱՆԱԿԱՆ-ԱԾԱԿԱՆԱԿԱՆ ՆՈՐՄ 388
ՇԵՂՈՒՄՆԵՐ ԵՎ ՋՈՒԳԱՋԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ 388
ՉԵՎԱԲԱՆԱԿԱՆ-ԹՎԱԿԱՆԱԿԱՆ ՆՈՐՄ 396
ՇԵՂՈՒՄՆԵՐ ԵՎ ՋՈՒԳԱՋԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ 396
ՉԹԵՔՎՈՂ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԸ ԿԱՆՈՆԱՐԿՈՂ ՉԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՆՈՐՄ 407
ՇԵՂՈՒՄՆԵՐ ԵՎ ՋՈՒԳԱՋԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ 407
ԼԵԶՎԱԿԱՆ ՆՈՐՄ ԵՎ ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ 418
ԼԵԶՎԻ ՆՈՐՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԼԵԶՎԱՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ
ՈՒ ԼԵԶՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 427

Գ Ր Ա Կ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն .445

ՆԱԽԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Յուրաքանչյուր լեզու այն կրող ժողովրդի պատմությունն է, նրա կենսապատումն ու կենդանի հիշատակարանը, հոգևոր ու մտավոր կարողությունների աղբյուր-հայելին:

Լեզուն մարդկային հաղորդակցման կարևոր միջոց է («Առանց լեզվի ոչ անհատը, ոչ էլ ժողովուրդը ի վիճակի չեն իրենց մտքերն ու զգացմունքները հաղորդել ուրիշներին և հատկապես ապագա սերունդներին» /Խ. Աբովյան/):

Լեզուն մտածողության գործիք է («...Լեզվի հետ վարվել մի կերպ՝ նշանակում է նաև մտածել մի կերպ, այսինքն՝ անստույգ, մոտավորապես, ոչ ճիշտ» /Ա. Տոլստոյ/):

Լեզուն ազգապահպանման հզոր գործոն է («Ժողովուրդները գոյատևում են ոչ միայն իրենց հողով, այլև իրենց լեզվով. երբեմն՝ ավելի իրենց լեզվով, քան նույնիսկ հողով» /Պ. Սևակ/). այն կրող ժողովրդի կուլտուրայի արտահայտիչն է («Շքեղ շենքերը, պալատներն ու տաճարներն այնքան ցայտուն կերպով չեն ցոլացնում ժողովրդի կուլտուրան, որքան լեզուն» /Վ. Տերյան/):

Լեզուն ամենակենսունակ և ամուր կապն է ժողովրդի՝ իր դարն ապրածի, ապրող և ապագա սերունդների:

Լեզուն հոգեբանություն է («Ազգայինը նախ և առաջ լեզուն է, որ բառերի կույտ չէ, այլ հոգեբանություն...» /Պ. Սևակ/)

Հայոց լեզուն էլ աշխարհի առաջին բնակիչներից մեկի՝ հայ ժողովրդի լեզուն է՝ անհիշելի ժամանակներից եկած, բազում դարերի ճանապարհ անցած: Այն հայի ինքնությունն է, հայ ժողովրդի կենդանի դեմքը, նրա բոլոր վայրէջքների ու վերելքների վկան, նրա ինքնապաշտպանության զենքն ու պահպանման հզոր գործոնը:

Հայ ժողովրդի տնտեսական-քաղաքական, հասարակական պայքարի, ներքին կյանքի ու զարգացման պատկերը կարելի է տեսնել հայոց լեզվի պատմության մեջ: Մարդն անհետացել է, բայց նրա ստեղծած բառը մնացել է իբրև անմահ ու անսպառ գանձարան. լեզվի յուրաքանչյուր բառը, նրա յուրաքանչյուր ձևը արդյունք է մտքի ու զգացմունքի: Հիշենք թումանյանական՝ բազմիցս կրկնված ու

«մաշված», բայց դրանով իսկ բյուրեղացած տողերը. «Հասկացող ու կիրք ճաշակի տեր մարդկանց մնում է խոսելիս թե գրելիս, փոխ առնելիս թե թարգմանելիս զգույշ լինել ու բարեխիղճ, որովհետև ամեն մի հնչյուն, ամեն մի բառ, ամեն մի ձև կամ ոճ մի մեծ ստեղծագործություն է ու մի ամբողջ աշխարհք» (Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ 4, էջ 375, 1951):

Քանի՜ անգամ է մեզնից յուրաքանչյուրն իր առջև հարց դրել՝ ինչպե՞ս ավելի լավ գրել, ճիշտ խոսել, մտքերը ճիշտ արտահայտել, ի՞նչ բառերով և խոսքերով զգացմունքների մասին գրել ու պատմել:

Այսօրինակ հարցերի պատասխանները գտնելու ընթացքում մեզ օգնում է լեզուն, այն, որն ամեն վայրկյան գործածում ենք, երբ խոսում ենք, երբ սովորում ենք, երբ վիճում ենք ու բանավիճում, հայտարարություն ու դիմում ենք գրում, երբ պատրաստվում ենք ելույթի միտինգներում կամ հեռուստատեսությամբ. նրանով են գրվում սիրային նամակներն ու վեպերը, նրանով են գրում մեր սիրելի գրողները: Գրական լեզուն ուսուցանում են դպրոցում, նրանով խոսում են թատրոնում, պաշտոնական հանդիպումների ժամանակ. այդ լեզուն հնչում է հայի շուրթերից հայի ընտանիքում:

Բայց տարբեր ձևով են գրվում վեպերն ու գիտական հոդվածները, հաշվետվությունն ու անձնական նամակը, տարբեր ձևերով են պատմում աշխարհի անցուդարձից ու ծիծաղաշարժ դեպքերի մասին: Հմուտ, փորձառու ճարտասանը տնային տնտեսուհիների առջև այլ կերպ է ելույթ ունենում, ուսանողների առջև այ՛լ կերպ: Սակայն բոլոր դեպքերում լիրիկական բանաստեղծությունն ու ատենախոսությունը, ամբիոնից ասված ելույթը, խնջույքի սեղանի բաժակաճառը, թերթի խրոնիկական պատկերը, իրենց տարբերություններով հանդերձ, գրվում կամ ասվում են գրական լեզվի շրջանակներում՝ համապատասխան այդ լեզվի՝ բոլորի կողմից ճանաչված և միակը հանդիսացող լեզվական նորմի[1]: Նորմը հսկում ու կասեցնում

---

[1] «Նորմա» բառը լատիներեն է և նշանակում է «առաջնորդող սկզբունք», «կարգ», «նմուշ», նաև՝ «կանոն», «օրենք» գիտության որևէ բնագավառում:

Նկատելի է տերմինաբանության անմիօրինակություն. լեզվաբանական գրականության մեջ «նորմա»-ին զուգահեռ շատ հաճախ օգտագործվում է «կա-

է լեզվում մշտապես տեղի ունեցող փոփոխությունները, լեզվական միասնությունն է ապահովում սերնդափոխության ընթացքում և կամուրջ դառնում լեզվի դարեդար անցումին:

Դեռևս մ. թ. ա. 4-րդ դարի վերջերին Հին Հունաստանում արդեն կարևորվել են լեզվի նորմավորման հարցերը, լեզվական հետազոտությունների առանցքում հատկապես քերականությունն է հայտնվել. ալեքսանդրյան դպրոցի ներկայացուցիչներն առավելապես լեզվական միջոցների ընտրության և օգտագործման կանոններին են ուշադրություն դարձրել, և ալեքսանդրյան քերականությունն է ընկած հետագա անտիկ և եվրոպական քերականությունների հիմքում: Սա նշանակում է, որ հասարակությունն իր զարգացման ճանապարհին անտարբեր չի մնացել լեզվի նկատմամբ, այսպես թե այնպես դրսևորել է իր վերաբերմունքը, և տարերայնորեն, ենթագիտակցաբար, երբեմն էլ գիտակցաբար կանոնակարգվել է լեզուն, կենսագործվել են որոշակի հայացքներ նրա «ճշտության» վերաբերյալ: Ազգի ներսում հաղորդակցության դերի բարձրացմամբ, այլ ժողովուրդների հետ հարաբերությունների ծավալմամբ, տարբեր բարբառների ներկայացուցիչների՝ միմյանց հասկանալու անհրաժեշտությամբ մշակվել է բոլորին վերաբերող լեզվական նորմ: Լեզվական նորմն իր բարձրագույն ձևն ստանում է ազգային գրական լեզվի նորմում (այն, ինչ ճիշտ է լեզվական նորմի տեսանկյունից, կարող է ընդունելի չհամարվել ազգային լեզվի գրական նորմում):

Երկարատև ճանապարհ անցած հայերենը միատարր լինել չի կարող. այն տարբերվում է վայրից վայր, բնագավառից բնագավառ, անհատից անհատ: Եթե հաշվի առնենք, որ այն նաև հնագիր լեզու է, ապա հիշյալ տարբերակներին ևս կգումարվեն բանավոր և գրավոր խոսքի տարբերակները: Գրական նորմավորված խոսքի կողքին մեծ թիվ են կազմում խոսքի՝ հարկ եղած չափով չնորմավորված դրսևորումները: Ժամանակակից հայերենը դեռևս աչքի է ընկնում բարբառային տարբերություններով. բարբառները խանգարում են համընդհանուր հաղորդակցման իրականացմանը, գրական լեզվի

նոն» բառը, երբեմն՝ «նորմ»-ը, «բնականոն»-ը, առաջարկվում է նաև «չափակարգ»-ը:

Նորմա//նորմ զուգածևությունում, ըստ «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատուի», առանց ա-ի ձևն է հանձնարարվում (տես՝ 115, էջ 120) :

տարածմանն ու նորմավորմանը, գրավոր և բանավոր խոսքերի տարբերությունների հաղթահարմանը: Առօրյա-խոսակցական լեզուն հաճախ հանդես է բերում ոչ միայն ոճական բնական տարբերություններ, այլև բարբառային գծեր:

Ամեն մի գրավոր լեզու դեռևս գրական լեզու չէ: Այդպիսին դառնալու համար այն պետք է մշակվի, նորմավորվի: Գրական լեզվի բառապաշարն առնվում է տվյալ ժողովրդի բառագանձարանից հատուկ ընտրությամբ, բառերի իմաստներն ու գործածության շրջանակները հստակ կերպով որոշվում են, ստեղծվում են մասնագիտական բառերի ու տերմինների (եզրույթների) ծավալուն համակարգեր, ուղղագրությունն ու ուղղախոսությունը կարգավորվում են հատուկ կանոններով, բառակազմությունն ու քերականական ձևերն ըստ հնարավորին միասնականացվում են որոշակի կաղապարների ու օրինակելի նմուշների հիման վրա:

Որքան հին է լեզուն, որքան հարուստ է լեզուն, որքան զարգացած է լեզուն, այնքան բարդ է նրա նորմավորման գործընթացը: Հնավանդ, հարուստ ու զարգացած հայերենի նորմավորումն էլ ավելի է դժվարանում, քանի որ այն աչքի է ընկնում ճոխ բառագանձով և ձևամիջոցների առատությամբ: Նորմավորման ժամանակ էլ առաջ են գալիս լեզվի տարբերակվածության բարդ հարցերը: Միանգամայն իրավացի է Պարույր Սևակը, երբ գրում է. «Եթե գրագետ լինելը դժվար է ընդհանրապես, ապա քառակի դժվար է գրագետ լինել հայերենից, որովհետև հայոց լեզուն լավ իմանալ՝ նշանակում է տիրապետել չորս լեզվի (գրաբար, միջին հայերեն, արևմտահայերեն, արևելահայերեն): Եվ եթե սրան էլ ավելացնենք, որ հայերենն ունի ավելի քան 60 բարբառ, որոնցից շատերն իրարից ավելի են հեռու, քան ռուսերենը ուկրաիներենից, և իմ մայրենի բարբառը գրական հայերենին մոտիկ է այնքան, որքան չեխերենը՝ ռուսերենին, ապա կուրվագծվեն հայերենը տիրապետելու դժվարության սահմանները»...

ԼԵԶՎԱԿԱՆ ՆՈՐՄ

Կենդանի լեզուն գրավորի փոխանցվելու պահից արդեն կարիք ուներ նորմավորման, կանոնարկման:

Գրական լեզուն խոսքի մշակույթի հիմքն է, ազգային լեզվի կատարելագործման բարձրագույն աստիճանը, որին լեզուն հասնում է **նորմավորման** (**կանոնավորման, կանոնակարգման, բնականոնացման**) ճանապարհով: Երբ խոսում ենք ժամանակակից գրական լեզվի մասին, անպայմանորեն ընդգծում ենք, որ այն նորմավորված լեզու է: Բայց **նորմ** հասկացության հարցում լեզվաբանները միակարծիք չեն: Վերջին ժամանակներում տարբերակվում են **ազգային լեզվի նորմ** և **գրական լեզվի նորմ** հասկացությունները: Ազգային լեզվի նորմը տվյալ ազգի լեզվական համակարգի իրացումների որոշակի ամբողջությունն է՝ լեզվի զարգացման տվյալ շրջանում հասարակության կողմից ընդունված և որպես ճիշտ, օրինակելի ճանաչված: Կամ ավելի կարճ՝ հասարակության խոսքային գործընթացում մարդկանց կողմից ընդունված կանոնների ամբողջությունն է՝ արտասանական, քերականական, բառագործածական: Ավելացնենք, որ ազգային լեզվի գրական նորմը ձևավորվում է ոչ թե տարերայնորեն, այլ բխում է նրա զարգացման էությունից: Հատկապես գիտական վերլուծությունն է դառնում հիմնական չափանիշը լեզվի այս կամ այն միավորի, այս կամ այն տարբերակի ընտրության հարցում:

Նորմավորումը, կանոնարկումը լեզվի գործածության կանոնների գիտակցական կարգավորումն է նորմատիվ բառարանների, ուղեցույցների, քերականությունների հրատարակման ճանապարհով: Նորմավորումը ավելի կամ պակաս չափով գործող նորմերի նկարագրությունն է:

Ազգային գրական լեզվի ձևավորմամբ նորմը ընդունելի է դառնում հասարակության կողմից՝ պայմանավորված գրականության ազդեցությամբ, լեզվի գիտական ուսումնասիրությամբ, գրագիտության տարածմամբ: Այս ձևով հաստատվում է գրական նորմը և դառնում ավանդական ու պահպանողական: Ազգային գրական լեզվի

նորմը դիտվում է որպես լեզվական նորմի գիտակցական, գիտական ուսումնասիրություններով հիմնավորված արտահայտություն:

Լեզվական նորմը ուսումնասիրության առարկա է դարձել գրական լեզվի և լեզվի մյուս գոյածևերի կամ տարատեսակների միջև եղած հարաբերությունների քննության առնչությամբ: Գրական լեզվի կանոնարկումը օրինաչափորեն նպաստեց նաև գրական լեզվի գործառական տարբերակների լեզվական համակարգերի ձևավորմանը և դրանց ոճական սահմանների ճշգրտմանը: Լեզվի զարգացման նախորդ փուլերում գրական լեզվի և նրա գործառական տարբերակների միջև զգալի անհամապատասխանություն կար: Դրանցից յուրաքանչյուրը կարծես փորձում էր իր համար որդեգրել զարգացման ուրույն ճանապարհ կամ, համենայն դեպս, մյուս գործառական տարբերակներից փոքր-ինչ տարբերվող օրինաչափություններ: Բոլոր դեպքերում միասնական նորմի գործառման մասին խոսք լինել չէր կարող: Գրական լեզվի նորմավորումը դառնում է չափանիշ գործառական բոլոր ոլորտների համար՝ վարչական, պաշտոնական, հրապարակախոսական, գեղարվեստական: Այն ինչ-որ չափով կարգավորում է առօրյա-խոսակցական լեզուն, որը, հասկանալի է, զարգանում է գրական լեզվի բանավոր տարբերակի՝ խոսակցական լեզվի օրինաչափություններով:

Չնայած «նորմա» հասկացությունը վաղուց կիրարկվում է լեզվաբանության և լեզվական օրինակարգավորման գործընթացում, միայն 20-րդ դարում այն գտավ իր տեսական հիմնավորումը և սկսեց ուսումնասիրվել լեզվաբանության տարբեր բնագավառների կողմից: Լեզվական նորմի հարցը դառնում է լեզվի պատմության, համեմատական լեզվաբանության, խոսքի մշակույթի, ոճաբանության, հաղորդակցության ձևերի ուսումնասիրության կողմերից մեկը: Ներկայումս այս հարցն առավել ևս կարևորվում է:

Լեզվական նորմի տարբեր ըմբռնումներ և մեկնաբանություններ կան: «Նորմա» հասկացության ստեղծումը կապվում է Կոսերիուի անվան հետ, որն այն սահմանել է որպես լեզվական կառուցվածքի համեմատաբար կայուն, ընտրված և լեզվական պրակտիկայում հաստատված միջոցների ամբողջություն:

Հարցի ուսումնասիրության հետ կապված հատկապես գնահատելի է Պրահայի լեզվաբանական դպրոցի ներկայացուցիչների մա-

տուցած ծառայությունը. մեծ աշխատանք են կատարել ռուս լեզվաբաններ Լ. Վ. Շչերբան, Գ. Օ. Վինոկուրը, Ե. Ս. Իստրինան, Վ. Վ. Վինոգրադովը, Ս. ի. Օժեգովը, Ֆ. Պ. Ֆիլինը, Գ. Վ. Ստեպանովը, Ն. Ն. Սեմենյուկը, Վ. Ս. Շվարցկոպֆը, փարիզյան լեզվաբաններ Բ. Հավրանեկը, Ա. էլդիչկան, գերմանացի լեզվագետներ Պ. Ներիուսը, Պ. ֆոն Պոլենցը, Ի. էրգենը և շատ ուրիշներ:

Հայ լեզվաբանության մեջ լեզվական նորմի հարցին, այլևայլ հարցերի կապակցությամբ, անդրադարձել են Գ. Սևակը, Հ. Աճառյանը, Մ. Աբեղյանը, Վ. Առաքելյանը, էդ. Աղայանը, Հ. Բարսեղյանը, Ս. Աբրահամյանը, Թ. Ղարագյուլյանը, Հ.Պետրոսյանը, Հ. Հարությունյանը, Լ. Եզեկյանը, Հ. Զաքարյանը

Լեզվական նորմը ուսումնասիրության առարկա է դառնում նեղ և լայն առումներով: Նեղ առումով լեզվական նորմի մեջ մտնում է հնչյունական, բառագիտական, քերականական կանոնների ամբողջությունը, լայն առումով՝ վերոհիշյալ կանոններին ավելանում են նաև խոսքի մշակույթին վերաբերող նորմերը, այդ թվում էլ՝ ոճաբանական, հաղորդակցական, բարոյագիտական տեսակները:

Ըստ «Հայերենագիտական բառարանի» լեզվական նորմը այն է, «ինչ պոտենցիալ կերպով տրված է լեզվական համակարգում, և որի վրա կառուցվում է խոսքը: Հաճախ հասկացվում է՝ կանոնավորված, հանրության կողմից (նաև ավանդությամբ) ընդունելություն գտած, օրինականացված լեզվական (արտասանական-հնչյունական, բառային, դարձվածքային, ոճական ու քերականական) միջոցների ու ձևերի գործադրումը. ըստ այդմ էլ կազմվում են նորմատիվ քերականություններ, բառարաններ ևն: Գրական նորմը նշված միջոցների առավել կարգավորված ու օրինակելի գործադրման կանոնների ամբողջությունն է» (95, էջ 260):

«Լեզվաբանական բառարանում» լեզվական նորմը սահմանվում է որպես տվյալ լեզվով խոսող հանրության կողմից իբրև անհրաժեշտություն ընդունված և պարտադիր ճանաչված լեզվական իրողությունների հարաբերակցության կանոններ. «Նորման չի նույնանում լեզվական, այսպես կոչված, «ճիշտ» ձևերի՝ պատմականորեն կանոնավոր իրողությունների օգտագործման հետ» (96, էջ 127):

«Լեզվական կանոնիկությունը լեզվական երևույթների այն համընդհանուր ընդունվածությունն է, որ լեզվի մեջ ամրապնդվում է պատմականորեն, տրամաբանական գործոններով, ավանդությամբ, քերականական կանոնների ճշտությամբ ու մասամբ բարեհնչությամբ, որոնք նպաստում են, որ այդ կանոնիկությունը հարատևի երկար ժամանակ, դառնա կայուն ու անփոխարինելի պատմական որոշակի մի ժամանակաշրջանի համար, որին նպաստում է գրական լեզուն իր հարուստ մշակութային ժառանգությամբ, գեղարվեստական ու գիտական լայն գրականությամբ, որոնք բազմաթիվ գիտակ մարդկանց կողմից (հեղինակ, խմբագիր, տպագրիչ, գրախոս և այլն) մշակվում են համաձայն լեզվական այդ կանոնիկության»,- գրում է Վ. Առաքելյանը (26, էջ 22-23):

Է. Աղայանի կարծիքով նորմը լեզվի կառուցվածքի իրացումն է այդ լեզվի զարգացման տվյալ փուլում, նրա գործող արտահայտությունը կամ դրսևորումը: Մյուս կողմից այն տվյալ փուլի լեզվական վիճակի և դրա խոսքային արտացոլման կամ իրացման ընդհանուր համակարգն է: Նորմը կանոնների այն ամբողջությունն է, որով իրականացվում է լեզվի՝ հանրության հաղորդակցական ֆունկցիան. «Կանոնական մակարդակը կամ պարզապես կանոնը /նորման/ խոսքային միավորների այն ընդհանուր ու վերացական համակարգն է, որ գոյություն ունի տվյալ լեզվով խոսող հանրության անդամների գիտակցության մեջ: Դա լեզուն է որպես հանրության հաղորդակցման միջոց»,- գրում է Է. Աղայանը (14, էջ 15):

«Լեզվական նորմը,- շարունակում է Լ. Եզեկյանը,- լեզվի զարգացման տվյալ փուլում սահմանված, հասարակայնորեն ընդունված և գործող լեզվական միջոցների համակարգ է: Նորմա ասելով ամենից առաջ հասկանում ենք լեզվի գործածությունը որպես հաղորդակցման միջոց, նրա գործառույթը, ինչպես նաև՝ բառերի և նախադասությունների միասնական համակարգված կիրառությունը ընդունված և սահմանված չափանիշներով» (48, էջ 95):

Ըստ Ա. Մարությանի՝ լեզվական նորմը ճշտի և սխալի չափանիշն է. (81, էջ 22):

Լեզվական նորմը կանոնների, օրենքների ամբողջություն է կամ խոսքային միավորների ընդհանուր ու վերացական համակարգ, որը

լեզվակիր հանրության կողմից է ընտրվում, ընդունելություն գտնում և խոսքային գործընթացում հաստատվում, օրինականացվում, պարտադիր ճանաչվում հասարակության բոլոր անդամների համար, ապահովում հասարակության հաղորդակցումը: Լեզվաբանական ուսումնասիրություններում նորմի վերաբերյալ արտահայտված կարծիքները հաշվի առնելով՝ կարելի է սահմանել **լեզվական նորմը պատմական մի որոշակի ժամանակաշրջանի համար լեզվի ինքնազարգացմամբ պայմանավորված և հասարակության կողմից ընտրված և ընդունված, հասարակական հաղորդակցմամբ ամրապնդված ու խոսքային գործընթացում հաստատված լեզվական ամենաօրինակելի միջոցների համակարգը կանոնավորող օրենքների, օրինաչափությունների ամբողջությունն է, որը պարտադիր է հասարակության բոլոր անդամների համար:**

Այն պատմական է, ավանդական, հարաբերականորեն կայուն և անփոփոխ:

Այն և լեզվաբանական, և հասարակական-պատմական հասկացություն է: Վերջինս հատկապես ցայտունորեն դրսևորվում է դասակարգային հասարակության մեջ, որտեղ վերնախավային դասակարգի (կրթյալ և արտոնյալ խավի) խոսքը հակադրվում է «ցածր», ժողովրդական խոսքին:

Լեզվական նորմը պատմական հասկացություն է, քանի որ այն, ինչ ճիշտ է լեզվի զարգացման տվյալ շրջանի համար, կարող է սխալ համարվել մի այլ շրջանում: Նորմի և լեզվի համակարգի օրենքները քննելիս ամենից առաջ անհրաժեշտ է ճշտել, թե դրանք լեզվի զարգացման ո՛ր փուլի համար են բնորոշ կամ ո՛ր փուլի ո՛ր շրջանին: Օրինակ՝ Մ. Աբեղյանը **յա** երկհնչյունի կրած փոփոխության մասին գրում է հետևյալը. «Այս ձայնափոխությունը նոր լեզվի մեջ կենդանի չէ. ուստի դպրոցական հայերեն չավարտած մարդիկ սխալ կազմություններ են անում, ինչպես են՝ «գրասենյակային», հոբելյանական», փոխանակ «գրասենեկային», հոբելենական» ձևերի» (1, էջ 199-200): Բնականաբար Աբեղյանի որակած «սխալ կազմությունները» եթե Աբեղյանի գրելու ժամանակի լեզվական նորմով ճիշտ չէին, ապա որոշ ժամանակ անց դառնում են ճիշտ, իսկ «ճիշտ» ձևերը՝ արդեն ոչ ճիշտ. այն, ինչ ճիշտ չէր 20-րդ դարի սկզբներին, արդեն դարի կեսերին կանոնավորություն դարձավ:

Որպես կայուն և միասնական լեզվական միջոցների և նրանց օգտագործման կանոնների ամբողջություն, որը գիտակցաբար արձանագրվում և մշակվում է հասարակության կողմից, նորմը դառնում է ազգային գրական լեզուն բնութագրող հատկանիշ:

Նորմի հասարակական կողմը երևան է գալիս ոչ միայն լեզվական իրողությունների հարաբերակցության կանոնների ընտրության և արձանագրման, հաստատման ժամանակ, այլ նաև նրանց գնահատման համակարգում. նա է գնահատում ճիշտ և սխալ լինելը, կանոնավոր և անկանոն լինելը և տալիս է իր գնահատականը՝ «ճիշտ է», «կանոնավոր է», տեղին է», «հարմար է», «պատշաճ է», «թույլատրելի է», «հանձնարարելի է», «խրախուսելի է» և «սխալ է», «անկանոն է», «ոչ տեղին է», «հարմար չէ», «պատշաճ չէ» «չի թույլատրվում», հանձնարարելի չէ», «խրախուսելի չէ», «խոտելի է», «մերժելի է» և այլն, ըստ որում այդ գնահատումն իր մեջ նաև ներառում է ոչ միայն պատմական մոտեցումը՝ «հնացած է», «հնաբանություն է» և «նոր է», «նորաբանություն է», այլև գեղագիտական տարրը «գեղեցիկ է» և « գեղեցիկ չէ», «լավ է» և «լավ չէ»:

Նորմը ընտրում է այն, ինչ կա լեզվի համակարգում, և գնահատվում ճիշտ ու պարտադիր տվյալ լեզվական հանրության համար: Եթե **լալում եմ, գալում եմ, տալում եմ** ձևերը համակարգային են, բայց սխալ են գնահատվում նորմի տեսանկյունից, ապա այս գնահատականը տրվում է հասարակայնորեն և հիմնվում է նախ և առաջ ավանդականության վրա:

Որպես հասարակական-պատմական հասկացություն՝ լեզվական նորմի մեջ մտնում է կանոնների և սովորույթների մի շարք, որ ներկայացնում է տվյալ հասարակությունն իր զարգացման տվյալ փուլում:

Լեզվական նորմի «կայունություն» հասկացության մեջ մտնում են հետևյալ հատկանիշները՝ պատմական կայունությունը, անխախտությունը (պատմականորեն անխախտ լինելը), ավանդականությունը (ավանդական լինելը), լեզվի տարբեր մակարդակներում որոշակի սահմանափակումը հնարավոր տատանումների և զուգաձևությունների հարցում, նորմի տարածքային միօրինակացումը և այլն: Այս հատկանիշները գրական լեզվում երևան են գալիս կամ արտահայտվում են միտումների ձևով, նրա «կայունության չափանիշները» հաս-

տատվում են բոլոր կուլտուր-պատմական իրադարձությունների ազդեցությամբ, ինչպես նաև կախված են տվյալ լեզվի համակարգից և գրական լեզվի գրական ձևի սկզբնավորման առանձնահատկություններից:

Բայց գրական նորմը ոչ միայն հարաբերականորեն կայուն է և միասնական, այլ նաև նշանակալիորեն տարբերակված է. կան որոշակի լեզվական միջոցների համար զուգաձևեր պարունակող և արտահայտությունների հոմանշային տարբերակներ:

Նորմի կայունության, անխախտության, հաստատունության աստիճանը լեզվի տարբեր մակարդակներում միատեսակ չէ: Որոշիչ գործոն են նորմի և համակարգի միջև եղած հարաբերությունները: Օրինակ ուղղագրության բաժնում ամբողջապես լեզվական համակարգն է որոշում նորմը, դրա համար էլ այն աչքի է ընկնում առավել կայունությամբ: Ժամանակակից հայերենի հնչյունական համակարգում, օրինակ, որոշ դիրքերում հաճախ **դ, տ, բ** հնչյուններն արտասանական տարբերակներ ունեն: Մի դեպքում նման հնչյունական տարբերակները կանոնական համակարգում ոչ մի կարևորություն չունեն, մյուս դեպքում՝ տարբերակներից մեկը կարող է դիտվել կոպիտ սխալ, բարբառային արտասանություն: Մերօրյա հայերենում արտասանական անթույլատրելի սխալ է և բարբառայնության դրսևորում է, նաև ռուսախոսության արդյունք է **-ություն** վերջածանցում **թ**-ի **ց** արտասանելը: Բառապաշարային մակարդակում որոշիչ են լեզվական միավորների բովանդակային կողմը, նրանց իմաստային ճշտությունը կամ ճշգրտությունը և ոճական հարմարությունը (պատշաճությունը), ոճաբանորեն տեղին լինելը, այստեղից էլ՝ լեզվի հոմանշային միջոցների լայն օգտագործումը, տարբերակները, փոփոխակները: Ահա թե ինչու այս մակարդակում լեզվական նորմի կայունությունը համեմատաբար ցածր է: Ձևաբանական մակարդակում նորմը շատ ավելի կայուն է, քան մյուս մակարդակներում. պատճառը քերականական կարգերի, նրանց քերականական իմաստների և արտահայտման քերականական ձևերի առավել քիչ փոփոխական լինելն է. եթե մի սերնդի համար իրողություն է նոր բառերի օգտագործումը, ապա նրա աչքից գրեթե աննկատ կարող են մնալ քերականական փոփոխությունները. լեզվի քերականական կառուցվածքը շատ դանդաղ է փոփոխվում:

Գրական լեզվի նորմը թելադրում է գրավոր տեքստերում գրական բառապաշարի օգտագործում, բառածևերի ճիշտ ընտրություն, բառակապակցությունների և նախադասությունների ճիշտ կազմում և այս բոլորի ճիշտ օգտագործում համապատասխան ոճերում՝ որոշակի նպատակներով: Միևնույն ժամանակ նորմավորված լեզվի և ոչ նորմավորված լեզվի միջև անհաղթահարելի պատնեշներ չկան. գրական լեզուն համալրվում է բարբառներից, ժողովրդական-խոսակցական լեզվից եկող նորանոր բառերով, բառածևերով, արտահայտություններով, իսկ գրական լեզվի շրջանակներից դուրս եկածները համալրում են վերջիններիս «լեզուն»:

Լեզվի զարգացման ցանկացած շրջանում գրական լեզվի և նրա տարբերակային (ոչ գրական) բազմաթիվ ձևերի միջև գոյություն ունի «չեզոք գոտի», որը գտնվում է նորմի և ոչ նորմի շրջանակներում: Յուրաքանչյուր լեզվական միավորի կանոնական, նորմատիվ լինելը նշանակում է այն օգտագործել այնպիսի ձևով, այնպիսի իմաստով, ոճական այնպիսի նրբերանգներով, կապակցման այնպիսի զուգորդումներով, որոնք բնութագրում են այն որպես գրական լեզվի միավոր:

Նորմի հիմնական առանձնահատկությունը նրա պարտադիր լինելն է բոլորի համար: Լեզվական-գրական նորմը լեզվական միջոցների ճիշտ օգտագործման կանոնների համակարգ է՝ պատմականորեն ավանդված, որը հասարակության համար նաև պարտադրված պահանջ է: Խոսողների (գրողների) գիտակցության մեջ նորմը յուրօրինակ կատարելություն է՝ յուրահատուկ ճշտությամբ բնորոշվող, ուստի և համընդհանուր ճանաչում գտած:

Կարելի է նշել նորմի ևս երկու առանձնահատկություն՝ նրա կայունությունը և միաժամանակ պատմականորեն անկայուն լինելը: Լեզվական նորմը կարելի է համեմատել կողմնացույցի սլաքի հետ: Չնայած այդ սլաքը ոչ միշտ է գտնվում կայուն վիճակում (հանգստի վիճակում), չնայած այն ենթարկվում է որոշակի տատանումների, սակայն միշտ նրանով կողմնորոշվելով կարելի է ընտրել ճիշտ ճանապարհ: Այդպիսին են լեզվական նորմերը. հարաբերականորեն փոփոխական են, ոչ կայուն, բայց և լեզվի տվյալ վիճակում օգնում են ճշտո-

րեն կողմնորոշվելու խոսքային գործունեության անծայրածիր ծովում, օգնում են՝ խոսքային ուղիղ ճանապարհ գտնելու:

Եթե նորմը կայուն չլինի, եթե հեշտությամբ ենթարկվի տարբեր ազդեցությունների, լեզվական կապը տարբեր սերունդների միջև կխախտվի: Լեզվական նորմը դարերի՝ իրար հետ խոսելու միջոցն է. ուրեմն՝ լեզվական նորմը ապահովում է նաև սերունդների կապը: Իհարկե, անպատրաստ ընթերցողը դժվարությամբ կհասկանա այն տեքստերը, որոնք գրվել են 8-րդ, 9-րդ, 10-րդ դարերում, բայց Աբովյանի ստեղծագործությունները մենք հասկանում ենք, հասկանում ենք Պռոշյանի լեզուն, չնայած որ առանձին բառեր և արտահայտություններ, առանձին քերականական ձևեր հասկանալի չեն և անծանոթ են:

Նորմի կայունությունը բավականաչափ ապահովում է նաև ժողովրդի մշակութային սովորույթների ժառանգորդումը, հաջորդումը, ապահովում է նաև ազգային գրականության ծնունդն ու զարգացումը, նրա առաջընթացը:

Նորմի կայունության հարցերով առանձնապես զբաղվում է դպրոցը: Հին սերնդի խոսքը, հատկապես գեղարվեստական խոսքի վարպետներինը, ընդունվում է որպես օրինակելի:

Միևնույն ժամանակ նորմի կայունությունը բացարձակ չէ. այն հարաբերական է:

Նորմը ազգային լեզուն բնութագրող հատկանիշներից մեկն է, որով գրական լեզուն տարբերվում է լեզվի մյուս գոյաձևերից:

Հայ լեզվաբանական գրականության մեջ, որպես ամենաընդհանուր և էական հատկանիշներ, նշվում են լեզվական նորմի հարաբերական կայունությունը, ընտրողականությունը, պարտադիր լինելը, ճշտությունը: Կարծում ենք, որ լեզվական նորմի հատկանիշ կարելի է համարել նաև նրա ընդհանուր գործածությունը և լեզվական համակարգի հնարավորություններին համապատասխանելը: Ընդհանրացնելով կարելի է եզրակացնել՝ լեզվական նորմը բնութագրող ընդհանուր և էական հատկանիշներն են՝

1. գրական լեզվի համակարգին համապատասխան լինելը
2. լեզվական իրացումների հարաբերական կայունությունը
3. ընտրողականությունը
4. պարտադիր լինելը

5. ճշտությունը
6. ընդհանուր գործածությունը կամ միասնական լինելը:

Նորմը հսկում և կասեցնում է լեզվում մշտապես կատարվող փոփոխությունները: Այն ընդհանուր հասկացություն է և հիմնականում կոնկրետանում է **գրական նորմ** և **ոճական նորմ** հասկացությունների դրսևորումով:

Լեզվական նորմը ամենից առաջ գրական լեզվի նորմն է: Այն լեզվական միջոցների ու ձևերի առավել կարգավորված ու օրինակելի գործադրման կանոնների ամբողջությունն է: Գրական նորմը լեզվի կատարելագործման ամենաբարձր աստիճանն է: Այն պարտադիր է տվյալ լեզվով խոսող հանրության համար: Յուրաքանչյուր բառ, քերականական յուրաքանչյուր ձև ու կապակցության եղանակ պետք է «կնքվի» գրական լեզվի կողմից, նորմավորվի, իսկ այդ լեզուն կրողները՝ լեզվական գիտելիքներով հմտացած, պետք է կարողանան զանազանել նորմատիվը ոչ նորմատիվից, կանոնականը ոչ կանոնականից, գրականը՝ բարբառայինից, խոսակցականից, ժարգոնայինից, հնացած, օտար և նորաբան տարրերից:

«Լեզվական միջոցների օրինակելի կիրառությունը որոշող նորմերը կոչվում են գրական նորմա (литературная норма)»,- սովորաբար արձանագրվում է նորմատիվ քերականություններում (96, էջ 127):

Նորմը կարող է լինել՝

ա/ խիստ պարտադիր և բոլորի կողմից կատարելի, լեզվամիավորի արտահայտումը միայն մեկ ձևով կարգավորվող. այս դեպքում չի թույլատրվում լեզվական միավորների արտահայտման տարբերակվածություն.

բ/ ոչ պարտադիր, որը թույլատրում է տարբերակների և զուգաձևությունների գոյությունը.

Նորմի միասնական, բոլորի համար ընդհանուր լինելը ապահովվում է, եթե՝

ա/ թե՛ գրավոր խոսքը, թե՛ բանավոր խոսքը միասնական նորմով են կանոնարկված.

բ/ տարբեր գործառական-կիրառական ոլորտներում նույն նորմն է գործում, միասնական է.

գ/ արտաշխարհի լեզուների ազդեցության պայմաններում մայրենի լեզվի նորմը պահպանվում է.

դ/ տարածքային բաժանման պայմաններում միասնական նորմի հաստատումն ապահովված է:

Գրական լեզվի գրավոր և բանավոր տարբերակների գործառական սահմանների որոշումը իրենից բարդ գործընթաց է ներկայացնում: Խնդիրն էլ ավելի է բարդանում, երբ ակնհայտ է դառնում բանավոր խոսքի գործածության միջավայրի միասեռ չլինելը (անմիատարր է), այսինքն՝ նրանում ակտիվորեն գործածվում են լեզվի մյուս գոյածևերի (բարբառների, խոսակցական լեզվի, օտար լեզուների) լեզվատարրերը: Տարբերությունները զգալի են անգամ այն դեպքում, երբ լեզվի բանավոր տեսակն իր հիմնական բնութագրմամբ հենվում է նույն համակարգի հատկանիշների վրա, ինչ որ գրավոր լեզուն: Հիշյալ տարբերությունները համեմատաբար կնվազեն, երբ նորմը միասնական լինի և՛ բանավոր, և՛ գրավոր խոսքի համար:

Գրավոր և բանավոր տարբերակների միջև անջրպետը նկատելի է, ակնառու է, երբ գրական լեզուն ավանդական, հնավանդ լեզվի ազդեցությունն է կրում, որը խանգարում է այդ լեզվում միասնական նորմ հաստատելուն, և որը պատճառ է դառնում գրական լեզվի և խոսակցական լեզվի միջև եղած հեռավորությունը հակասության վերածելու: Այսպիսին է լեզվական վիճակը Չեխիայում, այսպիսին էր միջին հայերենի լեզվական վիճակը, լեզու, որը մշտապես կրեց գրաբարի ազդեցությունը, զարգացավ նրան համագոյակից և արդյունքում միասնական նորմավորման չհասավ:

Գրավոր և բանավոր խոսքերի միջև սկզբնավորվող կամ գործող տարբերությունները լեզվական նորմով սահմանված կանոններին հետևելու անվստահություն են ներշնչում, ստեղծում են գրական լեզվի արհեստականության տպավորություն (օրինակ՝ Շվեյցարիայի գերմանական մասում ստեղծվել էր նման լեզվական իրադրություն, երբ այդ մասում օգտագործվում էր գրական գերմաներենը, իսկ բանավոր հաղորդակցումը նույն լեզվով սահմանափակ էր):

Նորմայի միասնականության խախտումը արտաշխարհի լեզուների ազդեցությամբ կախված է տվյալ գրական լեզվի պատմական

զարգացումից (կամ պայմանավորված է նրանով), ինչպես նաև ներկա ժամանակի լեզվական իրադրությունից: Օրինակ՝ գերմաներենի և անգլերենի, անգլերենի և ռուսերենի գրական տարբերակների օգտագործումը տարբեր երկրներում ենթադրում է նորմի միասնականության խախտում, միասնական նորմ հաստատելու դժվարություն (այս դեպքում առաջանում են այսպես կոչված «ներաշխարհային զուգաձևություններ»): Եթե նախկինում հայոց լեզվի միասնական նորմի տարածմանը ինչ-որ չափով սպառնում էր ռուսաց լեզուն («սպիտակ ջարդ»), ապա այսօր նույնատիպ վտանգ է նաև անգլերենի աշխուժացումը («ջարդի» գույնը դեռևս պարզված չէ):

Նորմի միասնականության խախտումը տարածքային բաժանման պատճառով նաև հայոց լեզվին է վերաբերում. աշխարհում քիչ ժողովուրդներ կան, որ ունեն երկփեղկված գրական լեզու, հետևաբար՝ «երկփեղկված» գրական նորմ: Հայ ժողովուրդը նորից բացառությունների շարքում է... (Այս դեպքում գործում են «տարածքային զուգաձևությունները»):

Եթե շատ լեզուներում չի նկատվում կամ զգալի չէ ներաշխարհային և տարածքային տարբերակվածությունը, և այս առումով ապահովված է միասնական նորմ, ապա կարող են դիտվել այլ տիպի տարբերություններ, որոնք նույնպես ապակայունացնում են միասնական նորմի հաստատումը, օրինակ՝ ռուսերենում այսօր զգալի է հին մոսկովյան և նոր մոսկովյան, մոսկովյան և պետերբուրգյան արտասանական տարբերակների գոյությունը, հայերենում արդեն ձևավորվում է «երևանյան լեզուն» կամ «մայրաքաղաքային լեզուն» ի հակադրություն «ոչ մայրաքաղաքային» լեզվի:

Եթե հայ լեզվաբանության մեջ նորմի դասակարգման հարցն առանձնապես չի ուսումնասիրվել, ապա ռուս լեզվաբանության մեջ տարբեր քերականագիտական ուսումնասիրություններում տրվել է նորմի դասակարգումը՝ լեզվի համակարգին և գրային ձևավորման հնարավորություններին համապատասխան, և այն «Культура русской речи» հանրագիտական բառարան-տեղեկատուում ներկայացվում է հիմնականում այս ձևով՝

-հնչյունաբանական նորմ (фонетическая норма), որի մեջ մտնում են ուղղախոսական, շեշտաբանական և վանկային ենթատեսակները.

-ուղղագրական նորմ (орфографическая норма).

-բառային (лексическая норма) կամ բառագործածական նորմ.

-բառակազմական նորմ (словообразовательная норма).

-քերականական նորմ (грамматическая норма), որի մեջ մտնում են բառափոխական (բառակազմական), ձևաբանական և շարահյուսական նորմերը.

-կետադրական նորմ (пунктуационная норма).

-ոճաբանական նորմ (стилистическая норма).

-վիճակագրական նորմ (статистическая норма).

-բարոյագիտական-խոսքային նորմ (этико-речевая норма):

Վերջերս, հաշվի առնելով խոսքի հաղորդակցական բարոյագիտական կողմը, լեզվական նորմի նոր դասակարգում է առաջարկվել: Ըստ այդ դասակարգման՝ այն լայն առումով է ուսումնասիրվում և բաժանվում է երեք տեսակի

ա/ կառուցվածքային-լեզվական նորմեր (структурно-языковые нормы).

բ/ հաղորդակցական-գործաբանական նորմեր (коммуникативно-прагматические нормы) (Ըստ Ֆ. Խլղաթյանի «Ոճագիտական բառարան»-ի գործաբանական (прагматический) տերմինը բացատրվում է որպես՝ «լսողի, խոսակցի, տեղեկույթի հասցեատիրոջ նկատմամբ խոսողի վերաբերմունք արտահայտող» (62, էջ 43).

գ/ բարոյագիտական-խոսքային նորմեր (этико-речевые нормы):

Նման դասակարգումը դեռևս լայն կիրառություն չունի, մասնավորապես հայ լեզվաբանության մեջ այն, որպես նորմի դասակարգման նոր փորձ, նույնիսկ չի արձանագրվել, բայց ակնհայտորեն մի առավելություն ունի՝ ընդհանրական-ամբողջական դասակարգման փորձ է, հակառակ դեպքում ընդունված դասակարգման սկզբունքով մենք կարող ենք լեզվական յուրաքանչյուր միավորի համար նորմի մի տեսակ առանձնացնել:

Գրական նորմը ներառում է գրական լեզվի բոլոր իրողությունները և համապատասխանաբար լինում է՝

հնչյունական նորմ
հնչյունափոխական նորմ
ուղղախոսական նորմ
ուղղագրական նորմ
վանկային նորմ
բառագիտական նորմ
բառակազմական նորմ
քերականական նորմ
կետադրական նորմ
ոճական նորմ:

Խոսքի ճշտությունն ամենևին էլ միայն քերականական նորմի պահպանումով չի պայմանավորված: Բելինսկին, անդրադառնալով քերականության և ոճաբանության փոխհարաբերությունների հարցին, այն կարծիքն է հայտնել, որ քերականությունն ունի իր որոշակի սահմանները, որի շրջանակներում բացատրվում են լեզվի կանոնները ու օրինաչափությունները: Քերականության խնդիրն է ճիշտ գրել և խոսել սովորեցնելը. գեղեցիկ գրել ու խոսել, լավ գրել ու խոսել սովորեցնելը նրա խնդիրը չէ: «...Քերականության խնդիրն է ուսումնասիրել բառերի կապակցության օրինաչափությունները միայն ճշտության տեսակետից՝ լեզվի կանոնների համաձայն: Իսկ թե ինչպիսի զգացական ու հոգեկան տպավորություններ ու ապրումներ է առաջ բերում լեզվական հաղորդումը, քերականությունն այս հարցերով չի զբաղվում: Ասվածից պարզ է դառնում, որ լեզվի ուսումնասիրությունը չի կարելի սահմանափակել քերականությամբ, այն պետք է շարունակել և ավարտել ոճաբանությամբ, քանի որ վերջինս լեզվի ուսումնասիրության բարձրակետն է» (81, էջ 23): Գրական լեզվի նորմը սերտորեն առնչվում է ոճական նորմի հետ: Ըստ հայտնի ռուս լեզվաբան Շչերբայի՝ առանց ոճական նորմի գրական լեզուն կդառնա սոսկ գործիք, որը չի կարողանա արտահայտել իմաստային որևէ նրբերանգ "...Без таких норм литературный язык становится шарманкой, не способной выражать какие-либо оттенки мысли" (120, стр. 115):

Այն մարդուն, որը չգիտի ոճական նորմը կամ էլ ունակություն չունի այն օգտագործելու, լսելը շատ տհաճ է, տխուր, ձանձրալի.

նրա խոսքը միաձև է և միակերպ՝ զուրկ դինամիկությունից և արտահայտչականությունից:

Ոճական նորմը ավելի լայն հասկացություն է. նրա մեջ մտնում են և գրական նորմը, և՛ նրանից կատարվող շեղումները:

Այսպիսով՝ վերոբերյալ մեկնաբանություններից կարելի է եզրակացնել, որ լեզվական նորմը

1. համակարգի մեջ է առնվում և իրացվում է խոսքում.

2.գործում է լեզվի զարգացման տվյալ փուլում.

3.հասարակության կողմից անհրաժեշտաբար ճանաչված է և ընդունված.

4.նորմավորվող համակարգը ավանդական է, պատմականորեն ձևավորված և պայմանական.

5. ամրապնդված է պատմականության և տրամաբանական գործոններով, քերականական կանոնների ճշտությամբ ու մասամբ բարեհնչությամբ.

6. հարաբերականորեն կայուն է լեզվի զարգացման մի շրջանի համար:

Գրական նորմի կայունությունը հարաբերական է և չի կարող խոչընդոտ դառնալ լեզվական փոփոխությունների համար:

Գրական լեզվի նորմը լեզվական նորմի իրացումների և գործառությունների մի մասնավոր գոյածևն է: Այնտեղ ճշտության հետ առաջին պլան է մղվում նաև օինակելի և գերադասելի լինելու հատկանիշը: Գրական նորմի համար կարևոր են նաև լեզվական իրացումների գիտակցական ընտրությունը և մշակվածությունը, ինչպես և դրանց ամրակայումը նորմատիվ քերականություններում: Այն, ինչ ճիշտ է լեզվական նորմի տեսանկյունից, կարող է ընդունելի չհամարվել գրական նորմում: Այս հարցում կարևոր է լեզվի գործառական տարատեսակների և ոճերի հաշվառումը:

Նորմը լեզվական միջոցները չի բաժանում լավ ու վատ տեսակների, այլ մատնացույց է անում նրանց հաղորդակցական նպատակահարմարությունը:

Գրական լեզվի նորմը արտացոլում է ազգային լեզվի ինքնակայությունը, լեզվական ավանդույթները պահպանելուն է օգնում, անցյալի կուլտուրական ժառանգությունը ժառանգելու: Այն պաշտպանում է գրական լեզուն բարբառային խոսքի, սոցիալական ու մասնա-

գիտական ժարգոնի ազդեցությունից: Այն օգնում է, որ գրական լեզուն մնա կարգավորված, ընդհանուրին հասկանալի, կատարի իր հիմնական դերը՝ կուլտուրական, մշակութային:

Լեզվական նորմը մտացածին չէ, գիտնականի ու գրողի, լեզվաբանի ու լեզվագետի մտահղացում չէ: Այն արտացոլում է օրինաչափ երևույթներն ու գործընթացները, որոնք տեղի են ունենում խոսքում և իրենց արտահայտությունն են գտնում խոսքային գործընթացում:

Գրական նորմի ձևավորման աղբյուրներից են դասական ու ժամանակակից գրողների ստեղծագործությունները, գիտնական-լեզվաբանների աշխատություններն ու գիտական հետազոտությունները, ինֆորմացիոն միջոցների լեզվի վերլուծական աշխատանքները, կենդանի և անկետային հարցազրույցների տվյալները: Նրա կարգավորման համար հիմք են հանդիսանում նաև մշակութային հարուստ ժառանգությունը, գիտական և գեղարվեստական գրականությունը:

Անհրաժեշտ է նշել, որ գրական լեզվի նորմով խստորեն առաջնորդվելը դեռևս չի նշանակում, թե չի կարելի դիմել ոչ գրական բառերի, բառաձևերի, արտահայտությունների: Որոշակի պայմանների թելադրանքով նման կամայականությունը դառնում է գրավոր խոսքի, մանավանդ և ավելի շատ բանավոր խոսքի արժանիք: Կարևոր է, որ գրական նորմից կատարված շեղումը միշտ լինի արդարացված, հիմնավորված, պայմանավորված թեմայով, գաղափարով, հեղինակի ցանկությամբ՝ իր խոսքն ավելի սևեռուն դարձնելու նպատակով, իր նպատակին հասնելու ձգտումով, ուրիշի խոսքը մեջբերելով:


Նորմը ապահովում է կապը սերունդների միջև:

ՀԱՄԱԿԱՐԳ, ՆՈՐՄ, ԽՈՍՔ

Լեզվական նորմի ըմբռնումը սերտորեն կապված է մի կողմից՝ լեզվի համակարգի, մյուս կողմից՝ լեզվական համակարգի իրացման՝ խոսքի հետ:

Գրական լեզվի և լեզվի իրացման իրական պատկերի մեջ մշտապես տարբերություն կա, մեծ կամ փոքր հակասություն կա, որի խորության աստիճանը պայմանավորված է հասարակության զարգացման պատմական ժամանակաշրջանով, նրա սոցիալական կառուց-

վածքով, ինչպես նաև լեզվական իրադրության առանձնահատկություններով: Գիտության համատարածությունը, հասարակության բարգավաճումը, հասարակության միատեսակությունը, ժողովրդի կուլտուրական մակարդակի բարձրացումը, միասնական կրթական համակարգը և լրատվական միջոցների ազդեցությունը սովորաբար նպաստում են լեզվի և խոսքի միասնականացմանը, միօրինակացմանը: Նորմը միջին դիրք է գրավում լեզվի համակարգի և խոսքի միջև: Ֆերդինանդ դը Սոսյուրից հետո, որը լեզվաբանության մեջ առաջին անգամ լեզուն և խոսքը տարբերակեց՝ առաջինը համարելով հասարակական, իսկ երկրորդը՝ անհատական երևույթ, Կոսերիուն էր, որ գիտականորեն առանձնացրեց լեզվական համակարգը, նորմը և խոսքը և այս երեքի փոխհարաբերությունը ներկայացրեց հետևյալ սխեմայով, որն էլ հետագայում շրջանառության մեջ մտավ «Կոսերիուի սխեմա» անվանմամբ



Ըստ վերոբերյալ սխեմայի՝ համակարգն ընդգրկվում է նորմի, նորմը խոսքի մեջ: Համակարգը վերացարկվում է ամեն մի անհատականից և անկանոնությունից, նորմը վերացարկվում է անհատականից, սակայն, ի տարբերություն համակարգի, գործ ունի շեղումների և բացառությունների հետ. վերջապես խոսքն էլ պարունակում է անհատական բոլոր դրսևորումները. այնտեղ համակարգային կանոնական ձևերի կողքին կան և շեղումներ, և՛ բացառություններ, և՛ պատահական, և ժամանակավրեպ ու ավանդական, նույնիսկ ոչ ճիշտ երևույթներ:

Խոսքում նկատելի են շեղումներ, որոնք թեև լեզվի համակարգի թելադրանքով են ձևավորվում, սակայն լեզվական նորմի տեսակետից ընդունելի չեն: Օրինակ՝ հայերենի համակարգը թույլատրում է անձ ցույց տվող արական սեռի գոյականներից կազմել իգական

սեռ ցույց տվող գոյականներ՝ **-ուհի** ածանցի օգնությամբ (**աշակերտ - աշակերտուհի, ուսուցիչ- ուսուցչուհի**). սա բխում է համակարգից, բայց մյուս կողմից նմանատիպ շատ բառեր չունեն նման զուգակիցներ, ինչպես օրինակ՝ **ծառա, տնօրեն, պետ, ռեկտոր, դեկան, վարիչ** բառերը. նրանց նման կազմությունները՝ **ծառա(յ)ուհի, տնօրենուհի, պետուհի, ռեկտորուհի, դեկանուհի, վարիչուհի**, խորթ են գրական հայերենին և լեզվական նորմում չգրանցված (չնայած ուսանողական ժարգոնում այսօր կիրառելի են **ռեկտորուհի, դեկանուհի** տարբերակները): Նույն ձևով ժամանակակից հայերենում գոյականների ներգոյական հոլովի **–ում** վերջավորությամբ կազմելու կառուցվածքային կաղապարը այնքան օրինաչափական է և հաճախական, որ թվում է, թե կիրառական սահմանափակություն չպետք է ունենա: Չնայած դրան՝ **-ություն** ածանցով կազմված բառերի և անձ ցույց տվող հասարակ և հատուկ անունների ներգոյականի **–ում** վերջավորությամբ ձևը չի գործածվում. ներգոյականի իմաստն այս դեպքում բաղադրյալ (**մեջ** կապով) կազմությամբ է արտահայտվում, որը նույնպես խորթ չէ մեր լեզվի ձևաբանական կառուցվածքին:

Կամ՝ հայերենի խոնարհման համակարգը ենթադրել է տալիս, որ հարակատար դերբայը ևս ունակ է եղանակային ձևեր կազմելու, և իրոք, մի շարք հարակատար դերբայներ ունեն եղանակային ձևեր՝ **կանգնած եմ**...., **կանգնած էի**...., **նստած եմ**..., **նստած էի**... և այլն. սա համակարգի կարողականությունն է, բայց լեզվական նորմը սահմանում է, որ շատ բայերի հարակատար դերբայածևերը սահմանական եղանակի ժամանակաձևերի կազմությանը չեն մասնակցում: Այսպես՝ ընդունելի չեն **լսած եմ** (էի), **տեսած եմ** (էի), **նկարած եմ** (էի) ձևերը: (Ահա թե ինչու վիճահարույց է հարակատար դերբայի դիմավոր ձևերի՝ խոնարհման համակարգի մեջ ընդգրկելու խնդիրը):

Ժամանակակից հայերենի լեզվական օրենքն ասում է՝ **ի**-ով վերջացող բառերը ենթարկվում են **ու** հոլովման և բացառական հոլովում ունեն **–ուց** վերջավորությունը, և եթե մեկը **այգուց, գինուց, ոսկուց** ձևերի փոխարեն օգտագործում է **այգիից, գինիից, ոսկիից**... ձևերը, ապա խախտում է տրված բառաշարքի բացառակա-

ցի կազմության կանոնը, չեղվում է լեզվական նորմից, բայց նման ձևերի կազմությունը արդարացվում է լեզվի հոլովական համակարգի կառուցվածքով:

Տեսնել, **թողնել** բայերի հրամայականները զարտուղի են, բայց նորմատիվ են ու կանոնական, իսկ բուն համակարգի թելադրանքով կազմված **տեսի՛ր**, **թողի՛ր** ձևերը մերժելի են, այնպես, ինչպես **ուտեցի**, **ուտեցիր**, **ուտեց**..., **տարեցի**, **տարեցիր**, **տարեց**... ձևերը, քանի որ լեզվական նորմը սահմանում է, որ ճիշտ են՝ **տե՛ս**, **թո՛ղ**, **կերա**, **կերար**, **կերավ**..., **տարա**, **տարար**, **տարավ**... ձևերը:

Կարելի է եզրակացնել, որ համակարգը միևնույն ժամանակ ավելի ընդհանուր հասկացություն է, քան լեզվական նորմը. լեզվական միավորների և նրանց իրագործման հնարավորությունների թիվը, քանակը լեզվի համակարգում նշանակալիորեն բարձր է, քան թույլատրում է նորմը: Համակարգը ենթադրում է հնարավոր բոլոր իրողությունների դրսևորում, իրացում: Նույն լեզվի նորմը՝ սովորույթի ուժով հաստատված, կանոնների տարերային մշակվածությամբ, ընտրողաբար է օգտագործում լեզվական համակարգի տարրերը, նրանց քերականական ձևափոխություններն ու զուգակցումները: Համակարգը թույլատրում է լեզվական միավորների ավելի շատ տարբերակների գոյություն, իսկ նորմը բոլոր հնարավոր տարբերակներից ընտրում է միայն որոշակի ձևեր, ընտրում է միայն մեկը՝ «գերտարբերակը» սահմանելով և հաստատելով նրա գոյությունը լեզվական կանոնով: Ակներև է, որ որոշակի հակասություն է ստեղծվում լեզվի համակարգի, լեզվական նորմի և լեզվի իրացման՝ խոսքի փոխհարաբերության հարցում: Այն առավել խորանում է, երբ լեզվի համակարգ հասկացությունն ավելի լայն առումով է ուսումնասիրվում՝ որպես «համակարգերի, ենթահամակարգերի ու հակահամակարգերի համակարգ»: Հայ լեզվաբանության մեջ առաջիններից մեկը է. Աղայանն էր, որ լեզվի, որպես համակարգի, բնութագրման մեջ պատշաճ տեղ հատկացրեց հակահամակարգերին: «Գործածելով **հակահամակարգ** տերմինը լեզվի նկատմամբ, մենք դրանով հասկանում ենք այն բոլոր ենթահամակարգերը, մանրահամակարգերը և առանձնակի իրողությունները, որոնք «հակասում» կամ հակադրվում են լեզվի տվյալ փուլի համար կենսունակ, առավել ընդհանուր և միասնական բնույթ ունեցող համակարգերին, ենթահամա-

կարգերին ու մանրահամակարգերին: **Հակահամակարգերը լեզվի տվյալ փուլում գործառող ավանդական, կողմնակի և սաղմնավորվող համակարգեր են**»,- գրում է լեզվաբանը (15, էջ 192): Ըստ նրա՝ ավանդական են այն համակարգերը, որոնք պատմականորեն տվյալ լեզվին են փոխանցվում ու պահպանվում նախորդ շրջանների համակարգերից (ինչպես օրինակ՝ **դուստր դստեր, աղջիկ - աղջկա** ...): Կողմնակի համակարգերը տվյալ լեզվի բարբառներից և այլ լեզուներից երկարատև շփման ու ազդեցության հետևանքով մուտք գործած համակարգեր են, ինչպես օրինակ՝ **ասի, ասիր, տվի, դրի** ձևերը՝ **ասացի, ասացիր, տվեցի, դրեցի** կանոնական ձևերի կողքին: Սաղմնավորվող համակարգերը լեզվի տվյալ փուլում առաջացած (առաջացող) և դեռևս ընդհանրություն չստացած և կանոնական մակարդակի չբարձրացած համակարգեր են (ինչպես օրինակ՝ հրամայականի **մի՛ գրի, մի՛ նստի, մի՛ք գրի, մի՛ք նստի** և նման ձևերը՝ **մի՛ գրիր, մի՛ նստիր, մի՛ գրեք, մի՛ նստեք** և նման ձևերի փոխարեն): Սրանք սկիզբ են առնում խոսակցական լեզվում և այնտեղից թափանցում գրական լեզվի մեջ: Այնուհետև է. Աղայանը եզրակացնում է. «...Լեզվի պատմության յուրաքանչյուր փուլում էլ նրա ամբողջական համակարգի մեջ միասնաբար գործառում ու գոյակցում են համակարգերն ու հակահամակարգերը: Ի դեպ, հակահամակարգերի առկայությունը տվյալ ամբողջական համակարգի ներսում պայմանավորում է լեզվի մեջ հնի ու նորի, իր դարն ապրածի և ծնվողի, զարգացողի պայքարը, որը լեզվի զարգացման ներքին բովանդակությունն է կազմում: Այսպես, ուրեմն, իր բոլոր միավորների հավաքականությամբ լեզուն համակարգերի ու հակահամակարգերի ամբողջություն է, կամ այլ կերպ՝ **լեզուն համակարգերի ու հակահամակարգերի համակարգն է**» (15, էջ 193):

«Լեզվի և խոսքի, այլև լեզվի (որպես համակարգի), նորմի և խոսքի փոխհարաբերության տարբեր սխեմաները տառապում են մի արմատական թերությամբ. դրանց մեջ բավարար չափով հաշվի չի առնվում հիշյալ կարգերի փոխներթափանցումը,- անդրադառնալով այս հարցին՝ գրում է Գ. Ջահուկյանը:- Այս բանը հասկանալու համար նշենք, որ լեզու հասկացությունը միասնական չէ. լեզու ասելով, ինչպես նշել ենք, կարելի է հասկանալ մարդկանց խոսելու ընդհանուր

կարողությունը, առանձին լեզուները, լեզվի հասարակական ու ֆունկցիոնալ տարբերակումները, առանձին մարդկանց լեզվական ունեցվածքները: Եթե նկատի առնենք առանձին մարդուն, ապա նրա մոտ լեզուն խոսքի հնարավորությունն է և արդյունքը. լեզվական ամեն մի միավոր կամ միավորների ամբողջություն կոնկրետանալով վերածվում է խոսքայինի, խոսքային ամեն մի միավոր, զրկվելով կոնկրետությունից, վերածվում է լեզվականի. խոսքայինը լեզվական կոնկրետացումն է, լեզվականը՝ խոսքայինի վերացական դրսևորումը: Հասկանալի է, որ անհատի լեզուն հենվում է լեզվի հասարակական դրսևորման վրա, եթե հասարակականի տակ հասկանանք տվյալ լեզվի համակարգը և նորման: Հասկանալի է նաև, որ խոսելով ազգային լեզվի կամ մարդկային լեզվի մասին՝ նկատի ունենք այն վերացականը, որ հակադրվում է խոսքին որպես կոնկրետի:

Սկսելով որևէ լեզվի նկարագրությունը՝ լեզվաբանը բնականաբար վերանում է խոսքից և նկատի առնում տվյալ լեզվի համակարգը և նորմը» (101, էջ 100-101):


Ի տարբերություն նորմի և լեզվի համակարգի՝ խոսքը ներառում է ինչպես ավանդական, կողմնակի, սաղմնավորվող, նորմով «կնքված», գործածության իրավունք ստացած, այնպես էլ ոչ սովորական, մերժելի, ոչ հանձնարարելի ձևեր, այսինքն՝ պատահականորեն մշակված, սխալ, «մոդայիկ», «չկնքված» և «ժողովրդական» տարբերակներ: Խոսքի մեջ է լեզուն ֆիզիկական, նյութական դրսևորում ստանում, խոսողի ապրումներն ու զգացմունքները, նրա հուզաշխարհը խոսքի միջոցով են մարմին առնում ու դառնում անկրկնելի: Իսկ երբ այս ամենին էլ ավելանում են արտալեզվական կամ ոչ լեզվական միջոցները, ապա խոսքը դառնում է անփոխարինելի՝ հասարակության գոյատևման առումով: Եվ ըստ այն բանի, թե որքանով է այն արտահայտում խոսողի լեզվական հնարավորությունները, ինչպիսին է նրա լեզվային խոսք-արդյունքը, նաև որքանով է ընդգրկում ու բարձրացնում ուրիշի տրամադրությունը, մենք գնահատում ենք նրա ուժն ու ազդեցությունը: Լեզուն առաջացել է ու զարգացել, զարգանում է խոսելու ընթացքում. խոսքի միջոցով ներգործում ենք լեզվի վրա, նորանոր միջոցների օգնությամբ հարստացնում ու զարգացնում այն, ստեղծում նորանոր կանոններ:

Ահա այս փոխազդեցության գործընթացում մշակվում, զարգանում ու կատարելագործվում է քերականությունը:

Դեռևս մ. թ. ա. (483-375 թթ) հույն փիլիսոփա Գորգիասը գրել է. «Խոսքը մեծ տիրակալ է, որն ունի թեև փոքրիկ և միանգամայն աննշմար մարմին, կատարում է հրաշալի բաներ: Այն կարող է և՛ վախը վանել, և՛ թախիծը փարատել, և՛ ուրախություն ներշնչել, և տառապանք հարուցել... Խոսքի ուժը այնպիսի նշանակություն ունի հոգու տրամադրության նկատմամբ, ինչպիսի ուժ ունի դեղը մարմնի նկատմամբ: Նման այն բանի, թե ինչպես դեղերից մեկը մարմնից դուրս է մղում մի տեսակ հյութ, մյուսները՝ այլ տեսակի հյութեր, և նրանցից մի քանիսը հիվանդությունը հեռացնում են, իսկ մյուսները կտրում կյանքի թելը, ճիշտ այդպես էլ որոշ խոսքեր տխրեցնում են, մյուսները ուրախացնում, որոշ խոսքեր սարսափեցնում են, մյուսները՝ քաջալերում, որոշ խոսքեր էլ թունավորում ու կախարդում են հոգիդ՝ հակելով դեպի վատ բան»: «Դեղ ու դարման» խոսքը, «հրաշագործ» խոսքը այդպիսին է, եթե այն նորմավորված, մշակված լեզվական համակարգի դրսևորումն է: Սա ենթադրում է նաև հակառակը՝ ճիշտ ու կարգավորված խոսքը նպաստում է լեզվի զարգացմանը, լեզվական նորմի կատարելությանը: Խոսքը լեզվի իրական գոյն է, նրա «կյանքը», զարգացման աղբյուրը, խոսքը լեզվի ներգործուն վերարտադրությունն է, բայց և հականերգործելու ուժ ունի: Խոսքի միջոցով ենք մենք ներգործում լեզվի վրա, նրա կայուն վիճակը դարձնում հարաբերականորեն կայուն, անհրաժեշտության դեպքում լեզվական նոր համակարգի, լեզվական նոր նորմի ձևավորման խնդիր դնում: Այս փոխազդեցությամբ էլ պայմանավորված՝ զարգանում է լեզուն, մշակվում, կատարելագործվում է նրա քերականությունը և բռնում «իդեալականացման» ուղին: Բայց լեզվի համակարգը պետք է նման լինի Մենդելեևի պարբերական աղյուսակին՝ բաց վանդակներ ունենա՝ հնարավոր նորագոյացությունների համար. խոսքի ազդեցությամբ լեզվական նորմի փոփոխությունը լեզվի համակարգի բաց վանդակները կլրացնի լեզվական նոր ձևերով, կամ էլ նոր բաց վանդակներ կստեղծի:

Այսպես ընկալելով համակարգը, այս ձևով ձևելով լեզվի զարգացման տվյալ շրջանի լեզվի համակարգի սահմանները, հաշվի առնելով նորմի՝ հատկապես ընտրողական էությունը և խոսքի՝ լեզվի

համակարգի և նորմի ընձեռած իրացումներից բացի նաև պատահական, ոչ ճիշտ, ոչ թույլատրելի, անգամ սխալ քերականական ձևեր և նույնիսկ հայհոյախոսական բառեր ներառելը, լեզվի «ներգործուն վերարտադրություն» լինելը, կարելի է քննարկվող եռահարցի փոխհարաբերությունը ներկայացնել հետևյալ սխեմայով՝



ըստ որի համակարգն իր մեջ ներառում է նորմը, խոսքը՝ թե՛ նորմը, թե համակարգը, իսկ նորմը սահմանվում է՝ համակարգի և խոսքի իրողություններն ու հնարավորությունները հաշվի առնելով, այսինքն՝ նորմը դառնում է լեզվի համակարգի և խոսքի ընտրված, մշակված, կանոնակարգված ելք. նորմը դառնում է հաղորդակցության գործընթացի կիզակետը: Պետք է նշել նաև, որ նորմն էլ իր հերթին ինչ-որ չափով ֆամակարգում է լեզվի համակարգը, կարգավորում է խոսքը, բայց նորից նրանց ազդեցությամբ փոփոխվում է, և այսպես շարունակ... Լեզվի համակարգը, նորմը և խոսքը անընդհատ փոխազդեցության, փոխներգործության գործընթացի մեջ են գտնվում՝ միմյանցից կախված, միմյանցով պայմանավորված:

ԼԵԶՎԻ ՆՈՐՄԱՎՈՐՈՒՄԸ

Լեզվի մեջ նորմավորումն իրագործվում է է երկու նկատառումով՝

1. Լեզվական նորմի հաստատումը որպես հնչյունական, բառագիտական, բառակազմական, քերականական կառույցների իրական ամբողջություն.
2. լեզվական նորմի հաստատումը որպես լեզվական միջոցների գործածության ընտրություն և օրինաչափությունների, միտումների ամբողջություն:

Լեզվի նորմավորումը բավական բարդ և հակասական երևույթ է: Մի կողմից՝ այն կապվում է լեզվի համակարգի հետ, որի հնարավորություններն էլ իրացնում է, մյուս կողմից՝ ցանկացած լեզվական փաստ կարող է դառնալ նորմատիվ միայն այն դեպքում, երբ կարողանում է անցնել հասարակության կողմից արժեքավորման, գնահատման քուրայով, հասարակական հավանություն ստանալ:

Նորմավորման հիմնական խնդիրն է նախ և առաջ հաշվի առնել լեզվական ավանդույթը, համակարգային ընդհանուր դրվածքը, ապա որոշել լեզվի զարգացման նոր միտումները՝ չանտեսելով արտահայտչականությունը:

Նորմավորման խնդիրը քննարկելիս բնականաբար հարց է ծագում՝ ի՞նչը պետք է համարել նորմին համապատասխան, կամ ո՞րն է նորմով սահմանվածը, իսկ ի՞նչն է հակասում նորմին կամ նրա սահմաններից դուրս է, ինչպե՞ս է հաստատվում նորմը, որո՞նք են նորմավորման այն չափանիշներն ու սկզբունքները, որոնցով պետք է առաջնորդվել լեզվական փաստերի գնահատման և ընտրության ժամանակ: Պետք է ասել, որ լեզվաբանության մեջ նորմավորման չափանիշների հարցում միասնական կարծիք չկա...

Լեզվական նորմը կատարյալ է, լիարժեք, եթե համապատասխանում է օբյեկտիվ իրականությանը:

Լեզվական նորմը կարգավորում է խոսքային իրադրությունը, նպաստում լեզվի պայմանականությունների կարգավորմանը, ապահովում խոսքի միակերպությունը, նրա ճիշտ, գեղեցիկ ու նպատակային կառուցումը թե՛ բառերի ընտրության, թե՛ քերականական կառուցվածքի, թե՛ առհասարակ խոսքի կառուցվածքի բոլոր

բաղադրիչների, բոլոր օրինաչափությունների տեսակետից: Լեզվի նորմավորումն իր ներքին օրենքներն ունի. մերժում է այնպիսի բառեր, բառածևեր, որոնք սխալ են, գեղեցիկ չեն, շփոթություն են առաջ բերում ուրիշ բառերի, բառածևերի զուգորդությամբ, զուրկ են իմաստային ճշտությունից: Լեզվի նորմավորումը պայմանավորված է ա/ տվյալ երևույթի՝ լեզվի համակարգին համապատասխան լինելու, բ/ հաղորդակցության մեջ մշտապես և ընդհանուրի կողմից օգտագործվելու, գ/ հասարակության կողմից հավանության արժանանալու, դ/ կանոնական, օրինական ճանաչում ստանալու սկզբունքների հաշվառումով:

Լեզվի նորմավորման մեծագույն ազդակը նրա ծգտումն է դեպի ընդհանրացում և միօրինակացում:

Մեր օրերում համատարած գրագիտության, չորրորդ իշխանության՝ մամուլի, զանգվածային լրատվամիջոցների գոյության, պետական շահագրգռվածության առկայության պայմաններում լեզվական նորմավորումը մեծ ազդեցություն կարող է ունենալ լեզվի և նրա զարգացման ընթացքի վրա:

Նորմավորումն սկզբունքորեն կարող է երեք տեսակ լինել

ա/ Ավանդական կամ հետահայաց. այս դեպքում չափանիշ է դառնում լեզվի հին վիճակը, անտեսվում են խոսակցական լեզվի իրողությունները, որով և կասեցվում է լեզվի բնականոն զարգացման ընթացքը:

բ/ Համաժամանակյա. այս դեպքում նորմավորումը կատարվում է համաժամանակյա կտրվածքով՝ նպատակ ունենալով այն կայունացնել և թողնել անփոփոխ. չափանիշ է դառնում կայուն վիճակը. նորից կասեցվում է լեզվի բնականոն զարգացման ընթացքը, իսկ փոփոխությունները կատարվում են տարերայնորեն՝ լեզվի տարերային զարգացման ճնշմամբ:

գ/ Հեռանկարային որով լեզուն դիտվում է իբրև դինամիկ, զարգացող, իդեալական վիճակի ծգտող համակարգ: Այս դեպքում է, որ նորմավորման նպատակն է դառնում լեզվի զարգացման միտումներին համապատասխանող տարրերի զարգացումը, և հետևաբար, այդ համակարգը խախտող, խեղաթյուրող տարրերի արտամղումը: Բնականաբար լեզվի զարգացման ընթացքը հենց այսպիսի նորմավորման կարիք ունի, երբ կանխատեսվում է լեզվի

զարգացումը, հայտնաբերվում են այդ զարգացման օրինաչափություններն ու միտումները (գրական լեզվի ժողովրդականացման միտումը, բանականացման միտումը, օտարաբանությունների արտամղման միտումը, տնտեսման միտումը, արտահայտչականության միտումը և այլն), երբ, այդ հատնաբերված օրինաչափություններին և միտումներին համաձայն, մշակվում են հայերենի նորմավորման այնպիսի սկզբունքներ, որոնցով կանխվելու է նրա տարերային զարգացումը:

Լեզվի զարգացման միտումները հաշվի առնող նորմավորումը պետք է նաև գործնականորեն արդարացված լինի, այսինքն՝ բավարարի նպատակահարմարության պահանջը, նպաստի լեզվի անկաշկանդ զարգացմանը և հիմնավորվի լեզուն դեպի իդեալականացում, դեպի իդեալական համակարգ տանող ճգտման սկզբունքով: Այս դեպքում այն նաև բարոյապես արդարացված կլինի, քանի որ յուրաքանչյուր լեզվի զարգացման նպատակաուղղվածությունը ենթադրում է լեզվական օրինապահություն՝ իբրև լեզվական հանրության վարքագծի հիմնական սկզբունք, իսկ լեզվական օրինապահությունը պահանջում է նախ և առաջ լեզվի մաքրություն և հանրության գիտակցված դիմադրություն լեզուն խեղող ցանկացած տարրի նկատմամբ:

Լեզվական առումով լեզվի նորմավորում նշանակում է՝

1. գրական լեզվի նորմի որոշման և հաստատման խնդիրների ուսումնասիրություն.
2. նորմավորման նպատակներով լեզվի տեսության և լեզվագործածության հարաբերության հետազոտում.
3. կանոնների, օրինաչափությունների համակարգում և հետագա կատարելագործում.
4. օրինաչափությունների արձանագրում և ամրակայում:

Նորմավորումը իրացվում է լեզվական միջոցների մշակմամբ, դրանց ընտրությամբ և հաստատմամբ:

Գրական լեզուն նորմավորվում է նաև ձևաբանության մշակումով: Օրինակ՝ մինչև անցյալ դարի 20-ական թվականները գրական լեզվում կիրառվում էին **մարդիկներ, ալիք** (հոգնակի ձև), **աղջկերք, երեխայք, գինվո, ավուր, սիրահարիլ, գրե՛, սիրե՛,**

առին, համաձայնեցավ, նորա, դորա, պատճառանոք, ձեռքումը, աշխարհումը և նման շատ ձևեր: Գրական լեզուն իր նորմավորման ճանապարհին մերժեց այս ձևերը: Նորմավորման գործընթացը երբեք կանգ չի առնում. այն, ինչ օրինաչափական էր ոչ վաղ անցյալում, այսօր կանոնական է, այսօրվա օրինաչափական, կանոնական ձևերը վաղը կարող են դուրս գալ նորմի սահմաններից և որակվել որպես ոչ կանոնական: Այսօր նորմավորման գործընթացի մեջ են **մի՛ գա, մի՛ գաք** և **մի՛ եկ, մի՛ եկեք, թողի** և **քողեցի, բերի** և **բերեցի, ասի** և **ասացի, նստա** և **նստեցի, գինիի** և **գինու, արյունի** և **արյան, արյունով** և **արյամբ** և նման շատ ձևեր:

Հին և նոր սերունդների միջև լեզվական համակերպումը ևս նորմավորող դեր ունի: Նորմավորման գործընթացում լեզվական համակերպության մասին է. Աղայանը գրում է. «Եվ այսպես՝ **լեզվական համակերպությունը կարևոր դեր է խաղում տարբեր սերունդների լեզվական կանոնների միջև եղած տարբերությունները համահարթելու և միօրինակություն ստեղծելու տեսակետից**» (14, էջ 34):

Լեզվի նորմավորմանը նպաստում է նաև լեզվի տրամաբանական կողմը: Այսպես օրինակ՝ ներգոյական հոլովի **-ում** վերջավորությունը ոչ բոլոր գոյականների համար է կիրառելի. կան մի շարք բառեր, որոնք չունեն «մի բան պարփակելու» իմաստ, հետևաբար տրամաբանության պահանջով չեն կարող ներգոյական հոլովի արտահայտման տվյալ ձևը ունենալ, և, բնականաբար, նման բառերի **-ում**-ով ներգոյական ձևը լեզվի նորմի սահմաններից դուրս է (**մատում, երեսում, ճակատում, աշակերտում ...**):

Լեզուն կարող է հնչյունաբանական, բառապաշարային, քերականական նորմերի տեսանկյունից ճիշտ լինել, բայց գեղեցիկ ու արտահայտիչ չլինել:

Ուստի և նորմավորման գործընթացը կարգավորելիս չպետք է անտեսել նաև խոսքային միջոցների կիրառման եղանակները, պատկերների ստեղծման մեթոդներն ու ձևերը, կապակցման բարմ ձևերը, շարադասական փոփոխությունները, բառերի արտահայտչական հատկանիշները:

Նորմավորման հիմնական խնդիրն է որոշել լեզվի զարգացման ներքին օրինաչափություններն ու նոր միտումները, ավանդույթներն

ու պատմական ճշտությունը, համակարգայնության ընդհանուր դրվածքը, արտահայտչական նրբիմաստությունն ու բարեհնչությունը, թարմությունը և այլն: Սրանք միշտ չէ, որ լրացնում են մեկը մյուսին. շատ հաճախ իրար հակասում են. մեկի նորմավորման գործոն դառնալը խանգարում է մյուսի՝ այդպիսին դառնալուն:

Նորմատիվ բառարանների, նորմատիվ քերականությունների տվյալները հիմք են տալիս առանձնացնելու նորմավորման երեք տարբերակ՝

Նորմավորումը խիստ է, պարտադիր, զուգաձևություններ չթույլատրող:

Նորմավորումը չեզոք է, չի բացառում զուգաձևությունների գոյությունը և թույլատրում է համազոր տարբերակներ:

Նորմավորումը փոփոխական է, շարժուն, թույլատրում է խոսակցական, նաև հնացած և հին կամ նոր և նորագույն ձևերի գործածությունը:

Վերջին ժամանակներս լեզվական աշխարհում լեզվի օրինաչափությունների համակարգումը, կանոնավորումը, լեզվի առարկայացման, նյութականության դրսևորումը անվանում են «օրինակարգավորում», «օրենքների համակարգում»: Այն «նորմավորում» բառի համեմատությամբ նեղ իմաստ ունի, առավել մասնագիտական է և օգտագործվում է միայն այն դեպքերում, երբ խոսվում է լեզվական կանոնների արծանագրման և օրինականացման աշխատանքների, հասարակության հավանությունը ստանալու մասին: Չպետք է մոռանալ, որ օրինակարգավորվում է, օրենքի ուժ է ստանում, համակարգվում է միայն գրական լեզվի նորմը:

Գրական լեզվի նորմի օրինակարգավորումը քերականություններում, տեղեկատուներում և բառարաններում պետք է կատարվի լեզվում նկատվող փոփոխություններին համապատասխան, նաև հաշվի առնվի խոսողների կողմից նման լեզվական իրակությունների օգտագործման և գնահատման իրողությունը: Գրական լեզվի նորմավորումը կատարվում է պատմական երկարատև ժամանակաշրջանում: Նրա միասնականացման, մշակման և կարգավորման համար նշանակալից դեր ունեն ինչպես լեզվական, այնպես էլ արտալեզվական մի շարք հանգամանքներ:

Գրական լեզվի նորմավորման նախնական ընթացքում, որպես օրինաչափություն, առանձնացվում է երկրի որևէ մասի կամ քաղաքի (մեծ մասամբ՝ մայրաքաղաքի) լեզուն, որի գրավոր և բանավոր տարբերակները հիմք են դառնում գրական լեզվի ձևավորման կամ նրա օրինակարգավորման (կոդիֆիկացիայի) համար, ինչպես օրինակ՝ Փարիզի լեզուն՝ ֆրանսերենի համար, Մոսկվայի լեզուն ռուսերենի համար, Երևանի լեզուն՝ հայերենի և այլն:

Գրական լեզվի նորմավորման ընթացքում հնարավոր է անցում գրական լեզվից դեպի բարբառը, որն էլ հիմք կդառնա նոր գրական լեզվի համար (այս առումով լավագույն օրինակ է աշխարհաբարի ձևավորումը և նորմավորումը):

Լեզվի տարբեր մակարդակների նորմավորման ժամանակ հնարավոր են ժամանակագրական և այլ տարբերություններ: Օրինակ՝ բառային, բառակազմական համակարգի նորմավորումը կարող է կատարվել ավելի մեծ տարածքային հիմքի վրա, քան արտասանականը: Նորմի ոչ համածնությունը (այսինքն բոլոր մակարդակներում նույն ժամանակում, նույն ձևով և նույն տարածական չափով ձևավորվելը) և նորմավորման ժամանակագրական տարբերությունները հանգեցնում են լեզվի տարբեր մակարդակների նորմավորման տարբերությունների: Ուղղագրական, բառակազմական ենթահամակարգերում օրինակարգավորումը ավելի ակնառու է, քան ուղղախոսական, շարահյուսական համակարգերում, ձևաբանական մակարդակում այն գրեթե աննշմարելի է ժամանակի փոքր հատվածում:

Հայոց լեզուն բառակազմական, ձևաբանական և շարահյուսական հնարավորություններով հարուստ լեզու է, ուստի և հնարավոր չէ խուսափել ոչ ցանկալի շփոթից: Լեզվի նորմի միասնականության դրվածքը, հասարակության անդամների համար ընդհանուր և պարտադիր լինելը այն անհրաժեշտ պայմաններն են, որոնց դեպքում թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքը ճիշը են, բոլորին հասկանալի, պարզ ու արտահայտիչ, և միտքը ճշտորեն է ձևավորվում, խոսքն էլ մտքին է համապատասխանում:

Հենց օրենքների համակարգումն էլ հնարավորություն է տալիս պահանջել, որ նրանք պահպանվեն թե՛ գրավոր խոսքում, թե՛

բանավոր. ստեղծվում են պայմաններ՝ նրանց համընդհանուր և պարտադիր լինելու համար:

Գրական նորմը հաստատվում է տարբեր նպատակներով. այն սահմանազատում է գրական լեզուն ազգային լեզվի ոչ գրական տարրերից՝ բարբառից, ժարգոնից, հասարակաբանությունից:

Նորմավորման ընթացքում հարկավոր է չափազանց զգույշ լինել. չպետք է գերագնահատել կանխատեսումները. լեզվական կանխատեսման գերագնահատումը ենթադրում է «պրոկրուստյան մահիճ» լեզվի համար: Այսպիսի սկզբունքով նորմավորումը կարող է կապանքներ դառնալ լեզվի զարգացման ճանապարհին, բռնանալ լեզվի անկաշկանդ զարգացման ընթացքի վրա, այդ իսկ պատճառով էլ օտարվել նրանից: Եթե նորմավորման ընթացքում ստեղծվող կանոնները, կոդավորման, օրինակարգավորման սկզբունքները, նորմատիվ քերականությունները պարտադրող են, ոչ ճկուն, ապա նրանք դատապարտված են աստիճանական մահացման: Նորմավորման գործընթացը քայքայում են նաև այնպիսի կանխատեսումները, որոնք շահադիտական այլևայլ նպատակներով են կատարվում, հետադիմական տեսությունների անմիջական կնիքն են կրում...

Արդի հայերենի նորմավորման, օրինակարգավորման խնդրում դեռևս շատ անելիքներ կան, լեզվական շատ հոգսեր կան՝ կարոտ լուսաբանման, բազմաթիվ իրողություններ կան՝ հետազոտելու, գիտականորեն վերլուծելու, արձանագրելու և կանոն դարձնելու: Պատահական չէ, որ ժամանակակից նորմատիվ քերականություններն արձանագրում են. «Չնայած գրական նորմավորման ինտենսիվ պրոցեսին և նորմավորված խոսքի տարածման համար նպաստավոր պայմանների առկայությանը՝ ժամանակակից հայոց լեզուն դեռևս աչքի է ընկնում բարբառային տարբերությունների մեծաքանակությամբ, գրական նորմավորված խոսքի կողքին մեծ թիվ են կազմում խոսքի՝ հարկ եղած չափով չնորմավորված դրսևորումները» (98, էջ 4):

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ – ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՆՈՐՄ

Խոսելու ունակությունը մարդու բնածին կարողություններից մեկն է ի վերուստ տրված, և առաջին հայացքից խոսելու, հաղորդակցվելու գործընթացում լեզվական նորմին, մասնավորապես քերականական նորմին տիրապետելն անկարևոր է թվում. առանց քերականություն իմանալու էլ կարելի է գրել, խոսել: Բայց գրել-խոսե՛լ էլ կա, գրել-խոսե՛լ էլ. քերականական նորմով սահմանված կանոնների իմացությունն օգնում է, որ ճիշտ խոսենք, և խոսքն ավելի գեղեցիկ, ավելի արտահայտիչ լինի: «Ոչ միայն այդ... «Без букв и грамматики не учатся и математике», - հինավուրց ասացվածքի մեջբերումով զգուշացնում է Հ. Հարությունյանը (70, էջ 109): Քերականությունը ստեղծվում է լեզվի զարգացման ամբողջ պատմության ընթացքում, լեզվի անընդհատ դրսևորման մեջ, մտածողության և հաղորդակցման դարավոր ընթացքում: Գեղեցիկ է Գ. Մագիստրոսի համեմատությունը՝ ինչպես արքայական ճանապարհի նշանաձողերն առաջնորդում են դեպի թագավորական արքունիքը, այնպես էլ քերականությունը դառնում է մյուս գիտությունների ուսումնասիրության ուղեցույցը: Լեզվական կատարելություն տանող ճանապարհի նշանաձողերից է նաև քերականական կանոնների ամբողջությունը՝ քերականական նորմը:

Առաքել Սյունեցու կարծիքով ևս քերականությունը բոլոր գիտությունների նախադուռն է, նրանց ուսումնասիրության բանալին. ինչպես բժշկությունը լավացնում է հիվանդին ու խնամում առողջին, այնպես էլ քերականությունը ժամանակի ընթացքում աղճատված լեզուն մաքրում է, ուղղում, կանոնավորում և հասցնում իր նախասկզբնական կատարելության (104, էջ 27): Քերականությունը պետք է օգնի գրական լեզվի «ուղիղ» հասկացությանը և «ճիշտ» կիրառությանը, նորմատիվ քերականություններից, դասագրքերից քաղված պաշարը պետք է զտի, մաքրի և լեզվի արծարծված զգացողությունը վերածի կատարյալ գիտության, այլապես այն ոչ մի արժեք չի ունենա: Իրավացի է Հ. Երզնկացին այն հարցում, թե քերականությունը մաքուր է պահում գրական երկերը, իսկ երբ դրանք

խեղաթյուրվում են, ապա վերջինս բուժում է **քերթողական զորությամբ** ու **դատողական քննությամբ:**

Լեզվի պատմությունը ցույց է տալիս, որ լեզվի զարգացումն արտահայտվում է մի կողմից նրա բառային կազմի հարստացման ու բազմակողմանի դառնալու մեջ, մյուս կողմից՝ քերականության հղկման ու մշակման, կատարելագործման մեջ: Քերականությունը գիտություն է, այն աշխարհի լեզուների քերականական կարգերի ամբողջությունն է, նրանց նկարագրությունն ու ուսումնասիրությունը, այս առումով էլ միջազգային գիտություն է. մի լեզու չի կարող ունենալ եղած բոլոր քերականական կարգերը /հայերենը, օրինակ, չունի երկակի թիվ, գոյականների սեռի կարգը/, բայց նրա գործող քերականական կարգերի մշակումն ու կարգավորումը կարող է այլ լեզուներում նույնպիսի ազդեցություն ունենալ: Եթե չհիմնավորված ձևափոխությունները դառնում են սպառնալիք լեզվական նորմի կայունության, համակարգի թուլացման հարցում, ապա յուրաքանչյուր լեզվի քերականության աղավաղումը վնասում է ընդհանուր գիտությանը: «Քերականությունը միջազգային գիտություն է գրեթե նույնչափ, որքան քիմիան կամ աշխարհագրությունը: Անհատական ձևափոխությունները վնասում են ընդհանուր գիտությանը»,- գրում է Հ. Աճառյանը (21, էջ 14):

Լեզվի քերականական կառուցվածքը ինքնատիպ համակարգ է այնքանով, որ զարգացմամբ ներփակ է և համեմատաբար անտարբեր՝ ժողովրդի տնտեսական-հասարակական կյանքում կատարված տեղաշարժերի նկատմամբ:

Լեզվի քերականական կառուցվածքի զարգացումն արտահայտվում է նրա՝ նոր կանոններով հարստանալու, նաև որոշ հին կանոններից ազատվելու միջոցով, ըստ որում այդ բոլորը կարող են հանգեցնել քերականական համակարգի փոփոխության կամ՝ ոչ:

Պ. Սևակն այն կարծիքին է, որ «բառ-ա-պաշա՛ր», պաշար ունենալը հարստություն է, բայց դեռ հարուստ ապրել չէ. հարուստ ապրելու համար այդ պաշարը պետք է ոչ թե թողնել շտեմարանում կամ փակել սնդուկում, այլ օգտագործել՝ «հագնել» կամ «ուտել»: Իսկ բառապաշարը, հայոց լեզվի բառային գանձը «ուտելու» կամ «հագնելու» համար քերականական գիտելիքներ պետք է ունենալ,

բառերը ձևափոխելու, թեքելու ու հոլովելու, իրար կապելու լեզվական հմտություն:

Քերականությունը ուսմունք է լեզվի քերականական կառուցվածքի մասին: Քերականական նորմն էլ քերականության, քերականական համակարգի բոլոր տարրերի գործածության կանոնների ամբողջությունն է, որ հաստատվում է լեզվի զարգացման օրինաչափություններին համապատասխան: Քերականական նորմը ձևավորվում է նաև լեզվի համակարգի տարբեր մակարդակներում գործող կանոնների հաշվառումով՝ հնչյունական, հնչյունափոխական, բառակազմական (կամ բառաստեղծական), ոճական: Բառային իմաստը ևս կարևոր նշանակություն ունի քերականական նորմի ձևավորման մեջ: Ճիշտ է Ա. Այտընյանի այն կարծիքը, թե քերականությունը արվեստ է, որ սովորեցնում է սահմանված նորմին համապատասխան խոսել և գրել, նաև խոսակցին հասկանալի լինել, դիմացինին ճիշտ հասկացնել. «1. Քերականութիւնն արուեստ մըն է, որ կը սորվեցընէ լեզու մը 1. ուղիղ հասկընալ եւ 2. անսխալ խօսիլ կամ գրել: Ուստի

2. Հայերէն լեզուի քերականութիւնը կը սորվեցընէ, նախ հայերէն լեզուն ուղիղ հասկընալ, եւ երկրորդ անսխալ խօսիլ կամ՝ գրել» (25, էջ 1):

Քերականական ձևերն իրենց դերն ունեն խոսքի հնչյունային բարեգեղությունը պահպանելու հարցում. նրանց հմուտ և ճիշտ գործադրումն է, որ ապահովում է լեզվի ճշգրտությունը, կանոնավորությունն ու գեղեցկությունը: Պետք չէ, որ լեզուն ավելորդություններով ծանրաբեռնվի. կարևորն ու անհրաժեշտը լեզվի մեջ այն է, որ սովորական հոլովական ձևերը, բայերի սովորական եղանակներն ու ժամանակները պարզ, դյուրըմբռնելի և կարճ ձևերի տակ ներկայացված լինեն: Բոլոր լեզուները ձգտում են ճշգրտության, իսկ ճշգրտությունը պահանջում է համառոտություն, հակիրճություն: Համառոտությունը լեզվի հատկանիշներից է, որի տակ հասկանում ենք նվազագույնն այն ջանքերի, որ գործ է դնում լեզուն՝ մի որևէ գաղափար արտահայտելու համար:

Քերականությունը ներկայանում է հիմնականում երկու ենթաբաժնով՝ ձևաբանություն և շարահյուսություն: Երբեմն ձևաբանության մեջ ներառում են նաև բառակազմությունը:

Քերականական նորմը իր հերթին համապատասխանաբար դրսևորվում է **ձևաբանական նորմ** և **շարահյուսական նորմ** հասկացությունների մեջ: Ձևաբանությունը լեզվաբանության այն բաժինն է, որ ուսումնասիրում է բառերի ձևաբանական կառուցվածքը, նրա միավորները, այդ կառուցվածքի կրած ձևական փոփոխությունները, դասակարգում ձևաբանական միավորներն ըստ նրանց ընդհանուր իմաստի ու ձևաբանական հատկանիշների: Ձևաբանությունը բառային ու շարահյուսական մակարդակներն իրար կապող կամուրջն է, բառերը շարահյուսական մակարդակի համար «պատրաստող», «մշակող» մակարդակը: «Սա նշանակում է, թե ձևաբանական մակարդակը լեզվի կառուցվածքի մեջ կատարում է, այսպես ասած, «վերամշակող» դեր. ինչպես որ ատաղձը համապատասխան մշակման է ենթարկվում կահագործարանում տվյալ իրը սարքելու համար, այդպես էլ բառը ձևաբանական մակարդակում «մշակման» է ենթարկվում, ձևավորվում է համապատասխան նախադասություն կառուցելու համար... Ձևաբանական մակարդակի տրամադրության տակ են դրվում, բացի բառերից, նաև ձևորդներն ու տվյալ լեզվին հատուկ բոլոր ձևաբանական միջոցները, որոնցով նա ապահովում է բառերի համակցությունը նախադասության մեջ՝ նրանց դերի համապատասխան», - ձևաբանության էությունն այսպես է պարզաբանում է. Աղայանը (14, էջ 150-151): Եթե ձևաբանությունն ուսումնասիրում է քերականական ձևերը, նրանց քերականական նշանակություններն ու քերականական կարգերը, ապա ձևաբանական նորմը այդ ձևերի, իմաստների, կարգերի օգտագործման կանոնների ամբողջությունն է, որը ընդհանուր ու պարտադիր է հասարակության բոլոր անդամների համար. **ձևաբանական նորմը հասարակության կողմից ընդունելություն գտած, բոլորի համար պարտադիր ճանաչված քերականական կարգերի, քերականական իմաստների և նրանց ձևակազմիչ միջոցների համակարգը կարգավորող, օրինակարգավորող կանոնների ամբողջությունն է՝ պատմականորեն, տրամաբանական գործոններով, ավանդությամբ, ճշտությամբ և բարեհնչությամբ ամրապնդված:** Ձևաբանական նորմի սահմանման համար այս դեպքում էական է դառնում ոչ թե բառածևի՝ արդեն պատմականորեն փոփոխված տարբերակը, այլ ներկա ժամանակում

նորմատիվ տարբերակներ ունենալը, իրողություն, որը հանդիպում է առօրյա խոսքում, և որը այս կամ այն չափով դժվարացնում է հաղորդակցման ընթացքը:

Ձևաբանական նորմի սահմանման համար կարևոր նախապայման են դառնում ձևաբանական գիտելիքներ ունենալը, դրանց ճիշտ և հմուտ կիրառությունը, նվազագույն ճիգի և խնայողության, տնտեսման գործոնի հաշվառումը, գեղեցկության՝ բարեհնչության ապահովումը:

Ձևաբանական նորմի իմացությունը, նրա կանոններին տիրապետելը առավել ևս կարևորվում են, երբ հաշվի է առնվում ձևաբանության «վերամշակող և կամրջային» էությունը: Բառերի ճիշտ ձևավորումը, բառաձևերի ճիշտ ընտրությունը օգնում են նախադասությունների կանոնական ձևավորմանը, խոսքի կանոնակարգմանը. այս դեպքում է, որ զգում ես բառի ամբողջ հմայքը. չկան լավ ու վատ բառեր, բառաձևեր. կան ճիշտ, տեղին և սխալ, ոչ տեղին օգտագործված բառեր ու բառաձևեր:

Սովորաբար ձևաբանության մեջ նորմավորման էությունը կանոնների միօրինակության մեջ է, նպատակը՝ միակերպության ձգտումը: Ձևաբանական նորմը ևս պահանջում է խնամքով ընտրել այն ամենը, այն լավագույնը, որ կա ձևաբանական համակարգում՝ ընտրել հստակ արտահայտվածը, ճիշտը, կարճը, հնչեղը, գեղեցիկը, և այդ ամենը հոգատարությամբ մշակել, զարգացնել: Եթե երևան են գալիս շեղումներ, դրանք հակասում են ձևաբանական կանոններին: Աշխարհաբարը հոլովման համակարգում կատարել է խոշոր քայլ դեպի կանոնավորությունը. նախ հաստատել է մի ընդհանուր կանոն, որ գոյականի սեռական-տրականը հիմնականում կազմվում է **ի** հոլովիչով: Մնացած ձևերը սակավաթիվ բառեր են ներառում, որոնք կամ հնավանդ են, կամ բացառություն՝ ընդհանուր կանոնից, բայց և նորմատիվ են, գտնվում են նորմի սահմաններում: Սպասելի է, որ լեզվի կենդանի գործընթացը կվերացնի այս բացառությունները և միասնական կանոն կսահմանի: Հոլովիչի ընդհանրական բնորոշումն էլ երևան է հանում սեռական-տրական հոլովի կազմության զարգացման միտումը. նախ կվերանան գրաբարածև հոլովման մնացորդները, և միակերպության ձգտումը կամաց-կամաց իսպառ կվերացնի եղած բացառությունները, զուգաձևությունները: Բայց և

այնպես հոլովական համակարգը այդպիսի իդեալականության երևի չի հասնի, քանի որ լեզվի զարգացման ընթացքը կանգ չի առնում:

Հոգնակի թիվը գրաբարում կազմվում էր եզակիից տարբեր մասնիկներով, հատկապես **ք**-ով, աշխարհաբարում ոչ միայն եզակիից տարբեր չէ, այլև հետևում է բացարձակ ընդհանուր կանոնի, և նույնիսկ այն բառերը, որոնք եզակի սեռական-տրականի ձևընտրության մեջ բացառություն են կազմում, հետևում են հոգնակիի կազմության այդ ընդհանուր սկզբունքին: Չևաբանության մեջ կանոնավորությունն այն է, որ լեզվի մեջ քերականական մի իմաստ քերականական մի ձևով արտահայտվի, և յուրաքանչյուր քերականական ձև քերականական մի իմաստ ունենա: Բայց սա լեզվի «իդեալական» վիճակ է, և ոչ մի լեզու նման իդեալականացման դեռևս չի հասել. ոչ մի լեզվի մեջ լեզվական միավորները չեն կարող կատարյալ տրամաբանություն, կառուցվածքի նմանություն և համասեռություն ցուցաբերել: Նորից անվիճելի է աճառյանական տրամաբանությունը. «Ըստ այսմ կանոնավորությունը լեզվի մեջ այն սկզբունքն է, որով լեզուն ձգտում է մի պաշտոնի համար հատկացնել մի միակ նշան և մի նշանին տալ մի միակ պաշտոն, ուրիշ խոսքով ասելով՝ մի քերականական կարգ միևնույն լեզվի մեջ միևնույն ձևով արտահայտել և ամեն մի ձևի միայն մի քերականական կարգ հատկացնել: Բայց ո՛չ մի լեզու այս իդեալին չի հասել, որովհետև գործոն ազդակները զանազան կողմից և զանազան ուղղությամբ են, հաճախ պատահաբար առաջացած, ուստի և ոչ մի լեզվի ձևաբանության մեջ չենք կարող գտնել կատարյալ տրամաբանություն, կառուցվածքի միանմանություն և համասեռություն:

Երբ եզակիի հոլովները կազմվում են տարբեր ձևով և հոգնակիի համապատասխան հոլովները տարբեր ձևով, դա կանոնավորության հակառակ երևույթ է: Երբ բայի տարբեր ժամանակները միևնույն դեմքի համար ամեն մի ժամանակում տարբեր վերջավորություններ ունեն, դա կանոնավորության հակառակ երևույթ է»,- գրում է Հ. Աճառյանը (20, էջ 334):

Քերականության պատմությունը ցույց է տալիս, որ այն խառնակություն, խառնաշփոթություն չի սիրում և աշխատում է վերացնել դրանք՝ միօրինակություն սահմանելով. լեզվի քերականության կյանքում նույն նպատակին ծառայող բազմաթիվ ձևերից լե-

զուն ընտրում է միայն մեկը: Միօրինակությունը քերականության պահանջն է. միօրինակությունը հատկապես ձևաբանության պահանջն է: Ձևաբանական համակարգի կանոնավորությունը, նորմին համապատասխանելը ենթադրում են կանոնների միօրինակություն, ձևաբանական նորմի լիիրավ գործառություն, անկանոնությունների, բացառությունների և շեղումների բացառում, այսինքն՝ ձևաբանական կատարելություն՝ մի ձևին՝ մի իմաստ, մի իմաստին՝ մի ձև՝ երազելի, նաև անիրականալի լեզվական մի վիճակ. համենայն դեպս լեզուների պատմության մեջ ոչ մի լեզվում դեռևս «ձևաբանական կատարելության» փաստ չի արձանագրվել, քանի որ լեզուն իր ընդունած այս կամ այն կանոնի դեմ միշտ էլ ստեղծում է նրա բացառությունը, տարբերակայնությունը, որն արդեն հակառակ է նրա կանոնավորման սկզբունքին: Մեր ժամանակներում հոգնակի թվի կազմության հարցում գրեթե միօրինակության է հասել ժամանակակից գրական անգլերենը, որում ձևաբանական նորմը սահմանում է, որ, չնչին բացառություններով, բոլոր գոյականների հոգնակին կազմվում է հնդեվրոպական նախալեզվի հոգնակերտ մասնիկով՝ s-ով: Նման միօրինակության է հասել նաև հայերենի հոգնակի թվի սեռականի կազմությունը՝ բոլոր գոյականների հոգնակին սեռական հոլովում ենթարկվում է **ի** հոլովման (մի քանի բացառություններով):

Այս առումով ձևաբանական նորմը կարելի է նմանեցնել փարոսի, որը լեզվական ձևերի կատարելության, մաքրության, գեղեցկության ճանապարհն է ցուց տալիս, բայց լեզուների օվկիանոսում տարբեր լեզուներ տարբեր չափով են մոտենում նրան, մեկը՝ շատ, մյուսը քիչ, երրորդը, թվում է, արդեն մոտեցել է, չորրորդն ինչքան մոտենում է, այնքան հեռանում է, հինգերորդը՝ մոլորվել է, վեցերորդը փարոսը նույնիսկ չի նկատում, յոթերորդը...

Քերականական նորմի ձևավորման գործում մեծ է ավանդույթի դերը, խոսակցական լեզվի ազդեցությունն անժխտելի է:

ԱՎԱՆԴՈՒՅԹԸ ԵՎ ՉԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՆՈՐՄԸ

Նորմը հատկանշվում է մի շարք գործոններով՝

լեզվագործածության ընթացքում լեզվական տարրերի կայունությամբ.

լեզվագործածության սովորույթով կամ ավանդույթով և այդ սովորույթի կիրառմամբ ու պահպանմամբ.

լեզվական ավանդույթի՝ բոլորի համար պարտադիր լինելով:

Յուրաքանչյուր գրական լեզու ունի իր որոշակի կանոններն ու օրինաչափությունները, որոնց համապատասխան էլ տեղի է ունենում հաղորդակցումը: Հասկանալի է, որ ամեն մի անհատ իր խոսքը պետք է կառուցի գրական լեզվի կանոններին համապատասխան, ենթարկվի այն օրենքներին, որոնք պարտադիր են բոլորի համար, որպեսզի ապահովվի հաղորդակցումը, այլ կերպ ասած՝ ամեն մի անհատ պարտավոր է պահպանել և պարտադիր կերպով կիրառել համընդհանուր ճանաչման արժանացած լեզվական ավանդույթը: Գրական լեզվի կանոնարկված լինելը պայմանավորված է լեզվական նորմի և ավանդույթի պահպանումով:

Գրական նորմը համեմատաբար կայուն բնույթ ունի: Կա նորմի որոշակի հիմնամաս, որը ժամանակի ընթացքում կայուն է մնում: Դա պայմանավորված է գրական լեզվի էությամբ, բնույթով. նա ստեղծում է համընդհանուր, համալեզվային օրենքներ՝ լեզվական որոշ միավորների վերաբերյալ: Միևնույն ժամանակ լեզվական նորմը կոչված է համատեղելու խոսքային կուլտուրայի ավանդույթները նորաստեղծ լեզվատարրերի հետ, կոչված է կարգավորելու «հայրերի և որդիների», հին ու նոր սերնդի հավերժական պայքարը: Այդ պայքարը շատ անգամ որոշակի չի գծագրվում, երբեմն շատ սուր կերպով է արտահայտվում, բայց և այնպես այն կա, գոյություն ունի, և անխուսափելի է նրա զարգացումը: Նորմը փոփոխվում է, փոփոխվում է աստիճանաբար՝ համագոյակցելով ավանդական (տրադիցիոն) և նորաստեղծ տարբերակները: Է. Աղայանի «լեզվական համակերպման օրենքը» ևս նորմավորման դեր ունի. լեզվական համակերպությունը կարևոր դեր է խաղում միօրինակացման ճանապարհին: Խոսքային գործունեությունը ներկայացնում է առաջընթաց

շարժում: Այն հանգամանքը, որ մի ժամանակահատվածում ապրում են տարբեր սերնդի ներկայացուցիչներ, անհրաժեշտաբար առաջացնում է լեզվական միասնության, փոխադարձ հասկանալիության պահանջ հատկապես 10-20 տարեկանների և 60-80 տարեկանների միջև: Ավագ սերունդը, որ յուրացրել է լեզվական որոշ կանոն և իր լեզվական գործունեությամբ որոշ ուղղությամբ զարգացրել, այդ կանոնը փոխանցում է հաջորդ սերնդին և, բնականաբար, իր անխուսափելի աղդեցությունը թողնում: Նոր սերունդը, յուրացնելով այդ համակարգը, իր հերթին որոշ ուղղությամբ զարգացնում է այն, և հին սերունդը, որ ամենօրյա հաղորդակցական գործունեությամբ կապված է նոր սերնդի հետ, իր հերթին ազդվում է նրանից, յուրացնում նոր ստեղծվածը, աստիճանաբար հրաժարվում իր յուրացրած, բայց արդեն հնաբանություն դարձած քերականական ձևերից, բառերից: Այսպիսով՝ տեղի է ունենում հին սերնդի լեզվական համակերպումը նոր կանոնին: Հակառակը լինել չի կարող, քանի որ խոսողների լեզվական գործունեությունն առաջընթաց շարժում է: Օրինակ՝ Մ. Աբեղյանը գրել է 90-ական թվականների լեզվով և իր ուսումնասիրությունների մեջ էլ այդ ժամանակի այդ համակարգն է ընդունել որպես կանոն, առաջնորդվել է այդ ժամանակի լեզվական նորմով, սակայն իր վերջին շրջանի աշխատությունների մեջ նա արդեն զգալիորեն հրաժարվել է դրանից և գրել ժամանակակից հայերենով, եթե չհաշվենք որոշ հնաբանություններ: Ասվածը հիմնավորելու համար համեմատենք Մ. Աբեղյանի՝ տարբեր ժամանակներում գրած (1912թ և 1931թ.) աշխատություններից քաղված հետևյալ երկու հատվածները՝

1. «Կարելի է **պիտի գնամ, պիտի գնայի, կը գնամ, կը գնայի** ձևերը նոյն իսկ չառնել խոնարհման մեջ, այլ միայն **գնամ, գնայի** ձևերը: Եվ այս կը լինէր աւելի բանաւոր, որովհետև քերականօրէն բառաձևի գաղափարը պահանջում է, որ իբրև բայի ձևեր վերցուեն միայն պարզ ժամանակները: Իսկ թէ այդ բառաձևերը որ և է եղանակիչ բառով կամ մասնիկով նոր եղանակաւորութիւն են առնում, դա բառաձևի հետ առնչութիւն չունի: Եթէ «գուցէ գայ», «թերևս գայ» կապակցութիւնների մեջ գայ բայի եղանակն, ըստ ձևի, փոխուած չի համարւում **գուցէ, թերեւս** բառերի պատճառով, թեպէտև սրանք բային տալիս են

կարելիական նշանակութիւն,- նոյնը պիտի ասել և «պիտի գայ», «կը գայ» կապակցութիւնների համար: **Գայ** բայն այս դէպքում ևս իր ձևով մնում է նոյն ղղծականը, միայն **պիտի, կը** բառը կամ մասնիկը տալիս են նրան հարկադրական կամ կարելիական բնավորութիւն» (37, էջ 68-69):

2. «Եվ ինչպես **գուցե գնամ** կապակցության մեջ **գուցե** բառով «գնամ» ղղծականը ստանում է կարելիական նշանակություն, բայց ձևով մնում է ղղծական, նույնպես **պիտի** բառը նույն ղղծականին տալիս է անհրաժեշտության կամ հարկադրական նշանակություն, բայց **գնամ** բայն իր ձևով մնում է ղղծական» (37, էջ 69):

Եթե համեմատելու լինենք Ղափանցյանի, Գուրգեն Սևակի, Մ. Աբեղյանի և Գ. Ջահուկյանի, Հ. Բարսեղյանի լեզվագիտական հին ու նոր աշխատությունների լեզուն և, կասկածի տակ չառնելով, որ դրանք գրվել են տվյալ ժամանակի լեզվական նորմին համապատասխան, ապա միանգամայն ակնառու կդառնան գրեթե բոլոր տարբերությունները, մասնավորապես ձևաբանական տարբերությունները, որոնք և կվկայեն տարբեր ժամանակներում լեզվական նորմի կանոնների ամբողջությունը, նաև փոփոխությունը (եթե նկատելի է): Միաժամանակ ուրվագծելի կլինեն այն լեզվամիավորները, որոնք ավանդաբար փոխանցվում են:

Նորմավորվող համակարգը ավանդական է: Ըստ Վ. Առաքելյանի՝ ավանդույթը ևս նորմավորող դեր է կատարում: **Շահդանա** բառը պարսկերեն նշանակել է «թագավորական հատիկ՝ սերմ»: Չեռագրերում այդ բառը սխալմամբ գրվել է նաև «շագանակ»: «Հին հայկազյան բառարանը» վերցրել է այդ ձևը, և, որովհետև իմաստը ճիշտ չի հասկացվել, բացատրել է «կաստանա». այսպես տարածվել են և սխալ ձևը, և սխալ իմաստը: Այդպես էլ **եղկելի** բառը, որ նշանակում է «խղճալի», այժմ շատերը կիրառում են «զզվելի» նշանակությամբ, և այս նշանակությունը դարձել է ընդունելի:

Ավանդականությունը լեզվի ուժն է, ուստի և ժխտել ավանդույթը նույնն է, ինչ ժառանգականության ժխտումը, «որը ոչ միայն հիմարություն է, այլև խելագարություն,- գրում է Պ. Սևակը:- Ավանդականությունը նման է արյան, այլ բառով ասած ժառանգականութ-

յան: Դա մեզնից անկախ և մեր մեջ գործող այնպիսի օրենք է, ինչպես որ ժառանգականությունը: Եվ դրա ժխտումը հավասար է կոպերով ընկույզ ջարդելուն»: Ժառանգականությունը գործում է արվեստի մեջ, լեզվի մեջ և կոչվում է ավանդույթ:

Մեր նոր գրական լեզվի զարգացման միտումները սահմանական եղանակի կազմության համար առաջ են մղել անկատար դերբայով և օժանդակ բայով կազմությունը՝ **ուտում եմ**, **գրում եմ**, բայց մի քանի բայեր ավանդաբար գալիս են գրաբարյան կազմությամբ՝ **գիտեմ**, **ունեմ** (**ունիմ**), **արժեմ**, **կամ** .., որոնք բացառություն են, շեղում են ընդհանուր օրինաչափությունից, բայց կանոնական են, ճիշտ են, լեզվական նորմով սահմանված: Եթե մեկը գործածի **գիտում եմ** ձևը, անմիջապես կմտածենք, որ սխալ է, և կեզրակացնենք կամ լեզվական օրենքը չգիտի, կամ բարբառով է խոսում: Նույն ձևով՝ եթե մեկը ասում է՝ **տալում եմ, լալում եմ, գալում եմ**, անպայման մեզ համար դրանք բարբառային են և ոչ գրական:

Մարդիկ առհասարակ չեն գիտակցում այն բոլոր օրենքները, որոնք գործում են օգտագործվող լեզվում, և գիտակցաբար չէ, որ ընտրում են համապատասխան բառաձևեր, կապակցում դրանք. խոսում են, որովհետև այդպես է ավանդված, այդպես է պետք: Հնչյունների նման դասավորությունը, բառերը, քերականական ձևերն իրենց «ապրելու իրավունքը» պահպանելու համար հիմնվում են ավանդականության վրա: Ասում ենք **հաց, ջուր, գնում եմ, բերեցի, հեռանալ ընկերոջից, իմ գիրքը, ես սիրում եմ**, որովհետև այդպես են ասել մեր նախնիները, այդպես է հայերենը մեզ ավանդվել: Ասում ենք **տարա** և ոչ **տարեցի,** ասում ենք **գալիս եմ** և ոչ թե՝ **գալում եմ**, և թեև վերջիններս լեզվի կառուցվածքից բխող օրինաչափություններին համապատասխան են կազմվել, բայց սխալ են, ոչ կանոնական և լեզվական նորմի սահմաններից դուրս են, քանի որ հասարակության գնահատմամբ ճիշտ են առաջին ձևերը և մեզ այդպես են հասել. նրանց գոյությունը հիմնվում է լեզվական ավանդականության վրա: Այս կապակցությամբ Գ. Սևակը գրում է. «Լեզվի ընդհանուր, ավանդական նորմից մազաչափ անգամ շեղվելը նկատվում է որպես «սխալ», ի ցույց է դրվում այս կամ այն կերպով և «ուղղվում»: Բավական է, որ, ասենք, հայերեն նոր սովորած մի մարդ (կամ լեզուն նոր բացված երեխա) գործածի **ուտեցի** ձևը **կերա** ձևի

փոխարեն, իսկույն նրան ի ցույց կդնեն այդ «սխալը» և կսովորեցնեն «ուղիղ» ձևը: Իսկ ինչով է սխալ **ուտեցի** ձևը և ճիշտ՝ **կերա** ձևը, ոչ ոք չի կարող ասել, քանի որ հայոց լեզվում ունենք բազմաթիվ նման ձևեր, որոնք «ուղիղ» են, օրինակ՝ երգում եմ - երգեցի, վազում եմ - վազեցի, քնում եմ - քնեցի և այլն: Թվարկված բոլոր ձևերը «եցի»-ով ճիշտ են, բայց ուտում եմ – ուտեցի ձևը սխալ է: Ինչու՞: Որովհետև այսպես է ընդունված լեզվի մեջ, այդ է թելադրում մեր լեզվի **ավանդությունը**, որը ճիշտ կլիներ կոչել «**նյութի պահպանման օրենք**» (110, էջ 32-33):

Ավանդականության պահպանումը լեզվական նորմի միջուկն է. ավանդապահությունը, եթե զերծ է հնապաշտությունից, կարևոր նշանակություն ունի լեզվի (ընդհանրապես գիտության ցանկացած ճյուղի) առաջընթացի համար: Որքան էլ գործող կանոնների ամբողջությունը՝ լեզվական նորմը, սահմանվի որպես հրահանգ, կարգադրություն, պահանջ, խնդրանք, այնուամենայնիվ, նա հենվում է ավանդականության վրա: Այս առումով էլ՝ «Մյուս հասարակական հաստատությունների մեջ շատ անգամ շեղումները ներելի են լինում. մեկը կարող է ոտաբոբիկ ժողովի գնալ, դրանով ժողովը չի խանգարվում. մեկը կարող է գլխարկը հակառակ դիրքով դնել, դրանով ոչ նրա գլուխն է ճղվում, ոչ էլ որևէ մեկին մի որևէ վնաս հասնում: Մեկը կարող է իր ընտանեկան կապերը չընդունել այնպես, ինչպես ուրիշներն են ընդունում կամ իրեն աններելի սանձարձակություններ թույլ տալ. այդ բոլորը կանցնի գուցե և առանց նկատվելու ուրիշների կողմից: Կրոնի դեմ անսաստողներ են եղել. դրանք եթե իր ժամանակին ոմանց կողմից դատապարտվել են, ապա ուրիշների կողմից էլ քաջալերվել են իբրև ազատամարտիկներ: Սակայն լեզուն այդպես չէ. և ինչքան էլ մեկը ազատամիտ ու ազատախոհ լինի, դարձյալ լեզվի մեջ մնում է պահպանողական: Ո՛չ մեկը ոչ մեկին չի ներում լեզվական որևէ շեղում: Չի՛ կարելի, օրինակ, **շաքար** ասելու փոխարեն **սաքար** ասել կամ **շաքար** ասելով փոխանակ «շաքար» հասկանալու՝ «կատու» հասկանալ: (Այսպիսով յուրաքանչյուր լեզու ընդհանուր է իրենով խոսող հասարակության բոլոր անդամների համար: Առանց այդպիսի ընդհանրության լեզուն չի կարող պահպանել իր գոյությունը, ինչպես և հասարակությունը չի կարող պահ-

պանել իր գոյությունը՝ առանց ընդհանուր լեզվի...): Լեզուն գերազանցապես պահպանողական մի երևույթ է. նա չի ընդունում հեղաշրջումներ. նրա կյանքը լոկ բարեշրջական է» (20, էջ 111-112):

Այո, հասարակական բոլոր երևույթների մեջ ամենապահպանողականը լեզուն է, և ավանդականությունը հզոր գործոն է լեզվի մեջ. այն հասարակության լեզվական միության անհրաժեշտ պայման է: Բայց չի կարելի գերագնահատել նրա դերը լեզվի զարգացման ընթացքում, այն համարել ամենակարող և «միահեծան»: Միանգամայն իրավացի է Պ. Սևակը, երբ գրում է. «Ավանդականությունը մի գերություն է, որի մեջ ապրում են ոչ միայն կամովին, այլև ...սիրով: Գազանանոցային մի ապահովություն»: Եվ լեզվում նման ապահովության հետևանքն այն կլիներ, որ նրանում ոչ մի փոփոխություն տեղի չէր ունենա, լեզուն կզրկվեր «թարմ շնչից», կմնար նույն տեղում: Հնին, ավանդականին կառչած մնալով՝ մարդը կնմանվի սևակյան այն հերոսին, որն ապրում է քաղաքում և ժամանակի գաղափարը չի կարողանում անջատել աքաղաղի կանչից: Իհարկե, մենք այսպես ենք խոսում և գրում, որովհետև այսպես են խոսել և գրել մեր նախնիները, մեր ծնողները, այսպես են խոսում մեր ժամանակակիցները, մեր հասակակիցները, այլապես մենք չենք հասկանա մեր հին սերնդի ներկայացուցիչներին, նաև մեր հասակակիցներին: Բնականաբար մենք խոսում ենք նաև այնպես, որ տարբերվում ենք հին սերնդից. նոր սերունդը ժառանգում է ավանդականը, բայց և այնպես մարդը կենդակի օրգանիզմ է. այդպիսին է նաև լեզուն: Բնականաբար ինչ-որ բան փոխվում է, փոփոխվում. ինչ-որ տեղ խախտվում է ավանդույթը, մեզ հասած ժառանգությունը մենք էլ ինչ-որ չափով փոփոխված վիճակով ենք ավանդում մեր հաջորդներին, և այսպես շարունակ. սա է թելադրում լեզվի զարգացման ընթացքը. սա է կյանքի օրենքը, լեզվի օրենքը՝ «նյութի նորոգման օրենքը». «Սակայն ճիշտ կլինի, եթե ասենք, թե մենք խոսում և /գրում ենք/ այնպես և միաժամանակ ոչ այնպես, ինչպես խոսել (և գրել) են մեր ծնողները, ինչպես խոսում (և գրում) են ուրիշները: Այս «այնպեսը» հրամայականորեն պարտադիր է ավանդության անողոք օրենքի համաձայն, ժառանգության անխուսափելի օրենքի համաձայն, սակայն, այդ օրենքի կողքին,

նրա հետ միասին և նրանից անջատ, գոյություն ունի և մի ուրիշ օրենք, նույնքան կարևոր և նույնքան պարտադիր: Այդ երկրորդ օրենքը առաջինի բացասումն է, նրա հակադրությունը. սա **ավանդախախտությունն** է, որը ճիշտ կլիներ կոչել «**նյութի նորոգման օրենք**»: Այս երկու իրարամերժ օրենքները գործում են յուրաքանչյուր լեզվի մեջ և առաջ տանում նրա զարգացումը:

Ավանդությունը հրամայում է գործածել այսինչ ձևը, այսինչ բառը, այսինչ ոճը, և յուրաքանչյուր քաղաքացի ընդունում է այն, ինչ որ թելադրում է նրան ավանդությունը: Բայց քանի որ յուրաքանչյուր մարդ հասարակության անդամ է, որոշ գոյի տեր և վերջապես քանի որ նա մարդ է և ո՛չ թե ծայնագիր գործիք, հասկանալի է, ու նա ընդունում է այն, ինչ նրան թելադրում է ավանդությունը, բայց ընդունում է **ակտիվ կերպով**, ընդունում է ներգործելով, իր լուման մտցնելով այն բոլորի մեջ, ինչ որ ընդունում է ավանդությունից:

Ավանդության թելադրած ընդհանուր ազգային լեզուն բերվում, կոնկրետանում, անհատականանում է առանձին անհատների մեջ, և այսպիսով, տեղի է ունենում ավանդախախտում ավանդության ընդունման իսկ պահին...

«Նյութի պահպանման» և «նյութի նորոգման» հիմնական օրենքները լեզվի մեջ գործում են միասնաբար, ապահովում նրա զարգացումը և պահպանում հավասարակշռությունը» (110, էջ 33-34):

Հասարակության յուրաքանչյուր սերնդի լեզուն փոխանցվում է որոշակի նորմով սահմանված, որոշակի օրենքներով կանոնարկված: Հաջորդ սերունդը ժառանգում է այն, ժառանգում՝ բացառություններով, շեղումներով, երկձևություններով, զուգահեռություններով հանդերձ: Սրանք արդեն ավանդախախտական իրողություններ են, որոնք էլ քանակական կուտակմամբ նոր որակ են առաջ բերում, դառնում ավանդություն հաջորդ սերնդի համար: Հետևաբար՝ լեզվական նորմը փոփոխվում է ավանդության և ավանդախախտության փոխգործողությամբ. «...Քերականությունը, ճիշտ է, որոշ ակտիվ դեր ունի լեզվի կարգավորման բնագավառում՝ իբրև կարգավորող գիտության, բայց նրա ակտիվությունը սահմանափակված է գործող ավանդությամբ: Նկարագրված ձևով սրբագործված նախկին ավանդախախտությունն սկզբնական շրջանում իր հակադրությունը, իր խախտումը գտնում է տակավին իսպառ չվե-

րացած նախկին ավանդության մեջ, իսկ որոշ ժամանակից հետո ձեռք է բերում նոր ախոյան, որը հասարակական ավելի հիմնավոր կռվաններ ունենալու դեպքում բռնում է նրա տեղը՝ նրա իսկ անցած ճանապարհով» (110, էջ 36):

Ռուսը կարդում է Պուշկին և հասկանում, որովհետև լեզվի հիմնամասը ավանդական է և նույնն է թե՛ պուշկինյան, թե՛ մեր օրերում. ավանդականությամբ է պայմանավորված, որ այսօր մենք կարդում ենք Աբովյան, Նալբանդյան, Պռոշյան և հասկանում ենք, չնայած որոշ բառեր մեզ համար ընդունելի չեն, մեզ «խորթ են», քանի որ այսօրվա նորմում նրանք գրանցված չեն: Օրինակ՝ **սորա**, **ձին** (**ձյուն**), **դոցա**, **մեք**, **երգելոյ** և այլ ձևեր այն ժամանակահատվածում կանոնական էին, հնից ավանդված, բայց որոշ ժամանակ անց ավանդախախտությամբ նրանց տեղը բռնեցին **սրա**, **ձյուն**, **դրանք**, **մենք**, **երգելու** ձևերը, որոնք այսօր օրինական են, և եթե անգամ հասարակության որևէ տարիքն առած անձնավորություն դեռ օգտագործում է նման հին ձևեր, ապա նման անհատները «միշտ կենդանի թանգարան են» նախորդ սերնդի համար ավանդական, իսկ այժմ ավանդախախտական այդ ձևերի:

Գրական լեզուն բնորոշվում է իր ավանդույթի և նորմի կայունությամբ. գրականը, ճիշտը այն է, ինչը համապատասխանում է գրավոր խոսքի մեջ գրական լեզվի կայունացած կանոնին և կանոն դարձած ավանդույթին, նրանից շեղումը համարվում է ոչ ճիշտ, ոչ գրական:

Այս ամենով հանդերձ, «հնաձևն» ու «ավանդականը», «նորմատիվն» ու «կանոնականը», «գրականն» ու «ոչ գրականը» լեզվի հոգսով ապրողների համար են. խոսողներն անտարբեր են և չեն մտածում «ինչպե՛ս խոսելու» մասին. միանգամայն իրավացի է «ոչ հայ» հայագետը. «հնաձևն արժեք ունի լեզվագետներու, բայց ոչ երբեք խոսողներու համար...» (73, էջ 189):

ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ ԵՎ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՆՈՐՄԸ

Լեզվական նորմի հարցը սերտորեն առնչվում է **գրական լեզու** հասկացության հետ. գրական լեզուն է կանոնարկվում նորմով, նրա համակարգն է ենթարկվում նորմին: Այն, որ պատմականորեն ձևավորված, տվյալ լեզվակիր հանրության կողմից ընդունված, մշակված, նորմավորված, համընդհանուր գործածություն ունեցող, հասարակության բոլոր անդամների համար պարտադիր հանդիսացող լեզու է, ոչ այլ ինչ է, եթե ոչ ժողովրդի խոսակցական լեզվի գրավոր նորմավորված վիճակը:

Գրական լեզուն բնորոշվում է հետևյալ հատկանիշներով՝

- գրավոր դրսևորումը
- կանոնարկված և նորմավորված լինելը
- հասարակության բոլոր անդամների համար պարտադիր լինելը
- գործածության լայն շրջանակներ ունենալը
- ոճական բազմազանությունը:

Մեր օրերում գրական լեզուն բնորոշվում է նաև խոսակցական տարբերակով. ժամանակակից հայերենում գրական լեզվի կողքին իրողություն պետք է համարել գրական լեզվի խոսակցական տարբերակի գոյությունը, որը բանավոր հաղորդակցման առավել գործուն ձևն է: Գրական լեզվի բանավոր կամ խոսակցական տարբերակը դժվար է նորմավորել. գուցե նոր կանոն սահմանելու պահին իսկ ծնվում է այն չեզոքացնող միտումը:

Անժխտելի է, որ ժողովուրդն ավելի շուտ հեշտ ու դյուրին ձևերն է ընտրում. խոսակցական լեզվին առավելապես բնորոշ է հեշտությամբ հասկացնելն ու նույն ձևով հասկանալը: Խոսելով «ռամիկի լեզվի» մասին՝ Ա. Այտընյանը գրում է. « Ռամիկն որ աւելի գործոյ քան թէ գրոց ու դպրոցաց վրայ դրած է իւր շահը, յամենայնի դիւրութիւն կը փնտռէ. իւր խօսուածքի հոլովելուն երկու բեւեռներն են՝ Պարզութիւն եւ Բացայայտութիւն: Եւ իրօք ո՞րն է ռամկին լեզուն, ո՞րն է ժողովրդեան մ՛ ընտանեկան լեզուն. եթէ ոչ՝ կէս մը հնագոյն հարթ ձեւեր (գիտնոց քով անսովոր), կէս մը նորելուկ ձեւեր (գրաւորին նոր աղաւաղութիւնները), շատ մը բացայայտութեան որոշիչ կերպեր, շատ մը օտարամուտ ձայներ, բնաձայն բառեր եւ այլն. միով բանիւ՝ ինչ որ առձեռնպատրաստ օգնական է իրեն՝ դիւրու-

թեամբ իւր մտքին թարգմանն ըլլալու... Ռամիկը, որուն աւելորդ է քերականական պերճութիւն, հին գրաւոր ձեւաշատութենէ կը խորշի եւ կը սեպհականէ իրեն պարզ ու միակերպ ձեւեր: Սակաւաւոր թուով հոլովմունք ու լծորդութիւններ, պարզած հոլովներ ու բայի ժամանակներ, նույնանշաններու անհետացում, բառերու կարճութիւն, (սղմունք, ամփոփմունք, կրճատմունք) եւայլն, այս ամէն պարզուածքները մէկանց կը զուգընթանան բացայայտութեան սկզբանն օգնական ըլլալու» (25, էջ 37-38):

Բնականաբար, այսօր խոսակցական լեզուն չի նույնանում «ռամիկի» լեզվի հետ, բայց և այնպես խոսակցական լեզուն բնութագրվում է հետևյալ հատկանիշներով՝

գրավոր դրսևորում չունենալը.
կանոնարկված և նորմավորված չլինելը.
հին և հնացած ձևերի օգտագործումը.
պարզ և միակերպ, ընդհանրական ձևերին առավելություն տալը.
կարճ, համառոտված բառերի ու բառաձևերի, հնչյունի կամ հնչյունակապակցության սղմամբ, անկմամբ, ամփոփմամբ, փոփոխությամբ կազմված ձևերին նախապատվություն տալը.
շեղումների առատությունը.
նորմի շրջանակներից դուրս նոր, «նորելուկ» ձևերի գործածությունը.
օտարամուտ ձևերի օգտագործումը.
խոսքի ոճական բազմազանության մերժումը.
նախապատրաստված չլինելը.
խոսակիցների անմիջական մասնակցությունը.
անկաշկանդ, ոչ պաշտոնական լինելը.
զգացական հագեցվածությունը և այլն:

Լեզվի բանավոր կանոնարկված ձև գոյություն չունի (սա արդեն իդեալական լեզու կլիներ): Այստեղ ոչ միշտ է պահպանվում գրական լեզվի նորմը. այն ո՛չ բարբառ է, ոչ միջբարբառային լեզու, ո՛չ էլ՝ հասարակաբանական լեզու: Խոսակցական լեզվի սահմանները՝ մի կողմից բանավոր գրական լեզվի, մյուս կողմից՝ ժողովրդախոսակցական լեզվի միջև, հստակորեն առանձնացված և գծված չեն:

Լեզվի զարգացումը, այսինքն՝ նրա կրած փոփոխություններն ըմբռնելու համար ամենից առաջ պետք է տեսնել, թե ինչպե՛ս ենք խոսում, ինչպե՛ս է իրականանում խոսվածքի գործընթացն ընդհանրապես, և ինչպե՛ս ենք սովորում խոսել: Նշանակում է՝ գրական լեզվի նորմավորման վրա ամենից շատ գրական խոսակցական լեզուն է ազդում:

Եթե սկզբնապես հայ լեզվաբանական գրականության մեջ խոսակցական լեզու ասելով հասկացվում էր անմիջական հաղորդակցման լեզուն, որտեղ գործառում էին և՛ բարբառը, և՛ կիսաբարբառը, և՛ հասարակաբանությունը, ժարգոնը և այլն, և համանիշ էր դառնում ժողովրդախոսակցական լեզվին, ապա այսօր այն ընդունվում է որպես գրական լեզվի խոսակցական տարբերակ. դա այն լեզուն է, որով խոսում են գրական լեզվին լիովին կամ մասնակիորեն տիրապետող անձինք:

Թ. Ղարագյուլյանը խոսակցական լեզվի մեջ տարբերակում է երկու հիմնական ոճ՝ խոսակցական-գրական և խոսակցական-մտերմական: Խոսակցական-գրական ոճը ավելի մոտ է գրավոր լեզվին, խոսակցական-մտերմական ոճի հետ սերտորեն կապված են հասարակաբանությունները, ժարգոնները և վերջապես՝ բարբառը (տես՝ 57, էջ 19):

Եթե մեր լեզվի զարգացման խորհրդային շրջանում գրական լեզվի կենդանի խոսքի մշակույթի հարցերին գրեթե չէին անդրադառնում, ապա այսօր լեզվական դրությունը փոխվել է. նաև բանավոր խոսքը է դարձել գիտական քննության առարկա, որովհետև լեզվի զարգացման ցանկացած շրջանում լեզվի նորմավորմանը առավել մեծ չափերով սպառնում է խոսակցական լեզուն: Այն բնակության վայրի բարբառային լեզվի կնիքն է կրում, ընտանիքի և աշխատանքի վայրի «լեզվի» անմիջական ազդեցությանն է ենթարկվում, լեզվական դաստիարակությամբ է պայմանավորված: Մայրաքաղաքի խոսակցական լեզուն իր առանձնահատկություններով տարբերվում է Հայաստանի մյուս քաղաքների և շրջանների լեզվից. եթե քաղաքային խոսակցական լեզուն ձգտում է գրական լեզվի բանավոր տարբերակին մոտենալ, ապա գյուղական խոսակցականը կրում է տեղական բարբառի ազդեցությունը: Աչքի չընկնելով արտահայտչականությամբ, գեղագիտական գրավչականությամբ, տրամաբանությամբ, գրական լեզվում համապատասխան հոմանիշներ,

տարբերականեր ունենալով հանդերձ՝ խոսակցական լեզվի միավորները ոչ կանոնական, ոչ գրական ու նորմատիվ խոսքի ազդանշան են դառնում և խաթարում են հաղորդակցական կուլտուրայի գրված ու չգրված օրենքները:

Մերօրյա խոսակցական լեզուն երկու տարբերակ ունի՝

ա/ գրական խոսակցական

բ/ ժողովրդախոսակցական կամ առօրյա-խոսակցական (առտնին):

Առաջինը «հանդիսավոր իրադրությունների» լեզուն է, և նրանով խոսում են գրեթե բոլորը՝ յուրաքանչյուրն իր իմացածի, լեզվական հմտության և լեզվական դաստիարակության չափով: Այս տարբերակը օրեցօր և աստիճանաբար ընդլայնում է իր առօրյա գործառության շրջանակները, ձգտում է ընդհանրության ու բացարձակության, ձգտում է անգամ կանոնակարգման:

Երկրորդով նորից գրեթե բոլորն են խոսում՝ ոչ հանդիսավոր իրադրություններում, և անմիջականորեն առաջինի ազդեցությանը ենթարկվելով՝ այն իր մի ծայրով գրականանում է, իսկ մյուս ծայրով՝ իջնում հասարակաբանության, շուկայական լեզվի աստիճանին, որը և այս տարբերակի մահացում է ենթադրում:

«...Գրական խոսքի օրինաչափությունները սահմանելիս և աշակերտի խոսքը զարգացնելիս չպետք է նեղացնել գրական լեզվի սահմանները: Գրական լեզուն պետք է հակադրել ոչ թե նրա, այսպես կոչված, ժողովրդա-խոսակցական տարբերակին, այլ բարբառներին: Սա անհրաժեշտ է այն բանի համար, որ առանց այն էլ արհեստականության և գրքայնության կնիք կրող մեր գրական լեզուն ավելի գրքային չդարձնենք և աշակերտի (ու ոչ միայն աշակերտի) խոսքում այն չզրկենք նրա կենդանի ժողովրդա-խոսակցական տարբերակի հարստությունից»,- գրում է Ս. Գ. Աբրահամյանը (6, էջ 10):

Գրական լեզվի ողջ պատմության ընթացքում ժողովրդական-խոսակցական լեզուն ուղեկցել է վերջինիս, ճակատագրական նշանակություն ունեցել նրա ձևավորման, նրա նորմավորման, կանոնակարգման վրա: Այն գործուն հաղորդակցման միջոց է, բայց նրանում գրական լեզվի նորմերը ոչ միշտ են պահպանվում: Եթե գրական լեզուն չի հետևում խոսակցական լեզվի զարգացման ընթացքին, ա-

պա կտրվում է նրանից և կորցնելով իր հաղորդակցական-խոսակցական գործառույթը՝ մեռնում է: Նրանք փոխադարձ կապի մեջ են գտնվում. գրական լեզուն խոսակցականի ազդեցությամբ թարմ ու կենդանի շունչ է ստանում, միշտ նույնը մնալու վտանգից ազատվում, իսկ խոսակցական լեզուն էլ վերահսկվում է, գրական լեզվի մշակված միջոցներն է օգտագործում և նորից «տեղում չի դոփում»:

Մեր օրերում խոսակցական լեզվի քննական նկարագրությունը, գրավոր և խոսակցական ձևերի փոխհարաբերությունների ուսումնասիրության հարցերը գնալով կարևորվում են: Ըստ լեզվաբանական գրականության տվյալների՝ այս առումով առանձնանում են ֆրանսիացի և գերմանացի լեզվաբանները, որոնք առավել ևս ուշադրություն են դարձնում խոսակցական լեզվին: Գերմանիայում, սկսած 19-րդ դարի վերջերից, պարբերաբար լույս են տեսնում գերմաներենի խոսակցական տարբերակին նվիրված ուսումնասիրություններ: 1973 թ-ին ՍՍՀՄ ԳԱ ռուսաց լեզվի ինստիտուտի հեղինակային կոլեկտիվի կողմից հրատարակվեց «Ռուսերեն խոսակցական լեզուն» ծավալուն աշխատությունը: 1981 թ. ՀՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ տպագրվեց «Ժամանակակից հայերեն խոսակցական լեզուն» ուսումնասիրությունը, որում փորձ է արվել բնութագրելու հայերեն խոսակցական լեզուն և պարզելու նրա տեղը ժամանակակից հայերենում: Ներկայումս, հատկապես զարգացած երկրներում, մեծ տեղ է հատկացվում գրական լեզվի գրավոր և խոսակցական ձևերի փոխհարաբերությունների ուսումնասիրությանը: Տարբեր լեզուներում լեզվի կիրառության այս երկու ոլորտները ներկայացվում են տարբեր հարաբերությամբ: Օրինակ՝ գրական չեխերենի, գրական իտալերենի բանավոր ձևերի կիրառությունը շատ սահմանափակ է: Ռուսերենում ճիշտ հակառակն է, և շատ ռուս լեզվաբաններ, գրողներ ռուսաց լեզվի շքեղության հիմքը հենց խոսակցական լեզվի՝ գրականին մոտ լինելով են պատճառաբանում: Հայերենը բնորոշվում է նրանով, որ գրական և խոսակցական լեզուների միջև տարբերությունը մեծապես զգալի է: Հատկապես սկզբնական փուլում գրական լեզուն շատ գրքային էր, «գրաբարայնացված», մյուս կողմից՝ խոսակցական լեզուն էր «բարբառայնացված»: Ժամանակակից հայերենի առօրյա խոսակցական լեզուն ներկայանում է որպես մի բարդ, հեղհեղուկ, անկայուն սահմաններ ու-

նեցող իրողություն, որտեղ մեծ դեր են խաղում մի շարք հանգամանքներ՝ բնակության վայրը, ընտանիքը, որևէ բարբառի ներկայացուցիչ լինելը, տարիքը, կրթությունը, մասնագիտությունը, մայր լեզվի նկատմամբ վերաբերմունքը և այլն: (Որոշ լեզուներում անգամ տղամարդկանց և կանանց խոսքում տարբերություն կա, որը ժամանակակից հայերենում զգալի չէ):

Մերօրյա խոսակցական լեզուն դեռևս կանոնարկված չէ, խայտաբղետ է, լի շեղումներով ու զուգաձևություններով, որոնք դժվարացնում են որոշակի կանոնների կամ նորմի մշակումը, ինչպես և նրա նկարագրությունը:

Եթե գրական լեզվի գրավոր տարբերակը լեզվական ավանդույթի վրա է հիմնվում և ավելի պահպանողական է, ապա խոսակցականն ավելի շարժուն է, ավելի փոփոխական, ու նրանում կատարված փոփոխությունները թափանցում են գրավոր լեզվի մեջ: Սրանք ձևավորում են զուգաձևություններ, որոնցից մի մասը պետք է համարել գրական նորմի սահմաններում հանդես եկող թույլատրելի տարբերակներ, իսկ մի մասն էլ խախտում է գրական լեզվի նորմը, որակվում որպես հասարակաբանություն, բարբառաբանություն, օտարաբանություն, ժարգոն, կնքվում որպես ոչ թույլատրելի, ոչ հանձնարարելի, ոչ ճիշտ տարբերակներ՝ գրական հայերենի համար խորթ ձևեր:

Այսօր, երբ խոսակցական լեզվի մշակույթի, նրա կանոնարկման հարցերը նոր-նոր են ուշադրության կենտրոնում հայտնվել, եղած հարցերը շարունակում են մնալ՝ ի՞նչ չափով է խոսակցական լեզուն ազդում գրական լեզվի վրա, որքանո՞վ է օգնում նրա կանոնավորմանը և հակառակը՝ որքանո՞վ խոչընդոտում:

Մինչև վերջերս գրական լեզվի և խոսակցական լեզվի միջև եղած առնչությունները բացասական որակավորում էին ստանում, ըստ որում եթե գրական լեզվում խոսակցական տարրերը նկատելի էին, ապա խոսակցական լեզուն զուրկ էր «գրականացումից»: Միաժամանակ անժխտելի է, որ խոսակցական լեզվի բառերն ու բառաձևերը ավելի անմիջականորեն են արտահայտում մեր հույզերը, միանգամից են հայտնվում մեր լեզվի ծայրին, քան մաքուր գրական լեզվինը: Վերջիններս ավելի դատողական են, ավելի տրամաբանական և ծնվելու համար ինչ-որ ժամանակ են պահանջում: Այնուամենայնիվ, ժողովրդա-խոսակցական լեզվաձևերի օգտագործման

խնդրում նախկինում շատ լեզվաբաններ, լեզվի մաքրությամբ շահագրգռված շատ անձիք խիստ, մերժողական դիրքորոշում ունեին: Բայց լեզուն կենդանի օրգանիզմ է, և նրան ապրելու իրավունքից չպետք է զրկել: Այդ ժամանակների լեզվական քաղաքականությունը նկատի ուներ Պ. Սևակը, երբ գրում էր. «Բավական է մի կենդանի խոսք, ժողովրդական մի դարձվածք, որ մեջտեղ գա «բարբառային» բառը՝ «գռեհիկի» ուղեկցությամբ և «նատուրալիզմի թիկնապահությամբ»: Գրական լեզուն, արգելարան դառնալով, զրկվում է կենդանի շնչից, հյութազրկվում: Այսօր իրադրությունը փոխվել է. գրական լեզուն «գրքայնացումից» ազատվում է, ավշավորվում. խոսակցական լեզուն գրականացվում է: Հայ լեզվաբանների մեծ մասն արդեն այն կարծիքին է, որ գրական լեզվի նորմավորմանը առավել ևս նպաստում է կենդանի խոսակցական լեզվի ուսումնասիրությունը: Պետք է բացել գրական լեզվի դռները ժողովրդականի առաջ, բացել, որպեսզի այն ավշավորվի, հյութավորվի, ճկունություն ունենա, չոր ու ցամաք բառերի շարան չդառնա. ժողովրդական խոսքը և պատկերավոր է, և՛ հուզիչ է, և՛ լուրջ «Այնպիսի մի դարավոր լեզու, որպիսին հայերենն է, չի կարող աղքատ լինել: Բայց որևէ լեզվի աղքատ կամ հարուստ լինելը որոշվում է ոչ միայն նրա բառապաշարի հարստությամբ... Որևէ լեզվի հարուստ կամ աղքատ լինելը, իմ խորին համոզմամբ, որոշվում է ոչ այնքան նրա բառապաշարի հարստությամբ, որքան լեզվի **ճկունությամբ:** Այդ ճկունությունն է ահա, որ պակասում է մեր մեծագույն մասին: Պակասում է, որովհետև մենք աշխատում ենք գրել «գրական» լեզվով՝ դրա տակ հասկանալով միայն մի յուրատեսակ արգելարան՝ ցանկապատված մացառներով ու փշալարերով - ինչ որ ներսում է, «գրական» է, իսկ ինչ որ դրսում է՝ ոչ», - գրում է Պ. Սևակը (112, էջ 64):

Մեր օրերում ժողովրդական-խոսակցական լեզվի առջև գրական լեզվի դռները բաց են, այն, ինչ որ դրսում է, ինչ-որ չափով ներս է թափանցում՝ հատկապես գեղարվեստական գրականության միջոցով. գրական լեզուն անընդհատ հարստանում է ժողովրդախոսակցական տարրերով, որոնք և մշակելով՝ վերադարձնում է խոսակցական լեզվին, և արդյունքում նրանց կապն էլ ավելի է սերտանում:

Լեզվի նորմավորման առանց այն էլ բարդ լեզվաիրողությունն էլ ավելի է բարդանում՝ ժողովրդախոսակցական լեզվի առավել հա-

մակողմանի ուսումնասիրության, նրա զարգացման միտումների պարզաբանման, քերականական ձևերի օրինաչափությունների բացահայտման, արտահայտչական միջոցների վերլուծության, գեղարվեստական գրականության միջոցով գրական լեզվի մեջ նրանց թափանցման աստիճանի և այդ թափանցումների պատճառաբանվածության հարցերի քննության անհրաժեշտությամբ: Բանն այն է, որ խոսակցական լեզվում նկատվող տարբերությունները, որոնք հանդես են գալիս բառական, ձևաբանական և շարահյուսական մակարդակներում, գեղարվեստական գրականության, այնտեղից էլ գրական լեզվի մեջ մտնում են կա՛մ նպատակադրված, կա՛մ տարերային ձևով, կա՛մ հաստատվում են ու օրինական դառնում, կա՛մ օտարվում: Լեզվական ճիշտ քաղաքականությունը պահանջում է զգալ խոսակցական լեզվի այն միտումները, որոնք կարող են լեզվի զարգացման կանոններ դառնալ: Ձևաբանական նորմի սահմանները որոշելիս առավել ևս ուշադրություն պետք է դարձնել խոսակցական լեզվի ձևաբանական առանձնահատկություններին: Ձևաբանական միավորները, ի տարբերություն գրական լեզվի, նրանում գործառական ավելի մեծ բեռնվածություն ունեն. միևնույն քերականական ձևը ավելի շատ քերականական իմաստներ կարող է արտահայտել: Եթե գրական լեզվում կանոնավորման, միօրինակացման միտումի ազդեցությունը բացարձակ է ու անժխտելի, ապա անառարկելի է նաև, որ այս միտումն առաջին հերթին իր դրսևորումը հենց խոսակցական լեզվում է գտնում: Խոսքի մասերի գործածական հարաբերակցությունն էլ է տարբեր. խոսակցական լեզվում գոյականների, ածականների գործածությունը գրականի համեմատությամբ պակասում է, զգալիորեն ավելանում է բայերի կիրառությունը, և խոսքը ավելի հաճախ առանց քերականական օբյեկտի և սուբյեկտի հիշատակման է կառուցվում, նվազում է անձնական դերանունների գործածությունը, մեծանում է հարցական և ցուցական դերանունների, վերաբերականների, ձայնարկությունների գործածությունը, գնալով ավելի լայն շրջանակներ են ընդգրկում ածականի, թվականի և այլ խոսքի մասերի փոխանվանական կիրառությունը, ածականի համեմատության աստիճանների կազմության մեջ «համեմատելիի բացառական հոլով + ածական» կաղապարի և **ամենա-**

ցուցչի ընտրությունը: Խոսակցական լեզվի ազդեցությանն առավել շատ խոնարհման համակարգն է ենթարկվում:

Խոսակցական լեզվի ձևաբանական կառուցվածքի նկատելի միտումներից են՝

գոյականների, ածականների գործածության համեմատական նվազումը և բայերի, ցուցական և հարցական դերանունների, վերաբերականների, ձայնարկությունների գործածության հաճախացումը.

նախահրադրության իմացությամբ պայմանավորված՝ շատ գոյականների, ածականների, թվականների, մակբայների փոխարինումը դերանուններով.

հնչյունափոխված տարբերակների համեմատությամբ անհնչյունափոխ տարբերակների ծավալուն գործածությունը.

ի հոլովման ընդհանրացումը և տարածումը (**արյունի**, **շարժումի**, **ձկի**, **գինիի**...).

- թվակազմության մեջ ավանդական **ք** հոգնակերտի և հավաքական **-ենք**-ի հաճախական օգտագործումը.

ածականի համեմատության աստիճանները կազմելիս «համեմատելիի բացառական հոլով + ածականի դրական աստիճան» կաղապարի և **ամենա-** ցուցիչի տարածվածությունը.

խոնարհման համակարգում ներկա ժամանակի առավել շատ գործածությունը.

երկար ձևերի փոխարեն կարճ ձևերի ընտրությունը.

հրամայականի եզակի ձևերի վերջին **ր**-ի ընկնելը (**գրի՛**, **նստի՛**, **խոսի՛**...)

հրամայականի հոգնակիի ոչ ցոյական ձևերի աշխուժացումը (**խոսե՛ք**, **կանգնե՛ք**...)

արգելական հրամայականի **մի՛ խաղացեք**, **մի՛ բարձրացեք**, **մի՛ խոսեցրու**, **մի՛ք նստի** ձևերի գործածությունը **մի՛ խաղաք**, **մի՛ բարձրանաք**, **մի՛ խոսեցնիր**, **մի՛ նստեք** ձևերի փոխարեն.

- **է** օժանդակ բայի փոխարեն **ա**-ի գործածելը, որը քաղաքային-հասարակաբանական լեզվի ամենաակնառու հատկանիշն է (**խոսում ա**, **գրում ա**).

արի, ասեցի, գիտի, բերի, տղու, երեխու, չեմ տալի, չեմ գալի և նման բառաձևագործածությունների ծավալումը.

եցն-ով կազմվող բայերում **ե**-ի փոխարեն **ա** կամ **ը** հնչելը (**վախեցնել // վախացնել // վախցնել**) և այլն:

Խոսակցական լեզվին բնորոշ այս իրողությունները, անշուշտ, գրական նորմի տեսակետից նույն նշանակությունը չունեն և նույն մակարդակի վրա չեն:

Այո, ժամանակակից գրական լեզվի և խոսակցական լեզվի միջև անջրպետ կա: 1-2 տասնամյակ առաջ այդ տարբերությունը գնալով նվազում էր, բայց մեր օրերի գրական հայերենում այդ նվազման աճը նորից նվազում է: Այնուամենայնիվ՝ այդ տարբերությունները նվազում են. արդի գրական հայերենի զարգացման միտումներից մեկն էլ գրական և խոսակցական լեզուների մերձեցումն է, որն արտահայտվում է բանավոր խոսքի գրքայնացման, օտարաբանությունների արտամղման, բարբառայնության հաղթահարման, գրական լեզվի ժողովրդականացման ենթամիտումների ձևով: Որքան լեզուն տարբերակված է, որքան այն բարբառագործածությամբ հարուստ է, որքան հատկապե՛ս խոսակցական լեզուն հեռու է գրականից. այնքան դժվար է նրա նորմավորումը, միասնական կանոնների սահմանումը. լեզվի նորմավորման ժամանակ առաջ են գալիս լեզվի տարբերակվածության բարդ հարցերը, լեզվի տարբերակվածությամբ պայմանավորված զուգաձևությունների լուծման խնդիրը: Չկա բնական «իդեալական» լեզու, որ տարբերակումներ չունենա. սրանք լեզվի զարգացման պատմական ուղու արդյունք են, և հնարավոր չէ վերացնել, լեզուն միատարր դարձնել: Ուստի և խոսակցական լեզվում դրսևորվող իրողությունների ճիշտ գնահատումը, նրա զարգացման միտումների կանխատեսումը, գրական լեզու թափանցելու հավանականության հաշվառումը կարևոր նշանակություն ունեն լեզվի նորմավորման, լեզվական ճիշտ քաղաքականության, խոսքի կուլտուրայի մշակման համար:

Գրական լեզուն չպետք է կերպարանափոխվի և վերածվի «արվեստական լեզվի», ժողովրդից չպետք է հեռանա, կենդանի խոսվածքից չանջրպետվի, որ չմեռնի, ինչպես «մեռավ» գրաբարը... Վանդրիեսը գրական լեզվի և խոսակցական լեզվի կապը այսպիսի համեմատությամբ է արտահայտել. այս երևույթը նման է մի գետի,

որի երեսին մի խավ սառույց է պատել, սառույցն իրոք գետից է գոյացել, և հենց ջուրն ինքն է, բայց գետը չէ. երեխան, երբ նայում է սառույցին, կարծում է, թե ջուրը կանգնել է, գետ չկա, մինչդեռ սառույցի տակ հոսում է ջուրը. կոտրվում է սառույցը, և ջուրը հանկարծ ժայթքում է դուրս: Գրական լեզուն սառույցն է, տակից հոսող ջուրը՝ ժողովրդի կենդանի լեզուն է, ցուրտը, որ ձևացրել է սառույցը, գրագետներն են ու զանազան տիպի քերականները, արևի հալիչ ճառագայթները կյանքի ուժն է, որ ավանդության շղթաները խորտակելով հնարովի կանոնները դեն է շպրտում (20, էջ 136-137): Կարծում ենք, որ այս համեմատությունն արդեն իսկ բավարար է խոսակցական լեզվի ուսումնասիրությունը կարևորելու, լեզվի նորմավորման հարցում այն հիմնաքարային համարելու համար, որպեսզի գրական լեզուն սառույցի չվերածվի, որպեսզի լեզվի զարգացման օրենքները փնտրող լեզվաբաններն էլ լեզուն չսառցապատեն՝ հնարովի կանոններով: Բայց և հակառակ երևույթից պետք է զգուշանալ. պետք չէ լեզուն այնքա՛ն «ջերմացնել», գրականն այնքա՛ն հեղեղել խոսակցական տարրերով, որ նորմը քայքայվի...

Այստեղ անհրաժեշտ է նաև բարբառի մասին հիշել, չէ՞ որ եթե գրական լեզուն ամենից շատ խոսակցականի ազդեցությունն է կրում, ապա խոսակցական լեզուն էլ առավելապես բարբառի ազդեցությունն է կրում: Ժամանակին Հ. Թումանյանն այն կարծիքն է հայտնել, որ բարբառներից օգտվելը դատապարտելի չէ, այն աղբյուրն է լեզվի բարեփոխման. «Իսկ ինչ վերաբերում է բարբառներից օգտվելուն, դա ոչ թե դատապարտելի է. այլ հենց դա է բնական ճանապարհը կայտառ ու կենդանի լեզու ստեղծելու: Բավական էր, մեր երեխաներն այլևս չպետք է սարսափեն «հա» ասելիս, և մայրերն այլևս չպետք է մատներն սպառնալից թափ տան նրանց վրա, «հա՛» ասացիր, ինչպե՞ս կարելի է, ասա՛ «այո՛»: բավական էր, նզովքը պետք է վեր կենա հասարակության վրից, իբրև թե նա գռեհիկ է, դրա մեջ ոչ առողջ միտք կա, և ոչ էլ ճաշակ» (Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ 4, 1969, էջ 38-39): Նրան հակառակ՝ Վ.Տերյանը «կայտառ ու կենդանի» լեզու ստեղծելու բնական ճանապարհը բարբառի «զինվորներին» «դուրս վռնդելն» է համարում, նրանց՝ իրենց «բնակավայրը քշելն» է կարևորում. «Այս էս-ն ու էն-ը այս ու

այն-ի հանդեպ մեր գրականության մեջ առանձին բարբառների գործածության վերջին զինվորներն են, վերջին բերդերն են և ըստ իս շատ խարխուլ ու անհաստատ բերդերը... Դպրոցի և մանուկների մեջ վտանգավոր են այդ բարբառի վերջին զինվորները, մանուկները չեն կարող տարբերել թշնամուն բարեկամից և մեր լեզվի դեմ կանգնած այդ վերջին զինվորներին կարող են բարեկամաբար ընդունել, մինչդեռ, ըստ իս, նրանց պետք է դուրս վռնդել (թողնելով...)» (Վ.Տերյան, Երկեր, 1989, Երևան, էջ 325): Թումանյանական-տերյանական հոգսը նաև մերօրյա մտահոգություն է. ինչպե՞ս վարվել... «Ինչպե՞ս վարվել **էս** ու **էն**-ի հետ, **էսպես** ու **էնպես**-ի, **հա** ու **չէ**-ի հետ», - հարցնում է Լ. Հախվերդյանը և ինքն էլ իր հարցին պատասխանում,- «Այս հարցին դժվար չէ պատասխանել, քանի որ դրա պատասխանը տվել է կյանքը, լեզվի զարգացման կենդանի ընթացքը: Կյանքը ցույց տվեց, որ մեր զրույցի վերնագրում նշված բառերն ավելորդ չդարձան, ասպարեզից դուրս չեկան իրենց գրական համարժեքների պատճառով: Ինչու՞: Մի՞թե **էս**-ն ու **այս**-ը, **չէ**-ն ու **ոչ**-ը, **էսպես**-ն ու **այսպես**-ը նույնը չեն իմաստով: Այո՛, իմաստով նույնն են, բացարձակապես նույնը: Այդ դեպքում ինչի՞ են պետք նույնիմաստ զուգահեռները: Խնդիրն էլ հենց այն է, որ դրանք, ճիշտ է, իմաստով նույնն են, բայց ոճական գունավորմամբ, հուզական-հոգեբանական բովանդակությամբ տարբեր են, և շատ են տարբեր: ...Առաջին շարքի բառերը (էս, էն, էսպես, հա, չէ) հասարակ են, կենցաղային-խոսակցական, իսկ երկրորդ շարքի բառերը (այս, այն, այսպես, այո, ոչ) կիրք են, գրական: Հենց այս հատկությունների շնորհիվ երկուսն էլ կարևոր են ու հարկավոր: Այս երկու շարքում տեղ գտած բառերը ոճականորեն չեն կարող միմյանց փոխարինել: Դրանցից ամեն մեկն ունի գործածության իր տեղը, իսկ դա որոշում է լեզվի ճաշակը, լեզվի իմացությունը, ոճի զգացողությունը» (63, էջ 45-46): Թումանյանը կարևոր է համարել պահպանել երկու ձևերն էլ, միայն թե անհրաժեշտ է իմանալ նրանց կիրառման տեղն ու եղանակը, քանի որ դրանցից յուրաքանչյուրը գեղեցիկ է ի՛ր տեղում:

Այսօր ասում ենք՝ բարբառային է, ուրեմն խրախուսելի չէ, բարբառային է՝ խոսքն աղավաղում է: Բայց իզուր չէ, որ ասում են, թե կյանքը միշտ էլ զարգանում է կարիքի շնորհիվ: Լեզվի կյանքում

առաջացած կարիքն էլ շատ հաճախ թելադրում է բարբառներից օգտվել, նրա բառապաշարից ընտրություն կատարել, նրա քերականական կանոններից օգտվել, նրա նորմին հետևել: Բարբառային շատ երևույթներ խոսակցական լեզվի միջոցով թափանցում են գրական լեզվի մեջ՝ զուգաձևությունների աղբյուր դառնալով: Հայոց գրական լեզուն բարբառներից օգտվել է, միայն թե պետք է իմանալ վերցրածը խելացի, շնորհքով ու տեղին գործածել, զուգաձևություններում լեզվի զարգացմամբ պայմանավորվածը ընտրել: Այստեղ է, որ գրական լեզվի իմացության, նորմի յուրացման պայմաններում նաև լեզվական ճաշակն է դրսևորվում, ոճի զգացողությունն է ի հայտ գալիս: Այս առումով ճիշտ են Պ. Սևակի խոսքերը. «Այսօր արդեն մենք պարտավոր ենք երբևիցե չմոռանալ, որ բարբառի օգտագործումը նման է ծուռ ու կեռ փայտի գործածմանը. մի ծայրով կարող ես գլխիդ զարկել» (112, էջ 358):

Խոսակցական լեզվի գոյությունը արդյունք է լեզվի զարգացման պատմական ուղու. հնարավոր չէ վերացնել կամ համահարթել, լեզուն դարձնել միատարր, իդեալական. հնարավոր չէ այն դարձնել նույնական բոլոր ոճերի և ոլորտների համար: Խոսակցական լեզվի ազդեցությամբ գրական լեզվում գոյություն ունեցող տարբերակային ձևերի գոյությունը իրողություն է: Բայց մի կողմից գրական լեզվի, մյուս կողմից խոսակցական լեզվում տեղի ունեցող երևույթների ուսումնասիրության, զարգացման օրինաչափությունների բացահայտման, գնահատման ու ընտրության ճանապարհով կարելի է նվազեցնել լեզվի տարբերակվածության չափերը, նվազագույնի հասցնել գրական լեզվի գրավոր և խոսակցական ձևերի միջև եղած հեռավորությունը:

Ուրեմն՝ գրական լեզվի նորմավորումը սերտորեն առնչվում է գրական լեզվի կենդանի դրսևորման՝ խոսքի, խոսակցական լեզվի հետ. վերջինս գրական գրավոր լեզվի համեմատությամբ ավելի ցածր աստիճանի վրա է գտնվում, բայց և այնպես խոսակցական լեզվում դրսևորվող լեզվական իրողությունների ճիշտ գնահատումը, արժեքավորումը կարևոր են դառնում լեզվական քաղաքականության ու ոճաբանության, ինչպես և խոսքի մշակույթի տեսակետից:

ՉԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՆՈՐՄԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Գրական լեզվի զարգացման ցանկացած շրջանում ընդունված և գործող նորմի և հին նորմերի համեմատության միջոցով հնարավոր է որոշել, թե ինչպիսի փոփոխություններ են կատարվել լեզվի նորմավորման ճանապարհին, և ինչպիսի միտումներ կան գրական լեզվի նորմի զարգացման ընթացքում: Նորմատիվ քերականություններում լեզուն ներկայացվում է որոշակի կանոններով գործող, որոշակի օրենքների ենթարկվող կայուն կառուցվածք: Լեզվի նորմատիվ քերականությունը նպատակ ունի իր սահմանած նորմով քիչ թե շատ կայունացնել լեզվի վիճակը. նորմի կայունությունն ապահովում է գրական լեզվի կայունությունն ու ամբողջականությունը, նրանով խոսող ժողովրդի տարբեր հատվածների և տարբեր սերունդների հաղորդակցումը, այսինքն՝ նորմի կայունությունն ապահովում է լեզուն բնութագրող հատկանիշներից մեկի՝ ավանդականության և սերունդներին փոխանցելիության հատկանիշի գործառույթը:

Լեզուն ևս ենթարկվում է հասարակության և բնության օրենքներին. ինչպես մարդկային կյանքը, այնպես էլ լեզվի «կյանքը» լեզուների հերթափոխությամբ է դրսևորվում. ցանկացած փուլում լեզուն ամբողջովին չի մեռնում, այլ իր մի մասով հաջորդ սերնդի լեզվի համար «մի ուրի տեղ է դառնում», որի շուրջ էլ ձևավորվում է տվյալ սերնդի լեզուն: Պ. Սևակը մարդկության բազմադարյան մշակույթը նմանեցնում է օվկիանոսային այն կղզիներին, որոնք, ինչպես գիտենք, գոյացել են ջրային կենդանիների կրաքարային կմախքներից. կմախքի վրա՝ նոր մի կմախք, կմախքների վրա՝ նոր կմախքներ, մինչև ծովի մթին հատակից բարձրանում է մի նոր կղզի՝ ծովի անեզրության մեջ: «Ես չգիտեմ՝ օվկիանոսներում հիմա է՞լ է շարունակվում Կորալյան կամ Պոլիպյան կղզիների գոյացումը, բայց անկասկած է, որ մշակույթի օվկիանոսում շարունակվում է ու պիտի շարունակվի նույն այդ լինելությունը՝ կոչվելով սերունդների հերթափոխություն» (112, էջ 222):

Անկասկած է, որ լեզվի «օվկիանոսում» ևս շարունակվում է նույն այդ լինելությունը. նորմի մի փոփոխություն, հետո՝ երկրորդ

փոփոխությունը, հետո՝ երրորդը, չորրորդը..., և լեզվական մի որակը փոխարինվում է մի այլ որակով:

Չնայած որ միշտ կա անգամ մի «ոտի տեղ բռնող» լեզվի փոխանցում, կա լեզվական առաջին «կմախքը», կա լեզվական նորմի ինչ-որ սահմանված չափ, որ անփոփոխ է մնում, և որը գիտակցված կամ նպատակային բնույթ է կրում, լեզուն փոփոխվում է՝ ավել կամ պակաս չափով: Ցանկացած լեզվում, բնականաբար նաև հայերենում, լեզվական բոլոր իրակությունները՝ հնչյունները, բառերի նշանակությունները և բառերի կապակցության, բառակազմական և բառափոխական ձևերը, միշտ և որոշ օրենքներով անընդհատ փոփոխվում են. այդ փոփոխությունները շոշափում են լեզվի բոլոր մակարդակները: Լեզվի պատմական փոփոխության պատճառները լիովին պարզաբանված չեն, սակայն անկասկած է, որ նման փոփոխությունները պայմանավորված են առաջին հերթին լեզվի կառուցվածքով, նրա ներքին զարգացմամբ, և երկրորդ՝ նրա հաղորդակցական գործառույթով: Եթե լեզվի նկատելի առաջադիմական միտումները հետևողականորեն և մշտապես կենսագործվեին, ապա աշխարհի տարբեր լեզուների արտահայտության միջոցները վաղուց իդեալական վիճակի հասած կլինեին: Բայց լեզվի ներքին կյանքով պայմանավորված այս վիճակը մնում է երազելի ու ցանկալի. լեզվական ցանկացած փոփոխություն ինչ-որ չափով բարվոքում է լեզվի համակարգի մի կողմը, բայց և միաժամանակ ինչ-որ բաց է առաջացնում: Նշանակում է՝ լեզվի առաջընթացը սոսկ մի որոշ ժամանակի համար է: Քերականական կարգերն էլ են փոփոխական. հնագույն հայերենը պետք է որ ունենար նախալեզվից ժառանգած գոյականների սեռի և երկակի թվի քերականական կարգերը, բայց քաղաքակրթության հետ ջնջվել են դրանք. եթե հնագույն հայի մտածողությանը համապատասխան են եղել հիշյալ քերականական կարգերը, ապա հին հայի մտածողությունն արդեն փոխվել էր. գրաբարում դրանք ջնջված էին, դադարել էին գոյություն ունենալուց: Լեզուն կենդանի, փոփոխվող ու զարգացող համակարգ է՝ հատկանշված իր առկա վիճակի հավասարակշռության խախտման և պահպանման չափի օրենքով:

Եթե ժողովուրդը չի գործածում կամ չի հասկանում, թողել է, ասենք, հին քերականական ձևը կամ էլ քերականական հին իմաստը,

ապա դա չի նշանակում, որ նորը հնից լավն է, կամ թե հինը նորից վատն է, այլ նրա համար, որ լեզվի հին ձևը, հին իմաստն այլևս չեն համապատասխանում ժողովրդի մտածողությանը, չեն բավարարում հաղորդակցման պահանջմունքներին. հնացածությունը, փոփոխվելու անհրաժեշտությունը վրա է հասնում լոկ այն ժամանակ և սոսկ այն պատճառով, որ լեզվակիր հանրության մտածողության եղանակը փոխվում է, և թե՛ նոր ձևը, թե՛ նոր իմաստը ձևվում են այդ փոփոխված մտածողությանը համապատասխան:

Յանկացած լեզու դարերի ընթացքում փոփոխվում է՝ մեկն ավելի, մյուսը՝ պակաս, և այս փոփոխության մեջ է լեզուների կյանքը. միայն մեռյալ լեզուներն են անփոփոխական:

Լեզվի փոփոխություններն էլ հանգեցնում են լեզվական նորմի փոփոխության, որը դառնում է լեզվի զարգացման մշտական աղբյուրը: Այդ փոփոխություններն այնքան դանդաղ են կատարվում, որ խոսողների համար անզգալի են մնում. մարդը ուշադրություն չի դարձնում իր խոսքի փոփոխությանը և իր անուշադրությամբ էլ հաճախ պատճառ դառնում նրա տարածմանը: Կենդանի լեզվամտածողությամբ, լեզվագործածությամբ է ձևավորվում նորմ, և պետք չէ արհեստականորեն պատնեշ ստեղծել լեզվի զարգացման ճանապարհին, կառչած մնալ հնին և չլսել լեզվի ներքին ձայնը: Ուրեմն՝ լեզվական նորմի փոփոխությունն անհրաժեշտություն է, լեզվի ներքին զարգացման թելադրանք:

Լեզվական նորմը պատմական երևույթ է, ուստի և փոփոխական: Այն, ինչ նորմատիվ էր անցյալ հարյուրամյակում, անգամ 15-20 տարի առաջ, այսօր որպես շեղում կարող է դիտվել, որպես նորմի խախտում: Օրինակ՝ ռուսերենում մինչև 20-րդ դարի 30-40-ական թվականները **дипломник, дипломант** բառերը միևնույն հասկացությունն էին նշանակում՝ «ուսանող, որը դիպլոմային աշխատանք է գրում». **дипломник** բառը **дипломант** բառի խոսակցական տարբերակն էր: 50-60-ական թվականներին այս բառերի օգտագործման մեջ իմաստային տարբերակում մտավ, և այսօր առաջինը նշանակում է այն անձը, ուսանողը, որ դիպլոմային աշխատանք է գրում և պաշտպանում, իսկ երկրորդը՝ այն անձը, որ մրցույթներում, փառատոներում հաղթող է ճանաչվում և դիպլոմ ստանում:

Կամ՝ 30-40-ական թվականներին հայոց լեզվում մուտք գործեց օտար **абитуриент** բառը, որն այն ժամանակ և՛ այն անձն էր նշանակում, որ ավարտել է միջնակարգ դպրոցը, և՛ այն անձը, որ ընդունվել է բուհ: Այսինքն՝ այս երկու իմաստներով մի մարդ է բնութագրվել: Վերջին տարիներին դպրոց ավարտողներին անվանեցին **выпускник**, իսկ **абитуриент** բառն այդ նշանակությամբ չօգտագործվեց. հենց այդ շրջանում էլ հայերենն ստեղծեց իր «դիմորդ» տարբերակը, որն էլ աստիճանաբար դուրս մղեց օտար բառը:

Եթե 20-րդ դարի վերջերին նորմատիվ էին ու ճիշտ **ավտոռեֆերատ, դիպլոմ, դիսերտանտ, էքսպերտ, օպոնենտ, պրինտեր, դիսկետ, կոնցեպցիա, պրեզենտացիա, ժուռնալիստ, տրենաժոր, բիզնես, բորսա /բիրժա/, վալյուտա, լոմբարդ** օտար բառերը, իսկ հետո ճիշտ էին համարվում օտար և հայերեն բառազուգաձևությունները, ապա վերջերս հանճնարարելի դարձան միայն հայերեն համարժեքները՝ **սեղմագիր, վկայագիր, ատենախոս, փորձագետ, ընդդիմախոս, տպիչ, պնակիտ, հայեցակարգ, շնորհանդես, լրագրող, մարզասարք, գործարարություն, սակարան, արժույթ, գրավատուն:**

Եթե 20-րդ դարի վերջին նորմատիվ էր **սկիզբ, սպասել** բառերի **ըսկիզբ, ըսպասել** արտասանությունը, ապա այսօր կանոնական դառնալու ճանապարհին է նրանց՝ առանց **ը**-ի արտասանությունը:

Եթե նախկինում ճիշտ էր համարվում **ճշտգրիտ, սրտդողած** բառերի գրությունը, այսօր ուղղագրական բարեշրջմամբ ճիշտ են համարվում նրանց **ճշգրիտ, սրդոդած** ձևերը. կամ՝ եթե մինչև վերջերս ճիշտ էին **դարպաս // դարբաս, ագաթ // ագատ // ակաթ, հանգերգ // հանկերգ, մանուշակագույն // մանիշակագույն, նոյյան // նոյան, տիար // տյար, կռճոն // կրճոն, բրթել // բռթել, ծեծկռտել // ծեծկրտել, քաշկռտել // քաշկրտել, ցատկռտել // ցատկրտել** բառազուգաձևությունների երկու տարբերակներն էլ, ապա ՀՀ լեզվի տեսչության թիվ 8/11 հրամանով (1 փետրվարի 2000թ.) միօրինակացվում է երկակի գրություն ունեցող այս բառերի ուղղագրությունը, և հանճնարարելի են դառնում միայն առաջին տարբերակները:

Եթե 30-40-ական թվականներին **Երևանի Պետական Համալսարան, Երևանի Պետական Գրական Թանգարան, Երևանի Պե-**

տական **Մանկավարժական Ինստիտուտ, Տերմինաբանական կոմիտե, Հայրենական Մեծ Պատերազմ** (ըստ Գ. Սևակի «ժամանակակից հայերենի պատմության») և նման հատուկ անունների բոլոր բաղադրիչները գրվել են մեծատառով, ապա այսօր սրանց գրության նորմը փոխվել է. մեծատառով են գրվում միայն առաջին բաղադրիչները՝ **Երևանի պետական համալսարան, Երևանի պետական (գրական) թանգարան, Երևանի պետական մանկավարժական ինստիտուտ** (այժմ՝ **Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան**), **Տերմինաբանական կոմիտե, Հայրենական մեծ պատերազմ**... 20-րդ դարի վերջերին կանոնական էր և լեզվական նորմում ամրակայված **Մեծ արջ, Ծիր կաթին** համաստեղությունների անուններում առաջին բաղադրիչի մեծատառով, երկրորդի՝ փոքրատառով գրությունը, իսկ 21-րդ դարի շեմին **Մեծ արջ // Մեծ Արջ, Ծիր կաթին // Ծիր Կաթին** զուգաձևությունները ներկայանում էին համազոր, կանոնական տարբերակներով, ներկայումս նորմատիվ քերականություններում ձևաբանական նորմի փոփոխություն չի արձանագրվել, սակայն գերադասելի և հանձնարարելի է սրանց՝ բոլոր բաղադրիչների մեծատառով գրությունը:

Փոխվում է ուղղագրությունը, փոխվում են քերականական ձևերը, ուրեմն փոփոխվում է լեզվական նորմը. հին կանոնները դուրս են մնում, օրինական են դառնում նորերը:

Բայց լեզվի մեջ կատարված ցանկացած փոփոխություն չէ, որ կարող է նորմի փոփոխություն առաջ բերել, նոր կանոններ ստեղծել. լեզուն նաև ինքնավերահսկվող համակարգ է՝ կարողանում է ընտրել և միաժամանակ կարողանում է դեն շպրտել այն ամենը, ինչը խանգարում է իր զարգացմանը: Լեզուն մերժելու ունակություն ունի. համառորեն մերժում է այն, ինչը չի համապատասխանում իր էությանը, ոգուն, ինչի կարիքն ինքը չի զգում: Այս ներքին տրամաբանության ուժով գործածությունից դուրս են մղվում շատ բառեր, բառաձևեր, այդ նույն տրամաբանությամբ էլ լեզվի մեջ նոր ձևեր, նոր իմաստներ են ներմուծվում: Լեզվակիր հանրությունն իր գնահատականը տալիս շատ զգույշ պետք է լինի, լեզվական քաղաքականությամբ զբաղվող հաստատությունները պետք է կարողանան ճշտությամբ,

ճիշտ ժամանակին արձանագրել լեզվում կատարվող փոփոխությունները, զգալ փոփոխման միտումները, նոր ձևի, նոր իմաստի, կապակցության նոր եղանակի կազմավորման ընդերքը պեղել և լեզվական օրենքներ հռչակելուց առաջ ծանր ու թեթև անել, երկարբարակ մտածել կամ թե՝ յոթը չափել, մեկը կտրել: Տեղին է մեջբերել Հ. Իբսենի խոսքերը. «Բոցը թեև տատանվում է, բայց մարխը մի հանգցրու, քանի դեռ լապտերը ցույց չի տալիս ճանապարհը, քո ճառերից դուրս մի՛ գցիր հին արտահայտությունները, քանի դեռ չես ստեղծել նոր բառեր»:

Նորը-լապտերը մի քայլ առաջ է հնի-մարխի համեմատությամբ, բայց թե որքանով է նոր ձևը համապատասխանում լեզվի համակարգին, բավարարում հաղորդակցական կարիքները, ապահովում գեղագիտական կողմը, միանգամից դժվար է ասել: Լեզուն ունի իր զարգացման ներքին օրինաչափությունները, որոնք դեպի «իդեալականացում» են տանում՝ մարդու կամքից, ցանկություններից անկախ: «Լեզուն, կիբեռնետիկական տրամաբանությամբ,- գրում է Գ. Ջահուկյանը,- որպես ինքնակատարելագործվող դինամիկ համակարգ գնում է անմիօրինակությունները հաղթահարելու, բացառություններն ու շեղումները վերացնելու, լեզվական իմաստները լեզվական արտահայտության ձևերին համապատասխանեցնելու ուղիով: Սակայն այն հանգամանքը, որ լեզվական իմաստները ենթարկվում են համակարգման ու կանոնավորման այլ օրինաչափությունների, քան լեզվական արտահայտության միջոցները, լեզվի հնչյունական կառուցվածքի բաղադրիչները, և որ հնչյունական օրենքների գործողությամբ հանդես եկած անհամապատասխանությունները որոշ չափով համահարթվում, բայց մինչև վերջ չեն համահարթվում համաբանության գործողությամբ,- այս հանգամանքը հիմք է տալիս նոր հակասությունների և նոր անկանոնությունների առաջացման համար: Եթե լեզուն լիներ իդեալական համակարգ, ապա, կբացառվեր լեզվի այդպիսի շարժումը. բայց ոչ մի բնական լեզու իդեալական չէ, և հենց շարժումը դեպի իդեալականություն կազմում է լեզվի փոփոխությունների էությունը. այլ կերպ ասած՝ լեզվի փոփոխությունները ոչ թե սոսկական փոփոխություններ են, այլ հիմնականում կատարելագործում ենթադրող փոփոխություններ, այսինքն՝ զարգացման որոշակի պրոցես: Լեզուների շարժումը

դեպի իդեալական վիճակ, «տարբերությունը այդ համընդհանուրից և ընդհանուրից հենց այն է, ինչ կազմում է նրանց զարգացումը...» (102, էջ 10):

Բնականաբար լեզվական նորմի փոփոխությունները ևս սոսկական փոփոխություններ չեն, այլ կատարելագործում, զարգացում ենթադրող փոփոխություններ են, որոնք, ենթադրելի է, լեզվի իդեալականացման միտում ունեն: Լեզվական նորմի փոփոխությունը սերտորեն առնչվում է լեզվի փոփոխության հետ, ձևաբանական նորմի փոփոխությունն էլ՝ լեզվի ձևաբանական համակարգի փոփոխության հետ: Այս առումով էլ լեզվի փոփոխության ներքին և արտաքին պատճառների քննությունը կարևորվում է այնքանով, որքանով դրանք հանգեցնում են նաև ձևաբանական համակարգի փոփոխության, որն էլ պատճառ է դառնում հնացած օրենքներից ու կանոններից ազատվելու և նոր օրենքների ու կանոնների սահմանման:

Լեզվի փոփոխության ներքին՝ ներլեզվական պատճառները լեզվի ներքին հակասություններն են՝ նրա անմիօրինակությունը, գործող օրինաչափությունների կողքին հին օրինաչափությունների գոյությունը և նորերի սաղմնավորումը, կանոնավոր ձևերի կողքին՝ անկանոնների առկայությունը, անկանոնությունների, բացառությունների, շեղումների, զուգաձևությունների առկայությունը, քերականական իմաստների և նրանց քերականական ձևերի միջև գոյություն ունեցող մշտական պայքարը և այլն: Լեզվի քերականական կառուցվածքը շատ դանդաղ է փոփոխության ենթարկվում, քան բառային կազմն ու հնչյունական համակարգը. հատկապես ձևաբանական փոփոխությունները ժամանակի փոքր հատվածում անընկատելի են: Եթե կարելի է ցույց տալ նոր բառերի առաջին գործածության որոշակի ժամանակը, ապա որոշել քերականական իրակության առաջացման առաջին պահը պարզապես անկարելի է: Քերականական ձևը կամ քերականական իմաստը միանգամից ստեղծվել չի կարող, հատուկ մտածված կերպով ստեղծվել չի կարող. այն երկար ժամանակի արդյունք է: Հաճախ դարեր շարունակ, անգամ հազարամյակներ շարունակ պահպանվում են քերականական ձևերն իրենց նույն քերականական իմաստներով, ինչպես օրինակ՝ հայերենի բայածևերի վերջավորությունները:

է. Աղայանն իր «Ժամանակակից հայերենի հոլովումն ու խոնարհումը» գրքում, չունենալով քերականական երևույթների վիճակագրական հաշվումներ կատարելու համար անհրաժեշտ տվյալներ, այլ միջոցի է դիմել. ցույց է տվել քերականական կառուցվածքի փոփոխությունը՝ իբրև ելակետ ընդունելով մեր գրական լեզվի տարբեր փուլերը ներկայացնող քերականագիտական ուսումնասիրությունները: Մ. Աբեղյանն (1864-1944 թթ.) իր ուսումնասիրությունների մեջ և իր գրվածքների շարադրանքի լեզվով ներկայացնում է ավագագույն սերնդի լեզվական կանոնը, նորմը, որը և վկայագիրն է XIX դարի վերջի և XX-ի սկզբի քերականական օրինաչափությունների: Երկրորդ փուլի համար վերցրել է Գ. Սևակի «Ժամանակակից հայերենի տեսությունը» (1939 թ.) և Հ. Բարսեղյանի ու իր կազմած միջնակարգ դպրոցի 5-7-րդ դասարանների հայոց լեզվի դասագիրքը (1965 թ.), որոնք գրված են XX դարի 20-50-ական թվականների կանոնի համաձայն: [Ձևաբանական նորմում կատարված փոփոխությունները կարելի է անգամ նույն լեզվագետի հին ու նոր աշխատությունների «լեզուների» համեմատությամբ ներկայացնել: Օրինակ՝ «Աշխարհաբարի քերականության» (1906 թ.) մեջ խոնարհման բաժնում Մ. Աբեղյանը որպես գրական լեզվին հարազատ ձևեր ընդունում է. **ունիմ, ունիս, ունի, ունինք, ունիք, ունին, լինիմ** և այլն, արգելականի համար՝ **մի՛ կարդար, մի՛ գնար, մի՛ խոսիր, մի՛ գրիր** և այլն, ենթադրականի ժխտականի համար՝ **չեմ գնալ, չեմ գրիլ, չէի գնալ, չէի գրիլ** և այլն, պատճառական բայերի անցյալ կատարյալի համար՝ **մատուցի, մատուցիր, մատուցեց, մատուցինք, մատուցիք, մատուցին**, չ սոսկածանցավոր և կրավորական բայերի անորոշի համար՝ **ի** լծորդով ձևերը (**փախչիլ, փրկվիլ**), ինչպես **և** սոսկածանցով և պարզ բայերի համար (**մեռնիլ, խոսիլ, ծաղկիլ, խռովիլ, դադարիլ** և այլն), նույն **–իլ**-ով անորոշ դերբայ ունեցող բայերի անցյալ կատարյալի համար՝ **ծաղկեցա, ծաղկեցար, ծաղկեցավ, ծաղկեցանք, ծաղկեցաք, ծաղկեցան, համարվեցա** և այլն, ըղձականի համար՝ **ծաղկիմ, ծաղկիս, ծաղկի, ծաղկինք, ծաղկիք, ծաղկին, համարվիմ, համարվիս** և այլն ձևերը, **ունեմ, ունիս** ձևերը համարում է բարբառային, արգելականում և ենթադրականի ժխտականում վերջնահանգ լ-ի անկումը համարում

է խոսակցական լեզվին հատուկ և այլն: Հոլովման մեջ ժամանակ ցույց տվող բառերի սեռական-տրականի վերջավորության կանոնական ձև է համարում **-վան,** որի **ն**-ն հաճախ դուրս է ընկնում, և տեղը գրում են ավելորդ, անձայն **յ, ի**-ով վերջացող բառերի հոգնակիի համար կանոնական է համարում նաև **ք** վերջավորությունը, թեև հոլովման տախտակում դնում է **-եր, -ներ** և այլն: Նույն պատկերն է ներկայացնում նաև «Աշխարհաբարի շարահյուսությունը» (1912 թ.): Մյուս աշխատություններում չկա **իլ** լծորդություն, **ունիմ, լինիմ** ձևերի դիմաց իբրև գրական ձևեր են տրվում **ունեմ, լինեմ**, արգելականի համար **չեմ խաղա, չեմ գրի. ծաղկեցա, համարվեցա** ձևերի դիմաց՝ **ծաղկեցի, համարվեցի. ծաղկիմ, համարվիմ** ձևերի դիմաց **ծաղկեմ, համարվեմ**, ժամանակ ցույց տվող բայերի սեռական-տրականի համար ճիշտն է համարվում **–վա. ք** հոգնակերտը համարվում է հնաբանություն և, իբրև այդպիսին՝ անհանձնարարելի է և այլն (14, էջ 29-31)]:

Կարող ենք առաջ գնալ և նաև քերականագիտական նորագույն աշխատությունները համեմատության եզր դարձնել (Մ. Ե. Ասատրյան՝ «Ժամանակակից հայոց լեզու», 2002 թ., Գ. Ջահուկյան՝ «Շարահյուսական ուսումնասիրություններ» 2003թ., Ալեքսանդր Մարգարյան՝ «Հայոց լեզվի քերականություն», 2004 թ., Լևոն Եզեկյան՝ «Հայոց լեզու», 2005 թ....):

Պարզագույն համեմատությունը ցույց է տալիս, որ եթե ավագագույն, ավագ սերնդի և միջին սերնդի լեզվական նորմերը զգալի տարբերություններ ունեն, ապա միջին և նոր, նորագույն սերնդի լեզվագիտական աշխատանքների համեմատությունները երևան են հանում համեմատաբար քիչ տարբերություններ...

Կարելի է ասել, որ ձևաբանական նորմի փոփոխությունը կարող է ծավալային տարբեր ընդգրկում ունենալ՝ մասնակի և ընդհանրական: Եթե այն ձևաբանական համակարգի մի որևէ օղակն է ընդգրկում, կամ թե միայն մի լեզվական իրողությամբ սահմանափակվում, ապա ձևաբանական նորմի փոփոխությունը նեղ իմաստով է ընկալվում, իսկ եթե այն շոշափում է ամբողջ ձևաբանական համակարգը և ենթադրում է լեզվի համակարգի փոփոխություն, ապա այս դեպքում այն լայն առումով է հասկացվում:

Ձևաբանական նորմի փոփոխության աղբյուրները տարբեր են՝

ա/ ներլեզվական (ներհամակարգային հակասությունները, համասեռությունն ու հակասեռությունը, համաբանական օրենքի գործառությունը).

բ/ գրական խոսակցական լեզուն.

գ/ տեղային բարբառները, խոսվածքները, հասարակաբանական, ժարգոնային լեզուն.

դ/ ստեղծագործական լեզուն (կամ գեղարվեստական լեզուն)...

Փոփոխվում է լեզվի քերականական կառուցվածքը, կատարելագործվում է այն, կանոներն են ճշգրտվում, քերականական իմաստներն են փոփոխվում, քերականական ձևերն են փոխվում, ուրեմն փոխվում է նաև քերականական նորմը: Հին, շատ հին խոսք կա՝ նոր գինին հին տկերում, որ ենթադրում է նաև հակառակը՝ հին գինին նոր տկերում: Ասվածը լիարժեք կդառնա, եթե ավելացնենք՝ նոր գինին նոր տկերում: Քերականական նորմը փոփոխվում է, երբ քերականական հին ձևը քերականական նոր իմաստ է ստանում. քերականական նորմը փոփոխվում է, երբ քերականական հին իմաստը քերականական նոր ձևով է արտահայտվում: Եվ վերջապես, քերականական նորմը փոխվում է, երբ քերականական նոր իմաստը քերականական նոր ձևում է դրսևորվում:

Գրաբարում **-գոյն** (**-գույն**) ածանցով ածականների ոչ թե գերադրական, այլ բաղդատական աստիճանն է կազմվել, սակայն ժամանակի ընթացքում այն իմաստափոխվել է և բաղդատական աստիճանի փոխարեն կազմել գերադրական աստիճանի ածականներ, այսինքն՝ քերականական հին ձևը քերականական նոր իմաստ է ստացել:

Գրաբարի գոյականների հոլովման համակարգում ժամանակ ցույց տվող բառերի տարբերակում չկար: Սակայն ժամանակի ընթացքում՝ միջին դարերից սկսած, այդ բառերը կազմեցին ուրույն խումբ և սկսեցին հոլովվել **վա** հոլովմամբ, որով թե՛ քերականական նոր իմաստ առաջացավ՝ ժամանակացույց իմաստ, թե՛ քերականական նոր ձև (**վա** հոլովում), բնականաբար՝ քերականական նոր կանոն, որ անցյալում չկար. արդեն 19-րդ դարում **վա** հոլովումը իր հո-

լովական իմաստով կայունացավ և լեզվական օրենքով ամրակայվեց. արդյունքում լեզվական նորմի փոփոխությունն է:

Մ. Աբեղյանը հայ քերականագիտության մեջ բերեց նաև կերպի հասկացությունը, և այսօր, թեև ոչ այնքան մանրակրկտությամբ, լեզվական նորմի սահմաններում խոսվում է կատարված, կատարելի և կատարվող կերպի մասին, և այս քերականական իմաստը գոյություն ունի, չնայած դեռևս հենց այդ իմաստի քերականական արտահայտման հատուկ ձևեր չկան, եղածներն էլ միօրինակացված չեն:

Գրաբարում չկար նաև գոյականների տարբերակումն ըստ անձի և իրի առումների: Ժամանակի ընթացքում առաջացավ այդ տարբերակումը՝ ծնունդ տալով քերականական նոր իմաստի՝ անձի և իրի քերականական իմաստի, իսկ նոր իմաստն էլ բնականաբար արտահայտման նոր ձևի անհրաժեշտություն է ստեղծել, նոր իմաստն ու նոր ձևն էլ քերականական նոր կանոն. մեր օրերում անձի և իրի առման քերականական կարգը գնալով կարևորվում է:

Կամ՝ գրաբարում բայի սահմանական եղանակը, հատկապես ներկայի և անցյալի անկատարի ձևերով, գործածվում էր նաև ըղձականի և պայմանականի իմաստով, որոնց համար հայերենում առանձին ձևեր չկային, ուստի և քերականական, իմաստային շփոթ էր առաջանում: Ժամանակի ընթացքում, ժամանակի թելադրանքով ըղձական, պայմանական, հարկադրական եղանակաիմաստների զարգացումը նրանց արտահայտման քերականական ուրույն ձևերի առաջացման անհրաժեշտություն ստեղծեցին: Այսօր ըղձականը, պայմանականն ու հարկադրականն իրենց քերականական ձևերով ամբողջական, ինչ-որ առումով նաև կատարյալ ենթահամակարգեր են խոնարհման համակարգում:

Նույն ձևով էլ անկատար դերբայի **ում** վերջավորությունն իր նոր իմաստով դեռևս մ. թ. 5-րդ դարում հանդես էր գալիս իբրև մասնակի, դեռևս ընդհանուր կիրառություն չգտած երևույթ, իսկ հետագայում՝ 12-13-րդ դարերից սկսած, այն տարածվում և արմատավորվում է հայոց լեզվի մեջ, անգամ բարբառների դասակարգման հիմք դառնում:

Բայասեռային համակարգում կրավորական սեռը, որը գրաբարում իր արտահայման ձևերով բավականաչափ խառն ու անորոշ վիճակ էր ներկայացնում, ներկայումս միօրինակության է հասել

կրավորական **–վ-** մասնիկի առաջացումով, որով և ժամանակակից հայերենում բայական սեռերի տարբերակումը համեմատաբար պարզ ու որոշակի վիճակ է ներկայացնում: Սրան հակառակ՝ նախկինում կրավորական սեռը միայն սահմանական եղանակի անցյալ կատարյալում բացի **վ**-ից ուներ նաև մի այլ ցուցիչ՝ յուրահատուկ վերջավորություն (**ա, ար, ավ, անք, աք, ան**). կրավորականության երկու ցուցիչներից մեկն ավելորդ էր և լեզվի համակարգային բնույթով պայմանավորված, համասեռության, նաև «խնայողության սկզբունքի» պահանջով՝ պետք է վերանար: Քանի որ կրավորականության արտահայտության գլխավոր ցուցիչը **վ**-ն էր, քանի որ նաև **-ան, են** ածանցներով կազմված բայերը անցյալ կատարյալում ունեին նույն վերջավորությունները, որոնք այս դեպքում սեռային կախվածություն չունեին, ապա խոնարհման համակարգում կրկնակի հակասություն էր ստեղծվել. մի կողմից՝ կրավորականի ավելորդ ցուցիչ միայն մի ժամանակաձևի համար, որը խախտում էր միասնական համակարգը, հակասություն ստեղծում այն առումով, որ խոնարհման համակարգում բայական վերջավորություններն ընդհանրապես զուրկ էին սեռաիմաստի արտահայտման ձև լինելուց, մյուս կողմից՝ միևնույն վերջավորությունների կրկնակի դերը (և՛ ներգործական, և կրավորական ու չեզոք), որ հանգեցնում էր նրանց չեզոքացման: Ժամանակի ընթացքում այդ վերջավորությունները, սեռաիմաստի արտահայտման ձևերի մեջ ավելորդ դառնալով, դադարում են կրավորականության ցուցիչ լինելուց, որով և ձևաբանական նորմում փոփոխություն է արձանագրվում:

Հայտնի է նաև, որ արդի գրական հայերենի և բարբառների հոգնակերտ վերջավորությունները ծագում են նախկին հավաքական ածանցներից, այսինքն՝ երբ տվյալ ածանցը, բացի հավաքական իմաստ արտահայտելուց, ունի նաև այլ կարգի իմաստներ, և հավաքական իմաստի արտահայտումը նրա համար գլխավոր չէ, ապա այդ ածանցը միջին դիրք է գրավում հավաքական ածանցի և հոգնանիշ վերջավորության միջև. այս դեպքում հող է ստեղծվում անցման համար. **-իկ, -այք, -անք, -ենք, -ոնք** վեջավորությունները հավաքական ածանցներ են եղել, որ աստիճանաբար վերածվել են հոգնակերտ մասնիկների, ըստ որում եթե **-եր**-ը և **-ներ**-ը լիովին վե-

րածվել են հոգնակերտ մասնիկների, **-իկ**-ը, **-այք**-ը դեռևս չեն խզել կապերը ածանցներից և որոշ հավաքականության երանգ ունեն, ապա **-անք**, **-ենք**, **-ոնք** հոգնակերտներում հավաքական իմաստի արժեքը զգալի է, որը և թուլացնում է նրանց հոգնակիակերտական նշանակությունը: Հետաքրքիր է, որ այսօր որոշ բարբառներ հոգնակին կազմում են նաև **-ստան** հավաքական ածանցով:

Միջին հայերենում չի տարբերակվել նաև միավանկ և բազմավանկ բառերի հոգնակիի կազմության եղանակը, հետևաբար և քերականության մեջ չի գործել միավանկ և բազմավանկ բառերի հոգնակին կազմելու եղանակների զանազանություն. հիմնականում կազմվել են **-եր**-ով (կային հոգնակիի կազմության այլ մասնիկներ ևս): Միայն հետագայում, երբ սկսել է գիտակցվել քերականական նոր ձև **-ներ**-ը, հայոց լեզվի ներքին տրամաբանության թելադրանքով տարբերություն է դրվել միավանկ և բազմավանկ բառերի հոգնակին կազմելու եղանակների միջև. **-եր** և **-ներ** հոգնակերտ վերջավորությունների տարբերակումը կատարվել է 15-16-րդ դարերից հետո, և այդ ժամանակից էլ սկսած լեզվական նորմում նոր կանոն է արձանագրվել <u>սովորաբար միավանկ բառերի հոգնակին կազմվում է **-եր**, իսկ բազմավանկ բառերի հոգնակին՝ **-ներ** մասնիկներով:</u>

Ուրեմն լեզվի զարգացման որևէ շրջանում լեզվական օրենքի մասնակի, ոչ օրինաչափ դրսևորումը կարող է մի այլ շրջանում օրինաչափ երևույթ դառնալ:

Բայց լեզվի զարգացման ընթացքում ոչ միայն քերականական նոր իմաստներ են առաջանում և պահանջում համապատասխան քերականական ձևավորում, այլև որոշ քերականական իմաստներ էլ (նաև իրենց համապատասխան քերականական ձևավորումներով) դուրս են մնում լեզվի քերականական համակարգից. հետևաբար լեզվական նորմում էլ փոփոխություն է արձանագրվում տվյալ քերականական իմաստի դուրս գալու հետևանքով. այն կանոնարկող քերականական սահմանումները դուրս են մնում: Օրինակ՝ հայերենը նախկինում ունեցել է հնդեվրոպական նախալեզվին բնորոշ սեռի քերականական կարգը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նախապես անխառն **ո** հոլովման են պատկանել արական սեռի գոյականները, իսկ **ո-ա** խառն հոլովման են պատկանել իգական

սեռի գոյականները: Սակայն ժամանակի ընթացքում իր զարգացման ճանապարհին հայերենը կորցրել է քերականական սեռը, և բնականաբար հոլովման համակարգում եղած տարբերությունն էլ վերացել է: 5-րդ դարում անգամ այդ կանոնը չի գիտակցվել: Կամ թե՝ ինչպես շատ լեզուներում, այնպես էլ ռուսերենում կար երկակի թվի քերականական կարգը՝ իր քերականական արտահայտությամբ, բայց ժամանակի ընթացքում անհետացել է, նրա հետ էլ՝ այն սահմանող քերականական կանոնը, չնայած որ խոսակցական ռուսերենում երբեմն-երբեմն երևում են նրա հետքերը:

Քերականական ձևերի փոփոխության պատճառ է դառնում հնչյունների անկումը կամ հավելումը. այն ևս կարևոր է ձևաբանական նորմի փոփոխության հարցում: Օրինակ՝ անցյալ դարի սկզբներին պայմանական եղանակի ժխտական ձևը կազմվում էր անորոշ դերբայով և օժանդակ բայի ժխտական ձևերով՝ **չեմ գրիլ**, **չեմ կարդալ**, **չես հեռանալ**. բնականաբար ձևաբանական նորմով էլ սահմանվել է՝ պայմանական եղանակի ժխտական ձևերը կազմվում են օժանդակ բայի ժխտական ձևերով և անորոշ դերբայով: ժամանակի ընթացքում վերջնահանգ լ-ն ընկել է (**չեմ գրի**, **չեմ կարդա**, **չես հեռանա**...). ստեղծվել է պայմանական եղանակի ժխտականի ազմության նոր կանոն. <u>ենթադրականի ժխտականը կազմվում է ժխտական դերբայով և օժանդակ բայի ժխտական ձևերով, որոնք դրվում են դերբայից առաջ:</u>

Գրաբարն ուներ նաև **ո** հոլովում (մարդոյ...). **ոյ** վերջավորությունը հնչյունական որոշ օրենքով դարձել է **ու**, և արդեն 19-րդ դարի երկրորդ կեսին դադարել է գործելուց հին քերականական կանոնը, և դրա փոխարեն ձևավորվել է նոր կանոն, ըստ որի գոյականների մի խումբ, նաև անորոշ դերբայը, ենթարկվում են **ու** հոլովման, իսկ **ո** հոլովման հետքերը պահպանվել են մի քանի քարացած ձևերում (**սգո, պատվո, խնդրո, սիրո**...), որոնք և շեղումներ են, բացառություններ: Գ. Ղափանցյանը գրում է. «Բացի այս հիմնական մասնիկաստեղծ պրոցեսներից՝ կա մեր կարծիքով և մեկ ուրիշը, յերբ բառարմատի վրա (առջևից, միջից թե վերջից) պատահական կերպով զարգանում ե մեկ հնչյուն կամ հնչյունակոմպլեքս, վորով ստեղծվում է յերկու տարբերակ (կամ փոփոխակ) բառաձևեր, մեկը

առանց այդ հնչահավելման և մյուսը դրանով հանդերձ: Իմաստաբանական նրբություն մտցնելու տեսակետից, յեթե կարիք ե լինում նոր բառի, այդ յերկրորդ տարբերակը (այսինքն՝ հնչահավելումով) ոգտագործվում ե այդ պահանջի համաձայն, դառնալով նոր բառ, նոր վորակով, իսկ մասնիկը, վորը մտցնում ե այդ իմաստատարբերությունը, անալոգիայով կարող ե տարածվել և այլ դեպքերի վրա և դառնալ այդպիսով ներգործոն և պրոդուկտիվ մի նոր մասնիկ» (76, էջ 209):

Լեզվի փոփոխության, նրա նորմի փոփոխության հարցում կարևոր է նաև, Գ. Ջահուկյանի բնորոշմամբ, «լեզվի մեջ գործող նվազագույն ծիգն ու ավելցուկայնությունից խուսափելու միտումը», նաև դյուրահունչ, գեղեցկահունչ դառնալու հակումը: Լեզվի մեջ գործող նվազագույն ծիգը դրսևորվում է, օրինակ, հրամայական եղանակի երկար ձևերի փոխարեն կարճ ձևերի ընտրության միտման մեջ (**գրեցե՛ք, նստեցե՛ք, կանգնեցե՛ք...** կանոնական ձևերի փոխարեն՝ **գրե՛ք, նստե՛ք, կանգնե՛ք...**):

Ձևաբանական նորմի փոփոխության, քերականական իմաստների և քերականական ձևերի փոխվելու, նրանց միօրինակացման, նաև քայքայման ու անկանոն դառնալու հարցում առանձնապես մեծ է համաբանության օրենքի գործառությունը: Համաբանական (անալոգիական) կազմությունը խոսքային գործունեության համար ամենամեծ գործոններից մեկն է:

ՀԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՆՈՐՄԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ցանկացած լեզվում բառերը թեքվում, ձևափոխվում, ածանցվում են սովորաբար մի ընդհանուր կանոնի համաձայն: Սակայն յուրաքանչյուր ընդհանուր կանոն ունի իր բացառությունը, իր շեղումը, իր անկանոնությունը. ընդհանուր ձևերի կողքին կան այնպիսիները, որոնք քիչ գործածական են կամ սակավաթիվ բառեր են ընդգրկում: Համաբանությունը այդ անկանոն ձևերի վերածումն է ավելի ընդհանուր և կանոնական ձևերի: Ձևաբանական նորմով սահմանված ամեն մի կանոն մի կաղապար է, որի շուրջ ձևվում են բառերը: Երբ որևէ բառաձև կազմվում է արդեն գոյություն ունեցող ձևի նմանակությամբ կամ կաղապարմամբ, ուրեմն այստեղ խոսքը համաբանության օրենքի գործառության մասին է: Համաբանությունը (նմանաբանությունը, անալոգիան) գործում է նաև լեզվի քերականական, հատկապես ձևաբանական մակարդակում: Համաբանական ձևակազմությունները ևս մեծ դեր ունեն խոսքում. շատ ու շատ գոյականական և բայական ձևեր դրսից լսելով չէ, որ կազմում ենք, այլ խոսելու պահին՝ հենվելով լեզվում արդեն գոյություն ունեցող նման ձևերի վրա, օգտագործելով համաբանական եղած կաղապարը: Ամեն մի նոր ստեղծվող, անգամ փոխառյալ գոյական կամ բայ մենք ճշտությամբ հոլովում ենք կամ խոնարհում համաբանությամբ: Որակական ածականներ ենք փոխառում կամ ստեղծում, համեմատության աստիճանները կազմում ենք արդեն եղած ամենագործուն կաղապարներով:

Համաբանության մասին խոսելիս Հր. Աճառյանը նշում է, որ նմանողությունը մի միջոց է, որ գործում է միօրինակության պահանջից դրդված, միևնույն բացատրության կամ միևնույն կարգի համար բազմաթիվ ձևեր ունենալը մտքի համար ավելորդ ծանրություն է, և բերանը նույնիսկ անգիտակցաբար վազում է միօրինակ ձևերի (տես՝ 24, էջ 681):

Համաբանության օրենքը լայն չափով գործադրվում է քերականության մեջ, և դա պատճառ է դառնում մի կողմից քերականական օրենքների մեջ անկանոնություններ մտցնելու, մյուս կողմից՝ քերա-

կանական կանոնների մեջ միօրինակություն և կանոնավորություն հաստատելու: Սովորաբար ձևաբանության մեջ քերականական իմաստներն արտահայտվում են քերականական մի ձևով, և ձևաբանական նորմը սահմանում է մի ընդհանուր կանոն: Սակայն այդ ընդհանուր ձևերի կողքին կան նաև ուրիշ քիչ գործածական ձևեր, որոնք ներառում են սակավաթիվ բառեր: Դրանք բացառություններ են, անկանոնություններ և շեղումներ ընդհանուր կանոնից: Ձևաբանական համաբանության նպատակն է ձևաբանական համակարգում եղած այդ մասնավոր ձևերը վերացնել ընդհանրական կանոնի հետևողությամբ:

Համաբանությունը հզոր միջոց է բացառությունները վերացնելու, անկանոնությունները ընդհանուր կանոնի տակ դնելու առումներով, նպաստում է լեզվի ինքնազարգացմամբ պայմանավորված ձևերի տարածմանը, մտքի՝ ավելորդ ծանրությունից ազատվելուն և ավելցուկայնությունից հրաժարվելուն. քերականական կարգերի, ձևերի և իմաստների միասնականացման, միօրինակացման ճանապարհով լեզուն դեպի կատարելություն է տանում, միաժամանակ շեղումների, ձևաբանական սխալների աշխուժացման պատճառ դառնում:

Ձևաբանական համաբանության էությունն այն է, որ մարդիկ իրենց իմացած կամ ուրիշներից լսած լեզվական ձևերի նմանակությամբ կազմում են նոր ձևեր, ըստ որում եթե արդյունք-ձևերը նորակազմություններ են, ապա իբրև ընդօրինակումներ՝ ձևաբանական համակարգում ունեն իրենց առաջացումը պայմանավորող կաղապարները: Ահա այսպես, շարունակաբար նմանակելով եղած կաղապարը, ձևաբանության մեջ առաջ են գալիս աննկատելի, անզգալի փոփոխություններ, որոնք ինչ-որ ժամանակ հետո կանոնով հաստատվելու իրավունք են պահանջում: Անալոգիական, համաբանական նոր կազմություններով էլ սկիզբ է դրվում ձևաբանության փոփոխությանը, որը և ենթադրում է ձևաբանական նորմի փոփոխություն: Համաբանությունը վճռական դեր է կատարում լեզվի զարգացման պրոցեսում. եթե այն մի կողմից նպաստում է բացառությունների վերացմանը, ընդհանուր օրինաչափությունների տակ դրվելուն, զուգաձևությունների պարզեցմանը, լեզվի միօրինակացմանը, ապա մյուս կողմից օժանդակում է լեզվի նոր զարգացող՝ կեն-

սունակ տարրերի ծավալմանն ու ընդհանրացմանը. ձևաբանության մեջ համաբանությունը ոչ միայն ընդհանրություններ ստեղծող, կանոնավորող, կարգավորող երևույթ է, այլև՝ քայքայող, կործանող, և համաբանության ընդհանրացնող և միաժամանակ քայքայիչ գործունեությունը հանգեցնում է այն բանին, որ լեզվական որևէ երևույթ, աստիճանական ծավալմամբ ու տարածմամբ, քանակական կուտակման հետևանքով նոր որակ է դառնում ձևաբանական համակարգում, իսկ հինը աստիճանական մահացման հետևանքով դուրս է մնում համակարգից: Կատարվում է փոփոխություն, որը և փոփոխություն է առաջացնում լեզվական նորմի մեջ: Այսպես՝ **ք** հոգնակերտի նոր իմաստով՝ իբրև բառակազմական մասնիկ գործածվելը հանգեցրեց **ք**-ի՝ որպես հոգնակերտի մահացման: Սրանով փոխվեց հոգնակիի կազմության ամբողջ համակարգը, և եթե նախկինում սահմանվում էր, որ գոյականների հոգնակին մեծ մասամբ կազմվում էր **ք**-ով, ապա մերօրյա նորմը սահմանում է՝ ժամանակակից հայերենում գոյականների հոգնակին **-եր**-ով և **-ներ**-ով է կազմվում: Հոգնակիի համակարգի փոփոխություններն էլ իրենց հերթին նոր փոփոխությունների պատճառ են դառնում, և նորից լեզվական համակարգում **սև** կետեր են հայտնվում:

Ձևաբանական համաբանության համար բնորոշը կառուցվածքային ձևի կամ կաղապարի ընդհանրացումն է. այսպես՝ ժամանակակից հայերենում ընդհանրական **ի** հոլովումը ընդլայնում է իր գործառական ոլորտը **ի** կաղապարի, ձևի համաբանությամբ, ինչպես գործիական հոլովի կազմության ժամանակ **ով**-ով կաղապարն է աշխուժանում: Օրինակ՝ հայտնի է, որ **ի**-ով վերջացող գոյականները, որպես կանոն, որոշ բացառություններով, պատկանում են **ու** հոլովման, ինչպես՝ **այգի -այգու**, **որդի – որդու**, **գինի - գինու** և այլն: Բայց քանի որ ժամանակակից հայերենի զարգացման արդի շրջանում **ի** հոլովումը ընդհանրական բնույթ ունի և տարածման միտում, աստիճանաբար իր գործառության ոլորտն է ընդգրկում նաև այլ հոլովումների պատկանող բառեր, այդ թվում՝ նաև **ու** հոլովման պատկանողներ, և սրանցից շատերը, հատկապես խոսակցական լեզվում, ունեն իրենց զուգահեռ ձևերը՝ ինչպես՝ **այգի -այգիի**, **որդի – որդիի**, **գինի - գինիի** և այլն: Հետևաբար սպասելի է, որ ապագայի լեզվական նորմը կսահմանի՝ իահանգ բառերը

ենթարկվում են **ի** հոլովման, իսկ **ու** հոլովիչը դուրս կմնա կամ էլ լավագույն դեպքում կսահմանափակվի մի քանի բառերի շրջանակում, որոնց կողքին համապատասխան նշումներ կարվեն՝ հնացած են, ոչ հանձնարարելի: Ստացվում է, որ համաբանության շնորհիվ **ի** հոլովիչի գործածության շրջանակներն ընդլայնվում են, ինչ-որ չափով միասնականանում է հոլովման համակարգը, իսկ **ու** հոլովման մանրահամակարգը քայքայվում է:

Կամ՝ լեզվական նորմը սահմանում է , որ <u>**ում**-ով վերջացող բառերը եզակի թվում ենթարկվում են **ան** հոլովման և եզակի գործիականում ունեն **-ամբ** վերջավորությունը</u>, ինչպես՝ **շարժմամբ**, **քայքայմամբ**: Բայց այժմ, գործիականի **–ով**-ով ձևերի աշխուժացմամբ պայմանավորված, համաբանությամբ կազմվում են սրանց նաև **ով** –ով ձևերը **շարժումով**, **քայքայումով**: Նշանակում է՝ **ով**-ով գործիականի գործածության ծավալը մեծանում է, իսկ **–ամբ**-ով ձևինը նեղանում և քայքայվում: **-Ով**-ով գործիականի ձևը ավելի կենսունակ է և շարունակում է տարածվել համաբանությամբ. ավելին՝ լեզվակիր հանրության հավանությանն է արժանացել: Նրանով է կազմվում ժամանակակից հայերենի գոյականների մեծ մասի եզակի գործիականը, իսկ հոգնակի թվում՝ բոլորինը:

Նման բազմաթիվ օրինակներ կարելի է բերել խոնարհման համակարգից:

Համաբանությունը երկու սկզբնաղբյուրից է սնունդ առնում՝ մեկը զորեղ, տիրող, մյուսը՝ հազիվ նշմարվող, թույլ: Առաջին դեպքում հիմք-կաղապարն այնքան ուժեղ է, տիրող, որ իր հետևում շատ բառեր է թողնում, ինչպես օրինակ՝ **ի** հոլովումը, **ամենա-** աստիճանացուցիչը: Ընդհանուր ձևերի կողքին կան սակավաթիվ ձևեր՝ բացառություններ կամ անկանոնություններ, որոնք համաբանությամբ վերածվում են ավելի ընդհանուր և կանոնական ձևերի: Բայց միշտ չէ, որ համաբանությունը կատարվում է լեզվի մեջ տիրող ընդհանուր ձևի կաղապարմամբ. երկրորդ դեպքում այն կարող է մի չնչին կետից սկսվել, անգամ՝ մի ձևից, և եթե այդ ձևը նպատակահարմար է, տարածվում է վարակի նման և ի վերջո ընդհանուր դառնում: Դժվար է ասել, թե ո՞վ և ե՞րբ կամ **ե** խոնարհման ո՞ր պարզ բայի հաստատական հրամայականն է առաջին անգամ կարճ ձևով՝ առանց **-եց**-ի կազմվել, բայց այսօր համաբանության շնորհիվ նման միտու-

մը կանոն դառնալու իրավունք է ստացել: «Այդ ժամանակ մարդս վերարտադրում է իր սովորած լեզվական իրակությունները և ապա անալոգիական կազմությամբ արտադրում է այնպիսի ձևեր, որ ինքը չի սովորել, բայց լեզվի մեջ կան: Սակայն խոսելիս երբեմն նա էլ ճշտությամբ չի վերարտադրում իր սովորածը և անալոգիայով ստեղծում է այնպիսի բառեր, բառերի այնպիսի նոր նշանակություններ ու բառաձևեր կամ կապակցության ձևեր, որոնք ոչ միայն դրսից չեն մտել իր գիտակցության մեջ, այլև երբեք գոյություն չեն ունեցել լեզվի մեջ» (1, էջ 42):

Համաբանության ազդեցությամբ լեզվական նորմի փոփոխությունը միանգամից չի կատարվում: Այսօր կողք կողքի համագոյակցում են **արյունով // արյամբ, ուրախությունով // ուրախությամբ, այգիի // այգու, մի՛ գնաք // մի՛ գնացեք** ձևերը... Լեզվական նորմի մեջ փոփոխություն կգրանցվի միայն այն ժամանակ, երբ նոր ձևերը քանակական գերակշռություն ստանան և դուրս մղեն հին ձևերը, և բարձրագույն մարմինների կողմից համապատասխան օրենքների (հրամանների) տեսքով նորմատիվ քերականություններում տեղ գտնեն:

Շատ հաճախ համաբանությամբ լեզվի մեջ փոփոխություն է կատարվում նաև լեզվական կարիքի թելադրանքով, այս կամ այն քերականական կարգի՝ քերականական նոր ձևով արտահայտելու միտումով, երբ ոչ կենսունակ ձևը, ոչ շատ տարածված ձևը «անհրաժեշտաբար» տարածվում է ու կենսունակ դառնում: Օրինակ հին հայերենում որպես հոգնակերտ մասնիկ առավել կենսունակ է եղել **ք**-ն, իսկ **-եար**, **-նեար** (նի + եար) հոգնակերտները՝ ոչ այնքան: Երբ **ք** հոգնակերտի դերի փոփոխություն տեղի ունեցավ՝ այն առավելապես ածանցական, բառակերտական դերով սկսեց հանդես գալ, ապա նոր հոգնակերտներ ունենալու լեզվական պահանջմունքով էլ **-եր**-ն ու **-ներ**-ը կենսունակ դարձան:

Ըստ «Լեզվաբանական բառարանի»՝ համաբանությունը ընդգրկում է նաև լեզվի քերականական կառուցվածքը: Այսպես՝ գերմաներենում ուժեղ բայերը խոսակցական լեզվում խոնարհվում են երբեմն թույլերի նման... Սա, ըստ Հ. Պաուլի, նյութական համաբանություն է.. Երբեմն տարբերվում են նաև՝ իմաստային համաբանութ-

յուն, երբ բառածևերը նմանվում են ըստ իմաստի /օր. արդի հայերենում ժամանակ ցույց տվող բառերի վա հոլովման ենթարկվելը) և քերականական համաբանություն /Վ. Վունդտ/, երբ նմանակումը կատարվում է ըստ ձևի: Երբ համաբանության հետևանքով նոր ձևեր են ստեղծվում, այն կոչվում է ստեղծագործական համաբանություն, իսկ երբ այն հանգեցնում է սոսկ ձևերի սերտ նմանակությանը, կոչվում է առնմանական համաբանություն (տես՝ 96, էջ 164): Ձևաբանական համակարգում գործում են համաբանության՝ վերը նշված տեսակները՝ նյութական, իմաստային, քերականական:

Սակայն համաբանության դերը լեզվական նորմի փոփոխության հարցում գերագնահատել պետք չէ: Ամենից առաջ ձևաբանական համակարգում կան ձևեր, կաղապարներ, որոնց շուրջ սահմանափակ թվով բառածևեր են խմբվում, անգամ նրանց նմանողությամբ նոր ձևեր չեն կազմվում, բայց նրանք համաբանական օրենքի ազդեցությանը չեն ենթարկվում, որովհետև հարմար են, կարճ, շատ գործածական, ժողովրդի լեզվամտածողության մեջ ամուր նստած: Օրինակ **հայր, մայր** բառերի՝ **ի** ընդհանրական հոլովմամբ կաղապարման ձևեր արձանագրված չեն: (Թերևս միայն «մանկական» լեզվում է հնարավոր **հայրի, մայրի** ձևերի կիրառումը):

Մյուս կողմից՝ համաբանական ոչ բոլոր փոփոխություններն են, որ ընդհանրանում են, տարածվում, նորանոր բառեր, ձևեր ընդգրկում... Երբեմն խոսողները գիտակցաբար, կամ էլ լեզվի մշակույթի հոգսերով ապրողների ճիշտ թելադրանքով մերժում են համաբանական այս կամ այն միտումը, եթե այն խախտում է լեզվական նորմի գործառությունը. այս դեպքում հզոր գործոն է դառնում սովորույթը: Այսպես օրինակ՝ խոսակցական տարբերակում **ինը, տասը** բառերի հնչյունական կաղապարի համաբանությամբ ոմանք արտասանում են **յոթը, ութը, ութսուն**-ը վերակաղապարավորում որպես **ութանասուն, տարեկան** բառակազմական կաղապարի ազդեցությամբ **օրական, ամսական** բառերը հնչում են /նաև գրվում/ **օրեկան, ամսեկան**, կամ **խոսեց** ձևաբանական կաղապարի հետևողությամբ ասվում է **ասեց** (փոխանակ՝ **ասաց**) և այլն: Այսպիսով թեև համաբանությունը հզոր գործոն է ձևաբանության մեջ, այնուամենայնիվ ամենակարող և բացարձակ չէ, կույր անհրաժեշտության թելադրանքով չի գործում...

ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼԵԶՈՒՆ ԵՎ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՆՈՐՄԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Լեզվական նորմի փոփոխության պատճառ է դառնում նաև լեզվի ստեղծագործական բնույթը. լեզուն ստեղծագործական կարողականություն ունի. հասարակության մեջ տարբերակված է վայրից վայր, խմբավորումից խմբավորում, գործունեության բնագավառից բնագավառ, անհատից անհատ: Հասարակության ամեն մի բնակավայր, ամեն մի խմբավորում, մասնագիտական ամեն մի բնագավառ ունի ի՛ր լեզուն, հասարակության ամեն անդամ ունի ի՛ր լեզուն, ի՛ր բառապաշարը, արտահայտության ի՛ր եղանակներն ու միջոցները, լեզվական ի՛ր ունակությունը, լեզվական ի՛ր դաստիարակությունն ու կուլտուրան, նաև դիմացինին հասկանալի դառնալու ի՛ր կարողությունը: Նա խոսում է այնպես, ինչպես մյուսները, միաժամանակ՝ ոչ այնպես, ինչպես մյուսները: Հենց «ոչ այնպես» խոսելով էլ պայմանավորված է լեզվի ստեղծագործական էությունը:

Անհատը և լեզվական-ձևաբանական նորմը

Մ. Աբեղյանը գրում է. «...Քանի որ գրական լեզուն կենդանի խոսակցական լեզու է, անխուսափելի կերպով պիտի ենթական լինի նաև այն անգիտակցական փոփոխություններին, որ բնականորեն առաջ է գալիս խոսելու գործունեությունից: Ամեն անհատ խոսելով և գրելով այդ լեզվով, ինչքան էլ դպրոցում սովորած լինի «ուղիղ» խոսելու և գրելու կանոնները, ունի դարձյալ որոշ չափով ազատություն իր ձևով վերաստեղծելու լեզուն և իր կողմից ազդելու ուրիշ խոսողների ու գրողների վրա: Այս ազատությունն ու ազդեցությունն, անշուշտ, ավելի մեծ է խոսելիս, քան գրելիս, բայց ընդհանուր խոսակցական լեզվից անցնում է հետզհետե նաև գրավորին» (1, էջ 56):

Իսկապես, անհատն իր ձևով վերաստեղծում է լեզուն. նա գիտակցաբար, նաև անգիտակցաբար փոփոխություններ է մտցնում իր լեզվի մեջ, որը կարող է պատճառ դառնալ լեզվի փոփոխության և տանել-հասցնել լեզվական նորմի փոփոխության. քերականն ու բառարանագիրը շարունակ աշխատում են գրական լեզվի ճշտման և նորմավորման վրա. գրողն ու հրապարակախոսը ջանում են գրական հայերենի նորմի սահմաններից դուրս չգալ. ուսուցանողն էլ

փորձում է լեզվական օրենքներով ընթանալ: Այսինքն՝ անհատը ավելի շատ ընտրում է, քան ստեղծագործում, ավելի շուտ ճշտում է ու կանոնակարգում, քան նորմի սահմանները տեղաշարժում: Չպետք է մերժել նրանց աշխատանքը, նրանց կատարած գիտակցական փոփոխությունները, բայց անհատը ձևաբանական նորմի փոփոխության պատճառ դառնալ չի կարող. նման ջանքերը զուր են:

Լեզվի մեջ անհատական կամքի դրսևորումները սովորաբար «վաղաշեջ ասուպների պես կորչում են». ժողովուրդը այդ «նորությունները» մահվան է դատապարտում: Ինչու՞:

Որովհետև դրանց կարիքը չկա լեզվի մեջ:

Որովհետև հին սովորությունը վերացնելը և նոր սովորություն մտցնելը չափազանց դժվար է: Տեղին է Մարկ Տվենի խորհուրդը. «Սովորությքը սովորույթ է, նրան լուսամուտից դուրս չես նետի, - ասում է նա,- հարկավոր է սովորույթին քայլ առ քայլ հրապուրելով դուրս հանել տնից»: Իսկ «հրապուրելու» համար ժամանակ ու ջանք է պետք:

Որովհետև լեզվի իսկական տերը՝ հասարակությունը, դիմադրում է, որը լեզվի հարցում արտահայտվում է «անտարբերության սպանիչ կարողությամբ», այսինքն՝ ընդհանուրի կողմից չի ընդունվում:

Որովհետև ընդհանրապես լեզվի փոփոխության մեջ մարդկային կամքն արժեք չունի. «Լեզվաց այս փոփոխությունը խոսողին կամքեն բոլորովին անկախ է, առանց գիտակցության՝ հընթացս դարուց սերնդեսերունդ անցնելով կկատարվի: Բայց մեյ մ, որ այսպիսի փոփոխություն հառաջ գա, այնուհետև մարդկային կամք մը կարող չէ զայն բառնալ, ինչպես որ մարդկային կամք մը զայն հառաջ չէ բերած»,- գրում է Հ. Հյուբշմանը (73, էջ 189):

Հ. Աճառյանի վկայությամբ Մ. Աբեղյանն է **ածանց** բառը փոխարինել **մասնիկ** բառով, որը մինչև այսօր էլ գործածվում է, բայց **ածանցն** էլի **ածանց** է մնում: Նա է **ապառաժ** բառի **աժ**-ը կրճատել և գործածության մեջ դրել «ապար»-ը: Անհատական քմահաճության կամ սխալմունք-թյուրիմացության արդյունքով են մեր բառապաշարում հայտնվել **շերամ**-ն ու **շագանակ**-ը: Իսկ ինչպիսի՜ բառաստեղծական աշխատանք են կատարում հատկապես բանաստեղծները... Բայց ձևաբանական կառուցվածքում անհատը դեր չունի.

լեզվի պատմության մեջ նման փաստեր չկան. փաստեր չկան նաև քերականական ձևերի փոխառությունների վերաբերյալ անգամ ամենաշատ փոխառություն կատարած լեզվում: Ամեն մի լեզու իրավունք ունի փոխառելու կամ փոխառություն կատարելու, ամեն մի լեզու իրավունք ունի բառաստեղծման, բայց դրանք պետք է «կյանք առնեն» տվյալ լեզվի քերականական կանոններին համապատասխան, ձևափոխվեն նրան հատուկ կանոններով, նրա նորմով ձևվեն: Քերականության մեջ անհատի կամքն արժեք չունի: Հայերենը, լինելով հնդեվրոպական լեզու, բնականաբար մայր լեզվից ժառանգած պիտի լիներ սեռի քերականական կարգը: Լեզվաբանական հետազոտություններում որոշ գիտնականներ փորձեր են արել հին հայերենի որոշ բառաձևերի, այլև հոլովման տիպերի տարբերությունների մեջ տեսնել հնագույն սեռային տարբերակման հետքերը: Պ. Ֆետտերը (վիեննացի հայագետ) **երկիր** և **երկին** բառերի **ր**-ի և **ն**-ի մեջ արականի և իգականի տարբերակիչներ է փնտրում (երկիրը՝ որպես ընդունող, պտղաբեր իգական է, երկինքը՝ արական): Հ. Պեդերսենն էլ **ուհի**-ով կազմվող բառերի մեջ էր փորձում իգականի զանազան հետքեր ցույց տալ և այլն (103, էջ 146-147): Բայց հայերենի ամենահին հիշատակարաններում էլ՝ հինգերորդ դարի գրվածքներում, սեռային տարբերակումը բացակայում է: Նշանակում է՝ գոյականի սեռի քերականական իմաստը, որը, բնականաբար, պետք է ուներ քերականական արտահայտության իր ձևը, այլևս չի համապատասխանել ժողովրդական նոր մտածողությանը, ուստի հայերենից ջնջվել են թե՛ սեռի քերականական իմաստը, թե՛ նրա արտահայտման ձևը: Լեզվական նորմում էլ նոր փոփոխություն է կատարվել՝ <u>հայերենը չունի գոյականի սեռի քերականական կարգ:</u> Հետագայում հունաբան հեղինակները ցանկություն ունեցան արական, իգական, չեզոք սեռի տարբերակումը արհեստական ձևով մտցնել հայերենի մեջ: Ահա այս ժամանակ էր, որ երևան եկան մի քանի իգականակերտ մասնիկներ՝ **-ուհի, -է, -իա** և այլն: Հունաբան դպրոցի ներկայացուցիչները հնարեցին նաև դասական թվականների կազմության նոր ձև՝ **-երիր** մասնիկով (**հինգերիր, վեցերիր, տասներիր**...), որը, սակայն, չկիրառվեց: Դերանվանական համակարգում երկակի թվի համար ստեղծեցին հատուկ ձև անձնական

դերանունների համար **ո**-ով, իսկ ցուցականների համար՝ **ու**-ով **/մոնք /մենք երկուսս/, դոնք /դուք երկուսդ/, այսու /այս երկուսը/, այդու /այդ երկուսը/**: Բայց հայերենի ինքնազարգացման ընթացքը նախ հաստատեց, որ որևէ քերականական կարգ հնարավոր չէ փոխառել, և որ անհատը կամ անհատների խումբը ի զորու չէ քերականական-ձևաբանական նորմի փոփոխության պատճառ դառնալ: Շատ դարեր առաջ Պլատոնից ու Արիստոտելից էլ շուտ ապրած հնդիկ լեզվաբան Յասկան այն կարծիքն է հայտնել, որ բառի ձևը քմահաճույքի արդյունք չէ... «Այսպես՝ մեր հին հունաբան հեղինակները ուզեցին մտցնել մեր մեջ իգական, արական և չեզոք սեռերը, ստորադասական անկատարի ձևը (սիրէցէի), կրավորականի նոր կազմություն, բայերի վրա է հավելվածը և այլն, բայց սրանցից ո՛չ մեկը արմատ չբռնեց: Լատինաբան հեղինակներն էլ սկսեցին իրենց նորամուծությունները, բայց իզուր: Նոր և նորագույն ժամանակներից ունենք Ռուսինյանին, որ իր «Ուղղախոսությամբ» աշխատեց փոխել հայերեն քերականության ինչ-ինչ կետերը, Չերազը հնարեց «ընտրողական հայերեն», ուրիշները առաջարկեցին ավելի մանր փուփոխություններ, օրինակ՝ ոմանք առաջարկեցին մտցնել իգական գործածությունը, Մ. Աբեղյանն առաջարկեց շնչավոր առարկաների համար օգտագործել **նրա, նրան,** իսկ անշունչների համար՝ **էնոր** և այլն: Բայց այս բոլորը, հակառակ նույնիսկ շատ տրամաբանական լինելուն, չընդունվեցին և մնացին միայն առաջարկ, որովհետև **անհատական կամքը արժեք չունի լեզվի մեջ**»,- գրում է Հ. Աճառյանը (20, էջ 438...): Անհատական կամքի ազատությունը սահմանափակվում է գործող նորմով, նրա օրենքներով:

Լեզվաբանական գրականության մեջ չկան քերականական ձևերի, քերականական իմաստների անհատական ծագման, ձևաբանական նորմի՝ անհատի կամքով կատարվող փոփոխության փաստեր, բայց բոլորովին այլ հարց է, երբ լեզվի ներքին ինքնազարգացմամբ պայմանավորված փոփոխությունը կարող է համընկնել նրա կենսունակությամբ շահագրգռված անհատի ցանկության հետ, կամ հակառակը: Եթե Հ. Աճառյանն ափսոսում էր **ունիմ, ունիս** «գեղեցիկ» ձևերի անկանոն, ոչ նորմատիվ դառնալու համար, ցավում՝ նրանց՝ գրական նորմի շրջանակներից դուրս մնալու համար, ապա Վ. Առաքելյանի համար **բերի // բերեցի, դրի // դրեցի** ձևերից առա-

ջինների աշխուժանալը ցանկալի էր. «Մենք անձամբ կողմնակից ենք, որ **բերի, թողի, դրի ածի, տվի** ձևերին տրվի առաջնությունը, որովհետև մեր լեզուն շատ է ծանրաբեռնված **ց** խուլ հնչյունով, որ մյուս խուլերի ու շնչեղների հետ թուլացնում է հնչեղությունը» (26, էջ 21):

Այս ամենով հանդերձ՝ ձևաբանական համակարգի փոփոխությունն սկսվում է ինչ-որ մի անհատից, նրա գիտակցված կամ չգիտակցված նորամուծությունից: Ձևաբանական նորմի փոփոխությունը ձևաբանական համակարգում կատարված փոփոխությունների քանակական կուտակմամբ պայմանավորված որակական անցումն է:

Լեզվաբաններն ու գիտնականները կարողանում են կանխազգալ լեզվի զարգացման միտումները, սոսկ բացահայտում են լեզվական օրենքները, ճանաչելի դարձնում և հասարակության դատին հանձնում: Իսկ գրողնե՞րը, բանաստեղծնե՞րը...

Լեզուն իր կանոնական-չափված-ձևած սահմաններից դուրս ունի ավելի բարձր ասպարեզ, ուր տերն ու տիրակալը բանաստեղծ - անհատն է, ոչ թե հասարակությունը: «Մի դաշտ միայն կա, ուր անհատական կամքը ազատ է ամեն կամայականության, նույնիսկ ամեն սանձարձակության. դա է գրականության դաշտը: Այստեղ ահա կատարվել ու կատարվում են ամեն տեսակի ձևափոխություններ լեզվի վերաբերմամբ՝ սկսած ամենից ավելի գնահատելի ու քաջալերելի ձևերից, մինչև ամենաանպիտան անճոռնությունները: Այստեղ գրագետը ազատ է իր գրչի ծայրից դուրս վտարելու ամեն մի խժաբանություն, օտար կամ եկամուտ ձև, և ընտրելու, ընդունելու և ստեղծագործելու ամենից գեղեցիկ, ամենից գունագեղ դարձվածները, ամենից ներդաշնակ բառերը, ամենից հարազատ ու նկարեն ոճերը: Այստեղ գրագետը ազատ է նույնիսկ հնարելու բոլորովին այլանդակ, անհասկանալի, իրականության մեջ անգո և լեզվի ոգուն անհարազատ ձևեր»,- գրում է Հ. Աճառյանը (20, էջ 438): Այստեղ է, որ խոսքը դառնում է շքեղ ու զրնգուն, սրտամոտ ու սրտաբուխ, այստեղ է, որ զգում ես՝ բառերը, բառաձևերը կշիռ ու արժեք ունեն, գույն ու երանգ, համ ու հոտ, այստեղ է, որ հանգերն են իրենց ետևից տանում բառաձևընտրությունը, այստեղ է,որ կա հույզերի ու գույների խաղ. խախտվում է լեզվական նորմը՝ հողի բուրմունքն զգալու համար, մայրական շնչի ջերմությունն ապրելու համար, հայրենի գյուղի կարոտով վառվելու, սիրած աղջկա շուրթերի համը

զգալու համար, անծրևի երաժշտությունը լսելու համար... Այստեղ է, որ անհատները ենթարկվում են լեզվի պարտադրանքին, օգտվում են հայերենից, բայց միևնույն ժամանակ ինչ-որ տեղ լեզուն իրենց են ենթարկեցնում, «օգտում են» հայերենին, որպեսզի իրենց ոճն ունենան, իրենց լեզուն, իրենց երգն ու բառապաշարը:

Դեռևս 16-17-րդ դարերում Դավիթ Զեյթունցին խորհուրդ էր տալիս խոսելու քերթողների գրական լեզվով, որովհետև այդ լեզուն մաքրված է, հղկված ու կանոնակարգված՝ ի տարբերություն «անտաշ, բիրտ ու կոպիտ» ռամկական, գեղջկական լեզվի:

Անտարակուսելի է, որ գրական լեզվի զարգացման պատմության մեջ նրա գործառության գլխավոր ոլորտը մնում է գեղարվեստական գրականությունը: Սովորաբար գրական լեզու ասելով հասկանում են գեղարվեստական գրականության լեզուն.. Այն առանձին դեպքերում նույնիսկ ձևավորում է ազգային լեզուն: Բացառված չէ, որ հաջողված գեղարվեստական ստեղծագործությունը գրեթե միշտ ավելի էական դեր է կատարում լեզվի կանոնարկման գործընթացում, քան գրական լեզվի գիտական նկարագրությունը: Րաֆֆու ժամանակակիցները, նաև հետնորդները խոստովանում են, որ նրա վեպերը լեզվի լավագույն դասագրքեր են եղել իրենց համար: Ա. Տոլստոյն այն կարծիքին է, որ ռուսաց լեզուն ամենից առաջ Պուշկինն է «ռուսաց լեզվի անխախտ նավահանգրվանը», Լերմոնտովն է, Տոլստոյը, Լեսկովը, Չեխովը, Գորկին: Մեզ համար էլ հայոց լեզուն Իսահակյանն է ու Թումանյանը, Չարենցն ու Տերյանը... Իսկ մեր օրերում քանի՜-քանի՜սն են հիացել սևակյան ու սահյանական հայերենով և փորձել իրենց խոսքով ընդօրինակել նրանց: «Լեզուն հղկում-ողորկում-ճախարակում են գրողները, այսքանով՝ նաև «ստեղծում»: Լեզվաշինարարի նրանց դերը ամենից ավելի դրսևորվում և պիտի երևա տվյալ լեզվի բոլոր կենսունակ տարրերը «հունցելու» գործում, ըստ որում հունցել այնպես, որ «հաց դառնա» բոլորին անհրաժեշտ, բոլորից «մարսվող հաց»,- գրում է Պ. Սևակը: Հայ դասական գրողները, նշանավոր գիտնականներն ու հրապարակախոսները, վաստակաշատ ուսուցիչները ցուցադրում են և պետք է ցուցադրեն խոսքի մշակույթի լավագույն օրինակներ:

Գեղարվեստական գրականությունն արտացոլում է իր ժամանակի համաժողովրդական-գրական լեզվական վիճակը: Գեղարվես-

տական գրականության մեջ մերժելի են լեզվական չգիտությունը, անփութությունը, անճշտությունն ու անպատեհությունը. ոչ մի գրող իր լեզվական «կաղությունը» չի կարող թաքցնել բառերի, բառածևերի, լեզվաոճական ձևերի ազատ ընտրության գեղագիտական իրավունքի շղարշի տակ: Գեղեցիկ գրելու և խոսելու համար լեզվի հնչարտաբերական-արտասանական նորմերը պետք է լավ իմանալ, քերականական նորմին տիրապետել, կարողանալ զանազանել կանոնականը ոչ կանոնականից, կողմնորոշվել երկձևություններին, բազմաձևություններին մեջ, խուսափել օտարաբանություններից, անհարկի բարբառայնությունից, գռեհկաբանությունից և այլն, մի խոսքով՝ կարողանալ «կանոն դարձնել անկանոնությունը»... Յուրաքանչյուր գրողի առաջնահերթ խնդիրն է, ելնելով իր ստեղծագործության ժանրային ու թեմատիկ առանձնահատկություններից, մշակել որոշակի լեզվական տեխնիկա, գրական լեզվի, լեզվագոյածևերի, գործառական ոճերի և ժողովրդախոսակցական լեզվի տարրերը օգտագործել հմտությամբ, թույլ չտալ լեզվական համակարգը խախտող շեղումներ, հաշվի առնել մեր լեզվի զարգացման օրինաչափությունները: Հետևաբար՝ գրական նորմի ուսումնասիրությունը, նրա փոփոխության հարցի քննարկումը կապվում է նաև այդ մեծ վարպետների կատարած աշխատանքի հետ, և գեղարվեստական գրականությունը պետք է ճանաչվի որպես լեզվի նորմավորման հիմք-գործոններից մեկը: Գեղարվեստական գրականության լեզուն լիովին չի նույնանում գրական լեզվի հետ. գրական լեզուն ենթադրում է նաև գիտական, հրապարակախոսական, մամուլի, պաշտոնական գրագրությունների, ռադիոյի և հեռուստատեսության, խոսակցական և այլ լեզուներ: Մյուս կողմից՝ գեղարվեստական լեզուն ենթադրում է ժողովրդախոսակցական կամ բարբառային լեզվի օգտագործում, հնաբանությունների և նորաբանությունների, օտարաբանությունների ընդգրկում, ինչու չէ՝ նաև գռեհկաբանությունների, աղտեղաբանությունների, հայհոյախոսությունների նպատակային մեջբերում:

Կարելի է նորից եզրակացնել, որ գրող-անհատն էլ ձևաբանական նորմի փոփոխության պատճառ դառնալ չի կարող. նա գիտակցաբար ընտրություն է կատարում, ինչ-որ փոփոխություններ բերում, ինչ-որ տեղ ճշտում է, նորմավորում, նորանոր բառեր ստեղծում, ե-

ղած կաղապարների համաբանությամբ նոր բառեր ձևում. անհատից է սկսվում փոփոխությունը. բայց հատկապես ձևաբանական նորմում գրող-անհատի կամքը ևս արժեք չունի:

Մեր առջև են բոլոր հայ գրողները. որի՞ լեզուն է գրականի, մաքուր հայերենի չափանիշ, ու՞մ խոսքին հետևելով գրենք ու խոսենք. այս դեպքում փնտրելը սիզիփոսյան աշխատանքի է նման. միամտություն կլինի մատը դնել որևէ մեկի անվան վրա: Ամեն գրող ինքն իր համար է ճանապարհ ընտրում: Նրա առջև են և՛ գրական լեզուն, և ժողովրդական խոսքը, և՛ բարբառները... Ինչ-որ տեղ դասական գրողների լեզուն կարող է չափանիշ դառնալ: Այս մտքի հաստատումն է Մ. Գորկու հայտնի բանաձևը. «Լեզուն ստեղծում է ժողովուրդը: Լեզվի տարբերակումը գրականի և ժողովրդականի նշանակում է միայն այն, որ մենք ունենք այսպես կոչված «հում» լեզու և «վարպետների կողմից մշակված» լեզու»: Վարպետների կողմից մշակված լեզուն կարող ենք հիմք դարձնել, քանի որ այն լեզվի խոր իմացության, լեզվական կարողությունների արդյունք է: Լեզվի իմաստաբանական կողմի մեջ խորանալը, նրա քերականական ձևավորվածության, բառակազմական օրենքների, բանաստեղծական հնարքների մեջ խորանալը, ավելին՝ նոր բառերի, նոր ձևերի, նոր կառույցների ստեղծումը նրանց լեզվական իմացության ապացույցներն են: Բայց մյուս կողմից հայտնի է, որ գրողները այս կամ այն լեզվական փաստի ճշտության մասին հավաստիանալու համար դիմում են բառարանների, ուղեցույցների, տեղեկագրերի, քերականությունների օգնությանը: Այսպիսով՝ ստեղծվում է փակ շրջան. լեզվաբանները լեզվական նորմի սահմանները որոշելիս դիմում են հեղինակավոր գրողներին, վերջիններս էլ խնդրի լուծումը փնտրում են լեզվաբանների մոտ:

Միամիտ չթվալու ցանկությամբ կարծում ենք, որ դասական գրողների հեղինակությունը բացարձակ չափանիշ չէ. այն, անշուշտ, կարիք ունի լրացման, այսինքն գիտական հաստատման ու հիմնավորման: Ավելին, գրողների լեզուն զուրկ չէ նորմից կատարված շեղումներից և քերականական սխալներից:

Գրողը հաճախ է դիմում բարբառին, ժարգոնին, հասարակաբանությանը, այսինքն՝ ոճականորեն «ցածր» խոսքին, չնորմավորված խոսքին՝ կյանքի ճիշտ արտացոլման նպատակամղումով: Ուս-

տի «դինամիկական նորմի» տեսության հիմնադիրները լեզվական նորմը փոփոխելու իրենց շտապողականությամբ, հեռուն չտեսնելու բնազդով լեզուն փորձում են հեղեղել անգամ հայհոյախոսություններով: Խոսքային նման ազատությամբ լեզվական նորմի փոփոխականությունը, լեզվական նորմի նման սկզբունքների ընտրությունը քայքայում են գրական լեզվի նորմավորման գործընթացը...

Խոսքի մշակույթը, որ բխում է խոսքի ճշտությունից, համապատասխանում է գրական նորմին: Եթե գրական նորմի և խոսքի կուլտուրայի մասին ուսմունքը գիտություն է, տեսություն, ապա պետք է ղեկավարվի օրենքներով, այն օրենքներով, որոնք պայմանավորում են տվյալ լեզվի շարժումն ու զարգացումը: Գիտությունը չի կարող ամբողջապես հիմնվել անհատականի վրա, որքան էլ հայտնի ու սիրված լինեն նրանք՝ անհատները:

Լեզվի օրենքի մասին խոսելիս Ղ. Աղայանը գրում է. «Այսպես է պահանջում լեզվի օրենքը, **որի առաջ պետք է խոնարհի ամենայն անձի քիմք և ճաշակ**, ամենայն անձի համառություն ու կամակորություն... Մի ազգ չի կարող ոչ միայն մեկի, այլ նույնիսկ հազար հոգու քմահաճության ենթարկվիլ, բայց լեզվի օրենքին ոչ ոք ընդդիմանալ կարող չէ» (17, էջ 220):

Ուրեմն՝ լեզվի փոփոխության կարևոր աղբյուր է նաև անհատական լեզվի փոփոխությունը, որը նույնպես կարող է հանգեցնել նորմի փոփոխության, եթե բավարարում է հետևյալ պայմանները՝

- Լեզուն այդ նորամուծության կարիքն ունի:
- Անհատի բերած փոփոխությունը հեշտությամբ կարող է ընդհանրանալ և լեզվական-ձևաբանական նորմի փոփոխություն առաջ բերել, եթե այն նպատակահարմար է լինում խոսողների համար. եթե բաղի, բառածևի փոփոխությունը նպատակահարմար է, ուրեմն պահպանվում է, եթե ոչ՝ մերժվում է, լռությամբ մոռացության մատնվում:

Մյուս պայմանը լեզվի զարգացման ընթացքին համապատասխանելն է:

Եթե փոփոխությունը չի համապատասխանում լեզվի զարգացման ընթացքին, ուրեմն նորմատիվ լինել չի կարող, կանոն դառնալ չի կարող: Իսկ եթե այն լեզվի զարգացմամբ է պայմանավորված, ու-

րեմն փոփոխություն կառաջացնի նաև լեզվի համակարգում, այսինքն՝ ինչ-որ տեղ անկանոնությունը կանոն կդառնա:

- Կարևոր պայման է անհատի՝ լեզվական նորաձևություններ հորինող անհատի ազդեցության աստիճանը, նրա հեղինակավոր ու մասսայական լինելը: Անհատի լեզուն լեզվական փոփոխություններ է առաջացնում, որոնցով և միտումներ են ձևավորվում, որոնց հետագա զարգացումն էլ կարող է հասցնել լեզվական նորմի փոփոխության:

Այս ամենով հանդերձ՝ անհատ-հանճարները չեն, որ փոխում են լեզուն, տերյանական բնորոշմամբ՝ «երկինքը միայն ծովերի մեջ չի ցոլանում». հանճարները լեզվական մշակույթի բարձունքներում գագաթներ են միայն...

Լեզվի տարածական, հասարակական, մասնագիտական և անհատական տարբերակումները պատմական տարբեր ժամանակներում տարբեր արժեք են ձեռք բերում և տարբեր ձևով, տարբեր չափով ազդում լեզվի փոփոխության ընթացքի վրա, լեզվական նորմի ձևափոխման և սահմանման վրա: «Անհատական լեզվական ունեցվածքները (անհատական «լեզուները») ևս իրենց ընդհանրությունների ու տարբերությունների ծավալին համապատասխան ստեղծում են լեզվական փոփոխություններին համապատասխան միտումներ, որոնք հանգեցնում են ընդհանուր լեզվական փոփոխությունների, լեզվական արտահայտության ընդհանուր եղանակների, լեզվական սովորույթների և նորմերի փոփոխությունների: Հասարակության բոլոր անդամների իդեալական նույնությունը կհանգեցներ լեզվական անշարժության, կբացառեր լեզվի փոփոխությունը, այսինքն՝ լեզուն կդադարեր ստեղծագործական կարողություն ունենալուց, խոսելը կզրկվեր լեզվական առաջադիմության այնպիսի կարևոր գործոնից, ինչպիսին խոսելու հաճույքն է», - գրում է Գ. Ջահուկյանը (102, էջ 11): Մեջբերումից կարելի է եզրակացնել, որ լեզուն փոփոխվում է նաև «խոսելու հաճույքի» գործոնի ազդեցությամբ. խոսելը հաճույք է դառնում, եթե այն նույնությամբ չի կրկնվում բոլորի կողմից, եթե անընդհատ նույն ձևով չի արտահայտվում, փոփոխվում է, փոխվում է լեզվական նորմը, և այդ մշտական փոփոխության մեջ է լեզվի հարատևման գաղտնիքը:

Լեզվական ամեն մի հանրություն գտնվում է պատմական փոփոխության մեջ, ապրում է տնտեսական, քաղաքական, մշակութային, գաղափարական անընդհատ նորացման պրոցես, որը և իր համապատասխան դրսևորումն է գտնում լեզվի մեջ: Ժողովրդի պատմության մեջ տեղի ունեցող հեղաշրջումները չեն կարող չազդել լեզվի վրա, նրա մեջ առաջ չբերել նշանակալից փոփոխություններ, հիմք չտալ նորմերի փոփոխության, նույնիսկ նորմի մի համակարգի՝ մի ուրիշ, նախորդից զգալի չափով տարբերվող համակարգով փոխարինելու համար: Այսպիսով՝ լեզվի փոփոխության մյուս աղբյուրը հասարակական փոփոխություններն են, սոցիալ-պատմական դեպքերն ու իրադարձությունները. վերջիններս «նորացնում են» լեզուն, առաջ բերում լեզվական փոփոխություններ, ստեղծում արտահայտության նոր միջոցների և նոր ձևերի անհրաժեշտություն, փոխում՝ ընդլայնում կամ նեղացնում են վերջիններիս գործածության ոլորտները: Ահա թե ինչու լեզուն դառնում է հասարակության պատմության ցուցիչ, հանրագիտարան՝ անհիշելի ժամանակների, տվյալ ժողովրդի պատմության կենդանի վկան, և լեզվի պատմության ուսումնասիրությունն էլ հնարավորություն է տալիս վերականգնելու այն կրող հասարակության պատմության «կորած» օղակները: Բնականաբար լեզվական նորմը էլ ձևվում է հասարակական փոփոխությունների հետևանքով առաջացած լեզվական փոփոխություններին համապատասխան: Բայց չպետք է մոռանալ, որ եթե այս փոփոխությունները հնչյունական, բառագիտական մակարդակներում շատ են զգալի, ապա աննշան չափով են «նորացնում» ձևաբանական մակարդակը:

Կարևոր գործոն են նաև արտաքին ազդեցությունները: Լեզուն ինքնակատարելագործվող դինամիկ համակարգ է, բայց այդ չի նշանակում, որ նրա շարժումը դեպի իդեալականացում պայմանավորված է միայն համակարգի ներքին հակասությունների հաղթահարմամբ և նորերի առաջացմամբ: Լեզուն «ինքնանպատակ» համակարգ չէ. նրա հիմնական դերը հաղորդակցման միջոց լինելն է, այսինքն՝ այն ծնվել է, գոյություն ունի և շարունակում է գոյություն ունենալ հանրության հաղորդակցումն ապահովելու համար: Այս առումով էլ լեզվի փոփոխության և զարգացման վրա մեծ չափով ազդում են նաև այսպես կոչված «արտաքին» գործոնները, հետևաբար

լեզվական նորմի փոփոխությունը նաև արտաքին գործոններով է պայմանավորված: Այս ճանապարհով տեղի ունեցած փոփոխությունները Գ. Ջահուկյանն անվանում է «գործառական փոփոխություններ» (102, էջ 10-11) և ավելացնում, որ դրանք այնքան էլ արտաքին չեն, քանի որ նրանց ազդեցությամբ տեղի են ունենում լեզվի ներքին փոփոխություններ:

Ամեն մի լեզվական հանրություն մեկուսացած չէ լեզվական այլ հանրություններից: Ոչ մի ժողովուրդ տնտեսապես, քաղաքականապես, մշակույթա-գաղափարական առումով աշխարհից կտրված չի ապրում. ժողովուրդների շփումն ու փոխազդեցությունը առաջ են բերում լեզվական փոխազդեցություն, լեզվական համապատասխան փոփոխություններ: Իրավացի է Մ. Սբեղյանը, թե լեզուների փոխազդեցության հեղինակները նորից անհատներն են, բայց այն անհատները, որոնք իրենց լեզվի հետ գիտեն նաև ազդեցություն գործող լեզուն. ուրիշ լեզուների ազդեցությունը երբեմն լինում է գիտակցաբար: Խոսողը, բարձր գնահատելով օտար լեզուն կամ կրթված մի հատկանիշ համարելով ուրիշ լեզվով խոսելը, իր համար պարծանք է կարծում այդ լեզվով խոսելը կամ իր ազգային լեզվի մեջ օտար բառեր, դարձվածքներ, նույնիսկ ամբողջ ասացվածքներ խառնելը (1, էջ 49): Մյուս կողմից՝ ուրիշ լեզուների ազդեցությունը երբեմն սեփական լեզվի նորմին չտիրապետող կանոնազանցների - անհատների անգիտակցական քայլով և այլ լեզուների օրինակով իրենց կանոնազանցումն արդարացնելով է պայմանավորված:

Գ. Ջահուկյանը տարբերում է լեզուների փոխազդեցության երկու տեսակ՝ փոխներթափանցում և փոխառություն: Փոխներթափանցումը լեզուների համեմատաբար խոր փոխազդեցություն է, որ, լինելով երկլեզվության արդյունք, կարող է ընդգրկել լեզուների նաև կառուցվածքային առանձնահատկությունները: Փոխառությունը սովորաբար սահմանափակվում է բառապաշարով ու բառակերտման ընդհանուր կաղապարներով, բառապատճենման աշխատանքներով (տես՝ 102, էջ 12):

Լեզվի փոփոխության երրորդ գործոնն էլ ձևաբանական մակարդակում գործուն չէ. ավելին՝ քերականական ձևերի և իմաստների փոխառություն լեզուների պատմության մեջ դեռևս չի գրանց-

վել, և հայերենն էլ այս հարցում բացառություն չի կազմում: Լեզուների փոխներգործությամբ՝ փոխներթափանցմամբ և փոխառությամբ մասնակի փոփոխություններ միայն գոյականական-հատկանվանական մանրահամակարգը կանոնարկող նորմում է կատարվում, և դրանք առավելապես ուղղագրության և ուղղախոսության-արտասանության հետ են առնչվում:

Երբ լեզվական նորմի փոփոխությունները ընդգրկում են լեզվի բոլոր կողմերն ու մակարդակները, ապա արտալեզվական պայմաններն էլ՝ տնտեսական, քաղաքական, գաղափարական-մշակութային, թելադրում են նոր գրական լեզվի ստեղծում: Լեզվի փոփոխությունները վերջիվերջո հանգեցնում են գրական լեզվի նորմի խախտման և նոր նորմի հաստատման, հիմք տալիս նույնիսկ նոր՝ խոսակցական լեզվի առանձնահատկություններին ավելի համապատասխանող գրական նոր լեզվի հանդես գալու համար, ուրեմն՝ կանոնների նոր համակարգ ստեղծելու համար:

Այսպիսով՝ նորմի կայունությունը բացարձակ չէ, այլ հարաբերական է: Նորմը, լեզվական մյուս երևույթների նման, դանդաղորեն, բայց անընդհատ փոփոխվում է արտաքին և ներքին ազդեցությունների հետևանքով՝ հասարակական հեղաշրջումների, խոսակցական լեզվի, բարբառների, տեղային խոսվածքների, սոցիալական խմբերի ու ժարգոնների, փոխառությունների և այլ երևույթների ազդեցությամբ:

Նորմի փոփոխությունը ենթադրում է տարբերակների երևան գալը, որոնք ռեալորեն գոյություն ունեն լեզվի զարգացման որոշակի շրջանում, ակտիվորեն գործածվում են լեզվակիրների կողմից: Նորմատիվ տարբերակները արձանագրվում են ժամանակակից գրական լեզվի բառարաններում:

Գրական լեզվի պատմական փոփոխությունը օրինաչափ, օբյեկտիվ երևույթ է: Այն կախված չէ լեզվակիրների կամքից ու ցանկությունից: Հասարակության զարգացումը, կյանքի սոցիալ-տնտեսական փոփոխությունները, հին սովորույթների մոռացությունը և նոր սովորույթների ի հայտ գալը, մարդկային փոխհարաբերությունների, նաև կուլտուրական մակարդակի բարձրացումը, արվեստի ազդեցությունը, գեղարվեստական գրականության ներգործուն ազ-

դեցությունը հանգեցնում են գրական լեզվի նորմի անընդհատ բարեփոխմանը:

Վերը նշված փոփոխությունները վերջնականապես նորմի փոփոխության պատճառ կդառնան, եթե հասարակության կողմից ընդունվեն, հասարակական հավանությանն արժանանան, եթե ճիշտ լեզվաքաղաքականությամբ պետական, օրինական ճանաչում ստանան. հասարակության հավանությանն արժանացած նորմատիվ փոփոխությունները պետականորեն պետք է գրանցվեն, նորմատիվ քերականություններում, դասագրքերում ու բառարաններում ներառվեն: Այս բոլորից հետո միայն լեզվի պատմության մեջ նորմի փոփոխություն կգրանցվի:

Լեզվաբանների կարծիքով վերջին տարիներին գրական նորմի փոփոխության ընթացքն առավել ակտիվացել է: Վերջինով պայմանավորված՝ ռուս լեզվագիտության մեջ ձևավորվել է «դինամիկական-փոփոխական նորմի» տեսությունը... Հակառակ ասվածի՝ հայ լեզվաբանության պատմության մեջ խոսվում է նորմի համեմատական կայունության մասին, այնուամենայնիվ դժվար է ասել, թե այս տեսությունն իր կողմնակիցները չի ունենա հայ լեզվաբանության մեջ: Բանն այն է, որ ազգային լեզվի կայունացման, միասնականացման, ինքնաձևավորման պայմաններից մեկն էլ նորմն է, որը պետք է ծառայի ազգային կուլտուրայի պահպանմանը: Ահա թե ինչու նորմը ինչ-որ տեղ պահպանողական բնույթ ունի: Այս կապակցությամբ շատ գիտնականներ ծայրահեղորեն են գնահատում խոսքի ազդեցությունը լեզվի փոփոխության ընթացքում, վերջինով էլ պայմանավորված՝ նորմի փոփոխությունը, և ստեղծվել է այսպես կոչված «դինամիկական նորմի» տեսությունը, որը գերագնահատում է նորմի փոփոխական լինելը: Պատճառն այն է. որ լեզուն անընդհատական շարժման մեջ է, որը և այն թյուր կարծիքն է ստեղծել, որ եթե լեզուն ոչ մի հաստատուն վիճակ չունի, այդ դեպքում այն կարգավորող, կայունացնող նորմը ևս հաստատուն լինել չի կարող:

Պարզ է, որ լեզուն փոփոխվում է, և նորմը, որ արտացոլում է լեզվի զարգացման ընթացքը, չի կարող չփոփոխվել: Լեզվի փոփոխությանը համապատասխան նորմը սահմանելիս անհրաժեշտ է ճիշտ ընտրություն կատարել, ճիշտ որոշել, հաշվի առնել լեզվի զարգացման օրինաչափությունները, այլև նորմի՝ ավանդական և

պահպանողական լինելը: Նման պահպանողականությունը պատմականորեն և գործնականորեն արդարացվում է: Այսպես՝ ռուս լեզվաբան Ֆ. Պ. Ֆիլինը նախազգուշացնում է խոսքին կուրորեն հավատալու հետևանքների մասին. խոսքը անցողիկ է (իզուր չէ ժողովուրդն ասել՝ խոսքը թռչուն է, կթռչի, էլ չես բռնի). փոփոխվում է նորմից շատ արագ: Խոսքային լեզվական երևույթները կարող են ծնվել, բարձրակետի հասնել և դուրս մնալ լեզվից: Խոսքը կարող է ոչնչացնել պատմական երկար ժամանակահատվածում ձևավորված նորմը: Իսկապես, որոշ բառեր, բառական որոշ նշանակություններ, դարձվածքներ, որոշ բառաձևեր, շարահյուսական կառույցներ ու կապակցական ձևեր կարող են լայն տարածվածության շնորհիվ մասսայական դառնալ. ավելին՝ նրանց օգտագործումը դառնում է մոդայիկ, այսինքն՝ ուրիշների համար ժամանակակից խոսքի դսևորման ձև լինել: Բայց մոդայով չէ, որ պետք է առաջնորդվել լեզուն նորմավորելիս, նրա միավորները կանոնակարգելիս: Նորմավորումը պետք է ամրապնդի այն, ինչ արդարացված է լեզվի մեջ, ինչը չի հակասում նրա ինքնությանը, հիմնավորված է համակարգով: Լեզվական երևույթների ամրապնդումը երկար ժամանակ է պահանջում: Եթե թագավորեն շարժականությունը, փոփոխականությունը, լեզվին սպառնում է քաոսային վիճակ, ոչնչացում, մասնատվածություն: Սա պետք է նկատի ունենան մոդայիկ դարձած «դինամիկական նորմի» կողմնակիցները, որոնք հենման կետ են դարձնում նորմի փոփոխականությունը՝ խոսքի որոշ երևույթների ոճական երանգները դրոշակ դարձնելով... Նորմի «դինամիկական տեսության», փոխարեն անհրաժեշտ է հաստատել «նորմի կայունության» տեսությունը, որն իր մեջ ներառում է նաև հիմնավորված փոփոխությունը:

Պահպանողականության, ավանդականության և փոփոխականության ճիշտ համատեղումը ազգային լեզվի գոյության պայմաններից մեկն է:

«Դինամիկական նորմի» տեսության կողմնակիցները հիմնավորում են իրենց տեսակետը հետևյալ փաստարկներով՝

ա/ այս կամ այն փաստի տարածվածությունը լեզվում

բ/ սկզբնաղբյուրի հեղինակավորությունը

գ/ հասարակական գնահատումը (անկետաների լրացում, հարցաթերթիկների պատասխանում և այլն):

Սակայն փաստն այն է, որ սրանցից ոչ մեկը չի կարող լեզվական նորմի փոփոխության պատճառ դառնալ կամ նոր նորմի ձևավորման հիմք հանդիսանալ:

Լեզվական նորմը հավերժորեն տրված չէ, դոգմա չէ, քարացած երևույթ չէ: Հաղորդակցական նպատակներով պայմանավորված, լեզվական միջոցների գործառական ֆունկցիաներից կախված, կախված որոշակի խնդիրներից հնարավոր է գիտակցական նահանջ նորմից: Այստեղ պետք է հիշել նշանավոր լեզվաբան Շչերբայի խոսքերը. «Երբ մարդու մոտ դաստիարակված է լեզվական նորմի զգացողությունը, այդ ժամանակ էլ նա սկսում է լիովին հասկանալ լեզվական նորմից կատարված հիմնավորված շեղման, փոփոխության ողջ հմայքը» (Когда чувство нормы воспитано у человека, тогда-то он начинает чувствовать всю прелесть обоснованных отступлений от нее.) (Л. А. Введенская, Л. Г. Полова, Е. Ю. Кашаева, Русский язык и культура речи,122, 89):

Ճկուն ու ինքնաստեղծ, դարերի ճանապարհ անցած հայերենը չի կարող տեղավորվել կանոնների ամբողջության մեջ. կանոնները միայն կողմնորոշիչ դեր են կատարում. նրանք էլ պարտավոր են իրենց «չափն իմանալ». այսինքն՝ լեզվական նորմը մեկընդմիշտ տրված, քարացած երևույթ չէ. այն ժամանակի ընթացքում փոփոխվում է, «բարեշրջվում» հաղորդակցման պահանջները առավելագույնս բավարարելու համար: Գրական լեզուն իր նորմավորման ճանապարհին, թվում է, թե անընդհատ մոտենում է ամենաճշգրիտ բնորոշմանը, ձևավորում է ամենակատարյալ կանոնը, սակայն նորից նկատվող շեղումներն ու զուգաձևությունները, հակահամակարգային երևույթները՝ ավանդական թե նոր սաղմնավորվող, նորից ու նորից «սև կետեր» են ստեղծում լեզվի համակարգում՝ առաջ բերելով կանոնարկման, նորմավորման նոր պահանջներ: Լեզուն անընդհատ փոփոխվող երևույթ է, և նրա զարգացման որ փուլն էլ դիտելու լինենք, կարող ենք նկատել մի կողմից՝ առաջացող, իսկ մյուս կողմից՝ մահացող, կանոնավորվող, նորմից շեղվող երևույթներ: Նորմավորման գործընթացը երբեք կանգ չի առնում, մշտապես գործում է, և

լեզվական այն բոլոր իրողությունները, որոնք իրենց վերջնական ձևն ու գործածության բնագավառները չեն գտել, աստիճանաբար ճշտվում, կանոնավորվում են: Փոխվում է լեզվի համակարգը, փոփոխվում է և լեզվական նորմը. «մեռավ» գրաբարը, «մեռավ» և այն կարգավորող, միասնականացնող համակարգը: Աշխարհաբարի սկզբնավորումով հիմք դրվեց գրական նոր լեզվի, որն էլ իր համակարգին համապատասխան լեզվական նորմ սահմանեց: Ուստի անհրաժեշտ է լեզվական ուսումնասիրություններ կատարելիս միշտ ճշգրտել, թե պատմական ո՛ր ժամանակաշրջանի մասին է խոսքը, լեզվական նորմի սահմանները որոշելիս հստակորեն տարբերակել համաժամանակյանը տարժամանակյայից, չխառնել իրար մի ժամանակի մի կտրվածքին բնորոշ կանոններն ու բացառությունները, դրանց համակարգի և նորմի տարրերը:

Լեզվական նորմը կասեցնում է լեզվի տարերային, անընդհատ փոփոխությունը: Պատահական չէ, որ այն համեմատաբար կայուն է, իսկ կայունությունը պայմանավորված է նրա օբյեկտիվությամբ և հասարակական գնահատման բնույթով: Բայց միևնույն ժամանակ լեզվական նորմը անընդհատ փոփոխվում է, նորոգվում, մշակվում, ուստի և այն կայուն է հարաբերականորեն: Լեզվական նորմը պատմական հասկացություն է, քանի որ այն ճիշտ է լեզվի զարգացման մի փուլի համար միայն և նորմատիվ՝ միայն այդ փուլում. մի այլ կտրվածքի համար կարող է անընդունելի լինել, կանոնական չհամարվել: Օրինակ՝ 1913 թ. լույս տեսած «Արևելահայ աշխարհաբառի քերականութիւն» գրքի նախաբանում հեղինակը՝ Հ. Դաղբաշյանը, արգելական հրամայականի մի քանի գործածվող ձևերի կապակցությամբ գրում է. «Իսկ մի՛ արա, մի՛ մոռացիր, մի՛ մոտեցրու, մի՛ վշտացրու, մի՛ հարցրու ահռելի ձևերը արդիւնք են տգիտութեան» (37, էջ 84): Այն ժամանակ «տգիտության արդյունք» այդ ահռելի ձևերը մեր ժամանակներում լեզվական նորմի սահմաններում են, կանոնական. այն, ինչ անկանոն էր 20-րդ դարի սկզբներին, նույն դարի վերջերին արդեն կանոնական էր: Կամ՝ ժամանակին «Մշակ» թերթում (խմբագիր՝ Գ. Արծրունի) լույս է տեսնում «Ո՞վ է Աղայանցը» վերնագրով հոդվածը, որտեղ այն փաստն է բերվում, թե «Աղայանցն այնքան տգետ է, որ փոխանակ գրելու «չէ գնում», գրում է՝ «չի գնում»: Այստեղից ահա սկսվեց մեր հռչակավոր բանակռիվը, թե

ինչպե՞ս պետք է գրել հայտնի տեղերում՝ **չէ՞**, **թե՞ չի**» (17, էջ 473): Միանգամայն պարզ է, որ մինչև աղայանական գործածությունը լեզվական նորմով սահմանվածը՝ ճիշտը, «**չէ**»-ով ձևն է եղել: Աղայանի կողմից «**չի**»-ի գործածությունը վկայում է արդեն հին ու նոր ձևերի համատեղ գոյության փաստը և նրա կողմից երկրորդին առավելություն տալը:

Կամ թե՝ մեր անցյալի քերականության մեջ գավառաբանություն էին որակվում պայմանական եղանակի **չեմ ուտի**, **չեմ խոսի**, **չի գրի** ժխտական ձևերը, մինչդեռ այսօր դրանք օրինաչափական են, իսկ **չեմ ուտիլ**, **չեմ խոսիլ**, **չի գրիլ** ձևերն արդեն հնաբանություններ են: Եթե լեզվի զարգացման վաղ շրջանում կանոնավոր էին **գրե**-ն, **կատարե**-ն, **ունիմ**-ը, **ունիս**-ը, այսօր դրանք հակահամակարգային իրողություններ են, հետևաբար՝ նորմից դուրս:

Եթե այսօր **գիտե** ձևը լեզվական նորմով ամրակայված է, ապա կանոնականի մակարդակին է հասել նաև **գիտի** ձևը (**ուտի**, **խմի**, **երգի** և նման բայերի համաբանությամբ), որն էլ, կարծում ենք, արդեն դուրս է մղել առաջինին:

Այսպիսով՝ ձևաբանական նորմի փոփոխության բուն պատճառը պետք է փնտրել լեզվի սովորական գործընթացի մեջ. լեզուն զարգանում է ազատ և չի կամենում հպատակվել լեզվաբանների պեղած հին օրենքներին: Լեզվի մեջ չկան «իրավացիներ» և «մեղավորներ», չկա որևէ դիտավորյալ ներգործություն լեզվի վրա, որևէ բռնություն լեզվական նորմերը խախտելու առումով. կա միայն ասելիք ունենալու և դիմացինին հասկացնելու, հասկանալու խնդիրը: Չկա ոչինչ, բացի վայրկյանի կարիքից, որ է՝ ցանկություններն ու մտքերը հասկանալի դարձնել դիմացինին: Լեզվի այս սովորական կենդանի խոսվածքի ժամանակ ահա ծագում են լեզվական նոր ձևերը, և ինչպես օրգանական բնության մեջ, նույնպես և լեզվի մեջ ծագած լեզվական նոր իրողությունների նպատակահարմարությամբ որոշվում է նրանց պահպանումը կամ կորուստը լեզվի մեջ: Երբ լեզվական որևէ իրողություն չի պահպանվում, լեզվական նորմը չի փոփոխվում, իսկ երբ փոփոխված հնչյունախումբը, բառը, բառաձևը պահպանվում են լեզվի մեջ, հասարակության հավանությանն արժանանում, արձանագրվում նորմատիվ քերականություններում, բա-

ռարաններում, ուրեմն և լեզվական նորմը փոփոխվում է՝ նո՛ր կանոնի, նո՛ր օրինաչափության ամրակայմամբ:

Լեզվական նորմը, մասնավորապես ձևաբանականը, անհատական ցանկությամբ, կամայականությամբ կամ դրսից չի փոփոխվում. անհատների գործը սահմանափակվում է նրանով, որ կարող են առաջնություն տալ այս կամ այն զուգաձևին, պատճառ դառնալ նրա կենսունակության բարձրացմանը կամ մահացմանը... Այստեղ արդեն առաջնային է դառնում անհատական ընկալումը, անձնական վերաբերմունքն ու մեկնաբանությունը, որն այլևս ենթակա չէ կանոնարկման:

«Քերականությունը նույնիսկ թագավորներին է հրամայում»:

(Մոլիեր)

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ-ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՇԵՂՈՒՄՆԵՐ

Պատմականորեն ձևավորված և համընդհանուր ճանաչման արժանացած քերականական կանոնները լեզվակիր հանրության կողմից գիտակցվում են որպես առավել ճիշտ և ընդունելի՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Այդ կանոններից կատարվող շեղումները սովորաբար դիտվում են որպես քերականական սխալներ և անկանոն ձևեր: «...Չեմ սիրում ռուսաց լեզուն առանց քերականական սխալների»,- գրում է Ա. Պուշկինը «Եվգենի Օնեգինում» («Как уст румяных без улыбки, Без грамматической ошибки Я русской речи не люблю».): Առաջին պահ երկմտություն ես ապրում, բայց հետո հասկանում ես, որ միայն ռուսերենի հմուտ գիտակը կարող է այսպե՛ս արտահայտվել՝ քերականական սխալների և շեղումների տակ տեսնելով այն հզոր ազդակները, որոնք խթանում են ռուսաց լեզվի զարգացմանը, այն տանում «լեզվական կատարելության» ճանապարհով: Այսպե՛ս մտածելով է կարևորվում լեզվական նորմից կատարվող շեղումների ուսումնասիրությունն ու արժեքավորումը:

Քերականական այն իրողությունները, որոնք դուրս են մնում քերականական նորմի սահմաններից կամ լեզվական կանոնի համակարգից, հիմնականում առնչվում են բարբառների և ոճերի հետ,

հակառակ դեպքում դիտվում են կամ որպես հնաբանություն (օրինակ՝ **ունիմ, թռչիմ, չի կամենալ**...), կամ որպես նորաբանություն (օրինակ՝ **ամուսնի, մարդի** ձևերը խոսակցական լեզվում):

Գրական հայերենը զարգանում է մի կողմից՝ իր ներքին օրենքներով՝ լեզվի կառուցվածքի ընձեռած հնարավորություններին համապատասխան, մյուս կողմից՝ կրում է տարբեր լեզուների բառապաշարային, քերականական, արտասանական ազդեցությունները, հին հայերենի, արևմտահայերենի, բարբառների, խոսակցական լեզվի ազդեցությունները: Այդ պատճառներով էլ գրական լեզվի օրինաչափությունները շեղումների ենթարկվելու մշտական վտանգի մեջ են գտնվում: Լեզվի խիստ պարտադրելի օրենքներից հրաժարվելը, խոսքի ճշտության անհետևողականությունը, խոսքի սխալներն ու սայթաքումները որակվում են որպես լեզվական նորմից կատարված շեղումներ, որոնք երբեմն այնքա՛ն անտանելի են, այնքա՛ն արտառոց, որ այլ բան չի մնում անելու, քան բանաստեղծի հետ կրկնել՝ «Իսկ առավել լավ չէ՞ արդյոք, Որ մարդու ոտքը սայթաքի, Քան թե լեզուն» (Պ. Սևակ): «Սայթաքում է» լեզուն, ու դժվարանում ես հասկանալ դիմացինիդ, դժվարանում ես կարգավորել քո խոսքը, նախորդներին չես հասկանում, հաջորդների համար էլ անհասկանալի կմնաս: Ահա թե ինչու այդքան կարևորվում է լեզվական նորմը, և առավել անհրաժեշտ դառնում նրանից կատարվող շեղումների ուսումնասիրությունն ու դրանցից ազատվելու ճանապարհների որոնումը:

Ցանկացած լեզվում, նրա զարգացման ցանկացած փուլում գործող լեզվական նորմը նաև այդ նորմից կատարվող հավանական «նահանջի», «խախտման» մաս է ընդգրկում, որն էլ որպես շեղում է դիտվում: Լեզվի մեջ կա «չեզոք գոտի», ուր լեզվական նորմով սահմանվածն ու նրանից կատարված շեղումը հակադրություններ են կազմում, որոնք «լեզվական պայքարի» մեջ են մտնում, և որը սովորաբար ավարտվում է նորի՝ շեղվածի հաղթանակով:

Քերականական շեղումը խոսակցական լեզվին բնորոշ հատկանիշ է: Քանի որ գրական լեզվի գրավոր և խոսակցական գոյաձևերի սահմանազատումը դեռևս հստակորեն կատարված չէ, գրական լեզուն ընդհանրապես հատկանշվում է նորմով սահմանված այն օրինաչափություններով, որոնք բնորոշ են գրավոր տարբերա-

կին: Գրական խոսակցական լեզվում պատահական, ոչ ճիշտ, ոչ կանոնական ձևերի օգտագործման հավանականությունն ավելի մեծ է, քան գրական գրավոր տարբերակում. այստեղ է, որ ընտրության հնարավորություն կա՝ առաջնորդվել լեզվական նորմով սահմանվածո՞վ, թե՞ շեղվել դրանից, խախտե՞լ այն, թե՞ ոչ, կամ եղած զուգաձևային, իմաստային զուգահեռներից ո՞րը ընտրել: Նաև կարևոր է քննել և իրարից հստակորեն տարբերակել քերականական շեղումների պատճառ դարձող «պատճառները»՝ առօրյա-խոսակցական լեզուն, անուշադրությունը, լեզվական չիմացությունը, նորմի նպատակադրված, դիտավորյալ խախտումը, խոսքի արտահայտչականության ընդգծումը, խոսքն էլ ավելի արտահայտիչ դարձնելու ցանկությունը: Կարևոր է նաև հաշվի առնել՝

Լեզվական նորմից կատարված շեղմամբ հաղորդակցումը խափանվե՞լ է, թե՞ ոչ, այսինքն՝ հաղորդակցման հիմնական նպատակը իրագործվե՞լ է. նա, ում ուղղված է խոսքը, գիրը, հասկացե՞լ է խոսողին կամ գրողին:

Ինչպիսի՞ իրադրության, հաղորդակցական ինչպիսի՞ շրջանակում է կատարվել լեզվական շեղումը. կան իրադրություններ (հատկապես պաշտոնական, դիվանագիտական հանդիպումների ժամանակ), երբ, որպես կանոն, մարդն «իրավունք չունի սխալվելու». խոսողը կամ գրողը ասած կամ գրած յուրաքանչյուր բառի համար պատասխանատվություն է կրում: Այլ իրադրություններում (ոչ պաշտոնական) լեզվական «վթարը» կարող է գնահատվել որպես ներելի շեղում:

- Ինչպե՞ս է գնահատվում այն խոսակցի կողմից՝ ներելի՞ է, թույլատրելի՞, թե՞ հակառակը:

- Գրական լեզվի ո՞ր տարբերակում է շեղումը կատարվել՝ գրավո՞ր, թե՞ խոսակցական գոյածևում: Բնականաբար բանավոր խոսքում կատարվող շեղման նկատմամբ հասցեատերը կարող է ավելի ներողամիտ լինել, քան գրավոր հաղորդակցման դեպքում:

Հաղորդակցական տեսակետից լեզվական շեղումները (քերականականը ևս) լինում են թույլատրելի և ոչ թույլատրելի (այն պայմանով, որ խոսակիցը կամ կարդացողը ևս տիրապետում է լեզվական նույն նորմին): Եթե հաղորդակցման ընթացքում կատարված շե-

ղումը չի խանգարում հասկանալի դառնալուն, այս դեպքում այն կարող է որակվել որպես խոսակցական լեզվի կարողականության դրսևորում և թույլատրելի շեղում է: Իսկ եթե շեղման պատճառով հաղորդակցումը չի իրականացվել, այս դեպքում շեղումը անթույլատրելի է և աններելի:

Լեզվական սխալները, շեղումներն ըստ ծագման և տարածվածության լինում են՝

ա/ մասնակի սխալներ, որոնք հետևանք են անուշադրության, թյուրիմացության կամ չիմացության (երբեմն նման սխալները հաստատվում են և դիտվում որպես նորմատիվ).

բ/ ընդհանրական սխալներ, որոնք պայմանավորված են տարբեր մարդկանց համար ընդհանուր պատճառներով և ունեն ընդհանրական բնույթ (օրինակ է օժանդակ բայի փոխարեն **ա**-ի օգտագործումը ընդհանրական է, քանի որ **մ**-ից հետո հավանաբար ավելի դյուրին է **ա** արտասանելը, քան է):

Լեզվական նորմից կատարված շեղումները կարելի է բաժանել նաև այսպիսի խմբերի՝

ա/ դիտավորյալ

բ/ ոչ դիտավորյալ:

Եթե դիտավորյալ շեղումները վկայում են այն կատարող անձի (խոսողի կամ գրողի) լեզվական բարձր կուլտուրայի մասին, լեզվական նորմին տիրապետելու մասին, ապա ոչ դիտավորյալ շեղումները արդյունք են վերջինիս ոչ լրիվ իմացության, խոսողի կամ գրողի խոսքի կուլտուրայի ոչ բարձր մակարդակի:

Դիտավորյալ շեղումները կատարվում են նպատակադրված՝ հաշվի առնելով գործածության շրջանակները և խոսողի նպատակները: Դրանք պետք է փնտրել հատկապես խոսակցական լեզվում. կարող է լինել «լեզվական» խաղ», կարող է լինել գրական խոսքի ծաղրական վերարտադրություն, «ժողովրդի մարդ» երևալու (կամ ցույց տալու) ցանկության արտահայտություն, վուլգարիզմի դիտավորյալ օգտագործում: Հաճախ էլ դիտավորյալ շեղումները նկատվում են գեղարվեստական խոսքում՝ բարբառայնության, ժարգոնիզմի, հասարակաբանության, հայհոյախոսության ձևով՝ կերպարի, գրական հերոսի առավել ճիշտ ու «բնական» նկարագրման համար:

Բնականաբար, լեզվական նորմի դասակարգմանը համապատասխան՝ լեզվական շեղումներն էլ պետք է դասակարգել այսպես

ա/ ուղղագրական-ուղղախոսական-արտասանական
բ/ բառաիմաստային
գ/ բառակազմական
դ/ քերականական
ե/ ոճական
զ/ կետադրական:

Ավելին, կարելի է առանձնացնել շեղումների մի խումբ ևս՝ **ընդհանրական** անվանմամբ, որ վերաբերում է ոչ միայն լեզվական մի կոնկրետ մակարդակի, այլև մի քանի մակարդակների (օրինակ՝ **զանգվել** (զանգահարելու» իմաստով) բառում երևան են գալիս և բառակազմական, և՛ քերականական շեղումներ):

Վերջին շրջանում լեզվագիտության մեջ (ոչ հայ լեզվագիտության) լեզվական նորմից կատարված շեղումների դասակարգման նոր տարբերակ է գործում, որը հենվում է լեզվական նորմի՝ նոր և դեռևս լայն տարածում չգտած դասակարգման վրա: Ըստ այդմ՝ լեզվական նորմից կատարված շեղումները լինում են՝

ա/ շեղումներ, որոնք կապվում են կառուցվածքա-լեզվական նորմի խախտման հետ (օրինակ՝ ուղղագրական, բառագիտական, բառակազմական և քերականական շեղումները):

բ/ Շեղումներ, որոնք կապվում են հաղորդակցական-գործաբանական նորմի խախտման հետ [այդպիսիք են հատկապես ոճաբանական շեղումները, սխալները, այդ թվում՝ տավտոլոգիաները՝ «անտեղի բառակրկնությունները և ոչնչով չարդարացված ավելադրությունները» (55, էջ 159), պլեոնազմները կամ բառ-հավելուկները («իմաստային և արտահայտչականության տեսակետից միանգամայն ավելորդ բառերը» (55, էջ 29), ոճերի խառնումը, օտար փոխառություններին գերապատվություն տալը և նրանց ոչ տեղին օգտագործումը]:

գ/ Շեղումներ, սխալներ, որոնք կապվում են բարոյագիտական նորմի խախտման հետ, այդ թվում նաև էֆեմիզմների՝ անտակտ խոսքի գործադրումը, հայհոյախոսությունների օգտագործումը,

լեզվացինիզմի (лингвоцинизм) դրսևորումները, **Դուք // դու** դիմելաձևի խախտումը և այլն:

Ավելին՝ այսօր գերզարգացած երկրներում բարոյագիտական-խոսքային նորմից շեղվելու համար շեղվողին դիմացինը կարող է դատի տալ իրեն հոգեբանական-բարոյական-խոսքային «վնաս» հասցնելու համար:

Շեղումները կարելի է դասակարգել նաև հայերենի օրինաչափություններին համապատասխան լինելու կամ չլինելու սկզբունքով: Այս դեպքում տարբերակվում են՝

ա/ շեղումներ (արտասանական, քերականական...), որոնք սխալ են ժամանակակից հայերենի օրինաչափությունների, գործող լեզվական նորմի տեսակետից, բայց կան այլ լեզուներում, խոսակցական տարբերակում, բարբառներում, որտեղից թափանցում են գրական լեզվի մեջ. այսինքն հակալեզվային իրողություններ չեն (ինչպես օրինակ՝ **խոսացնել, ձիրեկտըր, վեդրո, գյուղացիք, իրա** ձևերը **խոսեցնել, դիրեկտոր /տնօրեն/, դույլ, գյուղացիներ, իր** ճիշտ, գրական ձևերի փոխարեն):

բ/ Շեղումներ, որոնք սխալներ են և օրինաչափական չեն ընդհանրապես հայերենի համար, լեզվի համակարգից դուրս են, հայոց լեզվի շրջանակներից դուրս են (ինչպես՝ **հանդիպվել, քայլվել**. հայերենում չեզոք սեռի բայերը կրավորական ձև չունեն):

Այս երկու խմբի համար ընդհանրականն այն է, որ երկուսն էլ ճիշտ չեն գրական հայերենի օրինաչափությունների տեսակետից, լեզվական գործող նորմի խախտում են: Սա նշանակում է՝ **«ճիշտ է այն, ինչ գրական է, ուրեմն՝ խոսքի հիմքում ընկած են գրական լեզվի օրինաչափությունները (բառական, քերականական, արտասանական և այլն)**» (6, էջ 9):

Այսպիսով՝ քերականական շեղումը լեզվական սխալների այն տեսակն է, որ կապվում է քերականական օրենքների ու օրինաչափությունների խախտման հետ, քերականական նորմից շեղվելու հետ::

Քերականական շեղումներն էլ իրենց հերթին կարելի է բաժանել 2 խմբի՝

1.քերականական-ձևաբանական

2. քերականական- շարահյուսական:

Քերականական-ձևաբանական շեղումների հիմնական մասը պայմանավորված է ձևաբանական նորմի չիմացությամբ. համակարգային են, արդարացված լեզվի ձևաբանական կառուցվածքով, սակայն չեն համապատասխանում նորմին: Եթե մեկը ասում է՝ **տարեցի**, **ուտեցի**, ապա խախտում է հիշյալ բայերի անցյալ կատարյալի կազմության կանոնը: Բայց այս «շեղ» ձևերը լեզվի համակարգից դուրս չեն և բխում են հենց հայերենի սահմանական եղանակի անցյալ կատարյալի կազմության օրինաչափությունից:

Կամ՝ մեկը ասում է **այգիից**, **գինիից**, ապա այստեղ ևս խախտվում է տվյալ բառերի բացառականի կազմության կանոնը, և համարվում են նորմից դուրս: Բայց սրանք չեն հակասում լեզվի համակարգին, ավելին՝ նման շեղումները պայմանավորված են հենց համակարգով, պատճառաբանվում են նրանով, և զարգացման միտումն էլ հենց այս ուղղությամբ է ընթանում:

Խոսքի մակարդակում երևան եկած ձևաբանական շեղումները միշտ չէ, որ պայմանավորված են ներլեզվական հակասություններով: Երբեմն հանդիպում են այնպիսի շեղումներ, որոնք արդյունք են արտալեզվական ազդեցությունների՝ խոսակցական լեզվի, բարբառների, ստեղծագործական լեզվի...

Ի վերջո՝ աղաղակող, բացահայտ սխալների կողքին անտեղի և անօգուտ չէ ուշադրություն դարձնել նաև «փոքրիկ» ու «անշմար», «անմեղ թվացող» աղավաղումներին, շեղումներին, որոնք կարող են աննկատելիորեն վերածվել «վտանգավոր», «անուղղելի», մայրենի լեզվի համակարգին հակասող ձևերի. «...Անհրաժեշտ է վեր հանել լեզվի քերականական համակարգի ճշգրտությունը խախտող շեղումները, լինեն դրանք գերանի նման՝ աչք ծակող, թե հարդի ծեղի նման՝ հազիվ նշմարելի» (34, էջ 38): Միաժամանակ չմոռանանք Ղ. Աղայանի խոսքերը. «Պետք չէ մժղուկներ քամել և ուղտեր կուլ տալ»...

Այսպիսով՝ որպեսզի ճիշտ խոսենք, ճիշտ գրենք, նաև «ճշտորեն», արդարացված «շեղվենք», անհրաժեշտ է լիարժեքորեն տիրապետել ժամանակակից հայերենի գործող նորմով սահմանված կանոններին. երբ մարդը տիրապետում է լեզվական նորմին, այն

ժամանակ էլ նա ընկալում է լեզվական նորմից կատարված, կատարվող հիմնավորված շեղման ողջ «հմայքը»:

Լեզվական շեղումներն էլ զուգաձևությունների, տարբերակային ձևերի առաջացման պատճառ են դառնում

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ-ՉԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱՉԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Զուգաձևություն հասկացությունը սերտորեն առնչվում է լեզվական նորմի ըմբռնման հետ: Յուրաքանչյուր զարգացած լեզու նորմավորված է, իսկ տարբերակայնությունը, զուգաձևությունը բնորոշ է նորմավորված գրական լեզուներին: Դժվարամատույց է հայոց լեզուն, և որքան հին, այնքան դժվար է նրա նորմավորումը, որքան հարուստ ու ճոխ է այն, նույնքան բարդ է նրա կանոնարկումը: Այնուամենայնիվ, ժամանակակից գրական հայերենը նորմավորված, կանոնակարգված լեզու է: Սակայն հայերենի համակարգված և նորմավորված լինելը չի բացառում զուգաձևությունների գոյությունը:

Հայ լեզվաբանության մեջ տերմինի անմիօրինակություն կա. օգտագործվում են **զուգաձևություն, տարբերակայնություն, զուգադրություն, զուգահեռություն, եռաձևություն, բազմաձևություն** տերմինները, իսկ նրա բաղադրիչ տարրերն անվանվում են՝ **զուգաձև, զուգահեռ ձև, զուգադիր, տարբերակ, փոփոխակ, ձևակ, ենթաձևույթ, այլակ** («լեզվի արժութային միավորի տարբերակ»), **այլաձևակ** (ձևակի տարբերակ), **վարիանտ**: Կարծում ենք ավելի նպատակահարմար է օգտագործել **զուգաձևություն** և **զուգահեռ ձև, տարբերակ, այլաձևակ** բառերը:

Տարբերակների գոյությունը կենդանի խոսքի արգասիք է, լեզվի զարգացման յուրահատուկ դրսևորում: Սրանց քանակական և որակական առանձնահատկությունների բացահայտումն արդեն իսկ որոշակիորեն նպաստում է լեզվական իրողությունների վերհանմանը: Սրանց ուսումնասիրությունը առավել ևս կարևորվում է այն

դեպքում, երբ տրվում են դրանց գործառական-ոճական, նրբերանգային հատկությունները, առաջացման պատճառները և այլն, որոնք, սակայն, միշտ չէ, որ կարող են ճիշտ և անառարկելիորեն լուսաբանվել:

Պատմականորեն տարբերակայնությունը, զուգաձևությունը առաջանում են որպես լեզվական հեղաշրջման հետևանք, որպես լեզվի մյուս գոյաձևերի ազդեցության արդյունք, որպես ներլեզվային իրողությունների բազմաբնույթ փոխհարաբերությունների հետևանք: Դժվար է պատկերացնել մի լեզվավիճակ (ցանկացած լեզվի մեջ), որ լեզվական նորմից շեղումներ չլինեն, չլինեն երկձևություն ու բազմաձևություն, կանոնավոր տարբերակների կողքին՝ անկանոն տարբերակներ՝ դատապարտելի, ոչ հանձնարարելի, ոչ թույլատրելի. այդպիսի կատարելության դեռ ոչ մի լեզու չի հասել: Անգամ հնդեվրոպական լեզվի ընդերքում որպես առանձին բարբառ ձևավորվող հայերենը պիտի ունենար խոսվածքային ներքին տարբերություններ, որոնք, ըստ Գ. Ջահուկյանի (102, էջ 252), պիտի պահպանվեին և նույնիսկ մեծանային նրա լեզվական անկախ գոյության՝ վաղնջահայերենի շրջանում: Լեզվաբանը փորձում է նշել այն ժամանակներում գոյություն ունեցած ձևաբանական տարբերակների մի քանի երևույթներ (տես՝ էջ 254-255):

Արդի հայերենն էլ, չնայած իր միօրինակացման միտումին, այս առումով կատարյալ չէ. որքան էլ կանոնավորվում, նորմավորվում է լեզուն, ճշտվում են լեզվական նորմի սահմանները, պահպանվում են բառակազմական, քերականական օրինաչափությունները, միևնույն է, լեզուն միշտ «բաց» և «ծանրաբեռնված» վանդակներ ունի, նաև լեզվական նորմի շրջանակներից դուրս վանդակներ ունի, հայոց լեզվի շրջանակներից դուրս բացառություններ ունի, շեղումներ... Հայոց լեզվի ձևաբանական համակարգն էլ կատարյալ չէ. նորմավորված է, կանոնակարգված, բայց էլի շեղումներ կան, բացառություններ, զուգաձևություններ: Եթե վաղնջահայերենի, հին հայերենի ձևաբանական՝ հոլովման և խոնարհման զուգահեռ ձևերի, նախդրավոր և աննախդիր ձևերի տարածքային տարբերակների ամբողջական բացահայտումը, նրանց՝ բարբառային թե հասարակական-գործառական կամ ոճական արժեք ունենալու հարցի բազ-

մակողմանի ուսումնասիրությունը, ժամանակագրական բաշխումը այս ուղղությամբ կատարված հետազոտությունների անբավարարության և մասամբ էլ օբյեկտիվ պատճառներով (վաղնջահայերենը չէր կարող շատ տարբերակային ձևեր ունենալ) գրեթե անհնար է ներկայացնել, և սա ապագայի գործ է, ապա մերօրյա հայերենի համար կարող ենք նշել մեծաքանակ ձևաբանական տարբերակներ, զուգաձևություններ: Ձևաբանական զուգաձևությունները ձևավորվում են գրական-խոսակցական, գրական-ժողովրդական, գրական-բարբառային, գրական արևելյան-գրական արևմտյան, ժամանակակից-հին (ավանդական), ժամանակակից-նոր (նորագույն) տարբերակներով: Տարբերակների գոյությունը լեզվի զարգացման գործընթացի արտահայտությունն է, նաև պայմանավորված է գործառական ոճերով, գեղարվեստական գրականության (ստեղծագործական լեզվի) պահանջներին բավարարելու անհրաժեշտությամբ: Էդ. Աղայանն իր բառարանում ընդգրկված բառերի շարքում առանձնացնում է նաև տարբերակային բառակազմը, որի մեջ մտնում են «գործառական, սոցիալական, ոճական, ներլեզվական գործընթացների հետ կապված զուգահեռները և այլ կարգի մասնավորում ունեցող բառային զույգերը» (11, էջ XI):

Տարբերակային բառակազմում էլ առանձնանում են ձևաբանական տարբերակները: Նրանց բնութագրումների համար ելակետը և չափանիշը ոչ թե պատմական մոտեցումն է, այլ ժամանակակից գրական հայերենի նորմը: Յուրաքանչյուր գրական լեզու ունի իր լեզվական նորմը, որը պարտադիր է նրանով խոսող հասարակության բոլոր անդամների համար: Սակայն լեզուն գտնվում է անընդհատ փոփոխության, զարգացման պրոցեսի մեջ, որ կատարվում է հիմնականում նրա բանավոր տարբերակի ազդեցությամբ, միաժամանակ կրում է տեղական բարբառների, այլ լեզուների ազդեցությունը, փոփոխվում է նաև իր զարգացման միտումներին համապատասխան՝ իր ներքին օրենքներով: Սրանք էլ, ազդելով գրական լեզվի վրա, հարստացնում են այն արտահայտության նոր միջոցներով՝ հնարավորություն տալով լեզվական միևնույն երևույթը լեզվական տարբեր միջոցներով, բառերով ու բառածևերով, բառակապակցություններով արտահայտելու: Տարբերականությունը, զու-

գածևությունը լեզվի զարգացման կարևորագուն պայմաններից մեկն է: Տարբերակների առաջացմամբ և նրանց միջև եղած հարաբերության փոփոխության միջոցով էլ լեզվական մակարդակներում փոփոխություն է կատարվում: Լեզուն լրիվ նույն իմաստն արտահայտելու համար տարբերակները, զուգածևությունները երկար չի պահում: Դրանք կամ իմաստային, ոճական նոր նրբերանգներ են ձեռք բերում, կամ էլ մի ձևը դառնում է ավելորդ և դուրս մղվում մյուսի կողմից: Այսինքն՝ զուգածևերի համեմատաբար «հանգիստ», կայուն, «հավասարակշռված» վիճակը պայմանական է, հարաբերական, ոչ այնքան հավասարակշռված, և այն որոշ ժամանակ անց խախտվում է՝ ի օգուտ հասարակության կողմից հաստատվածի, լեզվի ներքին տրամաբանությանը, նրա զարգացման միտումներին համապատասխանողի և օրենքի ուժ ստացողի:

Բնութագրելով զուգածևությունների դերը լեզվական-գրական նորմի զարգացման մեջ՝ լեզվաբաններն առանձնացնում են ուժեղ և թույլ գոտիներ, շերտեր, մեծ ու փոքր հաճախականություն ունեցողներ, ավելին՝ այն կարծիքին են, որ նորմի պատմական փոփոխության վերլուծության ժամանակ անհրաժեշտ է մտցնել նաև փոփոխակների (զուգածևերի) փուլի հասկացությունը: Զուգածևերի մի մասը գտնվում է կազմավորման փուլում. նոր տարբերակը հաճախական չէ և կարող է խոսքի նեղ շրջանակներից երկար ժամանակ դուրս չգալ. բացառված չէ նաև այդ նորի աստիճանական մահացումը:

Զուգածևությունների մյուս խումբը կարող է գտնվել մրցակցության փուլում, երբ տարբերակների միջև մրցակցությունը գնալով ուժեղանում է, և նրանք որոշակի մի ժամանակահատվածում գոյատևում են կողք կողքի:

Երրորդ խումբը կարող է գտնվել մարման, հանգման փուլում, այսինքն՝ երբ հնավանդ, կամ նորաստեղծ տարբերակը, աստիճանաբար, գործածության լայն շրջանակներ չընդգրկելով, քիչ գործածվելով, դուրս է մնում գրական լեզվի շրջանակներից:

Լեզվի համակարգի զարգացման որոշակի շրջանում զուգածևությունների կազմավորման և անհետացման պատմական ընթացքի ուսումնասիրությունն օգնում է օբյեկտիվորեն գնահատելու զուգածևությունների գործածության գոյություն ունեցող նորմը,

հետևաբար օգնում է լեզվի նորմավորմանը, լեզվի կանոնակարգմանը:

Պրահայի լեզվաբանական դպրոցի ներկայացուցիչները գտնում են, որ լեզվական նորմի զարգացումը հենց զուգաձևությունների շնորհիվ է իրագործվում: Զուգաձևությունների երկրորդ եզրերն ըստ էության շեղումներ են լեզվական նորմից: Մի առիթով Հ. Սճառյանը գրել է. «Երբ մի բառը կրկնակ ձև ունի, անշուշտ մեկը սխալ է...» (69, էջ 8): Այո, մեկը ճիշտ է ու նախընտրելի, մյուսը՝ սխալ ու շեղում գրական նորմից, բայց ո՞րը՝ շատ հաճախ դժվար է ասել. սխալը գտնելու, ուղղելու միջոցը գտնելն էլ է դժվար:

Ընդհանուր առմամբ զուգաձևությունները բառային կամ քերականական այն ձևերն են, որոնք իմաստով նույնն են, ձևով՝ տարբեր. սրանք կարելի է քերականական համանիշներ համարել լայն առումով: Տարբերակայնությունը հատուկ է բոլոր լեզուներին. տարբերակների գոյությունը բոլոր լեզուներում օրինաչափ է և անխուսափելի, և զարգացման տարբեր փուլերում դրանք տարբեր չափերի են հասնում: Լեզվի անընդհատ զարգացումը ենթադրում է հավասարապես գոյակցող տարբերակների առկայություն, նորմի սահմաններում գոյակցող զուգաձևություններ: Հայոց լեզվի զարգացման ներկա փուլում նրա բոլոր մակարդակներում տարբերակային ձևերը պատկառելի չափերի են հասել: Այդ պատճառով էլ նորմավորման նպատակով դրանց ուսումնասիրությունը մեծ նշանակություն ունի նաև խոսքի մշակույթի համար:

Վերջին տարիներին տարբերակների, զուգահեռ ձևերի հարցը շատ լեզվաբանների ուշադրության առարկան է դարձել, ավելի շատ են սկսել զբաղվել այս խնդրով, բայց դեռևս թե՛ տեսականորեն, թե՛ գործնականորեն մնում է քիչ ուսումնասիրված. լուծված չէ սահմանների հարցը, որոշված չէ նրանց տեղը լեզվի գիտական նկարագրության համակարգում, տրված չէ տարբերակային փաստերի ընդհանուր գնահատականը, դրանք համակարգված չեն, հատկապես հայ լեզվաբանության մեջ դեռևս չկան տարբերակներ ընդգրկող բառարաններ...

Յուրատեսակ դժվարությունների հետ է կապված նաև տարբերակների դասակարգման հարցը. այս առումով ևս լեզվաբանության մեջ ընդհանուր սկզբունք չկա:

Տարբերակների ուսումնասիրության ընդհանուր սկզբունքի կամ ելակետի բացակայության պատճառը նաև այն է, որ տարբեր լեզուներում նրանց բնույթն ու առաջացման ուղիները նույնական չեն, տարբեր են՝ պայմանավորված ամեն մի առանձին լեզվի պատմական զարգացմամբ և քերականական կառուցվածքի յուրահատկություններով: Օրինակ՝ եթե ռուսերենում շատ են ուսումնասիրվում բառի շեշտային-արտասանական տարբերակները, ապա այդ ուսումնասիրությունների արդյունքը հայերենի վզին փաթաթելը նպատակահարմար չէ, քանի որ վերջինս շեշտադրական-արտասանական զուգահեռ ձևեր գրեթե չունի: Ռուսերենը գոյականի հոգնակի թվի կազմության առումով զուգահեռ ձևեր ունի (ավանդական) նաև հնում գործող երկակի թվի քերականական կարգի վերապրուկների առումով, իսկ ժամանակակից հայերենը իսպառ կորցրել է երկակիի հետքերը: Ընդհանրապես հայերենն իր զարգացման և ոչ մի փուլում երկակի թվի որոշակի արտահայտություն չունի. կան միայն նրա երբեմնի գոյությունը հաստատող առանձին հետքեր, վերապրուկներ, սրանք էլ կապված են զույգայնության իմաստի հետ: Միջին գրական հայերենում միայն երկակիատիպ հոգնակիի համար կար հատուկ մասնիկ՝ **-վի** (ձեռվի, ականջվի, ոտվի, աչվի): Ռուսերենում հաճախական են նաև կերպային և սեռային հակադրությամբ առարկայացող տարբերակները, որոնք դարձյալ հայերենը չունի: Գերմաներենում կա ուժեղ և թույլ բայերի տարբերակում, և զուգահեռ ձևեր են առաջանում, երբ ուժեղ բայերը, հատկապես խոսակցական լեզվում, խոնարհվում են թույլ բայերի նման, իսկ հայերենը նման տարբերակում չունի, հետևաբար նման տիպի զուգաձևությունների ուսումնասիրության կարիք չունի:

Գրական հայերենում առավել շատ են գրական և խոսակցական տարբերակները, իսկ ռուսերենում դրանք համեմատաբար փոքր չափերի են հասնում, քանի որ ռուսերենի գրական և խոսակցական լեզուների միջև եղած տարբերությունն այնքան էլ մեծ չէ, իսկ հայերենում սա մեր լեզվի գրականացման, մեր լեզվի նորմավորման ամենակնճռոտ հարցերից մեկն է:

Այնուամենայնիվ, մի բան պարզ է՝ ցանկացած լեզվում զուգահեռ ձևերի կամ զուգաձևությունների գործածությունն անհերքելի է՝ պայմանավորված տերմինի, բառի, զուգաձևի իմաստային տար-

բերակվածությամբ, կամ էլ միասնականացման, նույնացման դեռևս չավարտված ընթացքով:

Իսկ ինչպե՞ս են առաջանում զուգաձևությունները: Նրանց գոյությունը ամենից առաջ պայմանավորված է լեզվի կառուցվածքային հնարավորություններով: Հնչյունական համակարգով է պայմանավորված գրական հայերենում գոյակցող բառերի արտասանական այնպիսի տարբերակների գոյությունը, ինչպիսիք են՝ **զգալ // (ը)զգալ**, **սկսել // (ը)սկսել**, **շտապել // (ը)շտապել**, **աղջիկ // ա(խչ)իկ**, **վարդ // վար(թ)**, **ողջույն // ո(խչ)ույն** և այլն: Բառագիտության-բառակազմության համակարգով է պայմանավորված **ամենազգա // ամենազգաց**, **ատամնաշար // ատամնաշարք**, **աղոթատեղ // աղոթատեղի**, **ողջամիտ // ողջմիտ**, **նույնահունչ // նույնահնչուն**, **արժանահարգ // հարգարժան**, **մթապատ // մթնապատ**, **շարասյուն // սյունաշար**, **չարալեզու // չարլեզու**, **աստղային // աստեղային** և նման տարբերակների գոյությունը:

Հայոց լեզվի զարգացման ներկա փուլում ձևաբանական համակարգով պայմանավորված զուգաձևությունների թիվը մեծ է. զուգաձևություններով հարուստ է հատկապես խոնարհման համակարգը: Ամենից ավելի տարբերակայնությունը ցայտուն է շարահյուսության մեջ, որտեղ երևան են գալիս նույն միտքն արտահայտող բազմապիսի կառուցվածքներ:

Այսօր, երբ գրական լեզվի նորմավորումը լեզվաբանության կարևորագույն խնդիրներից մեկն է դարձել և կարևոր նշանակություն ունի խոսքի մշակույթի համար, երբ առավել ևս ուսումնասիրվում են լեզվի բոլոր մակարդակները՝ նորմավորման նպատակներով, բնականաբար առաջնային է դառնում տարբերակների, զուգահեռ ձևերի քննությունը, ուստի և պատահական չէ, որ լեզվաբանները առաջ են քաշում տարբերակներն առանձնաբար ուսումնասիրության առարկա դարձնելու և առանձին գիտաճյուղ ստեղծելու գաղափարը. նոր գիտաճյուղի համար նույնիսկ առաջարկվել է **օրթոլոգիա** տերմինը (կազմված է «ուղիղ» և «բառ, ուսմունք» բառերից): Վերջինիս խնդիրը պետք է լինի լեզվի բոլոր մակարդակներում երևան եկող տարբերակների արձանագրումը, դրանց դասակարգումը և կառուցվածքային, իմաստային, ոճական քննությունը: Արդի

հայ լեզվաբանության մեջ այս առումով առավել շատ նկարագրական աշխատանքներ են կատարվում. արձանագրվում են եղած փաստերը, որով և հաստատվում է նրանց գոյությունը լեզվի համակարգում: Հայոց լեզվի նկարագրական քերականություններում նկարագրվում են նման զուգաձևությունները, ինչպես օրինակ՝ **ասացի // ասեցի, ձյան // ձյունի, Լոռու // Լոռիի, թողեցի // թողի, մի՛ կեր // մի՛ ուտիր, այրու // այրիի, ամենալավ // լավագույն, տասներորդ // տասերորդ** և այլն, նորմատիվ քերականություններում էլ, հատկապես ծանոթության կարգով, նշվում են ոչ գրական զուգաձևերը, ընտրվում գերադասելի տարբերակները: Սակայն սրանցից յուրաքանչյուրն ի՞նչ արժեք ունի լեզվի զարգացման տվյալ փուլում, տարածական ի՞նչ չափերի է հասել, կիառական ինչպիսի՞ ոլորտներ է ընդգրկում, իմաստային, ոճական ինչպիսի՞ նրբերանգներ ունեն, համընկնու՞մ են լեզվի զարգացման միտումներին, համապատասխանու՞մ են լեզվի տրամաբանությանը, լեզվական նորմի հետ ի՞նչ հարաբերության մեջ են գտնվում, նրա շրջանակներու՞մ են, թե՞ ոչ. նման տիպի հարցերը առանձին քննության առարկա չեն դարձել: Ցավոք սրտի, դեռևս չկան հատուկ բառարաններ, որոնցում ներկայացված լինեն հայոց լեզվի դժվարությունները, զուգաձևությունները, շեղումները, չկան խոսակցական բառարաններ: Որոշ չափով զուգաձևությունների հարցը քննության առարկա է դարձել և դառնում է բացատրական, ուղղագրական բառարաններում՝ ավելի շատ ուղղագրության, բառակազմության հարցերի հետ կապված: Ճիշտ գրելու և խոսելու համար, չսխալվելու համար անհրաժեշտ է ոչ միայն տվյալ լեզվի նորմատիվ օրինաչափություններն իմանալ, այլև տարբերակների տիպը, նրանց գործածության ոլորտները, նրանցից յուաքանչյուրի տեղին ու ճիշտ օգտագործման նրբությունները:

Զուգաձևություններում զուգահեռ ձևերը, տարբերակները լինում են՝

ա/ Համազոր, հավասարարժեք. այս դեպքում դժվար է դրանցից մեկին նախապատվություն տալ. դրանք ազատորեն փոխարինում են մեկը մյուսին (**ամենամեծ // մեծագույն, ինձնից // ինձանից**): Նման բոլոր զույգերն էլ ճիշտ կազմություններ են, միանգամայն համապատասխանում են մեր լեզվի նորմի պահանջներին, և

ամեն ոք կարող է կամընտրաբար գործածել դրանցից մեկը կամ մյուսը, կամ մերթ մեկը, մերթ մյուսը:

բ/ Ոչ համազոր, բայց նորմատիվ տարբերակներ, որոնցից մեկը ճանաչվում է որպես հիմնական, գերադասելի, իսկ մյուսը՝ ոչ հիմնական, երկրորդական, ոչ ցանկալի, բայց և որը գտնվում է նորմի սահմաններում. ամենից առաջ գործածելի են խոսակցական լեզվում, կա՛մ նշվում են որպես թույլատրելի, բայց հնացած, կա՛մ նոր են սաղմնավորվում. գործածվում են կողք կողքի՝ հնի ու նորի համատեղության կարգով, լեզվակիրների հավաքական ճաշակով պայմանավորված: Սրանց կողքին բառարաններում նշվում է՝ «հին է», «հնացած է» կամ՝ «նորաբանություն է», «նոր է»:

գ/ Անհավասար տարբերակներ, որոնցից մեկը ոչ նորմատիվ է, գրական լեզվի նորմի շրջանակներից դուրս, արգելվում է և բառարաններում էլ, եթե տեղ է գտնում, ապա նրա կողքին սովորաբար նշվում է՝ 1. «չի հանձնարարվում», 2. «սխալ է». 3. «թույլատրելի չէ», 4. լեզվական օրենքի կոպիտ «խախտում է»: Բնականաբար իրենց խոսքի օրինակելիությանը հետևող և խոսքի ճշտությունը գերադասող անձինք չպետք է օգտագործեն այն տարբերակները, որոնք ունեն հիշատակված արգելական նշումները:

Զուգաձևությունների դասակարգման ելակետ կարող է դառնալ լեզվական տարբեր մակարդակներում նրանց առաջանալն ու գոյություն ունենալը: Ըստ այդմ լինում են՝

Ա. հնչյունաբանական զուգաձևություններ, որի մեջ մտնում են՝

ա/ ուղղագրական-ուղղախոսական (արտասանական)

բ/ շեշտադրական

գ/ հնչյունափոխական

դ/ վանկային տարբերակները:

Բ. Բառական զուգաձևություններ, որոնց մեջ մտնում են՝

ա/ բառապաշարային

բ/ բառակազմական

գ/ հոդակապային տեսակները:

Գ. Քերականական զուգաձևություններ, որոնց մեջ մտնում են՝

ա/ ձևաբանական

բ/ շարահյուսական

գ/ շարադասական

դ/ կետադրական տարբերակները:

Դ. Ոճական զուգաձևություններ:

Բնականաբար, ժամանակակից հայերենի քերականական համակարգում ևս զուգաձևություններ, տարբերակներ գոյություն ունեն: Այստեղ ևս նրանց գոյությունը կենդանի խոսքի արգասիքն է, լեզվի անընդհատ փոփոխության արգասիքը: Սրանց ուսումնասիրությունն ավելի է կարևորվում, երբ դրվում են լեզվական նորմի սահմանման և վերջիններիս գործառական-ոճական նրբերանգային տարբերությունների ուսումնասիրության հարցերը: Չևաբանական զուգաձևությունների գոյությունը որոշվում է ձևական, իմաստային և պատմական գործոններով (լայն առումով պատմական ասելով հասկանում ենք ավանդաբար հաստատված և համաբանության ու միասնականացման միտումով պայմանավորված գործածությունը):

Քերականական այն փոփոխությունը, երբ նոր ձևի համապատասխան հին ձևը չկա լեզվի մեջ, նորը հեշտությամբ ընդունվում է և տարածվում. այստեղ արդեն զուգահեռ ձևի, տարբերակի գոյության մասին խոսք լինել չի կարող: Զուգաձևություն առաջանում է քերականական այնպիսի փոփոխության պատճառով, երբ նոր ձևի համապատասխան հին ձևը կա, որը և խանգարում է, որ այն միանգամից ընդունվի ու տարածվի: Քերականական նման փոփոխությունը ենթադրում է զուգահեռ ձևերի ժամանակավոր համագոյակցություն: Սկզբնապես հինն ու նորը սովորաբար խառը գործածվում են նույնիսկ միևնույն անհատի կողմից, կամ էլ թե ոմանք նախապատվությունը տալիս են հին ձևին, ոմանք՝ նոր ձևին: Որոշ ժամանակ անց զուգահեռ ձևերից մեկը թուլացնում է համակարգը, առաջ բերում ներքին հակասություն, և անհրաժեշտ է, որ այդ հակասությունը վերանա հօգուտ միասնական համակարգի: Սա հնի ու նորի պայքարն է լեզվի մեջ, մահացողի և ծնվողի ժամանակավոր համագոյակցումն է կողք կողքի: Քերականության մեջ այս պրոցեսը չափազանց դանդաղ է ընթանում. երբեմն տարիներ, տասնամյակներ, անգամ դարեր են պետք զուգաձևությունների՝ միաձևության վերածվելու համար: Տասնամյակներ տևեցին, մինչև որ **ունիմ // ունեմ** զուգաձևության մեջ ձևերի պայքարն ավարտվի **ունեմ**-ի հաղթանակով, թվում է՝ քիչ ժամանակ է մնացել **գիտե // գիտի, արժե // արժի** զուգաձևությունների միասնականացման համար՝ ի օգուտ **գիտի,**

արժի ձևերի, իսկ թե որքան ժամանակ է պետք **մի՛ գրիր // մի՛ գրի** զուգաձևության միօրինակացման համար, դժվար է ասել, սակայն մի բան պարզ է, որ լեզվական նորմով սահմանվածը **ր**-ով ձևերն են, բայց և անժխտելի է, որ լեզվի ներքին զարգացմամբ պայմանավորված **ր**-ն միտում ունի ընկնելու, ինչպես որ այն արդեն ընկել է գրական լեզվի խոսակցական տարբերակում:

Չպետք է կարծել, որ քերականական զուգաձևություններում զույգ ձևերից, տարբերակներից նորը միշտ պետք է իշխի: Լեզվի գործընթացը, «կյանքը» ցույց է տալիս, որ սովորաբար հինն է իշխում, իսկ նորը, միառժամանակ գործածվելով, մեռնում է օրորոցում՝ տեղի տալով հինին: Լեզվակիր հանրության համար սա գրեթե աննկատ է մնում. նա ավելի շատ նոր կազմության, նոր տարբերակի հաղթանակն է տեսնում, քան հինինը: Սրա պատճառը, կարծում ենք, այն է, որ նորը փոփոխություն է առաջացնում լեզվի համակարգում, նոր կանոններ ստեղծում, լեզվական նորմի փոփոխության պատճառ դառնում: Զուգաձևության, տարբերակայնության առաջացման, զարգացման, բարձրակետին հասնելու՝ մահացման կամ հաղթանակի ճանապարհը կարելի է ներկայացնել աբեղյանական դատողությամբ. «Նոր կազմության ձևը մի անհատից սկսվելով՝ սկզբում ընդունվում է, հարկավ, մի շատ նեղ շրջանում, բայց հետզհետե շատերը լսելով այդ՝ յուրացնում են, նամանավանդ երբ սրանք էլ գտնվում են նույն լեզվական վիճակի մեջ: Նոր սերունդը, որի համար հին ու նոր չկա, - քանի որ նա ամեն ինչ նոր է սովորում,- միակերպ ընդունում է թե՛ հինը, թե՛ նորը և երկուսն էլ անխտիր գործածում: Երբ նոր սերնդից բազմաթիվ անհատների մեջ լեզվի զարգացումն այն ուղղությամբ է ընթանում, որ ավելի նոր ձևն են գործածում, այն ժամանակ հին ձևը հետզհետե մնում է միայն հին սերնդի մեջ, որի հետ և վերջապես մեռնում է՝ բոլորովին մոռացության տրվելով: Այսպիսով նոր կազմությունը, որ սկսվելով մի անհատից՝ սկզբում անսովոր ու սխալ է համարվում, դառնում է կիրառության սովորական և «ուղիղ» ձև, որով և լեզուն փոխվում է: Բազմաթիվ այսպիսի փոփոխությունների հետևանքը լինում է արդեն լեզվի ընդհանուր փոփոխությունը, որը, սակայն, տեղի է ունենում դարերի ընթացքում շատ դանդաղ և անզգալի»,- գրում է Մ. Աբեղյանը (1, էջ 45-46):

Զուգաձևությունների հարցի լուծումը փաստորեն լեզվական նորմի կարգավորման պայմաններից մեկն է: Իսկ ինչպե՞ս լուծել այդ հարցը: Լեզվաբանական գրականության մեջ զուգաձևությունների ընդունելի կամ կանոնական համարվելու տարբեր պայմաններ են առաջարկվել: Մեծ մասամբ բավարար հիմք է ծառայում դասական գրողների երկերում արձանագրված լինելու փաստը: Սակայն սա ոչ միշտ է արդարացնում իրեն (այս մասին արդեն խոսվել է): Առհասարակ լեզվական երկձևությունները քննելիս միշտ պետք է ելնել լեզվի զարգացման տվյալ շրջանի ընձեռած փաստերից: Թեպետև ամբողջ հայերենի հարաբերությամբ ժամանակակից գրական հայերենը մի առանձին էտապ է(փուլ, շրջան, վիճակ), բայց վերջինս իր հերթին ներկայանում է զարգացման տարբեր փուլերով: Այս տեսակետից Զաքարիա Ագուլեցու աշխարհաբարը նույնը չէ, ինչ Աբովյանի և Նալբանդյանի աշխարհաբարը. Րաֆֆու և Մուրացանի լեզուն նկատելիորեն անցյալ է արդի լեզվավիճակի համեմատությամբ. Թումանյանի և Իսահակյանի լեզուն ուրիշ է. Պ. Սևակի հայերենը բոլորովին այլ է: Մնում է եզրակացնել, որ լեզվական նորմը անգամ նույն շրջանի լեզվի տարբեր ժամանակահատվածների համար նույնը լինել չի կարող, և զուգաձևություններ չեն կարող դառնալ այն ժամանակվա և այսօրվա քերականական նույն իմաստների արտահայտման տարբեր ձևերը: Րաֆֆու մասնակիորեն գործածած **մարդեր** հոգնակի ձևը չենք կարող վերցնել և դնել այսօրվա **մարդիկ** ձևի հետ և ասել, թե այսօր նաև այսպիսի զուգաձևություն կա: 20-րդ դարի երկրորդ կեսին գրականության մեջ գործածվում էին **մարդեր**, **մարդիկներ**, **մարդիկ** ձևերը, որոնք այն ժամանակվա լեզվական վիճակի համար անգամ բազմաձևություն էին դիտվում:

Զուգաձևությունների վերացման հիմնարար պայման չէ նաև գնահատողականության սկզբունքը: Նույնը կարելի է ասել տարածվածության հատկանիշի, հարցման մեթոդի մասին: Կարելի է վիճակագրական քննություն կազմակերպել, հարցում կատարել, այս կամ այն լեզվագետի գնահատականը լսել, բայց դրանք որոշիչ չեն կարող լինել լեզվագործածության ասպարեզում միօրինակություն հաստատելու համար: Ընդհանրապես զուգաձևությունների առաջացման, բնականաբար նաև վերացման պատճառները պետք է

փնտրել լեզվի ինքնազարգացման մեջ, կենդանի խոսքի գործընթացի մեջ:

Զուգահեռ ձևերի ճակատագրի, նրանց գործածության ոլորտները ճշգրտելու, ճիշտը, թույլատրելին, գերադասելին ընտրելու հարցում լեզվին պետք է օգնի լեզվագիտությունը, և խոսողներին պետք է տրվի գիտականորեն հիմնավորված կողմնորոշում: Օգնություն, որ կդառնա ոչ միայն խոսողին օգնություն, այլ նաև մեր գրական լեզվին: Անհրաժեշտ է «օգտվել» հայերենից այնպես, որ օգնես հայերենին: Այդ օգնությունը պետք է բխի լեզվի կարիքներից ու նրա զարգացման ներքին տրամաբանությունից, հակառակ դեպքում ամեն մի միջամտություն ժամանակի ընթացքում լռությամբ կմերժվի նրա կողմից: Լեզուն խիստ է. լեզուն մերժելու հատկություն ունի...

Նորման նաև օրինաչափությունների և կանոնների համակարգ է, որը կարգավորում է տարբերակների խնդիրը, որոշում հանձնարարելի, ճիշտ ձևը՝ գրական լեզուն կրողներից պահանջելով հմտորեն հաշվի առնել նրանցից յուրաքանչյուրի ոճական առանձնահատկությունները: Քերականական նորմի իմացությունն անհրաժեշտ պայման է լեզուն տիրապետելու հարցում, ձևաբանական նորմի իմացությունը՝ առավել ևս:

Այսչափով էլ պարտադիր է քերականական զուգաձևությունների, նաև ձևաբանական զուգաձևությունների քննության հարցը: Քերականության ձևաբանություն մակարդակում շատ են զուգաձևությունները: Սա նշանակում է, որ նորմավորումը, որքան էլ միասնականության է միտում, երբեմն-երբեմն մոտենում է այն սահմանաչափին, որից հետո այդ սահմանները դառնում են խիստ հարաբերական ու պայմանական, և օրինաչափություններն այլևս չեն գործում: Գրական նորմով սահմանվածի և անկանոնի տարբերակումը անհրաժեշտ է դառնում, զուգաձևության եզրերից մեկին նախապատվություն տալու խնդիր է ծագում: Ձևաբանական կանոնները ավելի խիստ են, քան շարահյուսական. վերջիններս ընտրության լայն հնարավորություն են տալիս. նորմի շրջանակներում բառի, բառածևի, բառակապակցության, նախադասության ձևափոխության բազմաթիվ հնարավորություններ կան, ուստի և շարահյուսական զուգաձևությունները քանակապես ավելի շատ են, քան ձևաբանականները: Ձևաբանական նորմը իմանալու համար առավել ևս

պետք է իմանալ գրական լեզուն, միաժամանակ ձևաբանական նորմի իմացությունն օգնում է ձևաբանական զուգաձևությունների ընտրության հարցում, նպաստում մտքի ճիշտ ձևավորմանը, խոսքի արտահայտչականությանը, վկայում խոսողի կամ գրողի լեզվական մշակույթի, լեզվական դաստիարակության մասին: Ձևաբանական զուգաձևություններում տարբերակներից մեկնումեկի ընտրությունը անհրաժեշտ է կատարել խիստ զգուշությամբ. «Զուգաձևության ըմբռնման իմաստն այն է, որ պետք է մտածել ոչ միայն «սանձերը ձգելու», այլև չափից ավելի չձգելու մասին»,- գրում է Հ. Զաքարյանը (50, էջ 4):

Այս ամենով հանդերձ՝ վստահորեն կարելի է ասել, որ ձևաբանական զուգաձևություններում եզրերից մեկնումեկի ընտրության հարցում պետք է առաջնորդվել հետևյալ սկզբունքներով և ընտրել այն տարբերակները, որոնք՝

ա/ բացարձակ գերակշռություն ունեն գրական հայերենում.

բ/ առաջադեմ են.

գ/ նպաստում են քերականական ձևերի միօրինակությանն ու պարզեցմանը.

դ/ բնորոշ են հայերենի քերականական կառուցվածքին.

ե/ հարազատ են ժողովրդի մտածողությանը.

զ/ նպաստում են լեզվի զարգացմանը.

Լեզվաբաններից շատերն այն կարծիքին են, որ ձևաբանական զուգաձևությունները խոսքն ավելորդ կերպով ծանրաբեռնում են: Նրանցից էդ. Աղայանը գրում է. «Եթե դա առանձին բառերի է վերաբերում, դեռևս առանձին չարիք չէ. օրինակ՝ ունենք **ասել** բայի **ասացի, ասեցի, ասի** ձևերը, և թեև դրանցից այժմ գերակշռություն է ստանում **ասեցի**-ն, բայց մյուսներն էլ դեռևս գործածվում են և առանձնապես չեն խանգարում հաղորդակցմանը: Սակայն երբ այդ զուգաձևերը որոշ համակարգ են կազմում, այս դեպքում արդեն առաջ է գալիս հաղորդակցման կանոնավոր ընթացքի խանգարում. ենթադրենք, թե մեկը գործածում է **համարեցի, ծաղկեց, փրկվեց** ևն ձևերը, իսկ խոսակցից լսում է դրանց համապատասխան **հարմարվեցա, ծաղկեցավ, փրկվեցավ** ևն ձևերը. այս դեպքում նա ստիպված է լեզվական հակազդեցությամբ շարունակ այդ ձևերը վերածել իր իմացած առաջին ձևերին, այսինքն՝ կատարել մի բոլորո-

վին ավելորդ աշխատանք: Այս տեսակետից որոշ չափով կարելի է արդարացնել Ա. Մարտինեի «Խնայողության սկզբունքը»՝ որպես ուղեցույց գործոն, հիմնականը համարելով լեզվի համակարգային բնույթը: **Լեզուն իր զարգացման յուրաքանչյուր փուլում ներկայացնում է մի որոշակի համակարգ, կառուցվածքով իրար բացասող կամ հակասող զուգաձևերը առաջ են բերում ներքին հակասություն համակարգի մեջ, ուստի և անհրաժեշտորեն աստիճանաբար վերանում է հօգուտ միասնական համակարգի»** (14, էջ 31):

Չևաբանական զուգաձևությունների գոյությունը ևս կենդանի խոսքի արգասիքն է, լեզվի զարգացման դրսևորումը: Դրանց առաջացումը պայմանավորված է մի շարք հանգամանքներով՝ լեզվի կառուցվածքային հնարավորություններով, լեզվի գործառական երկու հիմնական տարբերակների՝ գրավոր գրական լեզվի և խոսակցական լեզվի ազդեցությամբ, բարբառների ազդեցությամբ, տեղային, տարիքային, մասնագիտական գործոններով. այստեղ է, որ կարևորվում է է. Աղայանի «լեզվական համակերպման» գործոնը:

Ինչ վերաբերում է պատմական տեղաշարժերին, հեղաշրջումներին, գիտատեխնիկական նվաճումներին, ապա եթե դրանք բառակազմական և շարահյուսական զուգաձևությունների առաջացման գործում առաջնային են, ձևաբանական զուգաձևություններ ի առաջացման հարցում էական դեր չեն կատարում: Այս առումով, հիմք դարձնելով տարբերակային բառակազմի՝ աղայանական խմբաբաժանումը, ձևաբանական զուգաձևությունները կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

Ա. սոցիալական

Բ. գործառական

Գ. պատմական

Դ. ներլեզվական:

Սոցիալական տարբերակներն իրենց հերթին կարելի է բաժանել հետևյալ ենթատեսակների՝

ա/ գրական-խոսակցական

բ/ գրական-ժողովրդախոսակցական

գ/ գրական-բարբառային

դ/ գրական-հասակային (տարիքային)

ե/ գրական-ժարգոնային (ծածկալեզվային)

զ/ գրական-հասարակաբանական

է/ գրական արևելյան - գրական արևմտյան:

Գործառական տարբերակներ են դառնում գիտական, տեխնիկական, քաղաքական, պաշտոնական տերմինները, ստեղծագործական լեզվի բառերը, բառաձևերը (գեղարվեստական ոճ). լինում են՝

գրական-գիտական-պաշտոնական

գրական-գեղարվեստական:

Պատմական տարբերակներ են գրաբարյան, միջինհայերենյան բառերը, ձևակները, որոնք օգտագործվում են ըստ անհրաժեշտության (գիտական գրականության մեջ), ստեղծագործական պահանջներով (գեղարվեստական գրականության մեջ), հնաբանություններն ու նորաբանությունները: Ըստ այսմ՝ պատմական տարբերակները լինում են՝

գրական-ավանդական

գրական-հին, հնացած

գրական-նոր:

Ավանդական տարբերակները լեզվական նորմի սահմաններում կարող են լինել, իսկ հին ու հնացածը եթե հնում համարվել են նորմատիվ, ապա ժամանակակից հայերենում նորմից դուրս են: Նոր տարբերակները առանձնակի գործածություն ունեն և լեզվական նորմով արձանագրված չեն:

Ձևաբանական զուգաձևությունների հիմնական մասի գոյությունը պայմանավորված է ներլեզվական՝ ձևաբանական համակարգի զարգացմամբ: Ներլեզվական տարբերակները՝ ձևաբանական, բառակազմական, հոդակապային, հնչյունափոխական, առաջ են եկել մեր լեզվի գործող օրինաչափությունների համաձայն: Այս տեսակներից բացի ներլեզվական տարբերակներ կարող են առաջանալ նաև հիմքափոխության, կեղծ արմատների հորինման, սխալագրությունների և սխալակազմությունների պատճառով:

Ներլեզվական-ձևաբանական տարբերակները կարող են չհակառակել գրական նորմին, դիտվել ձևաբանական համակարգի օրինաչափական զարգացման արդյունք: Որևէ տարբերակի ընտրությունը և նրա հաստատումը լեզվում պահանջում է որոշակի

ժամանակահատված և լեզվական խոր իմացություն: Ահա թե ինչու մի տարբերակի ընտրությունը և մյուսի մերժումը պետք է շատ զգուշորեն կատարվի հաշվի առնելով լեզվի փոփոխության աստիճանականությունը և նորմի պատմական լինելը:

Տարբերակների անհամազոր լինելու դեպքում գլխավոր է համարվում այն տարբերակը, որը կարելի է օգտագործել բոլոր ոճերում, երկրորդական՝ ոչ գլխավոր համարվում է այն տարբերակը, որի գործածությունը սահմանափակվում է որևէ ոճի շրջանակներում: Այսինքն՝ տարբերակները լինում են նաև գլխավոր և երկրորդական:

Չևաբանական համակարգում առաջացող որևէ զուգահեռ ձև սկզբում դիտվում է նորույթ և ոչ հանձնարարելի: Ժամանակի ընթացքում, եթե այն արմատավորվում է և տարածվում, ձեռք է բերում գործածական հավասար իրավունք արդեն գոյություն ունեցողի կողքին: Ինչ-որ ժամանակ անց դրանք, չունենալով լեզվաարտահայտչական կամ իմաստային որևէ տարբերություն, դառնում են համազոր և փոխարինում մեկը մյուսին: Այնուհետև զուգաձևությունների հավասարակշռությունը խախտվում է, և հաճախանում է նոր տարբերակի գործածությունը: Աստիճանաբար հինը տեղի է տալիս, իսկ նորը, լեզվի ինքնազարգացման միտումին համապատասխան, գրավում է հնի տեղը: Օրինակ մեր լեզվի զարգացման վաղ շրջանում գրական էին համարվում «**զարմացուցի**», «**հանգստացուցի**» և նման պատճառական ձևերը: Վերջին շրջանում նոր ստեղծված **զարմացրի**, **հանգստացրի** և նման ձևերը դուրս մղեցին հին ձևերը, և պատճառական բայերի կազմության նոր օրինաչափություն սահմանվեց: Այսօր թե՛ գրական լեզվում, թե՛ արևելյան բարբառների մեջ մոռացության են տրվել «**ուցան**» ածանցով կազմված պատճառական ձևերը: Բայց լեզուն նման է կենդանի օրգանիզմի. նույնը չի մնում. և ներկա օրերում խոսակցական լեզվում ձևավորվում է մի նոր տարբերակ ևս՝ կրկնակի պատճառական ածանցի կազմությամբ՝ **զարմացրեցի**, **հանգստացրեցի** և այլն, որոնք գործածական լայն տարածում ունեն: Եթե լեզվի զարգացման ներքին միտումը **զարմացուցի // զարմացրի** զուգաձևությունը հասցրեց երկրորդի հաղթանակին, ապա դժվար է ասել, թե **զարմացրի // զարմացրեցի** զուգաձևության լուծումը կավարտվի նորի հաղթանակով (կրկնա-

բանություն է, ավելցուկայնություն), համենայն դեպս մի բան պարզ է՝ լեզվի զարգացման միտումը տանում է դեպի ավելի կարճ ձևերի հաղթանակը, քանի որ զուգահեռ ձևերի գոյակցությունը հավիտենական չէ. այս է վկայում լեզվի զարգացման ընթացքը: Հասկանալի է, որ զուգահեռ ձևերը կամ պետք է իմաստային տարբերակվածության պատճառով առանձնանան և լեզվական տարբեր իմաստների արտահայտիչ դառնան, կամ էլ մեկը պիտի հաղթի, մյուսը դուրս գա, և լեզվական նորմը արձանագրի այդ փոփոխությունը:

Եթե հին, սկզբնական նորմով սահմանված ձևաբանական տարբերակը նշանակենք **Ա** տառով, իսկ մրցակցող տարբերակը՝ **Բ**-ով, ապա զուգաձևությունների անցած ճանապարհը, դրա հետ և լեզվական նորմի փոփոխությունը կարելի է ներկայացնել 4 փուլով՝

1-ին փուլ՝ նորմով սահմանված է **Ա**-ն, իսկ **Բ**-ն սխալ է, լեզվական նորմի շրջանակներից դուրս.

2-րդ փուլ՝ **Ա**-ն և **Բ**-ն համազոր, ազատ տարբերակներ են, երկուսն էլ գործում են լեզվական նորմի սահմաններում. գերադասելի է **Ա** տարբերակը.

3-րդ փուլ՝ **Ա**-ն և **Բ**-ն համազոր տարբերակներ են, լեզվական նորմի շրջանակներում են. գերադասելի է **Բ** տարբերակը.

4-րդ փուլ՝ նորմով սահմանվածը **Բ** տարբերակն է. **Ա**-ն նորմի շրջանակներից դուրս է. հնացած է և ոչ հանձնարարելի:

Այսինքն՝ առաջին փուլում գրական ձևը **Ա**-ն է, որը սահմանված է նորմով և միակ հանձնարարելին է: Նրա նոր ձևավորվող **Բ** տարբերակը լեզվի նորմի սահմաններից դուրս է և ոչ գրական՝ սխալ: Երկրորդ փուլում **Բ**-ն արդեն մտել է գրական լեզվի մեջ, և թեև նորմով սահմանվածը շարունակում է մնալ **Ա**-ն, բայց **Բ**-ն համարվում է թույլատրելի տարբերակ, ըստ որում կարող է լինել **Ա**-ին համազոր կամ էլ խոսակցական տարբերակ: Երրորդ փուլում **Ա**-ն՝ հին նորմով սահմանվածը, վերջնականապես իր տեղը զիջում է նոր ձևավորվածին՝ **Բ**-ին, անցնում հնացածների շարքը և դեռևս համարվում թույլատրելի: Վերջին փուլում **Բ**-ն տարածվածության շնորհիվ դառնում է միակ կանոնավորը, օրինաչափականը, իսկ **Ա**-ն որակվում է որպես հնացած, լեզվական նորմի սահմաններից դուրս, ոչ թույլատրելի:

Բ տարբերակի վերջնական հաղթանակը հանգեցնում է ոչ միայն ձևաբանական նորմի փոփոխության, այլև ազդում է արտա-

սանական, ուղղագրական, ուղղախոսական, բառակազմական, շարահյուսական, ոճական նորմերի վրա:

Քանի որ ձևաբանական զուգաձևություններում տարբերակների հարաբերակցությունը չի կարող նույնը լինել, ուստի և այդ հարաբերակցությունը հաշվի առնելով՝ կարելի է ձևաբանական զուգաձևությունները բաժանել

1. կանոնական (ձևաբանական նորմի շրջանակներում համագոյակցող տարբերակներ)
2. ոչ կանոնական:

Կանոնական զուգաձևություններում էլ տարբերակները կարող են լինել համազոր և ոչ համազոր:

Համազոր են այն տարբերակները, որոնք կարող են ազատորեն փոխարինվել մեկը մյուսով, կիրառվել գրեթե բոլոր ոճերում, խոսքի բոլոր ոլորտներում, սովորաբար իմաստային, ոճական, լեզվաարտահայտչական զգալի տարբերություններ չեն ունենում (օրինակ՝ **ամռան // ամառվա, ոսկուց // ոսկիից, ինձանից // ինձնից, լավագույն // ամենալավ**...): Սրանք մրցող տարբերակներ են, և լեզվի զարգացումը պետք է տանի-հասցնի սրանցից մեկի հաղթանակին, կամ էլ զուգահեռ ձևերից մեկը կարող է վերաիմաստավորվել, իմաստային, ոճական հատուկ արժեք ձեռք բերել և պահպանվել մյուսի կողքին՝ որպես ինքնուրույն միավոր (**համարել– համրել, օրից — օրվանից**):

Խոսքի մշակույթի հարցերի մասին խոսելիս Թ. Ղարագյուլյանը, անդրադառնալով տարբերակների հարցին, ընդհանրապես համազոր կամ ազատ տարբերակները բաժանում է հետևյալ խմբերի՝

1/ հնչյունական-արտասանական (ներառյալ նաև շեշտադրությունը (**մի(ջ)ին – մի(չ)ին, որքա՛ն-ո՛րքան**).

2/ բառային հնչյունական (**մշակութային – մշակույթային, մգացնել-մուգացնել, սերմնացան –սերմացան**).

3/ բառային-բառակազմական (**ողջամիտ-ողջմիտ, ջրաղացքար-ջաղացքար, երգաշար-երգաշարք, թվել-թվարկել, ոսկյա-ոսկե, նորմ-նորմա**).

4/ բառային-ձևաբանական (**հովտային-հովտի, մեղմ-մեղմորեն**).

5/ ձևաբանական-հնչյունական (**կամրջի-կամուրջի, ծաղկի-ծաղիկի, որոշչի-որոշիչի, բվի-բուի, չվի –չուի, գինով-գինիով, համաձայնել - համաձայնվել**)

6/ ձևաբանական (**ամառվանից-ամռանից, ընկերոջից-ընկերից, ինձանից-ինձնից**)

7/ շարահյուսական-ձևաբանական (**մայրս-իմ մայրը, տետրդ - քո տետրը**..) (տես՝ 116, էջ 45-46):

Զուգաձևությունները ոչ համազոր են, երբ ունեն իմաստային, ոճական, կիրառական և տարածական տարբերություններ: Ժամանակակից հայերենի ձևաբանական մակարդակում սրանք համեմատաբար շատ են և հատկապես առավել մեծ պահանջ ունեն ուսումնասիրվելու՝ հատկապես նորմավորման հարցերը կարգավորելու առումով: Կանոնական, բայց ոչ համազոր տարբերակներ են, օրինակ՝ **գյուղացիներ // գյուղացիք**, **տեգրոջ // տեգոր**: Սրանցից հանձնարարելի կամ նախապատվելի է համարվում միայն մեկը, իսկ մյուսը՝ ոչ գրական և թույլատրելի միայն համապատասխան ոճերում:

Ոչ կանոնական են ձևաբանական այն զուգաձևությունները, որոնց գոյությունը պայմանավորված չէ լեզվական նորմի թելադրանքով, որոնք սխալ են հայերենի օրինաչափությունների տեսակետից: Սրանք էլ իրենց հերթին կարող են սխալ լինել ժամանակակից հայերենի օրինաչափությունների տեսակետից, գրական լեզվի նորմի սահմաններից դուրս լինել, բայց գործածվեն բարբառներում և ժողովրդախոսակցական լեզվում: **Ասում է // ասում ա**, **խոսեց // խոսաց, պարտեզում // պարտեզումը**... ոչ կանոնական տարբերակներ են: Բացառելով որոշակիորեն սխալ կամ բարբառային լեզվական երևույթները (օրինակ՝ **կաղնել, կայնել, քթալ, ըստից, ընդից, չեմ տալի, հավասարացնել, չեմ կարա** և այլն)՝ ոչ կանոնական թույլատրելի տարբերակների մեջ կարելի է դասել և որոշ կարգի հնացած քերականական ձևեր: Այսպես օրինակ՝ **այք, ք** հոգնակերտներով հոգնակի թվի կազմությունը ժամանակակից հայերենի համար կանոնական չէ, բայց նմանատիպ կազմությունները թույլատրելի են համապատասխան ոճում. հնացած են, բայց հատկապես գեղարվեստական գրականության մեջ թույլատրելի են ոճավորման, համապատասխան կոլորիտ ստեղծելու նպատակով:

Ոչ կանոնական տարբերակների մեջ պետք է դասել նաև խոսակցական լեզվում հանդես եկող այնպիսի իրողություններ, ինչպիսիք են **հա**, **չէ**, **էս**, **էդ**, **խոսի՛**, **գրի՛**, **պիտի չգաս**, **մի՛ք հեռանա** և այլն: Սրանք եթե պաշտոնական ոճում տեղ չունեն, ապա խոսակցական ոճում գործածական են:

Մյուս կողմից՝ ոչ կանոնական, նաև ոչ թույլատրելի են այն զուգաձևությունները, որոնք դուրս են ոչ միայն գրական լեզվի նորմի սահմաններից, այլև բարբառների և ժողովրդախոսակցական նորմերի սահմաններից: Օրինակ՝ **հանդիպել // հանդիպվել, տխրել // տխրվել, քայլել // քայլվել, ցրվել // ցվրվել** զուգաձևություններում **հանդիպվել, քայլվել, տխրվել, ցվրվել** բայերը սխալ են ոչ միայն լեզվական նորմի առումով, այլև հակասում են հայերենի կառուցվածքին, քանի որ հայերենում ընդհանրապես չեզոք սեռի բայերը կրավորական ձևեր չեն ունենում:

Ոչ կանոնական տարբերակների գոյությունը որոշակի սկզբունքներով բացատրել հնարավոր չէ. հնարավոր չէ նաև դրանք որոշակի շրջանակների մեջ դնել:

Կանոնական և ոչ կանոնական տարբերակների միջև խիստ անջրպետ չկա. դրանք գտնվում են մշտական փոխներգործության մեջ: Ոչ կանոնական տարբերակը ժամանակի ընթացքում կարող է դառնալ կանոնական, և հակառակը՝ կանոնականը դառնալ ոչ կանոնական:

Ընդհանրապես ձևաբանական զուգաձևությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք կարելի է դասակարգել հետևյալ ձևով՝

ա. ձևաբանական-հնչյունական (ասեց // ասաց, նարնջի // նարինջի).

բ/ զուտ ձևաբանական (գինիի // գինու).

գ. ձևաբանական-շարահյուսական (իմ գիրքը // գիրքս, մեր գրքերը // գրք(ե)րս.)

դ/ ձևաբանական-ոճական (գյուղացիներ // գյուղացիք).

ե/ ձևաբանական-կետադրական (ինչպիսի՞ // ինչպիսի՜, որքա՛ն // ո՛րքան):

Ձևաբանական զուգաձևությունների առկայությունը արդյունք է ձևաբանական համակարգի պատմական զարգացման: Լեզվի

զարգացումը, մասնավորապես ձևաբանական համակարգի զարգացումը, անընդհատաբար վերացնում է որոշ քանակի զուգաձևություններ, ընտրություն կատարում, հասնում նորմի միասնականացման, բայց նորից ծնում է նորանոր զուգաձևություններ և նորից իր ճանապարհին դրանց լուծման եղանակներ փնտրում: Քանի որ հայոց լեզվի զարգացման ներկա փուլում ձևաբանական մակարդակում տարբերակային ձևերը պատկառելի չափերի են հասել, այդ պատճառով էլ ձևաբանության համակարգի նորմավորման նպատակներով դրանց հատուկ ուսումնասիրությունը խոսքի մշակույթի համար առաջնահերթ նշանակություն ունի:

Քերականական-ձևաբանական զուգաձևությունների, տարբերակային ձևերի ուսումնասիրությունը կարելի է կատարել առանձնաբար՝ ըստ խոսքի մասերի: Ըստ այդմ էլ կարելի է առանձնացնել՝

ա. գոյականական զուգաձևություններ (**մատեր // մատներ, Արածանիի // Արածանու, Մասսի // Մասիսի**...).

բ. ածականական զուգաձևություններ (**ամենալավ // լավագույն**..).

գ. թվականական զուգաձևություններ (**տասը // տասն // տաս, երկրորդ // 2-րդ // Բ // II**...).

դ. դերանվանական զուգաձևություններ (**քեզնից // քեզանից, նրա // յուր, ինչպե՞ս** նգ .).

ե. բայական զուգա. ներ /**թողի // թողեցի, նստեցե՛ք // նստե՛ք**...).

զ. չքեքվող խոսքիմասային զուգաձևություններ (**խո // խոմ, ի վայր // ի վար, որովհետև // որտև, Ֆու՞ // Ֆու՞հ...**):

Լեզվական օրենք է՝ երկրորդական համարված բառերը, խոսքիմասային բառախմբերը նվազ ուշադրություն, քիչ ջանք ու ճիգ են պահանջում: Մյուս կողմից մի այլ լեզվական օրենք էլ ասում է, որ բառերը, բառախմբերը հաճախակի գործածվելուց մաշվում են ու «տկարանում», թուլանում: Ահա թե ինչու զուգաձևությունները հատկապես շատ են գոյականական և բայական համակարգերում, հատկապես հոլովման և խոնարհման ենթահամակարգերում: Չքեքվող խոսքիմասային զուգաձևությունները սահմանափակ են ամենից առաջ չքեքվելու հատկությամբ պայմանավորված: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ զուգաձևությունների տեսակները հավասարա-

չափ հանդես չեն գալիս. եթե գոյականական և բայական համակարգերում գոյություն ունեն բոլոր տեսակի զուգաձևություններ (հնչյունական, բառակազմական, հնչյունափոխական, կետադրական, շարադասական, ոճաբանական), ապա մյուսներում զգալի են հատկապես արտասանական, հնչյունական, բառակազմական տեսակները:

Հաշվի առնելով, որ ձևաբանական զուգաձևություններում տարբերակային ձևերի երկրորդ (երրորդ և այլն) եզրերը ձևաբանական նորմի սահմանած օրենքներից և օրինաչափություններից կատարված շեղումներ են, բնականաբար նորմավորման խնդիրն էլ պետք է լինի ձևաբանական զուգաձևությունների գիտական վերլուծությունը, ձևաբանական համակարգի օրինակարգավորումը, կանոնարկումը՝ զուգաձևությունների վերացման ճանապարհով...

Ինչպե՞ս: Հր. Աճառյանը զուգաձևություններով, տարբերակային ձևերով, երկիմաստություններով լի լեզվական աշխարհը համեմատում է կենդանական աշխարհի հետ. հաղթում է այն կենդանին, որը ուժեղ է կամ միջավայրին ու պայմաններին հարմարվելու կարողություն ունի; Այդպես էլ լեզվական աշխարհում կհաղթի այն տարբերակը, որը «ուժեղ է», այսինքն՝ գործածական մեծ հաճախականություն ունի, համակարգային է, լեզվի ինքնազարգացման ընթացքին չի հակասում, և որի հնչյունական կազմը համապատասխանում է խոսողների բնախոսական պահանջներին, որում «հնչյունների պայքար» չկա: Օրինակ՝ սեռական-տրական հոլովի բազմաթիվ ձևերի առկայության պայմաններում հաղթանակը **ի**-ով ձևերի կողմն է, որովհետև այն գործածական մեծ հաճախականություն և ընդհանրանալու միտում ունի, որովհետև այն «**ուժեղ**» է: «**Թույլը**» կորչում է. այս ամենը նաև լեզվական համակարգում է կատարվում՝ բնական օրենքի անխախտ, տիրական զորությամբ:

ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ- ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ՆՈՐՄ

ՁՈՒԳԱՁԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ձևաբանական-գոյականական նորմի փոփոխությունը դարերի ընթացքում է տեղի ունենում՝ նոր որակի տարրերի ձևերի և իմաստների աստիճանական կուտակման և հին որակի տարրերի (ձևերի և իմաստների) աստիճանական մահացման միջոցով: Բնականաբար, եթե համեմատելու լինենք մեր լեզվի տարբեր փուլերում գործարկված և գործարկվող ձևաբանական-գոյականական նորմերով սահմանված օրենքներն ու օրինաչափությունները, ապա միանգամայն ակնհայտ կդառնան ընդհանրապես գրական հայերենի գոյականական համակարգի փոփոխությունը, այն կանոնակարգող նորմի փոփոխությունը: Կարծում ենք՝ բավարար կլինի ասվածը հաստատել միայն հոլովական համակարգի փոփոխությունը ներկայացնելով: Ըստ Ս. Ղազարյանի «Հայոց լեզվի համառոտ պատմության» (տես՝ էջ 74, 90-91)՝ գրաբարյան ձևաբանական-հոլովական նորմը սահմանել է հետևյալ հիմնական կանոնները՝

- հին հայերենը չունի անվանական սեռեր.
- հոլովման մեջ չի տարբերում անձի և իրի առումները.
- ունի միայն երկու թիվ՝ եզակի և հոգնակի.
- ունի վեց հոլով՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական և գործիական, որոնցից յուրաքանչյուրն ունի իր հոլովակազմիչ մասնիկներն ու իմաստը (հիշյալ հոլովներից բացի նշվում են նաև պատմական, պարառական, ներգոյական և կոչական հոլովներ, որոնք չունեն իրենց առանձին հոլովակազմիչները, և որոնք չեն մտնում քերականության դասագրքերի մեջ).
- գոյականը (ինչպես նաև հոլովվող մյուս խոսքի մասերը) ունի (ունեն) թեքման **ա, ե, ի, ո, ու** ցուցիչները, որոնք կոչվում են հոլովիչներ. այդ ձայնավորներով էլ որոշվում են հոլովումները.

- հայերենի հոլովներն ունեն իրենց հոլովակերտ մասնիկները, որոնք տարբեր հոլովներում հանդես են գալիս ուրույն ձևերով.
- եզակի ուղղական և հայցական հոլովները չունեն հոլովակերտ վերջավորություններ և այդ պատճառով էլ ձևով համընկնում են. այդ հոլովների ձևական տարբերությունների վերացումը նաև հնդեվրոպական մի շարք լեզուներին է հատուկ.
- սեռական հոլովն ունի **ն, ջ, նջ, ր, յ,** տրականը՝ **ն, ջ, նջ, ր, մ, յ,** բացառականը՝ **յ, է (ե+յ)**, գործիականը՝ **բ, ւ (ո**-ից հետո՝ **վ)** հոլովակերտ մասնիկները.
- գոյականի հոլովիչները կա՛մ ավելանում են գոյական անվան հիմքին և կազմում են արտաքին հոլովումներ, կա՛մ ընկնում են բառահիմքի վերջին բաղաձայնից առաջ՝ կազմելով ներքին թեքման հոլովումներ.
- գոյական անունների հոգնակին ուղղականի և գործիականի համար կազմվում է **ք** վերջավորությամբ, սեռականի, տրականի և բացառականի համար՝ **ց**-ով, իսկ հայցականի համար՝ **ս**-ով, որը հանդես է գալիս նաև իբրև հոլովակերտ մասնիկ.
- հոգնակի վերջավորությունները սովորաբար ավելանում են եզակի համապատասխան հոլովներին: Հոլովիչները պահպանվում են եզակի և հոգնակի բոլոր թեք հոլովներում:

Գրաբարում ևս կային հոլովական զուգաձևություններ, զուգահեռ ձևեր (օրինակ՝ **արջ, երինջ, ուլ, կաքաւ, ագռաւ** բառերը հոլովվում են **ո** և **ու** հոլովիչներով, իսկ **լուսին, աման, թոյն** և այլ բառեր **ո** և **ի** հոլովիչներով), որոնք կարող էին նաև բարբառների ազդեցությամբ և գոյությամբ բացատրվել:

Ըստ նույն աշխատության՝ միջինհայերենյան ձևաբանական-հոլովական նորմով սահմանված կանոններն ու օրինաչափությունները հետևյալներն են՝

- միջին հայերենն ունի վեց հոլով՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական. ուշ շրջանում սաղմնավորվում է նաև ներգոյական հոլովը՝ **ում** վերջավորությամբ.

- գոյականը (ինչպես նաև հոլովվող մյուս խոսքի մասերը) ունի (ունեն) թեքման **ա, ե, ի, ո, ու** ցուցիչները.
- տարբեր հոլովումների ենթարկվող բառերի մեծ մասի գործիական հոլովն ունի **ով** վերջավորություն. մի շարք բառերի գործիական հոլովն արտահայտվում է **օմ** վերջավորությամբ, որի **մ**-ն հոլովակազմիչի դեր էր ստացել.
- համարյա թե չունի գրաբարյան տիպի խառն հոլովումներ.
- գոյական անունների գերակշռող մեծամասնությունը ենթարկվում է արտաքին թեքման հոլովմամբ. ներքին թեքման ենթարկվող բառերը կրճատվում են, եղածների մեծ մասն էլ իր ներքին թեքումը չի պահպանում բոլոր հոլովներում.
- **ո** հոլովումն աստիճանաբար վերանում է կամ վերածվում **ու**-ի.
- միջին հայերենն արդեն ունի ժամանակ ցույց տվող բառերի համար հատուկ վերջավորություն՝ **վա**.
- հոլովակաղապարման մեջ նախդիրների դերը զգալիորեն նվազում է և այլն (74, 232-242):

Գրաբարի ընդերքում ձևավորվող լեզվական զուգաձևությունների ու տարբերակային միավորների քանակը նկատելիորեն աճում է:

Հոլովումը ժամանակակից հայերենի ձևաբանական կառուցվածքի կարևորագույն իրողություններից մեկն է: Հոլովվելով է, որ գոյականն իր բառաձևերով խոսքի մեջ դրսևորում է զանազան քերականական կարգեր և քերականական տարբեր հարաբերություններ արտահայտում:

Հ. Աճառյանը, համեմատելով հայերենի հոլովման և խոնարհման կրած փոփոխությունները, գրում է. «Երբ համեմատում ենք գրաբարի հոլովման և խոնարհման ձևափոխությունը միջին հայերենում, տեսնում ենք այն մեծ տարբերությունը, որ կա երկու ձևափոխությունների միջև: Խոնարհման կրած ձևափոխությունը գրեթե ոչինչ է համեմատությամբ հոլովման կրած ձևափոխության: Սրա պատճառն այն է, որ հոլովումը գրաբարում ոչ մի կանոնի չի ենթարկվում: Եթե տրված լինի մի որևէ բառ, անկարելի է իմանալ, թե այդ բառը գրաբարի ութ կանոնավոր հոլովումներից որի՛ն է պատկանում: Մինչդեռ որևէ բայ իր վերջավորությամբ անմիջապես որո-

շում է, թե ո՛ր լծորդության է պատկանում և ի՛նչպես պետք է խոնարհվի: Ահա հոլովման այս անորոշությունը պատճառ դարձավ, որ ամբողջ հոլովման դրությունը քայքայվեր և միակերպության վերածվեր» (22, էջ 385):

Գրաբարի, նաև միջին հայերենի համեմատությամբ ժամանակակից հայերենի հոլովական համակարգը բավականին միօրինակացել է: Այն տիպաբանորեն մոտ է արևմտահայ գրական լեզվի ու բարբառների հոլովական համակարգին և տարբեր՝ գրաբարի հոլովական համակարգից: Վերջինիս համար բնորոշ է թեքականությունը, և կցական տարրերը համեմատաբար քիչ են: Արևելահայ գրական լեզվում, ընդհակառակը, իշխում է կցականությունը, և համեմատաբար փոքր է թեքական ձևերի տեսակարար կշիռը:

Ընդհանրացնելով գրաբարի, միջին հայերենի և ժամանակակից հայերենի հոլովման համակարգում գործառող նորմերի համեմատությունը՝ կարելի է ներկայացնել արդի հայերենի հետևյալ օրինաչափությունները՝

- ժամանակակից հայերենն ունի հինգ հոլով՝ ուղղական, տրական, բացառական, գործիական, ներգոյական:
- Ներքին թեքման բառերը փոքր թիվ են կազմում, և բոլոր հոլովներում չէ, որ պահպանվում է ներքին թեքումը:
- ժամանակակից հայերենում գրեթե զրոյի է հավասարվել հոլովիչ ձայնավորների հատուկ դերը. հայերենի **ա, ե, ի ո, ու** հոլովիչներից ժամանակակից հայերենում գործում են **ի**-ն, **ու**-ն, **ա**-ն. այն չունի **ո** և **ե** հոլովիչներ:
- Ուղղական հոլովը հատուկ հոլովակերտ մասնիկ չունի. հոլովակերտ մասնիկներ ունեն սեռական և տրական հոլովները՝ **ի, ու, ջ, ն, ր, վա,** բացառական հոլովը՝ **ց**, գործիական հոլովը՝ **վ, բ**, ներգոյական հոլովը՝ **ում**. ժամանակակից հայերենում առկա է ներգոյականի՝ միշտ **ում** վերջավորությամբ արտահայտվող որոշակի ձև, մինչդեռ գրաբարում ներգոյական իմաստն արտահայտվել է **ի** նախդրի և տրական-հայցական հոլովների զուգակցությամբ:
- Գոյականները միայն եզակիում ունեն տարբեր հոլովումներ, հոգնակիում, չնչին բացառությամբ, նրանք ունեն մի հոլովում՝ **ի:**

- Եթե գրաբարում միևնույն հոլովները եզակի և հոգնակի թվերում կարող էին ունենալ միանգամայն տարբեր վերջավորություններ և կազմության ձևեր, ապա գրական հայերենում դրանք միօրինակացվել են:
- Գրաբարում թվի և հոլովի իմաստները սովորաբար արտահայտվել են միևնույն վերջավորությամբ (**գործք -գործս**), մինչդեռ արևելահայերենում դրանք ունեն հատուկ վերջավորություններ (**գործի, գործ-եր-ի**):
- Ժամանակակից հայոց լեզվում առկա է դասային նոր իմաստ՝ անձի և ոչ անձի (իրի) քերականական կարգը, որն ունի իր արտահայտման ձևը՝ անձ ցույց տվող կամ իբրև անձ ընկալվող անունները դրվում են տրական հոլովով, իսկ իր ցույց տվողները՝ ուղղական (հայցական):
- Ժամանակակից հայերենում առանձնացված է ժամանակացույց բառերի խումբը:
- Արդի հայերենի հոլովման համակարգում նախդիրները դեր չեն խաղում:
- Ժամանակակից հայերենում հայցականը չունի դրսևորման հատուկ ձև, իսկ գրաբարում ուղղականի և հայցականի տարբերությունը ավելի որոշակի էր (որոշյալ հայցականը, ի տարբերություն ուղղականի, միշտ ուղեկցվել է **զ** նախդիրով, և հոգնակի ուղղականի **ք**-ի դիմաց հայցականն ունեցել է **ս**):

Աշխարհաբարի հոլովման մեջ արտահայտվում են այնպիսի նրբություններ, որպիսիք չկային գրաբարում ու միջին հայերենում, և արդյունք են նոր լեզվամտածողության: Օրինակ՝ գրաբարում ոչնչով չի արտահայտվում անձի և իր առումների տարբերությունը, որը, բնականաբար, լեզվամտածողության մեջ էլ գոյություն չուներ: Մինչդեռ ժամանակակից հայերենում գոյականների անձի և իրի առումները հոլովական համակարգի մի կարևոր հատկանիշն են կազմում: Նոր հայերենում կածես թե սաղմնավորվում է նաև շնչավորի և անշունչի քերականական իմաստը: Սա ևս ցույց է տալիս, որ աշխարհաբար հայերենը հոլովման մեջ առաջացրել է ձևեր, որոնք արդյունք են նոր լեզվամտածողության և չկային գրաբարում:

Իրոք, ժամանակակից հայերենի հոլովական համակարգը բավականին միօրինակացել է: Եթե եզակի թվի հոլովման ենթահամակարգում դեռևս նկատելի են զուգաձևություններ, ապա գոյականի հոլովումը հոգնակի թվում միօրինակության է հասել. հոգնակի թվում գոյականները հոլովվում են **ի** հոլովիչով (չնչին բացառություններով):

Ժամանակակից հայերենի գոյականական-ձևաբանական նորմի փոփոխությունը հնարավոր է դառնում, երբ կա՛մ քերականական նույն իմաստը տարբեր ձևերով է արտահայտվում, կա՛մ քերականական նույն ձևը տարբեր իմաստներ է դրսևորում:

Այս համակարգը կարգավորող նորմի հիմնական փոփոխության հավանականությունը կապվում է հոլովների քանակի հետ. եթե միջնադարեյան ժամանակների նորմով հաստատված կանոն էր յոթ հոլով ունենալու առանձնահատկությունը, ապա Մ. Աբեղյանն իր «հինգ հոլովի տեսությամբ» կասկածի տակ դրեց հոլովների քանակը սահմանող կանոնը, և ձևաբանական-գոյականական նորմը այս առումով այս վանդակում խախուտացավ: Հոլովների քանակի շուրջ տարակարծություններն ու վեճերը նաև մերօրյա հայերենի առանձնահատկությունն են, մե՛ր ժամանակների լեզվաշխարհի մարդկանց մտահոգությունը. ոմանք՝ հինգհոլովականները, փորձում են վերահաստատել աբեղյանական ճշտությունը, ոմանք յոթհոլովականները, հավատարիմ են մնում ավանդականին, երրորդները՝ վեցհոլովականները, փորձում են հաստատել իրենց դիրքը «հինգի» և «յոթի» ճամփաբաժանում... Հոլովների քանակի շուրջ բանավեճերը և նրանց հիմնավորումների «ճիշտ» կամ «սխալ» լինելը մեր ուսումնասիրության քննությունից դուրս են. մեզ համար էականը նորմատիվ քերականություններում՝ բուհական և դպրոցական դասագրքերում, այս հարցը կանոնակարգող օրինաչափություններն են, կանոնները [դպրոցական նշված դասագրքերում հոլովման համակարգը յոթ հոլովով է ներկայացված («Հայերենն ունի յոթ հոլով՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական» (Հ. Բարսեղյան, Աղայան, 5-6, էջ 33)], բուհական քերականություններից մի մասում նույն դիրքորոշումն է, մյուս մասում՝ հակառակը (ուղղական, սեռական-տրական, բացառական, գործիական, ներգոյական): Նորագույն քերականութ-

յուններում սովորաբար առավել շատ ուշադրության են արժանանում լեզվական սկզբնավորվող իրողությունները. քերականական նոր իմաստ է առանձնանում, քերականական նոր ձև է առաջանում, իմաստի և ձևի նոր միասնություն՝ քերականական կարգ է սաղմնավորվում, անմիջապես ընկալվում են, նկատվում, արձանագրվում, ուսումնասիրվում ու քննարկվում: Բայց նույն քերականություններում կարծես թե քննության առարկա չի դառնում քերականական հնացա՛ծ, հնացո՛ղ ձևերի, քերականական հնացա՛ծ, հնացո՛ղ իմաստների, քերականական հնացա՛ծ, հնացո՛ղ կարգերի «մահացման» ընթացքը: Կարծում ենք՝ այս հարցում էլ այդ ընթացքը՝ անցումային փուլը, անտեսվում է. ի սկզբանե հոլովական երկու իմաստներ, երկու ձևով արտահայտվելով, աստիճանաբար համատեղվում են մի ձևի տակ (ուղղական և հայցական, սեռական և տրական), և նույն ձևով արտահայտված իմաստային տարբերակայնությունը հարյուրից ավելի տարիների արդյունք է. ավելին, դեռևս հին հայերենի դասական մատենագրության մեջ նկատվող շեղումներից մեկն էլ ուղղականի և հայցականի ձևերի շփոթումն է, հատկապես տեղանունների մեջ, և սրա պատճառը հայցականի և ուղղականի հակադրության և սրա հետ կապված **զ**-ի հայցականակերտ արժեքի համեմատաբար թույլ լինելն է:

Աշխարհաբարյան լեզվական նորմը սահմանում է՝ հայցական հոլովը ձևով նման է ուղղականին. տրական հոլովը ձևով նման է սեռականին: Լեզվական օրենք է՝ եթե մի իմաստ արտահայտվում է երկու (կամ ավելի) ձևով, կամ մի ձևով երկու իմաստ է արտահայտվում, ապա նրանցից մեկը դատապարտված է մահվան, իսկ թե ինչքան կտևի այս իմաստային տարբերակներից մեկի մահացման ընթացքը, դժվար է ասել: Բացառված չէ նաև, որ իմաստային այս տարբերակումներն այնքան օտարանան, առանձնաբար այնպես կայունանան, որ նրանցից մեկի արտահայտման համար ձևական ցուցչի առաջացման խնդիր առաջանա. այս վիճահարույց հարցի լուծման նաև ա՛յս ճանապարհը բնավ չի ենթադրվում, մինչդեռ լեզվի զարգացման պատմությունը, լեզվական նորմի պատմությունը չեն բացառում նաև այսպիսի ելքը. հնի հաղթանակը սովորաբար աննկատ է մնում...

Ի վերջո, քանի՞ հոլով ունի արդի արևելահայերենը. հայագիտական միտքը մինչև այսօր էլ միասնական ու վերջնական մի եզրակացության չի եկել, հետևաբար՝ ձևաբանական նորմը հստակ ու որոշակի կանոն սահմանել չի կարող, սահմանելու դեպքում էլ այն պայմանական կլինի

Գոյականական համակարգում զուգաձևությունների առաջացումը կապվում է գոյականի հոլովակազմության ու հոլովման, հոգնակի թվի կազմության, հատուկ անունների ուղղագրության, որոշիչ հոդի գործածության հետ. զուգաձևություններ կան նաև անձի և իրի քերականական կարգի արտահայտության մեջ: Հետևաբար՝ գոյականական համակարգի տարբերակային ձևերը կարելի է ուսումնասիրել հիմնականում հետևյալ մանրահարցերի քննությամբ՝

Ա / հոլովական զուգաձևություններ.

Բ / թվակազմական զուգաձևություններ.

Գ / հատկանվանական զուգաձևություններ.

Դ / հոդային զուգաձևություններ:

Նշված ձևաբանական զուգաձևությունները կարելի է բաժանել հետևյալ ենթատեսակների՝

1. գոյականական-ուղղագրական-ուղղախոսական զուգաձևություններ (**Հայկական պար // Հայկական Պար** /լեռնաշղթա, **Դելֆիս // Դելֆի**).
2. գոյականական-հնչյունափոխական զուգաձևություններ (**բուի // բվի, եղջերուի // եղջերվի, նարինջով // նարնջով**).
3. գոյականական-բառային-բառակազմական զուգաձևություններ (**Ծաղկեվանք // Ծաղկավանք, Ծիծեռնակավանք // Ծիծեռնավանք**).
4. գոյականական-իմաստային զուգաձևություններ (**մարգարտահատներ // մարգարտահատեր, էջաչափներ // էջաչափեր**).
5. գոյականական-ձևակազմական զուգաձևություններ (**ամսի // ամսվա, գինուց // գինիից, ընկերոջից // ընկերոջիցը**).
6. գոյականական-շարահյուսական զուգաձևություններ (**այգում // այգու մեջ, գիրքս // իմ գիրքը**).
7. գոյականական-կետադրական զուգաձևություններ (**Դեր-Զոր // Դեր Զոր**)

8. գոյականական-ոճական զուգաձևություններ (**քաղաքացիներ // քաղաքացիք, տիկիններ // տիկնայք**):

Ա. Հոլովական զուգաձևություններ

Հոլովական համակարգում զուգահեռ ձևերը և լեզվական նորմից կատարված շեղումները հիմնականում հետևանք են խոսակցական լեզվի ազդեցության, նաև տարբեր հոլովումների փոխադարձ ներթափանցման, նմանակության, մասամբ էլ բարբառների անմիջական ազդեցությամբ են պայմանավորված: Հոլովական օրինաչափական ձևերից շեղումներ կատարվում են նաև այն պատճառով, որ տարբեր հոլովումների պատկանող բառերի միջև որոշակի հատկանշային տարբերություններ չենք կարող ներկայացնել, տարբերություններ, որոնցով առաջնորդվելիս որոշվի տվյալ բառի հոլովումը: Այսպես՝ թեև **ու** հոլովման ենթարկվում են նաև **ի**-ով վերջացող բառերը, սակայն **ի** ունեցող ոչ բոլոր բառերն են ենթարկվում **ու** հոլովման, կամ՝ **վա** հոլովման են ենթարկվում ժամանակ ցույց տվող ոչ բոլոր բառերը. **րոպե**, **վայրկյան**, **դար**, **ուրբաթ**, **կիրակի**, **իրիկնամուտ**, **լուսաբաց** բառերը ենթարկվում են **ի** հոլովման:

Հայտնի է նաև, որ ժամանակակից գրական հայերենը քերականական զանազան իմաստներ արտահայտելու համար նույնանիշ ձևույթներ ունի, որոնց առկայությունը հիմնավորվում է նրանց զուգորդելիության տարբեր ոլորտներ ունենալով, այլ կերպ ասած՝ դրանք գտնվում են լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ: Այսպիսին են ոչ միայն խոնարհման, այլև հոլովման վերջավորությունները: Ժամանակակից հայերենի հոլովման համակարգում նույնանիշ վերջավորությունների առատություն է նկատվում հատկապես սեռական-տրական հոլովի իմաստն արտահայտելու համար, մի հոլով, որի կազմությունը հիմք է դառնում նաև ժամանակակից հայերենի հոլովումները դասակարգելու, սահմանազատելու համար: Այդ նույնանիշ ձևույթներն են՝ **ի**, **ու**, **ան**, **վա**, **ոջ**, **ց**, **ո**, **ա**. մի քանի նորմատիվ քերականություններում ավելացվում է նաև **յան** վերջավորությունը: Սրանցից յուրաքանչյուրն ունի իր գործառության-զուգորդելիության հատուկ ոլորտը, սակայն այդ նույն ձևույթները հա-

ճախ զուգորդվում են միևնույն բառին՝ ստեղծելով բառերի քերականական զուգահեռ ձևեր, որոնց մի մասը գտնվում է գրական նորմի սահմաններում (**ամսի // ամսվա, բեռի // բեռան...**), իսկ մի մասն էլ շեղվում է գրական լեզվի նորմից և հիմնականում հանդիպում է ժողովրդախոսակցական լեզվում:

Վերջապես՝ միևնույն բառի համար այս կամ այն տարբեր ձևեր առաջ են գալիս նաև հոլովումների փոխանցման հետևանքով: Այս կարգի տարբեր հոլովաձևերը համարվում են միևնույն ենթահոլովաձևի կամ հոլովաձևի տարբերակները. ըստ այսմ՝ **ամսի** և **ամսվա** տարբերակները սեռականի եզակի թվի մեկ ենթահոլովաձևի կանոնական և ազատ տարբերակներ են: Նույն ձևով՝ **լեռից** և **լեռնից** ձևերը բացառականի եզակի թվի մեկ ենթահոլովաձևի ազատ տարբերակներ են: Մյուս կողմից, օրինակ՝ **ընկեր** բառի սեռականն է **ընկերոջ** և **ընկերի**, **անկողին** բառի սեռականն է **անկողնու** և **անկողնի** և այլն: Այս կարգի զուգահեռ ձևերը չի կարելի նույնացնել ազատ տարբերակների հետ, որովհետև սրանք ստացվում են ոչ թե միևնույն ձևույթի կամ ենթաձևույթի տարբեր տեսակների, այլ տարբեր ենթաձևույթների գործառության հետևանքով: Այստեղ, ըստ էության, խախտվում է ենթաձևույթների լրացուցիչ բաշխման կարգը, և մեկ ենթաձևույթի ոլորտին պատկանող բառը անցնում է մի այլ ենթաձևույթի ոլորտին: Բերված օրինակներից **ընկեր** բառը պատկանում է **ոջ** հոլովման (սեռականի (**ոջ**) ենթաձևույթի ոլորտ), բայց **ընկերի** ձևով անցնում է սեռականի (**ի**) ենթաձևույթի ոլորտը... Այս նկատի ունենալով՝ էդ. Աղայանն այդպիսի զուգահեռ ձևերը ազատ տարբերակներից զանազանելու նպատակով անվանում է հոլովական զուգաձևեր: Հոլովական զուգաձևերը լեզվի մեջ հանդես են գալիս տարբեր պատճառներով և համապատասխանորեն ներկայացնում են տարբեր կարգեր կամ տեսակներ: Այսպես՝ **տարի** բառը, որպես ուղղականի վերջավոր ձև, ենթարկվում է **ու** հոլովման, իսկ ըստ իմաստի, որպես ժամանակ ցույց տվող բառ, ենթարկվում է **-վա** հոլովման. այստեղ զուգաձևերի առկայությունը պայմանավորված է ձևաբանական համակարգին հատուկ երևույթներով (հոլովում ըստ ձևի և հոլովում ըստ իմաստի): **Ճաշ** բառն իր գլխավոր իմաստով գործածվելիս ենթարկվում է **ի** հոլովման, իսկ «ճաշի ժամանակը» իմաստով՝ **վա** հոլովման: Այս բառերի

հոլովական զուգաձևությունը պայմանավորված է նրանց տարբեր իմաստներով: Է. Աղայանը գրում է. «Քանի որ **տարի, ճաշ, առաջ, անգամ** և նման բառերի հոլովական զուգաձևերը բխում են մեր արդի լեզվի համակարգում գործող այն օրինաչափություններից, որոնցով պայմանավորված է տարբեր ենթահոլովաձևերի կառուցվածքը (բառի ձև, տարբեր իմաստներ), ապա դրանք պետք է համարել **զուգաձևեր ըստ կառուցվածքի:** Այլ պատճառներ են գործում **ընկերի-ընկերոջ, ամսվա-ամսի, անկողնու-անկողնի, կայսեր-կայսրի, ծննդյան-ծննդի, սգո-սգի, քրոջ-քվոր, տեգրոջ-տեգրի-տեգոր, լեռան-լեռի, նռան-նուռի** և այլ այդպիսի բազմաթիվ զուգաձևերի առաջացման մեջ. այստեղ մի կողմից ունենք գրական լեզվի կանոնական ու ոչ կանոնական, ժողովրդական-խոսակցական կամ պարզապես բարբառային ձևերի գործածություն (քրոջ-քվոր, տեգրոջ-տեգոր), մյուս կողմից՝ հին, ավանդաբար պահպանված, լեզվի այժմյան հոլովական ձևերի համակարգին չպատկանող ձև և արդի համակարգին համապատասխանող ձև (կայսեր-կայսրի, սգո-սգի, ծննդյան-ծնունդի), երրորդ կողմից՝ հոլովման արդի համակարգին համապատասխանող զուգաձևեր (ընկերոջ-ընկերի, ամսվա-ամսի, անկողնու-անկողնի), որոնցից առաջինները թեև կանոնական, բայց ընդգրկում են փոքրաթիվ բառերի մասնավոր խմբեր, իսկ երկրորդները ներկայացնում են առավել կենսունակ և ընդհանրական հոլովումը: Այս երրորդ դեպքում, ուրեմն, գործում է լեզվի ներքին զարգացման ընդհանուր ձգտումը, որը տանում է դեպի հոլովաձևերի միօրինակացում: Այս բոլոր դեպքերում էլ զուգաձևերը ներկայացնում են լեզվի տարբեր ոճերին հատուկ ձևեր, ուստի և դրանք կարելի է կոչել **զուգաձևեր ըստ ոճերի** կամ **ոճական զուգաձևեր:** Բերված օրինակներից **քրոջ-քվոր, տեգրոջ-տեգոր** ներկայացնում են գրական և ժողովրդական կամ բարբառային ոճերի ձևերը, **կայսեր-կայսրի, սգո-սգի, ծննդյան-ծննդի**՝ հնաբան և արդի գրական ոճերը, **ընկերոջ-ընկերի, անկողնու-անկողնի, տեգրոջ-տեգրի**՝ գրական-կանոնական և նորաբան ոճերը:

Այսպիսով, յուրաքանչյուր հոլովի տարբեր հոլովաձևերի միջև կարող ենք ունենալ 3 կարգի հարաբերություն՝ **բաշխումային** /դիստրիբուտիվ/, **տարբերակային և զուգաձևային**» (14, էջ 277-278):

Զուգաձևությունները սեռական-տրական հոլովում

Լեզվական նորմը սահմանում է, որ գոյականների մեծ մասը պատկանում է **ի** հոլովման[1]. այն ընդհանրական հոլով է, և լեզվի զարգացման ընթացքը թելադրում է, որ հենց այս հոլովիչով էլ միօրինականալու է հոլովման հարացույցը (իսկ ե՞րբ՝ ժամանակը ցույց կտա...):

Հույս, լույս, սուգ, պատիվ բառերը ենթարկվում են **ի** հոլովման: Սակայն գրականության մեջ հաճախ ոճական նկատառումներով գործածվում են դրանց գրաբարյան տարբերակները, և արդյունքում զուգաձևություններ են՝ **հույսի // հուսո, լույսի // լուսո, սգի // սուգի // սգո, պատվի // պատվո**:

Գրքային լեզվում հանդիպում է նաև **խնդիր** բառի **խնդրո** տարբերակը **խնդրի** ձևի կողքին, որը **խնդրի // խնդիրի // խնդրո** բազմաձևության մեջ ևս հնաբանություն պետք է համարել: **Հրո // հուրի // հրի** զուգահեռ ձևերում **հրի** ձևն է կանոնական: Լեզվական նորմով սահմանվածը **ի**-ով ձևերն են, **հուսո, լուսո, սգո, պատվո, հրո** տարբերակներն ավանդական են, և նրանց գործածությունը պետք է ոճականորեն արդարացված լինի:

Որոշ աշխարհագրական տեղանուններ, հիմնականում ենթարկվելով **ի** հոլովման, առանձին կիրառություններում պահպանում են գրաբարյան **ա** վերջավորությամբ ձևը, որով և զուգաձևություն է ստեղծվում՝ **Սևանի // Սևանա, Վանի // Վանա, Սասունի // Սասնա, Գեղամի // Գեղամա**: Սրանց նմանակությամբ **ա** արտաքին հոլովման են ենթարկվում նաև **Շուշի, Լոռի, Գյումրի** տեղանունները (որոնք ըստ ձևի պետք է պատկանեն **ու** հոլովման), և արդյունքում նորից ստացվում են զուգահեռ տարբերակներ՝ **Շուշվա, Լոռվա, Գյումրվա** (սրանցում **վ**-ն **ի** վերջնահնչյունի հնչյունափոխված

---

[1] Այս և մնացած դեպքերում ընդգծվածները ձևաբանական նորմով սահմանված կանոններն են, օրենքներն ու օրինաչափությունները. սրանց միատեղումը մոտավորապես կուրվագծի ձևաբանական նորմի սահմանները:

ձևն է): Գրական լեզվում պատահում է նաև անձնանունների՝ **ա**-ով սեռականի ձևեր, և **Տիգրանի // Տիգրանա, Երվանդի // Երվանդա** և նման տիպի զուգաձևություններում երկրորդները հնաբանություններ են: Ընդհանրապես պետք է ասել, որ **ա** ձևույթով սեռականտրականի ձևը դուրս է մղված այսօրվա գրական լեզվի նորմից. հանդիպածները հնաբանություններ են կամ պահպանվել են իբրև բաղադրյալ աշխարհագրական անունների քարացած ձևեր:

Ժամանակակից գրական հայերենում **ի** հոլովման են ենթարկվում **դուստր, կայսր** և **-ուստ, -իստ, -ունդ** վերջածանցներն ունեցող մի քանի բայանուններ՝ **փախուստ, գալուստ, թաքուստ, հանգիստ, ծնունդ**: Սակայն սրանք ունեն գրաբարյան տարբերակներ, որոնք գրքային են և սահմանափակ կիրառություն ունեն: Արդյունքում գրական նորմի շրջանակներում գործող զուգաձևություններն են՝ **դուստրի** կամ **դստրի // դստեր, կայսրի // կայսեր, փախուստի // փախստյան, թաքուստի // թաքստյան, հանգստի // հանգստյան, գալուստի // գալստյան, ծնունդի** կամ **ծննդի // ծննդյան**: Առհասարակ **–յան**-ով ձևերը իբրև հնաբանություն պետք է որակել, իսկ **ի**-ով տարբերակները ժողովրդախոսակցական որոշ երանգ ունեն, բայց ժամանակը նրանց օգտին է ընթանալու: Բացարձակ հնաբանություն պետք է համարել **առավոտվա // առավոտի // առավոտյան, երեկոյի // երեկոյան** զուգահեռություններում **առավոտյան, երեկոյան** ձևատարբերակները, որոնցում հոլովաձևային իմաստն արդեն մթագնել է, և դրանք ածականանում են կամ մակբայանում:

Արդի հայերենում նկատվում է **ի** հոլովման սահմանների ընդարձակում: **Ի** հոլովման ազդեցությունն ու տարածման ոլորտը խիստ մեծանում է, նույնիսկ այն աստիճան, որ այլ հոլովումների պատկանող գոյականների մեծ մասը գրեթե զուգահեռաբար հանդես է գալիս կամ կարող է հանդես գալ **ի** հոլովմամբ, բացառությամբ **-ություն**-ով վերջավորվող գոյականների, որոնք, ըստ լեզվական կանոնի, կանոնապես հոլովվում են **ա** ներքին հոլովմամբ: Մեր ժամանակներում խոսակցական լեզվում, նաև գեղարվեստական գրականության մեջ **-ություն**-ով վերջավորվող գոյականներից մի քանիսն սկսել են նաև **ի** հոլովմամբ հանդես գալ՝ **ուրախության // ուրախության, կազմակերպության // կազմակերպության,**

նախարարության // նախարարությունի...: Համաբանության օրենքի գործառությամբ պայմանավորված՝ տարածվում են նման ձևերը (նրանցով արտահայտված վերացական իմաստը **ի**-ով ձևերում կարծես ավելի առարկայական է դառնում): Հաճախ, հատկապես բանավոր խոսքում, մյուս հոլովումների պատկանող բառերը ևս ստանում են **ի**, որով և ստեղծվում են զուգահեռ ձևեր: Այսպես, հաճախ ենք լսում **գինիի**, **սպասումի**, **մարդի**, **ամուսնի** և այլն, փոխանակ կանոնական **գինու**, **սպասման**, **մարդու**, **ամուսնու** և այլն: Առաջին ձևերը, բնականաբար, շեղում են գրական-ձևաբանական նորմից, ոչ կանոնական տարբերակներ են, սակայն սա ժամանակակից հայերենի հոլովական համակարգի զարգացման միտումն է, որը գնալով ավելի ակնառու է դառնում:

«Ի հոլովման տարածման ոլորտն այնքան մեծ է, որ այլ հոլովումների պատկանող գոյականները կարելի է նույնիսկ ներկայացնել որպես այլաձև հոլովումների ենթարկվող «բացառություններ»,- եզրակացվում է «Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում» գրքում (65, էջ 319):

Հոլովական զուգաձևությունների մեջ մի կողմից ունենք գրական լեզվի կանոնական և ոչ կանոնական, ժողովրդախոսակցական, բարբառային ձևերի գործածություն (**քրոջ // քվոր**, **տեգրոջ // տեգոր**), մյուս կողմից՝ արդի հոլովական համակարգին համապատասխան ձև և համակարգից դուրս ձև՝ ավանդաբար պահպանված՝ **կայսրի // կայսեր**, **սգի // սգո**, **ծննդյան // ծնունդի**, **դարի // դարու**, երրորդ կողմից՝ հոլովական արդի համակարգին համապատասխանող զուգաձևեր **/անկողնու // անկողնի**, **այգու // այգիի**, **ամսվա // ամսի**, որոնցից առաջինները, թեև կանոնական, բայց ընդգրկում են փոքրաթիվ բառերի մասնավոր խմբեր, իսկ երկրորդները ներկայացնում են կենսունակ և ընդհանրական հոլովումը: Այս վերջին դեպքում է, որ գործում է լեզվի ներքին զարգացման ընդհանուր միտումը, որը տանում է դեպի հոլովաձևերի միօրինակացում: Երբեմն հոլովական զուգաձևություններից մեկը ձեռք է բերում կիրառական որոշ սահմանափակություն կամ իմաստային որևէ մասնավորում: Այսպես՝ **սգի // սգո**, **ծնունդի // ծննդյան** զուգաձևություններում, որոնք ձևաբանական նորմի սահմաններից դուրս չեն, **սգո** և **ծննդյան** տարբերակները այժմ գործածվում են սահմա-

նափակ կապակցություններում (սգո թափոր, սգո միտինգ, սգո սեղան, սգո պսակ և ծննդյան տոներ, ծննդյան առթիվ, ծննդյան օր, ծննդյան տարեդարձ): Կան մի շարք զուգաձևություններ էլ, որոնք իմաստային տարբերակում ունեն, օրինակ՝ **ճաշի // ճաշվա** զուգաձևության մեջ **ճաշ** բառը ժամանակի իմաստով ենթարկվում է **վա** հոլովման, իսկ «կերակուր» իմաստով՝ **ի** հոլովման: **Տարի** բառը, որպես ժամանակի միավոր, ենթարկվում է **վա** հոլովման, որպես **ի**-ով վերջացող բառ՝ **ու** հոլովման, իսկ ընդհանրական միտումին համապատասխան՝ **ի** հոլովման: Արդյունքում եռաձևություն է՝ **տարվա // տարու // տարիի**, որոնցից միայն մեկն է հաղթանակելու՝ հավանաբար լեզվի ներքին զարգացման միտումով թելադրվածը:

Ուրեմն՝ բավական չէ միայն հոլովակազմությունն իմանալ, լեզվական նորմով սահմանվածը. անհրաժեշտ է իմանալ նաև զուգահեռ ձևերից յուրաքանչյուրի գործածության յուրահատկությունները:

Ըստ լեզվական կանոնի՝ <u>**ու** ձայնավորով վերջացող միավանկ և բազմավանկ մի քանի բառերում եզակի թվի թեք հոլովների ձևակազմիչներից առաջ **ու**-ն դառնում է **վ**,</u> և **ձվի // ձուի, առվի // առուի, լվի // լուի, մեղվի // մեղուի** զուգաձևություններում գրական են առաջին տարբերակները, երկրորդները խոսակցական են: Նույն այդ կանոնի համաձայն՝ <u>միավանկ **բու** բառը **ու**-ն անփոփոխ է պահում,</u> և գրական է **բուի** տարբերակը: Մերօրյա հայերենում **բվի** տարբերակի գործածական հաճախականությունը մեծացել է:

Զուգաձևության եզր էին նաև **ու**-ով վերջացող բազմավանկ բառերի սեռական հոլովածևերի ավանդական տարբերակները անհնչյունափոխ ձևերի կողքին՝ **ժողովածուի // ժողովածվի, թեկնածուի // թեկնածվի, դասատուի // դասատվի**. զուգահեռաբար գործածվելուց հետո ավանդական ձևերը դուրս մղվեցին:

<u>**Ու** հոլովման են պատկանում **ի**-ով վերջացող և **անկողին, մարդ, ամուսին, ձի** բառերը, նաև անորոշ դերբայը՝ միայն եզակի թվով:</u>

Ու հոլովման ենթարկվող բառերի մեծ մասը (բացառությամբ անորոշ դերբայի) հատկապես խոսակցական լեզվում, ենթարկվելով **ի** հոլովման, դրսևորում է զուգահեռ ձևեր՝ **գինու // գինիի, ոսկու // ոսկիի, կաշու // կաշիի, մարդու // մարդի, ամուսնու // ամուսնի** կամ **ամուսինի, ձիու // ձիի**: Գրական հայերենի համար օրի-

նաչափական են **ու**-ով ձևերը: Դպրոցական դասագրքերից մեկում (11, էջ 59) **ի**-ով վերջավորվող **-ելի//-ալի** ածանցով կազմված ածականները փոխանվանաբար գործածվելիս սովորաբար **ի** հոլովման են պատկանում, թեև կարող են ենթարկվել նաև **ու** հոլովման, իսկ նույն ածանցն ունեցող գոյականները, ընդհակառակը, հոլովվում են **ու**-ով, բայց և կարող են ենթարկվել նաև **ի** հոլովման, և մի կողմից՝ **նազելիի // նազելու, սիրելիի // սիրելու, նողկալիի // նողկալու, պատվելիի // պատվելու...**, մյուս կողմից՝ **հայելու // հայելիի, ածելու // ածելիի, բանալու // բանալիի**... զուգածևություններում սովորական են առաջին տարբերակները, սակայն երկրորդներն էլ մերժելի չեն:

Նույնատիպ զուգածևություններ են կազմում հատուկ անունները՝ **Մեղրու // Մեղրիի, Վեդու // Վեդիի, Արածանու // Արածանիի, Ալավերդու // Ալավերդիի, Արզնու // Արզնիի, Բջնու // Բջնիի, Լոռու // Լոռիի, Գյումրու // Գյումրիի, Քենեդու // Քենեդիի, Պագանինու // Պագանինիի, Նազելու // Նազելիի, Նելլու // Նելլիի:** Դժվար է որևէ օրինաչափություն սահմանել այս զուգահեռ ձևերից որևէ մեկին առավելություն տալու առումով: ՀՀ լեզվի տեսչությունը (10 փետրվարի 2000թ.) լեզվագործածության ասպարեզում միօրինակություն և անաղարտություն ապահովելու նպատակով վերացրեց ժամանակակից հայոց լեզվում **Լոռի, Գյումրի** տեղանունների հոլովական զուգածևությունները և հարացույցի միօրինակացում սահմանեց. «Ժամանակակից հայոց լեզվում ԼՈՌԻ, ԳՅՈՒՄՐԻ տեղանունների հոլովական զուգածևությունները (Լոռվա-Լոռիի-Լոռու, Գյումրվա-Գյումրիի-Գյումրու) վերացնելու և հարացույցը միօրինակացնելու նպատակով՝

<u>այսուհետև գրական լեզվում հանձնարարել սեռական-տրական հոլովի ու-ով՝ Լոռու, Գյումրու ձևերը</u>» (66, էջ 36): Նշանակում է՝ **Լոռու // Լոռիի // Լոռվա, Լոռուց // Լոռիից, Լոռով // Լոռիով, Լոռում // Լոռիում** և **Գյումրու // Գյումրիի // Գյումրվա, Գյումրուց // Գյումրիից, Գյումրով // Գյումրիով, Գյումրում // Գյումրիում** զուգածևություններում գրական են, հանձնարարելի առաջին տարբերակները, երկրորդները, նաև երրորդները բարբառային, ոչ գրական ձևեր են. գործածական են ժողովրդախոսակցական, պատմական, սննդապա-

շարային բնագավառներում՝ **Լոռվա բերդ, Լոռվա սարահարթ, Լոռիի հովիտ, Լոռվա բոզբաշ, Գյումրվա խաշ** և այլն:

Մերօրյա հայերենում հնավանդ բառերի **ու**-ով ձևերն են գերադասելի՝ **Րաֆֆու, Արշակունու, Տիգրանուհու, Ամատունու**, նորաստեղծ բառերում՝ **ի**-ով ձևերը՝ **Թբիլիսիի, Սոչիի, Արկադիի**: **Ա. նու // Անիի** զուգաձևության մեջ **Անու** ձևը իր տեղը զիջել է **Անիի** ձևին (սրանով իմաստային շփոթ է առաջանում **Անի** անձնանվան և **Անի** տեղանվան սեռականի կազմության հարցում. երկուսն էլ նույն ձևով են հանդես գալիս՝ **Անիի** (սա էլ երևի պատճառ կդառնա, որ ժամանակի ընթացքում բառային տարբեր իմաստներ ունեցող նույնաձևությունը քերականական տարբեր ձևեր ունենա):

Վ. Առաքելյանը հետաքրքիր դիտողություն ունի **եղեռն** բառի վերաբերյալ. «Վերջին տարիներս խիստ գրական **եղեռն** բառը դարձավ ժողովրդախոսակցական և չգիտես ինչի հիման վրա այդ բառը ըմբռնվեց **եղեռնի** ձևով իբրև ուղղական, և շատերը այժմ բառը հոլովում են **եղեռնու** սխալ ձևով: Եթե մեր գրական լեզուն ուժեղ ներգործություն չունենար ժողովրդական խոսակցական լեզվի վրա, սխալ ձևը կարող է հաղթել, համենայն դեպս մինչև հիմա սխալը չի ուղղվել» (26, էջ 22):

Իսկապես, եթե դժվար է բացատրել, թե ինչու է **եղեռն** բառը փոխարինվել **եղեռնի** ձևով, ապա հեշտությամբ կարելի է բացատրել նրա՝ **եղեռնու** հոլովաձևի կազմությունը. **ի** վերջնահանգ ունեցող բազմավանկ բառերի համաբանությամբ՝ **գինի-գինու, մատանի-մատանու**, ինչու ոչ՝ **եղեռնի-եղեռնու**: Ուրեմն՝ **եղեռն // եղեռնի** զուգաձևության մեջ երկրորդը սխալ է, ժողովրդախոսակցական, բնականաբար **եղեռն** բառի սեռական հոլովի համար գոյություն ունեցող **եղեռնի // եղեռնու** զուգաձևության մեջ ճիշտ, գրական տարբերակն առաջինն է, իսկ երկրորդը՝ ոչ թույլատրելի, ոչ գրական, հետևաբար՝ ոչ հանձնարարելի:

Ինչ վերաբերում է **տղայի // տղու, տատի // տատու, պապի // պապու, երեխայի // երեխու** զուգաձևություններին, ապա երկրորդները բացահայտ շեղում են ձևաբանական նորմից և ակնհայտ կա՛մ բարբառային են, կա՛մ խոսակցական լեզվից են ներթափանցել գրական լեզվի մեջ: **Տատ** և **պապ** բառերի **ու** հոլովման ենթարկվելը կարելի է բացատրել խոսակցական լեզվում հանդես եկող **տատի**,

պապի ձևերի առկայությամբ, որոնք **տատիկ, պապիկ** գրական ձևերի **կ**-ի անկումով առաջացած կրճատ ձևեր են: Նորից համաբանության օրենքով, որպես **իահանգ** բազմավանկ բառեր, ենթարկվել են **ու** հոլովման: Գրական են կամ **տատիկ, պապիկ**, կամ **տատ, պապ** ձևերը, որոնք երկու դեպքում էլ ենթարկվում են **ի** հոլովման:

Որոշ ժամանակ առաջ **ու** հոլովման էին պատկանում նաև **դի** և **թի** բառերը. մեր օրերում **դիու, թիու** ձևերը հնացած են և ոչ հանձնարարելի:

Ըստ ձևաբանական կանոնի՝ **ան** հոլովման պատկանում են **գարուն, աշուն, ամառ, ձմեռ, մահ** բառերը, **-ում** ածանցով կազմվածները, գրաբարյան **ն** վերջնահնչյունն ունեցող միավանկները:

Միավանկ բառերից մի քանիսը զուգահեռաբար կարող են հանդես գալ նաև **ի** հոլովմամբ, և **բեռան // բեռի, գառան // գառի, դռան // դռի, եզան // եզի, թոռան // թոռի, լեռան // լեռի, ծոռան // ծոռի, ծնկան // ծնկի // ծունկի, ձկան // ձկի, մկան // մկի, նռան // նռի // նուռի, շրթան // շրթի // շուրթի** զուգաձևություններում (եռաձևություններում) նորմով սահմանվածը առաջիններն են, երկրորդները խոսակցական լեզվին են բնորոշ, գրական խոսակցական տարբերակում որպես շեղում չեն դիտվում. ավելին, մեր օրերի գրական հայերենում արդեն գրական չեն **շրթան, ծնկան** ձևերը: **Շուրթի, ծունկի, նուռի** անհնչյունափոխ ձևերի գործածությունը հոլովման ժամանակ չհնչյունափոխվելու միտման արդյունք է...

Ան հոլովման պատկանող բառերից հատկապես **-ում** ածանցն ունեցողներն են զուգաձևություններ կազմում՝ դեպի ընդհանրականը միտելով՝ **կառուցման // կառուցումի, շարժման // շարժումի, ցասման // ցասումի և** այլն. ըստ ավանդույթի՝ նորմատիվ, կանոնական են համարվում առաջին ձևերը, բայց երկրորդներն էլ սխալ չպետք է համարել. սրանք համարյա թե զուգընթաց գործածություն ունեն. համազոր կանոնական տարբերակներ են:

Գարուն, ամառ, աշուն, ձմեռ բառերը պատկանում են **ան** հոլովման, սակայն սրանցից **ամառ**-ը և **ձմեռ**-ը ենթարկվում են նաև **վա** հոլովման՝ դարձյալ ստեղծելով կանոնական համազոր զուգաձևություններ, որոնք գործառում են գրական լեզվի նորմի շրջանակներում: Ձևաբանական նորմից շեղում պետք է համարել

խոսակցական լեզվում երբեմն հանդիպող **աշունի**, **ձմեռի**, **գարունի**, **ամառի** ձևերը: Որեմն՝ **գարնան // գարունի // գարունքվա, ամռան // ամառի // ամառվա, աշնան // աշունի // աշունքվա, ձմռան // ձմեռի // ձմեռվա** եռաձևություններում ձևաբանական նորմով սահմանվածներն առաջին տարբերակներն են, երկրորդները ժողովրդախոսակցական երանգ ունեն և նորմից դուրս են, **ամառվա, ձմեռվա** տարբերակները համազոր, կանոնական տարբերակներ են. **վա** հոլովման են ենթարկվում որպես ժամանակացույց բառեր, իսկ **աշունքվա, գարունքվա** ձևերը հնացած են և բարբառային. դադարել են գործածվելուց բարբառային երանգ ունեցող **աշունք, գարունք** գոյականները:

Արդի շրջանում դեռևս գործածական լայն ծավալ չունեն **ան** հոլովման պատկանող **մանուկ** և **անուն** բառերի **մանուկի, անունի** հոլովաձևերը, որոնց գոյությունը դեռևս Մ. Աբեղյանն է նկատել:

Ձևաբանական նորմը սահմանում է, որ <u>**ոջ** հոլովման պատկանող բառերը կազմում են իմաստային նեղ խումբ (ազգակցական կապեր ցույց տվող)՝ **կին, քույր, տալ, սկեսուր, տեգր, աներ**, նաև **ընկեր, տեր** և սրանցով բաղադրված բառերը:</u> **Կին** բառը **ի** հոլովմամբ զուգահեռ ձև չունի. **կնկա** ձևը բացահայտ հնաբանություն է, և ուղիղ ձևը ոչ թե **կին**-ն է, այլ բարբառային **կնիկ** ձևը: **Քույրի // քրոջ** զուգաձևության մեջ որոշակի իմաստային տարբերություն կա. **քույրի** ձևի տակ հասկացվում է «բուժքրոջ» իմաստը: Մնացածները զուգաձևություններ են կազմում **ոջ** և **ի** հոլովումների ենթարկվելու երկձևությամբ, որոնք կանոնական ոչ համազոր տարբերակներ են՝ **ընկերոջ // ընկերի, տալոջ // տալի, սկեսրոջ // սկեսուրի, աներոջ // աների, տիրոջ // տերի, տեգրոջ // տեգրի**, որոնցից երկրորդները բնորոշ են խոսակցական լեզվին և համաբանության օրենքի գործառության արդյունք են:

Հոլովման զուգաձևություններ ունեն հատկապես նրանցով բաղադրված բարդ բառերը՝ **հորաքրոջ // հորաքույրի, տանտիկնոջ // տանտիկնի, դասընկերոջ // դասընկերի, տանտիրոջ // տանտերի**: Ինչպես երևում է բերված օրինակներից, **ի** հոլովման դեպքում հոլովվող բառը հնչյունափոխության չի ենթարկվում. սա նորից հաստատում է, որ հիշյալ բառերն այս հոլովման սկսել են ենթարկվել ավելի ուշ շրջանում: Մյուս պատճառն այն է, որ **ի** հոլովումով

տարբերակները առավել հատուկ են ժողովրդական-խոսակցական լեզվին և այնտեղից էլ գրական լեզվի մեջ են թափանցել: Նկատելի են այս զուգաձևությունների շարահյուսական-կիրառական տարբերություններ. գրական լեզվին հատուկ **ոջ**-ով ձևերը հավասարապես կարող են գործածվել հատկացուցչային-որոշչային և խնդրային պաշտոններով, իսկ **ի**-ով ձևերը առավելապես հանդիպում են խնդրային կիրառություններում:

Աներ, սկեսուր, տեգր բառերը նաև եռաձևություն են կազմում՝ **աներոջ // աների // անոր, սկեսրոջ // սկեսուրի // սկեսոր, տեգրոջ // տեգրի // տեգոր**: Վերջին ձևերը գրական լեզվում հանձնարարելի չեն և ոչ կանոնական տարբերակներ են:

Գրաբարում ժամանակ ցույց տվող բառերը չունեին առանձին հոլովում: Մինչդեռ աշխարհաբարում այս կարգի բառերը հոլովման տեսակետից մի առանձին խումբ են կազմում և հոլովվում են **վա** հոլովմամբ. սա արդյունք է նոր լեզվազգացողության, որը և կանոնարկման է հասել:

Չևաբանական օրենքը սահմանում է. «Սեռական-տրականում ՎԱ վերջավորությունն են ստանում ժամանակային իմաստ արտահայտող մոտավորապես հետևյալ բառերը. աշունք-աշունքՎԱ, ամառ-ամառՎԱ, այսօր-այսօրՎԱ, առավոտ-առավոտՎԱ, առաջ-առաջՎԱ, այժմ-այժմՎԱ, գարունք-գարունքՎԱ, գիշեր-գիշերՎԱ, երեկ-երեկՎԱ, էգուզ-էգուզՎԱ, ժամ-ժամՎԱ, ժամանակ-ժամանակՎԱ, իրիկուն-իրիկՎԱ, կեսօր-կեսօրՎԱ, հիմա-հիմիկ-հիմիկՎԱ, հերու-հերՎԱ, ծմեռ-ծմեռՎԱ, շուտ-շուտՎԱ, վաղուց-վաղուցՎԱ, տարի-տարՎԱ, օր-օրՎԱ: ՎԱ ձևով կարող են հոլովվել նաև ժամանակային իմաստով գործածվող այլ բառեր, օրինակ՝ զատիկ-զատկՎԱ, պասպասՎԱ, ճաշ-ճաշՎԱ» (33, էջ74):

Առաջ և **անգամ** բառերը ժամանակի իմաստով նույնպես հոլովվում են **վա** հոլովմամբ՝ **առաջվա, անգամվա**: Խոսակցական լեզվում **վա** հոլովմամբ են սկսել գործածվել նաև **երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ** բառերը երևի **շաբաթ** բառի համաբանությամբ՝ **երկուշաբթվա, երեքշաբթվա, հինգշաբթվա, ուրբաթվա**, ըստ որում եթե **շաբաթվա // շաբթվա** զուգաձևության մեջ անհնչյունափոխ տարբերակը գրական է, ապա հնչյունափոխված տարբերակը գրական չէ և բարբառային-խոսակ-

ցական երանգ ունի: **Երկուշաբթվա // երկուշաբաթվա, երեքշաբթվա // երեքշաբաթվա, հինգշաբթվա // հինգշաբաթվա** զուգաձևություններում **ա**-ի անկմամբ ձևերը (հնչյունափոխված տարբերակները) խոսակցական բարբառային երանգ ունեն, նաև՝ եզակիի իմաստ, որով և հակադրվում են մյուս եզրին՝ չհնչյունափոխված ձևերին, որոնք առավել գրական են, բայց թվի տեսակետից երկփեղկված են եզակիի և հոգնակիի իմաստներով: Վերջիններս ավելի շուտ բառակազմության մեջ նկատվող միտումի՝ հարադրականից համադրական կազմության անցման արդյունք են՝ հինգ շաբաթվա → հինգշաբաթվա. կազմում են շարահյուսական-բառակապակցական զուգատարբերակներ՝ **հինգ շաբաթվա, երկու շաբաթվա** և այլն:

Վա հոլովման պատկանող շատ գոյականներ նաև **ի** հոլովիչով են հոլովվում և ունեն զուգահեռ ձևեր, որոնց մեջ ժամանակի իմաստը որոշ չափով մթագնած է, բայց գործառում են գրական նորմի սահմաններում՝ **առավոտվա // առավոտի, երեկոյվա // երեկոյի, ժամվա // ժամի, ժամանակվա // ժամանակի, ամսվա // ամսի, օրվա // օրի, կեսօրվա // կեսօրի, շաբաթվա // շաբաթի, գիշերվա // գիշերի**: Երկկերպ հոլովվող և զուգաձևություններ կազմող գոյականները որոշ դեպքերում նրբերանգային իմաստներով, շարահյուսական կիրառությամբ, ոճական նշանակությամբ տարբերվում են իրարից, հնարավոր չէ մեկը մյուսով փոխարինել: **Վա** հոլովումն ունի գործածության ոլորտի որոշակի սահմանափակումներ: Օրինակ՝ ասում ենք՝ **Նա եկավ կեսգիշերին**, բայց ոչ՝ **Նա եկավ կեսգիշերվան. Հարցը տրվեց ճիշտ ժամանակին**, բայց ոչ՝ **ժամանակվան**:

Ժամանակ ցույց տվող բառերից **դար**-ը ենթարկվում է **ի** հոլովման. երբեմն հանդիպում է **դարու** ձևը, որը նույնպես հնաբանություն է և գործածվում է հիմնականում խոսքը ոճավորելու նպատակով:

Նախախորհրդային շրջանի գրական լեզվում **վա** հոլովիչին զուգահեռաբար գործածվել է նաև **վան** հոլովիչը. այս մասին գրում է Ս. Պալասանյանը, նշում է Մ. Աբեղյանը: Սակայն **ուան (վան)** վերջավորության **ն**-ն հաճախ ընկել է: Խորհրդային շրջանում **վան**-ով ձևերը դարձան ոչ գրական և լրացրին բարբառային «լեզուն», իսկ

վա հոլովումը պահպանվեց: Երբեմն-երբեմն բարբառային, ժողովրդական լեզվից գրական լեզվի մեջ են թափանցում **վան**-ով ձևեր, և **գիշերվա // գիշերվան, օրվա // օրվան** և նման զուգաձևություններում երկրորդները բարբառային են և գրական լեզվի համար «մեռած» ձևեր: **Մահ** բառը ժամանակակից հայերենում **վան** հոլովման պատկանող միակ բառն է: **Մահ** բառի կանոնական ձևն է **մահվան**: **Մահվան // մահի // մահու** եռաձևության մեջ գրական նորմով սահմանվածը ավանդական ձևն է՝ **մահվան**, երկրորդ տարբերակը լեզվի զարգացման ներքին միտման արդյունքն է և կանոնական դառնալու ճանապարհին է, իսկ երրորդը հնացած է և ոչ հանձնարարելի: **Մահու, մահի** տարբերակները գործառական սահմանափակում ունեն:

Ձևաբանական-գոյականական նորմը սահմանում է՝ <u>**ա** հոլովման ենթարկվում են.</u>

1. <u>**Ություն ածանցով** կազմված գոյականները.</u>
2. <u>**Տուն, շուն, ձյուն, սյուն, արյուն, անկյուն** գոյականները.</u>
3. <u>**Անուն** բառը, որի սեռականը կազմվում է **ն**-ից առաջ ավելացնելով **ա** ձայնավորը, և դրա հետևանքով **ա** ձայնավորը դառնում է **վ**:</u>

Ա ներքին հոլովման պատկանող բառերից **–յուն** վերջնամասն ունեցող բառերն են տարբերակային ձևեր կազմում՝ **անկյան // անկյունի, ձյան // ձյունի, սյան // սյունի, արյան // արյունի**..., որոնք հավասարապես հանդիպում են գրական լեզվում և ձևաբանական կանոնական համազոր տարբերակներ են: **Անվան // անունի** զուգաձևության մեջ երկրորդը գրականանում է: Գրական լեզվում երբեմն-երբեմն հադիպող **ձնի, սնի, արնի** տարբերակները խոսակցական են և ոչ հանձնարարելի: Եթե նախկինում անխախտ օրենք էր **ություն** ածանցն ունեցողների՝ միայն **ա** ներքին հոլովման ենթարկվելը, ապա մեր օրերի խոսակցական լեզվում սրանք սկսել են նաև **ի**-ով հոլովվել (**ուսանողության – ուսանողությունի**), և առաջացող տարբերակները սովորական չեն, գրական լեզվում անհանձնարարելի են:

Ո ներքին հոլովման պատկանող սակավաթիվ բառերը զուգահեռ տարբերակներ չունեն: Միայն երբեմն խոսակցական լեզվում հանդիպում են նրանցով բաղադրված բառերի զուգաձևություններ՝

հորեղբոր // հորեղբայրի, կնքահոր // կնքահայրի ձևերը՝ այն էլ հիմնականում խնդրառական կիրառությամբ **ն** հոդի զուգորդությամբ՝ **հորեղբորը // հորեղբայրին, վանահորը // վանահայրին, կնքահորը // կնքահայրին**:

Ժամանակակից հայերենում հակահամակարգային է, բայց կանոնական է միայն **սեր** /զգացմունք» իմաստով/ բառի **ո**-ով սեռական հոլովաձևը՝ **սիրո**, որը երևի պահպանվել է **սեր** համանուն բառի սեռական հոլովաձևից տարբերակելու համար: **Աստված** բառի **Աստծո // Աստծու // Աստվածի** եռաձևության մեջ նորմով սահմանվածը **ու** հոլովիչով ձևն է, առաջին տարբերակը հնացած է և **ո** արտաքին հոլովման մնացուկ, իսկ երրորդ տարբերակը նորաձևություն է և առայժմ քիչ հանդիպող:

Ց հոլովումը հոգնակի թվի հոլովում է, որին ենթարկվում են **-ենք, -անք, -ոնք, -ունք** հավաքական մասնիկներով վերջավորվող և **մարդ, կին, տիկին** բառերի հոգնակիները՝ **մարդիկ, կանայք, տիկնայք** գոյականները: Այս առումով ձևաբանական նորմից շեղումներ չկան, միայն **տիկնանց // տիկինների** զուգաձևությունն է սովորական, որում առաջինը հնավանդ ձև է և կիրառական-ոճական նկատելի տարբերություններ ունի երկրորդի համեմատությամբ. զուգաձևության գոյությունը պայմանավորված է ուղիղ ձևերի զուգաձևությամբ՝ **տիկնայք // տիկիններ**: Ժողովրդախոսակցական լեզվում **ց**-ով են հոլովվում նաև հոգնակին **ք**-ով կազմող մի շարք բառեր, և զուգաձևություններ են առաջանում գրական-ժողովրդախոսակցական հակադրությամբ՝ **գյուղացների // գյուղացոց, աղջիկների // աղջկերանց, տղաների // տղերանց, երեխաների // երեխոց.** երկրորդ տարբերակները խորթ ու մերժելի են գրական լեզվի համար:

Զուգաձևությունները բացառական, գործիական հոլովներում

Զուգաձևություններ դրսևորվում են նաև բացառական, գործիական հոլովներում:

Չևաբանական նորմը սահմանում է, որ բացառական հոլովը կազմվում է **ից** և **ուց** վերջավորություններով, ըստ որում **ուց** են ստանում **ու** հոլովման պատկանող բառերը, **ից** են ստանում մյուս հոլովումներին պատկանող բառերը: Այն բառերը, որոնք սեռական-տրականում զուգաձևություն են դրսևորում, բացառական հոլովում ևս այդպիսին են: Բացառական հոլովը կազմվում է ուղղականից կամ սեռական-տրականից: Զուգաձևություններ առաջանում են այն դեպքում, երբ որոշ բառերի բացառական հոլովը կազմվում է և՛ ուղղականից, և՛ սեռական-տրականից: Ժամանակ ցույց տվող բառերը բացառականում զուգաձևություններ ունեն, քանի որ այդպիսին են նաև սեռական-տրական հոլովի կազմության ժամանակ՝ **օրից // օրվանից, ամսից // ամսվանից, ժամանակից // ժամանակվանից, շաբաթից // շաբաթվանից**. այսինքն՝ բացառական հոլովը կազմվում է երկու հիմքերից էլ, և ժամանակ ցույց տվող բառերի բացառականի երկու հիմքերից որևէ մեկով կազմվելը պատահական չէ, այլ պայմանավորված է իմաստային ու կիրառական որոշ նուրբ տարբերությամբ. երբ բառը գործածվում է ժամանակի պարագայի իմաստով և պատասխանում է **ե՞րբ, երբվանի՞ց** հարցերին, բացառականը սովորաբար կազմվում է տրականի հիմքով (**օրվանից, ամսվանից, շաբաթվանից, գիշերվանից, առավոտվանից, կեսօրվանից**), իսկ երբ ժամանակի անունը վերցվում է սոսկ ժամանակի միավոր և ունենում է թվականով կամ չափ ցույց տվող այլ բառերով արտահայտված որոշիչներ, բացառականը կազմվում է ուղղական հիմքով (**օրից, ամսից, շաբաթից, գիշերից, առավոտից, կեսօրից**):

Եթե **ամսվանից // ամսից, ժամանակվանից // ժամանակից** զուգաձևությունները գրական նորմի սահմաններում են, ապա **գիշերից, առավոտից, կեսօրից** ձևերը առավելապես խոսակցական երանգ ունեն:

Տարվանից // տարուց ձևերի մեջ իմաստային կիրառության որոշ տարբերություն կա: Տրական հիմքով կազմված ձևը (տարվա+ն+ից) սովորաբար գործածվում է այն դեպքում, երբ բառաձևը հանդես է գալիս որպես ժամանակային սկզբնակետ ցույց տվող ժամանակի պարագա և գործածվում է ցուցականություն արտահայտող բառերի հետ: Օրինակ՝ «Անցյալ տարվանից ոչ մի լուր չունի»: Իսկ երբ բառը գործածվում է սոսկ որպես ժամանակի միավորի անուն և դրվում է չափ ու քանակ ցույց տվող բառերի հետ, այս դեպքում բացառականը կազմվում է ուղղականի հիմքով. «Երկու տարուց ավելի է, որ չի տեսել որդուն»:

Ընկերոջից // ընկերից, տալոջից // տալից, տիրոջից // տերից զուգաձևություններում գրական են առաջին տարբերակները:

Որոշ դեպքերում բացառականի համար ստացվում են **ուց // ից** զուգաձևություններ, ինչպես օրինակ՝ **այրուց // այրիից, մատանուց // մատանիից, պատանուց // պատանիից**: **Ի**-ով վերջացող հատուկ անունները ևս այս հոլովում կազմում են զուգաձևություններ՝ **Գորկուց // Գորկիից, Մեղրուց // Մեղրիից, Լոռուց // Լոռիից, Անուց // Անիից** և այլն:

Բացառական հոլովում զուգաձևություններ ունեն նաև **ան** հոլովման պատկանող այն բառերը, որոնք գրաբարում ունեին **ն** վերջնահնչյունը: Եթե **դռից // դռնից** զուգաձևության մեջ գրական է **դռնից** տարբերակը, իսկ **դռից** ձևը խոսակցական լեզվում է կիրառելի, ապա **ան** հոլովման պատկանող մյուս միավանկ բառերի **ն**-ով բացառականի ձևերը, որ կանոնական էին անցյալ դարի սկզբներին, այսօր հնաբանություններ են: **Թոռից // թոռնից, ձկից // ձկնից, մկից // մկնից, լեռից // լեռնից, նռից // նռնից** զուգաձևություններում երկրորդները հնաբանություններ են և սակավադեպ են:

Տարբեր հիմքերով է կազմվում նաև **գարուն, աշուն** բառերի բացառականը՝ **գարունից // գարնանից, աշունից // աշնանից**. առաջինները հազվադեպ են հանդիպում: **Ամառ** և **ձմեռ** բառերը զուգաձևություններ են կազմում **ան** և **վա** հոլովմամբ հոլովվելիս՝ **ամառվանից // ամռանից, ձմեռվանից // ձմռանից:**

Ժամանակակից հայերենում գործիական հոլովը կազմվում է **ով** և **բ** վերջավորություններով: **Բ** ձևույթը զուգորդվում է **ա** ներքին հոլովման պատկանող, հատկապես **–ություն** և **-յուն** վերջնամասն

ունեցող բառերին, մասամբ նաև **ան** հոլովման պատկանող **ում** ածանց ունեցող բառերին:

Երբեմն նույն բառի գործիականը ձևավորվում է և՛ ուղղականի, և սեռականի հիմքին ավելացնելով **ով՝ ընկերոջով // ընկերով, աներոջով // աներով, տիրոջով // տիրով // տերով, հորով // հայրով**... Նման զուգաձևություններում հանձնարարելի են առաջին եզրերը:

Ով վերջավորությամբ զուգահեռ ձևեր ունեն նաև **-ություն** ածանցն ունեցող բառերը՝ **օգնությամբ // օգնությունով, շինությամբ // շինությունով, քաջությամբ // քաջությունով**: Երկրորդները առավելապես ժողովրդախոսակցական երանգ ունեն. գրական լեզվում ձևաբանական նորմով սահմանվածները **բ**-ով ձևերն են:

ՈՒմ վերջածանցն ունեցող բառերի գործիականը զուգահեռաբար կազմվում է նաև **-ով**-ով: Այս երևույթը ևս կապված է հիշյալ բառերի նաև **ի** հոլովիչով հոլովվելու հետ: Այսպիսով՝ ստեղծվում են զուգաձևություններ, որոնք տարբերվում են և՛ վերջավորությամբ, և՛ հոլովական հիմքով /ուղղական և տրականի/, ինչպես օրինակ՝ **շարժմամբ // շարժումով, ուսմամբ // ուսումով, ծագմամբ // ծագումով**... Սրանցում լեզվական նորմով սահմանվածները առաջիններն են, բայց տարածված են երկրորդները. պատճառը համաբանության օրենքի գործառությունն է, նաև դյուրահունչ լինելը. ներկա ժամանակաշրջանում ավանդական ձևերի գործածության շրջանակները գնալով նեղանում են:

Երբ գործիականը կազմվում է ուղղականից՝ **ով**-ի հավելմամբ, սովորաբար զուգաձևություններ չեն լինում: Միայն **ի**-ով վերջացող **ու** հոլովման ենթարկվող բառերի դեպքում ուղղականի **ի**-ն կարող է ընկնել՝ ստեղծելով զուգաձևություններ, ինչպես օրինակ՝ **ոսկով // ոսկիով, գինով // գինիով, որդով // որդիով** և այլն: Սրանք հնչյունափոխական-ձևաբանական զուգաձևություններ են՝ կանոնական համազոր տարբերակներով: Այս զուգաձևություններից երևում է, որ կա որոշակի միտում՝ գործիականում պահպանելու բառավերջի **ի**-ն: Օրինակ՝ **լոռեցիով // լոռեցով, վանեցիով // վանեցով, ղարաբաղցիով // ղարաբաղցով, բանալիով // բանալով, հայուհիով // հայուհով, Բաֆֆիով // Բաֆֆով** և նման զուգաձևություններում գերադասելի են **ի**-ով՝ առաջին տարբերակները: Երբ սղման հետևան-

քով առաջանում են համանուններ, ապա իմաստային շփոթից խուսափելու համար նախապատվությունը տրվում է **ի**-ով ձևերին՝ **որդ-որդով**, բայց **որդի-որդիով**, կամ **այգ-այգով**, բայց **այգի-այգիով** և այլն:

Գործիական հոլովում զուգահեռ ձևեր ունեն նաև **ան** հոլովման պատկանող այն միավանկ բառերը, որոնք գրաբարում **ն** վերջնահնչյունն են ունեցել՝ **դռով // դռնով, լեռով // լեռնով, նռով // նռնով, բեռով // բեռնով**: Մերօրյա հայերենում **ն**-ով ձևերը հնացած են, և միտումը **ն**-ի ընկնելն է: Այժմ, որպես կանոն, **ն** վերջնահնչյունը վերականգնվում է հոգնակի թվի կազմության ժամանակ (բացառությամբ **սերմ, անձ, մաս** գոյականների):

Հնչյունաբանական-ձևաբանական զուգաձևություններ պետք է համարել **ծունկով // ծնկով, նուռով // նռով, ձուկով // ձկով** և նման միավանկ բառերի անհնչյունափոխ և հնչյունափոխված հիմքերի զուգորդումները:

Հույսով // հուսով զուգաձևության մեջ եզրերը կիրառական տարբերություն ունեն. առանձնաբար գործածվելիս **հույսով** ձևն է ճիշտ (**հույսով սպասել**), իսկ **եմ**-ի հետ զուգակցվելիս ավանդական **հուսով** տարբերակն է հանձնարարելի՝ **հուսով եմ**...:

Ու հոլովման պատկանող **ամուսին** և **անկողին** բառերի գործիականի չհնչյունափոխված գործածություններ են հանդիպում՝ **անկողինով, ամուսինով**, որոնք օրինաչափական չեն: Օրինաչափական են **անկողնով, ամուսնով** ձևերը: **Գարուն** և **աշուն** բառերը ևս զուգահեռ ձևեր ունեն՝ **գարունով // գարնանով, աշունով // աշնանով**:

Ժամանակ ցույց տվող բառերի գործիականը կազմվում է հիմնականում ուղղականի հիմքով, իսկ **գիշերով // գիշերվանով, ցերեկով // ցերեկվանով, շաբաթով // շաբաթվանով, օրով // օրվանով**... զուգաձևություններում երկրորդ եզրերն արդեն ժամանակ ցույց չեն տալիս, և Ս. Աբրահամյանը դրանք անվանում է «սեռականի փոխանուն գործիականներ». «Դա է պատճառը, որ ժամանակի իմաստ ունեցող այդ բառերը գործիականի նշված ձևերում ժամանակ չեն ցույց տալիս ու պատասխանում են **ինչո՞վ** հարցին: Դրանք նշանակում են «ցերեկվա, գիշերվա, առավոտվա (ցերեկը, գիշերը,

առավոտյան եղող, կատարվող) բանով»: Ասենք, գիշերվա գնացքով գնացել է, առավոտվանով վերադարձել» (8, էջ 75):

Զուգաձևությունները ներգոյական հոլովում

Լեզվական կանոնն ասում է՝ ներգոյական հոլովը ցույց է տալիս այն տեղը, որտեղ կամ որի ներսում կատարվում է գործողությունը: Ներգոյական հոլովը ցույց է տալիս նաև այն ժամանակամիջոցը, որի ընթացքում կատարվում է գործողությունը (13, էջ 49):

Ներգոյական հոլովը կիրառական-ծավալային սահմանափակություն ունի. խիստ առարկայական է: Ժամանակակից հայերենը, որը չունի չհոլովվող գոյականներ, ունի բառերի մի խումբ, որի ներգոյական հոլովը սովորական չէ: Ըստ ձևաբանական նորմի՝ ժամանակակից հայերենում ներգոյական հոլովը, բառիմաստով պայմանավորված, ունի երկու ձև համադրական (**-ում** ձևույթով) և վերլուծական (**մեջ** կապի հարադրությամբ). անձերի ու կենդանիների հատուկ և հասարակ անունների, վերացական գոյականների մեծ մասի, **-ում**-ով կազմված բայանունների, **-ություն** ածանցով կազմված հավաքականների ներգոյական հոլովը կազմվում է վերլուծական ձևով: Ներգոյական հոլովում զուգաձևություններ են առաջանում, երբ **ի**-ով վերջացող բառերի **ի**-ն ներգոյական հոլովի համադրական կազմության ժամանակ կարող է պահպանվել կամ չպահպանվել, օրինակ **այգում // այգիում**, **կղզում // կղզիում**. սրանք հնչյունափոխական-ձևաբանական զուգաձևություններ են:

Միևնույն գոյականը շատ հաճախ ունի ներգոյականի կազմության այս երկու ձևերն էլ: Նորից տեղին է հիշել՝ երբ մի քերականական իմաստն արտահայտելու համար կա երկու ձև, արդեն մեկն ավելորդ է՝ դատապարտված «մահվան», կամ էլ պետք է վերաիմաստավորվի: Բնականաբար գոյականների այն խումբը, որի ներգոյականն ունի երկու տարբերակներ զուգահեռաբար, սովորաբար իմաստային տարբերակվածություն ունեն: Ներգոյական հոլովի համադրական և վերլուծական ձևերը տարբերակներ են, որոնք իմաստային հակադրություն են ստեղծում մի կողմից՝ շնչավորների և անշունչների դասերի միջև, մյուս կողմից՝ սահմանափակման և

ներփակման հոլովական իմաստների. Աղայանը գրում է. «Առաջինի՝ բուն ներգոյականի իմաստը մենք անվանել ենք **սահմանափակման** իմաստ, ուստի և երկրորդինը՝ վերլուծական ներգոյականին էլ կկոչենք **ներփակման** իմաստ: Այսպիսով, այն բոլոր դեպքերում, երբ ներգոյականն ունենում է երկու տարբերակները զուգահեռաբար, ապա դրանք հակադրություն են կազմում սահմանափակման և ներփակման իմաստներով:» (14, էջ 300-301): Սահմանափակման և ներփակման իմաստային տարբերակվածություն ունեն **քաղաքում // քաղաքի մեջ, ջրում // ջրի մեջ, այգում // այգու մեջ, գյուղում // գյուղի մեջ, գործարանում // գործարանի մեջ, դպրոցում // դպրոցի մեջ** և նման զուգաձևություններն այն առումով, որ առաջինները ցույց են տալիս, որ գործողությունը կատարվում է նշված տեղերի սահմանների ընդգրկումով, իսկ երկրորդները՝ նշված տեղերի ներսում, նրա մեջ: Ըստ որում ժամանակի ներգոյականի դեպքում իմաստային այս տարբերությունը ցայտուն չէ՝ **գիշերում // գիշերվա մեջ, օրում // օրվա մեջ, ամսում // ամսվա մեջ, շաբաթում // շաբաթվա մեջ:** Այս զուգաձևությունները գրական նորմի շրջանակներում են, զուտ ձևաբանական զուգաձևություններ են, կանոնական և համազոր: Մերօրյա հայերենում նկատելի է **ում**-ով ներգոյականի գործածության սահմանների ընդարձակում՝ հատկապես ի հաշիվ **–ություն** ածանցն ունեցող բառերի. **գիտությունում // գիտության մեջ, արտադրությունում // արտադրության մեջ, ուսանողությունում // ուսանողության մեջ** զուգաձևություններում առաջինները լեզվի զարգացման ներկա շրջանում պետք է համարել նորմի խախտում այնքանով, որչափով դասագրքերում և նորմատիվ քերականություններում լեզվական օրենքը սահմանում է. «<u>Անձերի, կենդանիների հատուկ ու հասարակ անունները, ինչպես և -ություն (քաջություն, բանվորություն), -ում (շարժում, ուշացում) ածանցներով կազմված բառերը ներգոյականի իմաստն արտահայտում են սեռական հոլովով ու մեջ բառով</u>» (13, էջ 49): Կամ՝ «<u>Ոչ բոլոր գոյականներն ունեն ներգոյական հոլովաձև: Դրանք են՝ 1. Անձ ցույց տվող, 2. -ություն, -եղեն ածանցներով կազմված և մի շարք այլ տիպի բառեր...</u>» (61, էջ 69): Նոր ձևերի գոյությունը հիշատակում է Գ. Սևակը. «Վերջին տարիներս նկատվում է **յան** հոլովման ենթարկվող բառերի ներգոյական գործածությունը սովորական **ում** վերջավորությամբ,

որ բավական անսովոր ձև է առայժմ, օրինակ՝ հեղափոխությունում, կոլտնտեսությունում» (110, էջ 268): Որպես հետևություն կարող ենք ասել, որ նախկինում «բավական անսովոր» նման ձևերի աշխուժացումը «լեզվական» ուշադրություն է պահանջում և կանոն դառնալու միտում է սկզբնավորում:

Տան մեջ // տնում զուգաձևության մեջ **տուն** բառի ներգոյականի համադրական ձևը՝ **տնում**, գրեթե չի հանդիպում, գործածական է առաջին տարբերակը. ներգոյականի իմաստով ավելի սովորական է **տանը** ձևը:

Պատահում է, որ նահանջում է ոչ թե այս կամ այն բառը, այլ բառի որևէ ձևը, և նրան փոխարինում է մեկ ուրիշը: Այսպես՝ վերջին ժամանակներում նահանջում են **փողոցում, հրապարակում, խաչմերուկում** ներգոյական ձևերը, որոնց համառորեն փոխարինելու են գալիս սեռական հոլովի և **վրա** կապի զուգորդված ձևը, և արդյունքում ձևաբանական-շարահյուսական ոչ կանոնական զուգաձևություններ են՝ **հրապարակում // հրապարակի վրա, փողոցում // փողոցի վրա, խաչմերուկում // խաչմերուկի վրա, աշխարհում // աշխարհի վրա, անկյունում // անկյունի վրա,** ուր երկրորդների գոյություն լեզվախախտում է և խաթարում է մեր լեզուն: Այս առումով, հաշվի առնելով գործածական հաճախականությունը, որոշվել է ճիշտ ձևեր համարել **ում**-ով տարբերակները, իսկ երկրորդները՝ ոչ հանձնարարելի:

Հնչյունափոխական զուգաձևություններ

Չևակազմության հարցում անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում պահել նաև բառաձևերի գրական հնչյունափոխությունը: Այնպես որ բառերի ճիշտ ձևերի պահպանման հարցում կարևոր է դառնում ոչ միայն հիմքի և վերջավորության ճիշտ որոշումը, այլև բառաձևի հիմքի հնչյունական կազմի, հնչյունափոխության օրինաչափությունների պահպանումը: Գոյականական-հնչյունական զուգաձևություններ կարելի է համարել միևնույն բառի հնչյունափոխված և անհնչյունափոխ հիմքերի համագոյակցումը:

Եթե գրաբարյան լեզվական նորմը սահմանում է, որ հնչյունների փոփոխությունը օրինաչափական է թե՛ բառակազմության, թե՛ հոլովման ժամանակ, թե՛ հոգնակին կազմելիս, ապա ժամանակակից հայերենը նախընտրում է հոլովելիս չհնչյունափոխել: Միաժամանակ ավանդականության ուժով շատ բառեր շարունակում են հնչյունափոխվել: Այսպես՝ շարունակաբար իրար կողքի գոյատևում են և թույլատրելի տարբերակներ են **կոշկի // կոշիկի, ծաղկի // ծաղիկի, հովտի // հովիտի, նարնջի // նարինջի, կամրջի // կամուրջի, գրչի // գրիչի, ոճրի // ոճիրի, թռչնի // թռչունի, փոթորկի // փոթորիկի, կտցի // կտուցի, բլրի // բլուրի, բջջի // բջիջի, ուսուցչի // ուսուցիչի, ժողովրդի // ժողովուրդի, խորհրդի // խորհուրդի, պտղի // պտուղի** և նման զուգահեռ ձևերը: Դժվար չէ նկատել, որ հարցը հոլովման ժամանակ **ու** և **ի** հնչյունների փոփոխությանն է վերաբերում: Սակայն միտումն ակնհայտ է՝ հնչյունափոխված ձևերը աստիճանաբար տեղի են տալիս անհնչյունափոխ ձևերին, մանավանդ որ նմանատիպ շատ բառեր (**ի** և **ու** վերջնաձայնավոր ունեցող) չեն փոփոխվում (**հատիկի, տիկնիկի, խանութի, մատուռի, գաղտնիքի, ծերուկի...**): Նշված զուգահեռ ձևերից առավել օրինաչափականը հնչյունափոխված ձևն է՝ կարճը: Սովորաբար կարճը երկարից միշտ գերադասելի է, որովհետև կենդանի լեզուն միշտ կարճն է ընտրում: 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին հնչյունափոխված ձևերի կողքին զուգահեռաբար սկսեցին գործածվել անհնչյունափոխ ձևերը՝ **ակումբի, դահլիճի, մատնիչի, մրրիկի**, որոնք սկզբնապես համարվեցին ոչ հանձնարարելի ձևեր: Ժամանակի ընթացքում արմատավորվեցին և, չունենալով որևէ հուզաարտահայտչական կամ իմաստային ծանրաբեռնվածություն, դարձան համազոր և ազատ զուգաձևեր՝ փոխարինելով մեկը մյուսին: Այնուհետև տարբերակների հավասարակշռությունը խախտվում է ի օգուտ անհնչյունափոխ ձևերի, հաճախանում է նրանց գործածությունը, և այսօր սրանք համարվում են հանձնարարելի, ճիշտ ձևեր: Անցյալում գործածված հնչյունափոխ ձևերի փոխարեն այժմ մի շարք դեպքերում սովորական են դառնում անհնչյունափոխ ձևերը՝ **կավ-**

ճի // կավիճի, կոշկի // կոշիկի, մթի // մութի և այլն: Բազմաթիվ օրինակներ կարելի է բերել թեք հոլովաձևերից, որոնք կազմված են հնչյունափոխված և անհնչյունափոխ ձևերից (**արյունով // արնով, ալյուրով // ալրով**):

Համանման դեպքերում մեծ մասամբ հնչյունափոխությունն այժմ էլ կատարվում է և օրինաչափական է, (ինչպես՝ **հանգստի, բնի, սրտի, ծրագրի, ջրի, գրքի**). այստեղ նաև ավանդականությունը դեր ունի. այն բառերը կամ բառաձևերը, որոնց հնչյունափոխված ձևով օգտագործելն է հնուց ի վեր ընդունված եղել, այժմ էլ իրենց այդ ձևը ավանդաբար պահպանում են, ուստի և որևէ կանոնով սահմանազատել այս բառերի հնչյունափոխված և անհնչյունափոխ ձևերը հնարավոր չէ: Երբեմն միևնույն բնույթի տարբեր բառերից մեկը չի հնչյունափոխվում, մյուսը հնչյունափոխվում է, ինչպես օրինակ **դեղին** և **կարմիր** բառերը. գոյականաբար գործածվելիս սրանցից առաջինը սովորաբար չի հնչյունափոխվում (**դեղինի**), իսկ մյուսի համար օրինաչափական է հնչյունափոխված ձևը (**կարմրի, կարմրից, կարմրով**, թեև կան **կարմիրի, կարմիրից, կարմիրով** ձևերը): Չպետք է մոռանալ, որ այսօր միտում կա չհնչյունափոխվելու... Մեր օրերի հայերենը նախընտրում է հոլովվելիս չհնչյունափոխվել:

Հնչյունափոխ և անհնչյունափոխ տարբերակներով կամ ձևակներով ձևավորված զուգաձևությունները կարող են ներկայանալ նաև գրական // ոչ գրական արտահայտությամբ՝ **լույսի // լուսո // լուսի // լսի, ձյան // ձյունի // ձնի, ալյուրի // ալրի, արյան // արյունի // արունի // արնի, բերանի // բերնի** բազմաձևություններում ձևաբանական նորմի տեսակետից ընդունելի են **լույսի** և **լուսո, ձյան** և **ձյունի, ալյուրի, արյան** և **արյունի, բերանի** ձևակները, իսկ **լուսի** և **լսի, ձնի, ալրի, արունի** և **արնի, բերնի** ձևակները հատուկ են ժողովրդախոսակցական լեզվին և գրական լեզվի համար կանոնական չեն:

Լեզվում առաջացած ամեն մի փոփոխություն ենթադրում է լեզվական իրողությունների ժամանակավոր համագոյակցություն,

ուստի նորմի սահմաններում այս կարգի տարբերակների գոյությունը օրինաչափ է և անխուսափելի: Այսպես՝ համազոր, ազատ տարբերակներ են **գեղեցիկի // գեղեցկի, որոշիչի // որոշչի, շուրթի // շրթի, քուրդի // քրդի, սերունդի // սերնդի, պտուղի // պտղի, կոշիկի // կոշկի, ծաղիկի // ծաղկի** զուգաձևությունների եզրերը: Սրանց ընտրության հարցում որևէ կանոն չկա. միայն լեզվական փորձն ու զգացողությունը, պատեհությունը կարող են ուղենիշ դառնալ: Երբեմն էլ ընտրությունն «ինքնահոսի է մատնվում»: Նման դեպքերի մասին է է. Աղայանը գրում (տողատակում). «Հաճախ լեզվական փորձն ու զգացողությունն էլ չեն օգնում. այս աշխատության մեքենագրությունը կարդալիս նկատեցինք, որ **սերունդ** բառի համար գործածել ենք **սերնդի** և **սերունդի** ձևերը և միօրինակություն ստեղծեցինք՝ ամենուրեք պահելով երկրորդը: Նորը հաղթում է» (14, էջ 238): Բնականաբար, սրանցից մեկը պետք է ժամանակի թելադրանքով դուրս գա, և միաձևություն սահմանվի: Բացառված չէ, որ որոշ տարբերակներ իմաստային «օտարացում» կապրեն և առանձնաբար բառային տարբեր միավորներ կդառնան. օրինակ՝ նրբիմաստային և կիրառական տարբերություններ է նկատվում **խորհրդի // խորհուրդի** զուգաձևության մեջ: Հնչյունափոխական այսպիսի անմիօրինակություններից կարելի է հանգել մի եզրակացության. պետք է զարգացնել լեզվազգացողությունն այն հաշվով, որ կարողանանք զգալ գրական լեզվի արդի էտապում օրինաչափականն ու ընդունելին, մերժել անօրինաչափականը և անընդունելին: Սովորաբար նման իրադրության մեջ ընտրությունը նորի կողմն է, զարգացման միտումի կողմն է, եթե նորի ընտրությունը նորի հաղթանակի միտում ունի... «**Խորհրդի – խորհուրդի, ժողովրդի – ժողովուրդի** ձևերն այսօր գրեթե հավասարապես ընդունելի են (առաջին զույգի մեջ այժմ կարծես թե կիրառության տարբերություն է նկատվում: Հմմտ. **խորհրդի** նիստ – **խորհուրդին** դիմել): Սակայն «խորհրդներ, «ժողովրդներ» կամ «դստրեր» ձևերն ընդունված չեն (խորհուրդներ, ժողովուրդներ, դուստրեր): Չամիչի, համալիրի, խառնուրդի, հա-

վելՈՒրդով, ալյՅՈՒրից, արՅՈՒնով, ռՈՒսի, «ԶՒլ»-ի (ոչ թե «ռսի, Զլի») և նման շատերում անհնչյունափոխ ձևերն են միայն ճիշտ:

Վերևում նշված զուգաձևությունների «զտումը» լեզվի մեջ այսօր դեռևս շարունակվում է, սակայն հոլովման մեջ չհնչյունափոխվելու միտումը որոշակի է», - գրում է Պ. Բեդիրյանը: (41, էջ 17):

Հոլովական համակարգի զուգաձևությունները, բացի ոճական և նրբիմաստային տարբերություններից, մի շարք դեպքերում հանդես են բերում կապակցման տարբերություններ: Այսպես **մահ** բառի սեռական-տրական հոլովով եռաձևության տարբերակները՝ **մահու // մահի // մահվան**, կիրառելի են տարբեր կապակցությունների մեջ՝ ինչպես՝ **մահու չափ, մահվան դուռը հասնել, մահի առաջ կանգնել: Սուգ** բառի սեռականի **սգո** ձևը կիրառելի է միայն որոշ կապակցություններում, օրինակ՝ **սգո միտինգ, սգո հանդես,** բայց՝ **սգի մեջ լինել:**

Հոլովման մեջ մի օրինաչափություն էլ կա, որն առավելապես կապվում է ուղղագրության հետ, բայց որի անտեսումը ձևաբանական-գոյականական նորմում բացթողում կորակվի. տրական հոլովի (նաև մյուս հոլովների) կազմության ժամանակ եթե հիմքը վերջավորվում է որևէ ձայնավորով, ապա դրա և վերջավորության ձայնավորի միջև արտասանվում է **յ** ձայնակապը. արտասանական-ուղղախոսական նորմում տարբերակայնություն չկա, իսկ հայերենի ուղղագրական նորմի համաձայն՝ **յ** ձայնակապը գրվում է միայն **ա** և **ո** ձայնավորներից հետո (յ-ն որևէ ձևաբանական դեր չունի և կարող է միայն ներույթ համարվել): Բնականաբար «ա+յ» և «ո+յ» հնչյունակապակցությունների առանց յ-ի ձևերը ուղղագրական սխալներ են, և դրան հակառակ՝ **ե, ու, ի** ձայնավորներից հետո լսվող յ-ն գրելը սխալ է:

Այս ամենից հետո կարող ենք ասել, որ, լեզվի՝ դեպի կատարելություն գնալու ճանապարհին, հավանաբար, գնալով կմիասնականանա հոլովման համակարգը. գրաբարյան հոլովման մնացորդները կջնջվեն կամ գոնե եզակի ձևեր կմնան: Միակերպության

ձգտումը շատ զուգաձևությունների լուծման բանալին կդառնա... Ի ընդհանրական հոլովումը ընդհանրանանալու միտում ունի...

Բ. Զուգաձևությունները թվի քերականական կարգում

Գոյականի թվակարգի հիմքում ընկած է առարկաների քանակային հարաբերության հատկանիշը. թվի քերականական կարգը ցույց է տալիս առարկաների քանակը, թիվը, մեկ կամ մեկից ավելի լինելը, ուստի և արտահայտվում է եզակիի (մեկի) և հոգնակիի (երկուսի և ավելիի) հակադրությամբ: Յուրաքանչյուր հակադիր եզր բնորոշվում է ձևաբանական, իմաստաբանական և այլ առանձնահատկություններով:

Հայոց գրավոր լեզվի պատմության ընթացքում, ըստ մոտավոր հաշվարկների, գործածվել են 425-430 հոգնակերտ մասնիկներ (գրաբարում՝ մոտավորապես 34-ը, միջին գրական հայերենում՝ 82-ը, բարբառներում՝ 331-ը, արևմտյան գրական աշխարհաբարում՝ 37-ը, արևելահայ գրական աշխարհաբարում՝ 28-ը): Ժամանակակից հայերենում դրանք են՝ **-եր, -ներ, -ք, -իկ,** որն էլ վկայում է, որ թվակազմության հարցում հայերենը միտում ունի վերացնելու բազմամասնիկությունը, ավելին՝ այն աստիճանաբար միօրինակացվում է, քանի որ այսօր բառերի ճնշող մեծամասնության հոգնակի թիվը կազմվում է **-եր**-ով կամ **–ներ**-ով, որոնք զուգորդվում են հայերենի հիմնական՝ ընդհանրական հոլովիչի՝ **ի**-ի հետ, հոդառության սահմանափակություն չունեն, նաև ոճականորեն չեզոք են, հետևաբար՝ մյուսների համեմատությամբ ավելի գործուն և ընդհանրացված տիպեր են:

Նորմատիվ քերականություններում, դասագրքերում մատնանշվում է, որ <u>հոգնակի թվի կազմությունն իրականացվում է վանկաքանակության սկզբունքով, այսինքն՝ միավանկ բառերի հոգնակին կազմելու համար ավելացնում ենք -եր, իսկ բազմավանկ բառերի</u>

հոգնակին կազմելու համար՝ -ներ հոգնակերտները: Սա լեզվական նորմով սահմանված օրինաչափություն է: Միավանկ և բազմավանկ բառերի՝ տարբեր հոգնակիակերտ մասնիկներ ստանալը ոչ թե պատահական երևույթ է, այլ մարդկանց գիտակցության մեջ միավանկ և բազմավանկ բառերի տարբեր ըմբռնման արդյունք: Ժամանակակից գրական հայերենում միավանկ և բազմավանկ բառերը հոգնակիի կազմությամբ ձևաբանական տեսակետից տարբեր միավորներ են: Ուրեմն և տարբեր ձևերով էլ պետք է կազմվեին: Սակայն ժամանակակից գրական հայերենը, չնայած միօրինականալու միտումին, քվակազմության մեջ ևս ունի որոշ հակասություններ, շեղումներ, որոնք առաջանում են համակարգային կառույցների մեջ հակահամակարգային կառույցների ներթափանցմամբ (**տիկիններ-տիկնայք**), սովորական ձևերին զուգահեռ հնաբանությունների օգտագործմամբ (**գյուղացիներ -գյուղացիք**), հնչյունափոխ և անհնչյունափոխ հիմքակազմությունների փոխանցումներով (**ձեռագրեր-ձեռագիրներ**), բարդության ուրույն իմաստավորման հետ կապված՝ **-եր** կամ **–ներ** մասնիկների փոխարինումով և այլն:

Զուգաձևությունները հիմանականում հանդես են գալիս՝

ա/ գրաբարյան բաղաձայնահաջորդ **ն** վերջնահնչյունն ունեցող միավանկ բառերում.

բ/ մեկևկեսվանկանի բառերում.

գ/ միավանկ վերջնաբաղադրիչ ունեցող բարդություններում.

դ/ **ի** վերջնահանգով (հատկապես **ցի**-ով) բառերում:

Հոգնակի թվի կազմությանը վերաբերող լեզվական նորմը կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակով (**ի***-ն նշանակում է զուգորդելիությունը **ի** հոլովիչի հետ, իսկ **ը/ն***-ն՝ զուգորդելիությունը **ը /ն/** հոդի հետ)՝

Վերջավորություններ	Վերջավորությունների ընտրության պայմանները	հիմքերի տարբերակներ	ի *	ը/ն*	օրինակներ
եր	1. Միավանկ հիմքերի դեպքում / - բացառությամբ մարդ և կին բառերի/	- / - ի / /ը/ ու / /ը/ - / ն ու / /ը/ - /ն	+ + + + +	+ + + + +	հաց-հացեր սիրտ / ս/ը/րտեր թումբ / թ/ը/մբեր թոռ / թոռ-ն-եր մուկ / մ/ը/կ-ն-եր
	2. Այն բարդությունների դեպքում, որոնց վերջին բաղադրիչը միավանկ է, և նրա իմաստը հակադրվում է ամբողջ բարդության իմաստին	- / -	+	+	արոտավայր / արոտավայրեր
ներ	Բազմավանկանի հիմքերի դեպքում / բացառությամբ վերը նշված երկրորդ կետի/	- / -	+	+	ծաղիկ / ծաղիկներ
իկ	**Մարդ** հիմքի և նրանով վերջացող բարդ հիմքերի դեպքում	-/ -			մարդ / մարդիկ
այք	**կին** հիմքի և նրանով վերջացող բարդ հիմքերի դեպքում	-/ -			կին / կանայք
ք	-ի-ով վերջացող բազմավանկ հիմքերի դեպքում	- / -			քաղաքացի / քաղաքացիք
անք ենք ունք	Հատուկ անուններով արտահայտված հիմքերի դեպքում	- / -			Վարդան / Վարդանանք Արմեն/ Արմենենք
ոնք	միավանկ ազգակցական անունների /պապ, տատ/, այլև որոշ դերանվանածևերի դեպքում				պապ / պապոնք մեր / մերոնք

ա/ Միավանկ և գրաբարյան բաղաձայնահաջորդ ն վերջնահնչյունն ունեցող միավանկ բառերի հոգնակիակազմական զուգաձևություններ: Գրաբարյան **ն** վերջնահնչյունն աշխարհաբարում ընկել է: **Ակն, ափն, բեռն, բուռն, բուրգն, գառն, գեղմն, գուղձն, դուռն, գուռն, եզն, թոռն, խուփն, ծունկն, կողմն, կոռն, կուռն, հարսն, հողմն, ձեռն, ձուկն, մասն, մատն, մութն, մուկն, նուռն, շուրթն, ողն, ոտն, ռունգն, սաղմն, սերմն, սունկն** բառերը ժամանակակից հայերենում առանց **ն**-ի են: Սրանց մի մասի հոգնակիի կազմության ժամանակ գրաբարյան **ն** վերջնահնչյունը վերականգնվում է, և, որպես միավանկ բառեր, ստանում են **-եր** վերջավորությունը՝ **բեռ-բեռ+ն+եր, գառ-գառ+ն+եր, դուռ-դռ+ն+եր, եզ-եզ+ն+եր, թոռ-թոռ+ն+եր, ծոռ-ծոռ+ն+եր, լեռ-լեռ+ն+եր, ծունկ-ծնկ+ն+եր, հարս-հարս+ն+եր, ձուկ-ձկ+ն+եր, մատ-մատ+ն+եր, մուկ-մկ+ն+եր, նուռ-նռ+ն+եր**: (**Ն** վերջնահանգով բառերի հոգնակիակերտ մասնիկը **-ներ**-ը համարելը սխալ է): Մյուս մասում գրաբարյան **ն** վերջնահնչյունը չի վերականգնվում, և նրանց հոգնակին կազմվում է կանոնական ձևով, ինչպես օրինակ՝ **մաս**, **կողմ**, **անձ**, **սերմ** բառերի հոգնակի ձևերը լինում են՝ **մասեր**, **կողմեր**, **անձեր**, **սերմեր**:

Սրանցից մի մասի հոգնակին կազմելիս զուգաձևություններ են առաջանում՝ նույն բառի՝ վերջնահանգ **ն**-ի վերականգնումով և առանց վերջնահանգ **ն**-ի ձևերի զուգահեռությամբ՝ **գառներ // գառեր, թոռներ // թոռեր, ծոռներ // ծոռեր, հարսներ // հարսեր, նռներ // նռեր, ծնկներ // ծնկեր, բեռներ // բեռեր, ակներ // ակեր, մատներ // մատեր,** որոնցում երկրորդ տարբերակներն այսօր կանոնական չեն, բայց տարածվելու հակում ունեն՝ դեպի ընդհանրականը միտելով: **Ողեր // ողներ, ռունգեր // ռնգեր // ռունգներ** զուգաձևություններում **ողներ** և **ռունգներ** ձևերն այժմ անգործածական են: Ըստ Ալ. Մարգարյանի՝ նման բառերի հոգնակիի երկձևությունը ոչ գրական ճանապարհով՝ ժողովրդախոսակցական լեզվի միջոցով հայերենին անցնելով է պայմանավորված: Գրական ճանապարհով հայերենին անցած **–ն** վերջնահանգով բառերի հոգնակին առանց նրան է կազմվում (**մաս-մասեր..**):

Չեռքեր // ձեռներ, ոտքեր // ոտեր // ոտներ զուգահեռ ձևերում գրական լեզվի համար հարազատ են **ոտքեր, ձեռքեր** տարբերակները, իսկ մյուսներն ընդունելի չեն: **Ոտքեր** և **ձեռքեր** գոյականները, ըստ Ա. Ղարիբյանի, ունեն «կրկնակի անգամ դրված հոգնակի՝ ք (գրաբարյան) և եր կամ ներ (աշխարհաբարյան)» (75, էջ 122). մնացածները ժողովրդախոսակցական են կամ բարբառային: **Մատներ // մատեր** զուգաձևությունում նորմով սահմանվածը **մատներ** ձևն է, հետևաբար՝ **բթամատներ // բթամատեր, մատանեմատներ // մատանեմատեր, մատնեմատներ // մատնեմատեր, միջնամատներ // միջնամատեր, ցուցամատներ // ցուցամատեր** բարդություն-զուգաձևություններում տրամաբանորեն ենթադրելի է, որ պետք է ճիշտ դիտվեն առաջին եզրերը: Հոգնակիակազմական երկձևության պատճառ է դառնում այն հանգամանքը, որ **մատ**-ը բարդության վերջնաբաղադրիչ դառնալու դեպքում պահպանում է իր գոյականական նշանակությունը և, ըստ ձևաբանական կանոնի, պետք է ստանա **-եր**, տարբերակ, որ գերադասելի է համարվում նորագույն բառարաններում: Զուգաձևության հակադիր եզրերի միջև հակասությունն էլ ավելի է մեծանում, երբ հաշվի ենք առնում հոգնակիակազմության ընդհանուր միտումը՝ **-եր**-ի և **-ներ**-ի հավելումը վանկաքանակության սկզբունքով, որով որպես գերադասելի պետք է ընտրվեն **–ներ**-ով ձևերը: Հոգնակիակազմության նույն ընդհանուր միտումին համաձայն՝ **մատ**-ը, որպես միավանկ բառ, պետք է ստանա **-եր** վերջավորությունը: Մեր օրերի հայերենի համար այս դեպքում մնում է ընդունել նմանատիպ զուգաձևությունների գոյությունն այն պայմանով, որ ժամանակի ընթացքում ձևաբանական նորմի շրջանակներում գտնվող երկու ձևերից մեկն ու մեկը կհաղթի և օրինաչափական կճանաչվի: Ներկայումս այս կամ այն ձևին առաջնություն տալը առանձին լեզվագետների լեզվաընկալմամբ է պայմանավորված, լեզվի զարգացման միտումները կանխատեսելու նրանց գիտական կարողականությամբ. այս դեպքում ճշտի ու սխալի սահմանազատումը ժամանակի դատին է հանձնված:

Ծառեր // ծառներ զուգաձևության **ծառներ** ձևը հոգնակիակազմության ընդհանուր կանոնից շեղում է, ձևաբանական սխալ և մերժելի. հավանաբար համաբանության օրենքի ոչ ճիշտ գործա-

ռության արդյունք է: Բնականաբար բարդ բառերի վերջնաբաղադրիչ դառնալու դեպքում նման բառերի հոգնակին ճիշտ է կազմել **-եր**-ով. **տոնածառներ // տոնածառեր, բալասանածառներ // բալասանածառեր, տոհմածառներ // տոհմածառեր, դրախտածառներ // դրախտածառեր, խնկածառներ // խնկածառեր** և նման զուգաձևություններում ճիշտ են երկրորդ ձևերը:

Մարդ և **կին** բառերի հոգնակիի կազմության ձևը ավանդական է՝ **մարդիկ, կանայք**. գրաբարից են ավանդվել: Չնայած անցյալում, հատկապես հյուսիսափայլյան շրջանում, փորձեր արվեցին դրանց հոգնակին կազմել ձևաբանական նորմի սահմանած ընդհանուր կանոնով՝ **-եր**-ի ավելացմամբ՝ **կիներ, մարդեր**, բայց դա տարածում չգտավ. ավանդականը խորն է նստած մեր լեզվամտածողության մեջ: Մերժելի է երբեմն-երբեմն հանդիպող **մարդիկներ** ձևը:

Անձեր // անձինք ձևաբանական-ոճական զուգաձևության մեջ երկու ձևերն էլ կանոնական են, միայն երկրորդը՝ գրաբարյան քարացած ձևը, համեմատաբար ավելի շատ է գործածվում, թեպետև կիրառական-ոճական սահմանափակություն ունի և բնորոշ է հատկապես պաշտոնական ոճին: Խոսակցական լեզվում **անձինք**-ը հանդիպում է **անձիք** ձևով, որը մերժելի է: Ուրեմն՝ **անձեր // անձինք // անձիք** եռաձևության մեջ առաջին երկուսը ճիշտ են, երրորդը՝ սխալ:

Ձիեր // ձիանք զուգաձևությունում գրական նորմով սահմանվածն առաջինն է, իսկ երկրորդը հնացած է, ժողովրդախոսակցական և ոչ հանձնարարելի:

Լեզվական կանոնի համաձայն՝ **ռուս** բառը՝ որպես միավանկ, պետք է ունենար **ռուսեր** ձևը, սակայն միավանկ միակ գոյականն է, որ ստանում է **-ներ** վերջավորությունը՝ **ռուսներ**: Գրաբարն այս բառը չուներ, հետագայում բարբառներում տարածվում են սրա երկվանկ տարբերակները՝ **ուռուս, ըռուս**, և բառն էլ վանկաքանակության սկզբունքով բնականաբար **–ներ** հոգնակերտն է ստացել: Ժամանակակից հայերենին այս բառն ավանդվել է բառասկզբի ձայնավորի անկումով՝ **ռուս**, բայց հոգնակիի կազմության դեպքում ավանդական լեզվամտածողությունը պահպանվել է:

Երբ բառի վերջնաբաղադրիչը գրաբարում **ն** վերջնահնչյուն ունեցող բառերն են, բնականաբար, նրանց հոգնակին **–ն+եր**-ով է կազմվում՝ **քաղաքադուռ – քաղաքադռներ, շնաձուկ – շնաձկներ**...

Բացի վերևում հիշատակված բացառություններից, զուգաձևություն են կազմում նաև **հարս** վերջնաբաղադրիչն ունեցող բառերը, և տարբեր բառարաններ տարբեր հղումներով են դրանք ներկայացնում՝ **-եր // -ներ** կամ **–ներ // -եր, -ներ** կամ **-եր. ջրահարսներ // ջրահարսեր, հավերժահարսներ // հավերժահարսեր, ծովահարսներ // ծովահարսեր, նորահարսներ // նորահարսեր** և նման զուգաձևություններում ըստ գործող նորմի, առաջին տարբերակներն են նախընտրելի, բնականաբար՝ նորմատիվ քերականություններում ներմուծված, իսկ երկրորդները բնորոշ են ժողովրդախոսակցական լեզվին, բայց գրականանալու միտում ունեն: Զուգաձևությունների գոյությունը պայմանավորված է **հարսներ // հարսեր** կամ **հարսեր // հարսներ** զուգաձևությամբ (որոշիչ չէ, որ մի բառարանում այն **-եր**-ով է տրված, մյուսում՝ **-ներ**-ով). բնականաբար քանի դեռ **հարս** միավանկ բառն հոգնակիի կազմության իր երկկերպությունը չի վերացրել, նրանով կազմված բարդությունները միշտ երկձևությամբ հանդես կգան, չնայած որ, ըստ տրամաբանության, օրինական պետք է համարվի **հարսեր** ձևն այն պարզ պատճառաբանությամբ, որ **հարս**-ը միավանկ բառ է, ուրեմն պետք է ստանա **-եր**. մյուս կողմից՝ **–ներ**-ով տարբերակը առավել հաճախական է ժողովրդախոսակցական լեզվում: Ավելացնենք նաև, որ այսօր դժվար է ասել՝ բարդություններում այն հենց «հարս» նշանակությո՞ւնն ունի, թե՞ «հարս դառնալ» նշանակությունը: Խնդիրն էլ ավելի է բարդանում, երբ հաշվի ենք առնում նրա՝ ձևաբանորեն տարարժույթ լինելը (գոյական և ածական): Ճիշտ ձևը կազմելու ակնկալիքով բառարանների օգնությանը դիմելիս ավելի ենք խճճվում: Օրինակ՝ **նորահարս** բառի համար տարբեր բառարաններ այսպիսի հղումներ ունեն՝

1. Ստ. Մալխասյանցի «Հայէրեն բացատրական բառարանում»՝

«ՆՈՐԱՀԱՐՍ, ի, սներ,

ՆՈՐԱՀԱՐՍՆ (սիհ, սունք), գ. Նոր հարսնացած, նորապսակ կին:» (77, հ. 3, էջ 478):

2. «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» հոգնակիականազմության վերաբերյալ հղում չկա. նշվում են միայն խոսքիմասային պատկանելությունը՝ գոյական, և հոլովման տիպը (56, հ. 4, էջ 43):

3. Է. Բ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում»

«ՆՈՐԱՀԱՐՍ, ած. 1. Հարսը հարսանիքի ժամանակ: 2. Առհասարակ՝ նոր ամուսնացած կին:» (11, էջ 1081):

4. Ա. և Ք. Սուքիասյանների «Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարանում» **նորահարս** բառն ընդգրկված չէ, իսկ **հարս**-ը տրված է **-եր** հոգնակիակերտով (113, էջ 199):

5. Փ. Մեյթիխանյանի «Հայերենի ուղղագրական նոր բառարանում» **նորահարս /+ եր/** (83, էջ 305): (**Հարս**-ը հղված է **-ներ**-ով):

6. Դ. Գյուրջինյանի «Անուն խոսքի մասերի թվի կարգը արդի հայերենում (Քերականական բառարան-տեղեկատու)»-ում՝ «**նորահաս -եր**» (45, էջ 100), իսկ **հարս**-ը տրված է **-ներ**-ով:

Այսպիսին է պատկերը միայն մի բառի հոգնակիականազմության հարցում...

Նման դեպքերում բառարանները սոսկ ուղեցույցի դեր են կատարում և չեն պարտադրում. նրանք նպաստում են հոգնակիականազմության կանոնարկմանը, արձանագրում նորագույն միտումները. որոշիչը ժամանակն է, և նորմավորման գործընթացում ժամանակի գործոնն է կարևորվում...

Միավանկ բառեր կան, որոնց հոգնակին կազմվում է և՛ հնչյունափոխված, և՛ անհնչյունափոխ հիմքերով. արդյունքում ավելի շուտ հնչյունափոխական-ձևաբանական զուգածևություններ են՝ **բուքեր // բքեր, խիճեր // խճեր, խունկեր // խնկեր, խուրձեր // խրձեր, խուցեր // խցեր, կուտեր // կտեր, գուբեր // գբեր, սուրճեր // սրճեր, քուրմեր // քրմեր, քուրձեր // քրձեր, դունչեր // դնչեր, ճիտքեր // ճտքեր, թիզեր // թզեր, թուխպեր // թխպեր, թումբեր // թմբեր, տիզեր // տզեր, նուշեր // նշեր, բույներ // բներ, բուշտեր // բշտեր, ցուլեր // ցլեր...** Սրանք համազոր տարբերակներ են. ոչ

վաղ անցյալում նախընտրելի էին հնչյունափոխված տարբերակները. ընտրությունն ավելի շատ հասարակության հավանությամբ է պայմանավորված: Վերջին շրջանում հայերենը անհնչյունափոխ ձևերը որդեգրելու միտում ունի. չհնչյունափոխվելը հոգնակիացման միտումն էլ է, ուստի և համազոր տարբերակներից գերադասելի դառնալու հավանականություն ունեն անհնչյունափոխ ձևերը, և լեզվական նորմը այս առումով փոփոխության ենթարկվելու հավանականություն ունի:

Լինգեր // լնգեր, ծիլեր // ծլեր, լուրեր // լրեր, տուփեր // տփեր, տիկեր // տկեր զուգաձևություններում երկրորդ եզրերը բարբառային են և մերժելի: **Իղձեր // ղձեր** –ի երկրորդ տարբերակն այժմ հնացած է:

Սրբեր // սուրբեր զուգաձևության մեջ գրական լեզվի համար ընդունելի է առաջին տարբերակը. երկրորդի գոյությունը առավելապես արևմտահայերենի ազդեցությամբ է պայմանավորված, և մերժելի չէ, նաև տարածվելու հավանականություն ունի: Այս տարբերակի համար Դ. Գյուրջինյանը գրում է. «Օրինակ՝ **սուրբեր** ձևը կազմելու մեջ ոչ միայն արևմտահայերենի ազդեցությունը կա, այլև այս ձևը նախընտրողներին թվում է, թե իրենք այդպես «չեն աղավաղում» բառը, նրա արտաքին ձևավորումը» (45, էջ 6): Մնում է եզրակացնել, որ **սուրբեր**-ի տարածման միտման մեջ որոշ դեր է խաղում նաև լեզվական-հոգեբանական պահը: Հակառակ հոգեբանությամբ է պայմանավորված **թուրքեր // թրքեր** զուգաձևության երկրորդ տարբերակի ընտրությունը:

Սրանց՝ բարդ բառերի վերջնաբաղադրիչ դառնալու դեպքում ևս առկա են նույնատիպ զուգաձևություններ՝ **հողաթմբեր // հողաթումբեր, երգչախմբեր // երգչախումբեր, արնաբծեր // արնաբիծեր, գեշերաբվեր // գիշերաբուեր, մենախցեր // մենախուցեր, մարտացլեր // մարտացուլեր, զարդատփեր // զարդատուփեր, գլխագներ // գլխագիներ, ծնաբքեր // ծնաբուքեր /կամ՝ ծյունաբքեր // ծյունաբուքեր/, խոզաբներ // խոզաբույներ...**

Հնչյունափոխված տարբերակ // չհնչյունափոխված տարբերակ զուգահեռ ձևերի առկայությունը նաև արտալեզվական գործոններով է պայմանավորված:

բ/ Մեկևկեսվանկանի բառերի հոգնակիակազմական զուգաձևություններ: Մեկևկեսվանկանի բառերի հոգնակին կազմելու համար մեր լեզուն հետևյալ կանոնն է սահմանել՝ եթե լրիվ կամ լիարժեք վանկը երկրորդն է, հոգնակին կազմում են **-ներ**-ով, իսկ եթե առաջինն է, ապա՝ **-եր**-ով: Զուգաձևություններ են կազմում **արկղ, կայսր, դուստր, անգղ, վագր, գամփռ** բառերի հոգնակիները՝ **արկղեր // արկղներ, կայսրեր // կայսրներ, դուստրեր // դուստրներ, անգղեր // անգղներ, վագրեր // վագրներ, գամփռեր // գամփռներ, ոսկրեր // ոսկրներ**: Սրանցից առաջինները լեզվական նորմի տեսանկյունով ճիշտ են, իսկ երկրորդները եթե սկզբնական շրջանում ակնհայտ ժողովրդախոսակցական երանգ ունեին կամ բարբառային էին որակվում, ուստի և՝ մերժելի, ապա այսօր ոչ համազոր, բայց ազատ տարբերակներ են համարվում: Այս հարցում խիստ լինել պետք չէ, քանի որ այս բառերի հոգնակիի կազմության նոր միտում կա՝ **ներ**-ով կազմելու միտում՝ մեկից ավելի վանկ ունեցող բառերի համաբանությամբ: Օրինակ՝ **գամփռեր // գամփռներ** զուգաձևության մեջ նախընտրելի է երկրորդ եզրը՝ ընդհանրանալու միտումով, նաև արտասանական գործոնով պայմանավորված. այն ավելի բարեհունչ է: Հարցի լուծումը կամ ժամանակի դատին պետք է հանձնել, կամ լեզվական օրենքով միակ ձև սահմանել՝ լեզվական նորմում ամրագրելով: Բացառված չէ, որ մի տարբերակին առավելություն տալուց հետո որոշ ժամանակ անց հակառակ եզրը նորմատիվ դառնա:

Բնականաբար նույն սկզբունքով պետք է առաջնորդվել այն բարդություն-զուգաձևությունների հարցում, որոնց վերջնաբաղադրիչներն այս նույն բառերն են՝ **գիսաստղ, ծովաստղ, լուսաստղ, գիշանգղ, գառնանգղ, աղբարկղ, գանձարկղ, խնայդրամարկղ, արքայադուստր** և այլն: **Գիսաստղեր // գիսաստղներ, արքայադուստրեր // արքայադուստրներ, լուսաստղեր // լուսաստղներ, գիշանգղեր // գիշանգղներ, գառնանգղեր // գառնանգղներ** և նման զուգաձևություններում գրական լեզվի համար առաջին տարբերակներն են ընդունելի:

Լեզվական նորմով սահմանված կանոնի համապատասխան՝ **արկղ** բառի հոգնակիակազմության ժամանակ հանդես եկող զուգաձևություններում ընդունելի են **-եր**-ով տարբերակները:

Սակայն լեզվաբանների մի խումբ այն կարծիքին է, որ որոշ բառերում հիշյալ բառն իր բուն իմաստով չի ընկալվում, հետևաբար նախընտրելի պետք է համարել **–ներ**-ով ձևերը: Նշանակում է՝ **գանձարկղեր // գանձարկղներ, տոմսարկղեր // տոմսարկղներ, խնայդրամարկղեր // խնայդրամարկղներ, աղբարկղեր // աղբարկղներ, զարդարկղեր // զարդարկղներ** զուգաձևություններում տարբերակների ընտրության հարցում կարևորվում է իմաստային գործոնի դերը: Այսօրվա լեզվամտածողությամբ գերադասելի են **խնայդրամարկղներ**, բայց **գանձարկղեր, զարդարկղեր, աղբարկղեր** տարբերակները, իսկ **տոմսարկղեր // տոմսարկղներ** զուգաձևության լուծումը շարահյուսական մակարդակում պետք է կատարվի (տոմսերի համար հատկացված ա՞րկղ, թե՞ տոմսեր վաճառելու համար նախատեսված շինություն):

Ոսկր բառի հոգնակիակազմության երկկերպությունը երևի թե բառի հնչյունական երկձևությամբ է պայմանավորված՝ **ոսկր // ոսկոր** /ըստ լեզվաբանական գրականության տվյալների՝ **ոսկոր**-ը **ոսկր** բառի հոլովված ձևն է/, համապատասխանաբար՝ **ոսկրեր // ոսկորներ**, երկրորդ ձևի ազդեցությամբ էլ խոսակցական լեզվում տարածված է նաև **ներ**-ով տարբերակը. **փղոսկրեր // փղոսկրներ, գանգոսկրեր // գանգոսկրներ, այտոսկրեր // այտոսկրներ** և նման զուգաձևություններում նորմով սահմանվածը **-եր**-ով ձևն է, իսկ **–ներ**-ով ձևերը հատուկ են ժողովրդախոսակցական ոճին:

Մի քանի վերջընթեր գաղտնավանկ ունեցող մեկևկեսվանկանի բառերի կազմության հարցում երկվություն չկա՝ կազմվում են **-եր**-ով՝ **գետեզրեր, ծովեզրեր,** չնայած որ երբեմն-երբեմն, հատկապես գեղարվեստական խոսքում, հանդիպում են նաև դրանց **–ներ**-ով ձևերը՝ հավանաբար արտասանությամբ պայմանավորված:

գ/ Միավանկ վերջնաբաղադրիչ ունեցող բարդությունների հոգնակիակազմական զուգաձևություններ: Ժամանակակից հայերենի քերականություններում սկսել են առավել շատ ուշադրություն դարձնել վերջին եզրում միավանկ բաղադրիչ ունեցող բարդ բառերի հոգնակիի կազմությանը այն դեպքում, երբ իր ժամանակին է. Աղայանը գրում է. «Դրան հակառակ, քերականությունների մեջ սովորաբար մոռացության է տրվում երկրորդ եզրում

միավանկ բաղադրիչ ունեցող բարդ բառերի հոգնակիի կազմությունը, մի երևույթ, որ իր ծագմամբ կապված է նոր ժամանակների հետ, չի գալիս գրաբարից և, որ գլխավորն է, արդյունք է ժողովրդական ուրույն մտածողության» (15, էջ 164): Այնուհետև շարունակում է. «...**Տարբեր հոգնակերտ մասնիկների գործածությունը բարդ բառերի հոգնակին կազմելու համար ոչ թե մի պատահական երևույթ է, այլ այդ բառերի տարբեր իմաստներից բխող, հետևաբար և՝ մեր լեզվամտածողության մեջ գոյություն ունեցող տարբեր ըմբռնման արդյունք**» (15, էջ 166):

Լեզվական նորմը մատնանշում է նաև, որ միավանկ արմատական բաղադրիչով վերջացող բաղադրյալ բառերի հոգնակին կազմվում է **-եր**-ով կամ **–ներ**-ով: Եթե նման բառերի վերջնաբաղադրիչը գոյական է, բարդության մեջ էլ պահպանում է իր հիմնական իմաստը և պատասխանում է **ի՞նչ** հարցին, ավելանում է **-եր**, ինչպես օրինակ՝ **ոտնաձայն-ոտնաձայներ, ավտոդող-ավտոդողեր, անձրևաջուր-անձրևաջրեր** և այլն: Իսկ եթե վերջնաբաղադրիչը բայարմատ է, որն իր հիմնական իմաստը չի պահպանում, և նոր նշանակությամբ նոր բառ է կազմվում, ապա ամբողջ բարդությունը դիտվում է իբրև բազմավանկ և հոգնակիի կազմության ժամանակ ստանում է **-ներ** մասնիկը, ինչպես օրինակ՝ **պատմագիր-պատմագիրներ, ժամացույց-ժամացույցներ, դավադիր-դավադիրներ, հրաձիգ-հրաձիգներ, ջերմաչափ-ջերմաչափներ, թատերասեր-թատերասերներ** և այլն. «...երբ բառի վերջին միավանկ բաղադրիչը բայական արմատ է կամ ընկալվում է որպես այդպիսին, և բարդ բառն արտահայտում է մի բան անողի կամ մի բան ունեցողի նշանակություն, ապա հոգնակիի կազմության ժամանակ ստանում է ՆԵՐ մասնիկը, իսկ երբ անվանական արմատ է կամ ընկալվում է որպես այդպիսին, և բարդ բառը չի արտահայտում մի բան ունեցողի կամ մի բան անողի նշանակություն, ապա հոգնակիի կազմության ժամանակ ստանում է ԵՐ մասնիկը», - այսպիսին է լեզվական նորմով սահմանված կանոնը նորմատիվ քերականություններում (33, էջ 56):

Այն, որ մեր լեզվամտածողությամբ է պայմանավորված առաջին հայացքից միևնույն կարգի թվացող բարդ բառերի հոգնակիի կազմության մեջ գոյություն ունեցող տարբերությունը,

անժխտելի է. բարդության վերջին եզրն արտահայտում է ամբողջ բարդ բառի իմաստը՝ որպես գոյական, ստանում է **-եր**, իսկ եթե վերջին բաղադրիչն ունի բայական իմաստ, որով և այդպիսի բարդությունները հանդես են գալիս իբրև շարահյուսական կապակցություններ, ուրեմն ստանում են **-ներ:** Սակայն լեզվական և արտալեզվական տարբեր գործոնների ազդեցությամբ այս կանոնավորությունը խախտվում է: Նման խախտումները պատճառաբանվում են կամ սովորույթի ուժի ազդեցությամբ և տվյալ կառուցածևը ավանդաբար գործածելով, կամ արևմտահայերենի ազդեցությամբ և կամ պարզապես ձևաբանական նորմի ոչ հստակ գիտակցումով, մասամբ էլ՝ վերջնաբաղադրիչի իմաստային հատկանիշի ոչ հստակ ընկալումով և մեր լեզվամտածողությամբ: Այս կանոնախախտումը առավել հետաքրքրական է դառնում, երբ վերջնաբաղադրիչ միավանկ արմատական բառերը, առանձնաբար գործածվելիս օրինաչափությունից չեն շեղվում, այսինքն՝ միավանկ բառերի հոգնակիի կազմության կանոնից շեղում չի նկատվում, բայց բավական է, որ նրանք բաղադրյալ բառի կազմիչ դառնան, անմիջապես զուգածևություն են դրսևորում: Այսպես՝ **պետ-պետեր**, բայց՝ **զորապետեր // զորապետներ, համայնքապետեր // համայնքապետներ, ոստիկանապետեր // ոստիկանապետներ. հոր-հորեր**, բայց՝ **ջրհորեր // ջրհորներ** և այլն: Այս առիթով Հ. Աճառյանը գրում է. « Իսկ երբ բարդ բառի վերջին եզրը միավանկ է, սկսում են տատանումները: Թե՛ արևելյան, և թե՛ արևմտյան գրականի մեջ սրանց հոգնակին զանազան ձևով է լինում. օր. լրագիր, լրագրեր, լրագիրեր, լրագիրներ, լրագրներ: Դրվում էր **-եր** մասնիկը՝ նկատի ունենալով, որ վերջին եզրը միավանկ է, այսինքն առնելով բառը առանձին (գիր-գրեր) և մտածելով, որ չի կարելի ասել **գրներ, գիրներ**: Դրվում էր **–ներ** մասնիկը՝ առնելով բառն իբրև ամբողջություն և մտածելով, որ բազմավանկը ըստ օրինի պիտի ստանա **–ներ** մասնիկը: Իսկ սղյալ և ոչ-սղյալ ձևերը առաջանում են սղման ընդհանուր սկզբունքների համաձայն: Զանազան քննիչներ տվել են սրանց մասին զանազան կանոններ, բայց ինձ թվում է, թե հարցը երկդիմի և հետևաբար անլուծելի է: Ըստ իս, տրամաբանությունը պիտի պահանջեր համարել բազմավանկ և դնել **–ներ**, բայց կան բառեր, որոնց **-եր-**ով հոգնակին այնպես սովորական է դարձել, որ

անկարելի է անտես անել և դնել **–ներ**, այսպես՝ **տաճկահայեր**, բայց ոչ բնավ՝ **տաճկահայներ**:

Նույնիսկ միևնույն բառը այս ինչ բարդի մեջ **-եր** և այն ինչ բարդի մեջ **–ներ** կարող է ստանալ, օր. **պահակակետեր**, բայց՝ **ստորակետներ**» (21, էջ 818-819):

Նույն տրամաբանությամբ՝ **կապ-կապեր**, բայց **փողկապներ**, **ելք-ելքեր**, բայց՝ **վերելքներ**, **անցք-անցքեր (քթանցքեր)**, բայց՝ **միջանցքներ**, **լեռնանցքներ**, **ջրանցքներ**, **նրբանցքներ**, **նիշ-նիշեր**, բայց՝ **չափանիշներ**, **խորհրդանիշներ**, **կետ-կետեր (հենակետեր)**, բայց՝ **տեսակետներ**, **տուն-տներ (առանձնատներ**, բայց՝ **մեծատուններ**): Նշանակում է՝ նմանատիպ մի շարք բառերի հոգնակիակազմության հստակ կանոնակարգում չունենք, և տարբեր բառարաններ տարբեր ձևեր են ներկայացնում. սրանք պետք է լեզվական նորմին համապատասխան ձևեր ընդունել և օգտագործել՝ անկախ այն բանից՝ սովորույթի ուժո՞վ է պայմանավորված նրանց գոյությունը, ավանդականությա՞մբ, թե՞ քաքնված բայիմաստ ունենալով:

Պարերգեր // պարերգներ, այցետոմսեր // այցետոմսներ, երկրաշարժեր // երկրաշարժներ, տանուտերեր // տանուտերներ, խոսափողեր // խոսափողներ, փառատոներ // փառատոններ, մրցատոներ // մրցատոններ, մեծատառեր // մեծատառներ, ձեռնափայտեր // ձեռնափայտներ, պայմանագրեր // պայմանագրներ, տեղաշորեր // տեղաշորներ և նման զուգաձևություններում կանոնականը, նորմով սահմանվածը առաջիններն են, իսկ երկրորդները խոսակցական երանգ ունեն: Նույն ձևով ժողովրդախոսակցական, բարբառային երանգ ունեն **քույր** վերջնաբաղադրիչով բարդությունների **–ներ**-ով հոգնակիի ձևերը. **բուժքույրեր // բուժքույրներ, հորաքույրեր // հորաքույրներ, մորաքույրեր // մորաքույրներ, արքայաքույրեր // արքայաքույրներ, հարսնաքույրեր // հարսնաքույրներ** զուգաձևություններում նորմով սահմանվածը, կանոնականը առաջին տարբերակներն են, իսկ երկրորդները ժողովրդական-խոսակցական կամ բարբառային երանգ ունեն, ուստի և հանձնարարելի չեն:

Ջրմուղներ // ջրմուղիներ զուգաձևության առաջացման պատճառը բառակազմական չիմացությունն է. **ջրմուղիներ** ձևը

քերականական-բառակազմական սխալ է, քանի որ վերջին բաղադրիչն է ոչ թե **ուղի** բառը, այլ **մուղ** բայարմատը:

Հոգնակիակազմության զուգաձևություններ ունեն նաև **կապ** բառը իբրև վերջնաբաղադրիչ ունեցողները: **Խրձակապեր // խրձակապներ** զուգաձևության մեջ առաջին տարբերակի ձևը «խրձերի կապեր» իմաստով է թելադրված, իսկ երկրորդինը՝ «հնձած հացաբույսը հավաքող և կապող մեքենա» իմաստով: Հոդակապային տարբերակներ են **խրձակապեր // խրձակապներ // խրձկապեր // խրձկապներ** բազմաձևության եզրերը: **Գերանակապեր // գերանակապներ** զուգաձևության մեջ **գերանակապ**-ը խոսքիմասային երկփեղկում ունի. տեխնիկական գրականության մեջ «գերանների միացք» իմաստով գոյական է և ստանում է **-եր** վերջավորությունը, իսկ «գերաններով ամրացված՝ կապված՝ կառուցված» իմաստով ածական է և ստանում է **-ներ** (փոխանվանաբար): **Էջակապ** բառի **ներ**-ով ձևն է ճիշտ, իսկ **էջակապներ // էջկապներ** հոդակապային զուգաձևության մեջ տարբերությունը հոդակապ ունենալ-չունենալու մեջ է, և երկուսն էլ «էջակապող բանվոր» իմաստն ունեն: **Էջկապ**-ը նաև անհոգնական գոյական է՝ «գրքի շարվածքի էջակապելը» իմաստով: Լեզվական նորմի սահմանում են նաև **թևկապներ // թևկապեր** զուգաձևության եզրերը: **Խաչկապ** բառը, ըստ Դ. Գյուջինյանի, «խաչածև կապ՝ հանգույց» իմաստով **-եր** է ստանում, իսկ «ժապավենով խաչածև կապված թղթյա փաթեթ», «դեմ առ դեմ խաչածև դրված իրեր» իմաստներով՝ **-ներ** (45, էջ 65). ԱՀԲԲ-ում միայն **-եր**-ով է տրված:

Նույն տարբերությամբ է պայմանավորված **ժանյակազարդեր // ժանյակազարդներ** տարբերակների գոյությունը. **ժանեկազարդ** բառը՝ որպես գոյական, «ժանյակի զարդ» իմաստով ստանում է **-եր**, իսկ «ժանյակ/ներ/ով զարդարված» իմաստով որպես փոխանվանաբար գործածված ածական՝ **-ներ**: **Էջաչափներ // էջաչափեր** զուգաձևության մեջ **էջաչափ**-ը «երկու կետերի միջև եղած ուղղահայաց տարարածությունը չափող սարք» իմաստով **-ներ** հոգնակերտն է ստանում, իսկ «էջի չափս» իմաստով՝ **-եր: Չափ** բառով վերջավորվող մի այլ բարդության՝ **կրծքաչափ** -ի մեջ տարբերակային ձևեր են առաջանում «կրծքի չափ» և «կրծքավանդակի լայնությունը չափելու գործիք» իմաստների հակադրությամբ՝

կրծքաչափեր // կրծքաչափներ: ԱՀԲԲ-ում այն միայն մի ձև ունի՝ **-եր**-ով՝ «կուրծքը՝ կրծքավանդակի լայնությունը չափելու գործիք» իմաստով: Նույն **չափ**-ով վերջավորվող **հասակաչափ** գոյականի համար (այն նաև ածական է «չափահաս» և «հասակի չափով, մի մարդու բարձրությամբ» իմաստներով) նույն բառարանում է Աղայանը գրում է. «Հասակաչափ 3. գ. հոգն.-եր: Հասակի չափը: 4. հոգն.- ներ: Մարդու հասակը՝ բոյը չափելու սարք»: Կարելի է եզրակացնել, որ **չափ** վերջնաբաղադրիչ ունեցող բառերը «չափս» իմաստով ստանում են **-եր**, իսկ «չափող գործիք» իմաստով՝ **-ներ** հոգնակերտները: **Մթնոլորտաչափներ, միլիվոլտաչափներ, միկրոկալորիաչափներ, միկրովատտաչափներ, յուղաչափներ**... բաղադրյալ բառերը զուգաձևության եզր չեն դառնում, որովհետև «չափս» իմաստով գործածություն չունեն:

Գիշերապահ բառի հոգնակիի զույգ ձևերի մեջ իմաստային տարբերություն կա՝ պայմանավորված **պահ** բառի՝ նույն ձևով տարբեր իմաստներ արտահայտելու հանգամանքով (գոյական՝ «կարճատև ժամանակ» իմաստով և բայարմատ՝ **պահել** բայի՝ «պահպանել» իմաստով), այսօր դրանք բառարանային առանձին միավորներ են, և ԱՀԲԲ-ում նշված է՝ «ԳԻՇԵՐԱՊԱՀ 1, ի, ներ, գ. Գիշերային պահակ՝ պահապան» և «ԳԻՇԵՐԱՊԱՀ 2, ի, եր, գ. Գիշերային պահ, գիշեր ժամանակ» (11, էջ 239):

Վերաիմաստավորմամբ է պայմանավորված **ծովափեր // ծովափներ** զուգաձևության երկրորդ եզրի գոյությունը ժողովրդախոսակցական լեզվում, ուր **ափ** վերջնաբաղադրիչը կորցրել է իր բուն նշանակությունը, և բառը մոտավորապես «հանգստանալու վայր, տեղ» նշանակությունն է ձեռք բերել:

Մարգարտահատեր // մարգարտահատներ զուգաձևությունում երկու եզրերն էլ ճիշտ են, բայց իմաստային տարբերակվածություն ունեն. **–ներ**-ով կազմությունն ունի «մարգարիտ հատող» իմաստը (ինչպես՝ **քարհատներ**), իսկ **-եր**-ով կազմությունը՝ «մարգարիտի հատ, հատիկ» իմաստը: Նույն ձևով իմաստային տարբերություններ ունեցող կանոնավոր համազոր զուգաձևություններ են՝ **գազանակերեր // գազանակերներ, մատենագրեր // մատենագիրներ, ձեռագործեր // ձեռագործներ, քարհատեր // քարհատներ, ցուցանիշեր // ցուցանիշներ, ձայնանիշեր // ձայնա-**

նիշներ, թթվասերեր // թթվասերներ և այլն: Իմաստային տարբերություններով է պայմանավորված **–որս, -շար** միավանկ բառերով վերջավորվող բարդությունների հոգնակիակազմական զուգաձևությունները, որոնցում հոգնակիի **-եր**-ով կամ **-ներ**-ով ձևերից մեկի ընտրությունը պետք է կատարել՝ ելնելով նախադասության իմաստից. եթե որսի տեսակ է նշանակում, ապա՝ **-եր**, իսկ եթե «գործողի՝ որս անող» նշանանակությունն ունի, ուրեմն՝ **-ներ**-ով. եթե **շար**-ն ունի «շարք» իմաստը, ապա՝ **-եր**-ով, եթե «շարող» իմաստը՝ **-ներ**-ով. **աղավնորսեր // աղավնորսներ, արջաորսեր // արջաորսներ, գազանորսեր // գազանորսներ, պատշարեր // պատշարներ, մարգարտաշարեր // մարգարտաշարներ, սյունաշարեր // սյունաշարներ** զուգաձևությունները իմաստային-ձևաբանական զուգաձևություններ են, ըստ որում երկրորդ տարբերակների՝ **-շար** և **-հատ** բառերի բայական իմաստը թույլ է զգացվում:

Ինչ վերաբերում է **համայնքապետեր // համայնքապետներ, ոստիկանապետեր // ոստիկանապետներ, թաղապետեր // թաղապետներ, գնդապետեր // գնդապետներ, քահանայապետեր // քահանայապետներ , բժշկապետեր // բժշկապետներ, մայրապետեր // մայրապետներ, սպարապետեր // սպարապետներ** և **պետ** վերջնահանգն ունեցող նման բառերի զուգաձևություններին, ապա, այսօրվա լեզվազգացողությանը համապատասխան, երկու եզրերն էլ լեզվական նորմի սահմանում են և ճիշտ այնքան ժամանակ, քանի դեռ մեկը ավելորդ չի դարձել: «...Մի տեսակ պայքար է գնում մեկով և մյուսով արտահայտվող ձևերի մեջ», - գրում է Ալ. Մարգարյանը:- ...Նկատելի է, որ որոշ միավանկ գոյականներ հեռանալով իրենց բուն առարկայական իմաստից՝ նախորդ բառ-բաղադրիչի հետ այնպիսի բաղադրյալ բառեր են կազմում, որոնք մի այլ կամ ավելի ընդհանուր իմաստ արտահայտելով՝ հոգնակի թվում **-եր**-ի փոխարեն –**ներ**-ով են գործածվում: Դա բնորոշ է հատկապես **պետ** միավանկ բաղադրիչով կազմված բառերին, ինչպես օրինակ՝ **ցեղապետներ, գնդապետներ, պահեստապետներ, քաղաքապետներ, վարչապետներ** և այլն. իրողություն, որ գալիս է շատ վաղուց և կիրառվել է անգամ Րաֆֆու լեզվում... Իսկ այն դեպքում, երբ **պետ** վերջնաբաղադրիչը իր բուն, անփոփոխ իմաստով է գործածվում, բաղադրյալ բառի հոգնակին **-եր**-ով է

կազմվում (օր. **ոստիկանապետեր, գանձապետեր, թաղապետեր, բանտապետեր**)...» (80, էջ 90- 91)): Ժամանակն այստեղ ևս որոշիչ է դառնում, և այս պայքարում հաղթանակը **-ներ**-ով տարբերակի կողմն է. այս զուգաձևությունների պատճառը պետք է փնտրել **պետ** բառի բառային իմաստը կորցնելու և ածանցական իմաստ ձեռք բերելու մեջ: Բանն այն է, որ այն (իրանական փոխառություն է) ունի **պետեր** հոգնակի ձևը, սակայն դարերի ընթացքում ձեռք է բերել ածանցական նշանակության (կերտում է բարձրաստիճան պաշտոնյաների անվանումներ), իմաստ և ածանց դառնալու գործընթացի մեջ է, այնպես, ինչպես էր **-գործ**-ը՝ **գործ-գործեր**, բայց **լեռնագործներ, հանքագործներ, այգեգործներ**. ոչ ոք այսօր չի ասում՝ **այգեգործեր, հանքագործեր, լեռնագործեր**, բայց չէ՞ որ **գործ** բառի՝ ածանց դառնալու ճանապարհին եղել են զուգաձևություններ, և **-եր**-ով ձևերն աստիճանաբար դուրս են ընկել: Նույն ձևով ձևաբանական նորմի սահմաններից դուրս մնալու միտում ունեն նաև **պետ** բառով բաղադրված բառերի **-եր**-ով տարբերակները: Վերջերս լույս տեսած «Հայերենի ուղղագրական նոր բառարանում» նշվում է. «Միօրինակություն ապահովելու և ուսուցումը հեշտացնելու համար –պետ վերջնաբաղադրիչ ունեցող բոլոր բառերի հոգնակին պետք է կազմել –ներ-ով» (83, էջ 26): Նման բառերի հոգնակին **–ներ**-ով կազմելու միտումը համընկնում է նաև լեզվի՝ ըստ վանկաքանակության հոգնակին կազմելու միասնական սկզբունքին: **Նիշ** վերջնաբաղադրիչ բարդությունները, անկախ այն բանից որ **նիշն** ունի **նիշեր** հոգնակին, առավելապես կազմվում է **-ներ-**ով, քանի որ **նիշ**-ը առավելապես ունի «նշող» բայական իմաստը՝ **ախտանիշներ, խաչանիշներ, խորհրդանիշներ, ձայնանիշներ, նամականիշներ** և այլն, սրանց զուգահեռ **-եր**-ով տարբերակներում ավելի շատ «նիշ, նշան» իմաստն է առաջնային համարվում: **-Նիշ** և **-պետ** վերջնաբաղադրիչներով բարդությունների հոգնակիակազմության զուգաձևությունների համար Դ. Գյուրջինյանը գրում է. «Սակայն որոշ իրողություններ կարելի է հստակ արձանագրել. այսօր առավելաբար **-ներ** վերջավորությամբ են կազմում **–նիշ** և **-պետ** վերջնաբաղադրիչներով բարդությունների հոգնակին: Օրինակ՝ **ախտանիշներ, դրոշմանիշներ, խորհրդանիշներ, հայտանիշներ, հատկանիշներ, չափանիշներ, ցուցանիշներ, բան-**

տապետներ, գնդապետներ, հազարապետներ, համայնքապետներ, մարզպետներ, միապետներ, նահանգապետներ, սենեկապետներ, վարչապետներ, քաղաքապետներ և այլն: Իհարկե, **գյուղապետեր, պահեստապետեր** և նման ձևերը ճիշտ են, սակայն ցանկալի է նույնական մոտեցում կիրառելը:

«Առհասարակ այս կարգի բառերի հոգնակին **–ներ** մասնիկով կազմելու միտում կա» (45, էջ 9-10):

Երբ **անցք** միավանկ բաղադրիչն իր հիմնական՝ «ճեղք, ապրանք» իմաստով է գործածվում, բաղադրյալ բառի հոգնակին **-եր**-ով է կազմվում, իսկ երբ նախորդ բաղադրիչի հետ մի այլ՝ ավելի լայն նշանակություն է արտահայտում, հոգնակին էլ, բնականաբար, **-ներ**-ով է կազմվում: Արդյունքում զուգաձևություններ են՝ **ջրանցքեր // ջրանցքներ, գազանցքեր // գազանցքներ, սողանցքեր // սողանցքներ, գետանցքեր // գետանցքներ, լեռնանցքեր // լեռնանցքներ**, որոնք լուծելի կդառնան, եթե տարբերակները իմաստային տարբերակվածություն ձեռք բերեն: Օրինակ՝ «Արհեստական մեծ հուն՝ ջրի համար» իմաստով **ջրանցք** բառի հոգնակին լինում է՝ **ջրանցքներ**, իսկ տեխնիկական գրականության մեջ «ջրի անցք՝ ծակ» իմաստով հանդիպում է **ջրանցքեր** ձևը: **Բկանցք** բառը «բերանի և ըմպանի խոռոչների միացման նեղ տեղը» իմաստով ստանում է **-ներ** վերջավորությունը, իսկ տեխնիկական գրականության մեջ «զանազան առարկաների՝ անոթների բկածև անցք» իմաստով՝ **-եր** վերջավորությունը: **Օդանցք** բառը Դ. Գյուրջինյանի հիշված բառարանում «ապակե փոքրիկ փեղկ պատուհանի վրա՝ օդափոխության համար» իմաստով ստանում է **-ներ** վերջավորությունը, իսկ «որևէ առարկայի վրա օդը թափանցելու համար արված անցք» իմաստով՝ **-եր** (45, էջ 129), իսկ ԱՀԲԲ-ում՝ միայն **-եր**-ով ձևն է՝ «շենքի՝ սենյակի ևն ներսը օդ թափանցելու և առհասարակ՝ օդ խաղալու համար թողնված անցք՝ բացվածք» իմաստով (11, էջ 1585): Մյուս կողմից՝ մեր լեզվամտածողությանը հարազատ չեն **միջանցքեր, քղանցքեր, լուսանցքեր՝ միջանցքներ, քղանցքներ, լուսանցքներ** բառաձևերի փոխարեն:

Կետ բառը, երբ բարդության մեջ հենց իր իմաստով է գործածվում, հոգնակին էլ **-եր**-ով է կազմվում, ինչպես՝ **միջակետեր, ստորակետեր, վերջակետեր, նշանակետեր, բազմակետեր,** իսկ

երբ այլ իմաստով է գործածվում, հոգնակին **–ներ**-ով է կազմվում, ինչպես՝ **տեսակետներ:**

«Նկատելի է և մի երևույթ, եթե բարդության միավանկ վերջնաբաղադրիչը մի տեսակ իմաստապես մթագնած է կամ չի գիտակցվում, հոգնակին **-եր**-ի փոխարեն **–ներ**-ով է կազմվում, օրինակ՝ մանրէ - **մանրէներ,** ծովահեն- **-ծովահեններ**, օդահեն – **օդահեններ**»,- գրում է Ալ. Մարգարյանը (80, էջ 91):

Հոգնակիակազմության զույգ ձևեր ունի նաև **խոսափող** բառը. ԱՀԲԲ-ում այս բառի համար նշված է. «Խոսափող, ի, գ. 1. Հեռախոսափողի այն մասը, որ պահվում է բերանի դիմաց՝ խոսելու համար: 2. Կոնաձև խողովակ՝ ձայնային ալիքները որոշակի ուղղությամբ կենտրոնացնելու և ձայնը ուժգնացնելու համար: 3. հգն. –ներ, փխբ.. Մեկի կարծիքները կրկնող՝ տարածող մարդ, ձայնափող» (11, էջ 596):

Բաղաձայններ // բաղաձայներ զուգաձևության գոյությունը պայմանավորված է բառակազմական նորմի չիմացությամբ. այն նախածանցավոր բառ է, և հոգնակին էլ բնականաբար կազմվում է **–ներ**-ով:

Սրան ավելացնենք նաև Ս. Աբրահամյանի դիտողությունը. «Նկատելի է, որ երբ բաղադրյալ բառի վերջին բաղադրիչը, հակառակ սպասված օրինաչափության, առանձին դեպքերում չի հնչյունափոխվում, **-եր**-ի փոխարեն ստանում է **-ներ** հոգնակերտ մասնիկը: Այս երևույթը, սակայն, հնացած է և ոչ օրինաչափական» (9, էջ 51): Խոսքը **ծրագիրներ // ծրագրեր, ձեռագիրներ // ձեռագրեր, բնութագիրներ // բնութագրեր, զուգահեռագիծներ // զուգահեռագծեր, երկաթգիծներ // երկաթգծեր** և նման տիպի զուգաձևությունների մասին է, որոնցից օրինաչափական են երկրորդ տարբերակները այն պարզ կանոնով արդարացված, որ սրանց **գիծ** և **գիր** վերջնաբաղադրիչների հոգնակին լինում է ոչ թե **գծներ**, **գիրներ**, այլ **գծեր**, **գրեր**: **Գանգատագիրներ // գանգատագրեր** զուգաձևության մեջ տարբերակները կանոնական են իմաստային տարբերակման հիմունքով՝ «գանգատ գրող» իմաստով **գանգատագիր**-ը ստանում է **-ներ** հոգնակերտը, իսկ «գրավոր գանգատ» իմաստով՝ **-եր**: **Ծաղկագիր**-ը «ծաղկի պատկեր ներկայացնող զարդագրեր գրող՝ նկարող» իմաստով ստանում է **-ներ**, իսկ «ծաղկի

պատկեր ներկայացնող զարդագիր» իմաստով՝ **-եր** հոգնակերտնե-րը: **Կենդանագիր** գոյականը հազվադեպ «դեմքերը գույներով նկարող նկարիչ, դիմանկարիչ, պատկերահան» և «ցուցանակներ գրող արվեստագետ» իմաստներով ստանում է **-ներ** հոգնակերտը և զուգաձևություն է կազմում «կենդանիների նման զարդարուն գիր, զարդագիր, գազանագիր» իմաստով գործածվող **կենդանագրեր** ձևի հետ. արդյունքում զուգաձևություն է՝ **կենդանագրեր // կեն-դանագիրներ: Հուշագրեր // հուշագիրներ** հոգնակիականազմական զուգաձևության մեջ տարբերակները հանդես են գալիս համապա-տասխանաբար «դիվանագիտական փաստաթուղթ, հուշագրութ-յուն» և «հուշեր գրող, հուշագրությունների հեղինակ, հիշատակա-գիր» իմաստներով, իսկ **որմնագիրներ // որմնագրեր** զուգա-ձևությունում **որմնագիր** բառը «պատի վրա փորագրող վարպետ» իմաստով ստանում է **-ներ** վերջավորությունը, իսկ «պատի վրա փորագրված արձանագրություն» իմաստով՝ **-եր:** Իմաստային նույն տարբերակումն է ընկած **չափագիրներ // չափագրեր, պարսա-վագիրներ // պարսավագրեր, վիմագիրներ // վիմագրեր** զուգա-ձևությունների հիմքում: **Սրտագիրներ // սրտագրեր** զուգաձևութ-յունում առաջին տարբերակն ունի «սրտի աշխատանքը գրառող սարք» իմաստը, իսկ երկրորդը՝ «սրտի աշխատանքի գրառումը՝ պատկերը՝ գծագիրը» իմաստը: **Պատկերագրեր // պատ-կերագիրներ** զուգաձևության մեջ **-ներ**-ով տարբերակը՝ «նկարիչ, գեղանկարիչ, դիմանկարիչ» իմաստով, հնացած է:

Եթե **հեռագիր** բառում ընդունում ենք, որ **գիր** բաղադրիչը պահպանում է իր նշանակությունը, ուստի և **հեռագիր** բառի հոգնակին **-եր** վերջավորությամբ ենք կազմում, ապա ինչու՞ չընդունել, որ **չափանիշ** բառի մեջ էլ **նիշ**-ը իր նշանակությունն է պահպանում, բայց ինչպես տեսնում ենք, նրանով վերջավորվող բաղադրյալ բառերի հոգնակին մեծ մասամբ կազմվում է **-ներ**-ով՝ **չափանիշներ**: **Ցուցանիշ** բառը լեզվում տարածված է թե՛ **-եր**-ով, թե՛ **-ներ**-ով՝ **ցուցանիշեր // ցուցանիշներ**: Ընդհանրապես դժվար է բարդությունների բաղադրիչների փոխհարաբերությունների մեջ թափանցել՝ որոշելու համար, թե բարդ գոյականների հոգնակին **-եր**-ով է կազմվում, թե **-ներ**-ով: **Ձեռագործներ** հոգնակին ըստ լեզ-վում գործող օրենքի իր այս ձևով ենթադրում է «ձեռքով գործված»

բառակապակցությամբ արտահայտված շարահյուսական հարաբերությունը, իսկ **ձեռագործեր** հոգնակին ենթադրում է «ձեռքի գործ» բառակապակցությամբ արտահայտված հարաբերությունը: Դժվար է պատասխանել, թե ինչու **ջրանցքներ, միջանցքներ, նրբանցքներ, քղանցքներ** և **քթանցքեր, օդանցքեր, սողանցքեր, դիտանցքեր,** կամ՝ **միջակետեր, վերջակետեր, նշանակետեր, բազմակետեր** և **ժամկետներ, տեսակետներ:**

Կազմությամբ բարդ գոյականների աննախընթաց աճը, որ նկատվում է մեր օրերում, ստիպում է ճիշտ կողմնորոշվել նրանց հոգնակիների կազմության հարցում, զուգածևերի տեղ չթողնել: Սակայն լեզվական ավանդույթը կամ բարդության երկրորդ բաղադրիչի իմաստի պահպանման վերաբերյալ կանոնը միշտ չէ, որ կարող է հարցը դրականապես լուծել: Հաճախ դժվար է որոշել՝ պահպանե՞լ է երկրորդ բաղադրիչն իր նշանակությունը, թե՞ ոչ. ընտրության չափանիշներն էլ տարբեր են, նրանցով առաջնորդվելն էլ երբեմն ավելի մեծ հակասությունների առջև է կանգնեցնում. որի՞ն առավելություն տալ. ո՞րը ընտրել: Այս առումով գնահատելի է լեզվի հոգսերով մտահոգվողների աշխատանքը, նրանց, ովքեր նկատում են քերականական այս երկվությունները, ընտրություն են կատարում՝ փորձելով բացատրել, հաճախ էլ դժվարությունների առջև են կանգնում՝ **արշալույս+ե՞ր**, թե՞ **արշալույս+ներ**, **իրիկնալույս+ե՞ր**, թե՞ **իրիկնալույս+ներ**, **խաչբառ+ե՞ր**, թե՞ **խաչբառ+ներ**, **նավախել+ե՞ր**, թե **նավախել+ներ**, **հետևակազոր+ե՞ր**, թե՞ **հետևակազոր+ներ**, **ծխախոտ+ե՞ր**, թե՞ **ծխախոտ+ներ**, **ծխամորճ+ե՞ր**, թե՞ **ծխամորճ+ներ**, **երկտող+ե՞ր**, թե՞ **երկտող+ներ**, **փառատոն+ե՞ր**, թե՞ **փառատոն+ներ**, **քարաքոս+ե՞ր**, թե՞ **քարաքոս+ներ**, **ելումուտ+ե՞ր**, թե՞ **ելումուտ+ներ**, **չվերթ+ե՞ր**, թե՞ **չվերթ+ներ**, **կարմրախայտ+ե՞ր**, թե՞ **կարմրախայտ+ներ**, **ցանկապատ+ե՞ր**, թե՞ **ցանկապատ+ներ**, **արտագաղթ+ե՞ր**, թե՞ **արտագաղթ+ներ** և այսպես շարունակ: Այս հարցում մեզ համար ընդունելի է է. Աղայանի լեզվաըմբռնումը. «Ուշագրավ է այն փաստը, -գրում է նա,- որ այժմ այդ տարբերությունը սակավ առ սակավ վերանում է: Դրա ապացույցն այն է, որ հաճախ միևնույն բառը ստանում է և՛ **-եր**, և՛ **-ներ** մասնիկը: Օրինակ՝ **ծրագիր, լրագիր, հեռագիր** բառերը **ծրագրեր, լրագրեր, հեռագրեր** ճիշտ

ձևերին զուգընթաց հաճախ գործածվում են **ծրագիրներ, լրագիրներ, հեռագիրներ** ձևերով, որոնց մեջ **-ներ** հոգնակերտի ստացումը զուգադիպում է **ի** ձայնավորի պահպանմանը՝ սղման փոխարեն, իսկ ձայնավորների՝ սղումը կամ ամփոփում չկատարելը, ինչպես գիտենք, նոր երևույթ է: Նշանակում է, ժամանակակից լեզվի զարգացումը տանում է դեպի հիշյալ երկու կարգի բարդությունների հոգնակիի կազմության միատեսակության, որ արդյունք է դարձյալ մեր լեզվամտածողության մեջ այդ բարդությունների միատեսակ ըմբռնման: Այն ուրույն լեզվամտածողությունը, որ առաջ է բերել հիշյալ երկու կարգի բարդությունների տարբերությունը՝ հոգնակիի կազմության մեջ, այլևս չի գիտակցվում, որի շնորհիվ էլ այժմ աստիճանաբար շփոթություն է ստեղծվում նրանց հոգնակիների մեջ» (15, էջ 168-169): Իսկապես, այս շփոթությունը անցումային փուլին բնորոշ առանձնահատկություն է, և հոգնակիակազմության մեջ միատեսակության ձգտումն ու վանկաքանակության սկզբունքով կազմության միտման զարգացումը ի վերջո կարող են շատ զուգաձևությունների լուծման և տարբերակների ընտրության բանալի դառնալ, որով և լեզվական նորմով սահմանված կանոններն ու օրինաչափությունները «բայց» և «սակայն» բառերը չեն ընդգրկի: Սրանք նորություններ են, նոր ձևեր, իսկ նորը կա՛մ հաստատվում է, կա՛մ վերանում: Եթե լեզվամտածողությունն էլ զուգակցվի լեզվազգացողության հետ՝ ճիշտ կռահելու բարդ բառերի հոգնակիի կազմության հարցում լեզվի զարգացման միտումները, կանխատեսելու զուգաձևությունների զարգացման ընթացքը, ապա հավանական է, որ այս դժվարությունը հաղթահարվի, և բարդ բառերի հոգնակին ընդհանրապես կազմվի բազմավանկ բառերի հոգնակիի կազմության նույն օրինաչափությամբ:

«Լեզվական փաստերի քննությունը ցույց է տալիս, որ ներկա փուլում լեզուն կարծես ձգտում է հոգնակիների կազմության մեջ ևս միօրինակություն մտցնել, այսինքն եթե բառը բազմավանկ է, հոգնակին կազմել **ներ**-ով (դա նկատվում է հատկապես նորակազմ բառերում): Այս միտումը առայժմ արտահայտվում է բանավոր խոսքում, սակայն աստիճանաբար թափանցում է նաև գրավոր խոսք. այժմ ունենք **խմբերգեր, պահեստապետեր, քարհանքեր, քարայրեր** և նման հոգնակիներ, որոնք ժողովրդախոսակցական լեզ-

վում ավելի տարածված են **–ներ** ձևով, համեմատիր նաև՝ **վրանապետներ, սեղանապետներ, գինեպետներ**... Այժմ ավելի շատ հանդիպում ենք **անգղներ** հոգնակին, քան **անգղեր**»,- եզրակացվում է նորմատիվ քերականություններում (65, էջ 336):

դ/ Ի վերջնահանգն (հատկապես –ցի) ունեցող բառերի հոգնակիակազմական զուգաձևություններ: Հոգնակիակազմության մեջ զուգաձևությունների մի խումբ էլ կա, որը նույնպես ներկայանում է նորմով սահմանվածի, կանոնականի և կանոնականից շեղվածի զուգադրությամբ. խոսքը **ք** հոգնակերտով ձևավորվածների մասին է: Բանն այն է, որ գրաբարում, լեզվական նորմին համապատասխան, բառերի մեծ մասի հոգնակին կազմվել է **ք**-ով: Ժամանակի ընթացքում այն հոգնակիակազմությանը զուգընթաց ձեռք է բերում նաև ածանցական նշանակություն. իմաստային տարբերակման ենթարկվելով՝ վերածվում է բառակազմական մասնիկի: Հենց այս հանգամանքն էլ նպաստում է հոգնակիացնող իմաստի մթագնմանը, և նրա գործածական ոլորտը նեղանում է՝ սահմանափակվելով միայն ձայնավորահանգ բառերի շրջանակով: Այս առումով ձևաբանական նորմը հիմնարար փոփոխություն է կրում և բոլորովին նոր օրենքներ սահմանում, նորմավորում է հոգնակին կազմելու գործընթացը և հոգնակիակազմության նոր օրինաչափություն որդեգրում: Ըստ որում՝ լեզվական նորմի՝ հոգնակիակազմության մեջ կատարված փոփոխությունը փոփոխություններ առաջ բերեց նաև հոլովման համակարգում, առաջին հերթին՝ հոգնակի թվի հոլովման մեջ:

Արևելահայ գրական լեզվի սկզբնական շրջանում **ք** հոգնակերտը համեմատաբար ակտիվ էր, նույնիսկ գերադասելի: Այս առումով հետաքրքրական է Ստ. Նազարյանի «Նամականի»-ից կատարված մեջբերումը. «Ես դոցա ուղղականքը գործ եմ դնում և թյունք և թյուններ ըստ տեղվույն. թեպետ թյուններ բուն ժողովրդական է. բայց թյունք ոչ միայն բարեհնչուն, այլ շատ տեղ հարկավոր, որովհետև թյունները շատ տգեղ են» (93, էջ 333-334):

Ժամանակակից հայերենում գրաբարյան **ք** հոգնակերտը հանդիպում է միայն արխայիկ բնույթի ոճավորված լեզվում կամ **ի**-ով վերջացող բազմավանկ բառերի դեպքում՝ խոսակցական լեզվում:

Այսօր նորմատիվ քերականություններում սոսկ տողատակերում («Ծանոթություն»-ով) է նշվում, որ **ք**-ն գործածվում է ժողովրդախոսակցական տարբերակում և հատկապես **-ացի**, **-եցի**, **-ցի** վերջածանցներով գոյականներից է հոգնակի կազմում, որոնք երբեմն թափանցում են գրական լեզվի մեջ, ստորադասվում զուգահեռ գործածվող **-ներ**-ով գրական ձևերին, և սրա հետևանքով ստեղծվում են հոգնակի թվի զուգահեռ ձևեր, որոնցից մեկը կազմվում է գրականի, մյուսը՝ ժողովրդախոսակցականի կամ բարբառի օրինաչափությամբ՝ **երևանցիներ // երևանցիք, եվրոպացիներ // եվրոպացիք, տեղացիներ // տեղացիք, դասարանցիներ // դասարանցիք, կուրսեցիներ // կուրսեցիք** Ըստ է. Աղայանի (տես՝ 16, էջ 538)՝ **փոխադարձաբար իրար չբացառող, ազատորեն միմյանց փոխարինող ենթածևույթները ազատ ենթածևույթներ են:** Հոգնակերտ **ներ** և **ք** ենթածևույթներն, ուրեմն, ժամանակակից հայերենում ազատ ենթածևույթներ են: Ազատ ենթածևույթները միմյանց նկատմամբ սովորաբար լինում են գերադասության և ստորադասության հարաբերության մեջ, այսպես, օրինակ, **ք** հոգնակերտը ստորադաս է, որովհետև՝ ա/ նրա գործածությունը սահմանափակվում է միայն որոշ կարգի բառերի ոլորտով, բ/ այդ ոլորտում **ներ** հոգնակերտը կարող է փոխարինել **ք**-ին, մինչդեռ **ք**-ն չի կարող փոխարինել **-ներ**-ին այլ կարգի բառերի ոլորտում (գյուղացիք - գյուղացիներ, բայց՝ քաղաքներ, պարտեզներ և ոչ երբեք՝ քաղաքք, պարտեզք և այլն):

Ի-ով վերջավորվող շատ բառերի հոգնակի թիվը, հատկապես գեղարվեստական գրականության լեզվում, կազմվում է նաև **ք**-ով՝ **որդի-որդիք, պատանի-պատանիք, մատանի-մատանիք, տարի-տարիք, գինի-գինիք,** որոնք բարբառային կամ գրաբարյան երանգ ունեն և այսօր ոչ հանձնարարելի են **որդիներ, պատանիներ, մատանիներ, տարիներ** ձևերի կողքին: Ինչ վերաբերում է **գինիք** բառին, ապա **գինի**-ն անհոգնական գոյական է՝ որպես նյութի անուն (ինչպես և՝ կաթ, մեղր, արճիճ, երկաթ, պողպատ). նյութ ցույց տվող գոյականները, որպես օրենք, օգտագործվում են միայն եզակի թվով: Մասնագիտական խոսքում տարբեր տեսակները նշելու նպատակով օգտագործվում են դրանց հոգնակի ձևերը: Նշանակում է սրանք՝ **գինի-գինիներ** (գինիք ձևը բարբառային է), **պղինձ-պղինձներ**,

օղի - օղիներ, որոշ առումով կարելի է զուգաձևություն համարել՝ ձևավորված եզակիի և հոգնակիի հակադրությամբ, որոնք իմաստային տարբերակվածություն ունեն, ոչ թե քանակային:

Զուտ բարբառային և գրական լեզվի համար մերժելի են **ա**-ով վերջավորվող բառերից **ք**-ի ավելացումով կազմված հոգնակիները՝ **ճամփա-ճամփեք, երեխա-երեխեք, փեսա-փեսեք, սատանա-սատանեք, բալա-բալեք, տղա-տղեք**. ճիշտ են՝ **ճամփաներ, երեխաներ, փեսաներ, սատանաներ, բալաներ** (բառը հնացած է), **տղաներ**: Ժողովրդային-բարբառային երանգ ունեն **-երք** հոգնակերտով կազմված **տղերք, աղջկերք** ձևերը **տղաներ, աղջիկներ** գրական ձևերի փոխարեն:

Ուրեմն՝ **ճամփաներ // ճամփեք, նախնիներ // նախնիք, տարիներ // տարիք, գյուղացիներ // գյուղացիք, գերմանացիներ // գերմանացիք, քաղաքացիներ // քաղաքացիք, որդիներ // որդիք, պատանիներ // պատանիք, մատանիներ // մատանիք** և նման զուգաձևություններում կանոնականը, օրինաչափականը առաջին տարբերակներն են:

Մի քանի զուգաձևություններ էլ կան, որոնք գործում են նորմի սահմաններում, կանոնական համազոր տարբերակներ են. երկուսն էլ ճիշտ են, բայց գործառական-կիրառական տարբերություններ ունեն: Խոսքը **տիկիններ // տիկնայք, պարոններ // պարոնայք** զուգաձևությունների, նրանց կիրառական-ոճական տարբերությունների մասին է: Պատմական առումով **կին-կանայք, մարդ-մարդիկ** տիպերի կազմության եղանակները գալիս են ժամանակագրական տարբեր մակարդակներից: **Կին** բառի հոգնակիի կազմության եղանակը շատ հին է. այն, ըստ լեզվաբանական տվյալների, առանձնահատուկ բնույթ է կրել նույնիսկ հնդեվրոպական շրջանում: Մերժելի է ժողովրդախոսակցական լեզվում տարածված **կնանիք** տարբերակը: **Մարդ** բառի հոգնակի կազմության եղանակը ևս տարբերվել է հին հայերենի գործող օրինաչափությունից, թեև, ինչպես Գ. Ջահուկյանն է նշում, նրա հոլովման տիպը այդպիսին չէ. այն ընդհանրություն ունի **իկ** ածանցով կազմությունների հոլովման տիպի հետ, հմմտ՝ **մարդիկ-մարդկանց, ծաղիկ-ծաղկանց**: Պատահական չէ, որ լեզվաբանը եզրակացնում է, որ եթե **-եր**-ը և **-ներ**-ը վերածվել են իսկական հոգնակերտ վերջավորությունների, ապա

–իկ-ը և **-այք**-ը դեռ լիովին չեն խզել կապերը ածանցներից և պահպանում են հավաքականության որոշ երանգ: «Դեռ ավելին. **մարդիկ** հոգնակի ձևը կարող է ածանցվել և ստանալ իսկական հավաքականի արժեք (**մարդկություն**), որ մյուս հոգնանիշ մասնիկների դեպքում հնարավոր չէ: **Անք, ենք, ոնք** վերջավորությունները ևս որոշ հավաքական իմաստ ունեն՝ տարբերվելով սովորական հավաքականներից հոլովման հատուկ տիպով (հմմտ՝ աշխատանք-աշխատանքի և Վարդանանք-Վարդանանց) (101, էջ 157): Անհրաժեշտ է նշել, որ **տիկնայք, պարոնայք** ձևերը նախապես գործածվում էին պատմական երկերում՝ ոճավորման նպատակներով՝ համապատասխան պատմական նկարագրությունների ժամանակ. այսօր գործածվում են նաև պաշտոնական ոճի մեջ՝ հատկապես կոչականի դերով:

Հոգնակերտ մասնիկներ են նաև **-անք**-ը, **-ենք**-ը, **-ոնք**-ը: Սրանք ոչ միայն իմաստային լրացուցիչ տարբերություններ են ստեղծում, այլև ոճական արժեք ունեն՝ հանդիպում են խոսակցական ոճում: **-Անք**-ը ավելանում է հատուկ անուններով արտահայտված հիմքերի դեպքում և օգտագործվում է արխայիկ (կամ արխաիկ) և խոսակցական-բարբառային ոճերում, **-ենք**-ը՝ հատուկ անուններով արտահայտված հիմքերի դեպքում և կիրառվում է խոսակցական ոճում, **-ոնք**-ը՝ միավանկ ազգակցական անունների (պապ, տատ), այլև ստացական դերանունների դեպքում: **Վարդաններ // Վարդանանք // Վարդանենք** եռաձևության մեջ տարբերակները կամ ենթաձևույթները իմաստային համապատասխան տարբերություններ ունեն. առաջինը նշանակում է **Վարդան** անուն ունեցող մեկից ավելի անձեր, **Վարդանանք** նշանակում է **Վարդանը** և իր կողմնակիցները, իսկ **Վարդանենք՝ Վարդանը** և իր ազգակիցները, մերձավորները:

* * *

Լեզվական կանոնով հաստատված է, որ <u>բազմավանկ բառերի հոգնակիի կազմության ժամանակ հնչյունափոխություն տեղի չի ունենում</u>, հետևաբար այս պատճառով տարբերակային ձևեր չեն առաջանում: Ընդհանուր կանոնից շեղում են **երկիր, սկիզբ** բառերը: **Երկիրներ // երկրներ, սկիզբներ // սկզբներ** զուգաձևություններում երկու տարբերակն էլ ձևաբանական նորմի շրջանակներում են: Իսկ

ժողովուրդներ // ժողովրդներ, սերունդներ // սերնդներ, կերակուրներ // կերակրներ, գլուխներ // գլխներ զուգաձևություններում հոգնակիի հնչյունափոխված ձևերը խորթ են, գրական լեզվի համար՝ ոչ հանձնարարելի:

Ժամանակակից գրական հայերենի հոգնակիակազմության մեջ զուգաձևությունների մի հետաքրքիր իրողություն էլ կա. խոսքը ստացական հոգնակիակազմության մասին է, որը գրաբարում և միջին հայերենում չի նկատվել, այսօրվա հայերենում է նկատելի: Զուգաձևություններում հիմքակազմիչ են դառնում մեծ մասամբ առաջին և երկրորդ դեմքերի հետ առնչվող հիմնականում մարմնի մաս, օրգան ցույց տվող բառեր՝ **աչք, ձեռք, վիզ, ուս, կուրծք, միտք, խոսք** և այլն: Եզակի ստացականի համապատասխան հոգնակիները կազմելիս տեղի է ունենում հիմքերի անհրաժեշտ զուգորդում հոգնակերտի հետ (**աչքերս, խոսքերս...**), սակայն կա հոգնակերտի և ստացական հոդի այլ բնույթի զուգորդում, որն արտահայտվում է «հոգնակիակազմ հիմք + ներ + ստացական հոդ» կաղապարով: Ստացվում են զուգաձևություններ՝ **սրտերս // սրտներս, խոսքերդ // խոսքներդ, աչքերս // աչքներս**: Գուրգեն Սևակը «Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց»-ում գրում է. «Այս օրինակների մեջ բառի հիմքն է ...սրտ (հոգնակի՝ սրտեր), եր-ը սրտի հոգնակիության նշանն է, ս-ն, դ-ն, ն-ն ստացական հոդ են, իսկ հիմքի և հոգնակիի վերջավորության միջև ընկնող ն-ն ստացականի հոգնակիության նշանն է: Սրտներս, սրտներդ, սրտները բառերի մեջ կա հոգնակիության երկու նշան և իմաստ. մեկը ս-ի, դ-ի, ն-ի հոգնակիության նշանը (-ն-), որը տալիս է իմ, քո, նրա իմաստի հոգնակիությունը, այսինքն՝ մեր, ձեր, նրանց, մյուսը՝ սրտի հոգնակիության նշանը (-եր), որ տալիս է սիրտ իմաստի հոգնակիությունը, այսինքն՝ սրտեր: Հետևաբար այն է լինում, որ այս բառերը նշանակում են ո՛չ միայն իմ սրտերը, քո սրտերը, նրա սրտերը, այլև՛ մեր սրտերը, ձեր սրտերը, նրանց սրտերը» (110, էջ 279):

Հ. Պետրոսյանը սա համարում է **-ներ** հոգնակերտի կիրառական մի տարբերակ՝ իմաստաբանական պայմանավորվածությամբ (ժողովրդի խոսքն է՝ **սրտներս** միշտ լայն լինի, **սրտներս** միշտ բաց լինի, **սրտներս** տեղն ընկավ, **աչքներս** լույս լինի, **ոտքներս**

կտրեցին, **մտքներովս** չի անցել, **ձեռքներդ** քարի տակ չեն..): Այս զուգաձևություններին կա զուգահեռ մի երրորդ տարբերակ ևս՝ խոսակցական լեզվում տարածված՝ **ոտքերը // ոտքները // ոտքերներրը, ձեռքերս // ձեռքներս // ձեռքերներս**: Երրորդները սխալ կազմություններ են՝ **-եր**-ը ավելորդ է: «... **Մարդ-ն-եր-ս, կին-ն-եր-ս** ձևերում **եր**-ի հանդես գալը դիրքային սահմանափակություն ունի (հանդիպում է միայն **ն-ս, ն-դ, ն-ը, ն-ն** զուգամասնիկների զուգորդությամբ) և պայմանավորված է ընդարձակ կոնտեքստով, այսինքն՝ ոճական արժեք ունի (հատուկ է խոսակցական լեզվին)», - գրում է Գ. Ջահուկյանը (101, էջ 149):

Լեզվաբանները լեզվական հոտառությամբ զգում են, գուշակում են նաև լեզվի թվակազմական՝ հոգնակիակազմական քերականական կարգի զարգացման միտումները, բայց դա բավարար չէ լեզվական նորմը փոփոխելու համար. անհրաժեշտ է լեզվական ճիշտ քաղաքականությամբ զուգաձևությունների հարցը լուծել և օրենքի ուժ տալ հաղթանակող, հաղթանակած տարբերակներին, ա՛յս ձևով փոփոխել լեզվական նորմը և այդ փոփոխություններն արձանագրել նորմատիվ քերականություններում: Չևաբանական-գոյականական համակարգի հոգնակիակազմության ենթահամակարգում գործող լեզվական նորմը փոփոխելու հարցում ևս լեզվաբանների հետազոտական աշխատանքը կարևորվում է՝ զարգացման միտումը նկատելու և լեզվի մեջ կատարվող փոփոխությունները արձանագրելու առումով, բայց նրանք ի զորու չեն լեզվական նորմը փոփոխելու: Հոգնակիակազմության նորմում փոփոխություն կկատարվի միայն այն դեպքում, երբ բարձրագույն մարմինների կողմից դրանք համապատասխան որոշումների, կանոնների տեսքով տեղ գտնեն նորմատիվ քերականություններում՝ հատկապես դպրոցական դասագրքերում: Մնում է հավատալ, որ այս «երկդիմի ու անլուծելի» թվացող զուգաձևությունները աստիճանաբար հանգեն լեզվական նորմով սահմանված միաձևության, թեպետև լեզվի ինքնազարգացման ընթացքը, կենդանի «լեզուն» նոր զուգաձևություններ կծնի՝ դրանք հաղթահարելու նոր խնդիրներ, նոր կանոններ սահմանելու միտումով:

Այսպիսով՝ կարելի է հավատալ աճառյանական տրամաբանությանը և սպասել, որ հոգնակիակազմության հարցում լեզուն

կիանգի միակերպության, միօրինակության, այսինքն՝ հոգնակիակազմությունը վանկաքանակության սկզբունքով կկատարվի, լեզվական նորմը էլ մի կանոն կսահմանի՝ միավանկ բառերի հոգնակին կազմվում է **-եր**, իսկ բազմավանկ բառերի հոգնակին՝ **-ներ** վերջավորություններով, որով գրական լեզվի նորմին հակասող շեղումները կվերանան, իսկ զուգահեռ ձևերից մեկը դուրս կմղի մյուսին: Կարող ենք է՛լ ավելի հեռուն գնալ և մտածել՝ ինչ-որ ժամանակ այդ միակերպությունը լիակատար կլինի, այսինքն՝ բոլոր գոյականների հոգնակին կկազմվի կա՛մ միայն **-եր**-ով, կա՛մ **-ներ**-ով (բացառված չէ, որ կարող է ստեղծվել մի լեզվավիճակ, որ այդ ընդհանրական միտողը ո՛չ **-եր**-ը լինի, ո՛չ **–ներ**-ը): Բայց այսօր՝ լեզվի զարգացման ներկա փուլում, մնում է բացառել սխալ ձևերը՝ առաջնորդվելով բառարանային համապատասխան հղումներով, հնարավոր չափով վերացնել անմիօրինակ ձևերը, զուգաձևություններում տարբերակների ընտրության հարցում առաջնորդվել ճիշտ լեզվազգացողությամբ, լեզվական կատարելություն տանող ճանապարհին զուգաձևությունների գոյությունը ընկալել որպես անհրաժեշտություն (իմաստային, քերականական, ոճական հիմունքներով արդարացված), որպես փուլային (անցումային) վիճակ լեզվի զարգացման մեջ, կամ սպասել վերևից եկող համապատասխան որոշումների, որոնցով էլ թվակազմության մանրահամակարգում ձևաբանական նորմի փոփոխություն կարձանագրվի:

Գ. Հատկանվանական զուգաձևություններ

Լեզվաբանական գրականության մեջ հատուկ անուններն ուսումնասիրող գիտակարգը կոչվում է **հատկանունաբանություն** կամ **հատկանվանաբանություն**: Լեզվաբանների մի խումբ այն համարում է բառագիտության ենթաբաժին, ոմանք էլ դիտում են իբրև լեզվաբանության առանձին բնագավառ՝ տարբեր գիտաճյուղերով՝ անձնանունաբանություն, տեղանունաբանություն, դիցանունաբանություն, ջրանունաբանություն, աստղանունաբանություն և այլն: Ժամանակակից հայերենի նորմատիվ քերականություններում հատուկ անուններն առավելապես ուսումնասիրվում են ձևաբանական համակարգում և հասարակ անունների հետ խմբավորվում են բառաքերականական-խոսքիմաստային մեկ դասի մեջ՝ գոյական անվան մեջ:

Սրանք, ի տարբերություն հասարակ անունների՝

- միայն թանձրացական (կոնկրետ) իմաստ ունեն.
- հոգնակի թվով հանդես չեն գալիս (հոգնակի թիվը հատուկ անվան բնորոշ կարգ չէ)՝ բացի մասնավոր դեպքերից՝ Ալպեր, Հիմալայներ, Վարդանանք և այլն (հոգնակի թվով գործածվելիս ձեռք են բերում ոճական-արտահայտչական որոշակի արժեք՝ դառնալով ընդհանուր անուն).
- հանդես են գալիս քերականական առկայացման ինքնատիպ ձևավորումով.
- բացատրական բառարաններում սովորաբար բացառվում են.
- գրավոր խոսքում արտահայտվում են ուրույն ուղղագրությամբ. սովորաբար սկզբնագիրը գրվում է մեծատառով, բաղադրյալներն ունեն գրության որոշակի կանոններ:

Մեծատառեր զանազանող ժամանակակից լեզուներից է նաև հայերենը, որում ևս մեծատառերը միայն օժանդակ միջոց են գրավոր խոսքից օգտվելը հեշտացնելու համար: Հատուկ անունների զուգաձևություններն առավելապես մեծատառով-փոքրատառով գրության հետ են կապվում: Սա հայոց լեզվի առավել վիճահարույց հարցերից մեկն է: Զուգաձևությունների, տարբերակների ընտրության հարցում հիմնականում առաջնորդվում ենք լեզվական նորմով

սահմանված կանոններով, կանոններ, որոնք խարսխվում են 1963 թվականին Տերմինաբանական կոմիտեի (թե՞ տերմինաբանական կոմիտեի. այստեղ ևս ընտրության խնդիր կա) «Բաղադրյալ հատուկ անուններում մեծատառերի գրությունը հեշտացնելու և դրանց գրության մեջ միօրինակություն սահմանելու մասին» որոշման վրա: Այս որոշումից մոտ կես դար է անցել, և հսկայական փոփոխություններ են կատարվել հասարակական կյանքում, որոնք էլ իրենց կնիքն են թողել լեզվի վրա: Ոչ միայն շարունակում են գոյություն ունենալ հատուկ անունների գրության եղած դժվարությունները, այլև ավելացել են ու ավելանում են նորերը: Որոշումներ, «հրամաններ» կան, բայց հատուկ անունների մանրահամակարգում գործող ձևաբանական-հնչյունական (ուղղագրական) նորմում գրեթե փոփոխություններ չեն արձանագրվում: Արդյունքում զուգաձևությունների, զուգադրությունների առատությունն է, հայ լեզվաբանական աշխարհում տիրող երկվությունը, տարակարծություններն ու հակամարտությունները, որոնց սրացման պատճառ են դառնում՝

հատուկ և հասարակ անունների սահմանների ոչ հստակ որոշումը.

հասարակ անուն - հատուկ անուն անցման և հակառակը՝ հատուկ անուն- հասարակ անուն անցման ճանապարհի աստիճանականությունը.

արևմտահայերենի և հատկապես եվրոպական լեզուների ազդեցությունները.

լեզվական ավանդույթը.

լեզվի մյուս համակարգերում և ենթահամակարգերում եղած զուգաձևությունների ներթափանցումը.

համաբանության օրենքի գործառումը.

«նվազագույն ճիգի» օրենքի ազդեցությամբ պայմանավորված համառոտված, ոչ լրիվ ձևերի հաճախակի օգտագործումը.

խոսողի, գրողի սուբյեկտիվ վերաբերմունքը, հատկանվանաբանության մեջ «հոգեբանական պահի» դրսևորումը.

քաղաքավարական ձևերի, դիմելաձևերի գործածության աշխուժացումը.

էթիկայի կանոնների պահպանումը:

Արդյունքում զուգաձևությունների առատությունն է՝ **Քեոպս // Քեոփս, Օլիմպոս // Ոլիմպոս, Ֆարհատ // Ֆահրադ, Թագոր // Տագոր** (Ռաբինդրանաթ), **Միսաք // Միսակ, Դելֆիս // Դելֆի, Չաուշ // Չավուշ, Պերսեոս // Պերսևս, Սողոմոն // Սոլոմոն, Պրոմեթեոս // Պրոմեթևս, Ուիլյամ // Վիլյամ, Ռաֆայել // Ռափայել, Ուրմիո // Ուրմիա** (լիճ), **Անդրեաս // Անդրիաս, Ազնաուր // Ազնավուր, Ափրոդիտե // Աֆրոդիտե, Բաթ // Բատ, Գալիա // Գաղիա, Դավիթ // Դավիդ, Դիկենս // Դիկկենս // Դիքենս (Չարլզ), էդվարդ // էդուարդ, Դոն Կիխոտ // Դոն Քիշոտ, Գրիմ // Գրիմմ, Եվրիպիդես // Էվրիպիդես, Ցիցերոն // Կիկերոն, Եգեյան // Էգեյան** (ծով), **Թբիլիսի // Թիֆլիս // Տփղիս, Բագրեվանդ // Բագրևանդ, Բյութանիա // Բութանիա, Բյուրակն // Բյուրակնի, Ապուսեթ // Աբուսեթ, Կապուտջուղ // Կապուտջիղ** (լեռ) և այլն: Տառադարձության և գրադարձության սկզբունքների ոչ հստակ տարբերակումը, այլ լեզուներում բացակայող հնչույթների արտահայտման տարբեր սկզբունքների կիրառումը և ընդհանրապես տառադարձության որոշակի սկզբունքների բացակայությունը հանգեցնում են այն բանին, որ կողք կողքի հանդիպում են երկու և ավելի համարժեքներ. ձևաբանական-հնչյունական զուգաձևություններից շատերի առաջացումը հատկապես օտար բառերի հին և նոր տառադարձման հին ու նոր օրենքներով է պայմանավորված. կանոնական համազոր տարբերակներ են: Օրինակ՝ օտարազգի **l** տառը այսօր տառադարձվում է **լ** տառով, իսկ հնում տառադարձվել է **ղ** տառով, ըստ այդմ էլ **Սոլոմոն // Սողոմոն, Ալեքսանդր // Աղեքսանդր, Պլատոն // Պղատոն, Գալիա // Գաղիա** զուգաձևություններում առաջին տարբերակները նոր տառադարձությամբ են, իսկ երկրորդները՝ հին: Անգլերեն w-ն տառադարձվում է **վ** տառով, իսկ հնում տարածված է եղել **ու-**ով տառադարձությունը, և **Ուիլյամ // Վիլյամ, էմանվել // էմանուել, էդվարդ // էդուարդ** զուգաձևությունները այդ երկու տիպերի՝ հին ու նոր ձևերի համատեղ գործածության արդյունքն են և այլն:

Հնչյունական տարբերություն ունի հունական դիցաբանության մեջ գորգոնյան քույրերից մեկի անունը՝ **Մեդուզա // Մեդուսա:**

Խոսակցական լեզուն նաև սեղմությամբ ու հակիրճությամբ է հատկանշվում, որն արտահայտվում է անձնանունների կրճատման, ձևափոխման մեջ. սակայն անձնանվան կրճատումը սոսկ սեղմութ-

յուն չէ, այլև ժողովուրդը դրանով վերացնում է դիմելու պաշտոնականությունը, մտերմական երանգ է հաղորդում խոսքին: Սիա ոճական-արտահայտչական այս հնարը խոսակցական լեզվից գեղարվեստական գրականության միջոցով թափանցում է նաև գրական լեզվի մեջ: **Բենիամին // Բենիկ, Գարեգին // Գարիկ, Զորայր // Զորիկ, Խաչատուր // Խաչիկ, Հովհաննես // Հովիկ, Նորայր // Նորիկ, Ռաֆայել // Ռաֆիկ, Սասուն // Սասունիկ, Անի // Անիկ, Արև // Արևիկ, Զարուհի // Զարիկ, Լուսինե // Լուսյա // Լուսիկ, Շուշան // Շուշանիկ, Արա // Արայիկ, Վաչագան // Վաչիկ, ժենյա // ժենիկ, Ռուբեն // Ռուբիկ, Սոնյա // Սոնիկ**... զուգածևություններում առաջինների կողքին ինքնուրույն գործածություն են ստացել և համարվում են թույլատրելի տարբերակներ **–իկ** փոքրացուցիչ-փաղաքշական ածանցով կազմվածները:

Եթե **Սուսաննա // Սուսան, Զաքարիա // Զաքարե // Զաքար, Հարություն // Հարութ, Սուրեն // Սուրիկ, Վաչե // Վաչագան, Ազգանուշ // Ազգուշ, Արուսյակ // Արուս, Հայկանուշ // Հայկուշ, Մարգարիտ // Մարգարիտա // Մարգո, Սիրանուշ // Սիրուշ, Սոկրատես // Սոկրատ, Ագնեսա // Ագնես, Սուլամիթա // Սուլամիթ, Տերենտիոս // Տերենտ, Փիլիպոս // Փիլոս, Զուլիետա // Զուլիետ**... զուգածևությունների երկու տարբերակներն էլ թույլատրելի են և լեզվական նորմի սահմաններում են, ապա **Սուսան // Սուսո, Տիգրան // Տիգո // /Տիկո/, Հրաչյա // Հրաչո, Գրիգոր // Գոքոր, Հովհաննես // Հովո, Անահիտ // Անո, Արմենակ // Արմո, Խաչատուր // Խչո, Նազելի // Նազո, Զարուհի // Զարո, Փառանձեմ // Փառո, Շուշան // Շուշո, Մկրտիչ // Մկո** և նման զուգածևություններում գրական են առաջին եզրերը, իսկ երկրորդները հասարակաբանություններ են, խոսակցական են, ժարգոնային, ուստի և գրական լեզվում հանձնարարելի չեն: Կրճատ ձևերի օգտագործումը առնչվում է խոսքի կուլտուրայի հետ և խոսքային վարքի կանոնների խախտում է: Գրական լեզվում հանձնարարելի չեն նաև **Արմեն // Արմենչիկ, Միքայել // Միկուլիկ (Միկուլ), Ալբերտ // Աբուլիկ (Աբուլ). Գագիկ // Գագուլիկ (Գագուլ/ , Գարեգին // Գուգուշ, Սարգիս // Սաքուլ**... զուգածևությունների երկրորդ տարբերակները, որոնք կազմվում են ժողովրդախոսակցական ոճին բնորոշ փաղաքշական-փոքրացուցիչ մասնիկներով:

Անձնանունաբանության մեջ թույլատրելի են մի շարք անձնանունների համառոտված տարբերակները, և **Կարապետ // Կարո, Հմայակ // Համո, Սարիբեկ // Սարո** և նման զուգաձևություններում երկու տարբերակներն էլ հանձնարարելի են:

Երբեմն հնչյունափոխությամբ կամ գրության ակունքների, ավանդույթների, նաև անունների հայերենացման միտման հետ կապված գոյանում են անվան տարբերակներ, որոնք կարող են միմյանցից հեռանալ անճանաչելիության աստիճանի /**էլիզաբեթ // Ելիզավետա // էլիզ // էլզա // Լիզա // Զաբել // Իզաբելլա // Բելա**...):

Լենկթեմուր // Լանկթեմուր // Լենկ-Թեմուր // Լենկ Թեմուր // Լանկ-Թեմուր // Լանկ Թեմուր բազմաձևության մեջ տարբերակները համազոր են, միայն թե տարբեր բառարաններում, որպես գերադասելի, տարբեր ձևեր են հանձնարարվում:

Անձնանվան տարբերակային ձևերը հիմք են դառնում ազգանվանական զուգաձևությունների, որոնցում տարբերակներից մեկը ձևավորվում է փաղաքշական, կոչական, հնչյունափոխված, ժողովրդախոսակցական, կրճատված հիմքերով, որոնց մեծ մասը գրական չէ և պաշտոնապես անընդունելի: **Դանիելյան // Դանիելիկյան, Ազատյան // Ազատիկյան, Պերճյան // Պերճիկյան, Արտաշեսյան // Արտուշյան, Ավետիքյան // Ավեյան, Գաբրիելյան // Գաբեյան, Դավթյան // Դավոյան, Հովհաննիսյան // Հովեյան // Հովոյան // Հովիկյան** ազգանվանական տարբերակային ձևերից կանոնական են առաջին տարբերակները: Հնչյունափոխական-հատկանվանական զուգաձևություններ են՝ **Ծերունյան // Ծիրունյան, Ալեքյան // Ալիքյան, Արարքեցյան // Արարքցյան, Սալախյան // Սուլախյան // Սոլախյան, էլբակյան // Ելբակյան, Թյունայան // Թունյան, Լուսինյան // Լիսինյան, Արիստակեսյան // Արեստակեսյան, Զարաֆյան // Զարիֆյան // Զարեֆյան, Միրիջանյան // Միրջանյան, Թահիրյան // Թայիրյան, Բեհբության // Բեյբության, Մարության // Մարուխյան, Խալաֆյան // Խալափյան** և այլն. հնչյունների հավելմամբ և սղմամբ են ձևավորվել **Որսկանյան, Գյուլդամիրյան և Գինոյան, Սաքայան, Թոմասյան, Զեյթունյան** ազգանվանատարբերակները **Ոսկանյան, Գյուլամիրյան և Գինոսյան, Սաքանյան, Թովմասյան, Զեյթունցյան** ազգանունների կող-

քին: Մեծ թիվ են կազմում այլ լեզուների առանձնահատկություններով ձևավորված տարբերակները...

Ձևաբանական-կետադրական զուգաձևություն կարելի է համարել հատուկ անունը կազմող բաղադրամասերի առանձին և գծիկով գրությունը: **Դավիթ-Բեկ // Դավիթ Բեկ, Շահ-Աբաս // Շահ Աբաս, Աբաս-Միրզա // Աբաս Միրզա, Խնկո-Ապեր // Խնկո Ապեր, Աթենաս -Պալլաս // Աթենաս Պալլաս, Թաջ-Մահալ // Թաջ Մահալ** զուգաձևություններում լեզվական նորմով սահմանվածները առաջին եզրերն են, իսկ **Սանկտ-Պետերբուրգ // Սանկտ Պետերբուրգ, Բաթու-Խան // Բաթու Խան, Դյումա-հայր // Դյումա հայր, Դյումա-որդի // Դյումա որդի** զուգաձևություններում՝ երկրորդները: **Դեյր էզ-Զոր // Դեյր-էզ-Զոր // Դեր-Զոր // Դեր Զոր, Բաշ-Ապարան // Բաշ Ապարան, Թուր - Կեծակի // Թուր Կեծակի, Խաչ-Պատերազմի // Խաչ Պատերազմի, Քուռկիկ-Ջալալի // Քուռկիկ Ջալալի** զուգահեռ ձևերը ազատ տարբերակներ են: Դ. Գյուրջինյանը **Թուր Կեծակի, Խաչ Պատերազմի, Քուռկիկ Ջալալի** անունները միայն այս ձևերով է ընդգրկել բառարանում (46, էջ 65, էջ 70, էջ137):

Կաթողիկոս Ամենայն Հայոց // Կաթողիկոս ամենայն հայոց, Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո // Կաթողիկոս մեծի տանն Կիլիկիո, Կաթողիկոսություն Ամենայն Հայոց // Կաթողիկոսություն ամենայն հայոց, Կաթողիկոսություն Մեծի Տանն Կիլիկիո // Կաթողիկոսություն մեծի տանն Կիլիկիո, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս // Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսություն // Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսություն, Մայր Աթոռ // Մայր աթոռ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին // Մայր աթոռ Սուրբ Էջմիածին զուգաձևություններում տարբերակները կանոնական են և համազոր. նախընտրելի են առաջին տարբերակները: **Կ. Պոլիս // Կոստանդնուպոլիս** զուգաձևության մեջ տարբերակները համազոր են կրճատ և լրիվ ձևերի հակադրությամբ:

Մաշտոց-ը անձնանուն է և գրվում է մեծատառով, բայց ահա որպես ծիսական ժողովածուի անուն՝ գրության երկակիություն ունի՝ **Մաշտոց // մաշտոց:** Իսկ Երևանի Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի անունը եռաձևություն ունի, որի երեք տարբերակներն էլ ճիշտ են՝ **Մատենադարան // Երևանի Մ. Մաշտոցի ան-**

վան Մատենադարան // Մաշտոցյան Մատենադարան, իսկ որևէ շեղում այս երեքից արդեն սխալ է:

Կարծում ենք՝ ձևաբանական զուգաձևություններ պետք է համարել բաղադրյալ հատուկ անունների գրության տարաձևություններն այնքանով, որ դրանք ուսումնասիրվում են գոյականական համակարգում: Այդպիսիներից են՝ **Մեծ Արջ // Մեծ արջ** (համաստեղություն), **Ծիր Կաթին // Ծիր կաթին, Հայկական Պար // Հայկական պար** (լեռնաշղթա), **Աֆրիկայի Եղջյուր // Աֆրիկայի եղջյուր** (թերակղզի), **Վիեննայի Անտառ // Վիեննայի անտառ** (լեռնազանգված), **Հյուսիսային Սառուցյալ // Հյուսիսային սառուցյալ** (օվկիանոս), **Մեծ Քարե // Մեծ քարե** (կամուրջ), **Հրո Երկիր // Հրո երկիր** (հրվանդան), **Մերձավոր Արևելք // Մերձավոր արևելք, Մաստարայի Սուրբ Հովհաննես // Մաստարայի սուրբ Հովհաննես** (եկեղեցի) և այլն: 1978 թ լույս տեսած «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու»-ի որոշումներից մեկը բաղադրյալ հատուկ անուններում մեծատառերի գործածությունը հեշտացնելու և դրանց գրության մեջ միօրինակություն սահմանելու մասին է (այն հաստատվել է տերմինաբանական կոմիտեի 1963 թ հունվարի նիստում. նախագծի վերջնական օրինակը կազմել են Ա. Աբրահամյանը և Հ. Բարսեղյանը, խմբագրել է Գ. Սևակը): Ըստ այդ որոշման՝ վերոհիշյալ զուգաձևություններում նորմով սահմանվածը երկրորդ տարբերակներն էին:

Լեզվի ներկա փուլում բաղադրյալ հատուկ անունների գրության խնդիրն էլ ավելի է բարդացել, քանի որ նրանցում մեծատառերի գործածության անմիօրինակությունն ու անհետևողական կիրառությունն ակնառու է. ավանդական է **Հայկական պար** լեռնաշղթա, **Հրո երկիր** կղզի (կղզեխումբ), **Վայոց ձորի մարզ** գրությունը, բայց այսօր երկձևություններ են առաջացել այն մտածողությամբ պայմանավորված, որ առաջինում «պար»-ը «պար» չի նշանակում, այլ «լեռնաշղթա», երկրորդում «երկիր»-ն իր իսկական իմաստով չի գործածվել, երրորդում էլ մարզի անվան մեջ «ձոր» իմաստը կապ չունի:

Բաղադրյալ հատուկ անունների գրության մեջ միասնություն հաստատելու նպատակով 2003 թ հունվարի 14-ի ՀՀ կրթության և գիտության նախարարի ու ՀՀ կառավարությանն առընթեր լեզվի

պետական տեսչության հրամանով (ոչ պաշտոնական հրատարակություն) որոշակի միաձևություն սահմանվեց (տես՝ 66, էջ 9-13): Բնականաբար այս առումով լեզվական նորմը որոշակի փոփոխության է ենթարկվում, վերոհիշյալ զուգաձևություններում փաստորեն կանոնական, նորմատիվ են դառնում առաջին տարբերակները:

Լեզվական փոփոխված նորմը, կանոնը կրթության ոլորտում «օրենք կդառնա», երբ պետականորեն գրանցվի, երբ ծրագրերում ու դասագրքերում ընդգրկվի, ներառվի, երբ ե՞րբ...

Այստեղից էլ՝ **Ծիր Կաթին // Ծիր կաթին** (աստղակույտ), **Նոր Երկիր // Նոր երկիր** (կղզեխումբ), **Հեռավոր Արևելք // Հեռավոր արևելք** /երկրամաս), **Հին Արևելք // Հին արևելք** (երկրամաս), **Հայկական Պար // Հայկական պար** (լեռնաշղթա), **Մեծ Արջ // Մեծ արջ, Փոքր Արջ // Փոքր արջ, Հյուսիսային Թագ // Հյուսիսային թագ, Թռչող Ձուկ // Թռչող ձուկ, Հարավային Եռանկյունի // Հարավային եռանկյունի, Հարավային Հիդրա // Հարավային հիդրա, Ոսկե Ձկնիկ // Ոսկե ձկնիկ, Որսկան Շներ // Որսկան շներ, Փոքր Առյուծ // Փոքր առյուծ, Փոքր Ձի // Փոքր ձի, Փոքր Շուն // Փոքր շուն** (համաստեղություններ), **Աֆրիկայի Եղջյուր // Աֆրիկայի եղջյուր** (թերակղզի), **Վիեննայի Անտառ // Վիեննայի անտառ** (լեռնազանգված), **Փղոսկրի Ափ // Փղոսկրի ափ** (հանրապետություն), **Կանաչ Հրվանդան // Կանաչ հրվանդան** (հանրապետություն) զուգաձևություններում կանոնական են առաջին տարբերակները: Իսկ թե ինչու **Հյուսիսային սառուցյալ** օվկիանոս, **Լոռու հրաբխային** բարձրավանդակ, **Բաղակի քար** (բերդ, ամրոց), **Տրդատի թախտ** (ամրոց, ավան, բերդաքաղաք), **Հայոց ձոր** (գավառ, գետ, գյուղ), **Հրազդանի կիրճ** (հանգստավայր), **Անահտա աթոռ** (լեռնագագաթ, հեթանոսական տաճար) հատուկ անուններում միայն առաջին բաղադրիչն է մեծատառ գրվում, միայն պայմանականությամբ պետք է բացատրել, նաև վերջինների ավանդական ուղղագրության պահպանմամբ (**Թախտ Տրդատա/յ/ // Տրդատի թախտ, Աթոռն Անահտա/յ/ // Անահտա աթոռ, Քարն Բաղակու // Բաղակի քար** և նման հարյուրավոր տեղանվանական-շարադասական զուգաձևությունները գրաբարյան և աշխարհաբարյան նորմերի տարբերությունն են ընդգծում):

Սուրբ բառը եթե բաղադրյալ հատուկ անունների առաջին բաղադրիչ է (հատկապես անձնանուններում), ապա գրվում է մեծատառով և **Սուրբ Սարգիս // սուրբ Սարգիս, Սուրբ Գևորգ Զորավար // սուրբ Գևորգ Զորավար, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ // սուրբ Գրիգոր Լուսավորիչ, Սուրբ էջմիածին // սուրբ էջմիածին // Ս. էջմիածին // Սբ. էջմիածին, Սուրբ Խաչ եկեղեցի // սուրբ Խաչ եկեղեցի // Ս. Խաչ եկեղեցի // Սբ. Խաչ եկեղեցի, Սուրբ Երրորդություն // սուրբ Երրորդություն, Սուրբ Վարդանանց տոն // սուրբ Վարդանանց տոն** զուգաձևություններում ճիշտ են առաջին տարբերակները, երկրորդներն անհանձնարարելի են, երրորդները և չորրորդները կանոնական համազոր տարբերակներ են:

Նույն ձևով ճիշտ են՝ **Սուրբ Գևորգի նեղուց, Սուրբ Գրիգորի լեռնաշղթա, Սուրբ Լավրենտինոս գետ, Սուրբ Խաչի երևման տոն, Սուրբ Ծնունդ, Սուրբ Ծնունդ և Հայտնություն, Սուրբ Հեղինեի կղզի, Սուրբ Հռիփսիմյան կույսեր, Սուրբ Սոֆիայի տաճար:**

Եթե **սուրբ** բառը դրվում է նշանավոր անձանց, տեղանունների կողքին, բայց դրանցում այն չի կայունացել, այսինքն՝ երբ այդ հատուկ անունները առավել հայտնի են առանց նշված բաղադրիչի, գրության երկու ձևն էլ ընդունելի է. **սուրբ Գրիգոր Նարեկացի // Սուրբ Գրիգոր Նարեկացի, սուրբ Կոմիտաս // Սուրբ Կոմիտաս, սուրբ Խրիմյան Հայրիկ // Սուրբ Խրիմյան Հայրիկ** և նման զուգաձևություններում լեզվական նորմի տեսակետից ճիշտ են առաջին տարբերակները, իսկ երկրորդները մերժելի չեն, ընդունելի են, բայց կիրառական սահմանափակություն ունեն՝ գործածվում են հատկապես գեղարվեստական ոճում:

Հոգևոր-պատմամշակութային բաղադրյալ հատուկ անուն-զուգաձևություններում՝ **Անգղա Սուրբ Նշան // Անգղա սուրբ Նշան, Արգյազի Սուրբ Ստեփանոս Նախավկա // Արգյազի սուրբ Ստեփանոս Նախավկա, Մաստարայի Սուրբ Հովհաննես // Մաստարայի սուրբ Հովհաննես, Սուրբ Հեղինե // սուրբ Հեղինե** (կղզի), **Սուրբ Ղազար // սուրբ Ղազար** (կղզի) և այլն, ըստ լեզվական կանոնի ճիշտ էին երկրորդ տարբերակները, ՀՀ կառավարությանն առնթեր լեզվի պետական տեսչության հայերենի բարձրագույն խորհրդի վերոհիշյալ որոշումով «սուրբ» բառի մեծատառով ձևերն են հանձնարարվում, բայց դեռևս լեզվական նորմում կատարված

այս փոփոխությունը նորմատիվ քերականություններում չի ամրակայվել:

Իսկ **Կիլիկիայի Հայկական Թագավորություն // Կիլիկիայի հայկական թագավորություն** (կամ՝ **պետություն**), **Սյունիքի Թագավորություն // Սյունիքի թագավորություն, Կարսի Բագրատունիների Թագավորություն // Կարսի Բագրատունիների թագավորություն, Բյուզանդական Կայսրություն // Բյուզանդական կայսրություն, Խամսայի Մելիքություն // Խամսայի մելիքություն, Ոսկե Հորդա // Ոսկե հորդա, Հայաստանի Առաջին Հանրապետություն // Հայաստանի առաջին հանրապետություն** և պետությունների, ինքնավար իշխանությունների նման պատմական անուն-զուգաձևությունների համար նոր կանոն է մշակվել՝ պետությունների պատմական անուններում մեծատառով գրել միայն առաջին բաղադրիչը: Մնում է հետևեցնել, որ այս համազոր (ազատ) կանոնական տարբերակներից հանձնարարելի կդառնան միայն առաջին բառի մեծատառով գրվող ձևերը՝ լեզվական նորմում ամրագրելուց և ծրագրեր ու դասագրքեր ներառելուց հետո:

Ինչ վերաբերում է **Վայոց ձորի մարզ // Վայոց Ձորի մարզ** զուգաձևությանը, ապա կարելի է ասել, որ «Հայոց լեզվի կանոններում», որպես պետության վարչատարածքային նոր անվանում, որի մեջ լրացյալն առանձին վերցված հատուկ անուն չէ, որպես կանոնական առաջարկվում է **Վայոց ձորի մարզ** տարբերակն այն հիմնավորումով, որ «ձորն» այստեղ շարունակում է պահպանել իր բառային նշանակությունը. **Վայոց ձոր** աշխարհագրական տեղանունը հարյուրամյակների գործածություն ունի, և այս ձևով գրությունը նաև ավանդական է (կան **Վայոց ձորի** գոգահովիտ, **Վայոց ձորի** լեռնաշղթա, **Վայոց ձորի** կիրճ): Բացառված չէ, որ որոշ ժամանակ անց, որպես մարզի անուն, տարածում ստանա **Վայոցձորի մարզ** տարբերակը (երրորդ տարբերակը). հայերենում նման երևույթներ կան՝ **Մուսա** լեռ, բայց՝ **Մուսալեռ** գյուղ, **Թուխ Մանուկ**, բայց՝ **Թուխմանուկ** վանք...

Բերենիկեի վարսեր // Բերենիկեի Վարսեր // Վերոնիկայի վարսեր // Վերոնիկայի Վարսեր, Ծիր կաթին // Ծիր Կաթին // Հարդագողի ճամփա // Հարդագողի Ճամփա // Հարդագողի ճանապարհ // Հարդագողի Ճանապարհ բազմաձևություններում լեզվա-

կան նորմի սահմաններում են երկրորդ բաղադրիչների փոքրատառով ձևերը, վերոհիշյալ որոշմամբ հանձնարարելի են բաղադրիչների՝ մեծատառով գրության ձևերը՝ **Բերենիկեի Վարսեր** և **Ծիր Կաթին**, իսկ մնացածները ժողովրդական մտածողության արդյունք են: Երկրորդի **Հարդագողի ճանապարհ** տարբերակը ժողովրդական ձևի գրականակցված տեսակն է:

Կանոնական համազոր տարբերակներ պետք է համարել պետությունների անվանումների լրիվ և ոչ լրիվ՝ բառահատումով կազմված զուգաձևությունների եզրերը՝ **Հայաստան // Հայաստանի Հանրապետություն, Ղարաբաղ (Արցախ) // Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Աֆղանստան // Աֆղանստանի Իսլամական Հանրապետություն, Եմեն // Եմենի Արաբական Հանրապետություն, Շրի Լանկա // Շրի Լանկայի Ժողովրդական Սոցիալիստական Հանրապետություն, Մեծ Բրիտանիա // Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, Փղոսկրի Ափ // Փղոսկրի Ափի Հանրապետություն, Ֆիլիպիններ // Ֆիլիպինների Հանրապետություն, Մեքսիկա // Մեքսիկայի Միացյալ Նահանգներ, Լյուքսեմբուրգ // Լյուքսեմբուրգի Մեծ Դքսություն, Ֆիլիպիններ // Ֆիլիպինյան կղզիներ, Ռուսաստան // Ռուսաստանի Դաշնություն** և այլն:

Եթե պետության անունների ամբողջական անվանման և նրա կրճատ տարբերակի գրության միջև հակասություններ չկան, և մեր լեզվամտածողությանը հարազատ են երկու տարբերակներն էլ, ապա վերջին տարիներին, պայմանավորված հատուկ անվան նորովի ընկալման հետ, որոշակի հակասություն է առաջանում հատկապես այս կամ այն հիմնարկի պաշտոնական ամբողջական անվանման և նրա կրճատ գրության միջև՝ **Երևանի պետական համալսարան // Պետական համալսարան // պետական համալսարան** (նաև **պետհամալսարան // Պետհամալսարան**), **ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ // Հնագիտության և ազգագրության ինստիտուտ // հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևանի ֆիզիկայի ինստիտուտ // Ֆիզիկայի ինստիտուտ // ֆիզիկայի ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ մաթեմատիկայի ինստիտուտ // Մաթեմատիկայի ինստիտուտ // մաթեմատիկայի ինստիտուտ, ՀՀ կառավարությանն առընթեր լեզվի պետական**

տեսչություն // Լեզվի պետական տեսչություն // լեզվի պետական տեսչություն, ՀՀ կենտրոնական բանկ // Կենտրոնական բանկ // կենտրոնական բանկ և այլն: Սրանցում առաջիններն ավանդական տարբերակներն են և լեզվական նորմով սահմանված, երկրորդները նոր ձևեր են՝ այս հատուկ անունների նորովի ընկալման արդյունք, և հավանական է, որ ժամանակի ընթացքում նման ձևերը հանգեցնեն կանոնի փոփոխության, որով և կօրինականացվի երկրորդ ձևի գործածությունը: Երրորդ տարբերակները առաջիններիի իմաստով սխալ են: «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատուում» ևս այս տիպի զուգաձևություններ կան, ինչպես օրինակ՝ **ՀՀ կառավարությանն առընթեր լեզվի պետական տեսչության Հայերենի բարձրագույն խորհուրդ** /115, էջ 4/ // **ՀՀ կառավարությանն առընթեր լեզվի պետական տեսչության հայերենի բարձրագույն խորհուրդ** /նտ, էջ 229/ // **ՀՀ Կառավարությանն առընթեր հայերենի բարձրագույն խորհուրդ** /նտ., էջ 219 և էջ 282/: Այստեղ և այսպիսի դեպքերում «ճիշտ» ու «սխալի» հարց չկա. սրանք սաղմնավորվող զուգաձևություններ, բազմաձևություններ են, որոնք առայժմ միայն «ուշադրություն են պահանջում» ապագայում կանոնարկվելու նպատակով:

Ինչ վերաբերում է **ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա // Գիտությունների ազգային ակադեմիա // գիտությունների ազգային ակադեմիա // Ակադեմիա // ակադեմիա** բազմաձևությանը, ապա նորմով սահմանվածը առաջին տարբերակն է: Նախկին տերմինաբանական կոմիտեի որոշմամբ կանոնական համարվեց **Մատենադարան** տարբերակն այն հիմնավորումով, որ սա սովորական գրապահոց չէ, այլ հին ձեռագրերի և հնատիպ գրականության ուսումնասիրման գիտահետազոտական ինստիտուտ է, այսինքն՝ ինստիտուտ-մատենադարան:

Զուգաձևությունների եզրեր են դառնում նաև առանձին բաղադրիչներով կամ գծիկով գրվողները միասնաբար գրվողների կողքին՝ **Բայկալ-Ամուրյան // Բայկալամուրյան** (մայրուղի), **Սահակ-Մեսրոպյան // Սահակմեսրոպյան** (վարժարան), **Տյառնընդառաջ // Տյառնը ընդ առաջ, Խոր Վիրապ // Խորվիրապ, Վայոց ձոր // Վայոցձոր, Ծիր Կաթին // Ծիրկաթին, Բաբելմանդեբի // Բաբ-էլ-Մանդեբի** (նեղուց), **Կզըլ Կում // Կզըլ-Կում** (անապատ):

Արարատ // Մեծ Արարատ և **Արարատ // Փոքր Արարատ** զուգաձևությունների ծագումը պայմանավորված է աշխարհագրական տեղանունների ոչ ճիշտ իմացությամբ և հավանաբար **Մասիս // Մեծ Մասիս** և **Մասիս // Փոքր Մասիս** զուգաձևությունների համաբանության արդյունք են: Եթե վերջիններս ընդհանուրի և եզակիի զուգորդմամբ ճիշտ ձևեր են, ապա **Մեծ Արարատ**, **Փոքր Արարատ** տարբերակները ժողովրդական համաբանությամբ են կազմվել և սխալ են:

Հայկ Նահապետ // Հայկ նահապետ, Հին Կտակարան // Հին կտակարան, Նոր Կտակարան // Նոր կտակարան, Սուրբ Գիրք // Սուրբ գիրք, Մարկոսի Ավետարան // Մարկոսի ավետարան զուգաձևություններում նոր որոշմամբ ճիշտ են առաջին տարբերակները, որոշում, որ դեռևս լեզվական նորմում չի ընդգրկվել:

Մայր Թերեզա // մայր Թերեզա զուգաձևության մեջ ճիշտը առաջինն է, երկրորդը սխալ է, կանոնի խախտում:

Անկախ Պետությունների Համագործակցություն // Անկախ պետությունների համագործակցություն, Երեք Կայսրերի Դաշինք // Երեք կայսրերի դաշինք, Բրիտանիայի Ազգերի համագործակցություն // Բրիտանիայի ազգերի համագործակցություն և պետությունների խմբերի, միավորումների անուն-զուգաձևություններում ճիշտ է միայն առաջին բառի մեծատառով գրությունը, բացառությամբ առաջին զուգաձևության, որում նորմով սահմանվածը բոլոր բաղադրիչները մեծատառերով գրելն է:

«Ձորավար Անդրանիկ» (կայարան) **// զորավար Անդրանիկ // Ձորավար Անդրանիկ** եռաձևության մեջ ճիշտ են առաջին և երկրորդ տարբերակները, իսկ **մայր Արաքս // Մայր Արաքս** զուգաձևությունում լեզվական նորմով սահմանվածը առաջին եզրն է, երկրորդը ժողովրդական ընկալմամբ է մեծատառերով գրվում: **Մխիթար սպարապետ // Մխիթար Սպարապետ** զուգաձևության մեջ նախընտրելի է երկու բաղադրիչների՝ մեծատառով գրությունը, իսկ առաջին տարբերակը մերժելի չէ;

Արևելք // արևելք, Արևմուտք // արևմուտք, Հյուսիս // հյուսիս, Հարավ // հարավ զուգաձևությունները համապատասխան խոսքային իրադրության մեջ, համապատասխան տեքստերում են ճիշտ համարվում այն նկատառումով, որ աշխարհի չորս կողմերը

նշանակող իմաստով դրանք գրվում են փոքրատառով, իսկ երբ նշանակում են մեկից ավելի երկրների աշխարհաքաղաքական, տնտեսական, մշակութային մի ամբողջություն, ձեռք են բերում հատուկ անվան արժեք և գրվում են մեծատառով: Նման իմաստային տարբերակումը պահպանվում է նաև նրանց՝ բաղադրյալ անունների բաղադրիչ դառնալու դեպքում, և **Հեռավոր Արևելք, Մերձավոր Արևելք, Միջին Արևելք, Ծայրագույն Արևելք** անուններում **Արևելք**-ն ունի «արևելյան երկրների ամբողջություն» իմաստը: Նույն ձևով և՝ **Արևմուտք**-ը, **Հարավ**-ը, **Հյուսիս**-ը: Վերջին երկուսը նաև իմաստի նեղացմամբ են հատկանշվում՝ **Հարավ**-ը երկրորդաբար «Ամերիկայի հարավային՝ ստրկացված մաս» նշանակությունն ունի, **Հյուսիս**-ը «Ամերիկայի հյուսիսային՝ կապիտալիստական մաս» նշանակությունը:

Ձևաբանական-ձևակազմական զուգաձևություններ են՝ **Գողթն գավառ // Գողթան գավառ, Ադրիական // Ադրիատիկ ծով, Օխոտյան ծով // Օխոտի ծով, Ալպեր // Ալպյան լեռներ, Անդեր // Անդյան լեռներ, Բյուրակնյա լեռներ // Բյուրակնի լեռներ, Բոտնյան // Բոտնիկ ծոց, Սասնա դաշտ // Սասունի դաշտ, Սևանա լիճ // Սևանի լիճ, Գեղամա լեռներ // Գեղամի լեռներ, Մարմարա ծով // Մարմարի ծով, Գառնիի հեթանոսական տաճար // Գառնու հեթանոսական տաճար, Գառնու տիեզերական աստղագիտության ինստիտուտ // Գառնիի տիեզերական աստղագիտության ինստիտուտ, Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ // Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ,** որոնցում տարբերակները համազոր են և կանոնական: **Նոյյան տապան // Նոյի տապան // Նոյան տապան** եռաձևության մեջ երրորդը սխալ է և ոչ հանձնարարելի, քանի որ, ըստ կանոնի, **Նոյ** անվանը **–յան** ածանցն է ավելացվում: Չպետք է մոռանալ, որ վերջերս **Գյումրի, Լոռի** բառերի սեռականի կազմության բազմաձևությունից խուսափելու համար համապատասխան որոշմամբ հանձնարարելի են դարձել **Գյումրու, Լոռու** ձևերը, բնականաբար բաղադրյալ հատուկ անվան բաղադրիչ դառնալու դեպքում գերադասելի պետք է համարվեն հանձնարարված ձևով գործածությունները: **Գառնի**-ն, **Ալավերդի**-ն, **Արզնի**-ն հիշատակված չեն, բայց համաբանությամբ ենթա-

դրելի են **Գառնու, Ալավերդու, Արզնու** ձևերը. **Գառնու // Գառնիի, Արզնու // Արզնիի, Ալավերդու // Ալավերդիի** զուգաձևություններն էլ նմանատիպ իրողություններ են:

Հատկանունների գրության զուգաձևությունները հատկապես շատ են կրոնաեկեղեցական ոլորտում նաև այն պատճառով, որ այսօր եկեղեցին մեր կյանքում մեծ դեր ունի՝ ի տարբերություն այն ժամանակների, երբ դրանք կա՛մ չէին գործածվում, կամ արգելվում էին: Եվ քանի որ այս որոշումն էլ այն հին օրերից է գալիս, բնականաբար սրանք չեն ներառվել գործող լեզվական կանոնների մեջ: Եթե ավելացնենք նաև, որ եկեղեցական շրջանակներում սովորաբար քրիստոնեական հավատին և եկեղեցուն առնչվող բազմաթիվ հատուկ անունների բոլոր բաղադրիչներն էլ հաճախ մեծատառով են գրվում՝ արևմտահայերենի և եվրոպական լեզուների ազդեցությամբ, այնտեղից էլ թափանցում են գրական հայերենի մեջ, և սրանց համաբանությամբ զուգաձևություններ են առաջանում նաև ոչ կրոնաեկեղեցական անուններում, ապա միանգամայն պարզ կդառնա այն խայտաբղետ վիճակը, որ գոյություն ունի մերօրյա հայերենում այս ոլորտի հատուկ անունների ուղղագրության հարցում:

Ընդհանուր լեզվական կանոնի համաձայն՝ **Մայր տաճար // Մայր Տաճար, Արարատյան հայրապետական թեմ // Արարատյան Հայրապետական Թեմ, Հայաստանյաց առաքելական սուրբ եկեղեցի // Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցի, Բուն բարեկենդան // Բուն Բարեկենդան, Տոն տապանակի // Տոն Տապանակի** զուգաձևություններում առաջին տարբերակներն են ճիշտ, կրոնական գրագրության մեջ՝ երկրորդները: **Վեհափառ // վեհափառ, Վեհ // վեհ** զուգադրություններում ճիշտ են առաջինները: Սրանց լուծումը՝ միաձևության վերածվելը, ժամանակի խնդիր է:

Ամենայն հայոց կաթողիկոս // Ամենայն Հայոց Կաթողիկոս // Ամենայն Հայոց կաթողիկոս եռաձևության մեջ գրական նորմով սահմանվածը առաջինն է, երկրորդը սուբյեկտիվ պատճառաբանվածություն ունի՝ հարգանքի և մեծարանքի նշան է, երրորդը՝ նորաձևություն է: **Ն. Ս. Օ. Տ. Տ. // Նորին Սուրբ Օծություն Տեր Տեր** զուգաձևության երկու եզրերը համազոր են՝ կրճատ և լրիվ գրությամբ, բնականաբար **Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոս // Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոս**

// **Նորին Սուրբ Օծություն Տեր Տեր Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոս // Նորին Սուրբ Օծություն Տեր Տեր Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոս** բազմաձևության տարբերակները ճիշտ են՝ գրական հայերենի և եկեղեցական հայերենի տարբերակմամբ: (Եկեղեցական հայերենը գրական հայերենի գոյաձևերից մեկն է, բայց դեռևս պարզ չէ՝ այսօրվա գրական հայերենի օրինաչափությունները տարածվու՞մ են եկեղեցական հայերենի վրա, արդյոք ու՞յն լեզվական նորմը է գործում նրանում ևս)...

Ըստ լեզվական կանոնի՝ արդի հայերենում **Աստված** բառը մեծատառով է գրվում, և այդ իմաստով գործածվելու դեպքում **Աստված // աստված** զուգաձևությունում ճիշտ է առաջինը, երկրորդը հնացած է: Նույնատիպ ընտրություն պետք է կատարել **Բարձրյալ // բարձրյալ, Հայր // հայր, Տեր // տեր, Ամենակալ // ամենակալ** զուգաձևություններում: Նույն ձևով «Աստված» նշանակող բաղադրյալ բառերի բոլոր բաղադրիչների մեծատառով ձևերն են ճիշտ հետևյալ շրջասություն-զուգաձևություններում՝ **Սիրո Տեր // սիրո տեր, Երկնավոր Հայր // երկնավոր հայր, Երկնային Թագավոր // երկնային թագավոր, Առաջին Արդարության Արեգակ // առաջին արդարության արեգակ, Երկնային Դատավոր // Երկնային դատավոր, Առաջին Լույս // Առաջին լույս:**

«Հիսուս Քրիստոս» և «Մարիամ Աստվածածին» նշանակող զուգաձևություններում **Աստծու Որդի, Բարի Վարդապետ, Երկրորդ Ադամ, Աշխարհի Լույս, Աստծո Սուրբ, Բեթղեհեմի Մանուկ, Դավթի Որդի, Թագավորների Թագավոր, Խաղաղության Իշխան, Ճշմարիտ Որթատունկ, Մարդու Որդի, Մեծ Չարչարյալ, Տերերի Տեր, Օծյալ Տեր, Բարի Հովիվ, Հայր Հանդերձյալ Աշխարհի, Հիսուս Փրկիչ** և **Սուրբ Կույս, Աստվածամայր, Տիրամայր** տարբերակներն են նախընտրելի:

Աստծու գառ // աստծու գառ զուգաձևության մեջ տարբերակները համազոր են. երկու բաղադրիչների՝ մեծատառով գրության դեպքում նկատի է առնվում Հիսուս Քրիստոսը, իսկ փոքրատառերով գրվածը դարձվածք է և ունի «հեզ, հնազանդ» իմաստը: **Երգ երգոց // երգ երգոց** զուգաձևության մեջ իմաստային տարբերությունն ընդգծված է. առաջինը Հին Կտակարանի գրքերից է, իսկ երկրորդը առաջինի վերաիմաստավորված ձևն է և ունի «գեղարվես-

տական կատարյալ ստեղծագործություն, գլուխգործոց» նշանակությունը:

Ինչ վերաբերում է **ալլահ // Ալլահ** զուգաձևությանը (մահմեդական կրոնում Աստծու անունն է), ապա լեզվական նորմով սահմանվածն առաջին տարբերակն է: Այստեղ ընկալման հոգեբանական պահ կա. եթե այսօր մեր լեզվամտածողությամբ, հայի սուբյեկտիվ վերաբերմունքով պայմանավորված, նաև եկեղեցու հետզհետե աճող ազդեցությամբ բացատրվող **Աստված // աստված** զուգաձևության մեջ մեծատառով տարբերակն է գերադասելի դարձել մերօրյա հայերենում և ամրակայվել լեզվական նորմում, դա չի նշանակում, որ **ալլահ**-ը նույնպես հայի մտածողության մեջ բարձրացել է **Աստծո** աստիճանին. ցանկացած ժողովուրդ, իբրև հարգանքի և մեծարանքի նշան, իրավունք ունի իր աստծո անունը գրել մեծատառով, և լեզվական նորմում կատարված փոփոխությամբ ցույց տալ իր սուբյեկտիվ վերաբերմունքը (եթե, իհարկե, համալեզվական համընդհանուր կանոն չկա՝ բոլոր լեզուներին վերաբերող). աշխարհի յուրաքանչյուր լեզու ունի մեծատառ-փոքրատառ գրելու ի՛ր «տրամաբանությունը», ի՛ր «հոգեբանությունը»...

Այն, որ մեր օրերում արդեն ուշադրություն է դարձվում «եկեղեցական լեզվին», որը կարելի է արդի հայերենի գոյաձևերից մեկը համարել, հաստատվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության լեզվի պետական տեսչության հայերենի բարձրագույն խորհրդի նոր որոշման հետևյալ կետով. **«Դիվանագիտական և պաշտոնական փաստաթղթերի ու հաղորդագրությունների մեջ, Հայոց եկեղեցու պաշտոնական լեզվում, հեղինակային վերաբերմունքի՝ քաղաքավարման և մեծարման ոճերում թույլատրվում է մեծատառի ազատ գործածություն՝ ըստ ընդունված կարգի»** (115, էջ 292):

Զուգաձևություններ պետք է համարել նաև **Աբովյան փողոց** և **Աբովյանի փողոց**, **Թումանյան փողոց** և **Թումանյանի փողոց**, **Մարշալ Բաղրամյան պողոտա** և **Մարշալ Բաղրամյանի պողոտա**, **Շահումյան հրապարակ** և **Շահումյանի հրապարակ** ձևերը: Սրանցից **ի**-ով ձևերը ժողովրդախոսակցական երանգ ունեն և գրական նորմից շեղումներ են:

Ճիշտ են **-յան** և **-յանց** ածանցներով կազմված ազգանուն լրացումների՝ **փողոց, հրապարակ, պողոտա** լրացյալների հետ ուղղական հոլովով գործածությունները, իսկ մնացած դեպքերում՝ սեռական-տրականի հոլովաձևերովը՝ **Մաշտոցի փողոց, Տիգրան Մեծի փողոց, Գարեգին Նժդեհի հրապարակ, Հանրապետության հրապարակ, Մայիսի 9-ի փողոց** և այլն: Բնականաբար վերջիններիս ուղիղ ձևով գործածությունները՝ **Մաշտոց փողոց, Տիգրան Մեծ փողոց, Գարեգին Նժդեհ հրապարակ, Հանրապետություն հրապարակ, Մայիսի 9 փողոց,** ճիշտ չեն:

Ձևաբանական-վանկային (տողադարձային) զուգաձևություններ կարելի է համարել **զբ, զգ, շտ, սկ, սպ** և նման տառակապակցությամբ սկսվող հատուկ անունների տողադարձմամբ առաջացած զուգահեռ ձևերը՝ **Սպար-տակ // Ըս-պարտակ, Ստրաս-բուրգ // Ըստ-րասբուրգ, Ստե-փան // Ըս-տեփան, Շտրա-ուս // Ըշ-տրաուս, Սպեն-դիարյան // Ըս-պենդիարյան, Ստոկ-հոլմ // Ըս-տոկհոլմ, Սպի-նոզա // Ըս-պինոզա** և այլն, որոնցում նորմատիվ են առաջին տարբերակները՝ ըստ լեզվական նորմի սահմանման՝ «Զբ, զգ, շտ, սպ, ստ և նման հնչյունակապակցություններով սկսվող հատուկ անունների տողադարձի ժամանակ այդ հնչյունակապակցությունները հաջորդ ձայնավորից չեն անջատվում, որպեսզի հատուկ անվան գրությունը **ը**-ով չսկսվի...» (114, էջ 314): Անհրաժեշտ է չմոռանալ, որ մերօրյա հայերենի զարգացման միտումներից մեկն էլ այդ հնչյունակապակցությունների առանց **ը**-ի արտասանությունն է, որի հետագա զարգացումը այս տիպի տողադարձային երկձևությունների վերացման պատճառ կդառնա:

Նախատիպ գոյականի վերջնավանկի ձայնավորի հնչյունափոխական կանոնի փոփոխության հետևանքով զուգաձևություններ են կազմում նաև հատուկ անուններից **–ցի, -ացի, -եցի** վերջածանցներով բաղադրված բառերը՝ **էջմիածին- էջմիածինցի // էջմիածնեցի, Որոտան-որոտնեցի // որոտանցի, Տարոն- տարոնացի // տարոնցի // տարոնեցի**: Այս կազմությունների համաբանությամբ առաջացել են նաև չհնչյունափոխվող **ի** ձայնավորով վերջնավանկ ունեցող նախատիպ գոյականներից կազմված անունների զուգահեռ ձևեր՝ **Գորիս-գորիսցի // գորիսեցի, Թալին- թալինցի // թալինեցի:** Բնականաբար զուգաձևություններ կառաջանանան

նաև հոլովվելու ժամանակ՝ **գորիսցու // գորիսեցու, գորիսցուց // գորիսեցուց, գորիսցով // գորիսեցով...** Զուգաձևությունների առաջացման պատճառը հայերենի զարգացման տարբեր փուլերում այս ածանցների բառակազմական տարբեր ակտիվությամբ է պայմանավորված:

Հայերենում գոյական նախատիպ հիմքերից **–ցի**, **-ացի**, **-եցի** ածանցներով կազմված անունների անհարկի զուգաձևություններից խուսափելու համար տերմինաբանական կոմիտեն որոշել է կանոնարկել, սահմանելով, որ՝

–Ցի-ով գոյականներ են կազմվում՝ ա/ բաղաձայնով վերջացող անհնչյունափոխ բազմավանկ հասարակ և հատուկ տեղանուններից, բ/ **ա, ե** ձայնավորով վերջացող անհնչյունափոխ բազմավանկ օտար տեղանուններից գ/ **-իա-**ով վերջացող միավանկ արմատ ունեցող օտար տեղանուններից: Այսինքն՝ **արևելցի // արևելքցի, հարավցի // հարավացի, աշտարակցի // աշտարակեցի, շիրակցի // շիրակացի, ալժիրցի // ալժիրեցի** զուգաձևություններում ճիշտ են առաջին տարբերակները:

-Եցի ածանցով տեղաբնակ նշանակող գոյական անուններ են կազմվում. ա/ միավանկ հասարակ և հատուկ անուններից, բ/ վերջնավանկի ավանդաբար հնչյունափոխվող **ի, ու**, հազվադեպ նաև **ը, ա** ձայնավոր ունեցող բազմավանկ տեղանուններից, գ/ բառավերջի անհնչյունափոխ **ի, ո, ու** ձայնավոր ունեցող օտար և հայացած բազմավանկ տեղանուններից: **Կողբեցի // կողբացի, մարտունեցի // մարտունցի, էջմիածնեցի // էջմիածինցի** զուգաձևություններում ճիշտ են առաջին եզրերը:

-Ացի ածանցով տեղաբնակ նշանակող գոյականներ են կազմվում՝ ա/ գավառ, գյուղ, երկիր, տեղ, քաղաք գոյականներից. բ/ **-իա-**ով վերջացող բազմավանկ արմատ ունեցող օտար տեղանուններից՝ **-իա-**ի սղմամբ, և **բուլղարացի // բուլղարիացի, իտալացի // իտալիացի** զուգաձևություններում կանոնական են առաջինները: Ըստ լեզվական նորմի՝ **գորիսցի // գորիսեցի, փարիզցի // փարիզեցի, Ֆրանսիացի // Ֆրանսացի, ավստրիացի // ավստրացի** զուգաձևություններում առավելություն պետք է տալ առաջիններին:

Խաչենեցի // խաչենցի, Ջուղայեցի // ջուղայեցի, Կապանեցի // կապանցի, Շիրակացի // շիրակցի, Կողբացի // կողբեցի, Սևանեցի // սևանցի, Տարոնացի // տարոնցի // տարոնեցի, Մակեդոնացի // մակեդոնցի, Օձնեցի // օձունցի, Ակոռեցի // Ակոռեցի, Սյունեցի // սյունեցի, Սասունցի // սասունցի, Որոտնեցի // որոտանցի զուգահեռ ձևերը կանոնական են, նորմատիվ, հատուկ-հասարակ քերականական հակադրությամբ ձևավորված, ըստ որում առաջին տարբերակները հին հայերենից ավանդաբար եկած մականներ են: (Հին մատենագրության մեջ տեղաբնակ նշանակող անունները, սակավ բացառություններով, կազմված են **-ացի** ածանցով):

Ինչ վերաբերում է **մանուշակ / Մանուշակ, բերդ / Բերդ, պերճ / Պերճ, ադոնիս** (ծաղիկ՝ կուժկոտրուկ) / **Ադոնիս, ազատ / Ազատ, ազնավուր / Ազնավուր, ազնիվ / Ազնիվ, ալմաստ / Ալմաստ, աղավնատուն / Աղավնատուն** (գյուղի անուն), **աղվան / Աղվան, ամպեր / Ամպեր** (Անդրե Մարի), **այգեստան / Այգեստան, այծեմնիկ / Այծեմնիկ, անթառամ / Անթառամ, աշտարակ / Աշտարակ, աստղիկ / Աստղիկ, ավագ / Ավագ, ավետարան** (ավետիս) / **Ավետարան, ատլաս / Ատլաս, ատոմ / Ատոմ, արշալույս / Արշալույս, բարունակ** (պտղատու), / **Բարունակ, գիլիոտին / Գիլիոտին, գոռ / Գոռ, զորավար / Զորավար** (եկեղեցի) **թագուհի / Թագուհի, համասփյուռ / Համասփյուռ, մարի / Մարի, պապ / Պապ, վերածնունդ / Վերածնունդ, գալակտիկա / Գալակտիկա, օլիմպիոս** (ընտրանի, հասարակության վերնախավը) / **Օլիմպիոս** (լեռ Հունաստանում), **օհմ / Օհմ, Ֆարադեյ / Ֆարադեյ** (Մայքլ), **Ֆլորա / Ֆլորա** և նման տիպի մյուս զուգահեռություններին, ապա սրանք համազոր տարբերակներ են՝ հասարակ և հատուկ անունների զուգադրությամբ, գրության տեսակը որոշվում է տեքստի մեջ: Մեծատառով կամ փոքրատառով գրությունը ոչ միայն իմաստային, այլև քերականական տարբերություններ է առաջացնում, խոսքիմաստային փոխանցումների պատճառ դառնում (**զվարթ** ած. // **Զվարթ** հատուկ գոյական), հատուկ և հասարակ գոյականների տարբերակման միջոց դառնում: Սրանք զուգածևություններ համարելը հարաբերական է, քանի որ սրանց նույնածևությունը միայն խոսքային իրադրությամբ է պայմանավորված. խոսքի մեջ այս հակադրությունը

արտահայտության ձև չունի, իսկ գրավոր խոսքում համապատասխան գրությամբ ունեն իրենց կոնկրետ իմաստը, իմաստաբանորեն տարբերակվում են, քերականական յուրահատկություններ ունեն (սովորաբար հոգնակի թվով չեն գործածվում), և ոչ թե նույն իմաստն են տարբեր ձևերով արտահայտում: Գրության տեսակը որոշվում է տեքստի մեջ: Այստեղ զուգադրությունների լուծումը բավական հստակ է. լեզվական կանոնը սահմանում է. «Գործածվելով որպես եզակի առարկաների անուններ՝ հասարակ գոյականները վերածվում են հատուկների... Նկատվում է նաև հակառակ երևույթը՝ հատուկ անունների անցում հասարակ անվան: Գործածվելով որպես միատեսակ առարկաների անվանում և հետևաբար արտահայտելով ընդհանուր նշանակություն՝ հատուկ գոյականները վերածվում են հասարակ անվան... Հասարակ և հատուկ անունների իմաստային-քերականական տարբերությունը գրավոր լեզվում ամրապնդված է նրանով, որ հատուկ գոյականները հայերենում (ինչպես և մի քանի այլ լեզուներում՝ ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն) գրվում են մեծատառով, իսկ հասարակները՝ փոքրատառով» (33 էջ 47-49):

Որոշ դժվարություններ են ներկայացնում այն զուգադրությունները, որոնք դեռևս անցման աստիճանական փուլում են գտնվում:

Վերոբերյալ շարադրանքը առավելապես նկարագրական բնույթ ունի. այո՛, արդի հայերենում հատկապես վերջին տարիներին հատուկ անունների գրության հարցերի նկատմամբ հետաքրքրությունը մեծացել է. այո՛, լույս են տեսել և լույս են տեսնում բառարաններ, բառարան-տեղեկատուներ, ուղեցույցներ, նկարագրական աշխատանքներ են կատարվում, որոնցում փորձում են միօրինակացնել բաղադրյալ հատուկ անունների ուղղագրությունը, բայց շատ հաճախ տարբեր բառարաններ տարբեր ուղղագրությամբ են ներառում նույն իրողությունները, զուգաձևություններ, զուգադրություններ են մատնանշում, բայց տարբերակների ընտրության հարցում, սխալը և ճիշտը որոշելիս, գերադասելին, նախընտրելին հանձնարարելիս արդեն լեզվական նորմը հստակորեն ընկալած կարդացողին, բառարանից օգտվողին երկընտրության առջև են կանգնեցնում: Գրվում են, ասվում է, բայց էլի դժվարանում ես որոշել՝ **Վճռաբեկ դատարա՞ն, թե՞ վճռաբեկ դատարան, Վայոց ձորի մա՞րզ, թե՞ Վայոց Ձորի մարզ, Մերձավոր Արևե՞լք, թե՞ Մերձա-**

վոր արևելք, **Խոր վիրա՞պ**, թե՞ **Խոր Վիրապ**, **Մեծ ա՞րջ**, թե՞ **Մեծ Արջ**, **Կենտրոնական բա՞նկ**, թե՞ **կենտրոնական բանկ**, **Հուդայի համբու՞յր**, թե՞ **հուդայի համբույր**, **Ոտնլվա՞**, թե՞ **ոտնլվա** (եկեղ.), **սրբազա՞ն**, թե՞ **Սրբազան**, **Սուրբ Գի՞րք**, թե՞ **Սուրբ գիրք**, **Սուրբ Պատարա՞գ**, թե՞ **Սուրբ պատարագ**, **տեր հա՞յր**, թե՞ **Տեր հայր**, **Տոն տապանակի՞**, թե՞ **Տոն Տապանակի** (եկեղ.), **վեհարան**, թե՞ **Վեհարան**, **Վկայության խորա՞ն**, թե՞ **վկայության խորան**, **ժամագի՞րք**, թե՞ **ժամագիրք** և այսպես շարունակ... Հասկանալի է, որ որոշ զուգաձևություններ դեռ անցման փուլում են գտնվում, նրանց լուծումը «ժամանակի դատին» է հանձնված այնքան ժամանակ, քանի դեռ տարբերակներից մեկը՝ լեզվի ներքին զարգացմամբ թելադրվածը, դուրս չի մղի մյուսին, բայց շատ զուգաձևություններում էլ տարբերակներից մեկի ընտրությունն այնքան է հասունացել, որ անհամբեր ես դառնում՝ մինչև ե՞րբ սպասել, մինչև ե՞րբ երկմտել...

Այս դեպքում մեր մայրենիի նկատմամբ պետական հոգածությունն է անհրաժեշտ, այս հարցի կարգավորման և բաղադրյալ հատուկ անունների ուղղագրության միասնականացման համար ՀՀ Կառավարությանն առընթեր լեզվի պետական տեսչության հայերենի բարձրագույն խորհրդի նոր որոշումն է անհրաժեշտ, որ կներառվի նաև նորմատիվ քերականություններում, և լեզվական նորմում փոփոխություն կգրանցվի...

Վերջերս լույս տեսած Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատուում» արդեն, նկատի առնելով բաղադրյալ հատուկ անունների ու անվանումների գրության ուսուցման և տպագրության գործում ստեղծված դժվարությունները, դրանք հաղթահարելու և մեծատառերի գրության մեջ միասնականություն սահմանելու նպատակով ՀՀ Կառավարությանն առնթեր լեզվի պետական տեսչության հայերենի բարձրագույն խորհուրդը որոշել է բոլոր բառերն սկսել մեծատառով նաև այն դեպքում, երբ «երկու բաղադրիչներն էլ հասարակ անուններ են (առաջինը՝ նաև հատուկ), բայց պայմանական կամ փոխաբերական գործածությամբ դառնում են հատուկ անվան բաղադրիչ և գրվում մեծատառով... Այսպես նաև՝ հատուկ անվան և նրան հաջորդող պայմանական գործածության անվան բաղադրություններում...» (115, էջ 287): Որոշվել է բոլոր բառերը մեծատառով սկսել նաև «Հոգևոր-պատմամշակութային այն բաղադրյալ հատուկ

անուններում, որոնց մեջ բոլոր բաղադրիչներն առանձին-առանձին կամ «Սուրբ» մականվան հետ միասին հատուկ անուն են...» (115, էջ 288): Սա նշանակում է, որ այլևս երկընտրության առջև չենք կանգնելու **Ծիր Կաթին** (աստղակույտ), **Նոր Երկիր, Հեռավոր Արևելք, Հին Արևելք, Մերձավոր Արևելք** (երկրամասեր), **Հայկական Պար** (լեռնաշղթա), **Մեծ Արջ, Փոքր Արջ, Բերենիկեի Վարսեր, Թռչող Ձուկ, Հարավային Եռանկյունի, Հարավային թագ, Հարավային Հիդրա, Հարավային Ձուկ, Հյուսիսային Թագ, Մեծ Շուն, Փոքր Շուն, Ոսկե Ձկնիկ, Որսկան Շներ, Փոքր Առյուծ, Փոքր Ձի** (համաստեղություններ), **Աֆրիկայի եղջյուր** (թերակղզի), **Վիեննայի Անտառ** (լեռնազանգված), **Անգղա Սուրբ Նշան, Արգյազի Սուրբ Ստեփանոս Նախավկա, Դարաշամբի Սուրբ Ստեփանոս, Ընծայից Սուրբ Աստվածածին, Մաստարայի Սուրբ Հովհաննես, Մուղնու Սուրբ Գևորգ, Վասպուրականի Մոկաց Սուրբ Մինաս**, կամ նաև՝ **Սուրբ Նշան, Սուրբ Ստեփանոս Նախավկա, Սուրբ Աստվածածին, Սուրբ Հովհաննես, Սուրբ Գևորգ, Սուրբ Մինաս** (վանք, եկեղեցի) բաղադրյալ հատուկ անունները գրելիս, որովհետև վերոգրված ձևերն են նորմատիվ և հանձնարարելի դառնում: ՀՀ Կառավարությանն առընթեր լեզվի պետական տեսչության հայերենի բարձրագույն խորհուրդը որոշել է, և այդ որոշմամբ երկմտանքի ու երկընտրանքի առջև ենք կանգնում՝ ո՞րն է ճիշտ, ո՞րն է լավ, և արդյոք սա կամայականությո՞ւն չէ... Ինքնըստինքյան հասկանալի է, այս որոշումները դպրոցական և բուհական նորմատիվ քերականություններում պետք է ընդգրկվեն[1]: Սա նա՛և նշանակում է, որ ձևաբանական-գոյականական նորմի հատկանվանական ենթահամակարգը փոփոխություն է կրել. լեզվական նորմը ա՛յս առումով և ա՛յս չափով փոփոխվելու շեմին է...

---

[1] Աշխատանքը հրատարակելու օրերին դպրոցական նորմատիվ քերականությունը համալրվեց նոր դասագրքով (Ֆ.Խլղաթյան, Լ.Խաչատրյան, Հայոց լեզու. 7. Երևան 2006), որում արդեն հստակորեն ընդգծված է՝ «Բոլոր բաղադրիչները մեծատառով են գրվում... ե) աշխարհագրական անվանումներում, որոնց բաղադրիչ բառերը հասարակ անուններ են. Ծիր Կաթին (աստղակույտ), Հեռավոր Արևելք, Մերձավոր Արևելք և այլն. զ) հոգևոր-պատմամշակութային բաղադրյալ անվանումներում, որոնց բոլոր բաղադրիչներն առանձին-առանձին կամ Սուրբ մականվան հետ միասին հատուկ անուններ են. Մուղնու Սուրբ Գևորգ և այլն»: (էջ 11-12):

Տրամաբանությունը պահանջում է, որ եթե հասարկության կողմից տրված անուն է, անվանում է (մարդու, աշխարհագրական, վարչա-տարածքային միավորի, կազմակերպության....), ապա թե՛ մի բառից կազմվածը, թե՛ բաղադրյալի առաջին բաղադրիչը բոլոր դեպքերում պետք է գրվեն մեծատառերով: Նույն տրամաբանությամբ ենթադրելի է, որ լեզվական նորմը կսահմանի. «Հասարակ անունները գրվում են փոքրատառով, հատուկ անունները՝ մեծատառով» և բացառություններ, «բայց»-եր չեն լինի: Սակայն սա արդեն լեզվի կատարյալ վիճակ է, որին հայերենը դեռևս չի հասել... «Բաղադրյալ հատուկ անուններում մեծատա՞ռ, թե փոքրատառ գրելու՝ աշխարհի, գնալով մերձեցող, լեզուների բացարձակ անմիասնականությունն ու հակասականությունը, հայերենում այս ասպարեզում կայուն, միասնական ավանդույթի բացակայությունը անհնար են դարձրել վերոհիշյալ բազմաբովանդակ ու ընդգրկուն անուններում և անվանումներում մեծատառերի գրության հստակ կանոնարկման և սրա հետևողական կիրառման իրականացումը: Այնուամենայնիվ, և՛ հրատարակիչը, և՛ ուսուցիչը որոշումների տրամաբանականությունը և սովորելու ու սովորեցնելու հնարավոր հեշտացում են ակնկալում: Որոշումն ընդունողների «արդարացումը», եթե դրա հարկը կա, հետևյալն է: Լեզուն սա է, լեզվական իրողությունները սրանք են: Բողոքել կարելի է լեզվաբանների դեմ, բայց ոչ լեզվի: Լեզուն սովորում են, ընդ որում՝ սովորում են գիտակցական ամբողջ կյանքի ընթացքում» (115, էջ 240), - եզրակացվում է «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատուում»:

Դ. Զուգաձևություններն առկայացման կարգում

Հոդային կամ առկայացման կարգն ամենից առաջ ձևաբանական կարգ է: Այն իր էությամբ անվանական բնույթ ունի. գոյականական կարգ է, թեև մասնավոր կիրառություններում կապվում է այլ բառախմբերի հետ: Նրա ենթակարգերն են՝ որոշյալություն / անորոշություն, ստացականություն, ցուցականություն, դիմորոշություն, որոնք արտահայտվում են հիմնականում կցականությամբ՝ **ս, դ, ն, ը** մենահնչյուն մասնիկները կցելով:

Ժամանակակից հայերենում որոշյալի և անորոշի քերականական կարգը ներկայացվում է հակադրությամբ: Իմաստային առումով հակադրության եզրեր են դառնում առարկայի՝ իբրև ծանոթ, հայտնի և իբրև անծանոթ, ոչ հայտնի լինելու իրողությունները: Արտահայտության պլանում հակադրության եզրեր են դառնում **զրո** վերջավորությամբ կամ **մի** հոդով ձևավորված անորոշը և **ը** կամ **ն** հոդով արտահայտված որոշյալ առումը՝ **մարդ / մի մարդ // մարդը(ն), գիրք / մի գիրք // գիրքը(ն), ճանապարհ / մի ճանապարհ // ճանապարհը(ն), քաղաք / մի քաղաք // քաղաքը(ն)** և այլն:

Արևելահայ գրական լեզվում որոշյալությունը քերականորեն արտահայտվում է առման իր ձևույթով, որը դիրքային պայմանավորվածությամբ ներկայանում է երկու տարբերակով՝ **ն** և **ը**: Սրանք հավասարազոր քերականական մասնիկներ են, ունեն միայն գործածության և դիրքային ոլորտի տարբերություն. **ն** հոդի ոլորտն ավելի մեծ է, քանի որ այն դրվում է ոչ միայն ձայնավորահանգ բառերի վերջում, այլև **ը**-ի փոխարեն կարող է դրվել բաղաձայնահանգ բառերի վրա՝ հնչյունական հատուկ միջավայրում (ձայնավորով սկսվող բառերից առաջ): <u>**Ն**-ն սովորաբար հանդիպում է ձայնավորից, իսկ **ը**-ն՝ բաղաձայնից հետո</u>: Սակայն այս հարաբերությունը շարահյուսական այլ շրջապատում կամ իմաստային որոշ պայմաններում կարող է փոխվել՝ կախված հիմքի վերջակերպությունից (ձայնավորով թե բաղաձայնով վերջանալը), մասամբ ձևական-շարահյուսական և իմաստային-շարահյուսական որոշակի պայմաններից: Սրանք հնչյունական-արտասանական հատկանիշով են տարբերվում, գործառական միևնույն արժեքն ունեն, եթե չհաշվենք այն, որ **ն**-ն կարող է փոխանվանական ձևերում հանդես գալ իբրև հիմքակազմ տարր, իսկ **ը**-ն չի կարող: Ժամանակակից գրական հայերենում որոշիչ հոդը կարող է դրվել միայն ուղղականի և տրականի վրա, այսինքն՝ այն ուղղակի կախման մեջ է հոլովաձևերից, որը նշանակում է՝ որոշիչ հոդը ստացել է հոլովական ցուցիչի դեր. **մի** օժանդակ բառ-մասնիկը հանդես է գալիս բոլոր հոլովների հետ, այսինքն՝ դիրքային սահմանափակում չունի:

Ետգրաբարյան հայերենում **ն** ձևույթը ներկայանում է դիրքային **ն/ը** տարբերակով: **Ն**-ն առկա է հայերենի զարգացման բոլոր փուլերում. **գ**-ի կորստի հետևանքով **ն**-ն դառնում է որոշյալ առման

միակ ցուցիչը: **ը** տարբերակը առաջացել է վերջնահանգում **ն-ը** հնչյունական անցմանը զուգահեռ: Ինչպես հայտնի է, հին հայերենի **ն** վերջնահանգը գերազանցապես ընկել է, բայց առանձին դեպքերում փոխարինվել է **ը**-ով, օրինակ՝ **ձուկն-ձուկ, դուռն-դուռ**, բայց՝ **խառն-խառը, սառն-սառը, դառն-դառը, հնն-հինը, տասն-տասը:**

Ընդհակառակը // ընդհակառակն զուգաձևություններում երկուսն էլ ճիշտ են, բայց ունեն տարբեր գործածություն ըստ բարեհնչության և դադարի պահանջի. հնչ-որ ժամանակ փորձեցին օրենքով արգելել **ը**-ով տարբերակը՝ **ընդհակառակը**, որը, սակայն, չտարածվեց:

Ժամանակակից գրական արևելահայերենում այս **ը** տարբերակը նույնպես հանդիպում է ուղղական, տրական հոլովաձևերի հետ, երբ դրանք բաղաձայնահանգ են: **Ն** և **ը** տարբերակները հնչյունական պայմանավորվածություն ունեն: Սկսած միջին հայերենից, **ն**-ն հաստատվում է ձայնավորահանգ բառերի վերջում, իսկ **ը**-ն՝ բաղաձայնահանգ: Ձայնավորով սկսվող բառերից առաջ պետք է ոչ թե **ը**, այլ **ն** հոդը գործածել՝ Արամն ասաց... Ըստ որում այդ **ն**-ից առաջ «**ը**» չպետք է լսվի. **ն**-ն պետք է հաջորդող ձայնավորին միանա:

Ինչ-որ չափով **ը**-ի դիրքային պայմանավորվածությունը առնչություն ունի հաջորդ բաղաձայնասկիզբ բառի առկայության հետ **բաղաձայնահանգ + ը+ բաղաձայնասկիզբ:** Այս դիրքում արդի գրական հայերենի կանոններով **ն** տարբերակը լիովին բացառվում է: Ճիշտ է՝ որոշ հեղինակների մոտ հանդիպում ենք մասնակի գործածության, բայց այն չի հետևում այժմյան նորմին: **Ն**-ն լիովին բացառվում է նաև այն դեպքերում, երբ բաղաձայնահանգ հոդառուն բացարձակ ավարտում է գտնվում՝ «Մոտենում են ավարտական քննությունները»: Այս դիրքում **քննությունները // քննություններն** ձևերում երկրորդը սխալ է և չի համապատասխանում հոդառության կանոններին:

Երբեմն **ը**-ի դիրքում կարող է **ն** հանդիպել, եթե հոդառու բառին հաջորդող բառասկզբում ձայնավորական տարր կա: **Ն**-ն զուգորդվում է, ըստ լեզվական նորմի, ձայնավորահանգ բառաձևի հետ: Այստեղ էլ լիովին բացառվում է **ը** տարբերակի գոյությունը: Նշանակություն չունի՝ հաջորդող բառը ձայնավորով, թե բաղաձայ-

նով է սկսվում, հոդառուն ուղիղ թե թեք բառածև է, այն բացարձակ ավարտում է գտնվում, թե այլուր, միևնույն է՝ **ը** տարբերակը չի կարող գործածվել: Այս տեսանկյունից **ն**-ի դիրքն ավելի ուժեղ և կայուն է, քան **ը**-ի դիրքը, որովհետև առանձին դեպքերում **ն**-ն կարող է **ը**-ի դիրքում հանդես գալ, իսկ **ը**-ն չի կարող **ն**-ի դիրքում հանդես գալ: **Ն**-ն **ը**-ի դիրքում հանդիպում է, այսինքն՝ բաղաձայնահանգի հետ կարող է զուգորդվել, երբ հոդառու բառին հաջորդում է ձայնավորասկիզբ բառ (**բաղաձայնահանգ+ն + ձայնավորասկիզբ**՝ «փրփրուն վտակն արծաթե..»): Ն-ն գործածվում է նաև այն ժամանակ, երբ հաջորդող բառի սկիզբը ներկայանում է **սկ, սպ, ստ, սփ, սք, զգ, զբ, շպ, շտ** բաղաձայնական կապակցություններով, որոնք արտասանվում են իբրև (**ը**)**սկ**, (**ը**)**սպ**, (**ը**)**ստ**, (**ը**)**սփ**, (**ը**)**սք**, (**ը**)**զբ**, (**ը**)**շպ**, (**ը**)**շտ**, սակայն սա բացարձակ կանոն չէ, այստեղ ավելի շատ դեր ունի հնչերանգը. կարևորվում է հնչերանգային-արտասանական-ուղղախոսական նորմը (արագացված ինտոնացիան, արտասանական բարեհնչությունը և այլն): Մեր օրերում նման բառերի արտասանական կանոնների մեջ փոփոխություններ են նկատվում. հիշյալ բաղաձայնական կապակցությունները, հատկապես խոսակցական լեզվում, առանց **ը**-ի են արտասանվում:

Ն-ի գործածությունը **ը**-ի դիրքում արտասանական հանգամանքներով է մեկնաբանվում նաև այն դեպքերում, երբ հոդառու բառին հաջորդում են ձայնավորական կամ ձայնավորասկիզբ **էլ, ու** շաղկապները, **էական բայը** («նամակն էլ չես կարդում)»: Այսպիսով՝ նշված դիրքերում դանդաղ ինտոնացիան (խոսքի դանդաղ տեմպը) պահանջում է **ը**-ի գործածություն, իսկ արագացված ինտոնացիան պահանջում է **ն**-ի գործածություն. այս դեպքում առաջանում են արտասանական տարբերակներ, և **ն**-ն արտասանությամբ կամ հաջորդ բառին է միանում, կամ չի միանում: Նորմայով սահմանվածն առաջին տարբերակն է:

Գրական հայերենում **ց** հոլովման պատկանող բառերն ընդհանրապես հոդ չեն ստանում, և հոդավոր ձևերը բարբառային են, ժողովրդախոսակցական: **Աստված** բառը ևս ուղիղ ձևով հոդ չի առնում, և **Աստված // Աստվածը** զուգահեռության մեջ հոդավոր ձևը խոսակցական է, բարբառային: Կարելի է ամփոփել Գ. Սևակի խոսքով. «Այսպիսի դեպքերում կենդանի խոսքը շատ ավելի ուղե-

ցույց է, քան ձևական քերականությունը, որի քրմերը տխուր ջանասիրությամբ ջնջում են աշակերտների գրած ը-երը ձայնավորներից առաջ և դարձնում ն՝ շատ հաճախ խախտելով աշակերտի կենդանի խոսքի տրամաբանական շեշտը:

Ը- ի և ն-ի գործածությունը, հաջորդ բառի ներդաշնակելը պետք է ազատ թողնել՝ վստահելով կենդանի խոսքի առողջ տրամաբանությանը» (110, էջ 280):

Ժամանակակից գրական հայերենի համեմատաբար վաղ փուլերում որոշյալ առումը և համապատասխան հոդառությունը հնարավոր էր բոլոր հոլովաձևերի հետ, բացի սեռականից: Մեր լեզվի զարգացման վաղ շրջանում բացառական, ներգոյական, գործիական հոլովները կարող էին ինչպես անհոդ, այնպես էլ որոշիչ հոդով կիրառվել: Ս. Պալասանյանը նշում է, որ իր ժամանակի լեզվական նորմով բացառական, գործիական, ներգոյական հոլովները «ավելի անհոդ են վարվում, քան թե հոդով»: Նույնը Մ. Աբեղյանն է ասում. **ն/ը** հոդը չի պահվում տրականի (իմա. սեռականի) վրա, բացառականի, գործիականի, ներգոյականի վրա կարելի է պահել կամ չպահել... Օրինակ՝ **քո պարտեզից(ը), քո պարտեզով(ը), քո պարտեզում(ը):** Սակայն աստիճանաբար այն դուրս է մղվում նաև բացառական, գործիական և ներգոյական հոլովներից: Այնուամենայնիվ, այս հոլովների հոդառությունը իսպառ չվերացավ և մասնակի հարատևեց մինչև մեր ժամանակները, ընդհուպ մինչև մեր օրերը՝ հատկապես իմաստային որոշակի երանգի շեշտման, ընդգծման դեպքում, հաճախ **էական բայից** ու **էլ** շաղկապից հետո՝ «...Հմայված լուսնի շողերով**ն** արծաթ...»;

Կառուցվածքային և իմաստային (սաստկական, ազդուբանական, արտահայտչական երանգների) նույն պայմանավորվածությամբ որոշիչ հոդն ավելի պահպանողական է գտնվել ներգոյականի հետ («Դու իմ սրտումն ես»): Մերօրյա գրական հայերենում հոդով կիրառությունները բացառական, գործիական, ներգոյական հոլովներում հնացած պետք է համարել, և **այգուց // այգուցը, արևով // արևովը, անտառում // անտառումը** և նման զուգաձևություններում երկրորդ տարբերակները ոչ կանոնական, բարբառային են, հնացած, գրական լեզվի նորմից կատարված շեղումներ են, ուստի և ոչ հանձնարարելի և ոչ ճիշտ: Հազվադեպ գործածվում են գեղար-

վեստական խոսքում, խոսակցական-բարբառային լեզվագործածություններում՝ ոճական նպատակներով՝ խոսքին բարբառային կամ ժողովրդական երանգ տալու համար: Թեև որոշիչ հոդը գործածական է միայն ուղղական (հայցական) և տրական հոլովաձևերի հետ, սակայն այս հոլովներում էլ սահմանափակություններ ունի, թեպետև մասնակի բնույթ կրող: **-Ութ յուն** ածանցով բառերը տրականում սովորաբար հոդ չեն ընդունում, սակայն Հ. Աճառյանը ժամանակին նկատել է, որ **–ություն** հանգող բառերի տրականի հետ նոր ժամանակներում որոշիչ հոդը հաճախացել է:

Ժամանակակից գրական հայերենը ակնհայտ որոշակիության է հասել հատուկ և հասարակ անունների, բնության մեջ միակ, եզակի առարկաների անունների, ինչպես և վերացական, նյութականություն արտահայտող բառերի հոդառության մեջ: Այս խնդրում նա համեմատաբար մեծ առաջընթաց է ապրել հոդային կարգ ունեցող այլ լեզուների, ինչպես և հայերենի այլ վիճակների համեմատությամբ: Հատուկ անունները հոդառու են սովորաբար ենթակա, ստորոգելիական վերադիր, ուղիղ կամ հանգման խնդիր լինելիս: Մինչդեռ մի շարք հոգնակի ձևեր, որոնք կազմված են հատուկ անուն գոյականներից, հոդ չեն առնում, օրինակ՝ **Գրիգորենք, Վարդանանք:**

Զուգաձևություններ կարելի է համարել որոշյալ դերանունների հոդով և անհոդ կիրառությունները՝ **ամեն // ամենը, բոլոր // բոլորը, յուրաքանչյուր // յուրաքանչյուրը, ողջ // ողջը, ամբողջ // ամբողջը**, որոնցում անորոշ և որոշյալ ձևերը իրարից տարբերվում են հատկանշային և առարկայական նշանակությամբ: Որոշիչ հոդը նաև փոխանունության մեջ մեծ դեր ունի. «Մեր արդի լեզվի կառուցվածքում կարևոր դեր է խաղում փոխանունությունը հատկապես սեռականով (հատկացուցիչ-հատկացյալի) կապակցությունների արտահայտման համար: Զանքերի, ժամանակի և տեղի (գրության մեջ) ինչպիսի՞ խնայողություն, կրկնություններից խուսափելու ինչպիսի՞ հնարավորություն՝ միայն մի հոդի շնորհիվ», - գրում է է. Աղայանը (14, էջ 284):

Ժխտական դերանունների հոդավոր գործածությունը խրախուսելի չէ: (**Ես չեմ ասի ոչ ոքին,** փոխանակ՝ **ոչ ոքի**): Հետաքրքիր է, որ մի շարք բառերի հոդառությունով տեղի է ունենում խոսքիմասային անցումներ: Օրինակ՝ **մեկ // մեկը** զուգաձևության մեջ **մեկ** թվակա-

նից **ը(ն)** հոդի հաստատումով ունենք դերանունացում՝ **մեկը** (անորոշ դերանուն), **վաղ // վաղը** զուգածևության մեջ՝ **վաղ** ածականից՝ **վաղը** մակբայը (մակբայացում), **նոր** ածականից՝ **նորը** (գոյականացում). հոդավոր ձևը կարող է փոխանվանական արժեք ունենալ: **Վերջ** գոյականը հոդավոր գործածությամբ կարող է եղանակավորող արժեք ունենալ («վերջը համոզվեց»): Հոդը հաճախ է գործածվում կապական ու գոյականական կիրառությունները սահմանազատելու համար: Օրինակ՝ «**Գնացինք քաղաքից դուրս**» (կապ) և «**Դուրսը քամին է ոռնում**», «**Շուրջ 200 մարդ մասնակցեց**» (կապ), և «**Հավաքվեցին կրակի շուրջը**» նախադասություններում **դուրս // դուրսը, շուրջ // շուրջը** հոդային զուգածևությունները ներկայանում են խոսքիմասային հակադրությամբ՝ **կապ // մակբայ** և **կապ // գոյական**:

Չակերտներում առնվող անունների հոդերի, նաև հոլովական վերջավորությունների գրության մասին որոշակի կանոնների բացակայության և եղած կանոնները հետևողականորեն չկիրառելու հետևանքով ստեղծվում է երկվություն. միևնույն անունների հոլովական վերջավորություններն ու հոդերը առանց հետևողականության գրվում են երբեմն չակերտներում, երբեմն չակերտներից դուրս՝ «**Գրական թերթը**» // «**Գրական թերթ**»-ը, «**Գրական թերթի**» // «**Գրական թերթ**»-ի, «**Սպանված աղավնուց**» // «**Սպանված աղավնի**»-ից, «**Սասունցի Դավիթը**» // «**Սասունցի Դավիթ**»-ը, «**Սասունցի Դավթից**» // «**Սասունցի Դավիթ**»-ից... Սրանք ավելի շուտ քերականական-կետադրական նորմի հետ են առնչվում: Հարց է առաջանում՝ գրավոր խոսքում այդ մասնիկները գրել անվա՞նը միացած՝ չակերտներում, թե՞ չակերտներից դուրս:

Չակերտներում առնվող անունների հոլովական վերջավորությունների և հոդերի գրության անհարկի զուգահեռությունները վերացնելու նպատակով Տերմիանաբանական կոմիտեի որոշումը կա (տես՝ 114 էջ 224-226), ըստ որի «**Մայրենի լեզվի**» // «**Մայրենի լեզու**»-ի, «**Շունն ու կատվի**» // «**Շունն ու կատուն**»-ի, «**Սպանված աղավնուց**» // «**Սպանված աղավնի**»-ից, «**Հառաչանքով**» // «**Հառաչանք**»-ով, «**Պեպոյի**» // «**Պեպո**»-ի, «**Գրական թերթից**» //

«**Գրական թերթ**»-ից և նման զուգաձևություններում գերադասելի են առաջին տարբերակները:

Որոշյալ առմանն իր զրո ձևույթով հակադրվում է անորոշ առումը, բայց անորոշությունը կարող է ուժեղացվել **մի** բառով, որը, ձևականորեն տարբերակվելով **մեկ** թվականից, փաստորեն ստացել է անորոշ հոդի արժեք, այլ կերպ ասած հայերենում սկսել է զարգանալ անորոշության վերլուծական արտահայտությունը: Նորմատիվ քերականություններում սահմանվում է՝ անորոշ առումը արտահայտվում է ձևաբանական երկու միջոցով՝ 0 կամ հոլովական վերջավորությամբ և **մի** անորոշ հոդով. առաջինն առավել գործածական է:

Գրաբարում **մի**-ն, որպես անորոշի ցուցիչ, դեռևս լրիվ չէր ձևավորվել, ավելի ճիշտ՝ այն մեծ մասամբ թվականի կիրառություն ուներ: Ետգրաբարյան հայերենում **մի**-ի մեջ գնալով հաստատվում է հոդային արժեքը, թեև մինչև այսօր էլ այն նաև թվականական իմաստ ունի: Միջին գրական հայերենից սկսած **մի** հոդը և **մի** թվականը բառա-քերականական արժեքով նկատելիորեն սահմանազատվում են. **մի // մի** նույնաձևությունը քերականական իմաստային տարբերակվածություն ունի՝ մի դեպքում **մի**-ն թվական է և քանակ է ցույց տալիս **մեկ**-ի նման, մյուս դեպքում անորոշ հոդ է, նյութական իմաստ չի արտահայտում, սոսկ ձևական-քերականական նշանակություն ունի: Մ. Ասատրյանն այս նույնաձևությունը տարբերակում է շեշտով. եթե շեշտված է, ուրեմն թվական է, եթե ոչ՝ անորոշ հոդ է, այսինքն նույնաձևությունը պետք է այսպիսի տեսք ունենա՝ **մի՛ // մի**, այսինքն՝ վերածվի կետադրական զուգաձևության: Նա գրում է. «**Մի** թվականը և **մի** անորոշ հոդը արդի հայերենում տարբերակված չլինելով ձևով և դիրքով՝ տարբերակվում են շեշտով: Սովորաբար **մի**-ն որպես թվական շեշտ է կրում, իսկ որպես անորոշ հոդ շեշտ չի կրում կամ արտասանվում է շատ թույլ շեշտով» (33, էջ 99): Միջին հայերենի վաղ շրջանից սկսած գործածական է դառնում նաև **մեկ** ձևը մի թվականին զուգահեռ (նրա սաղմերը երևան են գալիս մոտ 11-րդ դարից), որը և ավելի է նպաստում **մի**-ի հոդային գործառությանը: Կարելի է ասել, որ այս դեպքում ևս ունենք զուգաձևություններ՝ **մարդ // մի մարդ, խնձոր // մի խնձոր, գիրք // մի գիրք, տուն // մի տուն...**, որոնցում տարբերակները կանոնավոր են և համազոր,

նրբիմաստային որոշ տարբերություն ունեն. **մի**-ն ուժեղացնում է անորոշության իմաստը:

Մ. Ասատրյանն այս տարբերակների միջև հետևյալ իմաստային տարբերություններն է նշել՝ կապակցությունից դուրս անհոդ ձևերը՝ առաջին եզրերը, նշանակում են տվյալ հասկացությունը (մարդ, խնձոր, գիրք, տուն...), իսկ **մի**-ով տարբերակները՝ տվյալ հասկացության մեջ մտնող եզակի առարկան, որն անծանոթ է: Մյուս կողմից՝ անհոդ գոյականը, երբ եզակի է, անտարբեր է թվի քերականական կարգի նկատմամբ և հոգնակի իմաստով ևս կարող է ըմբռնվել, իսկ **մի** հոդով գործածված գոյականը եզակի և միշտ եզակի է ըմբռնվում, և դա բխում է մի թվականի բառային նշանակությունից, որից զարգացել է անորոշ հոդը (33, էջ 100):

Հատուկ անուններին բնորոշ չէ անորոշության ենթակարգը. այն կենսունակ է արևմտահայերենում, որի դիմաց արևելահայերենում առկա է «ոմն+ հատուկ անուն» կաղապարը (ոմն Հարությունյան, ոմն դերասան և այլն):

Մի անորոշը դրվում է բոլոր հոլովաձևերի հետ միայն եզակի թվում:

Գրական արևելահայերենում **մի**-ն դիրքային կայունություն ունի՝ առաջադաս է, իսկ խոսակցական լեզվում երբեմն հանդիպող վերջադաս կիրառություններն առավելապես գրական արևմտահայերենի ազդեցությունն են կրում կամ բարբառային են. **մի մարդ // մարդ մի** և նման ձևերում գրական արևելահայերենին բնորոշ է առաջին տարբերակը:

Ժողովրդական-խոսակցական լեզվում երբեմն **մի**-ին կիրառվում է հոգնակի թվով դրված գոյականների հետ, որը արևմտահայերենի յուրահատկությունն է, և նման զուգաձևություններում՝ **մի գիրք // մի գրքեր** (էին բաժանել), **մի խոսք // մի խոսքեր** (ասացին), **մի աղջիկ // մի աղջիկներ** (տեսանք), գրական-արևելահայերեն են առաջին տարբերակները, երկրորդները ժողովրդախոսակցական են և ոչ հանձնարարելի: «Մի + հոգնակի» կաղապարի իմաստը ժամանակակից արևելահայերենում շարահյուսական միջոցներով է արտահայտվում՝ սովորաբար անորոշ դերանունների կամ եղանակավորող որոշ բառերի օգնությամբ՝ **ինչ-որ գործեր, ինչ-ինչ մարդիկ**...

Ժամանակակից հայերենում ցուցականության իմաստ արտահայտում է միայն **ս** հոդը՝ այն էլ որոշ բառերի հետ, ինչպես օրինակ՝ **աշխարհս**, (մինչև) **օրս**, **երկիրս, մարդս, գիշերս, իրիկունս, առավոտս, կյանքս, գրելս** և այլն (գրաբարում և միջին հայերենում ցուցական հոդերն էին՝ **ս, դ, ն**). ունի ցուցական **այս** դերանվան իմաստը և արտահայտում է առարկայի և ժամանակի մոտիկության գաղափար: Հոդառու բառն էլ սովորաբար բացառում է **այս** ցուցական վերադրի առկայությունը: Այսօր ցուցական հոդառությունը առավել հատուկ է խոսակցական լեզվին, ավելին՝ կան կապակցություններ, որոնք առանց այդ վերադրի չեն կարող գործածվել, ինչպես օրինակ՝ **այս րոպեիս**: Գրական խոսքում օգտագործվում են ոճաարտահայտչական գունավորման նպատակով և հատկապես ժամանակ ցույց տվող բառերի կողքին (**ամառ-ամառս, գիշեր-գիշերս**): Երբեմն գրական լեզու են թափանցում նաև նրա գործածության սխալ ձևերը՝ **այս գիշերս, այս օրս,** որը ընդունելի չէ: **Գիշերս // այս գիշեր // այս գիշերս** եռաձևության մեջ վերջինը ընդունելի չէ. Գրաբարում ճիշտ էին/: <u>«Արդի հայերենին խորթ է ցուցական հոդը և ցուցական դերանունը գործածել միևնույն բառի մեջ</u>», - գրում է Ս. Աբրահամյանը (8, էջ 131): Մ. Աբեղյանը նման զուգաձևություններում առավելությունը տալիս է «որոշող» հոդ ունեցողին. «սովորական է որոշող հոդ ունեցողը» (1, էջ 520): Ցուցական առումը հայերենում վերացման ուղու վրա գտնվող ենթակարգ է. կվերանա, և լեզվական նորմը կարձանագրի այդ փոփոխությունը:

Ստացական առումը գրաբարում է քերականական արտահայտություն ստացել: Ետգրաբարյան հայերենում աստիճանաբար ծավալվում է **ս, դ** հոդերի իմաստային-ֆունկցիոնալ ոլորտում, իսկ **ն(ը)** հոդի մեջ էապես դուրս է մղվում: Արդի գրական հայերենում ստացական հոդերը դրվում են բոլոր հոլովաձևերի վրա. նրանք «անտարբեր են» հոլովաձևի նկատմամբ: Դրվելով գոյականների վրա ցույց են տալիս, թե ում է պատկանում առարկան՝ արտահայտելով **իմ, քո, նրա (իր), մեր, ձեր, նրանց (իրենց)** անձնական դերանունների իմաստները: Այս առումով կանոնավոր, համազոր տարբերակների զուգահեռությամբ ձևավորվող զուգաձևությունները ձևաբանական-շարահյուսական են՝ **գիրքս // իմ գիրքը, հոգիդ // քո հոգին, սրտ/ն/երս // մեր սրտերը, կյանք/ն/երդ // ձեր կյանք/ն/երը,**

ըստ որում **մեր, ձեր, նրանց** իմաստն արտահայտելու համար բառն ստանում է **ն+եր,** որի վրա դրվում են հոդերը: Սխալ են երրորդ տարբերակները՝ // **իմ գիրքս, // քո գիրքդ, // քո հոգիդ, մեր սրտերս, // ձեր կյանք /ն/երդ** ձևերը. ստացական հոդի և ստացական դերանվան համատեղ գործածությունը որակվում է իբրև բարբառայնություն և խորթ է մեր լեզվին: Շատ հաճախ բառակապակցություններում ստացական հոդը դրվում է լրացյալի վրա, և արդյունքում ձևաբանական-շարահյուսական զուգաձևություններ են՝ **մանկությանս օրերը // մանկության օրերս, ձեռքիս փայտը // ձեռքի փայտս...,** որոնցում հանձնարարելի են առաջին տարբերակները:

Ս, Դ դիմորոշ հոդերի մեջ դիմորոշ իմաստը ցայտուն չի արտահայտվում (դրանք անձնական դերանունների իմաստն արտահայտում են դրանց հետ միասին), և **ուսանողս, ուսանողդ, ընկերդ, ընկերներդ** բառաձևերի մեջ իմաստային զուգահեռություն կա՝ **ես՝ ուսանողս // իմ ուսանողը, դու՝ ուսանողդ // քո ուսանողը, դու՝ ընկերդ // քո ընկերը, դուք՝ ընկերներդ // քո (ձեր) ընկերները...**

Ե. Զուգաձևություններն անձի և իրի քերականական կարգում

Արդի գրական հայերենին բնորոշ է անձի և իրի քերականական կարգը: Այն չունի քերականական արտահայտության ցուցիչ. անձի և իրի քերականական իմաստը դրսևորվում է հոլովական վերջավորությունների միջոցով:

Ժամանակակից արևելահայ գրական լեզուն անձի և իրի քերականական կարգով տարբերվում է և՛ գրաբարից, և՛ միջին հայերենից, և՛ արևմտահայ գրական լեզվից. վերջիններիս հատուկ չէ անձի և իրի քերականական կարգը. այն քերականորեն չի արտահայտվել գրաբարում, միջին հայերենում, չկա նաև արևմտահայերենում: Առաջացել և ձևավորվել է արևելյան ճյուղի բարբառներում և նրանց հիմքի վրա բարձրացած արևելահայ գրական լեզվում՝ կապված ներգործողի (ենթակայի) և կրողի (ուղիղ խնդրի) ձևային տար-

բերակման հետ: Արևմտահայ գրական լեզվում ենթական և կրող խնդիրը ձևաբանորեն տարբերակված չեն և որոշվում են քերականական այլ միջոցով՝ բառերի շարադասությամբ (ենթական և ուղիղ խնդիրը կայուն դասավորությամբ են հանդես գալիս. ենթական նախորդում է ուղիղ խնդրին): Արևելահայ գրական լեզվում քերականական այս կարգը կարևորվեց, երբ անձ ցույց տվող գոյականները սկսեցին հայցական հոլովի փոխարեն տրական հոլովով դրվել: Սկզբնապես այս անցումը սահմանափակվում է միայն անձնացույց գոյականներով, սակայն համաբանությամբ գնալով տարածվում է նման գործածությունը. բնականաբար աշխուժանում է նաև հակառակ իմաստով անցումը, երբ անձ ցույց տվող անունները ձևավորվում են իրանիշների նման: Այս դեպքում արդեն անձի և իրի քերականական կարգում սաղմնավորվում է անձի և իրի առման քերականական ենթակարգը: «Անձի և իրի առումները չպետք է հասկանալ ուղղակիորեն, իբրև իմաստաբանական անցում անձի հասկացությունից իրի հասկացությանը և հակառակը: Այս կարգը միայն քերականական արժեք ունի՝ կախված կրող խնդրի այս կամ այն հոլովով արտահայտվելու հետ»,- գրում Հ. Պետրոսյանը (95, էջ 42): Այն, որ այս կարգը նոր լեզվամտածողության արդյունք է, և այս առումով հայերենը որոնումների մեջ է, հաստատվում է տերմինի անմիօրինակությամբ. տարբեր լեզվաբանական աշխատություններում այն անվանվում է մեկ անձի և իրի քերականական կարգ, մեկ՝ անձի և իրի առումներ («Լեզվաբանական բառարան», «Հայերենագիտական բառարան»), մեկ՝ անձի և ոչ անձի քերականական կարգ («Հայերենագիտական բառարան, Մ. Ասատրյան) կամ էլ՝ անձի և իրի առման քերականական կարգ (Ալ. Մարգարյան): Գ. Ջահուկյանն այս կարգը համարում է «դասի քերականական կարգ (քերականական դաս)», որը հանդես է գալիս անձնանշություն և ոչ անձնանշություն դասային հակադրությամբ և արտահայտվում է հոլովի ցուցիչների միջոցով (100, էջ 206-208):

Ոմանք այս առմանը զուգահեռ կամ նրա փոխարեն ընդունում են շնչավորի և անշունչի առումների կարգը: «Լեզվաբանական բառարանում» կարդում ենք. **«Անձի և իրի առումներ... Անձի և իրի քերականական կարգ**: Արդի հայերենում և հայերենի որոշ բարբառներում դրսևորվող քերականական այն երևույթը, երբ հայցա-

կանում միևնույն անունը հանդես է գալիս մերթ իբրև իր, մերթ իբրև անձ դիտված, անկախ նրանից իր է, թե անձ է տվյալ առարկան: Ընդ որում հայցականը, սեփական ձևական վերջավորություն չունենալով, օգտվում է ուղղական և տրական հոլովների ձևերից՝ իր իմաստային երանգավորումներից մեկը (իրի առումը) դրսևորելով ուղղականի (և միշտ ուղղականի) ձևով, իսկ մյուսը (անձի առումը)՝ դրսևորելով տրականի (և միշտ տրականի) ձևով (Գ. Սևակ)» (96, էջ 16):

Այս կարգի մեջ խոսողի անձնական վերաբերմունքը նշանակություն ունի, բայց վճռական ու էական համարվել չի կարող:

Ներկայանում է երկու հակադիր առումներով՝ իբրև անձի առում և իբրև իրի (ոչ անձի) առում:

Բացի իմաստային տարբերությունից՝ քերականական այս կարգի հակադիր եզրերը բնորոշվում են բառական, ձևաբանական, զուգորդական-շարահյուսական և այլ տարբերություններով՝

ա/ հարցական-հարաբերական և որոշ այլ դերանուններում առկա է բառային տարբերություն. **ով, ոմն, ոք** անձը տարբերակող, առանձնացնող դերանուններ են, իսկ **ինչ**-ը իրանիշ է.

բ/ Եթե գործողության անմիջական առարկան անձ է կամ մտածվում է որպես անձ, անունը դրվում է տրական հոլովով, իսկ երբ այն իր է կամ մտածվում է որպես այդպիսին, նրա անունը դրվում է ուղղական հոլովով:

գ/ անձնանիշ անունները որոշյալ առման դեպքում գործողության առարկա նշանակելիս (որպես ուղիղ խնդիր հանդես գալիս) միշտ տրականով են դրվում.

դ/ կրավորական կառուցվածքում գործողության կատարողին նշանակելիս ձևավորվում են միայն **կողմից** կապով.

ե/ անձնանիշ անունները **–ում**-ով ներգոյական հոլով չեն կազմում, իրանիշները կազմում են:

զ/ թեպետև անձի և իրի կարգը իմաստային մեկ հարաբերության մեջ է արտահայտվում, այնուամենայնիվ հարցման տարբերություն ունի. անձնանիշ անունների դեպքում պատասխանում է **ու՞մ** հարցին (սա, ըստ Մ. Ասատրյանի, անձի առման միակ չափանիշն է), իրի կամ որպես այդպիսին մտածվելու դեպքում՝ **ի՞նչ** հարցին.

Լեզվական կանոնը սահմանում է՝ <u>երբ գործողության անմիջական առարկան անձ է կամ մտածվում է որպես անձ, անունը դրվում է</u>

տրական հոլովով, իսկ երբ այն իր է կամ մտածվում է որպես այդպիսին, նրա անունը դրվում է ուղղական հոլովով: Կամ՝ անձի որոշյալ անունները տրականով են հանդես գալիս, իրի անունները՝ ուղղականով:

Լեզվաբանական գրականության մեջ մի շարք բառեր (անձնանիշ անորոշ բառերը, կենդանիների, բույսերի անունները, փոխաբերական իմաստով գործածվող իրի անուններ) հիմնականում գործածվում են կա՛մ անձի առումով, կա՛մ իրի առումով. ազատ են կաղապարների ընտրության հարցում:

Քերականական այս կարգում զուգաձևություններ առաջանում են՝

1. Մեր մտածողությամբ պայմանավորված հաճախ միևնույն առարկան կարող է մտածվել թե՛ որպես իր և թե՛ որպես անձ (անձնավորման, փոխաբերական իմաստավորման, շնչավորման, իրերի արժեքավորման, անձերի արժեքազրկման հետ կապված). այս դեպքում անտեսվում է առարկաների իրական վիճակի ճանաչողական արժեքը, և կարևորվում է քերականական, նաև ոճական արժեքը.
2. Անձի հավաքական անունների, կազմակերպությունների, պետությունների անունների դեպքում.
3. Անձի անորոշ անունների դեպքում. սրանք անձի որոշյալ անունների նմանողությամբ տրականով են գործածվում. այս առումով կենսունակ է հատկապես մի անորոշ հոդը՝ **մի** + անձի անորոշ անուն /«տեսավ **մի մարդ**» // «տեսավ **մի մարդու**».../
4. Կենդանիների, բույսերի անունների՝ անձի անունների ձևով հանդես գալու դեպքում՝ կա՛մ խնդրառու բայի իմաստով պայմանավորված, կա՛մ փոխաբերական իմաստավորման հետ կապված, կա՛մ համաբանության օրենքի գործառույթով արդարացված.
5. Իրանիշ բառերի՝ փոխաբերական իմաստավորմամբ, անձնավորումով կամ շնչավորումով անձի առումով հանդես գալով.
6. Խնդրառու բայի իմաստով պայմանավորված. բայերի խնդրառության տատանումները խնդրառական տարբերակների պատճառ են դառնում և մասամբ պայմանավորում տրական ձևի տարածումը:

Եթե լեզվի զարգացման խորհրդային շրջանում արդեն վերանում էին անձի որոշյալ անունների ուղղականածև (հայցականի) գործածությունները, որ առատորեն կային Աբովյանի, Նալբանդյանի, Պռոշյանի, Մուրացանի և այլոց ստեղծագործություններում, և այս իսկ պատճառով շատ էին անցման շրջանին բնորոշ զուգաձևությունները, ապա մերօրյա գրական հայերենը հատկանշվում է նրանով, որ լեզվի զարգացման ներկա շրջանում անձի որոշյալ անունները միայն տրականով են դրվում. ուղղականով (կամ ուղղականածև հայցականով) գործածությունները հնացած են, հնաբանություններ են, խոսակցական մերժելի իրողություններ... Այժմ, որպես կանոն, անձի որոշյալ անունները միշտ տրականով (տրականածև հայցականով) են հանդես գալիս: Մ. Աբեղյանը գրում է. «Տիգրանը տեսավ Վարդանը» խոսքի մեջ չի հասկացվում ենթական և կրող խնդիրը: Այս երկդիմության առաջն անցնելու համար արևելյան բարբառները հայցականի նշանակությամբ անձի անունների համար, երբ որոշված են, սկսել են գործածել տրական հոլովը: Այս փոխանակությունն անշուշտ սկսվել է դերանուններից, և գրաբարում արդեն տեսնում ենք դրա սկիզբն անձնական դերանունների մեջ (զ) մեզ, (զ) ձեզ և այլն, որոնց նմանությամբ ասվել ինձ, սրան, դրան նրան և այլն, և ապա անձի անունները, երբ որոշված են: Տրականի գործածությանը կրող խնդրի համար՝ անշուշտ ազդել են և այն դեպքերը, որոնց մեջ գրաբարում արդեն մի շարք ներգործական բայեր՝ հաղթել, աղաչել, պաշտպանել և այլն, տրական հոլովով են առնում իրենց կրող խնդիրը, բայց այս գործածությունն ընդհանրացել է ավելի այն պատճառով, որ տրականը ստացել է նաև հանգման հոլովի, այսինքն՝ հայցականի նշանակություն» (65, էջ 337):

Անձի և իրի առման քերականական կարգը ձևաբանորեն արտահայտվում է տրական (տրական-հայցական) հոլովով: Գոյականների իմաստային այս խմբերը որոշ չափով տարբերվում են նաև քերականորեն: Ամենաէական տարբերությունն այն է, որ սովորաբար կրող խնդրի դեր կատարելիս անձ ցույց տվող գոյականները դրվում են տրականով, իսկ ոչ-անձ ցույց տվող գոյականները՝ ուղղականով, բնականաբար ունենալով արտահայտության **ուղղականածև // տրականածև** տարբերությունը: Այնուհետև, անձ ցույց տվող գոյա-

կանները սովորաբար չունեն ներգոյական հոլով, իսկ ոչ-անձ ցույց տվող գոյականների մեծամասնությունն ունի:

Անձի որոշյալ անունների՝ տրականաձև գործածության համաբանությամբ անձի հավաքական անունները, ինչպես նաև պետությունների, կազմակերպությունների և նման անունները սկսել են տրականով գործածվել: Արդյունքում անձի և իրի քերականական կարգի քերականական իմաստի քերականական արտահայտման զուգաձևություններ են. ժողովուրդ, մարդկություն, պետություն, ղեկավարություն, կառավարություն, կազմակերպություն, երկրների անունները հավասարապես հանդես են գալիս երկու ձևերով էլ: Լեզվի զարգացման միտումը տրականով ձևերի աշխուժացումն է. նման անորոշության միակ բացատրությունը իմաստային կողմի հաշվառումն է այն առումով, որ հիշյալ գոյականները անուղղակիորեն անձերի հավաքականություն, ամբողջություն են նշանակում: Առայժմ այս կարգի գոյականների կրող խնդրի հոլովածևը անորոշ վիճակում է. համազոր, ազատ տարբերակներ են և ուղղականով, և՛ տրականով ձևավորվածները՝ հաճախ կախված գրողի կամ խոսողի՝ հիշյալ գոյականների անձի կամ իրի առումով ընկալելու սուբյեկտիվ մոտեցումից:

Լեզվում նկատվում է անձի որոշյալ անունների նմանակությամբ անորոշ անունների՝ ևս տրականաձև հայցականով գործածելու միտում: Ըստ որում, եթե անցած դարաշրջանի նորմատիվ քերականություններում նշվում է, որ այս երևույթը դեռ հեռու է քիչ թե շատ գերակշիռ տարածում ունենալուց հենց թեկուզ գրավոր խոսքում, ապա այսօր նման գործածությունները հաճախացել են. մեր լեզվամտածողությանն առավել հարազատ են «տեսավ մի կնոջ», քան «տեսավ մի կին», «կանչեց ոստիկանների», քան «կանչեց ոստիկաններ» և այլն. այս դեպքում տարբերակների ընտրությունը պայմանավորված է կամ ոճական նպատակներով, կամ շարադասությամբ. օրինակ կարևոր է կրող խնդրի դիրքը ստորոգյալի նկատմամբ. եթե այն նախադաս է, ապա գերադասելի է ուղղականով տարբերակը, եթե ետադաս է, գերադասելի է տրականով: Ըստ որում՝ սպասելի է, որ անձի և իրի քերականական կարգի ամրակայումը մեր լեզվում, մեր լեզվամտածողության այս բացը լրացնելով հանդերձ, կարող է շարադասական նորմում փոփոխություն առա-

ջացնել՝ սահմանափակելով վերջինիս հարաբերական ազատությունը...

Տարբերակների ընտրության հարցում կարևոր է նաև անձի անորոշ անունների կողքի բառերին ուշադրություն դարձնել. եթե անձի անորոշ անունները որևէ թվականի հետ թվային համաձայնության մեջ չգտնվող բազմակի որոշյալներ են, դրվում են ուղիղ ձևով՝ «տեսան 50 երեխա ու ծեր»...

Կենդանիների որոշյալ անունները, ինչպես նկատել է Հ. Պետրոսյանը, ավելի շատ գործածվում են ուղղականձև հայցականով, սակայն բավական հաճախակի է դարձել նաև կենդանիների որոշյալ անունների տրականով գործածությունը՝ կապված նրանց անձնավորման սուբյեկտիվ մոմենտի հետ՝ «դիտում էր կարապներին», «արձակեց ձիուն» և այլն: Ըստ կանոնի՝ իրի անունները ուղղականով կամ ուղիղ ձևով են դրվում, և ըստ այն բանի, որ յուրաքանչյուր կանոն ենթադրում է նաև շեղում նրանից, եղած ոչ կանոնական իրողությունները սկզբնապես փորձում էին բացատրել անձնավորմամբ, սուբյեկտիվ մոտեցմամբ: Բայց հետզհետե նման ձևերի առատությունը, շեղումների մեծաքանակությունը խորհելու տեղիք է տալիս, և կարծում ենք, առավել տրամաբանական է Հ. Պետրոսյանի լեզվամտածողությունը. «Թեև ժամանակակից հայերենում ընդունված է, որ իրի անունների հայցականը ուղղականձև է դրվում և եղած շեղումներն էլ անձնավորման արդյունք են, բայց օրինակների բնույթը և մանավանդ բուն կանոնից շեղումների թիվը այնպիսին են, որ հարկ է հաշտվել այն մտքի հետ, որ այս հարցում ժամանակակից հայերենը որոնումների մեջ է: Գուցե թե լեզուն ձգտում է շնչավորի և անշունչի տարբերակմանը, չէ՞ որ կենդանիների որոշյալ անունների հաճախակի դարձող տրականձև հայցականները միշտ անձնավորման սուբյեկտիվ մոմենտով չի կարելի բացատրել» (Հ. Զ. Պետրոսյան, Գոյականի առումները հայերենում, Երևան, 1960, էջ 157): Սակայն այս դեպքում ինչպե՞ս բացատրել անձի անորոշ անունների ուղղականձև հայցականի ոչ փոքր թիվ կազմող գործածությունները: Ճիշտ է, որոշ միտումներ են նկատվում այս վիճակից դուրս գալու համար, սակայն ներկա դրությամբ անձի և իրի որոշյալ և անորոշ անունների՝ կրող խնդրի դերով բազմապիսի ձևավորումները լուրջ դժվարություններ են ստեղծում լեզվում: Մասամբ ճիշտ է

Մ. Աբեղյանը, որ դեռ 1909 թ տպագրած «Հայցական հոլովը մեր աշխարհաբարում» հոդվածում (էջ 35) գրում է. «Ահա թե ինչ վիճակի մեջ է մեր սեռի խնդրի հայցականը ևս: Դրա ձևը, ուղղական, թե տրական, հաճախ կախված է բայից, դարձվածից, խոսքի շրջումից, խոսելու եղանակից, և նույնիսկ երբեմն սեռի խնդիր եղող բառից: Մի օտարազգի մարդ մեր բոլոր հոլովների բոլոր կիրառությունները էլ հեշտությամբ կսովորի, բայց սեռի խնդրի հայցականը նրան ամենամեծ դժվարությունը կպատճառի, որովհետև մի ընդհանուր և հաստատուն կանոն ասել անհնարին է, գոնե ես չեմ գտնում այդ կանոնը: Ասում ենք՝ նա ոչխարը մորթեց, էշը քշեց, ձին քշեց, բայց էշին, շանը ծեծեց, նա ձիուն մտրակեց: Ամեն թեմ ունի իր առաջնորդը, բայց ես այդ թեմի առաջնորդին չտեսա...: Նույնիսկ քերականությունն էլ, որքան և ընդարձակ լինի, չի կարող իր մեջ ամփոփել այս բոլոր կիրառությունները. դա իսկապես մի ընդարձակ բառարանի գործ է» (65, էջ 340-341):

Կով/ը/ // կովին մորթել, շուն/ը/ // շանը ծեծել, ձի/ն/ // ձիուն մտրակել, կատու // կատվին սիրել ձևաբանական-շարահյուսական զուգաձևություններն առաջանում են **իրի // անձի առման** հակադրությամբ, իսկ **մարդ // մարդու(ն) (տեսավ), նկարիչ // նկարչին (փնտրեց), ընկեր // ընկերոջը (գտավ), ոստիկան // ոստիկանին (կանչեց)** զուգաձևությունները՝ **իրի առման / անձի** հակադրությամբ:

Անձի և իրի քերականական կարգը մասնակիորեն առկա է ներգոյական հոլովի կաղապարման մեջ: Օրինակ՝ անձնանիշ գոյականները չունեն համադրական ներգոյական, և, ասենք, **Արամի մեջ // Արամում** զուգադրության մեջ երկրորդը սխալ է և հայերենին բնորոշ չէ:

Ս. Աբրահամյանը այս քերականական կարգը համարում է ձևաբանական. նա գրում է. «Այն հանգամանքը, որ իրի և անձի կարգը հանդես է գալիս ոչ թե բոլոր, այլ մասնավորապես մեկ հարաբերության մեջ (երբ գոյականը ցույց է տալիս գործողության անմիջական առարկան), դա դեռևս նրա՝ ձևաբանական կարգ լինելը կասկածի տակ չի առնում, և դրանով այն չի դառնում շարահյուսական կարգ: Բանն այն է, որ իրի և անձի կարգով շարահյուսական հարաբերություն չի արտահայտվում, որ մենք իրավունք ունենայինք այն համարելու շարահյուսական կարգ: Քանի որ այս կարգով որոշվում է

գոյականի (կամ հոլովվող բառի) անձ կամ իր ցույց տալը (կամ որպես այդպիսին մտածվելը), նշանակում է նա գոյականի (կամ հոլովվող բառի) հատկանիշը նշող կարգ է, գոյականի կարգ, այսինքն ձևաբանական կարգ» (8, էջ 52-53):

Ի հակադրություն նրա՝ էդ. Աղայանը ժամանակակից հայերենում անձի և իրի առումը համարում է ոչ թե ձևաբանական, այլ շարահյուսական կարգ է և գրում է. «Այն բոլոր դեպքերում, երբ ուղիղ խնդիրը անձ է ցույց տալիս, դրվում է տրական հոլովով, և այն բոլոր դեպքերում, երբ ուղիղ խնդիրը իր է ցուց տալիս, դրվում է ուղղական հոլովով: Սա անձի և իրի քերականական իմաստն է որպես շարահյուսական կարգ, որ հիմնված է բառիմաստի վրա... **Բառիմաստի վրա հիմնված անձի և իրի քերականական կարգից բացի կա նաև անձի և իրի առում, որը դարձյալ հանդես է գալիս իբրև շարահյուսական քերականական կարգ:** Դա այն է, որ անձ ցույց տվող, անձերի դասին պատկանող բառը խոսքի մեջ գործածվում, առնվում է որպես իր և դրվում է ուղղական հոլովով, իսկ իր ցույց տվող, իրերի դասին պատկանող գոյականը խոսքի մեջ գործածվում, առնվում է որպես անձ, անձնավորվում է և դրվում տրական հոլովով» (14, էջ 297-298): Նման երկվության պատճառը այս քերականական կարգի՝ դեռևս վերջնականորեն չձևավորված լինելով է պայմանավորված. որպես քերականական կարգ՝ այն պետք է ունենա իր քերականական իմաստը և արտահայտման քերականական ձևը: Անձի և իրի քերականական կարգը նոր ձևավորված կարգ է, հետևաբար նրա արտահայտության ձևերի հարցում լեզուն որոնումների մեջ է: Թեև ճշտվում են անձի և իրի որոշյալ ու անորոշ անունների ձևավորման հարցերը, և արդեն կարծես ուրվագծվում են լեզվական այլ միտումներ, սակայն ընդհանուր առմամբ դեռ կայունացած չէ անձի անորոշ անուների, հավաքական որոշ անունների, երկրների անունների հոլովական ձևավորումը (ուղղականաձև, տրականաձև): Անձի, իրի անունների այս կամ այն հոլովով հանդես գալը դեռ շատ անգամ կախված է սուբյեկտիվ վերաբերմունքից (անձի առումով ընկալելու, թե իրի) և շատ այլ գործոններից: Բնականաբար, քերականական որոնումներն էլ զուգաձևությունների աշխուժացման պատճառ են դառնում, որով և լեզվական-ձևաբանական նորմի կայունությունը հարաբերականորեն անկայունանում է...

ՉԵՎԱԲԱՆԱԿԱՆ - ԲԱՅԱԿԱՆ ՆՈՐՄ

ԶՈՒԳԱՉԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՅԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ժամանակակից հայերենի քերականական համակարգում առանձնակի տեղ է գրավում բայն իր ձևերի հարստությամբ, կիրառական ճկունությամբ, իմաստային նրբերանգների ու քերականական կարգերի բազմազանությամբ:

Լեզվական նորմի փոփոխություններից առավել նկատելի են խոնարհման համակարգում կատարված և կատարվող փոփոխությունները: Այդ փոփոխություններն հիմնականում արտահայտվում են քերականական որոշ հնացած ձևերի և արտահայտությունների վերացմամբ, նորերի առաջացմամբ ու տարածմամբ, զուգահեռ շատ ձևերի վերացմամբ կամ նրանցից մեկի արմատացմամբ: Լեզուն, ձգտելով հասնել խոնարհված ձևերի միօրինակացման և միասնականացման, հնարավոր սահմաններում հրաժարվել է զուգահեռ ձևերից՝ ընտրելով հատկապես այն ձևերը, որոնք համապատասխանում են լեզվի զարգացման տվյալ շրջանի միտումներին: Խոնարհման համակարգում հանդիպող դժվարությունների մասին խոսելիս Գ. Ջահուկյանը նշում է, որ դրանցից մեկը կապված է լեզվի մեջ գործող նվազագույն ճիգի և դրան զուգահեռ՝ ավելցուկայնությունից խուսափելու միտման հետ: Երբ լեզվի մեջ միևնույն իմաստն արտահայտվում է մեկից ավելի միջոցներով, ապա առաջանում է դրանցից մեկը ըստ հնարավորին վերացնելու միտումը (տես՝ 101, էջ 206-207):

Խոնարհման համակարգում դժվարություններ ստեղծող գործոններից մեկն էլ համաբանության օրենքն է. լեզվի այս համակարգում ևս նրա ազդեցությունն անժխտելի է:

Ժամանակակից հայոց լեզվի խոնարհման համակարգը տիպաբանորեն ավելի մոտ է արևմտահայ գրական լեզվի և բարբառների խոնարհման համակարգին և զգալիորեն տարբեր է գրաբարի խոնարհման համակարգից: Հետևաբար՝ լեզվական տարբեր նորմեր են գործում գրաբարի և ժամանակակից հայերենի խոնարհման համակարգում: Հայերենի զարգացման ընթացքում բայական համա-

կարգում լեզվական նորմի փոփոխությունները կարելի է մոտավորապես այսպես ներկայացնել՝

1. Արևելահայ գրական լեզվի համակարգում գերակշիռ դիրք ունեն վերլուծական բնույթի (բաղադրյալ և երկրորդական բաղադրյալ) ժամանակային ձևերը՝ **գրում եմ, գրելու եմ**. գրաբարում այդպիսիների տեսակարար կշիռը մեծ չէր:
2. Արևելահայ գրական լեզուն, մասամբ գործառական տարբերակման պահանջի հետ կապված, ունի բայական անդեմ ձևերի զգալի քանակություն. առանձնապես պետք է նշել անորոշ դերբայի հոլովվելու հատկանիշը, որը հազվադեպ երևույթ է լեզուների պատմության մեջ:
3. Արևելահայ գրական լեզուն անցկացնում է ներգործական-կրավորական հակադրություն ըստ կրավորական սեռի **վ** կազմիչի բացակայության և առկայության. գրաբարում կրավորականի և ներգործականի ձևաբանական այդպիսի հստակ տարբերակում չկար:
4. Արևելահայ գրական լեզուն բնորոշվում է 2 տիպի (**ել**, **ալ**) լծորդությունների (խոնարհումների) տարբերությամբ, գրաբարն ուներ 4 հիմնական լծորդություն՝ **ե**, **ի**, **ու**, **ա**:
5. Արևելահայ գրական լեզուն ունի 5 եղանակ գրաբարի 3 եղանակի դիմաց (սահմանական, հրամայական և ստորադասական), ըստ որում տարբեր են սրանց հատուկ ժամանակային ձևերի բաշխումն ու քանակը. մասնավորապես պետք է նշել գրաբարի **ց**-ով ապառնիի և ստորադասական ձևերի բացակայությունը նոր գրական լեզուներում և բարբառներում, **կ** նախամասնիկով ձևերի տարածվածությունը, ժխտականի կազմության եղանակների տարբերությունը:
6. Նոր գրական լեզվում և բարբառներում խոնարհման ձևերի անկանոնություններն ու զարտուղություններն ավելի քիչ են, տարարմատ կազմությունների (գալիս եմ-եկա, դնում եմ-դրեցի) թիվը սահմանափակ է:

Բայական համակարգում առանձնապես շատ են միևնույն քերականական իմաստն արտահայտող զուգահեռ ձևերը, և եթե որոշ դեպքերում հեշտ է լինում տարբերակել ընդունելին և մերժելին, ապա հաճախ էլ դժվար է կողմնորոշվել, քանի որ այս դեպքում որո-

շիչը ժամանակն է, նրանց միաձևության լուծումը ապագայինն է: Կան նաև զուգահեռ ձևեր, որոնք հակասում են հայոց լեզվի կառուցվածքային առանձնահատկություններին, ավանդույթին, «հակալեզվական» են:

Բայական զուգաձևություններն ուսումնասիրելու հարցում կարևոր է զգալ լեզվական նորմից դուրս գործող այն միտումները, որոնք կամ այդպես էլ լեզվական նորմի սահմաններից ներս չեն թափանցի (ընդունելի չեն դառնա), օրինաչափությունների չեն վերածվի, կամ էլ կլրացնեն լեզվական նորմի այն բաց վանդակները, որոնք գոյացած կլինեն նրանց զուգահեռ ձևերի դուրս մղմամբ:

Ժամանակակից հայերենի բայական համակարգում լեզվական նորմի փոփոխություններ առաջացնող միտումներից են՝

- բայական նորակազմությունների գերազանցապես **ե** լծորդությամբ ձևավորվելը.
- բայական բառույթի և՛ **ա** լծորդությամբ, և՛ **ե** լծորդությամբ հանդես գալը.
- մի շարք բայերի **վ** ածանցով տարբերակներ ունենալը.
- հրամայական եղանակի եզակիի **ր** վերջնահնչյունի անկումը.
- **ե** խոնարհման պարզ, բազմապատկական և «**վ**» ածանցն ունեցող բայերի հրամայական եղանակի հոգնակիի ձևերը անցյալի փոխարեն ներկայի հիմքից կազմելը.
- արգելական հրամայականը հաստատականի հիմքից կազմելը.
- մի քանի անկանոն բայերի անցյալ կատարյալը ցոյական հիմքով կազմելը.
- **ե** լծորդի փոխարեն **ա**-ի գործածությունը.
- բաղադրյալ ստորոգյալի օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի ժխտական **չէ** ձևի փոխարեն **չի**-ի գործածությունը.
- հնաձև կամ գրաբարատիպ բայերի վերացումը.
- կրավորական ներգործածև հարակատարների հաճախականացումը.
- որոշ բայերի կրկնահիմքության երևույթը.
- անկատար ներկա ժամանակածևի **է** օժանդակ բայի փոխարեն **ա**-ի գործածությունը.
- միասեռության ձգտումը և այլն:

Ոչ կանոնական են **գնալ // երթալ, կանգնել // կայնել // կաղնել, վախենալ // վախել, բուսնել // բսնել, տեսնել // տենալ, մոտենալ // մոտիկանալ, թողնել // թողալ, ավարտել // պրծնել, ելնել // հէլնել** և նման տիպի զուգաձևությունները, որոնց երկրորդ ձևերը ոչ նորմատիվ են, բարբառային են կամ ժողովրդախոսակցական, բայց երբեմն-երբեմն թափանցում են գեղարվեստական լեզվի մեջ: Նմանատիպ զուգաձևությունների տարբերակների լեզվական քննությունը և գրականին համապատասխան ձևի ընտրությունը նպատակահարմար է կատարել բառագիտության բաժնում. սրանք բառագիտական-բառակազմական զուգաձևություններ են...

Զուգաձևություններ կարելի է համարել **ագահանալ // ագահ դառնալ, կանաչել // կանաչ դառնալ** և այլն, որոնցում զույգերը համանիշներ են՝ համադրական և վերլուծական բայաձևերով արտահայտված, հետևաբար զուգաձևություններն էլ բառակազմական են և կանոնավոր, համազոր: Սրանք ավելի շատ բառագիտության մակարդակի ուսումնասիրության նյութեր են:

Ա. Բայակազմական-լծորդական զուգաձևություններ

Ինչպես գիտենք, հայ ազգային գրական լեզվի կազմավորման և հետագա զարգացման շրջանում արևելահայերենն ուներ 3 լծորդություն՝ **ա, ի, ե**: **Ի** լծորդության բայերից ամենաերկարը հարատևեց **ունիմ** ձևը: Այժմ էլ հին սերնդի մարդիկ **ունեմ** և **լինեմ** բայերը երբեմն խոնարհում են **ի** լծորդությամբ: Հետաքրքիր է Հ. Աճառյանի դիտողությունն այս առիթով. «Այժմ անվերջ ասում են ու լսում ենք նույնիսկ ունեմ, ունես, ունի, լինեմ, լինես, լինի և այլն» (Հայոց լեզվի պատմություն, մաս 2, էջ 561, Երևան, 1951): Բազմավաստակ հայագետն այնպես էլ մինչև վերջ չընտելացավ **ունեմ, ունես** ձևերին և ափսոսաց **ունիմ**-ի և **լինիմ**-ի գործածությունից դուրս գալու համար՝ միաժամանակ ընդունելով, որ այս երևույթը լեզվի զարգացման ներքին թելադրանքով էր պայմանավորված: Մ. Աբեղյանը նշում է, որ **ի** լծորդը բարբառային է, և գրական լեզվում նրան փոխարինում է **ե**-ն: Լեզվի

զարգացման հիշյալ շրջանում հիմնականում ավարտվում է այս գործընթացը, և եթե այս կամ այն հեղինակի գործերում դեռևս հանդիպում են, ապա դրանք վերապրուկային երևույթներ են՝ հաճախ որպես լեզվական ավանդույթի, բարբառային ազդեցությունների, երբեմն էլ՝ ոճական երանգավորման հետևանք: Ավ. Իսահակյանի և Հովհաննես Շիրազի բանաստեղծություններում հանդիպող **ի** լծորդով ձևերի գոյությունը, անշուշտ, հարազատ Կարնո բարբառի ազդեցությամբ է պայմանավորված: **Ունիմ // ունեմ, լինիմ // լինեմ, թռնիմ // թռչեմ /թռնեմ/, տեսնիմ // տեսնեմ, ապրիմ // ապրեմ** և նման զուգաձևություններում գրական են երկրորդ տարբերակները, իսկ առաջինները կա՛մ վերապրուկային իրողություններ են, կա՛մ բարբառային: Լեզվական նորմը սահմանում է. «Ըստ խոնարհիչների կամ լծորդությունների՝ ժամանակակից հայերենում բայերը բաժանվում են երկու մեծ խմբի՝ Ե կամ 1-ին խոնարհման բայեր և Ա կամ 2-րդ խոնարհման բայեր: Ե խոնարհման են պատկանում այն բայերը, որոնց անորոշ դերբայը վերջավորվում է ԵԼ ձևով... Ա խոնարհման են պատկանում այն բայերը, որոնց անորոշ դերբայը վերջավորվում է ԱԼ ձևով» (33, էջ 199-200): Ըստ որում՝ **ա** լծորդության բայերը **ե** լծորդության բայերի կեսից էլ պակաս են և գերազանցապես չեզոք սեռի են: Նկատելի է, որ նորակազմ բայերը ձևավորվում են **ե** լծորդությամբ: Սա ժամանակակից հայերենի բայակազմության նկատելի միտում է:

Ամենից առաջ խոնարհման համակարգում զուգաձևություններն առաջանում են որոշ բայերի՝ **ե** և **ա** խոնարհման զուգահեռ ձևեր ունենալու պատճառով. ժամանակակից հայերենում կան մի շարք բայեր, որոնք առանց ածանցման կամ փոփոխության, իբրև բայական բառույթներ, հանդես են գալիս և՛ **ա** լծորդությամբ, և՛ **ե**, այսինքն՝ ունեն գործածության զուգահեռ ձևեր: Լծորդական հարաբերակից տարբերակների գոյությունը հիմնավորվում է սեռային, բայակազմական, իմաստային, կերպային յուրահատկություններով: Դրանք ժամանակակից հայերենում մեծ թիվ չեն կազմում, և եթե մի քանի զուգաձևություններում տարբերակները սեռային, երբեմն էլ իմաստային տարբերություններ են դրսևորում (**թվալ // թվել, ծխալ // ծխել, ծփալ // ծփել, երերալ // երերել**...), ապա մի քանիսում նման տարբերություններ չկան, ինչպես օրինակ՝ **փայլփլալ // փայլփլել, ոստոստալ // ոստոստել, կրճտալ // կրճտել, գեղգե-**

ղալ // գեղգեղել, կաղալ // կաղել, փրփրալ // փրփրել, թռչկոտալ // թռչկոտել, կայծկլտալ // կայծկլտել, հաչմչել // հաչմչալ, գեղածփալ // գեղածփել, մնչալ // մնչել, գուրգուրալ // գուրգուրել: Լծորդական տատանումներ ունեցող այս բայերը ժամանակակից գրական լեզվում հաստատված են գերազանցապես **ե** լծորդությամբ. **կաղալ**–ը, **կայծկլտալ**-ը ավելի տարածված են. հակառակ եզրերն առավելապես ժողովրդախոսակցական են: **Երերել**–ը խիստ սակավադեպ է: **Թվալ // թվել** ձևերի տարբերությունն ընկալվում է որպես առանձին /համանուն/ հիմքերի տարբերություն: **Ափսոսալ // ափսոսել** զուգաձևության մեջ նորմով սահմանվածը եղել է **ափսոսալ** ձևը, իսկ **ափսոսել**-ը նորաբանություն է դիտվել թե՛ Մալխասյանցի բառարանում, թե՛ «ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում»: Պ. Բեդիրյանը նշում է, որ մերօրյա հայերենում **ափսոսալ** տարբերակը գերադասելի է դարձել **ափսոսել**-ի համեմատությամբ՝ «**ափսոսալ** (ոչ թե «ափսոսել») (41, էջ 93): «Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարանում» (Ա. Մ. Սուքիասյան, Ք. Ա. Սուքիասյան) զուգաձևության **ափսոսալ** տարբերակն է ընտրվել որպես կանոնական, նորմատիվ:

Սրանց կողքին սխալ՝ ոչ կանոնական, լեզվական նորմից շեղումներ պետք է համարել լծորդափոխանցմամբ առաջացած հետևյալ զուգաձևությունների երկրորդ տարբերակները՝ **խոսել // խոսալ, գովել // գովալ, ցավել // ցավալ, հաչել // հաչալ, ննջել // ննջալ, պատկանել // պատկանալ, կաթել // կաթալ, տևել // տևալ**, որոնք գրական լեզվի համար խորթ են և ոչ հանձնարարելի:

Զուգաձևություններ են կազմում հատկապես **-ան-** ածանցն ունեցող բայերը նույնահիմք անածանցավորների հետ: Սրանց ուսումնասիրությունը, բացի բառագիտականից, նաև ձևաբանական նշանակություն ունի, հետևաբար այս տիպի զուգաձևությունները կարելի է համարել բառական-ձևաբանական զուգաձևություններ: Գրաբարում այս տիպի զուգաձևությունները մեծ թիվ էին կազմում, և տևականության իմաստն էլ ավելի ուժեղ էր արտահայտված: Գ. Մագիստրոսը **-ան**-ը համարում է «ազնվականական ոճի արտահայտություն», Գ. Ավետիքյանը՝ «անուշցնող մասնիկ», իսկ ժամանակակից քերականները (Գ. Ղափանցյան, Ա. Աբրահամյան, Հ. Բարսեղյան)՝ «տևական գործողության արտահայտիչ»:

-Ել, **-ալ**, **-անալ** ձևույթներն իրենց հիմնական իմաստի՝ գործողության, եղելության իմաստն արտահայտելու հետ մեկտեղ հաճախ բայերին հաղորդում են բայական և քերականական լրացուցիչ իմաստներ: Դա ակնհայտ երևում է հատկապես այն դեպքերում, երբ նրանք զուգորդվում են միևնույն բառին կամ արմատին, ինչպես օրինակ՝ **դատարկել // դատարկանալ**, **կոպտել // կոպտանալ**... Զուգաձևությունները հիմնականում ձևավորվում են ոչ-փոխարկայնության և փոխարկայնության իմաստային եզրերի հակադրությամբ: Ըստ որում **բարդել // բարդանալ**, **գնդել // գնդանալ**, **դատարկել // դատարկանալ**, **ձևել // ձևանալ**, **աղտոտել // աղտոտանալ**, **սեղմել // սեղմանալ**, **օտարել // օտարանալ** և նման զույգերի դեպքում ոչ-փոխարկայնության և փոխարկայնության իմաստին զուգակցվում է նաև անցողականության և անանցողականության քերականական իմաստը: Իսկ **ծարավել // ծարավանալ**, **կարմրել // կարմրանալ**, **ցրտել // ցրտանալ** և նմանատիպ զուգաձևություններում նշված հակադրությունները չեզոքանում են, և դրանք վերածվում են ազատ տարբերակների, չնայած ունեն կիրառական տարբեր ոլորտներ. ըստ հայտնված կարծիքների՝ զուգաձևությունների առաջին տարբերակները գալիս են հնից, սահմանված են գրական նորմով, իսկ երկրորդները նորակազմություններ են և ավելի շատ հատուկ են խոսակցական լեզվին: «...Թեև **-ել** վերջավորությամբ վերածման բայեր ունենք, բայց դրանք բոլորն էլ ունեն կամ կարող են ունենալ **-անալ** ձևով զուգահեռ, ըստ որում դրանց միջև որոշակի իմաստային տարբերություն կա. **կարմրել** նշանակում է «կարմիր գույն ստանալ, շիկնել», իսկ **կարմրանալ**՝ «կարմիր դառնալ», **ապշել**՝ «ապուշության վիճակի մեջ ընկնել», իսկ **ապշանալ**՝ «ապուշ դառնալ» և այլն. առաջիններն նշանակում են որևէ հատկանիշ ձեռք բերել՝ ստանալ, իսկ երկրորդները՝ որևէ հատկանիշի վերածվել՝ փոխարկվել, որևէ բան դառնալ, այլ կերպ ասած՝ առաջինները **վերածության-ստացողական** բայեր են, երկրորդները՝ **վերածության-դառնալիության** բայեր»,- գրում է էդ. Աղայանը (14, էջ 331):

Սրանք կարելի է բաժանել երկու խմբի՝ նույնալծորդ և տարալծորդ:

-Ան- ածանցն ունեցող մի շարք բայեր նույն **ա** լծորդության սահմաններում ժամանակակից հայերենում հանդես են գալիս նաև

ածանցազուրկ զուգահեռ ձևերով, ինչպես՝ **անձկալ // անձկանալ, լողալ // լողանալ, կաղալ // կաղանալ, ցանկալ // ցանկանալ, ցոլալ // ցոլանալ**: Նույնալծորդ զուգաձևություններն ունեն բառիմաստային, քերականական տարբերություններ և գործում են լեզվական նորմի սահմաններում: «Այս բայերի գործածության զուգահեռությունը արդի գրական լեզվում մի ընդհանուր օրինաչափությամբ չի հիմնավորվում: Այս փոքրիկ խմբի մեջ մտնող բայերի ըստ բառակազմական-քերականական ընդհանուր նշանակության՝ ածանցավոր և ածանցազուրկ զուգահեռների տարբերություններով բաժանվում են երկու մասի՝ ա/ բառիմաստի հիմնական կամ երանգային տարբերություններ ունեցողներ, բ/ քերականական տարբերություններ ունեցողներ» (3, էջ 225): Բառիմաստային տարբերություններ ունեն, օրինակ, **լողալ // լողանալ, կաղալ // կաղանալ** զուգահեռները: Ըստ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի» **լողալ** նշանակում է «հատուկ ձևով թևերը՝ ոտքերը՝ լողաթևերը շարժելով ջրի մեջ ընթանալ, լող տալ», իսկ **լողանալ** նշանակում է «մտնելով ջրի մեջ կանգնելով թափվող ջրի տակ մարմինը լվանալ՝ մաքրվելու՝ կազդուրվելու, զովանալու նպատակով»: **Կաղալ** նշանակում է «ոտքի հիվանդության պատճառով քայլելիս օրորվել, մի կողմի վրա թեքվել», իսկ **կաղանալ**՝ «կաղ դառնալ, ոտքից կաղալ»: Բառիմաստային տարբերություններ ունեցող զուգաձևությունների ածանցավոր տարբերակում ածանցը, նշանակում է, բառակազմական արժեք ունի: **Անձկալ // անձկանալ, լվալ // լվանալ, ցանկալ // ցանկանալ** զուգաձևություններում քերականական տարբերություններ կան. ածանցավոր ձևերի մեջ որոշ չափով զգացվում է տևականության գաղափարը: «Դա երբեմնի տևական կերպի թույլ հետքն է, որն ըստ երևույթին մի ժամանակ ավելի ցայտուն է եղել մեր լեզվի մեջ, իսկ հետագայում աստիճանաբար թուլացել է, և այժմ, ինչպես տեսնում եք, կարելի է խոսել նրա հետքերի մասին», - գրում է Ա. Աբրահամյանը (3, էջ 226): Այս զուգաձևություններում նաև այլ տարբերություններ կան. **լվալ** բայը բարբառային-խոսակցական երանգ ունի, **անձկանալ**-ը նաև վերածության գաղափար ունի, իսկ **ցանկալ** բայը գործածության սահմանափակություն ունի այն առումով, որ խոնարհման հարացույցում **ցանկանալ**-ին զուգահեռ բոլոր ձևերը չունի: Մ. Աբեղյանի նշած

նմանատիպ զուգաձևությունների մի մասը (1, էջ 300) այլևս գոյություն չունի. նրանցում տարբերակներից մեկը դուրս է մղել մյուսին (ինչպես օրինակ՝ **հոխորտալ // հոխորտանալ, խրոխտալ // խրոխտանալ**):

Տարալծորդ զուգաձևություններում **-ան-** ածանցն ունեցող մի շարք բայեր իրենց ածանցազուրկ զուգահեռներն ունեն **ե** լծորդությամբ: Սրանք էլ իրենց հերթին բաժանվում են 2 խմբի՝

ա/ Զուգաձևություններ, որոնք նույնասեռ են, այսինքն՝ թե՛ ածանցավոր, թե՛ ածանցազուրկ տարբերակները չեզոք սեռի բայաձևեր են՝ **բարակել // բարականալ, գիշերել // գիշերանալ, դեղնել // դեղնանալ, հաճախել // հաճախանալ, ծառայել // ծառայանալ, նվազել // նվազանալ, փափկել // փափկանալ, երկարել // երկարանալ, զորել // զորանալ, ժրել // ժրանալ, լերդել // լերդանալ, խավարել // խավարանալ, կապտել // կապտանալ, հավերժել // հավերժանալ, կանաչել // կանաչանալ, դալարել // դալարանալ, դժգունել // դժգունանալ, թանձրել // թանձրանալ, ցոլել // ցոլանալ, ճերմակել // ճերմականալ, աղոտել // աղոտանալ, ծանծաղել // ծանծաղանալ, ծանրել // ծանրանալ, անդորրել // անդորրանալ, բևեռել // բևեռանալ, անտառել // անտառանալ, անրջել // անրջանալ, ծարավել // ծարավանալ, կակղել // կակղանալ, պանդխտել // պանդխտանալ, կանաչել // կանաչանալ, կարմրել // կարմրանալ, նվազել // նվազանալ, սառչել // սառնանալ, ջերմել // ջերմանալ, տափակել // տափականալ, ցամաքել // ցամաքանալ** և այլն: Սրանք տարբերվում են իմաստային և կերպային երանգներով: Հասկանալի է, որ բառական շրջանառության տեսակետից ավելի աչքի է ընկնում կամ մեկը, կամ մյուսը, բայց լինում են նաև հավասար տարածում ունեցող զույգեր, ինչպես՝ **ջերմանալ // ջերմել, հաճախել // հաճախանալ, գիշերել // գիշերանալ, ծառայել // ծառայանալ**, և հավասարական գործածության պատճառը, կարծում ենք, իմաստային տարբերակվածության դրսևորումով է պայմանավորված: **Ապահովել // ապահովանալ, վարարել // վարարանալ, նիհարել // նիհարանալ, ապշել // ապշանալ, պարզել // պարզանալ** զուգաձևությունները միաձևության վերածվելու ճանապարհին են՝ առաջինների դիրքերի ամրապնդմամբ, երկրորդների դուրս մղմամբ:

Ա. Աբրահամյանի նշած զուգաձևություններից մի քանիսն այսօր գործուն չեն, քանի որ **ամպանալ // ամպել, բթամտանալ // բթամտել, խստանալ // խստել, զառամանալ // զառամել, թանկանալ // թանկել, շոգանալ // շոգել** զուգաձևություններում **ամպանալ, բթամտել, շոգանալ, խստել, թանկել, զառամանալ** տարբերակները դուրս են եկել բառագործածությունից և խորթ են գրական լեզվի համար, հնաձևություններ են դարձել, իսկ **կայծանալ // կայծել** զուգաձևությունն ընդհանրապես դուրս է մնացել գրական լեզվի բառապաշարից, քանի որ երկու եզրերն էլ գործածական չեն:

Ավելին, կան զուգաձևություններ, որոնց զուգահեռ եզրերից ոչ թե մեկն է մյուսին դուրս մղել, այլ նրանք այնքան են անկախացել, բառիմաստային այնպիսի տարբերություն դրսևորել, որ այսօր նույնիսկ դժվար է հավատալ, որ նրանք նույնահիմք են: Օրինակ՝ **դիմանալ** և **դիմել** բայաձևերը: Իրարից հեռանալու, իմաստային անկախություն ձեռք բերելու ճանապարհին են **ծանրել // ծանրանալ, ծառայանալ // ծառայել, ջերմանալ // ջերմել** զույգերը: Իսկ դրան հակառակ՝ **փափկանալ // փափկել, դալարանալ // դալարել, հավերժանալ // հավերժել** զուգաձևություններում զույգերի իմաստային կապն ավելի սերտ է: Նշված զուգաձևությունների մեջ ածանցավոր ձևերն ունեն տևականության իմաստ, որը զուգակցվում է վերածման գաղափարի հետ: Սպասելի է, որ ժամանակակից հայերենում գործառող նման զուգաձևություններից մի մասում տարբերակներն իմաստային անկախություն կստանան, մյուս մասում «գերտարբերակը» կհաղթի՝ հնաբանության վերածելով զուգահեռ եզրին: Բացառված չէ, որ որոշ զուգաձևություններ ընդհանրապես դուրս կմնան լեզվի համակարգից, կամ կառաջանան նորերը:

բ/ Տարասեռ զուգաձևություններ, որոնց **ե** լծորդությամբ պարզ ձևերը ներգործական սեռի են՝ **բարդել // բարդանալ, գնդել // գնդանալ, դատարկել // դատարկանալ, խոնարհել // խոնարհանալ, մանրել // մանրանալ, կլորել // կլորանալ, կոպտել // կոպտանալ, կռել // կռանալ, համրել // համրանալ, չորել // չորանալ, պնդել // պնդանալ, հարթել // հարթանալ, պատկերել // պատկերանալ, սեղմել // սեղմանալ, այլանդակել // այլանդականալ, բռնել // բռնանալ, ձևել // ձևանալ, մեղմել // մեղմանալ, միամտել // միամտանալ, նեղել // նեղանալ, սրել // սրանալ, տի-**

րել // տիրանալ, արյունել // արյունանալ, բևեռել // բևեռանալ, կարծել // կարծանալ, կեռել // կեռանալ, փխրել // փխրանալ, օ-տարել // օտարանալ: Գոլել // գոլանալ զուգածևությունը խոսակցական-բարբառային և գրական տարբերակներով է ձևավորվել:

Նման զուգածևությունների գոյությունը պայմանավորված է լեզվական ավանդույթով, բայական միավորների ծավալումով, նրանց իմաստային, կիրառական, կերպային, գործածական տարբերություններով, լեզվի զարգացման ընթացքով:

Մեր հին գրավոր լեզուն՝ գրաբարը, նույնպես ուներ այսպիսի զուգահեռներ, ուստի այսպիսի լեզվական ավանդույթը գալիս է հեռավոր ժամանակներից: Բայց և ժամանակակից գրական հայերենում նմանատիպ զուգածևությունների առատությունը նաև նորօրյա բայակազմական ու քերականական իրողությունների արդյունք է: Նման զուգածևությունների մեծ մասի ճակատագիրը կարելի է գուշակել այն առումով, որ դրանց զուգահեռ ձևերն արդեն ունեն սեռային տարբերություններ, որոնք իմաստային տարբերություններով են պայմանավորված, ուրեմն սպասելի է, որ այս ձևերը անկախանան և դադարեն տարբերակներ համարվելուց:

Միջինհայերենյան շրջանում **-են-** և **-ան-** ածանցներով կազմված զուգահեռ ձևերի գոյությունն անկասկածելի է (տես՝ 3, էջ 243-244). մերօրյա հայերենում նմանատիպ կանոնական զուգածևություններ չեն հանդիպում: Խոսակցական լեզվում, համաբանությամբ կամ բարբառային լեզվի ազդեցությամբ պայմանավորված, երբեմն հանդիպում են **-են**-ի՝ **-ան**-ի վերածվելու, և հակառակը՝ **ան**-ի՝ **-են** դառնալու լեզվաիրողություններ, և **մերձենալ // մերձանալ, մոտենալ // մոտանալ, կարենալ // կարանալ, գիրանալ // գիրենալ, զորանալ // զորենալ** զուգածևություններում երկրորդները խոսակցական են, մերժելի և ոչ հանձնարարելի, իսկ **հոռիանալ // հոռենալ // հոռանալ** եռածևության տարբերակները ժողովրդական ձևեր են և հնացած (թեպետև առաջինն ընդգրկված է է. Աղայանի բառարանում). մերօրյա գրական հայերենում հազվադեպ են գործածվում և հնաբանություն դառնալու ճանապարհին են: Գրական հայերենին հարազատ չէ նաև հիմնային **-ան-** բաղադրիչի մեջ **ա** ձայնավորի սղման երևույթը, և **ջահելանալ // ջահելնալ, քոռանալ // քոռնալ, խոշորանալ // խոշորնալ, քաչալանալ // քաչալնալ, հիմարանալ**

// **հիմարնալ, ուրախանալ // ուրախնալ**... զուգածևություններում, որոնք նաև հիմքափոխական են, երկրորդները գրական չեն և անհանձնարարելի են:

Միայն քերականական-կերպային տարբերություններ ունեն **արբել // արբենալ, արժել // արժենալ, գիտեմ // գիտենալ, ուզել // ուզենալ, ունեմ // ունենալ, կամել // կամենալ** զուգածևությունները: Սրանք նույնասեռ, նույնիմաստ տարբերակներ են: **Կարել // կարենալ** զուգածևության **կարել** տարբերակն իր խոնարհված ձևերով խոսակցական լեզվում է գործածական, բայց գեղարվեստական լեզվի միջոցով թափանցում է նաև գրական լեզու: Սեռային, բայակազմական, իմաստային, կերպային, գործածական տարբերություններ ունեցող վերոհիշյալ զուգածևությունները լեզվական նորմի սահմաններից դուրս չեն. նրանց երկու եզրերն էլ հանձնարարելի են այնքան ժամանակ, քանի դեռ նրանցից մեկնումեկը կա՛մ դուրս չի ընկել, կա՛մ լիովին չի տարբերակվել մյուսից:

Բ. Բայակազմական-հիմքափոխական զուգածևություններ

Ժամանակակից գրական հայերենի բայակազմության քննության մեջ կարևոր նշանակություն ունի բայական հիմքերի ուսումնասիրությունը. լեզվի քերականական կառուցվածքի մեջ բայահիմքերն առանձնացած ու անկախ չեն. նրանք հանդես են գալիս դիմավոր և դերբայական ձևերի մեջ: Բնականաբար բայակազմական զուգածևությունների քննության ժամանակ կարևորվում է նաև հիմքափոխական զուգածևությունների քննությունը: Այս առումով գրական հայերենի զարգացման միտումը դեպի ընդհանրականն ունեցած ձգտումն է:

Բանալ, զարնել բայերը հիմքափոխվել են, և **բացել // բանալ, զարկել // զարնել** զուգածևություններում **բացել, զարկել** բառերն են կանոնագրված: **Լացել // լալ** զուգածևությունը հիմք է տալիս խոսելու անցյալ կատարյալում **լացեց // լաց** հիմքափոխական տարբերակների մասին (այլ է նրանց բառակազմական զուգահեռների

հարցը): Առօրյա հայերենում այս իմաստով աշխուժացել է **լաց լինել** հարադիր բայի գործածությունը, և խոնարհման և այլ փոփոխությունների ժամանակ ձևափոխության է ենթարկվում նրա կազմում հանդես եկող **լինել** բայը. զուգահեռ հիմքերով է կազմվում ենթակայական դերբայը՝ **լաց լինող // լաց եղող:**

Հիմքափոխական զուգաձևություններից շատերի առաջացման պատճառը նույն բայերի անցոյական և ցոյական հիմքերով հանդես գալն է: Ըստ գրական լեզվի կանոնների՝ **զարկ-(ի) // զարկեց-(ի), կանչ-(ի) // կանչեց-(ի), կապ-(ի) // կապեց-(ի), ապր-(ա) // ապրեց(ի), հանդիպ-(ա) // հանդիպեց-(ի)** հիմքափոխական զուգաձևություններում ընդունելի և ճիշտ են ցոյական հիմքերը. առաջինները հնացած են, բարբառային և գրական լեզվի համար անընդունելի. եթե անգամ հանդիպում էլ են սրանց՝ ոչ ցոյական հիմքով կազմված բայաձևեր, ապա դրանք զուգահեռներ չեն: Ի տարբերություն սրանց՝ մի շարք բայեր, ըստ կատարյալի հիմքի, կրկնատիպ են, ինչպես՝ **բերել, հանել, դնել, անել, թողնել,** և մեր գրական լեզվի արդի շրջանում գործածվում են և՛ մեկ, և՛ մյուս ձևերով. **բեր-(ի) // բերեց-(ի), հան-(ի) // հանեց-(ի), դր-(ի) // դրեց-(ի/, ար-(ի) // արեց-(ի), թող-(ի) // թողեց-(ի), բաց-(ի) // բացեց-(ի)** անցոյական-ցոյական հակադրությամբ ձևավորված զուգաձևություններում գրավոր խոսքում առավել գործածական են ցոյական ձևերը, և միտումը այս հիմքով կազմված ձևերի հաստատումն է, իսկ ոչ ցոյականները առավելապես բնորոշ են բանավոր խոսքին. այս երևույթը դեռևս լինելության մեջ է. նշանակում է՝ դեռևս չենք կարող «ճիշտ» և «սխալ», «հանձնարարելի» և «ոչ հանձնարարելի», «գրական» և «ոչ գրական» գնահատականներով ընտրություն կատարել...[1]

Դարձել բայի անցյալ կատարյալի հիմքից կազմված ձևերի մեջ **դարձ-** հիմքի կողքին հանդիպում է **դառ-** հիմնային տարբերակը. կատարյալը կրկնահիմք է՝ **դարձ-(ա) // դառ-(ա).** վերջինը բարբառային է, խոսակցական... Այս բայի համար Ա. Աբրահամյանը գրում է. «Բայի այսպիսի ձևափոխությունը ձգտում է առանձնանալ

[1] Մեր օրերում հատկապես դպրոցականների շրջանում աշխուժացել են ընդունված ցոյական ձևերի փոխարեն ոչ ցոյականների գործածությունը՝ ճանաչեցի-ճանչա, ջոկեցիր-ջոկար, որոնք ակնհայտ ժարգոնային երանգ ունեն, և որոնք անտարբերության դեպքում կարող են նոր միտման սկիզբ դառնալ:

բառիմաստի տարբերակումով: Հայտնի է, որ **դառնալ** բայն արդի գրական լեզվում ունի իմաստային բազմազան երանգներ, որոնք կարելի է խմբավորել երկու խմբերի մեջ՝ 1. «շարժման ուղղությունը փոխել, վերադառնալ», 2. «մի վիճակից մի այլ վիճակի վերածվել, փոխել դրությունը»: Նկատելի է, որ **դառ** հիմքով բայը ավելի շատ գործածվում է վերջին նշանակությամբ: Սակայն այս երևույթը դեռ վերջնական ու հստակ դրության չի հասել...

Ժամանակակից գրական լեզվում այս բայի գործածության ներկա վիճակի քննարկումը բերում է այն համոզման, որ անցյալ կատարյալի հիմքի **դառ** յուրահատուկ ձևը իմաստային տարբերակի անջատումով թեև տեղ-տեղ թափանցել է գրական լեզվի մեջ, սակայն դեռևս լիովին չի վերածվել գրական ձևի, դեռևս **դարձ** հիմքով կազմված ձևերը արտահայտում են այդ բառի բառական բոլոր իմաստները» (3, էջ 344):

Հիմքափոխական զուգաձևություն ունի **տալ** բայը՝ **տու- /տվի/ // տվեց- (տվեցի)**. ժամանակակից գրական հայերենի գրավոր տարբերակում գերակշռող դիրք է գրավում **տվեց-** հիմնային տարբերակը՝ կապված բայերի ցոյականության հակման հետ:

Հիմքափոխական զուգաձևությունների առաջացման պատճառ պետք է համարել նաև հրամայական եղանակի հոգնակի թվում բայերի՝ կատարյալի փոխարեն անորոշի հիմքից կազմվելու միտումը (**գրեց (գրեցե՛ք) // գր (գրե՛ք)**, նաև՝ պատճառական բայերի անցյալ կատարյալի ոչ ճիշտ՝ այսպես կոչված «կրկնակի պատճառական» ձևերի (**հագցր(ի) // հագցրեց(ի)**.../ հաճախական գործածությունը և այլն, որոնց մասին կխոսվի առանձին՝ համապատասխան հատվածներում:

Նկատելի է, որ լեզվի զարգացման ներկա շրջանում հատկապես բանավոր խոսքում հաճախ գործածվում է **-չ-** սոսկածանցի անկումով առաջացած անորոշ դերբայի մի նոր տարբերակ: Հիմքափոխության այս միտումը, որ դարձյալ արդյունք է լեզվի միասնականության և միօրինակության հասնելու միտումի, կարող է տարածվել **չ-** սոսկածանց ունեցող այլ բայերի վրա: Լեզվաբանական գրականության մեջ արձանագրվում է մի քանի բայերի հիմքափոխության երևութը, ինչպես **ուռչել, սառչել, կորչել** բայերի փոխանցումը ածանցազուրկ բայերի շարքը՝ **ուռել, սառել, կորել**, որի պատճառը

չ- բայածանցի անկայունություն է, և որի հետևանքով էլ փոխվում է նրանց խոնարհման հարացույցը: **Սառչ // սառ-, ուռչ- // ուռ-, կորչ- // կոր-** ներկայի հիմնային զուգահեռություններում անհաճնարարելի են երկրորդ տարբերակները. նույն բայերի ներկայի հիմքից կազմված **սառչել // սառել, կորչել // կորել, ուռչել // ուռել**... զուգաձևություններում գրական նորմից դուրս են անածանց ձևերը: Սրանցից **սառչել**-ն ու **ուռչել**-ը կատարյալի հիմքի կազմության տատանումներ ունեն՝ **սառ- // սառեց- // սառչեց-, ուռ- // ուռեց- // ուռչեց-**, և գրական լեզվի զարգացման ներկա փուլում ավելի հաճախ հանդիպում է ցոյական հիմքը, քանի որ միտումը ցոյական ձևերի ընդհանրացումն է ու տարածումը: Նորմայով սահմանվածը առաջին տարբերակն է, իսկ երրորդը հանճնարարելի չէ և հիմքակազմական օրինաչափությունների թերիմացության հետևանք է: Հիշյալ բայերի ձևափոխություններ դեպքում հիմնային եռատարբերակներով կազմված եռաձևություններ ընտրության մեջ կողմնորոշվելու համար վերոհիշյալ սկզբունքով պետք է առաջնորդվել: Եթե մեր լեզվի ոչ վաղ շրջանում **հանգչել** բայի ներկայի **հանգչ- // հանգ-** հիմնատարբերակներից երկրորդը խոսակցական լեզվում որոշ չափով գործածական էր և երբեմն-երբեմն թափանցում էր գրական լեզվի մեջ, ապա մեր օրերում այն հնացած է՝ հատկապես նույն հիմքով կազմված **հանգել** տարիմաստ բայի հետ իմաստային շփոթ չառաջացնելու նպատակով. ԱՀԲԲ-ում **հանգչել** նշանակում է «1. Մարել, վառվելուց՝ այրվելուց դադարել: 2. Հանգստանալ: 3. Մի տեղ կանգ առնել, դադար առնել: 4. Վախճանվել...», ապա **հանգել** նշանակում է «1. Վերջանալ, ավարտվել, վախճանին հասնել: 2. Հանդիպել մի բանի, վերջավորվել մի բանով: 3. Հասնել (եզրակացության, հետևության)»:

Նույնը կարելի է ասել **–ն-** սոսկածանցն ունեցող բայերի մասին. խոսակցական լեզվում, դարձյալ միասնականացման միտման համաձայն, որոշ բայերում **ն-**ն ընկնում է: Մեր օրերում ածանցազրկվելու ճանապարհն են բռնել նաև **լցնել, թողնել** բայերը, որոնց **լցել, թողել** տարբերակները խոսակցական են: Այստեղ արդեն զուգակցվում են նմանակության միտումը և լեզվական չիմացությունը, և արդյունքում զուգաձևություններ են՝ **թողնել // թողել, լցնել // լցել,** որոնց երկրորդ ձևերը գրական չեն: Ներկայի հիմքում հիմնատարբերակներ են դառնում **թողն- // թող-, լցն- // լց-** ձևերը: Ինչ վե-

րաբերում է **բորբոսնել // բորբոսել** զուգաձևությանը, ապա հին ձևը **բորբոսել**-ն է, իսկ մերօրյա բառարաններում **բորբոսնել** տարբերակն է ընտրված. **ն**-ի գործածությունը այստեղ համեմատաբար նոր երևույթ է, և, ըստ Ա. Աբրահամյանի (3, էջ 260), **ն**-ն այստեղ ածանցի արժեք չունի, և բայը չի օգտվում ածանցավոր բայերին վերաբերող քերականական առանձնահատկություններից: Նշանակում է՝ բոլոր դեպքերում գրական է **բորբոսն-** հիմնատարբերակը. այն ունի իր զուգակից առանց **ն**-ի ձևը՝ **բորբոս-**, որը գործածական առումով զիջում է առաջինին: **Բորբոսն- // բորբոս-** հիմնային զուգաձևության գոյությունը **ն** սոսկածանցն ունեցող բայերի նմանակությամբ պետք է բացատրել: **Զարթել**-ը **զարթնել** բայի զուգահեռ չի համարվում, քանի որ գրական հայերենում այս բայը միայն **զարթնել** ձևով է հաստատված. բնականաբար **զարթն- // զարթ-** զուգահեռության մասին խոսք լինել չի կարող: Ավելացնենք, որ այս իմաստով ավելի շատ գործածվում է **արթնանալ** բայը:

Մի քանի բայեր զուգաձևություններ են կազմում **չ-ն**-ի վերածումով: Ածանցի փոխանցման երևույթը որոշակի դրսևորում է ունեցել նաև հին հայերենում: **Թռչել, փախչել, հանգչել** բայերը զուգաձևություններ են կազմել նաև գրաբարում. զուգակիցները եղել են ու լծորդությամբ՝ **հանգչել // հանգնուլ, փախչել // փախնուլ, թռչել // թռնուլ**, իսկ մերօրյա հայերենում նկատելի է **կպչել, թռչել, փախչել, դիպչել** բայերի ածանցափոխությունը՝ **կպչել // կպնել, թռչել // թռնել, փախչել // փախնել, դիպչել // դիպնել**: Դեռևս անցյալ դարի սկզբներին **կպնել // կպչել, դիպնել // դիպչել** զուգաձևություններում երկու տարբերակներն էլ նորմատիվ էին, այսօր գրական են **կպչել, դիպչել** ձևերը, իսկ հակադիր եզրերը բնորոշ են ժողովրդախոսակցական լեզվին. **դիպչել** և **կպչել** բայերի՝ **ն**-ով զուգակիցները արդյունք են նմանակության օրենքի: Անորոշի հիմքում հիմնային տարբերակներ են դառնում **կպչ- // կպն-, թռչ- // թռն-, փախչ- // փախն-, դիպչ- // դիպն-** զուգահեռները, որոնցից երկրորդներն անհանձնարարելի են: **Փլչել // փլվել, թաքչել // թաքնվել** զուգաձևություններում հաղթանակել են **փլվել** և **թաքնվել** ձևերը, բնականաբար անգործածելի և հնացած են **փլչ-** և **թաքչ-** հիմնային տարբերակները, իսկ **բլչել // բլել** զուգաձևությունը գրական լեզվի համար խորթ է, այն բարբառային է և խոսակցա-

կան՝ **բլել** տարբերակի առավելությամբ, բնականաբար ներկայի հիմքի **բլչ-** և **բլ-** հիմնային տարբերակները կենսունակ չեն: Միանգամայն իրավացի է Մ. Ավագյանը. «Բայց բոլոր դեպքերում չէ, որ գնահատվում ու արժեքավորվում են այս նորամուտ ձևերը, որոնք առայժմ չեն կարող գրական լեզվի լիարժեք փոփոխակներ համարվել: Իսկ եթե նշվում է որ այս փոփոխությունները տեղի են ունենում լեզվի մեջ գործող համաբանության օրենքով և միտում են քերականական ձևերի միօրինակացման, ասենք՝ ուռչել, սառչել բայերը նմանվելով գրել, խմել և ուրիշ պարզ բայերի՝ զեղչում են **չ-**ն ու կազմում **նույն**օրինակ ձևը՝ ուռեցի, սառեցի (հմմտ. գրեցի, խմեցի)..., ապա չպետք է մոռանալ, նաև, որ սրանք միաժամանակ հետևանք են լեզվի բայական համակարգի թերիմացության, քանի որ նկատելի ճեղքվածք են ստեղծում ածանցավոր բայերի կուռ համակարգում, այս դեպքում արդեն առաջ բերելով **տար**օրինակում» (34, էջ 50-51):

Չնայած նման տարբերակների առաջացումը կատարվում է համաբանության օրենքով, և միտում են քերականական ձևերի միօրինակացման, բայց և անժխտելի է, որ նման ձևերի գործածությունը արդյունք է նաև լեզվական նորմի թերիմացության: Նման զուգահեռությունների դեպքում (առաջացած **-ն-** կամ **չ-** ածանցների անկմամբ, կամ նրանց՝ միմյանց փոխարինելով) չի կարելի վստահորեն գուշակել տարբերակներից որևէ մեկի զարգացումը, սակայն այսօրվա լեզվական նորմի տեսակետից դրանք շեղումներ են՝ պայմանավորված գլխավորապես բարբառային ազդեցությամբ: Հանդիպող նման ձևերից գրական լեզվի համար հանձնարարելի են միայն –չ-ով ձևերը:

Ինչ վերաբերում է **կանխատեսել** և **նախատեսել** բայերին, ապա սրանք հենց այս ձևերով են ընդգրկված նորմատիվ բառարաններում, իսկ ոչ վաղ անցյալում, ըստ Ա. Աբրահամյանի, –**ն**- սոսկածանց ունեցող բայեր էին՝ **կանխատեսնել, նախատեսնել** ձևերով (3, էջ 382): Վերջին ժամանակներում **նախատեսել, ներդրել, ներառել, չափազանցել, կանխատեսել, ունկնդրել** բայերն ավելի հաճախակի են հանդիպում **նախատեսնել, ներդնել, չափազանցնել, կանխատեսնել, ունկնդնել** ձևերով, և **նախատես- // նախատեսն-, ներդր- // ներդն-, չափազանց- // չափազանցն-, կանխատես- // կանխատեսն-, ունկնդր- // ունկնդն-** ներկայի հիմնային զուգաձևություններում երկրորդ տարբերակները (ձևակները)

խրախուսելի չեն, կանոնական չեն, քանի որ, որպես կանոն, բարդության երկրորդ բաղադրիչները, մանավանդ երբ նրանք **–ն-** սոսկածանց ունեցող բայեր են, պետք է հանդես գան այդ բայերի կատարյալի հիմքով (**տես-, դր-, անց-**) և խոնարհվեն **ե** խոնարհման պարզ բայերի նման, ուստի հանձնարարելի չեն **նախատեսնում եմ, ներդնում եմ** և նման ձևերը: Ճիշտը **նախատեսում եմ, ներդրում եմ** ձևերն են: Սպասելի է, որ նույնը պետք է ասել **գտն-** հիմքով բաղադրվածների համար՝ ընտիր համարելով **գտ-** հիմնատարբերակը, բայց նորմատիվ բառարաններում սրանց **–ն-**ով ձևերն են ճիշտ. ասում ենք՝ **վերագտնում է,** բայց ոչ՝ **վերագտում է:** Ինչ վերաբերում է նույն դիրքում **լց- // լցն-** հիմնային զուգահեռությանը, ապա Ա. և Ք. Սուքիասյանների բառարանում **վերալցել և վերալցնել** տարբերակների ընդգրկումը խոսում է **լցն-**ի աշխուժացման մասին, թեպետև նույնատիպ **ներլցնել**-ը միայն այս ձևով է ընդգրկված: Թվում է՝ նոր միտում է սաղմնավորվում՝ նման բայերի վերջնաբաղադրիչ լինելու դեպքում ներկայի ձևերը ներկայի հիմնային տարբերակով կազմելու միտումը, որը, սակայն, հակասում է լեզվական նորմով սահմանված կանոնին:

Գրական լեզվում ընդունելի չէ նաև **կապվել, խփվել** կրավորական բայերի **-ն-** սոսկածանցով գործածությունը, և **կապվել // կապնվել, խփվել // խփնվել** զուգաձևություններում **կապնվ-** և **խփնվ-** հիմնային տարբերակներով ձևերը խոսակցական են ու մերժելի (սրանք խոսակցական լեզվում իմաստային տարբերակվածություն են ձեռք բերել. **կապնվել** նշանակում է «չափից դուրս մտերմանալ», իսկ խփնվել՝ կա՛մ «ցնդել, գժվել, խելագարվել, ցնորվել», կա՛մ «խելակորույս լինելու աստիճան հիանալ»):

ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԲԱՅԵՐ: Ժամանակակից հայերենի բայական համակարգի գործուն, տարածված միավորներից են պատճառական բայաձևերը: Սրանք իրենց կազմության օրինաչափությամբ կապված են հին հայերենի քերականական ավանդույթների հետ: Մերօրյա լեզվական նորմը բավական հստակ ու կուռ քերականական օրենքներ է սահմանել նաև այս մանրահամակարգում, թեպետև կազմության այս կամ այն չափով նկատելի շեղումները և միջոցների ոչ տեղին համակցման դեպքերը խոսում են լեզվաշինության,

լեզվամշակության ասպարեզում դեռևս անելիքներ ունենալու մասին:

Ժամանակակից հայերենի պատճառական ածանցն է **-ցն-** (հին հայերենում՝ **-ոյց-**. գրաբարում հանդես էր գալիս **ան** բաղադրական ածանցի հետ՝ **ոյց+ան – ուցան** և դրվում էր անցյալ կատարյալի հիմքի վրա: Ժամանակակից հայերենն այս ածանցը նույնությամբ չի ժառանգել. **ոյց**-ից առկա է **ց**-ն, իսկ **ան**-ից՝ **ն**-ն):

Լեզվական նորմը սահմանում է՝ <u>պատճառական բայերը կազմվում են **-ցն-** մասնիկով, ըստ որում՝ **-ել, -ենալ** ձևերը վերածվում են **-եցնել** ձևի, **-ալ, -անալ** կազմությունները՝ **-ացնել** ձևի, իսկ **-նել, -չել** կազմությունները՝ **-ցնել** ձևի:</u>

Ժամանակակից գրական հայերենում պատճառական բայաձևերը կազմվում են 2 եղանակով՝

ա/ ածանցական կամ համադրական

բ/ վերլուծական կամ հարադրական:

Երբեմն էլ՝ այս երկուսի զուգակցությամբ:

Պատճառական գաղափարի արտահայտման համադրական և վերլուծական միջոցները ոչ թե բառակազմական, այլ քերականական միջոցներ են: Տարբեր են նրանց գործադրման սահմանները: Ներգործական բայերից պատճառական ածանց են ստանում սահմանափակ թվով բայեր, պատճառական հարադրությամբ հանդես են գալիս գրեթե բոլորը, չնչին բացառությամբ, և, ընդհակառակն, չեզոք սեռի բայերից ածանցման ենթարկվում են մեծ թվով բայեր, սակայն այստեղ խիստ նվազ գործուն է պատճառական հարադրությունը:

Պատճառականի կազմության շեղումները և քերականական միջոցների ոչ տեղին համակցման դեպքերը, նորմով սահմանված օրենքի ոչ հստակ գիտակցումը ձևաբանական օրենքներից հեռանալու պատճառ են դառնում, իսկ արդյունքում զուգաձևություններ են՝

- զուգաձևություններ՝ պայմանավորված **-ացն-**, **-եցն-** ածանցների բաղադրիչ ձայնավորների փոփոխությամբ կամ անկումով.
- զուգաձևություններ՝ պայմանավորված սկզբնատիպ բայերի զուգահեռ գործածությամբ, ըստ որում դրանք կարող են կազմվել գրական-բարբառախոսակցական կամ գրական-գրական հակադրությամբ.

- զուգաձևություններ՝ պատճառականության արտահայտման երկու միջոցների համատեղմամբ.
- զուգաձևություններ՝ մի եզրում՝ պատճառականի կազմության մի միջոցի, իսկ մյուս եզրում՝ կրկնակի պատճառականության (թե ածանցմամբ, թե՛ **տալ** բայի հարադրությամբ) զուգահեռությամբ.
- զուգաձևություններ վերլուծական պատճառականի կրավորականի և կրկնակի կրավորականի զուգահեռությամբ:

Լեզվական նորմում հստակորեն ընդգծված է՝ եթե բայի ուղիղ ձևը **-ել**-ով կամ **-ենալ**-ով է վերջանում, սրանց պատճառականը կազմելու համար ավելացնում ենք **-եցն-**, իսկ եթե **-ալ**-ով կամ **-անալ**-ով՝ **-ացն-**: Այս օրինաչափությունից շեղվող ձևեր կան, և արդյունքում ձևակազմական զուգաձևություններ են:

Վերոհիշյալ օրենքը հիմք դարձնելով՝ **շողշողացնել // շողշողեցնել, արթնացնել // արթնեցնել** զուգաձևություններում պետք է ճիշտ համարել **-ացն**-ով պատճառականները: Ոչ կանոնական տարբերակներում **ա** ձայնավորը փոխարինվում է **ե**-ով, իսկ **-ացն-** հնչյունախումբը դառնում է **-եցն-**: Ըստ որում, եթե **-ացն**-ի վերածումը **-եցն**-ի սահմանափակ թվով բայերում է հանդիպում, և այս դեպքում զուգաձևությունների թիվը մեծ չէ, ապա **-եցն**-ի վերածումը **-ացն**-ի բավականին տարածված է: Նույն օրենքի հստակ գիտակցությամբ արդի գրական լեզվի համար ներքոբերյալ զուգաձևությունների առաջին տարբերակներն են նախընտրելի՝

աճեցնել // աճացնել
աշխատեցնել // աշխատացնել
հոգնեցնել // հոգնացնել
ծիծաղեցնել // ծիծաղացնել
լսեցնել // լսացնել
տխրեցնել // տխրացնել
իջեցնել // իջացնել
թառամեցնել // թառամացնել
քնեցնել // քնացնել
սովորեցնել // սովորացնել
նմանեցնել // նմանացնել
քրտնեցնել // քրտնացնել
ամաչեցնել // ամաչացնել
շտապեցնել // շտապացնել
խրտնեցնել // խրտնացնել
կռվեցնել // կռվացնել,
ճաքեցնել // ճաքացնել
թթվեցնել // թթվացնել
փայլեցնել // փայլացնել
ուտեցնել // ուտացնել
նստեցնել // նստացնել
պտտեցնել // պտտացնել
կանգնեցնել // կանգնացնել
վազեցնել // վազացնել

վախեցնել // վախացնել **ցավեցնել // ցավացնել**
ծաղկեցնել // ծաղկացնել **սատկեցնել // սատկացնել**
խոսեցնել // խոսացնել **հիշեցնել // հիշացնել**
բռնեցնել // բռնացնել **գժվեցնել // գժվացնել**
զզվեցնել // զզվացնել **խմեցնել // խմացնել** և այլն:

Զուգաձևությունների երկրորդ տարբերակները պետք է սխալ համարել. օրինաչափական ձևեր չեն, և սրանցում խախտված է բառերի ձևաբանական կազմության՝ գրական լեզվին հատուկ օրինաչափությունը: Որեմն՝ **-եցն**-ի փոխարեն **-ացն**- ածանցի գործածությունը, որ սովորական է ժողովրդախոսակցական լեզվում, գրական լեզվի համար մերժելի է:

Բերված փաստերից երևում է, որ շեղումներն արտահայտվում են հիմնականում բաղադրիչ ձայնավորի փոփոխությամբ: Այստեղ մեծ դեր է խաղում քերականական-հնչյունական նմանակությունը. դա տեղի է ունենում կատարյալի հիմքում **աց** բաղադրիչ ունեցող բայերի նմանակությամբ (**խնդացնել, զարմացնել**):

Շեղումների ու տատանումների երևան գալը նաև սկզբնատիպ բայերի զուգաձևությամբ գործածվելով է պատճառաբանվում, որը նորից բնորոշ է ժողովրդախոսակցական լեզվին և այնտեղից էլ թափանցում է գրական լեզվի մեջ: Հմմտ՝ **խոսել-խոսեցնել, ծիծաղել-ծիծաղեցնել, հաչել- հաչեցնել, կաթել –կաթեցնել,** բայց՝ **խոսալ-խոսացնել, ծիծաղալ – ծիծաղացնել, հաչալ-հաչացնել, կաթալ-կաթացնել** և այլն: Գրական լեզվին հատուկ են այս բառերի առաջին ձևերը՝ **ե** լծորդությամբ, ուստի և ընդունելի և օրինաչափական են նրանցից կազմված պատճառականները, իսկ **ա** լծորդություն ունեցող ձևերը հատուկ չեն գրականին, բարբառային են, հետևաբար նրանցից կազմված պատճառականներն էլ գրական լեզվի համար մերժելի են: Որեմն՝ ոչ թե **խոսացնել,** այլ՝ **խոսեցնել**, քանի որ գրական լեզվի համար այն **ե** լծորդության բայ է, նրա կատարյալի հիմքն է՝ **խոսեց-**: Նույն ձևով **ծիծաղեցնել // ծիծաղացնել, հաչեցնել // հաչացնել, կաթեցնել // կաթացնել** զուգաձևություններում առաջիններն են կանոնական, երկրորդները կա՛մ բարբառային են, կա՛մ խոսակցական:

Ժամանակակից գրական լեզվում ունենք պատճառական բայաձևերի որոշ զուգահեռ ձևեր, որոնք կանոնական են, նորմատիվ և առաջանում են նրանց սկզբնատիպ բայերի զուգահեռ ձևերի գործածությունից՝ **ցամաքացնել // ցամաքեցնել, դանդաղացնել // դանդաղեցնել, վստահացնել // վստահեցնել, նվազացնել // նվազեցնել, սպիտակացնել // սպիտակեցնել, նիհարացնել // նիհարեցնել, դեղնացնել // դեղնեցնել, դալարացնել // դալարեցնել, ծանծաղացնել // ծանծաղեցնել, կարմրացնել // կարմրեցնել, պարզացնել // պարզեցնել:** Այս զույգերը տարբեր բայերի պատճառական կազմություններ են: Սրանց սկզբնատիպ բայերն էլ զուգահեռ գործածություն ունեն՝ ածանցավոր (**ա** լծորդությամբ) և պարզ (**ե** լծորդությամբ)՝ **ցամաքանալ // ցամաքել, դանդաղանալ // դանդաղել, վստահանալ // վստահել, նվազանալ // նվազել, սպիտականալ // սպիտակել, նիհարանալ // նիհարել** և այլն (նման զուգաձևությունների մասին արդեն խոսվել է): Նշված բայերի պատճառական զուգահեռ ձևերի տեսակարար կշիռն ըստ գործածության որոշվում է նրանց սկզբնատիպ ձևերի գործածությամբ: Օրինակ երբ պարզում ենք, որ մեր արդի գրական լեզվում **դանդաղեցնել** ձևն ավելի գործածական է, քան **դանդաղացնել**-ը, այդ նշանակում է, որ սկզբնատիպ զուգահեռ ձևերից ավելի գործածական է **դանդաղել** ձևը: Այսպես և **ցամաքացնել // ցամաքեցնել** զուգաձևությունում **ցամաքեցնել**-ը գերակշռում է, հետևաբար **ցամաքել**-ը գերակշռում է **ցամաքանալ**-ին: Կամ էլ համեմատությունը սկզբնատիպ ձևերից ենք կատարում. քանի որ **նիհարանալ // նիհարել** զուգաձևության մեջ **նիհարանալ**-ը քիչ գործածական է, հետևաբար նրանից կազմված պատճառականն էլ քիչ գործածական կլինի: Իհարկե, չի կարելի անտեսել նաև այն հանգամանքը, որ այդ դեպքում կարող են լինել նաև քերականական իմաստի որոշ տարբերություններ, ինչպես օրինակ՝ **վստահել** սկզբնատիպ բայը գործածվում է նաև ներգործական նշանակությամբ, իսկ **վստահանալ**-ը՝ միայն չեզոք, հետևաբար սրանցից կազմված պատճառականներն էլ կունենան իմաստային համապատասխան տարբերություններ: Վերոբերյալ զուգաձևություններում տարբերակները կանոնական են և նորմատիվ:

Այսպիսով՝ այն բայերը, որոնց պատճառականը կազմելիս ունենք զուգաձևություններ՝ պայմանավորված սկզբնատիպ բայերի կանոնական զուգաձևությամբ, արդի հայերենում համարվում են կանոնական համազոր տարբերակներ:

Երբեմն պատահում է, որ կրկնալծորդ բայի լծորդության մեկ ձևը գործածությունից դուրս է գալիս, սակայն նրանից կազմված պատճառական ձևը շարունակում է գործածվել և գործածության մեջ մնացած սկզբնատիպ համապատասխան տարբերակի հանդեպ ներկայանում է իբրև շեղվող ձև: Այս տեսակետից շատ բնորոշ է **արածացնել** բայի գործածությունը: Այսօր ունենք **արածել** բայը ե լծորդությամբ. սրանից կազմված **արածեցնել** օրինաչափական ձևի հետ գործածվում է նաև հիշյալ **արածացնել** ձևը: Վերջինս չի կազմվում **արածել** բայից, այլ ժառանգություն է անցյալից: Մի ժամանակ **արածել** բային զուգահեռ գործածվել է **արածալ** տարբերակը, որից և օրինաչափորեն կազմվել է **արածացնել** պատճառական ձևը: Այստեղ հետաքրքրականն այն է, որ գրական լեզվի արդի շրջանում պատճառական այս ձևը պահպանվել է, իսկ սկզբնատիպ բայը գործածությունից դուրս է ընկել: Լեզվական նորմի սահմաններից դուրս է նաև **արածացնել** տարբերակը:

Իջնել բայի պատճառականը ըստ կանոնի պետք է լիներ **իջցնել**, բայց բարեհնչության պահանջով գրական է համարվում **եցն**-ով տարբերակը **իջեցնել**, իսկ ինչո՞ւ՝ դժվար է բացատրել. բացառված չէ բաղաձայնական կուտակումից խուսափելու հավանականությունը (ջ+ց): Ուրեմն՝ **իջեցնել** // **իջցնել** զուգաձևության մեջ համակարգայինը երկրորդ տարբերակն է, իսկ նորմով ընդունվածը՝ առաջինը:

Պատճառկան ածանցման մեջ յուրահատկություն ունի նաև **լալ** բայը՝ **լացացնել** ձևով: Ըստ կանոնի՝ սա պետք է լիներ **լացնել** /**լացցնել**/: Այստեղ աֆրիկատների դժվար արտասանության խնդիրը լուծվում է համապատասխան ձայնավորների հավելումով՝ այլ բայերի նմանակությամբ: Արարատյան բարբառի առանձին խոսվածքներում հանդիպում է այս բայի **լացցնել** ձևը, որը, սակայն, գրական օրինականացում չունի, թեև ըստ կանոնի ճիշտ է: Իսկ ինչու՞ օրինաչափական ձևը նորմատիվ չէ, նորից պայմանականությամբ է հիմնավորվում:

Կերցնել // ուտացնել // ուտեցնել եռաձևության մեջ ձևաբանական նորմով սահմանվածը (ճիշտը) **կերցնել**-ն է: **Ուտել** բայի պատճառականի իմաստի արտահայտման համար ժամանակակից հայերենն ունի երկու ձև՝ **կերցնել** և **ուտեցնել**: Օրինաչափական է առաջին ձևը, քանի որ թեև **ուտել** բայը անկանոն է, սակայն պատճառականի կազմության մեջ **կերցնել** ձևով հանդես է բերում կանոնավորություն այն իմաստով, որ այս դեպքում պահպանում է պատճառական ածանցման ընդհանուր կանոնը՝ ածանցն ընդունում է անցյալ կատարյալի հիմքի վրա՝ **ուտել –կեր-կերցնել**: Պարզ է, որ **ուտեցնել** ձևը յուրահատուկ կազմություն է և պատճառական ածանցման ընդհանուր կանոնից դուրս է գալիս, քանի որ բայն անցյալ կատարյալի հիմքում **ուտեց** ձևը չունի: Նշանակում է՝ հիշյալ ձևը բոլորովին այլ երևույթի արդյունք է. բայն այս դեպքում ձգտել է կանոնավորության, սակայն դա դարձել է յուրահատուկ անկանոնություն: Այստեղ բայարմատի վրա (համընկնում է անորոշ դերբայի հիմքի հետ) ավելացել է պատճառական **–ցն-** ածանցը **ե** ձայնավորի հետ՝ **ե** լծորդության բայերի արդեն կազմված ամբողջական պատճառական ձևերի նմանակության հիման վրա: Այս դեպքում դեր է կատարել ոչ թե նշված տիպի բայերի պատճառականի կազմության հիմունքը, այլ արդեն կազմված ձևերի արտաքին կողմը (**խմեցնել, ուտեցնել**): Նշեցինք, որ օրինաչափական է **կերցնել** ձևը, սակայն չի կարելի անտեսել նաև **ուտեցնել** ձևի գործածությունը, բայց բոլորովին մերժելի է **ուտացնել** ձևը, որ երբեմն հանդիպում է խոսակցական լեզվում և այնտեղից էլ թափանցում գրական լեզվի մեջ:

Ժամանակակից գրական հայերենում հաստատված կանոն է՝ <u>կատարյալի պարզ հիմք ունեցող բայերում ավելանում է պատճառականի –ցն- զուգահչո.</u> **սառչել, ուռչել, հալչել** բայերից կազմված **սառցնել, ուռցնել, հալցնել** պատճառական բայերի կողքին **սառեցնել, ուռեցնել** (սա համեմատաբար քիչ կիրառելի է), **հալեցնել** ձևերի առկայությունը պայմանավորված է խոսակցական լեզվում հանդիպող **սառել, ուռել, հալել** ձևերի տարածմամբ, որոնցից էլ օրինաչափորեն կազմվում են վերը հիշատակվածները: Ուրեմն՝ **սառցնել // սառեցնել, ուռցնել // ուռեցնել, հալցնել // հալեցնել** զուգաձևություններում առաջին տարբերակներն են գրական, նորմով սահմանված:

Լեզվական նորմով սահմանված կանոն է նաև բաղադրյալ-զոյական հիմք ունեցող բայերի պատճառականը կազմելիս **–ցն-** ածանցը զուգակցվում է **ա** և **ե** ձայնավորների հետ. այս դեպքում այդ ձայնավորների սղումով կազմված պատճառականները օրինաչափական չեն ժամանակակից գրական հայերենի համար. դրանք ձևակազմական շեղումներ են ձևաբանական նորմից: Մի շարք բայերում, հատկապես երիտասարդության շրջանում, ոչ թե **ե**-ն փոխարինվում է **ա**-ով, այլ ընդհանրապես դրանք ընկնում են՝ ծնունդ տալով երկձևությունների: **Ա** և **ե** ձայնավորների սղումը **–ցն-** ածանցից առաջ ժամանակակից գրական լեզվի համար օրինաչափական չէ՝ ինչպես՝ **խաղցնել, խմցնել, վախցնել, վազցնել, քնցնել** և այլն: Հասարակաբանություն է նաև նույն **-եցն-** ածանցով կազմված բայերում **ե**-ի փոխարեն **ը** հնչեցնելը (վերջինս կարող է արտասանվել նաև ոչ սղված ձայնավորի տեղում). **վախեցնել // վախացնել // վախ(ը)ցնել // վախց(ը)նել, զզվեցնել // զզվացնել // զզվ(ը)ցնել, վազեցնել // վազցնել // վազ(ը)ցնել, խմեցնել // խմացնել // խմց(ը)նել, խաղացնել // խաղցնել // խաղց(ը)նել, քնեցնել // քնացնել // քնցնել, սառցնել // սառացնել // սառեցնել // սառ(ը)ցնել, տաքացնել // տաքցնել, ավելացնել // ավելցնել, եռացնել // եռցնել, մրմռացնել // մրմռցնել, խոսեցնել // խոսացնել // խոսց(ը)նել // խոս(ը/ց(ը)նել**... և նման բազմաձևությունները կազմվել են գրականի և խոսակցականի, բարբառայինի, հասարակաբանության հակադրությամբ. գրական են և ձևաբանական նորմով սահմանված առաջին տարբերակները, մնացածները պատճառականի կազմության սխալ ձևեր են, կանոնական չեն, բնորոշ են ժողովրդախոսակցական լեզվին, ուստիև գրական լեզվի համար՝ խորթ և մերժելի: Նման ձևերը գրական լեզվի մեջ են թափանցում ստեղծագործական լեզվի միջոցով: Միայն **խմեցնել // խմցնել** զուգաձևության մեջ ժողովրդախոսակցական **խմցնել**-ը տարածվածության պատճառով առավել ակտիվացել է:

Պատճառականության քերականական իմաստի դրսևորման համար ածանցումը միակ միջոցը չէ. ժամանակակից գրական հայերենում շատ տարածված և գործուն է նաև արտահայտման վերլուծական միջոցը: Ածանցման կամ վերլուծական (հարադրական) միջոցի ընտրությունը կախված է մի քանի հանգամանքներից՝ համա-

պատասխան նշանակության արտահայտումը, տվյալ բայի կազմության լեզվական սովորույթը և ոճական նկատառումները: Պատճառական հարադրության դեպքում համապատասխան բայի անորոշ դերբային հարադրվում է **տալ** բայը, որը համանիշ է **-ցն-** ածանցին, սակայն տարբերվում է նրանից կիրառության ծավալով, գործածության ոլորտով. այն պատճառականության իմաստն ավելի է ընդգծում: Այսպիսի հարադրությունների մեջ **տալ** բայը սովորաբար սպասարկու դեր ունի. զրկվելով իր բառական հիմնական նշանակությունից՝ հանդես է բերում գերազանցապես քերականական նշանակություն: Առաջին հերթին **տալ** բայը, հարադրվելով բային, իր վրա է վերցնում պատճառական ածանցի քերականական դերը: Ածանցման համեմատությամբ այստեղ հակառակ պատկերն է ներկայանում. պատճառականության իմաստի արտահայտման համար եթե մեծ մասամբ ածանցվում են չեզոք սկզբնատիպ բայեր և ավելի պակաս՝ ներգործական, ապա վերլուծական կազմությամբ սպասարկու **տալ** բայի զուգակցությամբ հանդես են գալիս ավելի ներգործական սկզբնատիպ բայերը, և սակավ՝ չեզոքները: «... Երբ ըստ լեզվական սովորույթի ու քերականական-իմաստային այլևայլ հանգամանքների այն մեկ միջոցով չի արտահայտվում, գործադրվում է մյուս միջոցը. մեկով լրացվում է մյուսի պակասը: Եթե, ասենք, **բերել, գրել, նկարել, աղալ, որսալ** և այլն ընդունված չեն բերեցնել, գրեցնել, նկարեցնել, աղացնել, որսացնել ածանցված ձևերով, ապա երբ պետք է լինում արտահայտել սրանց պատճառական-միջնորդական իմաստը, գործածվում են վերլուծական միջոցով՝ **տալ** բայի զուգակցությամբ՝ **բերել տալ, գրել տալ, նկարել տալ, աղալ տալ, որսալ տալ** և այլն: Եվ, ընդհակառակն, եթե, ասենք, **առողջանալ, հիվանդանալ, մեծանալ, աճել, ծլել** և այլն ընդունված չեն պատճառական հարադրությամբ՝ **առողջանալ տալ, հիվանդանալ տալ, մեծանալ տալ, աճել տալ, ծլել տալ** և այլն, ապա այս դեպքում նրանք գործածվում են պատճառական ածանցումով՝ **առողջացնել, հիվանդացնել, մեծացնել, աճեցնել, ծլեցնել** և այլն: Սրանք թեև իմաստային նուրբ տարբերություն էլ ունեն, սակայն հիմնական ուղին այսօրինակ փոխարինումն է, ուրիշ ելք չկա», - գրում է Ա. Աբրահամյանը (3, էջ 588-589):

Բացառված չէ, որ շատ բայեր հավասարապես երկու ձևերով էլ պատճառականության իմաստ են արտահայտում, այսինքն՝ որոշ բայեր, հիմնականում ասացական, իմացական, զգացական իմաստ արտահայտող, պատճառական են դառնում և՛ ածանցմամբ, և՛ **տալ** բայի հարադրությամբ: Ուրեմն՝ **հիշեցնել // հիշել տալ, զգացնել // զգալ տալ, խմեցնել // խմել տալ, կարդացնել // կարդալ տալ, նստեցնել // նստել տալ, լսեցնել // լսել տալ** և նման զուգաձևություններում տարբերակները կանոնական են, ազատ՝ կազմված համադրական և հարադրական հակադրությամբ, պատճառականության իմաստի ընդգծված տարբերությամբ:

«Սակայն պետք է նշել, որ եթե բայը ընդունակ է ածանցմամբ պատճառական սեռ ստեղծել, ապա ավելի տարածված և հանձնարարելի է ածանցված ձևը: Դա վերաբերում է հատկապես չեզոք սեռից կազմվող պատճառականներին. այսպես՝ սովորական և ընդունելի են **ուրախացնել, քնեցնել, վազեցնել, մեծացնել, ուժեղացնել** և այլն, անսովոր և կիրառելի չեն **ուրախանալ տալ, քնել տալ, վազել տալ, մեծանալ տալ, ուժեղանալ տալ** և այլն»,- նշված է «Ժամանակակից հայոց լեզու» աշխատության մեջ (9, էջ 303):

Այսինքն՝ **ուրախացնել // ուրախանալ տալ, քնեցնել // քնել տալ, վազեցնել // վազել տալ, մեծացնել // մեծանալ տալ** զուգաձևություններում հանձնարարելի են ածանցված ձևերը: Ինչ վերաբերում է ներգործական բայերին, ապա մի մասը կարող է պատճառական դառնալ թե՛ ածանցմամբ, թե՛ հարադրությամբ, ըստ որում երկու ձևերն էլ հավասարապես գործածվում են և ընդունելի են: **Խմեցնել // խմել տալ, հիշեցնել // հիշել տալ** զուգաձևությունները կանոնավոր են, ազատ, տարբերակները՝ համազոր, և նրանցից որևէ մեկի ընտրությունը իմաստային նշանակության նրբիմաստային տարբերակմամբ պետք է կատարվի, տվյալ բայի պատճառական ձևի կազմության լեզվական սովորույթով հիմնավորվի, ոճականորեն արդարացված լինի:

Նշեցինք, որ պատճառականության իմաստի արտահայտման համար, ըստ լեզվական սովորույթի, մեկ միջոցի բացակայության դեպքում գործադրվում է մյուս միջոցը, արտահայտման մի ձևը լրացնում է մյուսի պակասը: Սա ընդհանուր օրինաչափություն է, սակայն քարացած ու սահմանափակ չէ: Պատճառականության նշա-

նակության դրսևորման գործում ուշագրավ են նաև այն փաստերը, երբ **տալ** բայի հարադրությամբ հանդես են գալիս պատճառական ածանցում ունեցող բայերը, այսինքն՝ բայական համակարգում բացառված չէ նաև այնպիսի պատճառականների գոյությունը, որոնց պատճառականության քերականական իմաստն արտահայտվում է քերականական նշված երկու միջոցների համատեղությամբ՝ ածանցմամբ և հարադրմամբ, ինչպես օրինակ՝ **վազեցնել տալ, երգեցնել տալ, մոռացնել տալ** և այլն. սրանք պայմանականորեն կոչվում են կրկնակի պատճառականներ: **Հիշեցնել // հիշեցնել տալ, խմեցնել // խմեցնել տալ, զգացնել // զգացնել տալ, կարդացնել // կարդացնել տալ, մոռացնել // մոռացնել տալ, նստեցնել // նստեցնել տալ** և նման տիպի զուգաձևություններում գրական են, կանոնական առաջինները: Երկրորդները՝ ոչ կանոնականները, սակայն, լայն տարածում չունեն, և պատճառականի նմանատիպ կազմությունը ընդհանուր օրինաչափության չի վերածվում: Անհրաժեշտ է նկատել նաև, որ այսպիսի կազմությունները միմյանց համեմատությամբ նուրբ տարբերություն ունեն, որն ընդհանրապես կապվում է արտահայտման միջոցների բնորոշ իմաստների հետ: Լեզվաբանների մի խումբ այն կարծիքին է, որ ոչ կանոնական և սխալ են **տալ** բայով հարադրված պատճառական ձևերը. պատճառականության արտահայտման երկու միջոցների համատեղումը սխալ է և ավելորդություն: Ոխստի և **խմեցնել // խմել տալ // խմեցնել տալ, սպասեցնել // սպասել տալ // սպասեցնել տալ** և նման եռաձևություններում սխալ են երրորդները՝ կրկնակի պատճառական իմաստ արտահայտողները: Այսօր դասագրքերից մեկում նշվում է պատճառականի կազմության երկու ձևերի համատեղ գործածության երևույթը և ճիշտ կամ սխալ լինելու փաստը չի արձանագրվում. «Կան բայեր, որոնք պատճառական են դառնում երկու ձևով էլ. նստել-նստեցնել-նստեցնել տալ» (61, էջ 96):

Պատճառականության նշանակության դրսևորման միջոցների (ածանցում, հարադրություն) համատեղմամբ առաջացած կրկնակի պատճառական բայաձևերը հաճախադեպ են նաև գրավոր խոսքում: Նկատվում է, որ ժամանակակից հայերենում չեզոք սկզբնատիպ ունեցող պատճառական բայաձևերով կազմված այսպիսի հարադրություններն ավելի շատ են հանդիպում, քան ներգործական

սկզբնատիպ ունեցողներից կազմվածները: Դա բացատրվում է այն բանով, որ պատճառականության իմաստը ներգործական սկզբնատիպ ունեցող ածանցված ձևերի մեջ ավելի ուժեղ է, և գրեթե իմաստային տարբերակում չկա պատճառական ձևի և կրկնակի պատճառականի միջև, զգացվում է միայն պատճառականության իմաստի որոշ սաստկացում, իսկ չեզոք սկզբնատիպ ունեցողների մեջ պատճառականության իմաստն ավելի թույլ է, ուստի անհրաժեշտ է լինում հարադրությամբ ցայտուն դարձնել ու ընդգծել չեզոք սկզբնատիպ ունեցող ածանցված ձևերի պատճառական քերականական նշանակությունը. պատճառականության իմաստը սաստկանում է: Եթե **մոռացնել** նշանակում է պատճառ դառնալ, որ մեկը մի բան մոռանա, ապա **մոռացնել տալ** պիտի նշանակի այդ բանը կատարել մի այլ առարկայի միջոցով, պատճառ դառնալ, այնպես անել, որ մի առարկա մի ուրիշին մի բան մոռանալ տա: Առաջին դեպքում արտահայտվում է երեք առարկների (ենթակայի և 2 խնդիրների) քերականական հարաբերությունը: Ուրեմն՝ **հիշեցնել // հիշել տալ // հիշեցնել տալ, զգացնել // զգալ տալ // զգացնել տալ** և նման եռաձևություններում երրորդները ավելորդ են, քանի որ հավասարարժեք են առաջինին կամ երկրորդին: Ըստ Ա. Աբրահամյանի՝ առանց քերականական համապատասխան իմաստների դրսևորման պահանջի ածանցման և հարադրման միջոցների համակցումն ավելորդ է: Նման դեպքերում ավելի լավ կլինի չհամադրել այդ երկու միջոցները, այլ գործածել կա՛մ պատճառական ածանցումը, կա՛մ հարադրությունը՝ ըստ լեզվական սովորույթի (տես՝ 3, էջ 600-601):

Մերօրյա հայերենում անցյալ լեզվավիճակի համեմատությամբ պատճառականի կազմության մատնանշված շեղումները համեմատաբար նվազել են, նկատվածների և արձանագրվածների մեծ մասն էլ առավելապես գրական լեզվի խոսակցական տարբերակին է բնորոշ: Գրական հայերենը պատճառականության քերականական նշանակության և նրա քերականական արտահայտման, պատճառական բայաձևերի կազմության օրենքների գործադրման խնդրում զգալի մշակվածություն է հանդես բերում. լեզվական նորմով սահմանված օրենքներից շեղվող կազմությունները, պատճառականության նշանակության անհարկի գործածության դեպքերը նվազել են. այժմ բայակազմության համակարգում կուռ օրինաչափությամբ

ձևավորված քերականական օրենք է սահմանված պատճառականության իմաստի արտահայտման համար, և անկասկած է՝ նրանից կատարվող շեղումն արդեն աններելի է:

Դեռևս նկատվող անկանոնությունները, ձևաբանական-բայական նորմով սահմանված օրենքներից շեղվող կազմությունները, արտահայտման միջոցների ոչ տեղին համակցման դեպքերը, անհարկի և անտեղի գործածությունները, զուգաձևությունների, բազմաձևությունների առկայությունը լեզվի նորմավորման հարցում լուրջ խնդիրներ են ստեղծում. լեզվաշինությունն այս ասպարեզում ևս անելիքներ ունի...

Այսօրվա հայերենը պատճառական բայերի կազմության մանրահամակարգում անկանոնությունները վերացնելու, նորմով սահմանված օրենքներից շեղվող կազմություններից հրաժարվելու, լեզվական նորմը առանցքային դարձնելու միտում ունի...

ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ԲԱՅԵՐ: Այս կամ այն բայի **վ**-ով կամ առանց **վ**-ի գործածությունը կախված է բայերի թե՛ քերականական, թե՛ բառագիտական առանձնահատկություններից:

Եթե ժամանակակից հայերենում արդեն **վ** ածանցով ձևավորված բառեր են **նմանվել**, **պապանձվել** և այլ բայեր, ու գրական նորմի տեսակետից հնացած են **պապանձել**, **նմանել** ձևերը, ապա կան մի շարք բայեր, որոնք **վ** ածանցն ընդհանրապես չեն ընդունում (կամ էլ ընդունում են որոշակի դեպքերում): Նման բայերի ածանցավոր տարբերակների գործածությունը շեղում է լեզվական նորմից և դիտվում է իբրև բարբառայնություն կամ լեզվական աղավաղում: Սխալ են և, ըստ Լ. Հախվերդյանի, «շարունակ մեր լսողությունն են վիրավորում» **քծնվել**, **տառապվել**, **վիճվել**, **քայլվել**, **զուգադիպվել**, **վրիպվել** և նման ձևերը: Հաճախ դժվարանում ենք կողմնորոշվել՝ **շատ խնդրե՞ց**, թե՞ **խնդրվեց**, **ամուր բռնե՞ց**, թե՞ **բռնվեց**, **փորձե՞ց ասել**, թե՞ **փորձվեց ասել**, **անախորժություններ** (ինձ) **սպասու՞մ են**, թե՞ **սպասվում**, **խաչակնքեցի՞**, թե՞ **խաչակնքվեցի**, **հարաբերու՞մ է** , թե՞ **հարաբերվում**, **բռնեցե՞ք**, թե՞ **բռնվեցե՛ք**, **վիճու՞մ է** (ընկերոջ հետ), թե՞ **վիճվում**, (սխալը) **վրիպու՞մ է**, թե՞ **վրիպվում**... **Հանդիպվել** ձևը ևս սխալ կազմություն է. **հանդիպել**-ը չեզոք սեռի բայ է, իսկ չեզոք սեռի բայերից, որպես կանոն, կրավորա-

կան չի կազմվում: Հապա «նորաստեղծ» **զանգվենք**-ը: Արդեն կարծես սովորական է դարձել **զանգել**-ի՝ «**զանգահարել**» իմաստով գործածությունը, սակայն անսովոր է այդ իմաստով նրա կրավորականացվելը՝ փոխադարձ գործողության գաղափար արտահայտելու նկատառումով. նման գործածությունը այսօր շատ սովորական է, անգամ իմաստային պատճառաբանվածություն ունի: **Հարաբերվել** ձև հայերենում չկա: Կա **հարաբերել**... «**Հարաբերվել**-ի նման՝ հայերենին անհարիր ձևեր են՝ տուժվել, վիճվել, խնդրվել, կքվել, վնասվել, պապակվել, խաչակնքվել: Պետք է **տուժել, վիճել, խնդրել, կքել, վնասել, պապակել, խաչակնքել** ասել»,- շարունակում է Պ. Բեդիրյանը (41, էջ 95): Նման անորոշության պատճառը տարածվածությունն է, նաև՝ գեղարվեստական գրականության մեջ լայնածավալ գործածությունը: Նույնքան անսովոր է **ցվրվել** բայի կրկնակի **վ** ունենալը՝ «կրկնավեվությունը»: Իհարկե, կարելի է բացատրել նման տարբերակների գոյությունը (երևի **պարապվել**-ը **զբաղվել**-ի նմանակությամբ է կազմվել, **տառապել**-ը՝ **տանջվել**-ի): **Տուժվել** բայի համար Ս. Աբրահամյանը նշում է, որ այն կրավորական ձև չունի, քանի որ չեզոք սեռի բայ է: «**Տուժվել** ձևի կազմմանը, ըստ երևույթին, նպաստել է այն հանգամանքը, որ **տուժել**-ի հետ հաճախ է գործածվում բացառականով խնդիր, վերջինս ընկալվում է որպես ներգործող խնդիր, և այս հանգամանքն էլ հիմք է տվել խնդրառու բառը դարձնել կրավորական (այն լեզվազգացողությամբ, որ ներգործող խնդիրը սովորաբար կրավորական սեռի բայերի հետ է դրվում): Սակայն բնավ պարտադիր չէ, որ ներգործող խնդիրը գործածվի կրավորական բայաձևի հետ, այն կարող է գործածվել նաև չեզոք սեռի բայերի հետ: Հմմտ՝ Նա վախեցել է գայլից» (6, էջ 33): Նշված երևույթները լեզվական մակարդակի սխալներ են, քանի որ այդ բառաձևերը սխալ են առհասարակ կազմության և իմաստի տեսակետից: Լեզվական նորմը հստակ սահմանում է, որ <u>գրական հայերենի համար օրինաչափական չէ չեզոք սեռի բայերից կրավորական կազմելը</u>: Ուստի և **քծնել // քծնվել, խանդել // խանդվել, նախանձել // նախանձվել, տուժել // տուժվել, հարաբերել // հարաբերվել, տառապել // տառապվել, վիճել // վիճվել, կքել // կքվել, պապակել // պապակվել, պարապել // պարապվել, զուգադիպել // զուգադիպվել, սայթաքել // սայթաքվել, խաչակնքել // խա-**

չակնքվել, զանգել // զանգվել /զանգահարելու իմաստով/, **քայլել // քայլվել**... զուգաձևություններում երկրորդները գրական հայերենին անհարիր են, հանդիպում են ժողովրդախոսակցական լեզվում, և անհրաժեշտ է առավել զգոն լինել՝ նման սխալներ չանելու համար, քանզի «դարերի խորքից եկող, մեծ ավանդույթներ ունեցող ու զարգացած լեզվի համար վիրավորական են այսպիսի աղավաղումները»:

Ինչ վերաբերում է **սպասել // սպասվել, վնասել // վնասվել, սկսել // սկսվել, շարունակել // շարունակվել, բռնկել // բռնկվել, համաձայնել // համաձայնվել, հանդարտել // հանդարտվել, հակառակել // հակառակվել, մոլորել // մոլորվել, մռայլել // մռայլվել, նմանել // նմանվել, տրաքել // տրաքվել** զուգաձևություններին, ապա այստեղ լեզվազգացողությունը մեծ դեր ունի... Գրական լեզուն երբեմն գերադասում է **վ**-ով, իսկ երբեմն էլ՝ առանց **վ**-ի ձևերը: Առանձին դեպքերում դրանց միջև իմաստային տարբերություններ են նկատվում: Օրինակ՝ ըստ անձի և իրի գործողության՝ ժամանակակից գրական հայերենում արդեն որոշակիորեն սահմանազատված բառեր են **վերաբերել**-ը և **վերաբերվել**-ը: Ոխստի դրանք չպետք է խառնել և ճշտորեն օգտագործել խոսքի մեջ: **Վերաբերել // վերաբերվել** զուգաձևերի հարցում նկատվող սխալներն առավելապես խոսքային մակարդակի սխալներ են: Սրանք այն սխալներից են, երբ տվյալ բառաձևը առհասարակ սխալ չէ, այն կա լեզվի մեջ, բայց տվյալ դեպքում գործածվում է սխալ կերպով՝ մի այլ բառաձևի փոխարեն: Հաճախ են շփոթում այս բառերի գործածության դեպքերը: Ժամանակակից հայերենում սրանք իմաստային և կիրառական տարբեր արժեքներ են ձեռք բերել: Ածանցազուրկ ձևը գործածվում է հիմնականում իրի անուն հանդիսացող ենթակայի հետ, իսկ երկրորդը՝ ածանցավոր ձևը, գործածվում է անձ ցույց տվող ենթակայի հետ և ունի վերաբերմունքի դրսևորման իմաստ:

Որոշ բայեր նորմատիվ քերականություններում նշվում են որպես **վ** ածանցով կազմված բայեր, որոնք, իրենց իմաստով պայմանավորված, չունեն սկզբնատիպ ձևեր և չեզոք սեռի բայեր են՝ **բնակվել, գժվել, գժտվել, զբաղվել, զմայլվել, զզվել, լվացվել խաղաղվել, խելագարվել, համարձակվել, հարձակվել, հարմարվել, հաշտվել, սխալվել, վհատվել, օգտվել** և այլն: Սրանցից

մի քանիսը մեր օրերում ստեղծել են իրենց առանց **վ**-ի տարբերակներին, որոնք նորից չեզոք սեռի բայեր են, և արդյունքում զուգաձևություններ են՝ **զմայլվել // զմայլել, գթոտվել // գթոտել, խաղաղվել // խաղաղել, համաձայնվել // համաձայնել, օգտվել // օգտել:** Վերջինս՝ **օգտել**-ը, սևակյան գործածությամբ է «նոր կյանք առել»:

Պատճառական բայերի կրավորականը կազմվում է անցյալ կատարյալի հիմքով՝ **ր—վ** փոխանցումով: **Հեռաց (հեռացր)+վ+ել—հեռացվել**, արդի մեկնաբանությամբ՝ անորոշի հիմքով՝ **ն—վ** փոխարինումով (**հեռացնել- հեռացվել**): Այստեղ գոյանում է զուգահեռություն սկզբնատիպ բայերից կազմված կրավորական ձևերի հետ. հմմտ՝ **հեռանալ – հեռացվել** և **հեռացնել-հեռացվել, մոռանալ- մոռացվել** և **մոռացնել-մոռացվել, հասկանալ- հասկացվել** և **հասկացնել-հասկացվել**. նման նույնաձևություններում քերականական -իմաստային տարբերակում կա: Հ. Աճառյանը գրում է. «Այսպես և կրավորական բայերի կազմությունը «Վ» հնչյունով, որ գրաբարում չկա և նոր է առաջ եկել հին «հերձուած», «հատուած», «զանգուած» և նման բառերի անալոգիայով, հետզհետե ընդհանրանալով, արդեն անցել է պատճառական բայերին և սրանցից էլ առաջ են եկել կրավորական բայեր, այն էլ կրկին ձևով՝ **մտցնվել, հեռացնվել, մտցրվեց, հեռացրվեց.** այլև **մտցվել, հեռացվել, մտցվեց, հեռացվեց.** մի քսան տարի առաջ գործածվում էին ավելի դրանց առաջին ձևերը, իսկ այժմ՝ ավելի երկրորդ ձևերը, որոնք և հավանորեն պիտի իշխեն» (1, էջ 45):

Վ ածանցով զուգահեռ ձևեր ունեն նաև **չ** ածանցն ունեցող մի քանի բառեր, որոնք իմաստով լրիվ համընկնում են, այսպես՝ **թաքչել // թաքնվել, հալչել // հալվել, փլչել // փլվել**, ուր երկու ձևերն էլ հանձնարարելի են, չնայած որ անցյալի հիմքում գերակշռում են **վ**-ով ձևերը՝ **փլվեց, հալվեց,** իսկ **թաքչել** ձևը այսօր ընդհանրապես իր տեղը զիջել է **թաքնվել**-ին և հնացած է: Ժամանակակից հայերենում **չ**-ով և **-վ**-ով ձևերը զուգահեռաբար գործածվում են ներկայից կազմված հիմքերում՝ **փլչում է // փլվում է, հալչում է // հալվում է,** իսկ **թաքչում է // թաքնվում է** զուգաձևության մեջ վերջին ձևը նորմի աստիճանի է բարձրացել: «Այս բայերի մեջ գրական լեզվում սկսվել է ածանցի լիակատար իմաստազրկման մի պրոցես, որի

զարգացումն ի վերջո պիտի հանգեցնի ածանցի վերջնական ձուլմանը արմատի հետ, սակայն դա դեռ չի օրինակացել, այլ, ինչպես ասացինք, սկսվել է միայն» (3, էջ 267): Այս իրողությունը հենց Գ. Ջահուկյանի նշած պարզեցման երևույթն է, իսկ **կառչել** բայն էլ՝ այդ գործընթացի արդյունքը, բայ, որն այսօրվա լեզվամտածողությամբ չ սոսկածանց ունեցող բայ չէ, այլ պարզ բայ: Մի խոսքով՝ չ ածանցի քարացումը որոշ դեպքերում, որոշ դեպքերում էլ փոխանցումներն ու անկումը տարբեր բայերում զուգաձևությունների առաջացման պատճառ են դառնում, զուգաձևություններ, որոնք կամ կանոնական են, կամ ոչ կանոնական՝ գրական լեզվի իրողությունների սահմաններից դուրս:

Վերլուծական եղանակով կազմված պատճառական բայերի կրավորականը կազմելիս **վ** ածանցը հանդես է գալիս օժանդակող բայի՝ **տալ**-ի հիմքում՝ **գրել տալ - գրել տրվել**: Հաճախ խոսակցական լեզվում երկու բաղադրիչներն էլ ստանում են **վ**՝ նախ համաբանության գործոնի ազդեցությամբ, ապա այն տրամաբանությամբ հիմնավորված, որ օրինաչափական ձևերում կրավորականության իմաստը թույլ է, և երկրորդ **վ**-ն ավելանում է կրավորական սեռային նշանակությունն ուժեղացնելու նպատակով: Կրկնակի կրավորականություն արտահայտող այս ձևերը հաճախ թափանցում են գրական լեզվի մեջ: **Գրել տրվել // գրվել տրվել, փոխադրել տրվել // փոխադրվել տրվել** զուգաձևություններում ճիշտ են առաջին եզրերը, իսկ երկրորդները հատուկ են խոսակցական լեզվին:

Մերօրյա հայերենում նկատելի միտում է հարակատար դերբայի **վ**-ով և առանց **վ**-ի զուգահեռ գործածությունը՝ **գրած // գրված** (նամակ), **ուղարկած // ուղարկված** (նամակ) և այլն, որոնց մասին կխոսվի համապատասխան հատվածում:

ԲԱԶՄԱՊԱՏԿԱԿԱՆ ԲԱՅԵՐ: Հայտնի է, որ ժամանակակից հայերենի բայերի մի մասին հատուկ է բազմապատկական կերպը, որը ցուց է տալիս գործողության բազմապատիկ կամ հաճախ կատարումը, մի իմաստ, որ հաճախ զուգակցվում է գործողության սաստկացման իմաստի հետ:

Գրաբարում բայարմատի կրկնությամբ և բազմապատկական բայածանցներով կազմված շատ քիչ բայաձևերի կարելի է հանդիպել:

Բնականաբար հին հայերենում նկատվող այս երևույթը, աստիճանաբար զարգանալով ու ծավալվելով, օրինական ու սովորական է արդի հայերենում: Այս լեզվական իրողությունը հատուկ էր աշխարհաբարին, ուստի և ժամանակակից հայերենում դրանց հաճախակի գործածությունը աշխարհաբարի, ինչպես նաև բարբառների, ազդեցության արդյունքն է: Ժամանակակից հայերենի բազմապատկական-սաստկական կերպածանցներն են՝ **-ոտ, -ատ, -տ-, -կոտ-, -կլտ-, -րտ-, -ռտ-, -շտ-, -տկ-, -շտոր-**, որոնց բազմապատկականության իմաստ է հաղորդում բոլորի համար ընդհանուր **տ** մասնիկը: Մնացած հնչյունները կամ հնչյունախմբերը, ավելանալով հիշյալ մասնիկին, երբեմն նրբերանգային որևէ տարբերություն չեն առաջացնում՝ ստեղծելով նույնանիշ ձևույթներ (հմմտ՝ **-ոտ-, -ատ-, -կոտ-**), երբեմն հաղորդում են գործողության սաստկացման իմաստային երանգ (**-րտ-, -շտ-, -կլտ-, -կռտ-**)՝ ստեղծելով առաջիններին համանիշ ձևույթներ: Հիշյալ համանիշ կերպածանցներից ժամանակակից գրական հայերենում առավելապես տարածված են **–ոտ-**, **-ատ-**, մասամբ՝ **-տ-**ն, իսկ մնացածները կամ սահմանափակվում են մի քանի բառով, կամ ունեն խիստ բարբառային երանգավորում:

Այն, որ հիշյալ կերպածանցները համանիշ են, երևում է այն բանից, որ երբեմն բազմապատկական-սաստկական նույն իմաստն արտահայտելու համար նույն բայերին զուգորդվում է այս ածանցներից մեկը կամ մյուսը՝ ստեղծելով համանիշ բայաձևեր, որոնք կարող են ունենալ միայն գործողության սաստկականության իմաստային նրբերանգային տարբերություն: Օրինակ՝ **կտրատել // կտրտել, ցատկոտել // ցատկտել, թափոտել // թափռտել, կոտրատել // կոտրտել, պատառոտել // պատռտել, խառնշտել // խառնշտորել, ծակոտել // ծակռտել, քանդոտել // քանդռտել, փշրատել // փշրտել, կապոտել // կապռտել, փետրատել // փետրտել, ճանկռտել // ճանկռել:**

Գործողության սաստկացման իմաստ են հաղորդում հատկապես **ռ** և **ր** հնչյուններ պարունակող ածանցները:

Կերպածանցներից մեկը մյուսով փոխարինումը ընդհանուր առմամբ կապված է գործողության կատարման ընթացքի բնութագրման հետ և թույլ կամ ուժեղ արտահայտված կերպիմաստային երանգավորման դրսևորումներից մեկն է: Ածանցման այս բազմա-

ձևությունը առաջացնում է նույնարմատ կամ պարզ, կամ կրկնավոր բայերի զուգահեռ տարբերակներ, որոնք գործածության տեսակետից մեծ մասամբ տեղայնացված են: Ձևերի զուգահեռությունը կամ զուգաձևությունը առավելապես հատուկ է մեր բարբառներին և ժողովրդախոսակցական լեզվին, իսկ արդի գրական արևելահայերենում դա հնարավորին չափ հասցված է նվազագույնի:

Շատ սովորական է **-ոտ-** // **-րտ-** ածանցները մեկը մյուսով փոխարինելը, որով ածանցավոր բայաձևերում կատարվում է բազմապատիկության և սաստկության իմաստների շեշտված տարբերակում: Կրկնավորների մեջ հատկապես տարածված է **-ոտ-//-րտ-** փոխարինումը **/ծակծկոտել // ծակծկորել/**, որն իմաստային-նրբերանգային զանազանություն գրեթե չի առաջացնում: Այսպիսի կազմություններում **-ոտ**-ն և **-րտ**-ը իմաստով իրար ծածկող ածանցներ են:

Ձևաիմաստային դրսևորումներով ավելի հարուստ են երկուսից ավելի ածանցների միջև կատարվող փոխարինումները, միայն թե այս դեպքում մենք գործ ունենք ածանցների բաղադրման երևույթի հետ: Հատկանշական է, որ հայերենում միևնույն բայական բառահիմքը կարող է միանալ առավելագույնը չորս բազմապատկական-սաստկական պարզ և բաղադրյալ տարբեր կերպածանցների հետ, այսինքն՝ բազմաձևությունը սահմանափակվում է չորս փոխարինումով կամ ածանցավոր չորս տարբերակով: Պետք է ասել, որ նման զուգաձևություններում տարբերակները կարելի է փոփոխակներ անվանել

ծակել- // **ծակոտել** // **ծակռտել**

կոխել - // **կոխոտել** // **կոխռտել** // **կոխկոտել** // **կոխկտել**

ծեծել- // **ծեծկել** // **ծեծկռտել** // **ծեծոտել**

խառնել- // **խառնոտել** // **խառնշտորել** // **խառնշտել** // **խառնշտկել**

կոտրել- // **կոտրտել** // **կոտրատել**

// ցատկոտել
ցատկել --
// ցատկտել:

Սրանք իմաստային-նրբերանգային տարբերակներ են:

Ինչպես ասվեց, գործողության բազմապատկական-կերպային իմաստը ժամանակակից հայերենում կարող է արտահայտվել նաև բայարմատի կրկնությամբ: Այս միջոցը ևս հատուկ է բարբառներին և ժողովրդախոսակցական լեզվին, որտեղից էլ մուտք են գործում գրական լեզվի մեջ: Հաճախ միևնույն բայից բազմապատկական կերպի բայ է կերտվում և՛ ածանցմամբ, և՛ արմատի կրկնությամբ, որով և ստեղծվում է բազմապատկական բայերի համանիշային-զուգաձևային շարքեր՝ օրինակ՝

թափոտել // թափռտել // թափթփել
ծախոտել // ծախռտել // ծախծխել
ծակոտել // ծակռտել // ծակծակել
կախոտել // կախռտել // կախկախել
ծամոտել // ծամռտել // ծամծմել
կապոտել // կապռտել // կապկպել
կոխոտել // կոխկռտել // կոխկոխել
կծոտել // կծռտել // կծմծել
ճաքոտել // ճաքռտել // ճաքճքել
ջարդոտել // ջարդրտել // ջարդջարդել:

Երբեմն բազմապատկական-սաստկական կերպային իմաստ արտահայտելու համար միաժամանակ գործածվում են երկու միջոցներն էլ, այսինքն՝ կերպածանցներն ավելանում են կրկնված բայարմատի վրա: Այս դեպքում կրկնված իմաստը առավել ևս ընդգծվում է: Ստեղծվում է միայն ածանցմամբ կամ կրկնությամբ կազմված բազմապատկական կերպի բայերի մեկ զուգահեռ /համանիշ/ ձև ևս: Այսպես՝ **ծռմռել // ծռմռատել, հուհրալ // հուհրատել, փորփրել // փորփրոտել, ծամծմել // ծամծմոտել, վազվզել // վազվզոտել, վախվխել // վախվխորել, թափթփել // թափթփոտել, կապկպել // կապկպորել, խազմզել // խազմզոտել, քաշքշել // քաշքշոտել // քաշքռտել:**

Քանդռտել // քանդրտել, ճանկռտել // ճանկրտել, քաշկռտել // քաշկրտել, ցատկռտել // ցատկրտել, ծեծկռտել // ծեծկրտել զուգաձևությունների եզրերը ուղղագրական-ձևաբանական տարբերակներ են: ՀՀ լեզվի պետական տեսչության թիվ 8/11 հրամանով /1 փետրվարի 2000թ/ լեզվագործածության ասպարեզում միօրինակություն և անաղարտություն ապահովելու նպատակով երկակի գրություն ունեցող բազմապատկական բայերից հանձնարարելի են դառնում **-կռտ-** ածանցով ձևերը՝ **ծեծկռտել, քաշկռտել, ցատկռտել:**

Գ. Դերբայական զուգաձևություններ

Դերբայների կազմության հարցում ժամանակակից հայերենը որոշակի միօրինակության է հասել: Ենթակայական դերբայում կրկնաձև է **լինել** բայը՝ **լինող // եղող.** նախընտրելի է երկրորդը: Կրկնահիմք կազմություն ուներ **ասել** բայը՝ **ասող** և **ասացող.** վերջինս իմաստային օտարացմամբ դադարել է զուգահեռ ձև լինելուց. ավելին՝ այն գոյականացել է:

Երբեմն իմաստի ոչ հստակ գիտակցմամբ զուգահեռաբար գործածվում են համակատար դերբայը և անորոշ դերբայի բացառականը՝ **ուտելիս** և **ուտելուց, քայլելիս** և **քայլելուց:** Թվում է՝ սրանցից առաջիններն ավելի գրական են, քան երկրորդները: Մինչդեռ սրանք իմաստային տարբերություններ ունեն. առաջինները նշանակում են «տվյալ գործողությունը կատարելու ժամանակ», իսկ երկրորդները «տվյալ գործողության պատճառով, հետևանքով»: Սրանց ճիշտ գործածության ուղենիշը եկու ձևերի իմաստների տարբերության հստակ ընկալումն է. «**-ելիս /-ալիս-**ով վերջացող ձևը (դերբայն) առաջին հերթին և համարյա բացառապես՝ զուգահեռ գործողություն և ժամանակ մատնանշելու համար է ստեղծված, իսկ **-ելուց /-ալուց**-ով վերջացողն էլ (անորոշ դերբայի բացառականը) պատճառի իմաստ արտահայտելու համար գրեթե անփոխարինելի է: Այս հստակ տարբերությունը չընկալողներն առաջինների փոխարեն **-ելուց /-ալուց**

ձևերն են սխալմամբ օգտագործում (տեսնելուս, հիվանդանալուս ասողներ էլ կան)...»,- գրում է Պ. Բեդիրյանը (41, էջ 97):

Վերջապես խոսակցական լեզվից գրականության մեջ թափանցած **-են** վերջավորությամբ դերբայը նույնպես ցույց է տալիս զուգահեռ, ընթացիկ գործողություն, իբրև շարունակական վիճակ. էդ. Աղայանն այն անվանում է **մակբայական դերբայ,** ավելի ճիշտ՝ «ձևի դերբայ» (14, էջ 353): Այն հայերենում սահմանափակ գործածություն ունի, կիրառելի է հատկապես գեղարվեստական խոսքում. ժողովրդական-խոսակցական ձև է, և արդի գրական հայերենում նրա փոխարեն անորոշ դերբայի գործիական հոլովն է կիրառելի և օրինաչափ. ուրեմն՝ **վազելով // վազելեն, շորորալով // շորորալեն, թռվռալով // թռվռալեն** և նմանատիպ զուգաձևություններում գրականը, կանոնականը՝ առաջիններն են, իսկ երկրորդները ոչ կանոնական են, ոչ գրական, բարբառային են և հատուկ ժողովրդական-խոսակցական լեզվին:

Դ. Զուգաձևությունները եղանակային ենթահամակարգում

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ: Ոչ վաղ անցյալում, ըստ դպրոցական նորմատիվ քերականությունների, օրինաչափական էր սահմանական եղանակի ինը ժամանակ ունենալը. «Սահմանական եղանակն ունի ինը ժամանակ՝ ներկա, անցյալի անկատար, ապառնի, անցյալի ապառնի, վաղակատար, անցյալի վաղակատար, հարակատար, անցյալի հարակատար և անցյալ կատարյալ»,- գրում է Ա. Ղարիբյանը (75, էջ 206)՝ ավելացնելով, որ **գրել** և նման բայերի հարակատարի ձևերը գործածական չեն, և որ հարակատարի ձևեր ունեն **նստել, կանգնել, պառկել, քնել** և նման բայերը, այլև «վ» ածանց ունեցողները, ինչպես՝ **գրվել, կանչվել, ծեծվել** և այլն: Նույնը նշվում է «Ժամանակակից հայոց լեզվի» 2-րդ հատորում (9, էջ 360) և ավելացվում, որ հարակատար ներկա և հարակատար անցյալ ժամանակաձևեր ժամանակակից հայերենում կարող են ունենալ

հիմնականում կրավորական սեռի բայերը և խիստ սահմանափակ թվով չեզոք սեռի բայեր (**նստել, կանգնել, քնել, հոգնել, պառկել** և այլն):

Բնականաբար ոչ վաղ անցյալի ձևաբանական նորմը պետք է սահմաներ. <u>սահմանական եղանակն ունի ինը ժամանակաձև...</u>

Լեզվի զարգացման արդի փուլում հարակատար դերբայի՝ խոնարհման_հարացույցի մեջ ներառելու կամ չներառելու առումով լեզվական-ձևաբանական նորմը փոփոխվելու շեմին է. լեզուն որոնումների մեջ է...

Ալ. Մարգարյանը գրում է. «Իբրև կախյալ դերբայ, որի իսկությունը միանգամայն անհիմն կերպով մերժում են ոմանք, մասնակցում է բայի եղանակաժամանակային ձևերի կազմությանը և

ա/ օժանդակ բայի հետ բաղադրվելով՝ կազմում սահմանական եղանակի հարակատար (**նստած եմ, ես, է - նստած ենք, եք, են...**) և անցյալի հարակատար (**նստած էի, էիր, էր – նստած էինք, էիք, էին...**) ժամանակները.

բ/ **Լինել** բայի հետ կազմում է երկրորդական բաղադրյալ ժամանակներ, օրինակ՝ **նստած եմ լինում, նստած եմ լինելու, նստած եմ եղել, նստած կլինեմ, նստած կլինենք, պիտի նստած լինեմ, նստած պետք է լինեք** և այլն» (80, էջ 406): Հասկանալի է՝ հեղինակը ընդունում է սահմանական եղանակի ինը ժամանակաձև, չնայած այն կարծիքն է հայտնում, որ հարակատար ժամանակը միաժամանակ նեղացրել է իր գործածության ոլորտները և կիրառվել հիմնականում գործողության հարակայություն ցույց տվող կամ նման հատկանիշով օժտված բայերով: Հայոց լեզվի հետագա զարգացման ընթացքում հարակատար ժամանակը ոչ թե նաև ներգործական կամ ամեն տեսակի չեզոք սեռի, այլ հիմնականում վիճակ, դրություն ցույց տվող չեզոք ու կրավորական սեռի բայերով է շարունակել լայնորեն կիրառվել ժամանակակից հայոց լեզվում՝ **գրված է, կանգնած եմ, քնած է, շղթայված է** և այլն (80, էջ 430-431, նույն տեղում): Մ. Ասատրյանն առաջարկում է. <u>«Այսուամենայնիվ ավելի ճիշտ կլինի «հարակատար դերբայ + եմ - էի» կառուցվածքները հանել, քան թե թողնել բայի խոնարհման հարացույցի մեջ</u>» (33, էջ 243): Իսկ մերօրյա դպրոցական դասագրքերից մեկում սահմանական եղանակի ժամանակների թիվը չի շեշտվում, և հետո «Սահմա-

նափակ կազմության ժամանակային ձևեր» վերնագրի տակ նշվում է. «Բոլոր բայերին առանձնահատուկ կամ համընդհանուր ժամանակային ձևերից բացի, կան սահմանական եղանակի բայածևեր էլ, որոնք առանձնահատուկ են սահմանափակ թվով բայերի միայն: Դրանք հարակատար դերբայով և օժանդակ բայով կազմված ժամանակային ձևերն են» (13, էջ 203): Հայերենի հարյուրավոր բայեր հարակատար ներկայի և հարակատար անցյալի ձևեր չունեն, կամ նման բայերի հարակատար դիմավոր ձևերը գործածական չեն: Միայն տողատակում նշված է, որ **եկած է, տված է** և նման ձևերի գործածությունը հնացած է և կիրառելի է եղել հատկապես նախախորհրդային շրջանի գրողների երկերում: Այսինքն՝ հարակատար դերբայը այդ ժամանակի նորմի համաձայն մասամբ մասնակցում է եղանակային ժամանակաձևերի կազմությանը: Իսկ դասագրքերից մյուսում լեզվական նորմը սահմանում է. «Սահմանական եղանակի յոթ ժամանակային ձևերից վեցը բաղադրյալ են՝ կազմվում են ձևաբայից ու օժանդակ բայից, իսկ մեկը՝ պարզ, որ կազմվում է վերջավորությունները փոխելով» (61, էջ 49): Այսինքն՝ <u>հարակատար դերբայը ժամանակային ձևերի կազմությանը չի մասնակցում:</u> Միայն դերբայների ուսումնասիրության ժամանակ՝ նրանց շարահյուսական կիրառությունները քննարկելիս, նշվում է հարակատար դերբայի՝ խոսքի մեջ բաղադրյալ ստորոգյալի մաս հանդես գալու մասին. «Հարակատար դերբայը խոսքի մեջ հանդես է գալիս որպես բաղադրյալ ստորոգյալ (**եմ** օժանդակ բայի հետ միանալով՝ իբրև հատկանիշ արտահայտող բառ) - Երեխան քնած է» (61, էջ.28):

Ի տարբերություն գրական արևելահայերենի, արևմտահայ գրական լեզվում բոլոր տեսակի բայերով հարակատար և անցյալի հարակատար ժամանակներ են կազմվում՝ **սկսած է, գտած եմ, թափած էր** և այլն: Այս մասին Ռ. Սաքապետոյանը գրում է. «Այս ժամանակային ձևերը արևելահայերենում և արևմտահայերենում ունեն զգալի տարբերություններ... Այլ կերպ ասած՝ արևելահայերենում այս կաղապարը գործում է միայն վիճակ ցույց տվող կրավորական և չեզոք սեռի բայերի դեպքում: Մինչդեռ արևմտահայերենում եղանակային ձևեր բաղադրող վաղակատար և հարակատար դերբայների միջև իմաստային տարբերություն չկա, ուստի հարակատար

+ եմ/էի կաղապարը արևմտահայերենում գործում է անխտիր բոլոր բայերի համար...» (106, էջ 154):

Միանգամայն պարզ է, որ անցյալի լեզվական նորմով հարակատարի ժամանակները սահմանական եղանակի մյուս գլխավոր բաղադրյալ ժամանակների պես լիարժեք ու լիիրավ բայական ժամանակներ են ընդունվել: Հետագայում մի շարք լեզվաբաններ (Ա. Ղարիբյան, Ա. Աբրահամյան, Ալ. Մարգարյան, Պ. Պողոսյան, Գ. Ջահուկյան....) շարունակում են դրանք ինքնուրույն ժամանակաձևեր համարել, իսկ մի քանիսն էլ (Հ. Ասմանգուլյան, Մ. Ասատրյան, Է. Աղայան, Ս. Աբրահամյան, Ֆ. Խլղաթյան) կա՛մ կասկածի տակ են առել, կա՛մ մերժել են՝ դրանք համարելով բաղադրյալ ստորոգյալ: Հասկանալի է, որ այս դեպքում ոչ թե մեկի կամ մյուսի «արդարացման» հարցն է կարևորվում, այլ քերականական նորմի սահմանները ճշտորեն որոշելու խնդիրն է առաջնային դառնում. նման լեզվավիճակի պատճառով ձևաբանական նորմի այս վանդակը բաց է մնում՝ կարոտ հետագա ուսումնասիրության, մեկնաբանման, նաև «ապագայի նպաստավորությանը հանձնված»: Ենթադրելի է, որ նման բաց վանդակ առաջանում է նաև շարահյուսական նորմով սահմանված օրինաչափությունների համակարգում: Այս լեզվաիրողության վերաբերյալ թե՛ ձևաբանական, թե՛ շարահյուսական նորմատիվ կանոններ հաստատելու համար կարելի է դիմել հարցման մեթոդին, անկետաների լրացման միջոցից օգտվել, որը, սակայն, պետք է անցկացվի լեզվաբան-մասնագետների, լեզվագետների ու բանասերների շրջանում և միասնական որոշմամբ, ակտիվ միջամտությամբ ընդունվի կա՛մ առաջին, կա՛մ երկրորդ տեսակետը, և ընտրվածը «պետականորեն» հաստատվի նորմատիվ քերականություններում. ըստ որում բացառված չէ՝ հնարավոր է, որ ժամանակի ընթացքում եղած վիճակային բայերն էլ դադարեն ժամանակային ձևեր կազմելուց, և հակառակը՝ արևմտահայերենի ազդեցությամբ (նմանակությամբ) բոլոր բայերի հարակատարի ժամանակային ձևերը կազմվեն, կամ...

Ժողովրդախոսակցական լեզվում սովորական է անցողական բայերի հարակատար ժամանակների գործածությունը անանցողական իմաստով՝ **գրած է (ա), դրած է (ա), անիծած է (ա)**: Արդյունքում զուգաձևություններ են. գրական հայերենում այսպիսի դեպքե-

րում սովորաբար գործածվում են հարակատարի **վ**-ով ձևերը՝ **գրված է, դրված է, անիծված է** և նման ձևերը:

Սահմանական եղանակի մյուս ձևերի կազմության մեջ ևս զուգաձևությունները շատ են:

Սահմանական եղանակի անկատար ներկայի 3-րդ դեմքում **արժեմ** բայը երկձև է՝ **արժե // արժի**, որը կանոնական համազոր զուգաձևություն է: Նույնատիպ զուգաձևություն է **գիտե // գիտի**-ն: Այս զուգաձևությունների լուծման հարցը սրացել է: Լեզվաբանների մի մասը այն կարծիքին է, որ ճիշտ են ավանդական ձևերը. սրանք, իբրև արևելահայերեն բայի խոնարհման համակարգից տարբեր ներկայի ձևեր, գրաբարից են մնացել. գրական լեզուն ավանդապահ է, և սա պետք է հաշվի առնել: Մյուս մասը առավելությունը տալիս է նոր ձևերին՝ հաշվի առնելով գործածական հաճախականությունը, հատկապես խոսակցական լեզվում, որը բացառությունների նկատմամբ առանձնապես սեր չունի: Այս հարցը, բնականաբար, լեզվական նորմով սահմանված օրինաչափությամբ պետք է լուծվի...

Լեզվական նորմից աչքի ընկնող շեղում է **է** օժանդակ բայի փոխարեն **ա** գործածելը անկատար ներկայի երրորդ դեմքի եզակի թվում: Պատճառներից մեկն էլ այն է, որ **ա**-ն հայերենում ամենահաճախական հնչյունն է, ամենից ավելի լիահունչը: Նման զուգաձևություններում՝ **ասում է // ասում ա, գրում է // գրում ա**..., գրականը **է**-ով տարբերակն է: Այս հարցում ինչ-որ իմաստով երկվություն կա. **ա**-ով ձևը ակնհայտ հասարակաբանական երանգ ունի, իսկ **է**-ով տարբերակը արհեստականության երանգ է հաղորդում խոսքին: Անհերքելի է, որ արևմտյան բարբառներում այդ **է**-ն չի եղել և չկա՝ ի տարբերություն արևմտյան բարբառների և խոսակցականի: **Ա**-ով տարբերակների աշխուժացումը (հատկապես գրական խոսակցական լեզվում) կարելի է բացատրել Մ. Աբեղյանի հետևյալ նկատողությամբ. «Լեզվի տեսակետից, ինչպես տեսանք, կարևոր նշանակություն ունեն լսելիքի զգայություններն ու ըմբռնումները խոսքի հնչյունների վերաբերյալ, ինչպես նաև խոսքի գործարանների մկանային շարժման զգայություններն ու ըմբռնումները, որ ունենում ենք այդ հնչյուններն արտասանելիս, հետևաբար կարևոր նշանակություն ունեն նաև հնչյունների ու խոսքի գործարանի մկանային շարժման պատկերացումներն ու նրանց զուգորդությունը» (1, էջ 18):

Ներկայումս **ա**-ի գործածության շրջանակը գրական գրավոր լեզվի ազդեցությամբ զգալիորեն նեղացել է. սպասելի է, որ **ա**-ն, որքան էլ արտասանական քիչ լարվածություն պահանջի, դուրս կմղվի **է**-ի կողմից: Միայն դյուրահնչությունը բավարար չէ այս կամ այն ձևի հաստատման համար. յուրաքանչյուր միտում լեզվական կանոնի է վերածվում, եթե համապատասխանում է լեզվի զարգացման ներքին օրինաչափություններին, եթե բարոյապես արդարացված է և լեզվակիր հանրության հավանությանն է արժանանում:

Օժանդակ բայի հետ կապված շարահյուսական-ձևաբանական զուգաձևություններ են անվանական ստորոգյալի, նաև հարակատար դերբայի հետ գործածվող օժանդակ բայերի՝ **չի**-ով և **չէ**-ով տարբերակների գործածությունը /**տանը չէ // տանը չի, կանգնած չէ // կանգնած չի** և այլն/: Նորմատիվ քերականություններում սրանցից ոչ մեկը չի մերժվում, չնայած որ առավելությունը տրվում է **չէ**-ով ձևերին:

Մի քանի դեպքերում նկատվում են հիմքափոխական զուգաձևություններ՝ **ուռչում եմ // ուռում եմ, սառչում եմ // սառում եմ: Ուռչել // ուռել, սառչել // սառել** անորոշդերբայական զուգաձևություններում երկրորդները սխալ են: Բնականաբար հիմքակազմության օրինաչափություններին համաձայն՝ կանոնական են **ուռչում եմ, սառչում եմ** անկատարի ձևերը, իսկ **ուռում եմ, սառում եմ** ձևերն ունեն խոսակցական երանգ: Հարկ է նշել, որ **ուռչել, սառչել** բայերի անցյալ կատարյալը պետք է լիներ **ուռա..., սառա...** (հմմտ՝ **փախչել-փախա, թռչել-թռա**), սակայն այս կանոնավոր ձևերը այժմ նույնիսկ բարբառային երանգ են ստացել, որոնց փոխարեն տարածվում են այդ նույն բառերի անցյալ կատարյալի **ուռ, սառ** հիմքերից կազմված **ուռել, սառել** նոր բայաձևերը, որոնցից **ե** լծորդության կանոնավոր պարզ բայերի օրինակով գոյանում են և տարածվում **ուռեցի..., սառեցի, սառեցիր...** կատարյալները (հմմտ՝ **վազեցի, սիրեցի, երգեցի...**). **ուռա // ուռեցի // ուռչեցի..., սառա // սառեցի // սառչեցի..., հանգա // հանգեցի // հանգչեցի...** եռաձևություններում օրինաչափ են առաջինները, երկրորդները նորակազմություններ են, իսկ երրորդները սխալ են՝ ակնհայտ շեղումներ՝ պայմանավորված գլխավորապես լեզվական կանոնի չիմացությամբ և բարբառային ազդեցությամբ: Նույնը կարելի է ասել վաղակատար ներկայի և վաղակատար անց-

յալի ձևերի կազմության մասին. **դիպել եմ (էի) // դիպչել եմ (էի)**, **կպել եմ (էի) // կպչել եմ (էի)**, **թռել եմ (էի) // թռչել եմ (էի)**, **հանգել եմ (էի) // հանգչել եմ (էի)**, **ուռել եմ (էի) // ուռչել եմ (էի)**... զուգաձևություններում երկրորդ եզրերը սխալ են:

Նույն ձևով սահմանական եղանակի անկատար ներկա և անկատար անցյալ ժամանակաձևային՝ **կպչում եմ (էի) // կպնում եմ (էի)**, **թռչում եմ (էի) // թռնում եմ (էի)**, **փախչում եմ (էի) // փախնում եմ (էի)** զուգաձևություններում կանոնական են առաջին ձևերը, երկրորդները՝ **չ-ն**-ով ածանցափոխական տարբերակները, բարբառային են, խոսակցական և անհանձնարարելի: Հետաքրքիր է **համընկավ // համընկեց** զուգաձևության **համընկեց** տարբերակը, որը հեղինակային անհատական կիրառություն է (Ս. Կապուտիկյան):

Գրական նորմը սահմանում է, որ <u>ե խոնարհման պարզ բայերի կատարյալի հիմքը կազմվում է **-եց** բաղադրիչով, որն ավելանում է անկատարի հիմքին, իսկ անցյալ կատարյալում նրանք ստանում են **-ի, -իր, 0** կամ **-եց, -ինք, -իք, -ին**:</u> Այսինքն՝ ըստ լեզվական օրենքի՝ **գրեցի, գրեցիր, գրեց, գրեցինք-գրեցիք-գրեցին, վազեցի-վազեցիր-վազեց-վազեցինք-վազեցիք-վազեցին** ձևերն են ճիշտ: Բայց խոսակցական լեզվում, հատկապես երիտասարդների շրջանում, չգիտես ինչու սրանք կազմվում են ներկայի հիմքից (առանց **եց-ի**)՝ **գրի-գրիր-գրինք-գրիք-գրին, վազի-վազիր — վազինք-վազիք-վազին**, որոնք սխալ են և մերժելի: Սխալ են նաև **խմեցի // խմա, խմեցիր // խմար, խմեց // խմավ, խմեցինք // խմանք, խմեցիք // խմաք, խմեցին // խման** ձևերից երկրորդները: Նույնը պետք է ասել **նստեցի // նստա, նստեցիր // նստար, նստեց // նստավ...**, **կանգնեցի // կանգնա, կանգնեցիր // կանգնար, կանգնեց // կանգնավ**... զուգաձևությունների համար: Ժողովրդախոսակցական լեզվում **սկսել** բայի **սկսա, սկսար, սկսավ, սկսանք, սկսաք, սկսան** կատարյալի ձևերն են աշխուժացել՝ **սկսեցի, սկսեցիր, սկսեց, սկսեցինք, սկսեցիք, սկսեցին** ձևերի փոխարեն, որոնք լեզվի անցյալ փուլերում էլ բավականին տարածված էին: Նույն ձևով և **հանել** բայի ցոյական և անցոյական կատարյալները՝ **հանի // հանեցի, հանիր // հանեցիր...**, որոնցից առաջինը այն ժամանակ էլ այդքան տարածված չէր և ներկայիս գրական լեզվում մերժված է, չնա-

յած խոսակցական լեզվում տարածված է: Սրանք ցոյական ձևերից անցոյականի անցնելու միտման արտահայտություն են:

Երբ վաղակատար ներկա և վաղակատար անցյալ ժամանակաձևերում օժանդակ բայը առաջ է ընկնում դերբայից, զանազան պատճառներով խոսակցական լեզվում **լ**-ն ընկնում է՝ (գիրք) **ենք վերցրե** փոխանակ՝ (գիրք) **ենք վերցրել**, (ընկերոջս) **եմ տվե**, փոխանակ (ընկերոջս) **եմ տվել**...), **ենք վերցրել // ենք վերցրե, եմ տվել // եմ տվե** և նման զուգաձևություններում երկրորդները սխալ են, ուստի և մերժելի, քանի որ մերօրյա հայերենում **վերցրե, տվե** դերբայաձևեր գոյություն չունեն:

Անցյալ դարի գրական լեզվում **տանել** և **առնել** բայերի կատարյալները հանդիպում էին նաև, թեև ոչ այնքան հաճախ (գուցե արևմտահայերենի և բարբառների ազդեցությամբ), **տարի, տարիր, տարինք, տարիք, տարին** և **առի, առիր, առեց, առինք, առիք, առին** ձևերով: Նույնիսկ բարբառային **առեցի** ձևն էր աշխուժացել: Այժմ այդ բառերը տարածված են **առա, առար, առավ, առանք...**, **տարա, տարար, տարավ**.. ձևերով, թեև բանավոր խոսքում հիմա էլ կարելի է հանդիպել հնաձև գործածությանը, որ նորմի խախտում է և քերականական սխալ: Ուրեմն՝ ժամանակակից հայերենում ընդունելի չէ նաև խոսակցական լեզվում հաճախաբար գործածվող **առնել** բայի ցոյական անցյալի հիմքը՝ **առեց-**ը՝ **առ-**ի փոխարեն, և **առա // առեցի, առար // առեցիր**... շարքում երկրորդները թույլատրելի չեն:

Անընդունելի պետք է համարել պատճառական բայերի անցյալ կատարյալի կանոնական կարճ ձևերի փոխարեն հաճախաբար գործածվող երկար ձևերը՝ ինչպես՝ **սովորեցրեցի, մոտեցրեցին, հանգցրեցիք** և այլն: Պատճառական բայերի՝ վերը նշված շեղումները արդյունք են այն բանի, որ այդ բայերի երրորդ դեմքի ձևն ընկալվում է որպես հիմք, և նրանից կազմվում են առաջին և երկրորդ դեմքերի ձևերը՝ պարզ բայերի նմանակությամբ՝ **բարձրացրեցի** (**գրեցի**): Պարզ բայերի անցյալ կատարյալի համաբանությամբ կազմված կեղծ գրական այս ձևերը համարվում են սխալ և մերժվում են նորմատիվ քերականությունների կողմից: Ժամանակին նման կազմությունների սխալ լինելը նկատել են Ս. Պալասանյանն ու Մ. Աբեղյանը: Այսօր դրանք շատացել են, թափանցել գրավոր գրական խոսքի մեջ: Լեզվական կանոնը սահմանում է՝ <u>անցյալի հիմ-</u>

քում անցոյական են միայն **ն, չ, ցն** բայածանցներ ունեցող բայերը, և հանձնարարելի չէ պատճառական բայերի ցոյական անցյալի հիմքը, երբ **ր**-ի հետ մեկտեղ ավելանում է **եց** հիմքակազմիչը. **մեծացրի // մեծացրեցի, մոտեցրի // մոտեցրեցի, երջանկացրի // երջանկացրեցի, վախեցրի // վախեցրեցի, բարձրացրի // բարձրացրեցի** և նման հիմքափոխական-ձևակազմական զուգաձևություններում ճիշտ են առաջինները, իսկ երկրորդների մուտքը գրական լեզվում անհրաժեշտ է կանխել, չնայած որ հեղեղել են գրական լեզվի թե՛ բանավոր, թե՛ գրավոր տարբերակները: Ակնհայտ է, որ կանոնավոր պարզ բայերի անցյալ կատարյալի կազմության եղանակը նպաստում է այս ձևերի տարածմանը: Րեական հիմք ունեն նաև **հարցնել, հասցնել, լցնել, վերցնել, կորցնել, յուրացնել, հատկացնել** բայերը, որոնց պատճառական գործողության իմաստը մթագնել է, և որպես սովորական ներգործական սեռի բայեր են գործածվում, բայց պատճառական բայերի նմանակությամբ **ր**-ով կամ րեական հիմք ունեն. **հարցրի // հարցրեցի, հասցրի // հասցրեցի, լցրի // լցրեցի, վերցրի // վերցրեցի, կորցրի // կորցրեցի, յուրացրի // յուրացրեցի, հատկացրի // հատկացրեցի** հիմքափոխական զուգաձևություններում գերադասելի են առաջին տարբերակները: Այս զուգաձևությունների հարցում զգույշ պիտի լինել, որովհետև դրանք այլևս պատճառական բայեր չգիտակցվելու ճանապարհին են, ինչպես գրաբարյան **զեկուցել, մատուցել, ծանուցել, կառուցել, հարուցել, հատուցել** բայերը...

Խոսակցական լեզվում երբեմն տեղ են գտնում նաև անցյալ կատարյալի այսպիսի ձևեր՝ **բերեցիմ, գրեցիմ, հանիմ, ասիմ, կարդացիմ....՝ բերեցի, գրեցի, հանեցի, ասացի, կարդացի**... ճիշտ ձևերի փոխարեն. **մ**-ի հավելմամբ այս ձևերը ակնհայտ բարբառային են և մերժելի:

Շատ հաճախ անցյալ կատարյալում **վ** ունեցող բայերն են զուգաձևություններ կազմում խոսակցական տարբերակների հետ: Ճիշտ և օրինաչափական են՝ **թափվեց** և ոչ թե՝ **թափվավ, համաձայնվեց,** ոչ թե՝ **համաձայնվավ, հաջողվեց**, ոչ թե՝ **հաջողվավ, վառվեց**, ոչ թե՝ **վառվավ, համոզվեց** և ոչ թե՝ **համոզվավ, հենվեց** և ոչ թե՝ **հենվավ**...:

Իսկ **խնդրվեց // խնդրվավ, տուժվեց // տուժվավ, կապնվեց // կապնվավ, վիճվեց // վիճվավ** զուգաձևությունների երկու եզրերն էլ ընդհանրապես գրական լեզվի շրջանակներից դուրս են՝ մեկը՝ ձևաբանական նորմի չիմացության, մյուսը՝ նաև խոսակցական-բարբառային լինելու պատճառով:

ԸՂՁԱԿԱՆ, ՊԱՅՄԱՆԱԿԱՆ, ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐ: Լեզվական օրենքը սահմանում է, որ ողջական եղանակի ապառնի ժամանակը կազմվում է բայի ներկայի հիմքի վրա ավելացնելով հետևյալ դիմային վերջավորությունները՝ **մ, ս, Ø, նք, ք, ն**: Եզակի երրորդ դեմքում ողջական եղանակի ապառնի ժամանակը դիմային վերջավորություն չունի: Այն պարզապես ներկայի հիմքն է՝ ավելացրած խոնարհիչը, որը **ե** խոնարհման ժամանակ վերածվում է **ի**-ի: Սկզբնապես այն վերջավորվել է **ե**-ով և գործածվել անցյալ դարասկզբի գեղարվեստական խոսքում: Ուրեմն **քաշի // քաշե, ուտի // ուտե, ծաղրի // ծաղրե, դատի // դատե, վայելի // վայելե, պահպանի // պահպանե, ծառայի // ծառայե, կանաչի // կանաչե** և նման տիպի զուգաձևություններում երկրորդները սխալ են, մերժելի՝ որպես լեզվական կանոնից կատարված շեղումներ, որպես հնացած ձևեր: **Պատկանի // պատկանա** զուգաձևությունում նորից երկրորդը սխալ է, մերժելի, բնորոշ խոսակցական լեզվին, որտեղից էլ թափանցում է գրական լեզվի մեջ: **Պատկանա** ձևը երևի կազմվել է **ա** խոնարհման բայերի նմանակությամբ (ինչպես՝ **մեծանա, հեռանա** ...):

Ողջական եղանակի անցյալ ժամանակը կազմվում է խոնարհվող բայի ներկայի հիմքի վրա ավելացնելով անցյալ ժամանակի դիմային վերջավորությունները՝ **ի, իր, ր, ինք, իք, ին**: Ըստ լեզվական նորմի՝ **ա** խոնարհման բայերում **ա** խոնարհիչից հետո և ձայնավորով սկսվող վերջավորությունների միջև գրվում է նաև **-յ-** ձայնակապը. «Ե և Ա յծորդ ձայնավորների և ի ձայնավորով սկսվող վերջավորությունների միջև ըստ հայերենի արտասանական օրենքների մտնում է յ ձայնակապ, որը մեր ուղղագրության կանոններով Ե-ից հետո չի գրվում, իսկ Ա-ից հետո գրվում է» (33, էջ 300), սահմանում է ձևաբանական կանոնը: Իսկ թե ինչու **ե**-ից հետո լսվող **յ**-ն չի գրվում, դժվար է բացատրել. այստեղ ևս ավանդույթը մեծ դեր ունի. գրաբարից սկսած **ա**-ից և **ո**-ից հետո լսվող **յ**-ն գրվել է. մեզ այսպես է ավանդվել:

Բնականաբար, գրական գրավոր խոսքին բնորոշ նման ձևաբանական-ուղղագրական զուգաձևություններում՝ **գնայի // գնաի, գնայիր // գնաիր**..., **խաղայի // խաղաի, խաղայիր // խաղաիր**..., առանց յ-ի տարբերակները ուղղագրական սխալներ են, նաև՝ լեզվական նորմի չիմացության արդյունք: Նույն ձևով սխալներ են **ե**-ից հետո յ-ով գրվող ձևերը՝ **երգեի // երգեյի, երգեիր // երգեյիր**...

Չհաշված այս մի քանի շեղումները՝ ըղձական եղանակն աչքի է ընկնում կազմության միօրինակությամբ, և այս ենթահամակարգում լեզվական նորմը անխափան է գործում: Բնականաբար նույն վիճակում պետք է լինեն նաև պայմանական և հարկադրական եղանակներն այն առումով, որ կազմվում են ըղձական եղանակից՝ համապատասխանաբար **կ** և **պիտի** կամ **պետք է** եղանակիչներով, այսինքն՝ ըղձական, պայմանական, հարկադրական եղանակները միմյանց հետ կապված են կազմության ընդհանրությամբ:

Մի քանի բայերի ըղձական ապառնու որոշ ձևեր, ժամանակի ընթացքում կորցնելով իրենց բայական հատկանիշները, վերածվել են եղանակավորող բառերի, ինչպես՝ **ասես**, **կարծես**, **տեսնես**, **տեսնենք**, **չլինի** և այլն: Սրանք նույնաձևություններ են՝ միայն խոսքիմասային իմաստի տարբերությամբ, արտահայտության ձևը նույնն է մնացել, բայց փոխվել է քերականական իմաստը, այսինքն՝ սրանք ձևաբանորեն տարարժույթ միավորներ են:

Մերօրյա հայերենում պայմանականական եղանակի **կ** ցուցիչի հետ կապված արտասանական տատանումներ կան, այսինքն՝ ստեղծվում են ձևաբանական-արտասանական տարբերակներ՝ **կ(է)նթադրի // կը(յէ)նթադրի, կ(օ)ղջունեմ // կ(վօ)ղջունեմ, կ(է)րգի // կ(յէ)րգի**... Թ. Ղարագուլյանը, խոսելով լեզվի գոյաձևերի հարցի մասին, եզրակացնում է, որ **կ** եղանակիչից հետո արմատի սկզբնատառ **ե**-ն և **ո**-ն բառամիջի **ե**-ի և **ո**-ի արտասանության կանոններին համաձայն պետք է արտասանել: Պ. Բեդիրյանը վերոբերյալ զուգաձևություններում երկրորդ ձևով արտասանելն է ճիշտ համարում. «Մերօրյա գրական արևելահայերենում արդեն ընդունված է, որ Կ և Չ մասնիկներով սկսվող բայաձևերի վրա նշված արտասանական օրենքը չի տարածվում: Այնպես որ հետևյալ բառերն ու դրանց նմաններն այս կերպ են արտասանվում-կարդացվում՝ կեզրակացնի [կըեզրակացնի]..., կոգևորեմ [կըոգևորեմ]... (41, էջ 15):

Չմոռանանք, որ մոտեցումների տարբերությունը նաև ժամանակների տարբերությամբ է պայմանավորված (1975թ. և 1999թ.): Արտասանական այս զուգաձևությունները կգոյատևեն այնքան ժամանակ, քանի դեռ տարբերակներից մեկնումեկը լիակատար հաղթանակ չի տարել: Նորագույն դպրոցական դասագրքերից մեկում կարդում ենք. «**Կ** և **չ** մասնիկներից հետո **ե**-ն **յէ** է արտասանվում, քանի որ այդ **ե**-ն իրականում հանդես է գալիս **կը** և **չը** հնչվող մասնիկներից, այսինքն՝ ձայնավորից հետո: Ասմունքի ժամանակ բանաստեղծության վանկերի քանակը չխախտելու նպատակով հնարավոր է այս կարգի բառերն արտասանել **է**-ով: Օրինակ՝ **կերգեմ**-[կէրքեմ]: (Դ.Գյուրջինյան, Թ.Ալեքսանյան, Ա.Գալստյան, Մայրենի, 5, էջ 28, 2006թ.):

Գրական աշխարհաբարի կազմավորման հատկապես հյուսիսափայլյան շրջանում հարկադրական եղանակի համար որպես եղանակիչ հանդես էր գալիս **պիտո էր**-ն, այսինքն՝ հարկադրական եղանակի կազմության եռաձևություն կար՝ **պիտո է (էր) // պետք է (էր) // պիտի**: Հետագայում հանձնարարելի համարվող ձևը՝ **պիտո է (էր)**, դուրս մղվեց գրական լեզվից, և 19-րդ դարի վերջին քառորդում արդեն գործածական էր **պիտի**-ն, մասամբ նաև **պետք է**-ն. նորմատիվ քերականություններում սահմանվում է. «Հարկադրականի ձևերը կազմվում են ըղձականից, որոնց վրա սկզբից ավելանում է պիտի կամ պետք է եղանակիչը»:

Այս եղանակիչը բանաստեղծական խոսքում երբեմն հանդիպում է **պիտ** կամ **տի** ձևով: Նման եռաձևություններում՝ **պիտի գնամ // պիտ գնամ // տի գնամ**..., օրինաչափը առաջինն է, իսկ երկրորդները հնացած են, երբեմն կիրառելի են գեղարվեստական-խոսակցական լեզվում:

Պիտի և **պետք է** եղանակիչները, հավասարապես գործածվելով որպես հարկադրական եղանակի ձևավորման միջոց, աստիճանաբար սկսում են ստանալ իմաստային նուրբ տարբերակում: **Պետք է** եղանակիչն ավելի է ընդգծում հարկադրաբար, անհրաժեշտաբար կատարվելու բնույթը, իսկ **պիտի**-ի մեջ այդ իմաստը աստիճանաբար մթագնում է: Այս երևույթը հավանաբար կապված է այն բանի հետ, որ **պիտի** ձևը լրիվ կորցրել է իր նյութական իմաստը՝ վերածվելով քերականական ձևույթի, իսկ **պետք է** ձևն ունի նաև անկախ

կիրառություն, անհրաժեշտություն ցույց տվող կապակցություն է («Այս գիրքը պետք է»):

Հարկադրական եղանակում զուգաձևություններ առաջանում են **պիտի** և **պետք է** եղանակիչների գործածությամբ՝ **պետք է գնամ // պիտի գնամ, պետք է տեսնեմ // պիտի տեսնեմ**... (Հ. Հարությունյանի «Բայական զուգաձևությունների վիճակագրական պատկերը ժամանակակից հայերենում» ուսումնասիրության մեջ **պիտի**-ն 23 անգամ է գործածվել, իսկ **պետք է**-ն՝ 52 անգամ): Սրանք կանոնական համազոր տարբերակներ են և զուտ ոճական տարբերություն են դրսևորում՝ **պետք է**-ն առավել գիտական է: Ժողովրդախոսակցական է **պիտի**-ով կազմվածների շարադասական տարբերակը՝ **պիտի քայլեմ // քայլեմ պիտի, պիտի երգեմ // երգեմ պիտի, պիտի տեսնեմ // տեսնեմ պիտի** և այլն, որոնք հանձնարարելի չեն, սակայն հանգն ու չափը պահպանելու նպատակով գեղարվեստական խոսքում լայնածավալ գործածություն ունեն:

Բարբառային է **պիտի** եղանակիչի փոխարեն **պտի**-ի գործածությունը, և **պիտի գնամ // պտի գնամ, պիտի կարդամ // պտի կարդամ** և նմանների դեպքում երկրորդները մերժելի են:

Խոսքի մեջ **պիտի** և **պետք է** եղանակիչներին ավելանում է **որ** շաղկապը, որով գործողության անհրաժեշտաբար կատարվելու իմաստը որոշ չափով թուլանում է: Այս ձևը ցույց է տալիս ենթադրություն՝ որևէ գործողության անհրաժեշտաբար, հաստատ կատարվելու վերաբերյալ: Դրանով ստեղծվում է հարկադրական եղանակի ապառնի ժամանակի ևս մեկ համանիշ ձև՝ **պիտի գնա // պետք է գնա // պիտի որ գնա // պետք է որ գնա:**

Հարկադրականի երկրորդական վերլուծական ժամանակներում հավասարաչափ կիրառելի են հետևյալ ձևաբանական-շարադասական տարբերակները՝ **պիտի հեռացած լինի // հեռացած պիտի լինի, պետք է հեռացած լինի // հեռացած պետք է լինի, պիտի գրելիս լինի // գրելիս պիտի լինի, պիտի վազելու լիներ // վազելու պիտի լիներ**, այսինքն՝ **պիտի / պետք է** եղանակիչն այս դեպքում ազատ շարադասություն ունի. կարող է դրվել և՛ խոնարհվող բայից առաջ, և՛ խոնարհվող բայի ու **լինել**-ի միջև: Նույն ձևով և հարադիր բայերի հարկադրականը կազմելիս. այստեղ ևս **պիտի // պետք է** հարկադրական եղանակիչը ազատ շարադա-

սություն ունի. կարող է դրվել թե՛ հարադրավոր բայից առաջ, թե՛ հարադրի և բայ-բաղադրիչի միջև՝ **պետք է (պիտի) կանգ առնեմ // կանգ պիտի (պետք է) առնեմ, պետք է թույլ տամ // թույլ պետք է տամ** և այլն: Սրանք ազատ, կանոնական տարբերակներ են. ընտրելիս առաջիններն են գերադասելի:

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ: Հրամայականը մյուս եղանակների համեմատությամբ աչքի է ընկնում կազմության տարատեսակությամբ. այս առումով այն սերտորեն կապվում է գրաբարի հրամայական եղանակի հետ և ըստ էության նրա կրած փոփոխությունների օրինաչափ արտահայտությունն է:

Նորմատիվ քերականություններում կարդում ենք. «**Ե** խոնարհման պարզ բայերի հրամայական եղանակի եզակին կազմվում է բայարմատին ավելացնելով **իր** վերջավորությունը: **Ա** խոնարհման պարզ բայերի հրամայականը կազմվում է բայարմատին **ա** վերջավորությունն ավելացնելով:

Հրամայական եղանակի հոգնակին կազմվում է **ե** խոնարհման բայերի համար բայարմատին **եցեք**, իսկ **ա** խոնարհման բայերի համար՝ **ացեք** վերջավորությունն ավելացնելու միջոցով: Հրամայական եղանակի հոգնակիի բուն վերջավորությունը **եք** է, իսկ **եց, աց** մասնիկները կատարյալի հիմքի ածանցներն են: Հետևաբար, հրամայական եղանակի հոգնակին կազմվում է բայի անցյալ կատարյալի հիմքից՝ **եք** վերջավորությամբ:» (13, էջ 208-209): Կամ՝ հրամայական եղանակի եզակի ձևերը կազմվում են ԻՐ, Ա և ՈՒ վերջավորություններով: ԻՐ վերջավորությունն են ստանում Ե խոնարհման պարզ ու սոսկածանցավոր և Ա խոնարհման սոսկածանցավոր բայերը, ըստ որում Ե խոնարհման պարզ բայերն այդ վերջավորությունն ստանում են անկատարի, իսկ մյուս բոլոր բայերը՝ կատարյալի հիմքի վրա... Հրամայական եզակիում Ա վերջավորություն են ստանում Ա խոնարհման պարզ բայերը, ըստ որում՝ վերջավորությունը դրվում է անկատարի հիմքի վրա... Հրամայական եզակիում ՈՒ վերջավորություն են ստանում պատճառական բայերը. դա դրվում է կատարյալի հիմքի վրա... Բոլոր բայերի հոգնակի հրամայականը կազմվում է ԵՔ վերջավորությամբ, որ բոլոր տիպերի դեպքում դրվում է կատարյալի հիմքի վրա (տես՝ 33, էջ 311): Ձևաբանական-բայական

նորմը հաստատում է, որ հրամայական ձևերի կազմության հարցում լեզուն դեռևս միօրինակության չի հասել՝ հատկապես եզակի թվում: Հրամայական եղանակի դրական և ժխտական ձևերի կազմության մեջ տատանումները բացատրվում են նրանով, որ լեզուն այս մարֆահամակարգում նույնպես ձգտում է միակերպության, նույնահիմք և նույնաձև կազմության, բայց այսօր թե՛ դրականի, թե՛ ժխտականի (արգելականի) ձևերը միասնականացած և կայունացած չեն: Առավել մեծ չափով հատկապես զգալի է խոսակցական լեզվի ազդեցությունը, որի հետևանքով ստեղծվել են, ստեղծվում են հրամայական եղանակի զուգահեռ ձևեր թե՛ պարզ, թե՛ ածանցավոր բայերի խոնարհման մեջ: Անժխտելի է համաբանության (նմանակության) օրենքի ազդեցությունն այս եղանակաձևի կազմության և զուգաձևությունների առաջացման հարցում:

Լեզվական նորմը սահմանում է, որ պարզ, բազմապատկական և կրավորական բայերի եզակի հրամայականը կազմվում է անորոշ դերբայի հիմքից՝ **իր** վերջավորությամբ (**վազ+ի՛ր**, **կտրատ+ի՛ր**, **նկարվ+ի՛ր**): Անցյալ դարի սկզբներին այս ձևերը զուգաձևություն էին կազմում առավել նախընտրելի տարբերակների հետ՝ **վազե՛**, **նկարե՛**, **ազատե՛** և այլն: Մ. Աբեղյանի հիշատակած **գրե՛**, **ազատե՛**, **համարե՛** բայերը գրաբարյան եզակի հրամայականի **եա** երկբարբառի ամփոփման արդյունք են (սիրեա-սիրե) կամ **կը** ծյուղի բարբառների եզակի հրամայականի **ե** վերջավորության բայաձևերի գրականացման հետևանք, կամ էլ պարզապես արևմտահայերենի ազդեցություն: Սակայն վերջիններս, հակառակ քերականների ցանկության, տարածում չգտան և դուրս մնացին այսօրվա լեզվական նորմի սահմաններից. այսօր դրանք հազվադեպ և պատահական կիրառություններ են: Արդի հայերենի ժողովրդախոսակցական լեզվում լայնորեն տարածվել են այս եղանակաձևերի **ի**-ով տարբերակները **իր**-ի փոխարեն և այնտեղից էլ թափանցում են անգամ գրավոր խոսքի մեջ, և առաջանում են զուգաձևություններ՝ **վազի՛ր // վազի՛, նկարվի՛ր // նկարվի՛, կտրատի՛ր // կտրատի՛, գրի՛ր // գրի՛, փախի՛ր // փախի՛, հեռացի՛ր // հեռացի**... Դեռևս 1906 թ-ին իր «Աշխարհաբարի քերականության» մեջ Մ. Աբեղյանը նկատել է **գրի** ձևի գոյությունը: Եթե աբեղյանական ժամանակներում դրանք հազվադեպ էին հանդիպում, ապա այսօր անհամեմատ

շատացել են, և նման զուգաձևություններ կազմում են ոչ միայն **ե** խոնարհման պարզ, այլև բազմապատկական, կրավորական, սոսկածանցավոր բայերը: Պատճառը **ի** ձայնավորի ուժեղ շեշտն է և **ր**-ի թուլացումն ու անկայունությունը: **Քայլի՛ր // քայլի՛, երգի՛ր // երգի՛, հեռացի՛ր // հեռացի՛, նկարվի՛ր // նկարվի՛, ցատկոտի՛ր // ցատկոտի՛, վազի՛ր // վազի՛** և նման զուգաձևություններում գրականը, նորմով սահմանվածը առաջիններն են, իսկ երկրորդները խոսակցական են: Դժվար է ասել, թե ժամանակը որ ձևի օգտին կգործի, համենայն դեպս **ե** խոնարհման բայերի՝ առանց **ր**-ի հրամայական ձևերը կանոնական դառնալու ճանապարհին են: **Ա** խոնարհման պարզ բայերի հրամայական եղանակի կազմության մեջ շեղումներ չկան: Չկան զուգաձևություններ, և գործում են ձևաբանական նորմով սահմանված օրենքները:

Ըստ լեզվական-ձևաբանական նորմի սահմանման՝ պատճառական բայերի դրական խոնարհման ձևերը կազմվում են անցյալ կատարյալի հիմքից՝ եզակի թվում **ու**, հոգնակի թվում **-եք** վերջավորություն ավելացնելով՝ **խաղացրու՛ - խաղացրե՛ք, նստեցրու՛-նստեցրե՛ք**: Սակայն շատերը, լեզվական օրենքի անգիտությամբ, սխալմամբ **ու**-ն **ա**-ով են փոխարինում. դատապարտելի ու մերժելի է պատճառական բայերի եզակի հրամայականի **ա** վերջավորությամբ օգտագործումը, և **մոտեցրու՛ // մոտեցրա՛, խաղացրու՛ // խաղացրա՛, հեռացրու՛ // հեռացրա՛, քնեցրու՛ // քնեցրա՛ (քնացրա՛), վազեցրու՛ // վազեցրա՛, նստեցրու՛ // նստեցրա՛, կանգնեցրու՛ // կանգնեցրա՛, խոսեցրու՛ // խոսեցրա՛** և նման զուգահեռ ձևերում օրինաչափական են առաջինները. **ա**-ով տարբերակները ժարգոնային են և անընդունելի, հրամայական եղանակի կազմության համակարգից դուրս, բնորոշ են խոսակցական լեզվին, սխալ են, բայց և համաբանությամբ լայն տարածում ստանալու միտում ունեն, և այս հարցում լեզվաշինական աշխատանքների դերը մեծ է:

Ինչ վերաբերում է **զարթնել** բայի հրամայական եղանակի եզակի ձևի կազմությանը, ապա այսօր այն չի գիտակցվում որպես սոսկածանցավոր բայ, հետևաբար նրա հրամայականը կազմվում է պարզ բայերի նման՝ անորոշ դերբայի հիմքից՝ **զարթնի՛ր**, և նրա՝ առանց **ն**-ի կազմությունը՝ **զարթի՛ր**, հնացած է:

Գալ բայը հրամայական եղանակի եզակի թվում երբեմն գործածվում է բարբառային **արի՛** ձև-ով՝ **ե՛կ**-ի փոխարեն. **ե՛կ // արի՛**, **եկե՛ք // արե՛ք** զուգաձևություններում երկրորդները բարբառային տարբերակներ են. մերօրյա խոսակցական լեզվում գործածական մեծ հաճախականություն ունեն, թափանցել են գրական լեզվի մեջ և նորմավորվելու «իրավունք» են նվաճել: **Տու՛ր // տու՛** զուգաձևության մեջ երկրորդը նորից խոսակցական է և ոչ հանձնարարելի: (Այս բայերի հրամայականի կազմության հարցը մանրամասնորեն քննարկված է նաև անկանոն բայերի մանրահամակարգում):

Թե՛ պարզ, թե՛ ածանցավոր բայերի հոգնակի հրամայականը կազմվում է կանոնավորապես՝ անցյալ կատարյալի հիմքի վրա ավելացնելով **-եք** վերջավորությունը՝ **վազել→վազեց→վազեցե՛ք, մոտենալ→մոտեց→մոտեցե՛ք, մոտեցնել→մոտեցր→մոտեցրե՛ք, փախչել→փախ→փախե՛ք, հասկանալ→հասկաց→հասկացե՛ք:** Սրանցից միայն **ե** խոնարհման պարզ բայերի հրամայականը զուգաձևություններ ունի, որոնցից մեկը կազմվում է «կատարյալի հիմք+եք», մյուսը՝ «անորոշի հիմք+եք» կաղապարներով՝ **վազեցե՛ք // վազե՛ք, գրեցե՛ք // գրե՛ք, նայեցե՛ք // նայե՛ք** և այլն: Եթե նախախորհրդային և խորհրդային շրջաններում գրական լեզվում հոգնակի հրամայականի անցյալ կատարյալի հիմքից կազմվածներն էին կանոնական, նորմով սահմանված, ապա վերջին տասնամյակներում բանավոր խոսքից գրական լեզվի մեջ թափանցեցին ներկայի հիմքից կազմված բազմաթիվ ձևեր: Մեր լեզվում այսօր մեծ կշիռ ունեն ներկայի հիմքով կազմված ձևերը, թեև կանոնական են անցյալի հիմքով կազմվածները: Ա. Ղարիբյանի կողմից կազմված դպրոցական դասագրքում կարդում ենք. «Ե» խոնարհման կանոնավոր պարզ բայերի համար հոգնակիում գործ է ածվում «եք» վերջավորություն ունեցող ձևը (գրե՛ք, լսե՛ք, նստե՛ք և այլն), որ սխալ է» (75, էջ 225): Մերօրյա դպրոցական քերականության մեջ նշվում է լեզվական այս իրողությունը՝ առանց «ճիշտ է», «սխալ է» մեկնաբանմամբ. «Երբեմն **ե** խոնարհման պարզ բայերի համար հոգնակի հրամայականում գործածում են բայարմատով և **եք** վերջավորությամբ կազմված ձևեր՝ **կանգնե՛ք, լռե՛ք, գրե՛ք,** փոխանակ **կանգնեցե՛ք, լռեցե՛ք, գրեցե՛ք** ճիշտ ձևերի» (13, էջ 209): Կամ՝ «Ե խոնարհման բայերի հրամայականի հոգնակի ձևերը կարող են հանդես գալ

-եք վերջավորությամբ (նստեք, գրե՛ք, վազե՛ք, փոխանակ՝ նստեցեք, գրեցե՛ք, վազեցե՛ք), որը խրախուսելի չէ» (61, էջ 61): Իսկ Ալ. Մարգարյանն ուղղակի գրում է, որ **ե** խոնարհման պարզ բայերի հրամայականի հոգնակի թիվը կազմվում է **-եք // -եցեք** մասնիկներով: Եթե Մ. Աբեղյանն իր ժամանակին ոչ հանճնարարելի էր համարում **գրե՛ք** ձևը, Ա. Ղարիբյանը նույնատիպ կազմությունները համարում էր սխալ, ապա այսօր նույն կերպով վարվել չենք կարող ամենից ավելի այն պատճառով, որ սրանք գործածական մեծ հաճախականություն ունեն: Ավելացնենք նաև, որ, եթե լեզվի հատկանիշներից մեկն էլ համառոտությունն է, ապա վերջիններս մի վանկով կարճ են առաջիններից: Ոճական-իմաստային նուրբ տարբերությունն էլ անցոյական ձևերի օգտին է խոսում, մանավանդ եթե հաշվի առնենք, որ մեր օրերում սկսել են կարևորվել լեզվական դաստիարակության, լեզվական կուլտուրայի հարցերը: Այս կապակցությամբ Ալ. Մարգարյանը գրում է. «Իսկ հոգնակի թվի ցոյական ձևը պահպանվել է, և դրանից զատ կազմվել ու կիրառություն է ստացել նաև զուգադիր անցոյական հրամայականը, որն, անշուշտ, ավելի մեղմական հրամայականի իմաստ է արտահայտում, և հետևաբար ոչ թե սխալմամբ, այլ անհրաժեշտաբար է գործածվում լեզվում» (80, էջ 453): Մնում է եզրակացնել, որ լեզվաբանը իմաստային տարբերություններ է նկատել այս զուգաձևություններում, ինչն էլ ենթադրել է տալիս, որ ժամանակի ընթացքում այդ տարբերությունները կամ անհրաժեշտաբար տարբերակների անկախացման կհասցնեն, կամ աստիճանաբար կվերանան՝ միաձևության վերածվելով: Կարծում ենք, որ այս զուգաձևության լուծման հարցում ուղենիշ պետք է դարձնենք «Ժամանակակից հայոց լեզվի» 2-րդ հատորի հեղինակային խմբի դիրքորոշումը. «Ծանոթություն. – Խոսակցական լեզվում, ինչպես նաև գրավոր լեզվում վերջին ժամանակներս խիստ տարածվել է ե խոնարհման պարզ բայերի հրամայականի հոգնակիի կազմությունը ներկայի հիմքից, որի վրա ավելանում է դարձյալ եք վերջավորությունը, այսպես՝ գր+եք, վազ+եք, կանգն+եք և այլն, փոխանակ՝ գրեցեք, խմեցեք, վազեցեք, կանգնեցեք: Այս ձևերը, որոնք համընկնում են ըղձական եղանակի ապառնի ժամանակի հոգնակի երկրորդ դեմքի բայածևերին, մեկ-երկու տասնամյակ առաջ հանդիպում էին հազվադեպ և համարվում էին սխալ կազմություններ: Սա-

կայն այժմ սրանք այնքան մեծ կիրառություն ունեն, որ այլևս սխալ համարել չի կարելի» (9, էջ 416):

Այնուամենայնիվ, **գրեցե՛ք // գրե՛ք, նստեցե՛ք // նստե՛ք** զուգաձևություններում առաջին ձևերն են նորմատիվ և օրինաչափական, քանի որ երկրորդները թեև տարածված են, կարճ են, թեև կարճությունն ու հակիրճությունը լեզվի ճշգրտության գրավականն են, բայց դեռևս օրինաչափության չեն վերածվել, նորմատիվ քերականություններում կանոնի փոփոխություն չի կատարվել, դեռևս հինն է ընդունված. «Բոլոր բայերի հոգնակի հրամայականը կազմվում է եք վերջավորությամբ, որ բոլոր տիպերի դեպքում դրվում է կատարյալի հիմքի վրա» (33, էջ 311): Պարզ բայերի նմանակությամբ զուգաձևություններ ունեն նաև բազմապատկական և կրավորական բայերը՝ **մորթոտեցե՛ք // մորթոտե՛ք, վազվզեցե՛ք // վազվզե՛ք, կոտրատեցե՛ք // կոտրատե՛ք, գրվեցե՛ք // գրվե՛ք, նկարվեցե՛ք // նկարվե՛ք** և այլն: Նշանակում է՝ հրամայականի կազմության այս միտումը գնալով ընդարձակում է իր գործածության ոլորտները, և եթե մի քանի տարի առաջ խոսքը միայն **ե** խոնարհման պարզ բայերի մասին էր, ապա այսօր արձանագրվում են նաև բազմապատկական և կրավորական բայերի գործածությունները: Այսօր գրավոր խոսքում (և՛ չափածոյում, և՛ արձակում) հոգնակի հրամայականի՝ ներկայի հիմքից կազմված ձևերը ոչ թե հազվադեպ հանդիպող կամ պատահական կիրառություններ են, այլ արդեն տարածման միտում ներկայացնող գործածություններ. 20-30 տարի առաջ սխալ համարված ձևերը այսօր նորմի աստիճանի են հասել: Անհրաժեշտ է ժամանակին կռահել նրանց ճակատագիրը և լեզվի զարգացման ընթացքին համապատասխան «օրենքներ հռչակել». այս առումով լեզվական-ձևաբանական նորմը փոփոխվելու դրության մեջ է հայտնվել. վերոբերյալ զուգաձևությունների հարցի լուծումը, միօրինակության հաստատումը «օրվա հարց» է դարձել, քանի որ դրանք նորմատիվ քերականություններում և բառարաններում բազմիցս հիշատակված են, հասարակության հավանությունն ակնհայտ է, մնում է նորմում փոփոխություն կատարել և ամրակայել նոր կանոնը:

Դեռևս Ս. Պալասանյանը նկատել է, որ կան գրողներ, որոնք **հագցրեցի, հագցրեցինք, հագցրեցեք** բառաձևերն են օգտագոր-

ծում: Այս վերջին կազմությունները անցյալ կատարյալի **հագցր** հիմքի փոխարեն **հագցրեց** հիմքի գործածության արդյունք են, հետևաբար սպասելի էր, որ հոգնակի հրամայականի **-եք** վերջավորությունը կարող էր ավելանալ **հագցրեց** սխալ հիմքին՝ **հագցրեց+ե՛ք:** Ըստ լեզվական կանոնի՝ անհանձնարարելի են պատճառական բայերի անցյալ կատարյալի կարճ ձևերի փոխարեն գործածվող երկար ձևերը, և **հագցրե՛ք // հագցրեցե՛ք, հեռացրե՛ք // հեռացրեցե՛ք, զարմացրե՛ք // զարմացրեցե՛ք, վազեցրե՛ք // վազեցրեցե՛ք, մոտեցրե՛ք // մոտեցրեցե՛ք** և նման զուգաձևություններում երկրորդներն անընդունելի են և մերժելի: Այսօր գրական խոսքում պատճառական բայերի հրամայականի հոգնակիի ձևերի կազմության մեջ **հագցրեցե՛ք, հարցրեցե՛ք, վազեցրեցե՛ք** և նման ոչ կանոնական ձևերը **հագցրե՛ք, հարցրե՛ք, վազեցրե՛ք** ճիշտ ձևերի կողքին գրեթե չեն հանդիպում: Խոսակցական լեզվում ևս դրանց գործածությունը նվազագույնի է հասել:

Ժողովրդախոսակցական են **լի՛ց – լցե՛ք, քի՛ց – քցե՛ք** հրամայականները՝ **լցրու՛-լցրե՛ք, գցի՛ր- գցե՛ք** ճիշտ ձևերի փոխարեն:

Լեզվական կանոնը սահմանում է. «Հրամայական եղանակի դրսևորման քերականական միջոց է նաև հատուկ հրամայական հնչերանգը, որը բանավոր խոսքում արտահայտվում է բայի վերջին վանկի հատուկ շեշտված արտասանությամբ, իսկ գրավոր խոսքում՝ շեշտի միջոցով» (9, էջ 416):

Հրամայական եղանակի բայերը արտասանվում են հրամայական շեշտով և գրության մեջ վերջին վանկի վրա կրում են շեշտ (՛): Սակայն ցանկություն, տենչանք, նաև խրախուսանք, հորդոր, երբեմն էլ հրավեր արտահայտելու դեպքում հրամայական բայաձևը ավելի երկար է արտասանվում և գրավոր խոսքում էլ սովորաբար շեշտի փոխարեն բացականչական նշանով (՜) է գործածվում, ինչպես օրինակ՝ **տեսե՛ք // տեսե՜ք, խոսի՛ր // խոսի՜ր, մոռացի՛ր // մոռացի՜ր, հեռացի՛ր // հեռացի՜ր**. նման տիպի ձևաբանական-կետադրական զուգաձևությունները կանոնական համազոր տարբերակներ ունեն, միայն որոշ նրբիմաստային տարբերություն են ցուցաբերում, բացի դրանից երկրորդները կիրառական ոլորտի սահմանափակություն ունեն՝ հազվադեպ են հանդիպում, այն էլ հատկապես գեղարվեստական խոսքում և առօրյա խոսակցական լեզվում: Հրա-

մայական եղանակի բայածևերը նաև շեշտառական տարբերություններ ունեն. հաճախ, երբ հրամայական բնույթը մեղմ է, երբ գործողության կատարման խնդրանք են ցույց տալիս, խոսքում սովորաբար առանց շեշտի են գործածվում, և շեշտառական-ոչ շեշտառական հակադրությամբ ձևավորված տարբերակները՝ **գրի՛ր // գրիր, կարդա՛ // կարդա, անջատի՛ր // անջատիր, մոռացի՛ր // մոռացիր,** համազոր են, կանոնական, միայն նրբիմաստային որոշ տարբերություն ունեն, թեև, ըստ լեզվական կանոնի, հրամայական բայածևերը շեշտ են կրում:

Հարադրավոր բայերի հրամայականի ձևերում, ըստ սահմանված օրինաչափության, սովորաբար հարադիրն է շեշտվում, և **վե՛ր կաց // վեր կա՛ց, դու՛րս արի // դուրս արի՛, թու՛յլ տուր // թույլ տու՛ր, դու՛րս կորիր // դուրս կորի՛ր, ե՛րս մտիր // ներս մտի՛ր** և նման զուգածևություններում, բնականաբար, բայական բաղադրիչը շեշտելը սխալ է:

Զուգածևությունները ժխտական խոնարհման համակարգում

Հաստատման-ժխտման լեզվական կարգը առկա է նաև ձևաբանական համակարգում: Եթե քերականական արտահայտության առումով հաստատումը նշույթավորված չէ, ապա ժխտումը, որ հաստատման բացասումն է, միշտ նշույթավորված է: Ձևաբանական պլանում հաստատում-ժխտումն ունի իր ձևակազմական ինքնուրույն կաղապարը, և խոնարհման համակարգում տարբերակվում են հաստատական կամ դրական և ժխտական մանրահամակարգերը: Ձևաբանական համակարգում ևս ժխտումը, ժխտական խոնարհումը նշույթավոր է. իրացվում է **չ** մասնիկով և **մի** օժանդակ բառով: Եթե հին գրական հայերենում ժխտական խոնարհման ձևերը կազմվում էին հաստատական ձևի վրա **ո՛չ** օժանդակ բառի ավելացումով (**ոչ**-ը նախադիր էր և շեշտակիր), և միայն արգելական հրամայականը կազմվում էր **մի՛**-ով, իսկ մասնակիորեն գործառել է նաև **չ**-ն (**ոչ>չ**), ապա ժամանակակից հայերենում լեզվական նորմը սահ-

մանում է. «ժխտական խոնարհման ձևերը, ի հակադրություն դրական ների, գուց են տալիս, որ գործողությունը բացասվում, ժխտվում է... ժամանակակից հայերենում ժխտական խոնարհման ձևերը, որպես կանոն, կազմվում են դրական խոնարհման ձևերից Չ մասնիկով, իսկ հրամայականի դեպքում Մի մասնիկով, չնայած որ ժխտական խոնարհման առանձին ձևեր (ենթադրական եղանակի ձևերը) հատուկ կազմություն ունեն» (33, էջ 325):

Ժխտական խոնարհումը դրական խոնարհման համեմատությամբ ավելի տարատեսակ պատկեր է ներկայացնում, հատկապես արգելական հրամայականում, որ հատկանշվում է բայերի երկկերպ՝ ներկայի և անցյալ կատարյալի հիմքերից կազմված ձևերի գործածությամբ: Խոնարհման ժխտական մանրահամակարգում ևս ձևաբանական նորմը փոփոխվելու միտում ունի. կան քերականական շեղումներ, զուգաձևություններ, նախընտրելի, կանոնական և ոչ նախընտրելի, ոչ կանոնական եզրեր: Դեռևս 19-րդ դարի սկզբներին հայ լեզվաբաններից մի քանիսը (Մ. Աբեղյան և այլք) նկատել են, որ ներկա ժամանակի մեջ **եմ** օժանդակ բայի բացասական երրորդ դեմքը հաճախ ժողովրդական ձևով դառնում է **չի**՝ ինչպես՝ **չէ ասում**, **չէ ասել, չէ ասելու** դառնում են **չի ասում, չի ասել, չի ասելու**: Այսինքն՝ անցյալ դարի առաջին տասնամյակում **չի**-ն, որը ժողովրդական էր համարվում, արագորեն ամրացրեց իր դիրքերը և քսանական թվականներին, այն, որպես հանձնարարելի և նախընտրելի գրական մասնիկ, հաստատվեց թե՛ բանավոր և թե՛ գրավոր խոսքում: (Հիշենք Ղ. Աղայանի խոսքը **չի** և **չէ** ձևերի մասին): Այսօր **չէ ասում** և **չի ասում, չէ ասել** և **չի ասել, չէ ասելու** և **չի ասելու** և նմանատիպ ձևերում առաջինները հնացած են և գրական լեզվում բացարձակապես չեն օգտագործվում:

Բոլորովին խրախուսելի չեն **չի**-ի կիրառությունները բաղադրյալ ստորոգյալի ժխտական ձևերի կազմության մեջ. սրանք երևի թե համաբանությամբ են կազմվում. **մեծ չի // մեծ չէ, տանը չի // տանը չէ, փոքր չի // փոքր չէ** զուգաձևություններում երկրորդներն են ճիշտ:

Բաղաձայնի անկում է նկատվում **գալ, տալ** բայերի սահմանական եղանակի անկատար ներկայի և անցյալի ժխտական ձևերում. արդյունքում զուգաձևություններ են՝ **չեմ գալիս // չեմ գալի,**

չէի գալիս // չէի գալի..., **չես տալիս // չես տալի, չէիր տալիս // չէիր տալի...**, որոնցում երկրորդները ոչ գրական են և անհանձնարարելի:

Նույն ձևով վաղակատար դերբայի՝ **լ**-ի անկումով ստեղծվում են վաղակատար ներկայի և վաղակատար անցյալի ժխտականի զուգահեռ ձևեր՝ **չեմ վազել // չեմ վազե, չէի վազել // չէի վազե, չես բերել // չես բերե, չէի բերել // չէի բերե** և այլն: **ս**-ի և **լ**-ի անկումով տարբերակները նորմատիվ չեն և հատուկ են ժողովրդախոսակցական լեզվին:

Սահմանական եղանակի վերլուծական ժամանակներում օժանդակ բայի ժխտական ձևը դրվում է դերբայներից առաջ, նախադաս է, իսկ ետադաս կիրառությունները (**գրում չեմ, գալիս չեմ**) զուտ բարբառային են. **չեմ գրում // գրում չեմ, չեմ գալիս // գալիս չեմ** և նման ձևաբանական-շարադասական զուգաձևություններում օժանդակ բայի ժխտական ձևերի ետադաս կիրառություններն ակնհայտ բարբառային են: Հարակատար դերբայով կազմված ձևերում ճիշտ հակառակ պատկերն է. գրական են էական բայի ետադաս դիրքային տարբերակները. **քնած չեմ // չեմ քնած, կանգնած չեմ // չեմ կանգնած...** զուգաձևություններում երկրորդները բարբառային են կամ խոսակցական: Միայն շարահյուսական կամ խոսքային հանգամանքներով (տրամաբանական շեշտ, ոճավորում և այլն) պայմանավորված՝ երկրորդ տարբերակների գործածությունը կարող է արդարացվել:

Ամենալուրջ փոփոխությունը կատարվել է պայմանական եղանակի ժամանակների ժխտական ձևերի կազմության մեջ. նախախորհրդային շրջանում հիմնականում ընդունված էին և գրական նորմին համապատասխան էին համարվում **եմ** օժանդակ բայի ժխտական ձևով և խոնարհվող բայի **իլ** և **ալ** վերջավորություններով կազմությունները՝ **չեմ վազիլ, չեմ խաղալ**, սակայն դեռ իր ժամանակին Ս. Պալասանյանը նկատել է, որ գավառական բառարաններում երբեմն **լ** տառը բաց է թողնվում՝ **չեմ խոսի, չեմ ուշանա**, որ ոմանք գրավորի մեջ էլ են օգտագործում: 1906 թ. Մ. Աբեղյանը նշում է, որ անորոշ դերբայի **լ** վերջավորությունը խոսակցական է և գրական լեզվի մեջ հաճախ դուրս է ընկնում, օրինակ՝ **չեմ գրի, չեմ խոսի, չեմ գնա:** Ահա այս ձևերը, որ «խոսակցական» էին կամ

«գավառական», մեկընդմիշտ որդեգրվեցին գրական լեզվի կողմից. այժմ պայմանական եղանակի ապառնի և անցյալի ապառնի ժամանակների ժխտական խոնարհումը կայունացած է, և բանավոր ու գրավոր լեզվում հանդես են գալիս միշտ նույն կազմությամբ՝ «**եմ** օժանդակ բայի ժխտական ձև + ժխտման դերբայ» կաղապարով՝ օժանդակ բայի ներկա և անցյալ ժամանակների ժխտական ձևերի և ժխտական դերբայի հարադրությամբ: Բարբառային ձևեր են՝ **չեմ սիրեր, չեմ կարդար, չի մնար**, որոնք հանդիպում են գեղարվեստական խոսքում: Ուրեմն՝ **չեմ գրիլ // չեմ գրի // չեմ գրե // չեմ գրեր, չեմ սիրիլ // չեմ սիրի // չեմ սիրե // չեմ սիրեր** բազմաձևություններում առաջինները հնացած են, երրորդները և չորրորդները խոսակցական են կամ բարբառային, իսկ նորմով սահմանվածները երկրորդներն են:

Ներկա փուլում հաստատվել ու կանոնարկվել է նաև ժխտական չ մասնիկի գործածությունը բայածևերի հետ. այստեղ արդեն գործում են ձևաբանական-արտասանական և ձևաբանական-շարադասական նորմերը: Որպես կանոն, անցյալ դարի սկզբներին բաղաձայնով սկսվող բայածևերից առաջ դրվում էր **չը**, իսկ ձայնավորով սկսվող բայերից առաջ՝ **չ**: Առաջին դեպքում թեև հանձնարարվում էր **չը**-ն առանձին գրել (**չը գրեի, չը տեսա**), սակայն հաճախ ոչ միայն միասին էին գրվում (**չըգրվեց**), այլև առանց **ը** տառի (**չգրեց**): Ձայնավորից առաջ **չ**-ն նախ ապաթարցով էին գրում, որը Մ. Աբեղյանը համարում էր ավելորդ նորաձևություն:

Ս. Պալասանյանը հանձնարարում էր թե՛ ձայնավորից, թե՛ բաղաձայնից առաջ պարզապես **չ** օգտագործել՝ **չխոսիմ, չուտիմ**...

Այս խառնակ վիճակը վերջնականապես կարգավորվեց խորհրդային շրջանում՝ վերահսկող միասնական լեզվական քաղաքականության ընձեռած հնարավորության շնորհիվ: Այժմ, անկախ բայածևի սկզբնատառի ձայնավոր թե բաղաձայն լինելուց, <u>բայի խոնարհման ժխտական ձևերը կազմվում են **չ** մասնիկով, միասնական գրությամբ</u>: Մերօրյա հայերենում այս **չ**-ի հետ կապված արտասանական տատանումներ կան, այսինքն՝ ստեղծվում են ձևաբանական-արտասանական տարբերակներ՝ **չ(է)զրակացնել // չը(յէ)զրակացնել, չ(է)նթադրել // չը(յէ)նթադրել, չ(օ)րոշել // չը(վօ)րոշել**: Թ. Ղարագուլյանը, խոսելով լեզվի գոյածևերի հարցի մասին, եզրա-

կացնում է, որ չ ժխտական մասնիկից հետո արմատի սկզբնատառ **ե**-ն և **ո**-ն բառամիջի **ե**-ի և **ո**-ի արտասանության կանոններին համաձայն պետք է արտասանել՝ **չորոշել՝ չ(օ)ր(օ)շել, չերգել՝ չ(է)րգել**: Մի քանիսը զուգաձևություններում երկրորդ ձևով արտասանելն են ճիշտ համարում: Արտասանական այս զուգաձևությունները նաև մերօրյա լեզվաիրողություններ են, բայց և մեր ժամանակներում է, որ այս ձևերի միջև խուլ պայքարը ավարտվում է մեկի հաղթանակով. նոր կանոն է ձևավորվում՝ չ մասնիկից հետո **ե**-ն **յէ** է արտասանվում, **ո**-ն՝ **վօ**, քանի որ այս չ-ն հնչվում է **չը**, այսինքն՝ **ո**-ն և **ե**-ն ձայնավորից հետո են հնչվում (տես՝ Դ.Գյուրջինյան, Թ.Ալեքսանյան, Ա.Գալստյան, Մայրենի, 5 էջ 28, 35):

Հարկադրական եղանակի ժխտական ձևերում ևս զուգաձևություններ կան. դրանք կարելի է կազմել չ մասնիկը ոչ միայն եղանակիչի, այլև բայածևի վրա ավելացնելով, այսպես՝ **չպիտի կարդամ // պիտի չկարդամ, չպետք է գնամ // պետք է չգնամ, չպետք է հետաքրքրվեմ // պետք է չհետաքրքրվեմ, չպիտի խմեմ // պիտի չխմեմ, չպիտի խմեի // պիտի չխմեի** և այլն, որոնցում երկրորդները խրախուսելի չեն. հատուկ են խոսակցական լեզվին:

Հ. Բարսեղյանը որոշ իմաստային զանազանություն է նշում այս զուգահեռ ձևերի միջև. «Հարկադրական եղանակի ժխտական ձևեր կարելի է կազմել «չ» մասնիկը ոչ թե եղանակիչի, այլ բայածևի վրա ավելացնելով, այսպես՝ պիտի չխմեմ – պիտի չխմեի: Բայց այս ձևերում բացասվում է գործողությունը և վերցվում է բացասված գործողության անհրաժեշտությունը: **Պիտի չխմեմ** նշանակում է՝ **ինձ չխմել է պետք**: Իսկ **չպիտի խմեմ** նշանակում է՝ **խմել պետք չէ,** ուր ժխտվում, բացասվում է գործողության պետքը, հարկը:

Իհարկե, ընդհանուր բովանդակությունը մնում է նույնը, սակայն հարկադրական եղանակի համար ավելի ընդունելի է վերջին կազմությունը (**չպիտի խմեմ**), որովհետև այստեղ խոսքը վերաբերում է գործողության հարկադրաբար, անհրաժեշտաբար կատարելու հաստատմանը կամ մերժմանը և ոչ թե մերժված գործողության անհրաժեշտության հաստատումը, որն ըստ էության դառնում է մի դրական ձև» (37, էջ 317): Ժամանակակից հայերենը որդեգրել է **պիտի**, մասամբ նաև **պետք է** եղանակիչները, իսկ <u>ժխտականի դեպքում՝ չ մասնիկի գործածությունը եղանակիչի վրա:</u> Բացառված չէ,

որ հարկադրականի ժխտականի կազմության երկու ձևերի միջև նկատելի նրբիմաստային տարբերությունը, հետզհետե խորանալով, ժամանակի ընթացքում իմաստային օտարման պատճառ դառնա, կամ, ընդհակառակն, եղած տարբերությունը աստիճանաբար վերանա, որով և քերականական արտահայտման զույգ ձևերից մեկն անխուսափելիորեն դուրս կմղվի լեզվից:

Խոսակցական լեզվի ազդեցությամբ երբեմն-երբեմն հարադիր բայերում չ-ն դրվում է ոչ թե բայի, այլ հարադրի վրա. **ցույց չտալ // չցույց տալ, վեր չընկնել // չվեր ընկնել, շուռ չգալ // չշուռ գալ**... զ'ուգաձևություններում գրական են առաջին տարբերակները, իսկ երկրորդները գրական չեն և շատ քիչ են հանդիպում: Նույն վիճակն է նաև հարադրական կազմությամբ պատճառական բայերում՝ **գրել չտալ // չգրել տալ, բերել չտալ // չբերել տալ,** և այլն: Սրանցում երկրորդներն արդեն ձևակազմական-բառակազմական նորմերի չիմացության արդյունք են:

Ի տարբերություն մյուս եղանակների՝ հրամայական եղանակի ժխտականը կազմվում է **մի** մասնիկով և կոչվում է արգելական հրամայական, ըստ որում **մի**-ն միշտ շեշտակիր է: Ձևաբանական նորմը սահմանում է, որ <u>արգելական հրամայականի եզակին կազմվում է հրամայականի դրական ձևերի վրա ավելացնելով **մի՛** ժխտական կամ արգելական մասնիկը, իսկ արգելական հրամայականի հոգնակին կազմվում է ներկայի հիմքի վրա ավելացնելով **-եք** (**ե** խոնարհման դեպքում) և **-աք** (**ա** խոնարհման դեպքում) մասնիկները</u>. այսպես՝ **մի՛ գրեք, մի՛ կարդաք, մի՛ մոտենաք** և այլն: Հայտնի է, որ գրական հայերենում արգելական հրամայականը աչքի է ընկնում իր կազմության բազմաձևությամբ: Հրամայական եղանակի ժխտական ձևերի կազմության մեջ ևս զուգաձևություններ կան: Այս զուգաձևությունները գրական նորմի տեսակետից տարբեր ձևով են արժեքավորվում:

Գրաբարում բոլոր բայերի արգելական հրամայականը կազմվել է ներկայի հիմքից:

Ժամանակակից գրական հայերենի զարգացման վաղ շրջանում հրամայական եղանակի ժխտականը կազմվում էր հետևյալ կերպ. արգելական եզակի 2-րդ դեմքի **ր** և հոգնակի 2-րդ դեմքի **ք**- վերջավորությունները ավելացվում էին լծորդի վրա. **ե** լծորդը

եզակիում սովորաբար դառնում էր **ի**, իսկ **ի** լծորդը կարող էր և **ե**-ի փոխվել. ահա Աբեղյանի օրինակները՝ եզակի՝ **մի՛ կարդար, մի՛ զարմանար, մի՛ գրիր (գրեր), մի՛ խոսիր**, հոգնակի՝ **մի կարդաք, մի՛ զարմանաք, մի՛ գրեք, մի՛ խոսեք (խոսիք)**: Խորհրդային շրջանում, բնականաբար, գործածությունից դուրս եկավ **ի** լծորդության բայերի **իք** վերջավորությամբ հոգնակի արգելականը, որը Ս. Պալասանյանի դասագրքում միակ հանձնարարելի ձևն էր: **Մի՛ գրեր, մի՛ խոսեր** ձևերը Մ. Աբեղյանը դեռ այն ժամանակ նախընտրելի չէր համարում (բերում էր փակագծերի մեջ). նախընտրելի չէր համարում նաև **ա** լծորդության բայերի **մի՛ կարդար, մի՛ աղար** ձևերը, որոնք նախախորհրդային շրջանի քերականություններում միակ հանձնարարելի ձևերն էին: Մ. Աբեղյանի վկայությամբ, սրանք գործածվում էին նաև առանց **ր**-ի՝ **մի կարդա, մի՛ աղա,** որոնք լեզվի զարգացման խորհրդային շրջանում ամրացան որպես հանձնարարելի ձևեր, ընդունելի ձևեր՝ թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքում:

Գործածությունից դուրս են եկել նախախորհրդային շրջանում տարածված **մի + անորոշ դերբայ** կաղապարով կազմված եզակի արգելականի ձևերը՝ **մի՛ գրիլ, մի՛ կարդալ**:

Ժամանակակից գրական հայերենը որդեգրել է արգելականի կազմության հետևյալ եղանակը. եզակի արգելականը կազմվում է դրականի ձևերի վրա **մի՛** ավելացնելով (մի՛ խոսիր, մի՛ գնա), իսկ հոգնակի արգելականը՝ անորոշ դերբայի լ-ի փոխարեն **ք** գրելով՝ **մի խոսեք, մի գրեք, մի կարդաք:** Նորմատիվ քերականություններում էլ սահմանվում է, որ <u>արգելական հրամայականի եզակի թիվը բոլոր բայերի համար կազմվում է հրամայականի դրական ձևերից՝ **մի՛** մասնիկով, իսկ հոգնակի թիվը բոլոր բայերի համար կազմվում է **մի՛** արգելական մասնիկով և անորոշ դերբայով, որի վերջին լ-ն փոխվում է **ք**-ի</u>: Սակայն արգելականի կազմության այս օրինաչափությունը, նորմով սահմանվածն այժմ փոխվում է: Քանի որ պարզ բայերի դեպքում հրամայականի դրական և արգելական ձևերը նույնանում են, ինչպես՝ **գրի՛ր-մի՛ գրիր, կարդա՛ - մի՛ կարդա, նստի՛ր – մի՛ նստիր, նայի՛ր – մի՛ նայիր**, սրանց համաբանությամբ բայերը հոգնակի արգելականը նույն ձևով կազմելու միտում են դրսևորում, որը և գնալով ավելի ու ավելի է տարածվում: **Ա** խոնարհման բայերի **մի՛ խաղաք, մի՛ կարդաք, մի՛ մնաք** և նման արգելական ձևերը հնաբանություն

են, երբեմն գործածվում են վերամբարձ գրքային խոսքում (տես՝ 61, էջ 61): Նույն տեղում սահմանված է. «Եզակի թվում **մի՛** մասնիկն ավելանում է դրական հրամայականի ձևերի վրա: Հոգնակի թվում նույնպես **մի՛** մասնիկն ավելանում է բուն հրամայականի ձևերի վրա, միայն թե **ե** խոնարհման բայերի **-եցեք** վերջավորության **-եց** մասն ընկնում է (մի+նստեցեք → մի՛ նստեք)» (61, էջ 61):

-են-, -ան- սոսկածանցավոր բայերի եզակի արգելականի՝ նախավերջին շրջանում տարածված **մի՛ վախենար, մի՛ մոտենար** ձևերն այժմ լեզվից դուրս են մղվել՝ փոխարինվելով **մի՛ վախենա, մի՛ մոտենա** ձևերով (գուցե **ա** լծորդության պարզ բայերի արգելականի համաբանությամբ՝ կարդալ – **մի՛ կարդա**), մասամբ նաև՝ **մի՛ վախեցիր, մի՛ մոտեցիր** կազմություններով ոչ միայն բանավոր, այլև գրավոր խոսքում:

Կենդանի խոսակցական լեզուն, որ ընդհանրապես ձգտում է միօրինակության, ահա ընտրել է արգելականը կազմելու ավելի հեշտ միջոց՝ դրական ձևերի վրա պարզապես **մի՛** ավելացնելու միջոցը. առայժմ այդ միջոցը տարածվում է **-ան-, -են-** սոսկածանցն ունեցող բայերի վրա, որոնց արգելականները բանավոր խոսքում հիմնականում հանդես են գալիս կատարյալի հիմքով, ինչպես **մի՛ մոտեցիր մի՛ մոտեցեք, մի՛ հասկացիր – մի՛ հասկացեք**: Նկատելի է, որ այս ձևերը սկսել են թափանցել գրավոր խոսքի մեջ: Նորմատիվ քերականություններում սահմանվում է, որ սոսկածանցավոր բայերի արգելական հրամայականի ձևերը կազմվում են և՛ ներկայի հիմքից, և՛ կատարյալի հիմքից: Ներկայի հիմքից կազմված ձևերում **ա** խոնարհման բայերի անորոշի **լ**-ն ընկնում է, իսկ **ե** խոնարհման բայերի **ել** վերջավորությունը փոխարինվում է **իր** վերջավորությամբ՝ **մի՛ մեծանա, մի՛ հասնիր**, իսկ հոգնակի թվում անորոշ դերբայի **լ**-ն փոխարինվում է **ք**-ով՝ **մի մեծանաք, մի՛ հասնեք**: Գործածական են նաև կատարյալի հիմքից կազմված արգելական հրամայականի ձևերը: Արդյունքում զուգաձևություններ են՝ **մի՛ հասկանա // մի՛ հասկացիր, մի՛ զարգանա // մի՛ զարգացիր, մի՛ լավանա // մի՛ լավացիր, մի՛ մոտենա // մի՛ մոտեցիր, մի՛ հեռանա // մի՛ հեռացիր, մի՛ թռչիր // մի՛ թռիր, մի՛ հասնիր // մի՛ հասիր, մի՛ սառչիր // մի՛ սառիր, մի՛ կորչիր // մի՛ կորիր, մի՛ մտնիր // մի՛ մտիր, մի՛ փախչիր // մի՛ փախիր, մի՛ գտնիր // մի՛ գտիր և մի՛ հասկանաք // մի՛ հասկացեք, մի՛**

զարգանաք // մի՛ զարգացեք, մի՛ լավանաք // մի՛ լավացեք, մի՛ մոտենաք // մի՛ մոտեցեք, մի՛ հեռանաք // մի՛ հեռացեք, մի՛ թռչեք // մի՛ թռեք, մի՛ հասնեք // մի՛ հասեք, մի՛ սառչեք // մի՛ սառեք, մի՛ կորչեք // մի՛ կորեք, մի՛ մտնեք // մի՛ մտեք, մի՛ փախչեք // մի՛ փախեք, մի՛ գտնեք // մի՛ գտեք: Առաջին տարբերակները նորմով սահմանվածներն են, որոնք հնաբանությունների վերածվելու միտում ունեն. պատճառը երկրորդների առավել աշխուժացումն է ու տարածումը, բայց դեռևս նորմատիվ քերականություններում սրանց կողքին նշվում է՝ «գործածական են նաև...», «նախընտրելի են», «արդեն գրական նորմի արժեք ունեն» կամ էլ երկրորդաբար են հիշատակվում: Սրանք կանոնական համազոր տարբերակներ են՝ հնի և նորի հակադրությամբ՝ նորի հաղթանակի միտմամբ: Այսօր խիստ արհեստական և կեղծ գրական են **մի՛ թռչիր, մի՛ անցնիր, մի՛ վախեցնիր** «գերճիշտ» ձևերը:

Մ. Ասատրյանը գրում է. «Սխալված չենք լինի, եթե ասենք, որ **արդի հայերենում արգելական հրամայականի ձևերը կազմվում են դրական հրամայականից**: Այսպես, եթե հաշվի չառնենք ժամանակակից լեզվում արդեն հնաբանությունների վերածվող կազմությունները, արգելական հրամայականի ձևերը կունենան հետևյալ պատկերը՝

դրական եզակի	արգելական եզակի	դրական հոգնակի	արգելական հոգնակի
գրիր	մի գրիր	գրեցեք	–մի գրեցեք
(գրի	մի գրի)	(գրեք	– մի գրեք)
փախիր	մի փախիր	փախեք	– մի փախեք
գտիր	մի գտիր	գտեք	– մի գտեք
բարձրացրու	մի բարձրացրու	բարձրացրեք	– մի բարձրացրեք
կարդա	մի կարդա	կարդացեք	– մի կարդացեք
բարձրացիր	մի բարձրացիր	բարձրացեք	- մի բարձրացեք»

(33, էջ 329-330):

Այսօր ներկայի հիմքից են կազմվում պարզ, բազմապատկական, կրավորական բայերի եզակիի ձևերը: Խոսակցական լեզուն ընտրել է հրամայականի դրական և ժխտական ձևերի միահիմք կազմություն, որը մեծապես հեշտացրել է հրամայականի առանց այն էլ բարդ համակարգը: Բնականաբար նման ձևերը թափանցել են գրական հայերեն, և նույն միտումն ունեն նաև գրական հայերենում:

Մի՛ կարդաք // մի՛ կարդացեք, մի՛ խաղաք // մի՛ խաղացեք և նման զուգաձևություններում առաջին եզրերը վերածվում են հնաբանությունների կամ հնաբանություններ դառնալու ճանապարհին են, իսկ երկրորդ եզրերը նորաբանություններ են և արդեն բարձրացել են նորմի աստիճանի. մնում է սրանք օրինաչափության վերածել և ամրակայել նորմում: Մեր օրերի նորմատիվ քերականություններում նշվում են այս կիրառությունները, և այս նորամուտ ձևերը հնաբանությունների վերածվող ձևերի կողքին կշարունակեն համազոր, ազատ տարբերակներ դիտվել այնքան ժամանակ, քանի դեռ «վերևից» չեն օրինականացվել, որով և մյուսները կդադարեն մրցակից տարբերակ լինելուց և որպես հնացած ձևեր՝ այլևս չեն կիրառվի:

Մերօրյա հայերենում պատճառական բայերի դեպքում **մի** մասնիկն առավելապես դրվում է անցյալ կատարյալի հիմքից կազմված բուն հրամայականի ձևերի վրա, և հետևյալ զուգաձևություններում՝ **մի՛ մոտեցնիր // մի՛ մոտեցրու, մի՛ հասկացնիր // մի՛ հասկացրու, մի՛ խաղացնիր // մի՛ խաղացրու, մի՛ բարձրացնիր // մի բարձրացրու, մի՛ թռցնիր // մի՛ թռցրու, մի՛ մոտեցնեք // մի՛ մոտեցրեք, մի՛ հասկացնեք // մի՛ հասկացրեք, մի՛ խաղացնեք // մի՛ խաղացրեք, մի՛ բարձրացնեք // մի՛ բարձրացրեք, մի՛ թռցնեք // մի՛ թռցրեք,** առաջինները հնաբանություններ են, բայց նորմատիվ քերականություններում արծանագրված, ուրեմն՝ կանոնական: Սրանց կողքին կանոնական, գործածելի տարբերակներ են նաև երկրորդները, որոնք նույնպես նորմատիվ քերականություններում ամրակայված են, և որոնք հաղթանակ տանելու միտում ունեն: Ինչ վերաբերում է Ֆ. Խլղաթյանի դպրոցական դասագրքում բերված զուգաձևությանը՝ **մի՛ նստեցնի // մի՛ նստեցրու, մի՛ խաղացնի // մի՛ խաղացրու**, ապա առաջինները հայոց լեզվում նկատվող միտումներից մեկի դրսևորումն են, **մի՛ նստեցնիր, մի՛ խաղացնիր** ձևերի՝ **ր**-ի անկումով տարբերակներ, որոնք, սակայն, օրենքի ուժ չունեն, դեռևս խոսակցական լեզվում են առկա, չնայած որ այնտեղից շատ հաճախ թափանցում են գրական լեզվի մեջ:

Լեզվական նորմի տեսակետից ճիշտ չէ նաև պատճառականի արգելական ձևերում վերջին **ու**-ի փոխարեն **ա** գրելը. **մի՛ վազեցրու // մի՛ վազեցրա, մի խաղացրու // մի՛ խաղացրա, մի՛ խոսեց-**

րու // մի՛ խոսեցրա զուգաձևություններում երկրորդները խոսակցական են և ոչ հանձնարարելի:

Մինչև վերջերս ոչ հանձնարարելի տարբերակներ էին որակվում **մի՛ վազի, մի՛ երգի, մի՛ նայի, մի՛ խոսի, մի՛ հանի, մի՛ փախի** ժողովրդախոսակցական ձևերը **մի՛ վազիր, մի՛ երգիր, մի՛ նայիր, մի՛ խոսիր, մի՛ հանիր, մի՛ փախիր (մի՛ փախչիր)** ձևերի կողքին: Բանավոր խոսքում, մասնավորապես ժողովրդա-խոսակցական լեզվում, եզակի արգելականները, ճիշտ ինչպես եզակի դրականի ձևերը, հանդես են գալիս **ի** վերջավորությամբ (**վազի՛, նստի՛, գրի՛** և այլն **վազի՛ր, նստի՛ր, գրի՛ր...** ձևերի փոխարեն). այս սխալ կազմությունները գեղարվեստական գրականության միջոցով գրական լեզվի մեջ են թափանցել: Այժմ ավելի հաճախ կարելի է լսել **մի՛ վազի, մի՛ երգի, մի՛ պարի, մի՛ աղմկի,** քան **մի՛ վազիր, մի՛ երգիր, մի՛ պարիր, մի՛ աղմկիր**: Հետաքրքրական է, որ մեր լեզվի զարգացման նախորդ շրջանում գերադասելի էին **ա** խոնարհման բայերի **ր**-ով ձևերը՝ **մի՛ կարդար, մի՛ գրիր, մի՛ բարկանար, մի՛ զարմանար**: Այսօրվա հայերենում ճիշտ են առանց **ր**-ի ձևերը՝ **մի՛ կարդա, մի՛ զարմանա, մի՛ բարկանա... Մի՛ բարձրանար // մի՛ բարձրանա // մի՛ բարձրացիր // մի՛ բարձրացի, մի՛ զարմանար // մի՛ զարմանա // մի՛ զարմացիր // մի՛ զարմացի** քառաձևություններում առաջինները հնաբանություններ են, երկրորդները կանոնական են, գրական, երրորդները նոր ձևեր են, որ կանոն դառնալու իրավունք են նվաճել, չորրորդները նորամուտ ձևեր են: **Ա** խոնարհման բայերի համաբանությամբ **ր**-ն ընկնում է նաև **ե** խոնարհման բայերի եզակի արգելականում: Հ. Բարսեղյանը գրում է. « Գրի՛ր, խոսի՛ր, նստի՛ր, վազի՛ր, մի՛ գրիր, մի՛ խոսիր, մի՛ նստիր, մի՛ վազիր ձևերին զուգահեռ ամենուրեք կարելի է լսել՝ գրի՛, խոսի՛, նստի՛, վազի՛, մանավանդ՝ մի՛ գրի, մի՛ նստի, մի՛ խոսի, մի՛ վազի ոչ ճիշտ կամ բարբառային ձևերի գործածությունը: Այդպիսի բազմաթիվ օրինակներ կարելի է հանդիպել նաև գրավոր լեզվում» (37, էջ 211): Մերօրյա հայերեն խոսքի ուղեցույցներից մեկում նույն ձևերի համար արդեն գրվում է. «Սակայն այսօրվա լեզվում նման կազմություններն առանց վերջին **Ր**-ի են ճիշտ դիտվում՝ **մի՛ վազի, մի՛ բարկանա** (նաև՝ **մի՛ բարկացիր, մի՛ զարմացիր** արդեն **Ր**-ով)» (41, էջ 101):

Ուրեմն՝ նախկին «ոչ ճիշտ» կամ «բարբառային» ձևերը այսօր կանոնական դառնալու իրավունք են պահանջում:

Ինչ վերաբերում է գեղարվեստական գրականության մեջ հաճախաբար հանդիպող **մի՛ երգե, մի՛ կանչե, մի՛ կարկաչե** և նման ձևերի գործածությանը, ապա սրանք կամ բարբառային ազդեցության արդյունք են, կամ հանգավորմամբ են արդարացվում, կամ էլ զուտ ոճական նպատակներով են կիրառվում **մի՛ երգիր, մի՛ կանչիր, մի՛ կարկաչիր** ձևերի փոխարեն:

Այսպիսով՝ հոգնակի արգելականի կազմության ժամանակ **մի** մասնիկը դրվում է ըղձականի ձևերի վրա (**մի՛ գրեք, մի՛ հեռանաք, մի՛ կարդաք**): Լեզուն, ձգտելով միօրինակության, վերջին շրջանում ստեղծել է արգելական հրամայականի կազմության միասնական ձև՝ **մի**-ն ավելանում է բուն հրամայականներին նաև հոգնակի ձևերում, ինչպես՝ **մի՛ հեռացեք, մի՛ կարդացեք, մի՛ մոտեցեք, մի՛ մոտեցրեք** և այլն, որոնք այսօր բարձրացել են նորմի աստիճանի:

Դպրոցական դասագրքերից մեկում մատնանշված է ժխտականի կազմության մի սխալ ձև ևս՝ **մի**-ի փոխարեն **միք-**ով կազմելը. «Հրամայականի մի՛ ջրիր, մի՛ ջրեք ճիշտ ձևերի փոխարեն երբեմն գործածում են մի՛ ջրի, մի՛ք ջրի սխալ ձևերը. (13, էջ 229): Իսկապես, ժամանակակից հայերենի ժողովրդախոսակցական գոյաձևում տարածված է և այնտեղից երբեմն գրավոր լեզվի մեջ մուտք է գործում նաև ժխտական դերբայի և **միք** մասնիկի համադրմամբ ձևը՝ հոգնակի արգելականի համար, ըստ որում հոգնակերտ **ք** մասնիկը ավելանում է **մի**-ին, սակայն արդեն ոչ թե **լ**-ով բայաձևերի վրա՝ **միք մոռանալ**, այլ առանց **լ**-ի՝ **միք շտապի, միք պարծենա**: Հաճախ էլ **միք**-ի փոխարեն **մեք**-ն է գործածվում: **Մի՛ վազեք // մի՛ք վազեք // մի՛ք վազի // մե՛ք վազի, մի՛ մոտենաք // մի՛ք մոտենաք // մի՛ք մոտենա // մե՛ք մոտենա, մի՛ խոսեք // մի՛ք խոսեք // մի՛ք խոսի // մե՛ք խոսի** և նման ձևերում երկրորդ, երրորդ և չորրորդ տարբերակները բարբառային են, ժողովրդախոսակցական, ոչ հանձնարարելի և գրեթե անկենսունակ: Սրանք լեզուն աղավաղող, խոտելի գործածություններ են. «**Մի** արգելականի փոխարեն հոգնակի նշանակությամբ **միք, մեք** ձևերի գործածությունը, որ սովորական է խոսակցական լեզվում (օրինակ՝ **միք // մեք խոսի // միք // մեք խոսեք**) խոտելի է գրական լեզվում»,- գրում է Ալ. Մարգարյանը (80, էջ 486):

Նույնի մասին Պ. Բեդիրյանը գրում է. «Այսօր ձեր շրջապատում շատ-շատերից կարող են լսել՝ մի՛ք (կամ նույնիսկ մե՛ք) զարմանա, մի՛ք /մե՛ք խանգարի և այլն:

Սխալի էությունն այն է, որ **մի-**ն մասնիկ է, իսկ լեզվական այդպիսի միավորը չի կարող եզակի/հոգնակի հակադիր ձևերով դրվել: Այնպես որ լեզուն **մի՛** *աղավաղեք,* **մի՛ք**-ն ու **մե՛ք**-ը ձեր խոսքից դու՛րս քշեցեք և միայն **մի՛**-ն գործածեցե՛ք» (41, էջ 102):

Լվանալ բայը արգելական հրամայականում ևս զուգաձևություններ ունի՝ **մի՛ լվանա // մի՛ լվա, մի՛ լվանաք // մի՛ լվացեք,** և եզրերը կանոնական են, համազոր:

Գիտեմ բայը պակասավոր բայ է. ունի հրամայականի բազմաթիվ ձևեր, որոնք գրեթե բոլորն էլ հնացած են կամ անգործածական: Օրինակ՝ **գիտցի՛ր, գիտցե՛ք, մի՛ գիտցիր, մի՛ գիտցեք, մի՛ գիտնար, մի՛ գիտնաք** կազմությունները, որոնք բոլորն էլ հանձնարարելի էին Ա. Ղարիբյանի դասագրքում (75, էջ 287): Նկատելի է, որ վերջին շրջանում այս բայի հրամայականի ձևերը փոխարինվում են **իմանալ** բայի համապատասխան ձևերով՝ **իմացի՛ր, իմացե՛ք, մի՛ իմանա, մի՛ իմանաք,** նաև՝ **մի՛ իմացիր, մի՛ իմացեք:**

Ժողովրդախոսակցական են **մի՛ լից, մի՛ քից, մի՛ լցեք, մի՛ քցեք** արգելականները, և **մի՛ լցրու // մի՛ լից, մի՛ գցիր // մի՛ քից, մի՛ լցրեք // մի՛ լցեք, մի՛ գցեք // մի՛ քցեք** զուգաձևություններում գրական են առաջին տարբերակները:

Ուրեմն՝ ժամանակակից հայերենում հրամայականի արգելականը **մի** մասնիկով հաստատական հրամայականից կազմելու միտումն ակնհայտ է:

Հարադիր բայերի արգելական հրամայականում **մի** մասնիկը սովորաբար բայ բաղադրիչից առաջ է դրվում՝ **թույլ մի՛ տուր, ներս մի՛ մտիր** ..., բայց **մի՛** արգելականը կարող է դրվել նաև ամբողջ հարադրավոր բայից առաջ՝ **մի՛ թույլ տուր, մի՛ ներս մտիր**... Արդյունքում զուգաձևություններ են՝ **թույլ մի՛ տուր // մի՛ թույլ տուր, ներս մի՛ մտիր // մի՛ ներս մտիր, լաց մի՛ լինիր // մի՛ լաց լինիր**... Բնականաբար այս տիպի ձևաբանական-շարադասական զուգաձևություններում գերադասելի են առաջին ձևերը. երկրորդները կանոնի աստիճանի չեն բարձրացել և հանձնարարելի չեն:

Հ. Բարսեղյանը արգելական հրամայականի կազմության մի այլ ձև էլ է նշում իր «Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն» գրքում. «Արգելական ձևերի կազմությանը երբեմն «մի»-ի փոխարեն մասնակցում է **ոչ** ժխտական մակբայը» (37, էջ 209): Մերօրյա հայերենում **ոչ**-ը արգելական հրամայականի ցուցիչ համարելը լեզվական նորմի տեսակետից սխալ է. այն հրամայականի ժխտական ձևերի կազմության համար մի կանոն է սահմանել՝ <u>հրամայական եղանակի ժխտական ձևերը կազմվում են **մի** մասնիկի օգնությամբ</u>:

Հրամայական եղանակի ժխտական ձևերում շեշտվում է ոչ թե բայը, այլ **մի** արգելականը: Իսկ երբ նրանց զուգահեռ գործածվում են այնպիսի տարբերակներ, որոնցում ոչ թե **մի**-ն է շեշտվում, այլ բայը, արդեն այդ ձևերը դադարում են արգելական հրամայական լինելուց. **մի**-ն այստեղ հանդես է գալիս որպես եղանակավորող մասնիկ և ունի ոչ թե ժխտական իմաստ, այլ հրամանը, ապահանջը, հորդորը մեղմելու իմաստ, և **մի՛ տես // մի տե՛ս, մի՛ նայիր // մի նայի՛ր, մի՛ հեռացիր // մի հեռացի՛ր, մի՛ հեռացեք // մի հեռացե՛ք, մի՛ կանգնեք // մի կանգնե՛ք** շեշտադրական զուգաձևություններում երկրորդ տարբերակներում **մի**-ն եղանակավորող մասնիկ է և մեղմում է բայով արտահայտված գործողության կատարման հրամանը:

Այսպիսով՝ եթե մեր լեզվի վաղ շրջանում հաստատական ձևերից ժխտական ձևերի կազմումը ճիշտ չէր, ապա այսօր այդ «անուղիղ» ձևերը արդյունք են միօրինակացման և միասնականացման միտումի: Այստեղ էլ հին ու նորը, մահացողն ու կենսունակը ապրում են կողք կողքի, և խուլ պայքար կա նրանց միջև, հատկապես բանավոր խոսքում տարածվող ձևերի և գրավոր խոսքում արմատացացած ու ժամանակակից լեզվական նորմով ճիշտ համարվող ձևերի միջև: Իսկ թե ինչպե՞ս կավարտվի այս պայքարը, դժվար է ասել, սակայն մի բան պարզ է. լեզուն ձգտում է միօրինակացման. գնալով ծավալվում, հաղթող ու տիրապետող են դառնում դրական խոնարհման ձևերի համաբանությամբ կազմված արգելականի ձևերը: Պարզ է նաև, որ այս մանրահամակարգը նորմավորելիս նորից անկարելի է անտեսել տերյանական ճշմարտությունը՝ ժողովրդական բնազդը այստեղ էլ ավելի առողջ է և զորեղ:

Ժխտական խոնարհման համակարգում ևս կենդանի լեզվագործածությունն է սահմանում լեզվական կանոնը, որոշում լեզվա-

կան նորմի սահմանները և պահանջում է, թելադրում ավանդախախտմամբ ավանդաստեղծական աշխատանք կատարել...

Զուգաձևություններն անկանոն բայերի մանրահամակարգում

Անկանոն բայերը ժամանակակից արևելահայ գրական լեզվի խոնարհման ընդհանուր կանոններից շեղվող բայեր են, այսինքն՝ հարացույցի որևէ մասում, շեղվելով համակարգային, օրինաչափական կաղապարներից, ձևավորվում են կա՛մ ուրույն հիմքակազմութ-յամբ, կա՛մ մասնիկավորմամբ և կա՛մ դրանց համակցումով. մեծ թիվ չեն կազմում (շուրջ 20 բայ՝ **ուտել, վեր կենալ, ելնել, տեսնել, ասել, առնել, բերել, բառնալ, զարկել, բանալ, դնել, անել, տանել, լվանալ, թողնել, դառնալ, լինել, գալ, լալ, տալ,** որոնցից ընդգծվածները կազմությամբ պարզ են), հատկանշվում են ձևաբանական, կառուցվածքային և խոնարհման տարատեսակ առանձնահատկություններով ու դրսևորումներով:

Լեզվի համակարգայնության միտումն այստեղ էլ ուժեղ գործոն է. աշխատում է լրիվ կամ մասամբ վերացնել անկանոնությունը նորմով սահմանված օրինաչափ և կանոնական կաղապարների համաբանությամբ. արդյունքում նորից զուգաձևությունների առկայությունն է՝ առավելապես համակարգային և հակահամակարգային տարբերակներով: Այստեղ ևս անհրաժեշտ է ընդգծել՝ զարգացող հայերենի համար տարբերակային ձևերի, զուգաձևությունների, զուգահեռությունների գոյությունն անխուսափելի է:

Անկանոնություններն ու շեղումները լինում են սահմանական եղանակի անցյալ կատարյալում, անցյալի հիմքով կազմվող վաղակատար, հարակատար, երբեմն էլ՝ ենթակայական դերբայներում և հրամայական եղանակում: Այս անկանոնություններով հանդերձ՝ սրանք սահմանված են լեզվական նորմով և օրինաչափ են, թեպետև հակահամակարգային ձևեր են: Հարցը զուգահեռ ձևերով, տարբերակներով հանդես գալն է, տարակարծությունը կանոնական և անկանոնի զուգահեռ, կողք կողքի գործածության վերաբերյալ է, որով լեզվական նորմի հարաբերական կայունությունը խախտ-

վում է, նրա սահմանները տեղաշարժվում են: Միօրինակացման և համաբանության միտումն ամենից ավելի կենսունակ է անկանոն բայերի ոլորտում, որտեղ զուգաձևությունները զգալի չափերի են հասնում: Այստեղ դժվար է հանձնարարելի, ճիշտ ձևեր նշել. այստեղ առավելապես զգացվում է լեզվական նորմից կախվածությունը:

Խոնարհման զուգահեռ ձևեր շատ են հանդիպում հատկապես անկանոն բայերի անցյալի հիմքից կազմված ձևերում, առավելապես անցյալ կատարյալի իմաստն արտահայտելու համար: Անկանոն բայերի շարքում զուգաձևությունները ներկայացնելու համար առավել հարմար է դրանք բաժանել հետևյալ խմբերի՝

Ա. բայեր, որոնք կանոնավոր խոնարհումից շեղվող ձևերում հիմքի փոփոխություն չեն կրում և արտահայտվում են նույն արմատով /նույնահիմքությամբ/՝ նույնարմատ անկանոն բայեր.

Բ. բայեր, որոնց խոնարհման կանոնավոր ձևերն արտահայտվում են բուն արմատով, իսկ շեղվող ձևերը՝ դրա փոփոխված ձևերով՝ այլաբուն անկանոն բայեր.

Գ. բայեր, որոնց խոնարհման կանոնավոր ձևերը արտահայտվում են բուն արմատով, իսկ շեղվող ձևերը՝ մի այլ արմատով՝ տարահիմքությամբ՝ այլարմատ կամ տարարմատ անկանոն բայեր:

Առաջին խմբի մեջ մտնում են **առնել, ասել, բերել, զարկել, ելնել, թողնել, տեսնել** բայերը: Սրանցից **առնել, ելնել, թողնել, տեսնել** բայերի կատարյալի հիմքը պարզապես **ն** սոսկածանցի անկումով է կազմվում՝ նորմով սահմանված ձևով:

Առնել բայը զուգահեռ ձևեր ունի միայն հրամայական եղանակում՝ **մի առնիր // մի՛ առ** և **մի՛ առնեք // մի՛ առեք**. այլևս գործածած չէ Ստ. Պալասանյանի կողմից նշված **մի՛ առնի** ձևը: Առաջին տարբերակները հնացած են, և գրական նորմով սահմանված են դրական ձևերից (**ա՛ռ, առե՛ք**) կազմված **մի՛ առ** և **մի՛ առեք** ձևերը: Նշված զուգաձևությունը պահպանվում է նաև հարադրական բարդության բաղադրիչ լինելու դեպքում՝ **հաշվի մի՛ առնիր // հաշվի մի՛ առ, կանգ մի՛ առնիր // կանգ մի՛ առ**, իսկ **մի** արգելականի տեղափոխական զուգաձևություններում՝ **հաշվի մի՛ առ // մի՛ հաշվի առ, կանգ մի՛ առ // մի՛ կանգ առ**, կանոնական են առաջին տարբերակները, **մի՛ հաշվի առնիր** և **մի՛ կանգ առնիր, մի՛ հաշվի առեք** ձևերը նաև հնացած են:

Ելնել բայը խոնարհվում է **ն** սոսկածանցավոր բայերի պես և զուգահեռ ձևեր ունի նույնպես հրամայական եղանակի եզակի թվում՝ **ե՛լ // ելի՛ր** և արգելական հրամայականի ձևերում՝ **մի՛ ելիր // մի՛ ելնիր // մի՛ ել** և **մի՛ ելնեք // մի՛ ելեք**: Տարածված են **ելի՛ր, մի՛ ելիր, մի՛ ելեք** «կանոնավոր» ձևերը, **ե՛լ** և **մի՛ ել** ձևերը խոսակցական բնույթ ունեն, իսկ ներկայի հիմքից կազմված **մի՛ ելնիր, մի՛ ելնեք** ձևերը հնացած են:

Լեզվական նորմում հաստատված կանոնի համաձայն **թողնել** բայի անցյալ կատարյալի հիմքով են կազմվում նրա հարակատար և վաղակատար դերբայները՝ **թողած, թողել**, ենթակայականի կազմության դեպքում զուգաձևություն կա՝ **թողնող // թողող**, որում երկրորդը խոսակցական է: **Թողնել** բայը անցյալ կատարյալում արտահայտվում է արմատական և ցոյական հիմքերով, որով և զուգահեռ ձևեր են առաջանում՝ **թողի // թողեցի, թողիր // թողեցիր, թողինք // թողեցինք, թողիք // թողեցիք, թողին // թողեցին**: Սրանք հավասարապես գործածվող հիմքատարբերակներ են: Հրամայականում ևս հիմքակազմական զուգաձևություններ կան՝ **մի թողի՛ր // մի՛ թող // մի՛ թողնիր** և **մի՛ թողեք // մի՛ թողնեք**. սրանցից գերադասելի տարբերակներ են անցյալ կատարյալի հիմքով կազմվածները՝ **մի՛ թող, մի՛ թողեք**. անօգտագործելի է **թողեցե՛ք** ձևը: Բայի՝ իր անկանոնությամբ պայմանավորված զուգաձևությունները պահպանվում են նաև հարադրության բաղադրիչ լինելու դեպքում՝ **բաց թողի // բաց թողեցի..., բաց մի՛ թող // բաց մի՛ թողնիր...**

Թո՛ղ // թող նույնանուն զուգաձևություն էլ կա, ուր քերականական տարբեր իմաստներ նույն ձևով են արտահայտվում. մեկը հրամայական եղանակի բայ է, մյուսը՝ եղանակավորող բառ:

Տեսնել բայը ևս խոնարհվում է **ն** սոսկածանցն ունեցող բայերի պես՝ կանոնական ձևով, և զուգաձևություններ է կազմում միայն արգելական հրամայականում. **մի՛ տեսնիր // մի՛ տես, մի՛ տեսնեք // մի՛ տեսեք** զուգաձևություններում տարածված է **մի + դրական ձև** կառուցվածքը՝ **մի՛ տես, մի՛ տեսէք**. առաջին տարբերակները հնացած են:

Ինչպես երևում է, անկանոն բայերի արգելականները հավասարապես տարածված են «մի + դրական ձև» կառուցվածքով, մի կա-

ռուցվածք, որը տարածվում է նաև կանոնավոր բայերի արգելականի կազմության վրա (պարզ թե ածանցյալ):

Ասել բայը անկանոն է՝ անցյալ կատարյալում կատարյալի հիմքի **-եց**-ի փոխարեն ունի **-աց**: Նկատելի է, որ **ասել** բայը **ե** խոնարհման կանոնավոր բայերի նմանակությամբ խոսակցական լեզվում գործածվում է **ասեցի, ասեցիր, ասեց**... ձևերով, որոնք թափանցել են ու շարունակում են թափանցել գրավոր խոսքի մեջ. խիստ տարածված են և ավելի համակարգային են: Նման գործածությունների դեմ «լեզվական պայքար» է գնում, սակայն դրանք դեռևս միտում են գրական նորմի աստիճանին բարձրանալու: Դեռ գրաբարում **ասել** բայը բացառություն էր, և այդ բացառությունն էլ արդի հայերենը ավանդաբար պահել է: Այսպիսով՝ **ասացի // ասեցի // ասի, ասացիր // ասեցիր // ասիր, ասաց // ասեց // ասավ, ասացինք // ասեցինք // ասինք, ասացիք // ասեցիք // ասիք, ասացին // ասեցին // ասին** եռաձևություններում առաջին տարբերակներն օրինաչափական են, ավանդական, երկրորդները կանոնավոր ոչ համազոր տարբերակներ են, առաջինը՝ հնավանդ, երկրորդը՝ նորաստեղծ՝ համաբանությամբ կազմված և բնորոշ գրական խոսակցական լեզվին, իսկ երրորդները ոչ կանոնական տարբերակներ են, խոսակցական-բարբառային, ուստի և՝ մերժելի: Լեզվական նորմը սահմանում է, որ **ասել** բայի հրամայական եղանակի ձևերը ևս կազմվում են **ա** խոնարհման պարզ բայերի նման՝ **ասա՛ - ասացե՛ք, մի՛ ասա - մի՛ ասացեք**: **Ասա՛ // ասի՛ր, ասացե՛ք // ասեցե՛ք // ասե՛ք** և **մի՛ ասա // մի՛ ասիր, մի՛ ասացեք // մի՛ ասեցեք // մի՛ ասեք** զուգահեռ ձևերում **ասի՛ր** և **մի՛ ասիր** ձևերը թեպետև համակարգային են, բայց ոչ գործածական, ոչ գրական. **ե** խոնարհման կանոնավոր բայերի նմանակության արդյունք են, **ասե՛ք և մի՛ ասեք** տարբերակների գործածական հաճախականությունը մեծ է, իսկ **ասեցե՛ք** և **մի ասեցե՛ք** կազմությունը անցյալ կատարյալի ոչ հանձնարարելի հիմքից է առաջացել:

Կրկնահիմք է նաև **բերել** բայը, որը ոչ միայն արմատական, այլև, դարձյալ նմանակության օրենքով, ցոյական հիմքով է կազմվում, և արդյունքում զուգաձևություններ են, որոնք կարող են հասցնել լեզվական նորմի փոփոխության՝ **բեր // բերեց**, և եթե լեզվի զարգացման վաղ շրջանում գերիշխող էր առաջին տարբերակը,

ապա այսօր **բերի // բերեցի, բերիր // բերեցիր, բերավ // բերեց, բերինք // բերեցինք, բերիք // բերեցիք, բերին // բերեցին** զուգաձևություններում գերադասությունը տրվում է ցոյական կազմություններին՝ **ե** խոնարհման կանոնավոր բայերի համաբանությամբ կազմված «կանոնավոր» ձևերին: Առաջին եզրը ցանկալի չէ, խոսքին տալիս է ժողովրդախոսակցական երանգ, իսկ անցոյական եզակի երրորդ դեմքի **բերավ** ձևը բացարձակ հնաբանություն է և ոչ հանձնարարելի: Հրամայականի ձևերն են՝ **բե՛ր և բերե՛ք, մի՛ բեր** և **մի՛ բերեք**: Ս. Պալասանյանի գրքում որպես հանձնարարելի **մի՛ բերիր** ձևն այժմ մերժված է: **ե** խոնարհման կանոնավոր բայերի համաբանությամբ տարածված է ժողովրդախոսակցական լեզվում այս բայի «կանոնավոր» հրամայականը՝ **բերեցե՛ք**: Բարբառային է և ոչ հանձնարարելի **մի՛ բերի** ձևը: Ձույգ ձևերը պահպանվում են նաև հարադրության բաղադրիչ լինելու դեպքում:

Ձարկել // զարնել զուգաձևության մեջ **զարնել**-ը հնացած է և ոչ գործածական: **Ձարկել** բայը խոնարհվում է **ե** խոնարհման պարզ բայերի պես: Շեղումներ կան սահմանական եղանակի անցյալ կատարյալում և հրամայական եղանակում: **Ձարկի // զարկեցի, զարկիր // զարկեցիր, զարկինք // զարկեցինք, զարկիք // զարկեցիք, զարկին // զարկեցին** հիմքատարբերակային զուգաձևությունները այդ բայի՝ անցյալի երկու հիմք ունենալու հետևանք են: Առաջին ձևերն արդեն դուրս են եկել գործածությունից և հանդիպում են միայն խոսակցական լեզվում. օրինաչափական են երկրորդները: Մի խոսքով՝ անկանոն բայերի անցյալ կատարյալի անցոյական ձևերը առավել բնորոշ են ժողովրդախոսակցական լեզվին: **Ձարկել** բայի հրամայականի զուգահեռ ձևերում՝ **զա՛րկ // զարկի՛ր // զարկի՛, զարկեցե՛ք // զարկե՛ք** և **մի՛ զարկ // մի՛ զարկիր // մի՛ զարկի, մի՛ զարկեցեք // մի՛ զարկեք, ե** խոնարհման պարզ բայերի համաբանությամբ ունենք **զարկի՛ր, զարկեցե՛ք** և **մի՛ զարկիր, մի՛ զարկեցեք** ձևերը: **Զա՛րկ**-ը դուրս է մնացել նորմից. **զարկի՛, մի՛ զարկի** ձևերը կազմվել են **ր**-ի անկումով և խոսակցական են. մնացած ձևերը հանձնարարելի են: Այս բայի համար դպրոցական դասագրքերից մեկում կարդում ենք. «Այս կանոնավոր ձևերին զուգահեռ (զարկի՛ր, մի՛ զարկիր, զարկեցե՛ք, մի զարկե՛ք) ունի նաև **զա՛րկ, զարկե՛ք, մի՛ զարկ** անկանոն ձևերը:

Անցյալ կատարյալը **զարկեցի, զարկեցիր, զարկեց, զարկեցինք, զարկեցիք, զարկին** կանոնավոր ձևերին զուգահեռ ունի նաև **զարկի, զարկիր /զարկեց/, զարկինք, զարկիք, զարկին** անկանոն ձևերը» (13, էջ 245):

Բ. Երկրորդ խմբի մեջ մտնում են **անել, բանալ, բառնալ, դառնալ, լալ, կենալ, տալ, տանել** բայերը:

Բանալ // բացել զուգաձևության մեջ **բանալ**-ը հնացած է: **Լալ** և **բանալ** բայերը անցյալ դարի կեսերին տարածված էին անցոյական հիմքերով: Նկատելի է, որ եզակի երրորդ դեմքը **լացեց** և **բացեց** ձևերով է հանդես գալիս. **լացավ** ձևը հնացած է: Հարկ է նշել, որ այս բայերն էլ, լեզվի ընդհանուր միտումին համապատասխան, ձգտում են ցոյական հիմքի՝ **լացի // լացեցի, լացիր // լացեցիր, լացինք // լացեցինք, լացիք // լացեցիք, լացին // լացեցին** և **բացի // բացեցի, բացիր // բացեցիր, բացինք // բացեցինք, բացիք // բացեցիք, բացին // բացեցին,** և այսօր անցյալ կատարյալի եզակի 3-րդ դեմքից կազմված բայերն ավելի հարազատ են հայերենին, քան առաջինները. բարձրացել են նորմի աստիճանի: Լեզվի զարգացման ներկա շրջանում **բանալ** բայի ձևերի փոխարեն գործածվում են **բաց անել** հարադրականի ձևերը. **լալ**-ի իմաստն արտահայտելու համար ավելի հաճախ գործածվում է **լաց լինել** վերլուծական բայը **լաց եղա**..., որն էլ պետք է համարել ավելի օրինաչափական: Հրամայականի **բա՛ց // բացի՛ր** զուգաձևության մեջ երկու տարբերակներն էլ գործածական են. **բացե՛ք // բացեցե՛ք** զուգաձևության երկրորդ տարբերակը տարածված է միայն բանավոր խոսքում: **Մի՛ բաց // մի՛ բացիր // մի՛ բանա** և **մի՛ բացեք // մի՛ բացեցեք // մի՛ բանաք** ձևերից առաջինները բանավոր խոսքում են տարածված, բայց գնալով շատանում են գեղարվեստական խոսքում և գրական նորմի աստիճանի են բարձրացել: Պատճառն այն է, որ **բանալ**-ը ժամանակակից լեզվում փոխարինվել է **բացել** կանոնավոր բայով: Նկատելի է, որ **լալ** բայի անցյալ կատարյալի հիմքից կազմվել է **լացել** ձևը, որը բարբառային է, և որից կազմվել են նույնպես բարբառային **լացի՛ր, լացեցե՛ք, մի՛ լացեք** ժողովրդախոսակցական կազմությունները: Գործածական են նաև նրա հարադիր ձևերը **լա՛ց եղիր // լա՛ց, լա՛ց եղեք // լացե՛ք** զուգաձևություններում: **Մի՛ լաց // մի՛ լացիր // մի՛ լա // մի՛ լար** և **մի՛ լացեք // մի՛ լաք**

զուգաձևություններում Ա. Ղարիբյանը կանոնական է համարում **լա՛ց, լացե՛ք, մի՛ լար, մի՛ լաք** /նաև **մի՛ լացեք**/ ձևերը, մերօրյա քերականության մեջ՝ **լա՛ց, լացե՛ք, մի՛ լա(ր), մի՛ լաք, մի՛ լացեք**, իսկ Ֆ. Խլղաթյանը՝ **լա՛ց, լացե՛ք, մի՛ լա, մի՛ լացիր, մի՛ լաք** (**մի՛ լացեք**):

Դառնալ բայը հատկանշվում է երկկերպ գործածությամբ: Մի դեպքում **դարձ** արմատով է անցյալ կատարյալի ձևերը կազմում, որը առավելապես գրական լեզվում է գործածվում, և **դառ** արմատով, որի հետևանքով նորից զուգաձևություններ են՝ **դարձա // դառա, դարձար // դառար, դարձավ // դառավ, դարձանք // դառանք, դարձաք // դառաք, դարձան // դառան,** որոնցում երկրորդները առավելապես խոսակցական լեզվում են գործածվում: Հրամայական եղանակում **դարձի՛ր // դառի՛ր // դա՛ռ, դարձե՛ք // դառե՛ք, մի՛ դարձիր // մի՛ դառիր // մի՛ դառ // մի՛ դառնա, մի՛ դարձեք // մի՛ դառեք // մի՛ դառնաք** զուգաձևություններում **դարձի՛ր, դարձե՛ք, մի՛ դարձիր, մի՛ դարձեք** ձևերը գրական լեզվում են գործածական: **Մի՛ դառնա, մի՛ դառնաք**՝ նախկինում գերադասելի ձևերը այսօր ևս նորմի սահմաններում են, բայց հնացած են: **Դառ** հիմքից կազմված **դառի՛ր, դառե՛ք, մի՛ դառիր, մի՛ դառեք** ձևերը խոսակցական լեզվում են գործածական:

Նախախորհրդային շրջանում **տալ** բայի անցյալ կատարյալը հավասարապես տարածված էր անցոյական և ցոյական հիմքերով՝ **տվի // տվեցի, տվիր // տվեցիր, տվիր // տվեց, տվինք // տվեցինք, տվիք // տվեցիք, տվին // տվեցին**: Ա. Ղարիբյանը իր ժամանակին լավ է համարել երկրորդ ձևը (75, էջ 282): Այժմ ընդունված են և հանձնարարելի ցոյական հիմքով կազմվածները: **Տվի, տվիր**.... ձևերը շատ են գործածվում հատկապես խոսակցական լեզվում: Զուգաձևերից առաջինները հնացած են և ոչ հանձնարարելի: Իսկ Ն. Պառնասյանը այն կարծիքին է, որ «այս ձևերից վերջինները ավելի գործածական են խոսակցական լեզվում» (116, էջ 38): Այսօր անգործածելի են նախկինում հանձնարարելի **մի՛ տար** և **մի՛ տաք** արգելականները: Խոսակցական լեզվում գործածվում են **մի՛ տու, մի՛ տա** զուգահեռները: Բարբառային երանգ ունի **տու՛** դրականը: Կանոնական են **տու՛ր, տվե՛ք (տվեցե՛ք), մի՛ տուր, մի՛ տվեք** ձևերը:

Անել և **դնել** բայերն ունեն երկու հիմքատարբերակ՝ **ար- // արեց-, դր- // դրեց-**, և զուգաձևություններ են կազմում անցոյական և ցոյական հիմքերով՝ **արի // արեցի, արիր // արեցիր, արավ // արեց, արինք // արեցինք, արիք // արեցինք, արին // արեցին** և **դրի // դրեցի, դրիր // դրեցիր, դրավ // դրեց, դրինք // դրեցինք, դրիք // դրեցիք, դրին // դրեցին:** Առաջինները խոսակցական լեզվին են հատուկ և գեղարվեստական լեզվի միջոցով հաճախ թափանցում են գրական լեզվի մեջ, իսկ երկրորդները գրական ձևեր են: Հրամայականի զուգաձևություններում՝ **մի՛ արա // մի՛ անիր** և **մի՛ արեք // մի՛ անեք, մի՛ արա և մի՛ արեք** ձևերն են տարածված թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքում, իսկ **մի՛ անիր** և **մի՛ անեք** ձևերը հնացած են: Նորմայից դուրս է **արեցե՛ք**-ը: Իսկ **դրե՛ք // դրեցե՛ք, մի՛ դիր // մի՛ դնիր** և **մի՛ դրեք // մի՛ դնեք // մի՛ դրեցեք** զուգահեռ ձևերից **մի՛ դնիր և մի՛ դնեք** ձևերը հնացած են, չնայած Ա. Ղարիբյանի գրքում միակ հանձնարարելի ձևերն էին: Տարածված է և գեղարվեստական գրականության մեջ մուտք է գործել **դրեցե՛ք** ձևը:

Տանել բայը անցյալ կատարյալում զուգաձևություններ չունի. դրանք նորից հրամայական եղանակի արգելական ձևերում են երևան գալիս՝ **մի՛ տանիր // մի՛ տար, մի՛ տարեք // մի՛ տանեք** զուգաձևություններում կանոնական են **մի՛ տար** և **մի՛ տարեք** ձևերը, որ կազմվում են «**մի** + դրական հիմք» կաղապարով: Իսկ **մի՛ տանիր** և **մի՛ տանեք** ձևերը եթե նախկինում հանձնարարելի էին, ապա այսօր հնացած են: Ս. Պալասանյանը միակ հանձնարարելի ձև նշում էր **մի՛ տանիք**-ը, որը հնացած է և ոչ գործածելի:

Ածանցավոր **բառնալ** բայը այժմ գրեթե անգործածական է: Անցյալ կատարյալի հիմքն է **բարձ-**. որից կազմվել է **բարձել** բայը: Ժամանակակից գրական հայերենում **բարձա // բարձեցի, բարձար // բարձեցիր, բարձավ // բարձեց, բարձանք // բարձեցինք, բարձաք // բարձեցիք, բարձան // բարձեցին** զուգաձևություններում այսօր առավել գերադասելի են դառնում երկրորդ եզրերը: Եթե ոչ վաղ անցյալում օրինաչափական էին **բարձա, բարձար, բարձավ**... տարբերակները, ապա ժամանակակից հայերենում **բառնալ** բային զուգահեռ կերտված **բարձել** կանոնավոր բայի անցյալ կատարյալի ձևերն արդեն դուրս են մղել **բառնալ** բայի ձևերը: Արգելական հրամայականի **մի՛ բառնա // մի՛ բառնար // մի՛ բարձիր // մի՛ բար-**

ձի և **մի՛ բառնաք // մի՛ բարձեք** զուգաձևություններում կանոնական են **բարձի՛ր և բարձե՛ք, մի՛ բարձիր** և **մի՛ բարձեք** ձևերը: **Մի՛ բարձի**-ն նորակազմություն է: **Մի՛ բառնա, մի՛ բառնաք** ձևերը հնացած են: Զուգահեռ ձևեր են **բարձե՛ք // բարձեցե՛ք** և **մի՛ բարձեք // մի՛ բարձեցեք** հրամայականները, որոնցից երկրորդ տարբերակները կազմվել են **ե** խոնարհման պարզ բայերի համաբանությամբ (լեզվական նորմը սահմանում է՝ **ե** խոնարհման պարզ բայերի հրամայական եղանակի հոգնակին կազմվում է բայարմատին **-եցեք** ավելացնելով):

Կենալ բայը (հիմնականում **վեր կենալ** հարադրությամբ է կիրառվում) անցյալ կատարյալում արտահայտվում է **կաց** և **կեց** հիմքով և **ա, -ար, -ավ, -անք, -աք, -ան** վերջավորություններով՝ **կացա // կեցա, կացար // կեցար, կացավ // կեցավ, կացանք // կեցանք, կացաք // կեցաք, կացան // կեցան:** Բնականաբար զուգահեռ ձևեր են առաջանում վաղակատար, հարակատար, նաև ենթակայական դերբայաձևերում՝ **կացել // կեցել, կացած // կեցած, կացող // կեցող // կենող:** Կանոնական են **կաց** հիմքով կազմվածները, իսկ կատարյալի **կեց** հիմքից կազմվածները բարբառային են և գրական լեզվում գործածական չեն: Հրամայական եղանակում **կա՛ց // կացի՛ր // կեցի՛ր, կացե՛ք // կեցե՛ք, մի՛ կաց // մի՛ կացիր // մի՛ կեցիր // մի՛ կենա(ր), մի՛ կացեք // մի՛ կեցեք // մի՛ կենաք** տարբերակներից **մի՛ կենար** և **մի՛ կենաք** ձևերը նորմատիվ քերականություններում օրինաչափական են, բայց այսօր, կարծում ենք, առավել խոսակցական բնույթ ունեն: Կանոնական են **կա՛ց** հիմքով կազմվածները՝ **կա՛ց, կացե՛ք, մի՛ կաց, մի՛ կացե՛ք**:

Երրորդ խմբի մեջ մտնում են **գալ, լինել, ուտել** բայերը:

Գալ բայը զուգահեռ ձևեր ունի հրամայականում՝ **ե՛կ // արի՛, եկե՛ք // արե՛ք** և **մի՛ եկ // մի՛ գա // մի՛ գար // մի՛ արի** և **մի՛ եկեք // մի՛ գաք // մի՛ արեք**: Կանոնական են **ե՛կ - եկե՛ք** և **մի՛ եկ - մի՛ եկեք** ձևերը: Ա. Ղարիբյանի դասագրքում կանոնական են համարվել **ե՛կ** (նաև **արի՛**), **եկե՛ք, մի՛ գար, մի՛ գաք:** Գործածական են նաև **մի՛ եկ, մի՛ եկեք** ձևերը, (66, էջ 283), Էդ. Աղայանի և Հ. Բարսեղյանի դասագրքում՝ **ե՛կ, եկե՛ք, մի՛ գա /մի՛ եկ), մի՛ գաք** (**մի՛ եկեք**) ձևերը (13, էջ 248), Ֆ. Խլղաթյանի դասագրքում՝ **ե՛կ (արի՛), եկե՛ք, մի՛ գա (մի՛ արի), մի՛ գաք** (**մի՛ եկեք**) ձևերը (61, էջ 143): **Արի՛, արե՛ք** և

մի՛ արի, մի՛ արեք ձևերը գրաբարյան «**յառնել**» (հառնել) բայի հրամայական ձևերն են, որոնք առավելապես խոսակցական լեզվում են օգտագործվում և բարբառային են. մի խոսքով՝ նորմով սահմանված են **ե՛կ, եկե՛ք, մի՛ գա, մի՛ գա՛ք** ձևերը. նորմի աստիճանի են բարձրացել **մի՛ եկ, մի՛ եկեք** ձևերը, իսկ **արի՛-արե՛ք, մի՛ արի-մի՛ արեք** ձևերը խիստ տարածված են ժողովրդախոսակցական լեզվում: Հարադրության բաղադրիչ լինելու դեպքում զուգաձևությունները պահպանվում են՝ **պա՛ր եկ // պա՛ր արի, պա՛ր եկեք // պա՛ր արեք, պար մի՛ եկ // պար մի՛ գա // պար մի՛ գար // պար մի՛ արի, պար մի՛ եկեք // պար մի՛ գաք // պար մի՛ արեք.** կանոնական են առաջին տարբերակները:

Ուտել բայի արգելականը զուգաձևություններ ունի. կազմվում է թե կատարյալի հիմքով, թե՛ կանոնավոր կազմությամբ՝ ներկայի հիմքով՝ **մի՛ կեր // մի՛ ուտիր, մի՛ կերեք // մի՛ ուտեք**: Այսօր դժվար է նախընտրել այս ձևերից որևէ մեկը, թեև լեզվի միտումը միահիմք կազմության կողմն է (այս դեպքում կատարյալի): **Մի՛ ուտի** ձևը **մի՛ ուտիր**-ի փոխարեն խոսակցական է և ոչ հանձնարարելի: Ոչ գրական է **կերվել** կրավորականը **ուտվել**-ի կողքին:

Լինել բայը ևս արգելական հրամայականում զուգահեռ ձևեր ունի՝ **մի՛ լինիր // մի՛ լինի // մի՛ եղիր // մի՛ եղի** և **մի՛ լինեք // մի եղեք**: **Մի՛ լինեք**-ը, որ հանձնարարելի և միակ օրինաչափական ձևն էր նախկինում, այսօր հնացած է և ոչ գործածական: Կանոնական դառնալու ճանապարհին է դրական ձևերից կազմված արգելականը՝ **մի՛ եղիր և մի՛ եղեք: Մի՛ եղի** տարբերակը նոր՝ խոսակցական ձև է: Արգելական հրամայականից բացի երկկերպ է գործածվում նաև ենթակայական դերբայը՝ **լինող // եղող**: Բնականաբար կանոնականը **լինող** ձևն է, քանի որ **ե** խոնարհման անկանոն բայերի համար ենթակայական դերբայը կազմվում է ներկայի հիմքին ավելացնելով **–ող** վերջավորությունը, իսկ **ա** խոնարհման անկանոն բայերինը՝ անցյալի հիմքին: Հարադրության բաղադրիչ լինելու դեպքում նշված զուգաձևությունները պահպանվում են՝ **լաց լինող // լաց եղող, լաց մի՛ լինիր // լաց մի՛ լինի // լաց մի՛ եղիր // լաց մի՛ եղի...**

Պակասավոր բայերից (**եմ, կամ, գիտեմ, ունեմ, արժել, հուսալ, ցանկալ, կենալ**) զուգաձևություն ունի **հուսալ**-ը հրամայականի արգելականի եզակիում՝ **մի հուսա // մի՛ հուսար**. գերադասելի է,

կանոնական է առաջինը: «Հայոց լեզու» դասագրքում նշվում է, որ **գիտենալ** բայը ոմանց կողմից դիտվում է որպես անկանոն բայ, որովհետև հարացույցի կանոնավոր ձևերին զուգահեռ ունի նաև հավելավոր անկանոն ձևեր (13, էջ 252): **Գիտենալ** բայի վաղակատար, հարակատար, ենթակայական դերբայների **գիտեցել, գիտեցած, գիտեցող** կանոնավոր ձևերի փոխարեն նաև գործածվում են **գիտցել, գիտցած, գիտցող** անկանոն ձևերը:

Սահմանական ներկայի և անցյալ անկատարի **գիտենում եմ, գիտենում էի** համակարգային ձևերի փոխարեն ավելի հաճախ գործածվում են **գիտեմ, գիտեի** ձևերը:

Հրամայականի **գիտեցի՛ր, գիտեցե՛ք, մի գիտենա(ր), մի՛ գիտենաք** կանոնավոր ձևերին զուգահեռ նաև գործածվում են **գիտցի՛ր, գիտցե՛ք, մի՛ գիտնա(ր), մի՛ գիտնաք** անկանոն ձևերը:

Զուգահեռ ձևեր ունի **լվանալ** բայը արգելական հրամայականում՝ **մի՛ լվանա // մի՛ լվա և մի՛ լվանաք // մի՛ լվացեք**: Եթե անցյալ դարի կեսերին նորմատիվ էին **մի՛ լվանա, մի՛ լվանաք** ձևերը, այսօր կանոնական դառնալու ճանապարհին են **մի՛ լվա, մի՛ լվացեք** ձևերը («մի + դրական հիմք»-ով ձևերը):

Հայոց լեզվի դպրոցական դասագրքերից մեկում «Ծանոթություն»-ի տակ եզրակացվում է. «Ինչպես կանոնավոր, այնպես էլ անկանոն սոսկածանցավոր բայերի արգելական հրամայականի անորոշ դերբայի հիմքից կազմված **մի՛ անիր, մի՛ առնիր, մի՛ ելնեք, մի՛ տեսնիր, մի՛ բանա, մի՛ լվանաք** առավել գրքային ձևերի փոխարեն գնալով գործածական են դառնում բուն հրամայականից կազմված **մի՛ արա, մի՛ առ, մի՛ ելեք, մի՛ տես, մի՛ բաց, մի՛ լվացեք** և այլ ձևերը» (13, էջ 252):

Անկանոն բայերի ոլորտում ցանկալին հակահամակարգային ձևերի համակարգայնացումն է, կանոն դարձած անկանոնությունների՝ համակարգային օրինաչափություններով ձևվելը, որով և տարբերակային զուգահեռությունները լեզվի զարգացմանը զուգընթաց աստիճանաբար կդադարեն այդպիսին լինելուց կամ «կմեղմացվեն»...

Այսուամենայնիվ՝ զարգացող լեզվի համար զուգաձևություններն (տարբերակներն) անխուսափելի են:

Ե. Կրկնասեռ բայեր

Բային հատուկ քերականական կարգերի մեջ իր առանձնահատուկ տեղն ունի սեռի քերականական կարգը. այստեղ ևս մարդկային միտքը որոնումների մեջ է... Մարդու որոնողական բնույթը ստիպում է ոչ միայն ճշգրտորեն արտահայտել ռեալ իրականության զանազան կապերն ու հարաբերությունները, այլև փնտրել դրանց արտահայտման ամենադիպուկ, ամենաարտահայտիչ, ամենակարճ միջոցն ու ձևը, ցրել միօրինակության տաղտուկը:

Մարդկային մտածողությանը, հասարակության զարգացմանը զուգընթաց փոփոխություններ են առաջանում նաև լեզվի քերականական-ձևաբանական համակարգի բայասեռային մանրահամակարգում:

Գրաբարի բայերի սեռային կարգը բավական խառնաշփոթ վիճակով է մեզ ավանդվել: Վ. Առաքելյանն այն կարծիքին է, որ նման խառնաշփոթությունը արդյունք է **ե, ա, ի, ու** խոնարհումների փոխադարձ ներթափանցման և **ո** խոնարհման անհետացման, որին ենթակա բոլոր բայերը, անշուշտ, անցել են մնացյալ մյուս խոնարհումներին. «Դասական գրաբարը համենայն դեպս մեզ ներկայանում է մի այնպիսի վիճակով, ուր բայասեռը գերազանցապես որոշվում է բայիմաստով և ոչ թե որոշակի ձևական ցուցիչով: Սակայն մենք ենթադրում ենք, որ նախադասական շրջանում գրաբարի բայերի սեռերը ունեցել են կայուն ձևական ցուցիչներ և դրանք եղել են **ե, ա, ի, ու, ո** խոնարհիչ ձայնավորները» (28, էջ 78): Ըստ նրա թվաբանական հաշվարկների արդյունքների՝ հին հայերենի խոնարհման տարատեսակությունը ինչ-որ «ինքնանպատակ ու ինքնաբավ» մի քերականական երևույթ չէ. **ե, ա, ի, ու, ո** ձայնավոր ցուցիչները եղել են սեռացուցիչներ, և հետագայում խոնարհումների փոխադարձ ներթափանցումների, սեռային կարգի ու բայիմաստի սերտ փոխհարաբերության շնորհիվ այդ ձայնավորների, իբրև բայասեռի ցուցիչների, դերը աստիճանաբար նսեմացել է:

Սովորաբար սեռի քերականական կարգի արտահայտման համար լեզուներն ունեն հատուկ ձևական ցուցիչներ, որոնցով որոշվում է այս կամ այն սեռային հատկանիշը: Եթե նախագրաբարյան

շրջանի համար համոզիչ կերպով չենք կարող ասել, որ սեռացուցիչ-ներ եղել են կամ չեն եղել, ապա գրաբարում բայասեռի համար ա-ռանձին ձևական սեռացուցիչ(ներ) չի եղել (չեն եղել):

Սեռի քերականական հասկացության դրսևորման տեսակետից արդի հայերենն ավելի կատարյալ է, քան միջին հայերենը, և առա-վել ևս՝ քան գրաբարը:

Լեզվաբանների այն խմբի մոտեցումը, թե ժամանակակից հա-յերենի բայի սեռի կարգը բավական հստակ ու պարզունակ տեսք ունի, ճիշտ է գրաբարյան և ետգրաբարյան շրջանների համեմա-տությամբ, քանզի սեռի կարգը ևս բռնել է «լեզվական կատարելու-թյան» ճանապարհը, որի ընթացքում էլ «ծնվել» է կրավորական սե-ռացուցիչը՝ **վ**-ն, բայց մերօրյա հայերենում էլ այն բացարձակ հստակություն չունի: Ձևաբանական-սեռային նորմի կայունությունն այստեղ ևս հարաբերական է. Հարցի քննության մեջ խորանալու դեպքում ի հայտ են գալիս այլևայլ դժվարություններ՝ կապված իմաստաբանական, բառակազմական, շարահյուսական, ոճաբանա-կան առնչությունների հետ. այս առումով էլ բայասեռի մանրահամա-կարգի նորմավորումը բարդանում է: Հարցի բավական խառնակ ու շփոթ վիճակը միանգամայն ակնհայտ է դառնում, երբ հետևում ենք Հ. Աճառյանի մտքին. «Հարցը ներկայացնելով այսպես, սեռի գա-ղափարը չափազանց պարզ է ու հասկանալի, բայց քննելով մի քիչ ավելի մանրակրկիտ կերպով, տեսնում ենք, որ նա դառնում է բավա-կան խառնակ ու շփոթ:

Օրինակ՝ **սպանվել** կրավորական բայ է և **ընկնել** ու **մեռնել** չեզոք, բայց իմաստի ի՛նչ տարբերություն կա, երբ ասենք, թե «նա մարդասպանի դանակով սպանվեց, նա մարդասպանի դանակով ընկավ (իմա՛ գցվեց), նա բժշկի դեղից մեռավ (իմա՛ մեռցվեց)»: Այս բոլորը միևնույն գաղափարներն են ու քերականական ձևերն են, որ զանազան են. մեկը կոչվում է կրավորական և մյուսը՝ չեզոք:

Այս պատճառով ահա շատ անգամ բայի սեռը որոշել չափա-զանց դժվար է լինում, որովհետև զանազան ազգեր տարբեր հայաց-քով են նայում խնդրին, օրինակ՝ **հավանել** բայը արևմտյան հայոց մեջ չեզոք է, իսկ արևելյան հայոց մեջ՝ ներգործական (**կարագին կհավնե՞ք – կարագը հավանու՞մ եք**), որովհետև արևմտյանները **հավանել** ըմբռնում են իբր թե «համաձայնել, հաճել», իսկ արևել-

յանները «լավ գտնել, լավ համարել, ընտրել»: Նույնպես **տիրել** թե՛ գրաբարի և թե՛ արևմտահայ բարբառի մեջ չեզոք է, իսկ արևելահայ բարբառի մեջ ներգործական (**տիրեաց քաղաքին – քաղաքին տիրեց – քաղաքը տիրեց**). առաջինները մտածում են իբրև «տիրանալ, տեր դառնալ», մյուսները «գրավել, նվաճել»: Նմանապես **նայել** գաղափարը հայերենում չեզոք է, իսկ ֆրանսերենում ներգործական... Ֆրանս. «բարձրանալ» չեզոք է. երբ ասում ենք «ծովը բարձրանում է», բայց ներգործական է, երբ ասում ենք «ձի հեծնել»...» (22, էջ 73-74):

Նման դժվարությունները մերօրյա գրական հայերենի երկփեղկվածությամբ բացատրելը կամ այլ լեզուների ազդեցությամբ հիմնավորելը միակողմանի կլինի: Ամենից առաջ բայասեռը անմիջականորեն կապված է բայիմաստի հետ, որի փոփոխությունների հետ կապված փոփոխություններ են կատարվում նաև սեռային կարգում: Բառակազմությունը և ձևաբանությունը ևս երբեմն հստակորեն սահմանազատված չեն, քանի որ բառակազմությունը նաև ձևակազմություն է, և ածանցները շատ դեպքերում փոխում են ոչ միայն բառական իմաստը, այլև խոսքիմասային քերականական իմաստը [բարի (ածական/ -բարություն (գոյական), քաջ (ածական, գոյական) – քաջաբար (մակբայ), երկու (թվական) - երկակի (մակբայ) և այլն]:

Մյուս կողմից՝ սեռը, լինելով բայի ձևաբանական հատկանիշներից մեկը, որպես նաև գործողության հարաբերություն ենթակայի և խնդրի հետ, պարզաբանվում է, որոշակիություն ստանում շարահյուսական մակարդակում:

Ձևաբանական համակարգում էլ որոշակի դժվարություններ են առաջանում՝ կապված քերականական որոշ իրողությունների ձևական ցուցիչներ ունենալու-չունենալու, սեռային փոխներթափանցումների, քերականական իմաստների փոփոխությունների հետ, քերականական սեռային իմաստ - քերականական սեռային ձև միասնության ոչ լիարժեք դրսևորման, բացարձակորեն միմյանց չծածկելու հետ:

Վերջիվերջո՝ սեռային տարբերությունները, սեռային երկփեղկումները արդյունք են լեզվի ոճական-արտահայտչական հնարավորությունների:

Հարցի քննությունն էլ ավելի է բարդանում՝ կապված սեռի քերականական կարգի՝ քերականության ձևաբանակա՞ն, թե՞ շարահյուսական մակարդակի միավոր լինելու հետ:

Լեզվաբանների մի մասի կարծիքով այն ձևաբանական կարգ է. դրսևորվում է իբրև ուրույն քերականական իմաստի և համապատասխան արտահայտության միջոցների միասնություն. մյուս մասը հետևում է Մ. Աբեղյանի տեսակետին և համարում շարահյուսական կամ բառաքերականական կարգ: Երրորդ խումբն էլ, այն համարելով շարահյուսական կարգ, ներառում է ձևաբանական համակարգի մեջ:

Բայասեռը ևս քարացած ու կայուն կարգ չէ և չի ուղեկցում տվյալ բային այս վերջինի ողջ լեզվապատմական գործածության ընթացքում՝ իբրև նրա մի անփոփոխ և կայուն հատկանիշ. փոփոխության է ենթարկվում ժամանակի ընթացքում: Բայասեռն ամենից առաջ կապված է բայիմաստի հետ, իսկ բայիմաստը կենդանի լեզվի մի այնպիսի առանձնահատկություն է, որ ենթակա է փոփոխությունների, իսկ այս փոփոխություններին զուգընթաց փոփոխվում է նաև բայասեռը:

Բայասեռի վերաբերյալ եղած կարծիքների տարբերությունները մեր քննության շրջանակներից դուրս համարելով՝ նպատակահարմար ենք գտել բայասեռը ներկայացնել լեզվական նորմով սահմանված կանոնների շրջանակում և բայասեռային նորմը փոփոխող հիմունքներից մեկի՝ կրկնասեռության հարցի քննությունը կատարել նորմատիվ քերականությունների ընձեռած սկզբունքներով: Լեզվական-ձևաբանական նորմը սահմանում է. «Բայի սեռի կարգը ցույց է տալիս քերականական ենթակայի ու խնդրի, տրամաբանական սուբյեկտի և օբյեկտի փոխհարաբերությունը, որն իր դրսևորումն է գտնում բայածևի մեջ» (33, էջ 203): Այլ նորմատիվ քերականություններում ասվում է. «Անմիջականորեն կապված լինելով բայիմաստի հետ, սեռը ցույց է տալիս գործողության հարաբերությունը գործողի (սուբյեկտի) և գործողության առարկայի (օբյեկտի) հետ, ինչպես նաև այդ հարաբերությունների քերականական վերացարկման ու արտահայտության ձևը» (9, էջ 277):

Մերօրյա դպրոցական դասագրքերից մեկում սահմանված է. «...Բայի տարբեր ձևերը ցույց են տալիս **գործողություն** և նրա հետ

կապված **ենթակայի ու այլ առարկաների տարբեր հարաբերություններ**: Բայի այս առանձնահատկությունը կոչվում է սեռ» (13, էջ 154): Մյուսում՝ «Բայի խնդրառական հատկությունը կոչվում է սեռ» (61, էջ 85):

Լեզուների զարգացման պատմության մեջ նկատվել են ու նկատվում են բայական սեռի տեղաշարժեր՝ կապված բայերի իմաստների և նրանց խնդրառությունների փոփոխությունների հետ: Այս առումով սրանք ձևաբանական-շարահյուսական զուգահեռներ են կազմում: Ինչ խոսք, բայասեռի տեղաշարժերը զարգացման ավելի երկարատև շրջան են ենթադրում. մերօրյա հայերենին նախորդող ժամանակաշրջանների բայական սեռին վերաբերող փաստերի քննությունը ցույց է տալիս, որ սեռափոխության կտրուկ անցումները հատուկ չեն համեմատաբար փոքր շրջան ընդգրկող արևելահայ գրական լեզվի համար: Երբեմն նույն բայը ներգործական է լեզվի մի փուլում, իսկ չեզոք՝ լեզվի մի այլ փուլում: Այսպես՝ հին հայերենի մի շարք բայեր բոլորովին սեռափոխվել են ժամանակակից հայերենում. ներգործական սեռի բայը դարձել է չեզոք, և հակառակը՝ չեզոք սեռի իմաստը կորել է, և առաջ է եկել ներգործական սեռի իմաստը: Այս փոփոխությունը մեծ մասամբ արդյունք է այն հանգամանքի, որ ժամանակակից հայերենում որոշ բայեր, կորցնելով իրենց նախկին իմաստները, բնականաբար կորցրել են նաև այդ իմաստների հետ կապված բայական սեռը, այսինքն՝ սեռային փոփոխությունները պայմանավորված են բայերի՝ լեզվի զարգացման տարբեր փուլերում կրած իմաստային փոփոխություններով: **Նահանջել** բայը գրաբարում եղել է ներգործական սեռի և նշանակել է «ետ պահել», «սանձել», «կաշկանդել», «դրդել», «նվաճել», «արգելել», իսկ այժմ չեզոք սեռի բայ է՝ «նահանջ կատարել», «ետ քաշվել», «որևէ բանից հրաժարվել՝ ետ կանգնել», «տեղի տալ, զիջել» իմաստներով:

Լեզվական փաստ է, որ գրաբարյան կրկնասեռ բայերից շատերն էլ, կորցնելով սեռային զուգահեռության եզրերից մեկնումեկը, պահպանել են կամ մի սեռը, կամ էլ մյուսը:

Հնում կրկնասեռ **աշակերտել** բայը (**աշակերտեմ**՝ ներգործական («աշակերտ պահել, սովորեցնել») // չեզոք՝ «աշակերտություն անել, մեկի մոտ սովորել» իմաստով) գրական նոր հայերենում պահպանել է միայն չեզոքսեռային իմաստը:

Բարգավաճել բայը ներգործական («փառավորել, պատվել, առաջացնել») և չեզոք («ծաղկել, զարգանալ, առաջ գնալ») սեռերից պահպանել է չեզոք իմաստը: **Գարշել** բայը «գարշելի համարել, մերժել՝ իբրև գարշելի բան» ներգործական իմաստը կորցրել է՝ պահպանելով «զզվել, խորշել» չեզոք սեռի իմաստը:

Ապավինել, բաբախել, դալարել, թառամել, խորշել, ծառայել, ծլել, կանգնել, հորդել, ճողոպրել, միաբանել, նվազել, նվաղել, սահել, վրիպել, փայլել գրաբարյան կրկնասեռ բայերը ժամանակակից հայերենում չեզոք սեռի են. չեն պահպանել ներգործական նշանակությունը: Նախկինում կրկնասեռ բայերից շատերը, որոնք հնում թե՛ ներգործական, թե՛ կրավորական-չեզոք սեռ ունեին, այսօր կրավորածև չեզոք բայեր են և կորցրել են իրենց երբեմնի ներգործական նշանակությունը: Օրինակ՝ **հաջողվել**-ը ժամանակակից հայերենում չեզոք սեռի բայ է և ունի «գլուխ գալ, նպատակին հասնել» իմաստը, իսկ գրաբարում եղել է կրկնասեռ՝ «գլուխ բերել» ներգործական և «հաջողվել» չեզոք իմաստներով: **Համաձայնել**-ը **համաձայնեմ // համաձայնիմ** զուգահեռությամբ դրսևորել է չեզոք սեռի իմաստ «համաձայնվել» իմաստով և ներգործական սեռի իմաստ՝ «համաձայնեցնել» իմաստով: **Հուսահատվել**-ը **յուսահատիմ** (չեզոք սեռ) **// յուսահատեմ** (ներգործական սեռ) զուգահեռությամբ համապատասխանաբար ունեցել է «հուսահատվել» և «հուսահատեցնել» իմաստները:

Կա և հակառակ երևույթը, երբ երկսեռ բայերի մեջ մթագնել է ու մարել ոչ թե ներգործական, այլ չեզոք սեռի իմաստը, և դրանք այսօր պահպանվել են ներգործական սեռային իմաստով: Օրինակ՝ **գուժել** երկսեռ բայը (ներգ. և չեզոք) կորցրել է «գույժի ձայն բարձրացնել, ճչալ, ողբալ, լացուկոծ անել» իմաստը և այսօր նշանակում է «գույժը տարածել, վատ լուր հաղորդել»՝ որպես ներգործական բայ: Կրկնասեռությունից միասեռության ճանապարհն են անցել նաև **դյութել, կանխել** բայերը, որոնք, կորցնելով չեզոք սեռային իմաստը, ժամանակակից հայերենում պահպանվել են ներգործական նշանակությամբ:

Սրանց կողքին կան նաև այնպիսի բայեր, որոնք պահպանել են իրենց երկսեռությունը նաև ժամանակակից հայերենում: Նման

բայերից են՝ **ապրել, աշխատել, բարբառել, բուրել, հնչել, հոգալ, մեկնել, շրջել, շշնջալ, երկարել** և այլն:

Բայց հենց լեզվական նույն փուլում էլ բայերի իմաստները կայուն ու քարացած չեն: Միջսեռային տեղաշարժերը սովորաբար կատարվում են ներգործական ><չեզոք և կրավորական >չեզոք ուղղություններով:

Քերականագիտության համար կարևոր են ոչ միայն ավարտին հասած երևույթների արձանագրումը և ուսումնասիրումը, այլև այնպիսիների ցուցադրումը, որոնք գտնվում են լինելության ընթացքի մեջ: Սեռային տեղաշարժերի հարցին սերտորեն առնչվում է նաև կրկնասեռության երևույթը: Կրկնասեռությունը ևս սեռի ձևավորման ընթացքի մեջ եղող երևույթներից է, որն անմիջականորեն կապված է խոսքի ճիշտ կառուցման առանձնահատկությունների հետ: Բայական սեռի շուրջ եղած տարակարծությունները, նրա ձևաբանական և շարահյուսական հատկանիշների ոչ հստակ ըմբռնումը, անցողականության ոչ անցողականության երևույթի հետ նրա հարաբերության ոչ վերջնական լուծումը, սեռերի ընկալման քանակային տարբերությունը իրենց կնիքն են թողնում կրկնասեռության հարցի ըմբռնման մեջ: Կրկնասեռության հարցի քննարկումն էլ ավելի է բարդանում՝ կապված սեռերի ընկալման, բնորոշման բարդությունների, նրանց քանակի հարցի վերաբերյալ տարակարծությունների, միջսեռային հարաբերությունների ճշտման ու ճշգրտման հետ:

Կրկնասեռության հարցը քննության առարկա է դարձել անցյալ դարի կեսերից, և համեմատաբար հանգամանալից ուսումնասիրվել է իմաստային կրկնասեռությունը: Սակայն հետագա ուսումնասիրությունները ակնհայտ են դարձրել, որ կրկնասեռության հարցը սերտորեն առնչվում է ոչ միայն իմաստաբանության, այլև ձևակազմության, շարահյուսության հետ, այսինքն՝ այն, բացի իմաստային պատճառաբանվածությունից, ունի նաև քերականական դրսևորում:

Կրկնասեռության երևույթն անմիջականորեն առնչվում է նաև սեռի քերականական ընկալման և սեռերի քանակի խնդրի հետ. սեռաիմաստային հստակ տարբերակում կատարելուց հետո միայն կարելի է քննարկել միջսեռային հարաբերությունները:

Օրինաչափական է, որ մեկ բայ ունենա մեկ սեռ, այսինքն քերականական սեռի մի իմաստն արտահայտվի քերականական մեկ ձևով: Բայերի մեծ մասին հատուկ է որևէ մեկ սեռ, այսինքն բայերի մեծ մասը միասեռ է: Սեռի քերականական կարգն արտահայտվում է քերականական տարբեր միջոցներով՝

ա/ Բառային, որն իրականացվում է համապատասխան բառակազմական մասնիկով. սա սեռի արտահայտման ամենակատարյալ ձևն է:

բ/ Չևաբանական միջոցով, երբ բառը իր բառային ձևով չի դրսևորում կամ հստակ չի դրսևորում իր սեռի կարգը, և խոնարհման տարբեր եղանակների միջոցով է արտահայտվում. ժամանակակից հայերենում այն կենսունակ չէ:

գ/ Շարահյուսական միջոցով, երբ բայասեռը մյուս միջոցների անկենսունակության հետևանքով միայն շարահյուսական կապակցության մեջ է դրսևորվում՝ համապատասխան սեռի խնդրի առկայությամբ, ահա թե ինչու կրկնասեռության հարցը քննելիս միևնույն բայաձևով արտահայտված սեռային տարբերակում կատարելիս այդքան կարևորվում է խնդրառական կամ կառավարման տարբերակների ուսումնասիրությունը:

Կրկնասեռությունը, որպես քերականական յուրահատուկ երևույթ, անխտիր չի տարածվում բայական բոլոր բառույթների վրա, քանի որ բոլոր բայերը չեն, որ մի բառույթի սահմաններում ցուցաբերում են սեռային երկակիություն՝ առանց լրացուցիչ ձևափոխությունների: Ժամանակակից հայերենում կրկնասեռ բայերի քիվը շատ չէ, բայց նրանց գոյությունը իրողություն է. անհնարին է ժխտել կամ անտեսել, քանի որ դրանք մեծ մասամբ մեծ հաճախականություն ունեցող բայեր են, ուստի և կրկնասեռության ուսումնասիրումը և արժեքավորումը քերականագիտության կարևորագույն խնդիրներից են:

Կրկնասեռությունը պատմական երևույթ է, և այն պետք է ընդունել որպես ոչ թե բայասեռային համակարգի քայքայում, այլ որոշ քանակություն կազմող բայերի սեռի յուրահատուկ պատմական զարգացում: Լեզվաբանական գրականության մեջ «կրկնասեռություն» տերմինի կողքին նաև «զուգասեռություն»-ն ու «երկսե-

ռություն»-ն են օգտագործվում, նման բայերն էլ «կրկնասեռ» են կոչվում կամ «երկսեռ», երբեմն էլ՝ «զուգասեռ»: Ներքոբերյալ շարադրանքում կօգտագործվի նաև «սեռային զուգահեռություն» տերմին-արտահայտությունն այն նկատառումով, որ սա իմաստային-նրբերանգային տարբերություններ ունի «կրկնասեռություն», «երկսեռություն» և «զուգասեռություն» տերմինների համեմատությամբ: Այս դեպքում երկու սեռային նշանակությամբ հանդես գալը նաև կարող է իմաստաբանորեն, քերականորեն, ոճականորեն հիմնավորված չլինել: Ինչ վերաբերում է կրկնասեռ և զուգասեռ բայերին, ապա նկատված է, որ զուգասեռ բայերի մեջ սեռային եզրերից մեկը անխուսափելի դատապարտման միտում ունի, և դրանք ընթանում են դեպի միասեռություն, իսկ կրկնասեռ բայերում սեռերից մեկի աշխուժացման միտում կա, որը տանում է դեպի կրկնասեռության դիրքերի ամրապնդում՝ իմաստային երկփեղկումների հիման վրա: Մի խոսքով՝ սեռային տեղաշարժերը մոտավորապես այսպիսի պատկեր ունեն՝ միասեռություն → զուգահեռություն → զուգասեռություն → կրկնասեռություն կամ երկսեռություն → միասեռություն:

Այս դեպքում խոսքը զուգահեռ ձևերի՝ զուգաձևությունների մասին չէ, այլ նույն բայի զուգահեռ սեռիմաստներ ունենալու մասին է, այսինքն՝ ոչ թե քերականական մի իմաստն է արտահայտվում զուգահեռ ձևերով և ձևային տարբերակների առաջացման պատճառ դառնում, այլ մի ձևով տարբեր քերականական իմաստներ են դրսևորվում, զուգահեռ սեռիմաստներ՝ առանց բառական-քերականական փոփոխությունների՝ դառնալով սեռիմաստային տարբերակների առաջացման պատճառ:

Սովորաբար լեզվի փոփոխության ընթացքը հանգեցնում է այն բանին, որ բայի հին իմաստը, նրա հետ նաև հին սեռը բոլորովին անհետանան լեզվից, և նրանց փոխարեն «լեզվական նոր կյանք» ստանան բայական նոր իմաստն ու նոր սեռը: Բայց բոլոր բայերի մեջ չէ, որ լեզուն միասեռության է ձգտում. լինում է և այնպես, որ բայի հին իմաստին և հին սեռին զուգընթաց գործածության մեջ են մտնում նոր իմաստն ու նոր սեռը, և ընդլայնվում է բայի իմաստային դաշտը՝ նոր իմաստի հավելումով, իսկ բայն էլ դառնում է կրկնասեռ կամ երկսեռ՝ սեռային նոր որակի զուգակցումով. երբ միևնույն բայը առանց ձևաբանական փոփոխություն կրելու հանդես է գալիս մերթ

մի սեռի, մերթ մյուս սեռի հատկանիշներով, ուրեմն առկա է բայական կրկնասեռություն: Երբ բայը սեռային զուգահեռ ձևերով է հանդես գալիս, ապա որոշ ժամանակ այն կրկնասեռ է դառնում, մինչև սեռերից որևէ մեկի վերջնական տարածումն ու հաղթանակը: Այս կարգի բայերն են, որ հետաքրքրություն են ներկայացնում մեզ համար: Այս երևույթը գլխավորապես վերաբերում է չեզոք և ներգործական սեռի բայերին, քանի որ այդ բայերն են, որ հենց նույն սկզբնաձևային վիճակով կարող են նման տատանումներ ունենալ (կրավորական սեռն ունի իր հատուկ ձևավորումը):

Հայկազյան բառարանն արդեն շատ բայերի համար կրկնասեռության նշանները դնում է, ինչպես օրինակ՝ «Անմտաբանեմ, եցի. ն. չ. Անմտաբար կամ բանս անմիտս խօսել» (86, էջ 205), «Բարերարեմ, եցի, եա՛, ն. չ., բարս կամ երախտիս առնել. բարերար կամ երախտաւոր լինել» (նտ, էջ 457), իսկ ապրել բայի համար առանձնաբար նշվում է. «Ապրեմ, եցի. չ. Տ. Ապրիմ...» և «Ապրեմ, եցի, ն, Տ. Ապրեցուցանեմ» (նտ. էջ 279):

Եթե Ժ. Վանդրիեսը ճիշտ է, երբ գրում է, թե հնդեվրոպական լեզուն ըստ երևույթին ուներ միայն ներգործական սեռ, և եթե ճիշտ է լեզվաբանական աշխարհում ընդունված այն տեսակետը, թե կրավորական սեռի իմաստը հնդեվրոպական նախալեզուն չի ունեցել, և այն առաջացել է հետագայում՝ լեզվի պատմության հետնախալեզվյան շրջանում, բայց այդ իմաստն արտահայտելու համար բայի կրած ձևական փոփոխությունը հավանաբար ավելի ուշ ժամանակաշրջանի արդյունք է, ապա նույնը կարելի է սպասել կրավորական և չեզոք սեռի բայերի ձևային տարբերակման հարցում. չեզոք սեռի իմաստն արտահայտելու համար բայի ձևաբանական փոփոխությունը շատ հավանական է:

Կրկնասեռությունը նաև մերօրյա լեզվական իրողություն է և սերտորեն կապված է լեզվի ներքին օրինաչափությունների պատմական զարգացման հետ, և այս դեպքում գործ ունենք ոչ միայն այն բայերի հետ, որոնք կրկնասեռ են եղել գրաբարում ու միջին հայերենում և հասել են մինչև մեր օրերը՝ որպես քերականական ավանդույթ, այլև այն բայերի հետ, որոնք ենթարկվում են սեռային տեղաշարժի: Ընդ որում՝ մի դեպքում տեղաշարժն ընթանում է չեզոքից դե-

պի ներգործական, կամ հակառակը, մյուս դեպքում՝ կրավորականից դեպի չեզոք:

Մեր նպատակն է քննել մեր օրերում գոյացած կամ աշխուժացած կրկնասեռության դեպքերը, աշխատանք, որը բացարձակորեն լիարժեք չի կարող լինել՝ տվյալ շրջանի ողջ գրականությանը ծանոթանալու, գրական խոսակցական և ոչ գրական խոսակցական լեզվագոյաձևերի ուսումնասիրության, մերօրյա բոլոր բարբառներին և խոսվածքներին ծանոթ լինելու անհնարինության պատճառով:

Կրկնասեռությունը ևս մարդու որոնողական բնույթով է պայմանավորված. նա անընդհատ որոնում է նորանոր միջոցներ՝ իրականության առարկաների, երևույթների հարաբերությունները ավելի ճշգրիտ դրսևորելու համար. մարդը որոնում է, բայց նոր բառեր գրեթե չի ստեղծում, այլ եղածները «նորորեն» իմաստավորում է իմաստաբանորեն, քերականորեն, ոճաբանորեն, և սա մեր լեզվի զարգացման միտումներից մեկն է: Դրա հետ կապված առաջանում են նորանոր ձևեր ու փոփոխություններ լեզվի նաև քերականական կառուցվածքի սեռային համակարգում: Կրկնասեռության երևույթը լեզվի այն կարողության դրսևորումն է, որ քերականական նույն ձևով կարող են արտահայտվել քերականական տարբեր իմաստներ: Մեր լեզվում կան մեծ թվով բայեր, որոնք նույն ձևով կամ թե՛ ներգործական, թե՛ չեզոք, կամ թե՛ կրավորական, թե՛ չեզոք սեռի նշանակությամբ են գործածվում:

Երկսեռ բայերի մեջ սովորաբար ավելի ուժեղ է դրսևորվում սեռերից մեկը մյուսի համեմատությամբ: Եթե նման բայերի մեջ ուժեղ է արտահայտվում ներգործական սեռի գաղափարը չեզոք սեռիմաստի համեմատությամբ, ապա նման բայերը հանդես են գալիս սովորաբար որպես զուտ ներգործական բայեր և ունեն իրենց անմիջական կրավորական ձևերը: Իսկ նրանց չեզոք սեռը կամ հանդես է գալիս որպես առանձին բայ՝ նոր իմաստով, կամ էլ իմաստի մթագնումով սակավ է գործածվում: Օրինակ՝ **շրջել** բայը երկսեռ է եղել՝ տարբեր նրբիմաստներով և տարբեր սեռերով: Հետագայում նրբիմաստային տարբերությունների և իմաստային օտարացման հետևանքով այսօր ունենք նույն անունով երկու բայ՝ տարբեր իմաստներով և տարբեր սեռերով. բառարաններում էլ այս երկու բայերը ներկայացված են առանձնաբար՝ համապատասխան հղումնե-

րով՝ «ՇՐՋԵԼ, չբ. 1. Ձբոսնել, պտտել, ման գալ, շրջագայել: 2. Թափառել: 3. Պտտվել, պտույտներ գործել» և «ՇՐՋԵԼ, նբ. 1. Հակառակ երեսը՝ կողմը դարձնել, տակը՝ աստառը երես դարձնել: 2. Շուռ տալ, տեղահան անել, փլուզել: 3. Պտտել, դարձնել: 4. Ետ դարձնել, դեպի ետ դարձնել: 5. Փոխել, հեղաշրջել:»:

Օրինաչափության վերածված քերականական իրողություն է՝ այն բայերը, որոնց սեռային հատկանիշը միատարր չէ, որոնք միևնույն ձևով, առանց ձևային փոփոխության հանդես են գալիս ոչ թե մեկ, այլ երկու տարբեր սեռային արժեքով, կոչվում են կրկնասեռ բայեր, իսկ երևույթը՝ կրկնասեռություն:

Կրկնասեռության երևույթը հանգամանալից ուսումնասիրել է Ա. Աբրահամյանը՝ եզրակացնելով, թե կրկնասեռ են այն բայերը, որոնք համապատասխան բայական բառույթի մեջ (կամ միևնույն բառածևի սահմաններում) համատեղում են երկու սեռի քերականական առանձնահատկություններ՝ առանց բառական-քերականական լրացուցիչ փոփոխությունների՝ առաջ բերելով սեռային զուգահեռություն: Նա գրում է. « ժամանակակից հայերենի բայական համակարգում զգալի թիվ են կազմում այնպիսի բառույթները, որոնց մեջ սեռային հատկանիշը միատարր չէ: Այդպիսի բայերը համապատասխան բայական բառույթի մեջ միաժամանակ համատեղում են երկու սեռ՝ առաջ բերելով սեռային զուգահեռություն:

Այս կարգի բայերը կարելի է կոչել կրկնասեռ բայեր, իսկ ամբողջական քերականական երևույթը՝ կրկնասեռություն»: (3, էջ 703):

«Քերականական համանունները ժամանակակից հայերենում» աշխատության մեջ Ն. Պառնասյանը գրում է. «Հայտնի է, որ կրկնասեռ են կոչվում այն բայեը, որոնք առանց ձևաբանական փոփոխություն կրելու հանդես են գալիս տարբեր սեռերի հատկանիշներով՝ ներգործական-չեզոք, կրավորական-չեզոք, պատճառական-ներգործական: Այստեղ առկա է քերականական համանունության երևույթը, քանի որ նույն բայածևը արտահայտում է քերականական տարբեր՝ իրար հակադրող իմաստներ... Սեռային տեղաշարժերի ժամանակ լեզվի զարգացման որոշ ժամանակահատվածում բայերը կարող են լինել կրկնասեռ, այսինքն լինել քերականական համանուն» (92, էջ 74- 76):

«Շատ բայեր միևնույն ձևով հանդես են գալիս ոչ թե մեկ, այլ երկու տարբեր սեռային արժեքով; Այս երևույթը բացատրվում է նրանով, որ բայի սեռը պայմանավորված է բայիմաստի (գործողության) բնույթով, իսկ միևնույն բայը կարող է տարբեր բնույթի գործողություն արտահայտել: Դրանով էլ պայմանավորված՝ միևնույն բայը կարող է ձեռք բերել տարբեր սեռային արժեք: Այս երևույթը կոչվում է կրկնասեռություն», - գրում է Ս. Աբրահամյանը (7, էջ 194):

Կրկնասեռությունը առանձին քերականական կարգ չէ, քանի որ յուրաքանչյուր քերականական կարգ պետք է ունենա իր քերականական իմաստը և այդ իմաստը դրսևորող քերականական ձևը, բայց կրկնասեռ բայերի դեպքում օգտագործվում է եղած սեռային իմաստը կամ էլ եղած քերականական ձևը: Լեզվական նորմի տեսակետից սրանք անցումային իմաստափոխական-սեռափոխական երևույթներ են, որով նոր սեռիմաստներ և դրանց համապատասխան ձևացուցիչներ չեն առաջանում: Կրկնասեռության զարգացման միտումն այսօր, կարծում ենք, չեզոք սեռիմաստի համար սեռացուցչի առաջացումն է:

Դպրոցական դասագրքերից մեկում կրկնասեռության մասին չի հիշատակվում, իսկ երկրորդում ենթավերնագիր է առանձնացված՝ «Կրկնասեռութուն և կրկնասեռ բայեր», որում և սահմանվում է՝ **«Այն բայերը, որոնք տարբեր նախադասություններում տարբեր սեռով են հանդես գալիս, կոչվում են կրկնասեռ»** (61, 87):

Գրքում մեջբերված կրկնասեռ բայերն են՝ **տեսնել, բացվել, լվացվել, սանրվել, հագնվել:**

Հեղինակը նաև կրկնասեռության տարածքն է նշում՝ «Կրկնասեռ բայերը չեն կարող միաժամանակ լինել և՛ ներգործական, և՛ կրավորական, այլ լինում են ներգործական ու չեզոք կամ կրավորական ու չեզոք» (61, 88):

Բայական սեռերի այսօրինակ տեղաշարժերը ժամանակակից հայերենում հանկարծակի վրա հասած երևույթներ չեն, դրանք մեզ ներկայանում են բավական տևական լինելության ընթացքը: Հենց զարգացման այս տևական բնույթն էլ այս կարգի փոփոխություններ ընթացքում որոշ բայերի մեջ առաջ է բերում կրկնասեռություն, քանի որ առաջացող սեռային նոր երևույթը զուգակցվում է եղածի հետ: Ինչպես վերը նշվեց, փոփոխման ենթարկվող բայի սեռային

ավանդույթը միանգամից իր տեղը չի զիջում նոր առաջացող երևույթին: Այսպիսով՝ ստեղծվում է մի այնպիսի դրություն, երբ սեռային հին հատկանիշը դեռ լիովին չի անհետացել, բայց և առաջ է եկել սեռային նոր հատկանիշը, որն էլ իր հերթին դեռ վերջնականապես մոռացության չի մատնել նախկինը, ավանդականը: Եվ այսպես՝ նույն բայական բառույթի մեջ համատեղ հանդես են գալիս երկու սեռիմաստներն այնքան ժամանակ, մինչև որ նորը լիովին օրինական դառնա, իսկ հինն իսպառ մոռացվի ու տվյալ բայի համար դադարի օրինաչափական լինելուց: Նման դեպքում արդեն երբեմնի կրկնասեռ բայը կդադարի կրկնասեռ լինելուց ու կդառնա միասեռ բայ, և, հասկանալի է, այդպիսով սեռային անցումը կավարտվի: Գոնե այդ են ցույց տալիս մեր լեզվի պատմության համեմատաբար ավելի երկար ժամանակաշրջանի նմանօրինակ փաստերը:

Ժամանակակից հայերենը, որպես կենդանի ու զարգացող լեզու, սեռային փոփոխության՝ դեռևս չավարտված դրության շատ բնորոշ փաստեր է ընծայում ուսումնասիրողին: Յուրաքանչյուր բայի մեջ սեռային այդ անցման դեռևս չավարտված պատկերը չի կարելի գնահատել այլ կերպ, քան որպես կրկնասեռություն:

Կրկնասեռության արտահայտությունը

Կրկնասեռությունը հիմնականում դրսևորվում է զուգասեռային հետևյալ մանրակաղապարներով՝

ա/ ներգործական սեռ // չեզոք սեռ

բ/ չեզոք սեռ // ներգործական սեռ

գ/ կրավորական սեռ // չեզոք սեռ

դ/ չեզոք սեռ // կրավորական սեռ:

Խոսելով բայական համակարգի բառածևերի համանունության մասին, անդրադառնալով նաև կրկնասեռ բայերին՝ Ն. Պառնասյանն այս առումով համանուն բայածևերը բաժանում է հետևյալ խմբերի՝

ա/ ներգործական և չեզոք սեռերի իմաստներ արտահայտող համանուն բայածևեր.

բ/ կրավորական և չեզոք սեռի իմաստ արտահայտող համանուն բայածևեր.

գ/ պատճառական և ներգործական, պատճառական և չեզոք սեռերի իմաստ արտահայտող համանուն բայաձևեր.

դ/ ներգործական և կրավորական սեռերի իմաստ արտահայտող համանուն բայաձևեր (92, էջ 75-78):

Վերոհիշյալ զուգասեռային նրբիմաստները հաշվի առնելով՝ ենթադրելի են դառնում նաև հետևյալ մանրակաղապարները՝

ներգործական // կրավորական
կրավորական // ներգործական
պատճառական // ներգործական
ներգործական // պատճառական
պատճառական // չեզոք
չեզոք // պատճառական:

Քանի որ կրկնասեռության քննարկումը կատարվում է լեզվական նորմով սահմանված կանոններով, այսինքն՝ նորմատիվ քերականություններում ընդգրկված երեք սեռերի շրջանակներում, ուստի **պատճառական // չեզոք, չեզոք // պատճառական** մանրակաղապարները կքննարկվեն համապատասխանաբար **ներգործական // չեզոք** և **չեզոք // ներգործական** զուգասեռությունների մեջ:

Ներգործական // կրավորական և **կրավորական // ներգործական** մանրակաղապարները եզակի դեպքեր են ներառում և առայժմ ավելի շատ շեղումների, բացառությունների պատրանք են ստեղծում:

Եթե «ժամանակակից հայոց լեզու» աշխատությունը ևս նորմատիվ քերականությունների շարքում է, ապա կարելի է ավելացնել **ներգործական սեռ → պատճառական սեռ** և **պատճառական սեռ → չեզոք սեռ** տեղաշարժերը: Պատճառական սեռածանցով բայերի մի խումբ նույնպես կրկնասեռ է՝ կարող է արտահայտել և՛ ներգործական, և պատճառական իմաստ: **Պատճառական // ներգործական** և **ներգործական // պատճառական** մանրակաղապարները լեզվական նորմի տեսանկյունից ընդունելի չեն, քանի որ պատճառականը համարվում է ներգործական սեռի մի տարատեսակը:

Անհրաժեշտ է նշել, որ առաջին տարբերակները բայի հիմնական սեռիմաստներն են, իսկ երկրորդները՝ զուգահեռաբար առաջացած, առաջացող սեռիմաստները:

Հիշյալ մանրակաղապարների աստիճանական զարգացումն էլ փոփոխություն կառաջացնի ձևաբանական-բայական համակարգի սեռային մանրահամակարգում, որն էլ իր հերթին լեզվական նորմի փոփոխության պատճառ կդառնա...

Կրկնասեռությունը սերտորեն կապված է լեզվի զարգացման հետ. եթե կրկնասեռ բայերի մի մասն անցյալի ժառանգություն է, ապա մյուս մասն էլ նոր ժամանակների լեզվական-քերականական իրողությունների արդյունք է: Նոր ժամանակների իրողություն է նաև կրավորական բայերի չեզոքսեռաիմաստի ձեռք բերման աշխուժացումը, որը, երևի, թաքնված միտում ունի, և չեզոք սեռի արտահայտման ձևի առաջացումը կարծես ժամանակի խնդիր է դառնում:

Հիմնականում ներգործական սեռ → չեզոք սեռ և չեզոք սեռ →ներգործական սեռ ուղղությամբ կատարված և կատարվող միջսեռային տեղաշարժերն են լեզվական քննության ենթարկվել: Չեզոք և ներգործական սեռերի տարբերակումը ձևաբանորեն չի դրսևորվում. սրանց արտահայտումը կախված չէ քերականական բառափոխությունից (քերականական ածանցումից): Ներգործական և չեզոք սեռերն իրենց մեջ համատեղող կրկնասեռ բայերը մեզ ներկայանում են իրենց բառական սկզբնաձևերով՝ իբրև բառարանային ցանկի միավորներ: Ժամանակակից հայերենի բոլոր սկզբնաձևային բայերն ըստ գործողություն կատարողի և քերականորեն որպես ուղիղ խնդիր վերացարկված կրող առարկայի (օբյեկտի) նկատմամբ ունեցած հարաբերության բաժանվում են երկու խմբի՝

1/ բայեր, որոնք ունեն այդպիսի խնդիր առնելու հատկություն.

2/ բայեր, որոնք չեն կարող ունենալ այդպիսի խնդիր:

Առաջին խումբը ներգործական սեռի է, երկրորդը՝ չեզոք: Սրանք, նույնը լինելով գործողության սուբյեկտի նկատմամբ ունեցած հարաբերության դրսևորման քերականական ձևով (երկու դեպքում էլ գործողություն կատարողը վերացարկվում է որպես քերականական ենթակա), հակադրվում են ուղիղ խնդրով դրսևորված օբյեկտ առնելու կամ չառնելու հակադրությամբ: Ներգործական սեռ - չեզոք սեռ հակադրությունը ձևաբանորեն նշույթավորված չէ: Նշանակում է՝ ձևաբանական մակարդակում նույն ձևով արտահայտված բայերի **ներգործական սեռ // չեզոք սեռ** կրկնասեռությունը որոշել հնարավոր չէ: Տարբերակումը կատարվում է մասամբ

նրանց ցույց տված իմաստային հարաբերությունների շրջանակում, բայց և հիմնականում ու վերջնականապես ճշտվում է շարահյուսական մակարդակում՝ ըստ նրանց թելադրած շարահյուսական կառուցվածքների: Ներգործական սեռի տարբերակման ձևաբանական հատկանիշ պետք է համարել միայն այս բայերի՝ **վ** սեռածանցն ընդունելու և դրանով կրավորական սեռի վերածվելու հատկությունը, մի բան, որ հատուկ չէ չեզոք սեռի բայերին:

Ներգործական սեռ-չեզոք սեռ հակադրությունը երբեմն արտահայտվում է բառակազմական **ել** և **(ան)ալ** ձևույթների հակադրությամբ:

Մի շարք հարադրություններում այս հակադրությունն իրացվում է **անել-լինել, բերել-գալ** հակադրությամբ, որը ևս պետք է համարել ներգործական և չեզոք սեռերի տարբերակման ձևաբանական միջոց:

ա/ Չեզոք // ներգործական մանրակաղապարը

Չեզոք սեռ // ներգործական սեռ զուգահեռության մեջ ընդգրկվում են կրկնասեռ այն բայերը, որոնք բառարանային միավոր հանդիսացող բայական մի ընդհանուր բառույթի մեջ առավելապես պարունակում են չեզոք սեռի հատկանիշներ. ներգործական սեռային նշանակությունը նոր առաջացող քերականական իրողություն է, որի ծավալումը կարող է հասցնել միասեռության:

Լեզվաբանական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սեռային տեղաշարժեր առավելապես կատարվում են հենց այս ուղղությամբ: Եվ դա հասկանալի է. հայտնի է, որ կան բավական թվով չեզոք սեռի բայեր, որոնց ցույց տված գործողության կատարման համար պահանջվում է մի առարկա, օբյեկտ, որ քերականորեն վերացարկվում է ոչ թե որպես ուղիղ խնդիր, ինչպես ներգործական սեռի բայերի մոտ է, այլ որպես հանգման խնդիր: Ահա այս բայերի գործողության բնույթը հիմք է հանդիսացել, որ քերականական նմանությամբ այս բայերի մի մասն ընդունի ոչ միայն հանգման խնդիր, այլև դրան զուգահեռ՝ ուղիղ խնդիր, որն ի վերջո հանգեցնում է չեզոք → ներգործական սեռային տեղաշարժի: **Չեզոք սեռ // ներգոր-**

ծական սեռ զուգահեռությամբ հանդես եկող շատ բայերի՝ **անցնել, աշխատել, ապրել, լալ, նստել, խոսել, երգել, բաբախել, դոփել, ճառագել, շնչել, տենչալ, ցայտել, ժայթքել,** ներգործական նշանակությամբ կիրառություններն աշխուժացել են խորհրդային շրջանից սկսած:

Գերազանցել, գրոհել, դիմավորել, ծափահարել, կարոտել, հսկել, հուսալ, ձեռնարկել, սպասարկել, տենչալ, ունկնդրել և այլ բայեր հնում պահանջել են միայն տրական հոլովով անուղղակի խնդիր և հանդես են եկել որպես չեզոք սեռի բայեր: Լեզվի զարգացման ներկա փուլում սրանք, զուգահեռաբար ընդունելով նաև ուղիղ խնդիր, հակում են ցուցաբերում դեպի ներգործականություն՝ վերածվելով նաև ներգործական սեռի բայերի (**հսկել** *մուտքը, քունը* և **հսկել** *մուտքին, քնին*, **կարոտել** *հողին, աղբյուրին* և **կարոտել** *հողը, աղբյուրը*, **ունկնդրել** *աղոթքին, ծայնին* և **ունկնդրել** *աղոթքը, ծայնը*):

Սրանցից **դիմավորել, ձեռնարկել, գերազանցել, տիրել** բայերը գերազանցապես միասեռության են ձգտում՝ վերածվելով ներգործական սեռի բայերի՝ (**դիմավորել** *Նոր տարի*, **ձեռնարկել** *նոր գործ*, **գերազանցել** մեկի *սպասելիքները*, **տիրել** *երկիրը* և այլն):

Նկատելի է, որ այս բայերն իրենց արտահայտած գործողությունների բնույթով մոտենում են ներգործական սեռի բայերին:

Ապրել բայը, հիմնականում լինելով չեզոք, ունի նաև ներգործական սեռի կիրառություն «կյանքի ընթացքում զգալ, կրել» իմաստով, որը հատկապես աշխուժացավ ու տարածվեց մեր լեզվի զարգացման խորհրդային շրջանում: Նույն բայից կազմված **վերապրել** բայը միայն և միշտ ներգործական սեռի է:

Աշխատել-ը չեզոք սեռի բայ է՝ իր հիմնական իմաստներով՝ «աշխատանք, գործ կատարել», «զբաղվել մի բանով, նվիրվել մի բանի», «ջանալ, ձգտել», բայց իր մեկ իմաստով՝ «վաստակել», «ձեռք բերել», զուգահեռաբար ներգործական սեռի բայ է և պահանջում է ուղիղ խնդիր:

Վաստակել բայն ունի նաև «հոգնել» իմաստը և այս իմաստով չեզոք սեռի բայ է:

Սպասել-ը չեզոք սեռի բայ է՝ «պատրաստ լինել մի բան անելու», «մի տեղում կամ մի դրության մեջ մնալ, մինչև..», «համբերել»,

«հապաղել», «աչքը դնել մի բանի վրա» իմաստներով, իսկ «ակնկալել, նախատեսել», «կարծել» և այլ իմաստներով ներգործական է:

Անցնել չեզոք սեռի բայ է իր հիմնական իմաստներով՝ «հեռանալ», «գնալ», «անց կենալ», «վերջանալ», իսկ նույն բայի «սովորել, ուսումնասիրել», «փորձել», «աչքի անցկացնել» «թերթել» նշանակություններով ներգործական սեռի կիրառություններն ավելի ու ավելի են տարածվում (**անցնել** *չափ ու սահման*, **անցնել** *հայերեն* և այլն):

Խաղալ բայը, ըստ «Ժամանակակից հայերենի բացատրական բառարանի», ունի իմաստային 24 երանգ, որոնցից մեկ-երկուսը հնացած են («ձևացնել» և «նվագել»), իսկ մյուսները կարելի է խմբավորել «շարժվել, տարուբերվել» և «մի բան խաղալ, պարել, դեր կատարել» իմաստների շուրջը: Իր հիմնական իմաստներով չեզոք սեռի բայ է (1.«Ուրախ ժամանակ անցկացնել, զվարճանալ». 2. Մարզական մրցությամբ զբաղվել, մրցել». 3. «Որևէ առարկայով զբաղվել, պտտեցնել ևն». 4. Թղթախաղով կամ այլ մոլեխաղով զբաղվել». 5. Որևէ լուրջ գործի անլուրջ ու թեթև վերաբերվել». և այլն. մոտ 14 իմաստ), իսկ երկրորդ իմաստային դաշտով ներգործական սեռի բայ է:

Սովորել բայը «ընտելանալ», «վարժվել» նշանակությամբ չեզոք սեռի բայ է, սակայն ունի նաև «ուսանել, վարժությամբ յուրացնել մի բան» ներգործական իմաստը:

Նայել չեզոք բայը «քննել, զննել» իմաստով ներգործական է:

Հնչել բայն իր գոյություն ունեցող կամ կենդանի իմաստներով չեզոք սեռի բայ է՝ «Ձայն, հնչյուն արձակել», «երգի՝ եղանակի ձայն առաջանալ», «արձագանք տալ», «ականջներում աղմուկ առաջանալ, ականջը խոսել» իմաստներով. զուգահեռաբար գործածվում է ներգործական սեռի նշանակությամբ՝ «արտասանել» իմաստով և հատկապես այն դեպքում, երբ ունի «հնչեցնել» իմաստը:

Հոգալ բայը «մտածմունքի մեջ ընկնել, տխրել», «հոգս քաշել» իմաստներով չեզոք սեռի է, իսկ «խնամք տանել», «կարիքները լրացնել» իմաստներով ներգործական է:

Գրոհել-ը «հարձակվել» իմաստով չեզոք է, իսկ «գրոհով գրավել, նվաճել» նշանակությամբ՝ ներգործական («Նրանք **գրոհեցին** տիեզերական հեռաստաններ»):

Իր հիմնական իմաստներով («շանթեր արձակել, կայծակ երևալ» և այլն) չեզոք սեռի բայ է **շանթել**-ը, բայց «սուր խայթել», «խիստ վիրավորել» իմաստներով զուգահեռաբար ներգործական սեռի նշանակություն ունի:

Ունկնդրել բայը «հետևել, մեկի խորհրդով շարժվել» նշանակությամբ, **լսել** բայի նմանակությամբ, ներգործական է, և նրա՝ չեզոք սեռով կիրառություններն արդեն հնաոճ են, հնացած և ոչ հանձնարարելի:

Լեզվի զարգացման ներկա փուլում արդեն նվազել են **ձեռնարկել** բայի չեզոք սեռով գործածությունները (բայը չեզոք սեռով է հանդես գալիս «ձեռք զարնել, սկսել, նախապատրաստվել» նշանակություններով):

Տենչալ բայը ևս առաջներում չեզոք սեռի էր, այժմ նկատելիորեն ավելի շատ կիրառվում է ներգործական սեռով, քան չեզոք (հաջողություն **է տենչում**):

Ծափահարել բայը, որ նախախորհրդային շրջանում գերազանցապես չեզոք սեռով էր կիրառվում, այժմ հիմնականում ներգործական է (**ծափահարեց** արտիստի երևալը):

Դեպի ներգործականություն է հակված նաև **սպասարկել** բայը, թեև այժմ էլ քիչ չեն չեզոք սեռիմաստով գործածության դեպքերը:

Հենց նախախորհրդային շրջանում էլ հազվադեպ են հանդիպում **հաղթահարել** բայի չեզոք սեռով կիրառությունները. այժմ այն բացառապես ներգործական է:

Դրժել բայը, որ առաջներում որպես չեզոք մեծ մասամբ տրական հոլովով էր խնդիր ընդունում, այժմ միայն հայցականով է խնդիր պահանջում:

Ինչպես հին հայերենում, այնպես էլ արևելահայ գրական աշխարհաբարում ներգործական նշանակությամբ տարածված է եղել **ցրել** բայի **ցրվել** ձևը՝ **ցրիվ**-ից կազմված: Հետագայում, հատկապես լեզվի զարգացման խորհրդային շրջանում, **ցրվել**-ն սկսեց գիտակցվել որպես կրավորակերպ չեզոք, որից էլ «վ»-ի անկումով տարածվեց **ցրել** ձևը՝ ներգործական նշանակությամբ: **Ցրել**-ը խոսակցական-ժարգոնային լեզվում նաև «թռցնել, գողանալ» ներգործական իմաստն ունի:

Բանավոր լեզվում գործածվող **պրծնել** բայը նորից սեռային երկփեղկում ունի. «վերջանալ», «պոկ գալ, ազատություն ստանալ» երանգներով չեզոք սեռի է, իսկ «ավարտել» իմաստային երանգով՝ ներգործական:

_**Տիրապետել** չեզոք բայը խոսակցական լեզվում երբեմն հանդես է գալիս ներգործական սեռով և հայցական (ուղղական) հոլովով խնդիր է պահանջում («Նա **տիրապետում է** իր գործը»). նման կիրառությամբ այն գրական հայերենում հանձնարարելի չէ, բայց և բացառված չէ, որ նման գործածությունների հաճախացման պատճառով այն իմաստափոխվի ներգործական սեռի:

Տիրել բայը, որ միշտ տրական հոլովով խնդիր է առնում, սկսել է հայցական հոլովով էլ խնդիր առնել՝ **տիրել** աշխարհին և **տիրել** աշխարհը: Այս բայի համար Աճառյանը գրում է, որ հայերենում **տիրել** ըմբռնվում է ոչ թե իբրև «նվաճել», այլ «տեր դառնալ»: Պ. Բեդիրյանը նույն բայի ներգործական սեռային կիրառությունը սխալ է համարում (41, էջ 126):

Մի շարք չեզոք սեռի բայեր իրենց արտահայտած իմաստի որոշ ակտիվացման հետևանքով զուգահեռաբար կիրառվում են նաև ներգործական սեռով, ինչպես օրինակ՝ **բուրել, դոփել, հորդել, ճառագել, շնչել, տեղալ, ժայթքել, շառագունել,** (դեմքը), **զառանցել, լացել, բխել** («Աղբյուրները *լույս* **են բխում»**, «Մորս աչքերն **են լացել** *կուտորածներն* հայկական»):

Համատեղել բայը, հիմնականում լինելով չեզոք, որոշ դեպքերում կարող է ներգործականի նշանակություն արտահայտել:

Լսել կրկնասեռ բայում չեզոք սեռի նշանակությամբ կիրառություններն արդեն հնաբանություններ են:

Անսովոր է **բռնկել** չեզոք սեռի բայի հետևյալ կիրառությունը ներգործական նշանակությամբ՝ «Կայծը բռնկել էր բոլոր *օջախները*»:

Խրախուսելի չէ նաև **առարկել** բայի ներգործական սեռով հանդիպող գործածությունը «ժխտել» իմաստով («**Չի առարկի** *օգտակարությունը*»):

Համակրել չեզոք բայը ևս որոշ հակում է ցուցաբերում դեպի ներգործականություն՝ «**համակրել** ազնիվ *քայլը*»: Այստեղ ևս նկատելի է այն երևույթը, որ գերազանցապես անձ ցույց տվող գոյականների հետ առնչվող չեզոք սեռի բայերը, ընդունելով տրակա-

նաձև անուղղակի խնդիր, իրենց խնդրի ձևաբանական դրսևորումով նույնացել են ներգործական սեռի բայերի հետ, որոնց ուղիղ խնդիրը նույնպես տրականաձև է, ուստի և սկսել են իր ցույց տվող գոյականների դեպքում էլ նրանց նմանվել՝ պահանջելով հայցական հոլովով խնդիր:

Իմաստափոխության հիմքի վրա է առաջացել **ընկնել** չեզոք սեռի բայի ներգործական իմաստով կիրառությունը ժողովրդա-խոսակցական լեզվում՝ «տուժել, կորցնել, վնասվել» նշանակություններով («Նա 50 հազար դրամ **ընկավ**»):

Խրախուսելի չէ **հանդիպել** չեզոք սեռի բայի ներգործական սեռի նշանակությամբ կիրառությունը («Ամսագրում հանդիպեց նրա *աշխատությունը*»). այն «դեմ առնել» «դեմ գալ» իմաստով **ու՞մ, ինչի՞** հարցերին պատասխանող խնդիր է պահանջում:

Շվշվացնել բայն իր **շվվցնել** խոսակցական տարբերակով ներգործական սեռի նշանակություն ունի «թռցնել, փախցնել» իմաստով:

Նույն ձևով՝ **խնայել, սովորել, սպասել, ստել, քշել, փչել** բայերը: Մի շարք բայեր (**խանգարել, խոչընդոտել, տիրել, տիրապետել, վնասել, համակրել, բավարարել, հետևել, առարկել, հանդիպել** և այլն) հավասարապես դրսևորում են և՛ ներգործական, և չեզոք սեռի իմաստներ: Նման դեպքերում անհրաժեշտ է հաշվի առնել իմաստային, խնդրառական գործոնները, քանզի սեռային տատանումները երբեմն պատճառաբանված չեն լինում:

Երբեմն չեզոք սեռի բայը բանաստեղծական խոսքում գործածվում է իր համապատասխան պատճառական-ներգործականի փոխարեն՝ **հնչել**-ը՝ **հնչեցնել**-ի փոխարեն (Ով էր՝ հնչեց իմ հին սրտում՝ Սիրո զմրուխտ մեղեդին (Ավ. Իս.), **ծագել**-ը՝ **ծագեցնել**-ի փոխարեն, **կանգնել**-ը՝ **կանգնեցնել**-ի: Սրանք **չեզոք սեռ // ներգործական–պատճառական** մանրակաղապարի դրսևորումներ են: Մ. Ասատրյանը չեզոք սեռի բայերի՝ իրենց համապատասխան պատճառական-ներգործական իմաստով գործածությունը համարում է գրաբարի ազդեցության արդյունք: **Ծագել, հնչել, կանգնել** բայերը գրաբարում եղել են ներգործական սեռի բայեր (առաջին երկուսը արտահայտել են նաև չեզոք իմաստ): Եթե 20-րդ դարի սկզբին մեր գրական լեզվում «**արծան** կանգնել» և «արծան **կանգ-**

նեցնել» և «մեղեդի **հնչել**» և «մեղեդի **հնչեցնել**» ձևերը զուգահեռ ձևեր էին (առաջինը՝ որպես գրաբարյան, իսկ երկրորդները՝ որպես ժողովրդական), ապա այսօր առաջին տարբերակները հնացած են, և հաղթանակել են ժողովրդական ձևերը:

Սխալ է և հնացած նաև **արածել** չեզոք բայի գործածությունը **արածեցնել** (արածացնել) ներգործականի փոխարեն:

Երբեմն չեզոք սեռի բայերը որպես ուղիղ խնդիր են առնում կամ իրենց արմատը կամ համանիշ բառի արմատը: Այս երևույթը քերականագիտության մեջ կոչվում է գործողության ներքին խնդրառություն (*կռիվը* **կռվել**, **ննջել** սև *ննջը*, *երդում* **երդվել**, *քուն* **քնել**, *լաց* **լացել**): Նման խնդրառությամբ կարող են հանդես գալ ինչպես չեզոք, այնպես էլ ներգործական սեռի բայերը: Բնականաբար ներգործական սեռի բայերի դեպքում կրկնասեռության հնարավորության խոսք լինել չի կարող: Միաժամանակ, ըստ Ա. Աբրահամյանի, չեզոք սեռի այսպիսի կիրառություն ունեցող բայերի մեջ չի կարելի ներգործական սեռի հատկանիշ դիտել, սրանց մեջ չկան իմաստային փոփոխության նշույլ անգամ և ոչ էլ որևէ տիպի փոխաբերական առում: Նման դեպքերում բայը իր յուրատեսակ շարունակությունն է գտնում ներքին խնդրի մեջ: Դրանք ևս չեզոք սեռի բայեր են (3, էջ 679):

Ն. Պառնասյանը նույնպես եզրակացնում է, որ այսպիսի կիրառություններում բայը մնում է չեզոք սեռի՝ չփոխելով սեռային որևէ հատկանիշ: Տ. Սաֆարյանը հակառակ կարծիքին է. «Սակայն, հիմք ընդունելով շարահյուսական կաղապարը, (երգ // երգել, հիմնը // երգել), կարծում ենք, չպետք է անտեսել, որ նշված չեզոք բայերը թեկուզ իրենց արմատ-բառը կամ համանիշ արմատական բառը ընդունել են ուղիղ խնդիր: Այսինքն՝ այս բայերը նման կիրառություններում ունեն ներգործական սեռի նշանակություն՝ ցուցաբերելով կրկնասեռություն» (108, էջ 124):

Մեր կարծիքով՝ մերօրյա հայերենում նման գործածություններում բայը, թեկուզ և ժամանակավորապես, չի փոխում իր սեռային հատկանիշը և մնում է չեզոք սեռի. այստեղ առավել շատ ոճական-արտահայտչական հնարանքն է ընդգծվում: Միաժամանակ չի կարելի վստահորեն ասել, որ այստեղ էլ համաբանության օրենքը կենսունակ չի դառնա, և նման բայերն իրենց խնդրառական ոլորտը

նույնատիպ ձևեր չեն ընդգրկի. լեզվի փոփոխությունը երբեմն սկսվում է մի առանձին ձևից...

բ/ Ներգործական // չեզոք մանրակաղապարը

Լեզվի զարգացման ներկա փուլում նկատվում է **չեզոք սեռ // ներգործական սեռ** անցման հակառակ երևույթը՝ **ներգործական սեռ // չեզոք սեռ** տեղաշարժը, երբ որոշ ներգործական սեռի բայեր հակում են ցուցաբերում կիրառվելու չեզոք սեռով: Այս դեպքում կրկնասեռ բայերի այս խումբը բառարանային միավոր հանդիսացող բայական մի ընդհանուր բառույթի մեջ ներգործական սեռիմաստին զուգահեռ հանդես է գալիս նաև չեզոք սեռի հատկանիշով:

Խնայել-ը իր հիմնական իմաստով ներգործական սեռի է, իսկ «գթալ», «կարեկցել» իմաստով չեզոք է:

Բավարարել բայը, լինելով ներգործական, հանդես է գալիս չեզոք սեռի նշանակությամբ, հատկապես երբ նրա խնդիրն առնչվում է իր ցույց տվող գոյականի հետ (**բավարարել** ցանկությունները և **բավարարել** *ցանկություններին*): Մերօրյա հայերենի համար նմանօրինակ կիրառությունը խորթ է (բավարարել + ի՞նչը և ոչ թե ինչի՞ն):

Փոխարինել բայը ներգործական սեռի է, բայց ունի նաև չեզոք սեռի նշանակություն և կիրառություն:

Պատել-ը, լինելով ներգործական, որոշ դեպքերում ցուցաբերում է չեզոք սեռին անցնելու հակում («Մառախուղը պատել է *քաղաքին*»). այստեղ չի բացառվում նաև անձնավորման հանգամանքը («Թախիծը **պատել էր** *աղջկան*», բայց և «Թախիծը **պատել էր** աղջկա *դեմքը*»:):

Քշել բայն իր գործուն իմաստների բացարձակ գերակշռությամբ ներգործական սեռի բայ է, իսկ «շեշտակի գնալ մի բանի ուղղությամբ» իմաստով զուգահեռաբար գործածվում է չեզոք սեռի նշանակությամբ:

Պրոֆ. Ա. Աբրահամյանը նաև **ողջունել, ափսոսալ** (**ափսոսել**), **գգվել** ներգործական սեռի բայերի համար է նշում քերականա-

կան-սեռային նման անցումը, բայեր, որոնք սկսում են չեզոք սեռով էլ կիրառվել (**ողջունել** *արևին*, **ափսոսալ** դալար *ծյուղերին*, **գգվել** այգու *ծառերին* և այլն): Նկատելի է, որ այս բայերի նման խնդրառությունը որոշ դեպքերում պայմանավորված է խնդիրների անձնավորմամբ, սակայն, թեկուզ և այս հիմնավորվածությամբ, հիշյալ բայերը կարող են գիտակցվել իբրև չեզոք և աստիճանաբար տարածվել չեզոք սեռի կիրառություններով:

Հիմնականում ներգործական սեռի են այն բայերը, որոնք նշանակում են «նախատիպով նշված առարկան ունենալու» իմաստ և կազմված են **-ոտ** ածանցով բաղադրված ածականներից (**հողոտել, քարոտել, ջրոտել, արյունոտել, ավազոտել, մրոտել, թեփոտել, կեղտոտել, ներկոտել, ժանգոտել** և այլն): Այս բայերը խոսակցական լեզվում նաև չեզոք սեռով են գործածվում, որտեղից էլ թափանցում են գրական լեզու և կրկնասեռության պատճառ դառնում:

Լեզվական օրենք է՝ <u>չեզոք սեռի մի շարք բնաձայնական բայեր</u> (**բզզալ, խռխռալ, ծլվլալ, վշշալ, փռշտալ** և այլն) <u>պատճառական ածանց ստանալիս</u> (**բզզացնել, խռխռացնել, ծլվլացնել, վշշացնել, փռշտացնել**...) <u>չեն սեռափոխվում. մնում են չեզոք սեռի</u>: Սակայն քերականական այս երևույթը մեր լեզվում բացարձակ օրինաչափության չի վերածվել, և որոշ բնաձայնական չեզոք բայեր, պատճառական ածանց ընդունելով, փոխում են իրենց սեռը. **դմդմբալ, շրխկալ, փռփռալ, խշշալ, ճղճղալ, չփչփալ**... սկզբնատիպ բայերի պատճառականները՝ **դմդմբացնել, շրխկացնել, փռփռացնել, խշշացնել, ճղճղացնել, չփչփացնել**..., նաև ներգործական սեռի են: Այս դեպքում սեռային փոփոխությունը հատկապես պայմանավորված է բայի գործածության բնույթով և օգտագործողի նպատակով. եթե օգտագործման նպատակը նույն բնաձայնական իմաստի արտահայտումն է, ապա այն մնում է չեզոք սեռի, իսկ եթե նրանով արտահայտված գործողությունը ներկայացվում է ենթակայի և խնդրի միջև եղած միջնորդական հարաբերությամբ, ապա բայը սեռափոխվում է և անցնում ներգործականների շարքը: Այսպես օրինակ՝ «Ջուրը կատաղի հևքով **չփչփացնում էր** և առաջ ընթանում» և «Մոլեգնող քամին **չփչփացնում էր** լճակի ջրերը» նախադասություններում նույնանուն բայը մի դեպքում չեզոք սեռով է հանդես եկել և փոխարինում է իր սկզբնատիպ **չփչփալ** չեզոք բային. չկա անցո-

ղականության ու պատճառականության գաղափարը, միայն ընդգծվում է գործողության գաղափարը: Իսկ երկրորդում պատճառական ածանցումը առաջ է բերել սեռի փոփոխություն, որը հանդես է եկել պատճառական-միջնորդական գաղափարի հետ միասին, և բայը այս իմաստով ներգործական սեռի է:

Եթե քերականական–իմաստային այս երևույթները սովորաբար հանդես են գալիս բնածայնական բայերից կազմված բայածևերում, ապա դրանք հազվադեպ են ոչ-բնածայնական բայերի պատճառական ածանցման մեջ. ոչ-բնածայնական սկզբնատիպ ունեցող մի-երկու բայ պատճառական ածանցումով սեռափոխության են ենթարկվում: Օրինակ՝ **տաքացնել** և **դողացնել** բայերը երբեմն գործածվում են չեզոք սեռի նշանակությամբ («Տղան **դողացնում էր**», «Կինը **տաքացրեց** և անկողին ընկավ»), սակայն իմաստային այսպիսի երանգով դրանք լայն կիրառություն չունեն:

գ/ Կրավորական // չեզոք մանրակաղապարը

Ժամանակակից հայերենում ներգործական սեռի բայերի ճնշող մեծամասնությունը վ սեռածանցն ընդունելու հատկություն ունի: Վերջինս, չփոխելով բայի ցույց տված գործողության հիմքում ընկած առարկայական հարաբերությունների բնույթը, փոխում է դրանց քերականական դրսևորման եղանակը՝ բային հաղորդելով սեռային նոր որակի առանձնահատկություններ: Այն է՝ մի դեպքում բայը զրկում է ուղիղ խնդիր առնելու հատկությունից, մյուս դեպքում փոխում է նաև բայահիմքի ցույց տված գործողության հարաբերությունը քերականական ենթակայի նկատմամբ: Վերջինս այս դեպքում ոչ թե գործողություն կատարողն է, այլ կրողը, որը հանդիսանում է հաղորդման ելակետային առարկան: Ստացվում է կրավորական սեռի բայերի խումբը: Կրավորական սեռ – ներգործական սեռ հակադրությունը ձևաբանորեն նշույթավորված է և շարահյուսական հակադիր կառուցվածքներ է թելադրում:

Մյուս կողմից՝ եթե չեզոք սեռի բայերի ցույց տված գործողության կատարման համար պահանջվում է միայն մեկ առարկա՝ գործողություն կատարողը, որը քերականական ենթական է, ապա կրա-

վորական սեռի բայերի ցույց տված գործողության հիմքում ընկած է երկու առարկաների՝ կատարողի և կրողի հարաբերությունը: Սակայն շատ կիրառություններում կրավորական սեռածանց ունեցող բայերի գործողության անմիջական ոլորտում ևս լինում է միայն մի առարկա (գործողը կամ եղողը)՝ վերացարկված որպես քերականական ենթակա: Այս դեպքում վերանում է կրավորական սեռ – չեզոք սեռ հակադրությունը, և արդյունքում կրավորական սեռածանց ունեցող չեզոք սեռի բայերի խմբի գոյության փաստն է:

Շատ կրավորաձև բայերի կրկնասեռությունը արդյունք է կրավորական սեռ – չեզոք սեռ տեղաշարժի: Օրինակ՝ **հանձնվել, պատրաստվել, սկսվել, բաժանվել, շարժվել, փակվել, բացվել, տեղափոխվել, տանջվել, հուզվել** բայերը կրավորական սեռ // չեզոք սեռ զուգահեռությամբ են գործածվում: Զուգահեռությունների առաջին եզրերը կրավորական սեռի բայեր են և ցույց են տալիս, որ ենթական գործողությունն իր վրա է կրում ուրիշից, երկրորդ եզրերը չեզոք սեռի բայեր են և ցույց են տալիս, որ ենթական գործողությունը ուրիշից չի կրում, այլ ինքն է կատարում: Նույն ձևով չեզոք սեռի իմաստ են արտահայտում **փոխվել, կուտակվել, պոկվել, ավարտվել, ազատվել, ապականվել, գլորվել, զատվել, թունավորվել, խորտակվել, թեքվել, հպվել, խառնվել, ոգևորվել, ծնվել, ծռվել, խեղդվել, խրվել, համոզվել, հավաքվել, կախվել, անջատվել, շրջվել, բորբոքվել, փռվել** և շատ այլ բայեր:

Թեև հայ քերականների կողմից բուն կրկնասեռությունը քննության առարկա է դարձել հիմնականում ներգործական և չեզոք բայերի միջև, կրավորաձև բայերը նույնպես կարող են առանց ձևային փոփոխության գործածվել թե՛ կրավորական, թե՛ չեզոք սեռի արժեքով:

Ներգործական շատ բայեր, վ ածանցն ստանալով, բոլոր դեպքերում անխտիր բուն կրավորական սեռի նշանակություն չեն արտահայտում, ուստի այդպիսի ածանցման ենթարկված բայածևերը բոլոր դեպքերում չի կարելի անվերապահորեն համարել բուն կրավորական սեռի: Ժամանակակից գրական հայերենում անժխտելի իրողություն է ներգործականներից կազմված այն կրավորականների գործածությունը, որոնք կարող են կիրառվել և՛ կրավորական, և՛ չեզոք սեռով: Այս բայերի չեզոք սեռը արտահայտվում է կրավորա-

կան ձևի միջոցով: Այս դեպքում ևս «ձայնն մի է և իմացումն երկու»: Հետևաբար բայը կարող է կրավորական սեռի ձևաբանական ցուցիչն ունենալ, բայց կրավորական սեռի չլինել: Մ. Աբեղյանն իր «Հայոց լեզվի տեսության» մեջ (1, 378) մանրամասնորեն քննարկում է կրավորական բայերի գործածությունները և ճիշտ կերպով նկատում, որ դրանք գործածվում են՝

ա/ բուն կրավորական իմաստով

բ/ անդրադարձ իմաստով

գ/ փոխադարձ իմաստով

դ/ չեզոք իմաստով:

Ա. Մուրվալյանը, խոսելով կրավորական սեռի բայի իմաստային նրբերանգների մասին, նշում է, որ կրավորականի ընդհանուր բնույթին երբեմն ավելանում են այնպիսի նրբերանգներ, որոնք մասնավորապես այս կամ այն իմաստն են առաջ բերում և «եթե սրանց էլ կրավորական ենք ասում, ապա այն պատճառով, որ սրանք էլ շրջված ձևերն են այն բայերի, որոնք հայտնի են որպես ներգործական սեռի բայեր (եփել - եփվել, մեխել - մեխվել, սկսել – սկսվել, բացել - բացվել, ետ քաշել - ետ քաշվել, փաթաթել - փաթաթվել, կծկել – կծկվել, գտնել - գտնվել, հավասարել – հավասարվել) և այլն» (84, էջ 50):

Բայի մեջ բուն կրավորական նշանակությունը պետք է ընդունել ավելի շատ ոչ այն բանի համար, ոչ միայն այն դեպքում, որ ածանցվում է **վ** ածանցով, այլև հաշվի առնել նրա քերականական իմաստը: Բայը համապատասխան ձևով բուն կրավորական սեռի է համարվում այն դեպքում, երբ նրանով արտահայտվող գործողությամբ կրելու գաղափարն ընդգծվում է, այսինքն՝ երբ ցույց է տրվում, որ առարկան իր վրա է կրում ուրիշի գործողությունը, բայց կրող առարկայի անունը հանդես չի գալիս իբրև տվյալ բայի քերականական խնդիր:

Այն, որ կրավորական բայերը ժամանակակից հայերենում կարող են արտահայտել նաև չեզոք սեռի իմաստ, մեր քերականագիտության մեջ վաղուց է դիտված: Իսկ այն, որ ներգործականներին համապատասխան կրավորական բայերի մի մասը միայն կրավորական սեռի իմաստ է արտահայտում, իսկ մյուս մասը՝ և՛ կրավորական, և՛ չեզոք, առանձնապես մանրակրկտությամբ չի քննարկվել

հայ լեզվաբանության մեջ: Ստ. Մալխասյանցն իր «Հայերէն բացատրական բառարանում» ներգործականներից կազմված բոլոր կամ համարյա բոլոր կրավորական բայերից հետո դնում է «կրավորական-չեզոք բայ» նիշը. նա գտնում է, որ բոլոր կրավորական բայերը կարող են գործածվել իբրև չեզոք սեռի բայեր, և իր բառարանում կրավորական բայերի սեռը որոշելիս առաջնորդվել է այն դրույթով, որ կրավորական բայերը իրենց բառական նշանակության մեջ դրսևորում են և կարող են դրսևորել և՛ կրավորական, և՛ չեզոք սեռի իմաստ: Մ. Ասատրյանի կարծիքով ճիշտ չէ Մալխասյանի բառարանում հիշատակված **արտաքսվել, բանտարկվել, բերվել, բռնագրավվել, արգելվել, գանձվել, գողացվել, դատապարտվել, ենթադրվել, ընտրվել, թարգմանվել, թելադրվել, թողնվել, խաբվել, ծեծվել, կալանավորվել, հարստահարվել, հրավիրվել, ձերբակալվել, մեծարվել, մեղադրվել, մերժվել, մոռացվել, հաղթվել, ուսումնասիրվել, պաշտվել, պատժվել, պատվիրվել** և մի քանի նման բայերի կողքին դնել «կրավորական-չեզոք» նիշը: Մ. Աբեղյանը ճիշտ կերպով նշում է միայն, որ կրավորական բայերը կարող են գործածվել նաև չեզոք իմաստով, որ կրավորական բայերի այս գործածությունը շատ սովորական է հայերենում: Նույնը ընդգծում են Ն.Պառնասյանը (տես՝ 67, էջ 223-224). Ալ.Մարգարյանը (տես՝ 80, էջ 388):

«Ժամանակակից հայոց լեզվում» ևս նշվում է կրավորական սեռածանց ունեցող բայերի կրկնասեռ լինելը (տես՝ 9, էջ 284): Նման մոտեցումը միակողմանի է, որովհետև ստվերում են մնում կրավորական այն բայերը, որոնք մենիմաստ են և միայն կրավորական սեռի իմաստ են արտահայտում:

Ուրեմն՝ վ ածանցն ունեցող կրավորական բայերի քերականական սեռային իմաստը հաշվի առնելով՝ կարելի է առանձնացնել բայերի երկու մեծ խումբ՝

ա/ բայեր, որոնց մեջ կրավորական սեռային իմաստը չի երկփեղկվում, և դրանք միասեռ են: Օրինակ՝ **ազդարարվել, առաքվել, արժեքավորվել, արհամարհվել, գնահատվել, գովաբանվել, թողարկվել, ծաղրվել, կալանավորվել, հարգվել, հերքվել, մատնանշվել, պարգևատրվել, սիրվել, ուղարկվել** և նման այլ բայեր միայն կրավորական սեռի են պատկանում և կրկնասեռ չեն: Նշանա-

կում է՝ վերևում հիշատակված բայերում **վ** կրավորական ածանցն ուժեղ դիրքում է: Նույն ձևով **վ**-ի ուժեղ դիրք են հանդիսանում պատճառական կազմությամբ բայերը (**ամրացվել, առանձնացվել, աստվածացվել, բարձրացվել, իջեցվել, կղզիացվել, հարստացվել, հեռացվել, շիկացվել, մեծացվել, մեղմացվել, նորացվել, նույնացվել, շիկացվել, չորացվել, վավերացվել, ուժեղացվել**), որոնք միայն կրավորական սեռի են նույնիսկ այն դեպքում, երբ նախադասության մեջ ներգործող խնդիրը բաց է թողնված:

Այս դեպքում **վ** ածանցը ստեղծում է անցողականություն - ոչ անցողականություն հակադրությունը:

բ/ **Վ** ածանցն ունեցող բայեր, որոնցում արտահայտված սեռային իմաստը երկփեղկվում է: Ներգործական սեռից այս ածանցի ավելացումով ստացվող բայածևերը, ըստ քերականական կիրառության ու սեռային իմաստի, լինում են կրավորական սեռի և չեզոք սեռի (այս տարբերությունները երևան են գալիս նախադասության մեջ):

Մեր քերականագիտության մեջ **վ** ածանցով կազմված, բայց չեզոք սեռի իմաստ արտահայտող բայերը անվանվում են կրավորակերպ կամ կրավորածև բայեր: Մ. Ասատրյանը և շատ ուրիշներ այս տերմինները ճիշտ չեն համարում, պատճառաբանելով, որ դրանք ճիշտ չեն արտահայտում այս բայերի քերականական բնությունը. չեզոք սեռի բայեր չեն, այլ երկսեռ բայեր են և ըստ գործածության՝ արտահայտում են կրավորական և չեզոք սեռերի իմաստներ: Կրկնասեռ բայածևերը ժամանակակից հայերենում հանդես են գալիս ներգործական սեռի բայական բառույթների քերականական ձևափոխության հիման վրա՝ իմաստավորվելով **վ** ածանցի և նախադասության համապատասխան կառուցվածքի շնորհիվ: Այլ կերպ ասած՝ դրանք առանց **վ** ածանցի ներգործական սեռի բայեր են (չհաշված մասնակի յուրահատուկ դեպքերը): Այդ նշանակում է, որ **վ** ածանցի դերը հիմնականում քերականական է և ոչ թե բառակազմական: Այս տերմինը ճիշտ է օգտագործել այն բայերի համար, որոնցում **վ** ածանցը բառակազմական-բաղադրական արժեք ունի, և սրանք չունեն իրենց համապատասխան պարզ ներգործական ձևերը՝ ածանցազուրկ զուգակիցները, այսինքն՝ չեզոք սեռի բայեր են և ինքնուրույն ու անկախ բառական միավորներ (**բնակվել,**

գանգատվել, գժվել, գժտվել, գունատվել, դիվահարվել, զբաղվել, զմայլվել, ընդհարվել, թաքնվել, թնդվել, խաղաղվել, խելագարվել, խելացնորվել, խղճահարվել, համարձակվել, համարվել, հաշտվել, հաջողվել, հրաժարվել, հիասթափվել, հպատակվել, հուսահատվել, ճարահատվել, մարտիրոսվել, մերձավորվել, մնջվել, մտադրվել, նեխվել, նմանվել, չքվել, պապանձվել, սգավորվել, սևավորվել, սթափվել, սիրահարվել, սխալվել, սսկվել, վախճանվել, վարժվել, վերաբնակվել, վհատվել, ուշաթափվել, օգտվել և այլն): Այս բայերի մի մասը (**բնակվել, նմանվել, սխալվել, համարձակվել** և այլն) հին հայերենում ունեցել է իր ներգործածև զուգակիցը, որը ժամանակակից հայերենում չի պահպանվել (բնակեմ // բնակիմ -բնակվել, նմանեմ // նմանիմ- նմանվել, սխալեմ // սխալիմ – սխալվել, զբաղեմ // զբաղիմ - զբաղվել, համարձակեմ // համարձակիմ – համարձակվել). այս բայերը մեր նոր գրական լեզվում մնացել են միայն չեզոք նշանակությամբ, իսկ սրանց ներգործականությունն ու կրավորականությունը արտահայտվում են պատճառական կազմությամբ:

Ժամանակակից հայերենի կրավորածև չեզոք բայերը զարգացման տևական ուղի են անցել:

Այսպիսով՝ ժամանակակից հայերենում շատ սովորական են ու տարածված այն դեպքերը, երբ ներգործական սեռի բայերից կազմված կրավորածև բայ-ստորոգյալի առկայությամբ ենթական հանդես չի գալիս սոսկ ուրիշի գործողությունը կրողի դերում, այլ կարող է գործողության փաստական կատարողը լինել, ինքն իր գործողության օբյեկտը լինել, կարող է ինքն իր կատարած գործողությունը կրել կամ կարող է միջին դիրք գրավել, այսինքն՝ հանդես գալ մասամբ կրողի, մասամբ էլ՝ կատարողի, լինողի դերում: Օրինակ՝ **կուտակվել** կր. (մեկի կողմից, մեկի ձեռքով) և չ. (ինքնին, համատեղ), **զինվել** կր. (մեկի ձեռքով , մեկի կողմից) և չբ. (ինքն իրեն զինել, ինքնին զինվել), **նվիրվել** կր. (մեկի կողմից , մեկի ձեռքով) և չբ. (ինքնին, ինքն իրեն նվիրել մեկին, մի բանի):

Չեզոք սեռի իմաստ արտահայտող կրավորական բայերից են՝ **ազատագրվել, ալեկոծվել, ածիլվել, աղավաղվել, անջատվել, ապաքինվել, ավանդվել, ավարտվել, ամբարվել, բաժանվել, բարդվել, բազմապատկվել, բախվել, բարելավվել, բացվել,**

բռնկվել, բորբոքվել, զգացվել, ընկղմվել, թաղվել, թեքվել, լցվել, խառնվել, խոնարհվել, խորասուզվել, խրվել, ծավալվել, ծծվել, ծնվել, կազդուրվել, կախվել, կուտակվել, հալվել, համոզվել, հանձնվել, հուզվել, մաքրվել, նետվել, շարժվել, շպարվել, շրջվել, շփոթվել, ոգևորվել, չարչարվել, չափվել, պատրաստվել, պահպանվել, խծնվել, պոկվել, սկսվել, վերադարձվել, տանջվել, տեղավորվել, տրորվել, ցնցվել, փակվել, փոխվել, փռվել, օրորվել և այլն: Հիշված բայերից.ցանկացածը կարող է գործածվել մեկ իբրև կրավորական սեռի՝ ցույց տալով, որ ենթական գործողությունն իր վրա է կրում ուրիշից, մեկ իբրև չեզոք սեռի՝ ցույց տալով, որ ենթական գործողությունն ուրիշից չի կրում, այլ ինքն է կատարում: Նման բայերում **վ** ածանցը թույլ դիրքում է, չի ստեղծում անցողականություն –ոչ անցողականություն հակադրություն. առկա է սեռային հակադրությունը՝ կրավորական –չեզոք:

1. Երիտասարդը **փոխվեց** և դուրս եկավ:
2. Մարդը տարիների ընթացքում **փոխվում է:**

1. Տղաները **հափշտակվեցին** ծովի գեղեցկությամբ:
2. Եկեղեցուց **հափշտակվեցին** հազարավոր գրքեր:

1. Հայրը **բաժանվեց** և հեռացավ տանից:
2. Գումարը հավասարաչափ **բաժանվեց** մասնակիցների միջև:

1. Ավերված քաղաքի բնակիչների վիշտը **խառնվել էր** ուրախության հետ:
2. Մազերը **խառնվեցին** քամուց:

Նախադասություններից առաջիններում ընդգծված կրավորաձև բայերը չեզոք սեռի են, իսկ երկրորդներում ընդգծվածները՝ կրավորական սեռի: Ստացվում է, որ **փոխվել, հափշտակվել, բաժանվել, խառնվել** բայերը քերականական նույն ձևով տարբեր սեռային իմաստներ են արտահայտում:

Ժամանակակից գրական հայերենի փաստերը վկայում են, որ **վ** սեռածանցն ունեցող բայերի մեծ մասը կրկնասեռ է: «Կարելի է ասել, որ կրավորական սեռի բայերի մեծ մասը ունի չեզոք սեռի իմաստով գործածվելու ունակություն», - եզրակացվում է նորմատիվ քերականություններում (9, էջ 295): Թվում է, թե այս բայերը առավելապես կրավորական, սակավ չեզոք սեռի նշանակությամբ պետք է

գործածվեն: Բայց ժամանակակից հայերենի ընձեռած փաստերը վկայում են, որ **վ** սեռածանցով կրկնասեռ բայերն առավելապես չեզոք սեռի նշանակությամբ են գործածվում, համեմատաբար սակավ՝ կրավորական սեռի նշանակությամբ...

Կրավորածև չեզոք բայերն իրենց նշանակությունների սահմաններում կարող են հանդես գալ որոշ նրբերանգներով: **Համբուրվել** բայն արտահայտում է փոխադարձաբար կատարվող գործողության գաղափար, **խոնարհվել, նվիրվել, պատրաստվել, հանվել** բայածևերն արտահայտում են ենթակայի վրա անդրադարձող գործողության գաղափար (**խոնարհվել** - ինքն իրեն խոնարհել, **նվիրվել** - ինքն իրեն նվիրել, **պատրաստվել** - ինքն իրեն պատրաստել, **հանվել** - ինքն իր շորերը հանել):

Նորից ընդգծելով, որ **վ** ցուցիչն ունեցող կրկնասեռ բայերի սեռատարբերակներից մեկը կրավորական սեռի նշանակությունն է, նրանց չեզոքսեռային քերականական-նրբիմաստային նշանակությունները հաշվի առնելով՝ կարելի է տարբերակել նրբերանգային հետևյալ խմբավորումները՝

1. Ընդհանուր չեզոքսեռային նշանակություն ունեցող բայեր. այս դեպքում **վ** ածանցը չեզոքացնում է անցողականություն - ոչ անցողականություն հակադրությունը, սահմանափակում է բայի ներգործական սեռով դրսևորվող անցման գաղափարը, գործողությունը բևեռում է իր իսկ կատարողի վրա, այսինքն՝ այս խմբի մեջ մտնող բայերը ցույց են տալիս ենթակայի կատարած ինքնին գործողություն (շ**փոթվել, փակվել, բացվել, վրդովվել, գալարվել, կախվել** և այլն): Սրանք կրավորական սեռ // չեզոք սեռ զուգահեռության խմբի բայերի մեծ մասն են կազմում և կարելի է բաժանել երկու ենթախմբի՝ ա/ ինքնին կատարվող գործողություն ցույց տվող բայեր, որոնք կապված են գործողի ֆիզիկական-արտաքին դիրքի հետ. բ/ ինքնին կատարվող գործողություն ցույց տվող բայեր, որոնք կապված են գործողությունը կատարողի հոգեվիճակի, տրամադրության հետ (**ընկճվել, հուզվել, շփոթվել, նեղվել, լարվել, գրգռվել, վրդովվել, զգացվել, ճնշվել, ճմլվել, վիրավորվել, տանջվել** և այլն): Այս նշանակությամբ գործածվող բայածևերով արտահայտված գործողության, դրության, եղելության գաղափարը

կարող է վերաբերել իրերին և որպես առարկա ներկայացվող հասկացություններին այն դեպքում, երբ դրանք կիրառվում են փոխաբերական նշանակությամբ («Անտառը հուզված է», «Վարդը վիրավորվել էր»): Քիչ չեն կրկնասեռ այն բայերը, որոնց չեզոքսեռային նշանակությունը հիշյալ իմաստների համադրմամբ է հանդես գալիս, այսինքն՝ միաժամանակ ցույց են տալիս և՛ արտաքին, և՛ ներքին կողմերին վերաբերող փոփոխական հատկանիշներ (**հյուծվել, կազդուրվել, այլակերպվել, ցնցվել, կոտրատվել** և այլն):

2. Անդրադարձ բայեր. այս դեպքում քերականական ենթակայի մեջ իմաստով համատեղվում են տրամաբանական սուբյեկտն ու օբյեկտը, այլ կերպ ասած՝ ենթական իր վրա է կրում իր իսկ գործողությունը: **Վ**-ն այս դեպքում երկրորդաբար արտահայտում է անդրադարձություն – ոչ անդրադարձություն հակադրությունը և ցույց է տալիս, որ գործողը նաև ներգործվող է, կրող և ունի «իրեն, ինքն իրեն» իմաստը: Անդրադարձ իմաստը ևս կրավորական բայերի արտահայտած չեզոք իմաստի մասնակի դրսևորումներից է. **ածիլվել, բորբոքվել, գտնվել, դուրս թափվել, դուրս նետվել, եփվել, զարդարվել, զուգվել, լվացվել, խանձվել, խառնվել, խեղդվել, խոնարհվել, կախվել, կոճկվել, կտրվել, հագնվել, հալվել, հանվել, հավաքվել, ճմլվել, մաքրվել, մեխվել, մեկնվել, յուղվել, նետվել, շպարվել, շփվել, պահվել, պաշտպանվել, պատրաստվել, պղտորվել, սանրվել, սրբվել, սուզվել, տատանվել, տեղավորվել, տոգորվել, փաթաթվել, փակվել, փոխադրվել, քորվել, քսվել, օծվել, օրորվել** բայերն անդրադարձ գործողության նշանակություն ունեն: Սրանք ևս նախադասության յուրահատուկ կառուցվածքի դեպքում կարող են կրավորական սեռով հանդես գալ («Տղան արագ **փոխվեց**» և «Դիմումի բովանդակությունը **փոխվեց**», «Կինն արագ-արագ **սրբվեց**» և «Բաժակները **սրբվել էին**» և այլն):

Հայ քերականագիտության մեջ անդրադարձ բայերը տարբեր կերպ են գնահատվել. ոմանք անվանել են անդրադարձ սեռի բայեր, ոմանք՝ միջին-անդրադարձ սեռային առման մեջ տեղավորել, մի մասն էլ չեզոք սեռի բայեր են համարել: Սրանց մա-

սին Ս. Աբրահամյանը գրում է. «Անդրադարձությունը կամ փոխադարձությունը քննարկվող բայերի միակ իմաստը չեն: Դրանք չեզոք սեռի սահմաններում դրսևորվող իմաստային երանգներ են՝ պայմանավորված շարահյուսական, խոսքային գործոններով: Ինչ վերաբերում է նշված բայերի սեռային արժեքի գնահատմանը, պետք է ընդունել, որ դրանց հատուկ է կրկնասեռությունը» (7, էջ 195): Իսկապես, ժամանակակից հայերենի նման փաստերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անդրադարձությունը հիմնականում կրկնասեռ բայերի չեզոք-սեռահմաստային դրսևորում է:

3. Փոխադարձ բայեր. սրանք արտահայտում են երկու կամ ավելի անձերի կողմից կատարվող գործողություն, և վերջիններս միաժամանակ փոխադարձաբար կրում են միմյանց գործողությունը. գործողը և ներգործվողը առնվում են որպես նաև ներգործվող և գործող, այսինքն կապված են փոխադարձ գործողությամբ: Այս դեպքում ներգործականներից **վ** ցուցիչով կազմված կրկնասեռ բայերը անցողականություն – ոչ անցողականություն հակադրությանը զուգահեռ արտահայտում են փոխադարձություն –ոչ փոխադարձություն հակադրությունը. նշանակում է՝ կրավորական սեռ // չեզոք սեռ զուգահեռությունը կունենա անցողականություն – ոչ անցողականություն և փոխադարձություն - ոչ փոխադարձություն հակադրությունների մասնակաղապարը: **Համբուրվել, գրկվել, ծեծկվել, տեսնվել, փաթաթվել, ողջագուրվել, բախվել, հյուսվել, պաչպչվել** բայերում **վ**-ն հաղորդում է «իրար», «միմյանց» իմաստը:

Քանի որ այս բայերը ցույց են տալիս երկու և ավելի անձանց գործողություն, այդ պատճառով ստորոգյալ են դառնում միայն հոգնակի թվով (համբուրվեցին, փաթաթվեցին): Մի քանիսը կարող են գործածվել եզակի թվով (փաթաթվեց մորը), բայց այս դեպքում **վ**-ն այլևս փոխադարձություն – ոչ փոխադարձություն հակադրության ցուցիչ չէ, և փոխադարձ գործողության իմաստը կորչում է: Տվյալ դեպքում **փաթաթվել** կրկնասեռ բայն իր երկրորդական գործածությամբ ոչ թե փոխադարձ բայերի շարքում է, այլ ընդհանուր չեզոքսեռային իմաստ ունեցող բայերի: Կառուցվածքային տեսակետից հնարավոր է երկու դեպք.

ա/ հաղորդողը երկու կողմերը հավասարեցնում է, և այս դեպքում երկու կողմերն էլ հանդես են բերվում որպես ենթակա՝ «Գրիգորը և Արամը համբուրվեցին»: բ/ Հաղորդողը երկու կողմերից մեկն առանձնացնում է և ձևավորում որպես ենթակա, իսկ մյուսը՝ որպես ուղեկցման խնդիր՝ **հետ** կապով՝ «Գրիգորը Հակոբի հետ համբուրվեց»:

4. Համատեղ գործելու կամ լինելու նշանակություն ունեցող բայեր. ներգործականներից **վ** ձևաբանական ցուցիչով կազմված բայեր, որոնք անցողականություն – ոչ անցողականություն հակադրությանը զուգահեռ երկրորդաբար արտահայտում են համատեղ գործելու կամ լինելու նշանակություն. այս դեպքում ներգործական սեռի բայը, **վ** ածանցն ստանալով, արտահայտում է այնպիսի գործողության գաղափար, որի իրագործումը հնարավոր է առարկաների համատեղ գործունեությամբ՝ **հավաքվել, ժողովվել, կուտակվել, դիզվել , խմբվել, շարվել, կիտվել, ամբոխվել**: Այս դեպքում ևս հիշյալ բայերը դրվում են միայն հոգնակի թվով: Եզակի թվով գործածվելու դեպքում համատեղ գործողության նշանակություն չունեն և համալրում են ընդհանուր չեզոքսեռային նշանակություն ունեցող բայերի շարքը: Նշանակում է, որ սրանք բոլոր դեպքերում և միշտ չէ, որ միասնականության գաղափար են արտահայտում. «Անձրևաջուրը **հավաքվել էր**» կամ «Ձյունը **կիտվել էր** տանիքների վրա» նախադասություններում ընդգծվածները նորից կրկնասեռ բայեր են, բայց չունեն համատեղ կատարվող գործողության գաղափար:

5. Հատկանշման կամ որակման նշանակություն ունեցող բայեր. ներգործական սեռի բայերից **վ**-ով կազմված շատ բայեր նշում, ընդգծում են առարկայի հիմնական հատկանիշը կամ նրա ունեցած տարբեր հատկանիշներից մեկը կամ առարկայի ֆունկցիան, դերը՝ **թափվել, մակարդվել, այրվել, կոտրվել, պտտվել, կտրվել** և այլն: Սրանք ևս կարելի է բաժանել երկու ենթախմբի. ա/ բայեր, որոնք ցույց են տալիս համապատասխան առարկաների զանազան հատկանիշներ («Հեղուկը **թափվում է**», «Թուղթը **պատռվում է**», «Ածուխը **այրվում է**», «Ապակին **կոտրվում է**», «Թելը **կտրվում է**», «Արյունը **մակարդվում**

է» նախադասություններում բայերը ցույց են տալիս համապատասխան առարկաների զանազան հատկանիշներ). բ/ բայեր, որոնք ցույց են տալիս տվյալ առարկայի բնորոշ գործողությունը. «Երկիրը **պտտվում է»** նախադասության մեջ ընդգծվում է երկրի ֆունկցիան: Սրանք նույն ածանցմամբ, բայց այլ կիրառություններով հանդես են գալիս նաև բուն կրավորական սեռային նշանակությամբ:

Բերված օրինակները համոզիչ կերպով ցույց են տալիս, որ **վ** սեռածանցն ունեցող կրկնասեռ բայերի չեզոք սեռային իմաստով գործածվելու դեպքում գործողությունը ուրիշից կրելու գաղափար չկա, ուստի և տվյալ իմաստավորումների ու կիրառությունների դեպքում նրանց կողքին ներգործող խնդիր չի կարող արտահայտված լինել և չի էլ ենթադրվում:

Սեռային նմանօրինակ երանգ արտահայտող բայածևերը (ըստ իմաստի և կիրառության) չի կարելի համարել կամ չեզոք սեռի բայեր կամ կրավորածև չեզոք բայեր: Սրանք ունեն իրենց համապատասխան ներգործական սեռի զուգահեռները կամ այլ կերպ ասած՝ ստացվում են ներգործական սեռի համապատասխան բայերից:

Այսպիսով՝ ժամանակակից հայերենում **վ** ածանցով արտահայտված սեռային իմաստը երկփեղկվում է: Ներգործական սեռից այս ածանցի ավելացումով ստացվող բայածևերը ըստ քերականական կիրառության ու սեռային իմաստի լինում են կրավորական սեռի և չեզոք սեռի... Այս տարբերությունները որոշակի են դառնում կիրառության մեջ, կենդանի խոսքում: Նույնածև բայերի՝ կրավորական սեռի նշանակությամբ գործածվող նախադասությունները կարելի է փոխակերպել և վերածել ներգործական կառուցվածքի, այսինքն՝ ենթական դարձնել ուղիղ խնդիր, իսկ ներգործող խնդիրը՝ ենթակա, բայ ստորոգյալն էլ՝ ներգործական սեռի: Նույնածև բայերի չեզոք սեռի նշանակությամբ գործածվող նախադասությունների փոխակերպումը հնարավոր չէ առանց մտքի աղարտման և քերականական կանոնազանցության:

Մնում է եզրակացնել, որ նման բայածևերը դեռ բառական ավարտուն միավորներ չեն, դրա հետ միասին, սակայն, բոլորովին չպետք է անտես առնել բառական-իմաստային որոշ երանգավորումները առանձին բայածևերի մեջ:

Խոսակցական լեզվում և հայերենի որոշ բարբառներում **վ** սեռածանցն ունեցող բայերի չեզոքսեռային իմաստը արտահայտվում է նաև առանց համապատասխան ածանցի, որտեղից էլ, հատկապես գեղարվեստական գրականության միջոցով, թափանցում են նաև գրական լեզվի մեջ, ինչպես օրինակ՝ «Ծիծեռնակը **պտտում էր** ծառի շուրջը» (փոխանակ՝ **պտտվում էր**). «Ոսկին **թափում է**» (փոխանակ՝ **թափվում է**). «Թեյը **եփեց**» (փոխանակ՝ **եփվեց**): Նման գործածությունները՝ **պտտվել = պտտել, թափվել = թափել, եփվել = եփել, հալվել = հալել** և այլն, բնորոշ չեն գրական լեզվին և այդ պատճառով էլ լայն տարածում չունեն. մասնակի դրսևորումները ընդհանուր օրինաչափության չեն վերածվել. այս երևույթը ոչ թե **վ** ածանցի անկման միտումի դրսևորում է, այլ, ընդհակառակը, կապվում է հայոց լեզվի հին շրջանի հետ, երբ կրավորականության գաղափարն ընդհանրապես արտահայտվում էր առանց հիշյալ ածանցի, երբ այդ ածանցը չէր գործադրվում բայերի սեռային համակարգի մեջ:

Ժամանակակից հայերենում կան սակավաթիվ բայեր, որոնք, լինելով չեզոք սեռի, զուգահեռաբար գործածվում են և՛ **վ** ածանցով, և՛ ածանցազուրկ ձևով՝

բռնկվել // բռնկել
համաձայնել // համաձայնվել
հանդարտել // հանդարտվել
վերաբերել // վերաբերվել
տրաքել // տրաքվել...

Առայժմ դժվար է սրանք սահմանազատել, բայց մի բան պարզ է՝ կենդանի խոսքում գերակշռություն է ստանում սրանց կրավորաձև գործածությունը, որոշ դեպքերում էլ իմաստային տարբերակում է կատարվում:

Միանգամայն հասկանալի է, որ արդի գրական լեզվի համար պետք է հանձնարարվեն գործուն, օրինաչափ, կենդանի ձևերը և ոչ թե անգործածական դարձած ու պատմության գիրկն անցածները:

Բացառված չեն այն դեպքերը, երբ չեզոք սեռի բայերը գործածվում են **վ** ածանցով, որն ավելորդ է, քանի որ համապատասխան ձևերը մեր գրական լեզվում ընդհանրացված են ածանցազուրկ ձևերով (սրանց մասին արդեն ասվել է): **Պարապել // պարապվել,**

նախանձել // նախանձվել, քայլել // քայլվել, վազել // վազվել, պառկել // պառկվել, քնել // քնվել, հոգնել // հոգնվել, ճանապարհորդել // ճանապարհորդվել, տուժել // տուժվել, քծնել // քծնվել զուգաձևություններում ճիշտ են առանց **վ**-ի ձևերը, իսկ երկրորդ եզրերը բարբառային-խոսակցական են, սխալ և ոչ հանձնարարելի:

Ցնդել բայը խոսակցական լեզվում հանդես է գալիս նաև **ցնդվել** ձևով՝ «խելագարվել» նշանակությամբ, որպիսի իմաստով հատկանշական չէ գրական լեզվի համար: Երբեմն այդ իմաստով գործածվում է հատկապես գեղարվեստական գրականության մեջ, բայց **ցնդել** ձևով:

Նման ձևերը (նշված բայերի կրավորաձև գործածությունները) քերականական զուգաձևություններ չեն, զուգահեռություններ չեն, ուստի և մերժելի են՝ որպես գրական լեզվին խորթ ձևեր:

Կրավորական ձևով ներգործական սեռի իմաստ արտահայտելը բնորոշ չէ արդի գրական հայերենին. եղած մի քանի օրինակները սահմանափակ գործածություն ունեն կամ էլ որոշակի թյուրիմացության արդյունք են: Բարբառային, բայց տեղ-տեղ գրական լեզվի մեջ թափանցած **զխտվել** բայը կրավորաձև է, բայց ունի ներգործական նշանակություն (Այնքան կաղին զխտվեց). բարբառներում այն գործածվում է նաև առանց **վ**-ի **զխտել**:

Երբեմն բանավոր խոսքում գործածվում է **խոստովանել** բայը **վ** ածանցով, սակայն ներգործական նշանակությամբ. նման կիրառությունը կապված է այս բայի հնագույն գործածության հետ. այն գրաբարում կրավորական ձևով արտահայտել է նաև ներգործական նշանակություն, սակայն ժամանակակից հայերենին այդ բնորոշ չէ:

Բաժանորդագրվել, տարվել բայերը եզակի դեպքեր են կրավորական ածանցմամբ բայերի մեջ, որ վերջերս սկսեցին գործածվել ներգործական սեռիմաստով՝ ստանալով հայցական հոլովով ուղիղ խնդիր: Եթե անցյալ դարի վերջերին **բաժանորդագրվել**-ը գիտակցվում էր իբրև կրավորակերպ չեզոք և կանոնավորապես տրական հոլովով խնդիր էր ստանում (**բաժանորդագրվել** *թերթերի, ամսագրերի*), և նման կիրառությունը ճիշտ և տարածված էր համարվում, ապա, վերջերս սկսեց հանդես գալ նաև հայցական խնդրառությամբ (**բաժանորդագրվեցեք** *թերթեր, ամսագրեր*). Նշված կի-

րառությունը, թեև հազվադեպ և ոչ նորմատիվ, վկայում էր բայաձևի քերականական նշանակության փոփոխության որոշ միտումի մասին. մեր օրերում այն զգալիորեն աշխուժացել է: «Արդի հայերենի բացատրական բառարանում» այս բայի համար նշված է՝ «ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՎԵԼ, 1. կր. և չբ. Բաժանորդագրել-ի: 2. չբ. Որևէ տպագիր հրատարակություն ստանալու իրավունք ձեռք բերել (վճարով), բաժանորդ դառնալ» (11, էջ 161):

Տարվել բայի համար նույն բառարանում գրված է. «Տարվել, 1. կր. և չբ. Տանել-ի: 2. չբ. Որևէ բան տանուլ տալ՝ կորցնել, տանուլ տալ (հատկապես փող՝ թղթախաղի մեջ): 3. Հրապուրվել, հափշտակվել, գրավվել: 4. Կլանվել, անձնատուր լինել, ամբողջովին ենթարկվել, իրեն ամբողջովին նվիրել (որևէ բանի/: 5. չբ. փխբ. Մղում ունենալ, մղվել» (11, էջ 1423):

Բառիմաստի ներաճումով վերջինս, հատկապես թղթախաղի կամ գրազի ու այլ պայմանավորված խաղերի մեջ պարտվելու իմաստով, գործածվում է ներգործական նշանակությամբ: Ակնհայտ է, որ **տարվել**-ը նման դեպքում ունի ներգործական նշանակություն: Դա կատարվել է բայի յուրահատուկ իմաստավորումով ու քերականական նոր հարաբերության ստեղծումով (մեծ գումար տարվեց): Նշանակում է՝ **տարվել** բայի համար նորագույն բառարաններում պետք է հետևյալ հղումը կատարվի՝ **Տարվել** կր. // չբ. // նբ.:

Հասկանալի է, որ նման հազվադեպ բայերի մեջ **վ** ածանցը զրկվում է իր բուն նշանակությունից, ըստ որում **տարվել** բայի այսպիսի ներգործական իմաստավորումը ավելի սովորական է, քան **բաժանորդագրվել**-ինը:

Ներգործական սեռ // կրավորական սեռ զուգահեռությամբ, ըստ Ն. Պառնասյանի, կարող են հանդես գալ մի շարք դերբայական ձևեր: Նա սրանք համարում է ներգործական և կրավորական սեռերի իմաստ արտահայտող համանուն բառաձևեր և եզրակացնում է. «1. Հարակատար դերբայի՝ վիճակ ցույց տալու առանձնահատկությունից է բխում այն, որ ներգործական սեռի հարակատար դերբայը, առանց կրավորական ածանցման ենթարկվելու, արտահայտում է նաև կրավորական սեռի իմաստ, օրինակ՝ **գրած նամակ, ուղարկած գիրք, ջարդած մատիտ** և այլ բառակապակցություններում **գրած, ուղարկած, ջարդած** և այլ ձևերը ներգործական իմաստի

հետ զուգահեռ հավասարապես ունեն կրավորական նշանակություն) նամակ, որ **գրել են** և **նամակ**, որ **գրվել է, գիրք**, որ **ուղարկել են** և **գիրք**, որ **ուղարկվել է, մատիտ**, որ **ջարդել են** և **մատիտ**, որ **ջարդվել է** և այլն;

2. Հայտնի է, որ ժամանակակից հայերենում կատարելի գործողության վիճակային իմաստ է արտահայտում ապառնի դերբայի 2-րդ ձևը (**գրելիք, կարդալիք**): Իմաստային այս առանձնահատկությունից է բխում այն երևույթը, որ, հարակատար դերբայի նման, առանձին ներգործական սեռի բայերի 2-րդ ապառնի դերբայի ձևերը առանց կրավորական սեռածանցի կարող են արտահայտել նաև կրավորական սեռի իմաստ. օրինակ՝

գրելիք նամակ --- ↗ նամակ որ գրելու են
↘նամակ, որ պիտի գրվի (գրվելիք)

ուղարկելիք գիրք --- ↗ գիրք, որ ուղարկելու են
↘ գիրք, որ պետք է ուղարկվի ուղարկվելիք/

Քանի որ ժամանակակից հայերենում գործառում են նաև **գրված, ուղարկված, գրվելիք, ուղարկվելիք** ձևերը, մենք չենք խոսում սեռային տարբերությունների վերացման (չեզոքացման մասին), այլ գտնում ենք, որ **գրած, գրելիք, ուղարկած, ուղարկելիք** ձևերը սեռի քերականական իմաստ արտահայտելու իմաստով ունեն համանունական արժեք» (92, էջ 77- 78):

Չեզոք սեռ // կրավորարական սեռ զուգահեռությունը արդի հայերենում ևս սահմանափակ թվով բայերի մեջ է դրսևորվում, և այս առումով կրկնասեռությամբ հանդես եկող բայերից են՝ **ալեկոծվել, առնչվել, արծարծվել, արտահայտվել, գլորվել, զոհվել, զինաթափվել, հուզվել, նահատակվել, նետվել, շարժվել, տանջվել** և այլն: Սրանք ինչ-որ առումով կրավորական սեռ // չեզոք սեռ տեղաշարժի շարունակությունն են՝ հակադարձ զարգացումը, որը դեռևս լինելության ընթացքի մեջ է:

Իսկ ինչպե՞ս տարբերակել նույնաձև բայերի արտահայտած կրավորական և չեզոք իմաստները, գործնականորեն ինչպե՞ս զատել վ ածանցի արտահայտած սեռային երանգները:

Իր ժամանակին Ստ. Պալասանյանը գտնում էր, որ կրավորական բայերը չեզոքի իմաստ են ընդունում այն բոլոր դեպքերում, երբ գործածվում են առանց ներգործող խնդրի:

Մ. Աբեղյանն իրավացիորեն այն կարծիքն է հայտնում, որ կրավորական սեռի դրսևորման մեջ ներգործող խնդիրը վճռական նշանակություն չունի, բայց և այնպես չի զբաղվում այն հարցի քննությամբ, թե ինչ պայմաններից է կախված կրավորական բայերի արտահայտած չեզոք նշանակությունը:

Ամենատրամաբանականը և նաև ամենահեշտ միջոցը Ա. Աբրահամյանի տեսակետին հետևելն է. նա գրում է. «Նման դեպքերում դրսևորվող սեռային երանգները բուն կրավորականի և մյուս կողմից բուն չեզոքի հետ չշփոթելու նպատակով «կարելի է ընդունել միջին-անդրադարձ սեռային առման քերականական հասկացությունը» (3, էջ 632): Ապա շարունակում է. «Պատրաստվել, նվիրվել, խոնարհվել հանվել, թեքվել, համբուրվել բայերը թեև վ ածանցն ունեն, սակայն կրավորական սեռի չեն, այսինքն չունեն ներգործող խնդիր (կրավորական սեռի խնդիր) և չի էլ ենթադրվում. սրանք ունեն կես-կրողի, կես-գործողի դեր: Սրանք մոտենում են կրավորական սեռի բայերին, բայց չեն նույնանում, մասամբ էլ մոտենում են չեզոք սեռի՛ բայերին և նույնպես չեն նույնանում նրա հետ, այլ միջին-անդրադարձ սեռային առում ունեն» (նույն տեղում):

Քանի որ նորմատիվ քերականություններում, հատկապես դպրոցական դասագրքերում, առանձնացված չէ միջին անդրադարձ սեռային առում, և ձևաբանական նորմով սահմանված է, որ բայն ունի 3 սեռ, ուստի և կրավորաձև կրկնասեռ բայերի քննարկումը հիմանականում պետք է կատարել կրավորական և չեզոք սեռերի հարաբերությամբ:

Սովորաբար հայ լեզվաբանության մեջ առաջարկվում են տարբերակման մի քանի միջոցներ՝

1. Կրկնասեռ բայերի չեզոք և կրավորական սեռային տարբերակումը կատարելիս հիմնական պայման է դառնում վերջիններիս իմաստային-կիրառական ստորաբաժանումները:

2. Կրավորական սեռի բայերով արտահայտված ստորոգյալները պատասխանում են **ի՞նչ է արվում, ի՞նչ արվեց, ինչ է լինում, ի՞նչ եղավ,** բայց ոչ երբեք՝ **ի՞նչ է անում, ի՞նչ արեց** և նման հարցերին:

3. Կրավորական սեռի բայերը թելադրում են **ումի՞ց, ինչի՞ց** կամ **ու՞մ կողմից** հարցերը, որոնց պատասխանը լինում է կրավորական սեռի բայի ներգործող խնդիրը: Չեզոք սեռի իմաստ արտահայտելու դեպքում կրավորաձև բայերը նույնատիպ հարցեր չեն թելադրում:

4. Նույնաձև բայերի կրավորական և ձեզոք սեռերի նշանակությունների տարբերակմանը օգնում է ներգործող խնդրի բացակայության ու տվյալ կիրառությամբ նրա արտահայտման անհնարինության ու առկայության կամ միանգամայն հնարավոր վերականգնման հակադրությունը: Այս հակադրության ճիշտ ըմբռնումը խիստ կարևոր է սեռային այդ նշանակությունների սահմանագծման համար: Ներգործող խնդրի առկայության դեպքում կրավորական սեռի մասին կասկած լինել չի կարող: Որոշ դժվարություն են ներկայացնում այն դեպքերը, երբ ներգործական սեռի համապատասխան զուգահեռով (այդ սեռից առաջացած) վ ածանցն ունեցող բայստորոգյալ պարունակող նախադասության մեջ ներգործող խնդիրը արտահայտված չէ: Ահա այստեղ է, որ հիմնական դեր է կատարում նրա արտահայտման հնարավորությունը կամ, ընդհակառակը, անհնարինությունը՝ կիրառության տվյալ դեպքի, տվյալ նախադասության որոշակի բնագրի համար: Հարկավ, անհնարինությունն այստեղ պետք է ընդունել վերապահումով՝ նկատի ունենալով արտահայտվող մտքի ճիշտ և նպատակային դրսևորումը՝ առանց իմաստային շեղումների:

Եթե կրավորական իմաստ ունեցող բայն ունի ներգործող խնդիր, և կամ այն ենթադրվում է, ապա հնարավոր է ձևականորեն վերականգնել, իսկ չեզոք իմաստ արտահայտող բայերը չունեն ներգործող խնդիր, և, բնականաբար, վերկանգնելն էլ անհնար է:

5. Կրավորական սեռի բայով արտահայտված նախադասության միտքը հնարավոր է ներկայացնել ներգործական սեռի բայով կազմված նախադասությամբ: Չեզոք իմաստ արտահայտող կրավորական բայով կազմված նախադասության միտքը հնարավոր չէ փո-

խակերպել համապատասխան ներգործական սեռի բայով կազմված նախադասությամբ: Այսինքն՝ առաջին դեպքում հնարավոր է ունենալ շարահյուսական տարբերակներ, երկրորդ դեպքում՝ ոչ:

6. Կրավորական բայերի արտահայտած տարբեր սեռային իմաստները շատ հաճախ կախված են լինում այն բանից, թե տվյալ կրավորական բայի ենթական ա՞նձ է, թե՞ իր. կարևորվում է ենթակայի բառական իմաստը: Սա ևս կարող է կրավորական բայերի արտահայտած չեզոք և կրավորական իմաստների տարբերակման միջոց դառնալ (իհարկե՝ ոչ լիակատար): Եթե կրավորական բայերի ենթականերն իրի անուններ են, բայ-ստորոգյալներն ունենում են բուն կրավորական նշանակություն, իսկ եթե անձ են նշանակում (բայց նաև շնչավոր այլ էակներ), ավելի հնարավոր է լինում ոչ կրավորական՝ չեզոք նշանակության արտահայտումը բայ-ստորոգյալների մեջ: Մ. Ասատրյանը հավաստում է, որ կրավորական կառուցվածքի նախադասություններիի մեջ իրերի անունները ավելի հեշտությամբ են որպես ենթակա հանդես գալիս, քան անձերի անունները («Սմբատը բաժանվեց կնոջից» և «Ավարը բաժանվեց զինվորներին», «Բոլորը հավաքվեցին ժողովի» և «Արտի քարերը վաղուց հավաքվել էին» և այլն): Բնականաբար կրավորական սեռի բայերի ներգործող խնդիրը մեծ մասամբ հանդես է գալիս որպես անձ կամ մի այնպիս առարկա, որը կարող է փոխարինել նրան, ունի նրա հատկանիշները (հիմնարկություն, կազմակերպություն և այլն):

7. **Վ** ածանցն ունեցող կրավորական բայերի արտահայտած կրավորական և չեզոք սեռի իմաստների տարբերակման միջոց կարող է դառնալ նաև կրավորական համադրական ձևերին համապատասխան հարադրական ձևերի կազմումը. չեզոք սեռի իմաստը կազմվում է բայահիմքի և **լինել** բայի հարադրությամբ, իսկ կրավորական սեռինը՝ բայահիմքի և **անել** բայի կրավորական ձևով (**արվել**) կազմված հարադրությամբ: Օրինակ՝

↗ արմատահան լինել

ա/ արմատահանվել

↘ արմատահան արվել

↗ ցտահար լինել

բ/ ցրտահարվել

↘ ցրտահար արվել

Պատահական չէ, որ բառարանները շատ կրկնասեռ բայերի սեռային տարբերակումները հենց նման բացատրությամբ են ներկայացնում: Դրանով մեկ անգամ ևս ապացուցվում է, որ ներգործականից կրավորական սեռածանցով կերտված բայերը մեծ մասամբ երկսեռ են, իրենց մեջ համատեղում են և՛ չեզոք սեռի, և՛ կրավորական սեռի իմաստներ:

8. Գործնականում նույնածև կրավորական սեռի իմաստը և չեզոք սեռի իմաստը հնարավոր է տարբերակել միայն նախադասության մեջ, կոնկրետ կիրառությամբ: Եթե **վ** ածանցն ունեցող բայն ունի ներգործող խնդիր և կամ այն ենթադրվում է, իսկ ենթական հանդես է գալիս գործողության կրողի դերով, գործ ունենք կրավորական սեռի բայի հետ, իսկ եթե նախադասության մեջ չկա և հնարավոր չէ ենթադրել ներգործող խնդիր, և ենթական ինքը հանդիսանում է գործողության կատարողը, ապա գործ ունենք չեզոք սեռի բայի հետ:

Նշանակում է՝ կրավորական սեռածանցը ձևաբանական մակարդակում կրավորական – չեզոք, կրավորական - անդրադարձ, կրավորական - փոխադարձ հակադրություններ չի ստեղծում: Կարելի է ասել, որ ամեն մի բայ, որն ունի **վ** ածանցը, և՛ կրավորական է, և՛ չեզոք, և անդրադարձ, և՛ փոխադարձ: Սեռային այս տարբերակումները և հակադրությունները ստեղծվում են շարահյուսական մակարդակում, այս մակարդակում էլ լուծվում են:

* * *

Իսկ ինչո՞վ է պայմանավորված կրավորական բայերի արտահայտած չեզոք իմաստը: Լեզվաբան-հայագետներից շատերի կար-

ծիքով այս տիպի կրկնասեռությունը պայմանավորված է չեզոք սեռի քերականական իմաստի արտահայտման ցուցիչ (արտահայտման ձև) չունենալու հանգամանքով. նրանցից Մ. Ասատրյանը գրում է. «Այս երևույթը պայմանավորված է նրանով, որ ժամանակակից հայոց լեզվում պարզ ներգործական բայերը չունեն առանձին չեզոք սեռի ձև՝ որպես ոչ կրավորական: Բայց կենդանի լեզվական պրակտիկայի ընթացքում անհրաժեշտություն և կարիք է զգացվում, ասենք, **շարժ(ել), ազատ(ել), թափ(ել), բաց(ել), պատրաստ(ել), սկս(ել)** և այլ բայիմաստներով դրսևորվող գործողությունը ներկայացնել ոչ միայն որպես ներգործական սեռի, այլև չեզոք սեռի գործողություն, ինչպես՝ «Քամին շարժվում է մեղմիկ». «Վարդը բացվում է մայիսին». «Նրա աչքերից արցունքներ էին թափվում» և այլն» (33, էջ 214):

Չեզոք սեռային իմաստի համար ձևաբանական ցուցիչ չունենալը մերօրյա հայերենի առանձնահատկություններից է: Կան լեզուներ, որոնք ունեն այդ ցուցիչը, ինչպես օրինակ՝ գերմաներենում ներգործական բայերի կրավորական և չեզոք սեռերը արտահայտվում են տարբեր ձևերի միջոցով:

Բանն այն է, որ մեր լեզվի զարգացման տարբեր փուլերում էլ չեզոք սեռի իմաստը եղել է, իսկ ձևաբանական տարբերակումը ոչ: Սեռի քերականական մանրահամակարգը ևս քարացած վիճակում չէ. այն անընդհատ փոփոխվում է, կատարելագործվում, քերականական նոր իմաստային կարգեր են առաջանում, և լեզուն իր զարգացման ընթացքում աշխատում է ստեղծել այդ իմաստների արտահայտման քերականական ձևերը:

Կարելի է կարծել, որ այս տիպի կրկնասեռության լուծումն էլ անցման նույն ճանապարհն է ենթադրում, ինչ կրավորական սեռիմաստի և նրա արտահայտման ձևի առաջացումը:

Հայտնի է, որ գրաբարի բայերը մի շարք ժամանակների և առանձին դեմքերի համար չունեին հատուկ ձևեր՝ ներգործական և կրավորական սեռերի իմաստներն արտահայտելու համար: Բայը շատ ժամանակներում, նույն ձևով, ըստ գործածության, կարող էր արտահայտել և՛ ներգործական, և՛ կրավորական սեռերի իմաստները: Այսինքն՝ սկզբնական շրջանում կրավորական սեռը չի արտահայտվել բայի ձևային փոփոխությամբ. հայերենն այն ժամանակի համար չուներ կրավորական սեռացուցիչ: Տարբերակումը կատար-

վում էր իմաստային հիմունքով շարահյուսական մակարդակում: Քանի որ այդ իմաստն առաջացել է, ապա լեզուն իր պատմական զարգացման ընթացքում ստեղծել է ա՛յդ քերականական իմաստի արտահայտման քերականական առանձին ձևը (թեպետև ձևի առաջացումը հարյուրամյակներ է տևել)...

Ժամանակին Թրակացու քերականության թարգմանիչը, ինչպես և հետագա շրջանի հունաբան հեղինակները, ելնելով հունարենի առանձնահատկություններից, կրավորականի համար ստեղծում են արհեստական ձևեր այն հաշվով, որ նեգործական և կրավորական սեռերը տարբերվեն նաև բայի խոնարհման ձևերով; Այս նույն նպատակն են հետապնդել նաև այսպես կոչված լատինաբան քերականները՝ այս դեպքում ելնելով լատիներենի առանձնահատկություններից:

Հասկանալի է, որ ինչպես հունաբան, այնպես էլ լատինաբան հեղինակների արհեստականորեն մտցրած այս նորամուծությունները (ոչ միայն այս, այլև քերականական կառուցվածքի մյուս մասերում) ոչ մի ազդեցություն չգործեցին և չէին էլ կարող գործել. համաժողովրդական լեզվի զարգացման ներքին օրինաչափություններին հակասող ինքնահնար, արհեստական ձևեր էին. անհատի կամքը այստեղ ևս արժեք չունի: Այսօր էլ, թվում է, բավական է ընտրել մի մասնիկ, ձևատարբերակիչ մի հնչյուն կամ ձևակ՝ բնականաբար չեզոք սեռի արտահայտման համար, և կլուծվի կրկնասեռության հարցն այն առումով, որ կրավորաձև բայերի արտահայտած կրավորական և չեզոք իմաստները կտարբերակվեն արդեն ձևային կողմով: Մյուս կողմից՝ չեզոք սեռիմաստի քերականական նոր ձևավորումը միասեռության կհանգեցնեն նաև ներգործական // չեզոք սեռ, չեզոք սեռ // ներգործական սեռ և կրավորական սեռ // չեզոք սեռ զուգասեռությունները, բայց քերականությունն անհատի կամքին չի ենթարկվում...

Կարելի է ենթադրել, որ չեզոք սեռի իմաստը առաջացել է հայոց լեզվի պատմության համեմատաբար ավելի ուշ շրջանում, և չեզոք սեռի իմաստն արտահայտելու համար բայի ձևական (ձևաբանական) փոփոխությունը մեր օրերում լինելության գործընթացի մեջ է... Եթե չեզոք սեռի իմաստը առաջացել է, ապա լեզուն, իր պատմական զարգացման ընթացքում, իր զարգացման ներքին օրինաչա-

փուլություններին համապատասխան, կստեղծի նաև նրա արտահայտության ձևը, որը, անկասկած, ինչ-որ ժամանակ կլուծի կրկնասեռության խնդիրը, և կվերանա նույն ձևի մեջ դրսևորվող կրավորական սեռ – չեզոք սեռ, ներգործական սեռ- չեզոք սեռ հակադրությունը, բայց լեզվի զարգացման ներքին օրինաչափությամբ պայմանավորված՝ նորից կծնվեն նոր զուգահեռություններ՝ իմաստային կամ ձևային, որոնք նորից կճգնեն լուծել «այդ ժամանակի» լեզվի հարցերով մտահոգվող, «լեզվի հոգսը քաշող» անհատները, և այսպես շարունակ...

Մենք քննարկեցինք այն բայերը, որոնք լեզվի զարգացման առկա շրջանում սեռային զուգահեռ նշանակությունները համատեղում են բացարձակ նույնաձևությամբ, առանց հնչյունական որևէ փոփոխության: Սեռային տեղաշարժերը բոլոր բայերի մեջ նույնպիսի տեմպով, նույն խորությամբ կամ միաժամանակությամբ հանդես չեն գալիս: Եթե որոշ բայերի անցումները գրաբարի համեմատությամբ ժամանակակից հայերենում արդեն վերջնական ձևավորում են ստացել՝ հասնելով ավարտի, ապա նույնը չի կարելի ասել ժամանակակից հայերենի սահմաններում սեռային անցում ապրող բոլոր բայերի մասին: Սեռային ավանդույթը, բավական ուժեղ լինելով, այս կարգի բայերի մեջ նոր երևույթի հետ դեռ իրեն զգալ է տալիս՝ որոշ բայերի մեջ ավելի, որոշ բայերի մեջ էլ՝ նվազ ցայտունությամբ, քանի որ կան բայեր, որոնց սեռային անցումները խոր են, ավարտին մոտեցող, իսկ կան բայեր, որոնց մեջ մակերեսային կամ սաղմնավորման վիճակի մեջ են: Այս հանգամանքներն էլ որոշվում են կենդանի խոսքի մեջ սեռի դրսևորման որոշակիության բնույթով, գործածման դեպքերի ավելի լայն կամ նեղ ընդգրկումով: Սեռային անցման տպավորություն առաջացնող ժամանակավոր առումները սեռային տեղաշարժեր չեն: Այստեղ ևս հարցի որոշման մեջ կարևոր է գործածման բնականությունը:

Սակայն կրկնասեռ բայերը նույնպիսի որոշակիությամբ ու նույնատեսակ խորությամբ հանդես չեն բերում սեռային զուգահեռականությունը. կան բայեր, որոնք առավելապես չեզոք, սակավ ներգործական նշանակությամբ են գործածվում. կան բայեր էլ, որոնք առավելապես ներգործական, սակավ չեզոք նշանակությամբ են գործածվում: **Կրավորական // չեզոք** սեռազուգահեռության բայերի

խմբի համար էլ դիտված է, որ դրանք առավելապես չեզոք սեռի նշանակությամբ են հատկանշվում: Սակայն մի բան պարզ է՝ դրանք այս կամ այն չափով ունեն սեռային երկակի բնույթ, և երկսեռ բայերի մեջ սովորաբար ավելի ուժեղ է դրսևորվում սեռերից մեկը մյուսի համեմատությամբ: Եթե նման բայերի մեջ ուժեղ է արտահայտվում ներգործական սեռի գաղափարը չեզոք սեռի համեմատությամբ, ապա նման բայերը հանդես են գալիս որպես զուտ ներգործական բայեր և ունեն իրենց անմիջական կրավորական ձևերը, ինչպես այդ հատուկ է ներգործական սեռի բայերին: **Արյունել, արցունքոտել, բռնել, բուրել, դյութել, եփել, ընդօրինակել, թարթել, թեքել, ժայթքել, լսել, խարսխել, խորհել, խփել, ծակել, կանխել, կեղծել, կեղտոտել, կոնծել, մանրել, մարել, շփել, պատռել, պնդել, սերել, սկսել, ցողել** և այլ բայեր իրենց հիմնական կիրառությամբ ներգործական սեռի են, իսկ երկրորդաբար կարող են հանդես գալ չեզոքսեռային իմաստով:

Անձրևել, անցնել, աշխատել, ապաստանել, ապրել, բանաստեղծել, գահավիժել, դանդաղել, դարանել, դժգունել, դողացնել, երկատել, զրուցել, ընթրել, խոսել, խռովել, կաթել, մաղել, մռմռալ,նստել, ոռնալ, չարախոսել, տագնապել, տարակուսել, տեղալ, ցատկել, փայլատակել, փչել և այլ բայեր առավելապես և հիմնականում չեզոք սեռի բայեր են, բայց կարող են ուղիղ խնդիր առնել և ձեռք բերել ներգործական սեռի իմաստ: Որոշ կրկնասեռ բայերի մեջ երբեմնի չեզոք նշանակությանը զուգահեռ առաջացող ներգործական նշանակությունը աստիճանաբար հիմնավորվում է և ի վերջո հասնում է այն աստիճանին, որ սեռային նշանակության այդ գծով բայը համապատասխանաբար կրավորական ածանցման է ենթարկվում և արտահայտում բուն կրավորական սեռային նշանակություն՝ զուգահեռաբար պահպանելով չեզոք նշանակությունը: Սրանով, անշուշտ, չի ժխտվում, որ չեզոք սեռի որոշ բայեր կարող են կրավորական ածանցում ստանալ՝ չցուցաբերելով սակայն բուն կրավորական նշանակություն: Միաժամանակ պետք է նշել, որ որոշ բայերի մեջ էլ առաջացած ներգործական նշանակությունը անխտիր հնարավորություն չի տալիս բայը գործածել նաև կրավորական սեռով: Դրանց մեջ սկզբնական չեզոք

նշանակությունն այնքան ուժեղ է, որ դեռ շարունակում է արգելք մնալ բայի կրավորական սեռի արտահայտման համար:

Կրնասեռ բայերի մի մասում սեռային հատկանիշները հավասար են: Սրանք հավասարապես գործածվում են թե՛ մեկ, թե՛ մյուս սեռի հատկանիշներով: Հարաբերականորեն սեռային հատկանիշները հավասարազոր են **արածել, երգել, ըմպել, խոսել, սովորել, փափագել, ուսանել** և այլ բայերում:

Անժխտելի է, որ բառարանները սովորաբար այս կամ այն կարգի բայերի զանազան առանձնահատկությունների հետ նշում են նաև սեռային հատկանիշները, բնականաբար, նաև կրկնասեռության հատկանիշը, բայց հնարավոր է, որ որոշ բայերի կողքին կրկնասեռության հատկանիշը բացակայի, կամ էլ տարբեր բառարաններում նույն բայերի կրկնասեռության հատկանիշը, սեռային համամասնությունը տարբեր արժեքավորմամբ ներկայցվի, այսինքն՝ մի բայի համար մի բառարանում առաջնային համարվի չեզոք իմաստը, իսկ մյուսում՝ ներգործականը, մեկում կրավորականը, մյուսում՝ չեզոքը և հակառակը: Օրինակ Հ. Բարսեղյանն իր «Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն» գրքում **մեներգել** բայի կողքին դնում է «չբ. նբ.» նիշը, իսկ ԱՀԲԲ-ում դրված է «նբ. / չբ.» նիշը: Նույն ձևով՝ **նախագահել**՝ «չբ. / նբ.», **սուլել**՝ «նբ. / չբ.», **վաստակել**՝ «նբ. / չբ.», **զղջալ**՝ «նբ. / չբ.» (33, էջ 352/ բայերը երկրորդում ներկայացված են հակառակ համամասնությամբ՝ **նախագահել**՝ «նբ. / չբ.», **սուլել**՝ «չբ. / նբ.», **վաստակել**՝ «չբ. / նբ.», **զղջալ**՝ «չբ. / նբ.» և այլն: Իսկ **նավթոտել** բայը, օրինակ, Հ. Բարսեղյանը համարում է միասեռ բայ (նբ.), իսկ ԱՀԲԲ-ում այն դիտված է որպես կրկնասեռ բայ (նբ. / չբ.): Մոտեցումների տարբերությունը նաև ժամանակների տարբերությամբ է պայմանավորված:

Բայի մեջ սեռային համամասնությունը կախված չէ տարբեր սեռային նշանակությունների հիմնավորվածության աստիճանից ու գործածության բնականությունից: Բոլոր դեպքերում իմաստային նրբերանգները պետք է մնան տվյալ բայի իմաստային դաշտում, և կրկնասեռությունն էլ պետք է քննարկվի այդ դաշտի սահմաններում: Եթե կրկնասեռությունը կամ զուգասեռությունը մտել է տվյալ բայի քերականական հատկանիշների ոլորտի մեջ և քերականական հիմնավորվածություն ունի, ապա, անկախ այն հանգամանքից, որ որոշ

բայերի մեջ երկու սեռերը քերականորեն համազոր են, որոշ բայերի մեջ էլ նրանք համազոր չեն, սեռային մի հատկանիշն ավելի ուժեղ է ու ավելի բնորոշ, իսկ մյուսը՝ համեմատաբար թույլ ու սակավ տարածված, այն չպետք է անտեսվի, պետք է արժեքավորվի և գիտականորեն հիմնավորվի ուսումնասիրողի կողմից:

Ինչպե՞ս պետք է գնահատել կրկնասեռության իրողությունը: Ինչպե՞ս պետք է գնահատել բայերի՝ այս առումով խնդրառական տարբերակները, կապակցական շարահյուսական այս երևույթը՝ ելնելով լեզվական կանոնից, գրական լեզվի նորմից: Իհարկե, կան լեզվաբաններ, որոնք գրական լեզվի օրինաչափությունների, կանոնավորման ու կանոնի տեսանկյունից տարբերակային ձևերից մեկը համարում են սխալ և մերժելի: Սա, ըստ էության նշանակում է լեզվի բնույթի, էության, զարգացման օրինաչափությունների, փոփոխման հնարավորությունների անտեսում;

Բոլորովին այլ հարց է տարբերակային մի ձևի ընտրությունն արդեն «սպառված»-ի կողքին: Հայտնի է, որ ամենօրյա գործածության ընթացքում լեզուն անընդհատ փոփոխվում ու զարգանում է, և որոշ կողմեր՝ ավելի դանդաղ, որոշ կողմեր՝ ավելի արագ, և պատահական չէ, որ հատկապես վերջին ժամանակներս լուրջ ուշադրություն է դարձվում տարբերակային և համանիշ ձևերի ուսումնասիրությանը, դրանց պատճառների բացահայտմանը, զարգացման միտումները պարզելուն, որն ի վերջո նշանակում է լեզվի զարգացման օրինաչափությունների ուսումնասիրություն: Լեզվի մեջ ավանդականորեն ընդունված,՝ընդհանուր ճանաչում գտած և ճիշտ համարվող ձևերի կողքին ծնվում են նորերը՝ ինչ-որ չափով հակասելով ավանդականին, և ժամանակավորապես նորն ու ավանդականը ապրում են կողք կողքի՝ ստեղծելով տարբերակային ձևեր. սա լեզուների համար պարտադիր երևույթ է, որն ունի ավելի շատ օբյեկտիվ, մասամբ էլ՝ սուբյեկտիվ պատճառներ: Նոր ձևերը ծնվում են ոչ պատահականորեն, ներքին կամ արտաքին ազդեցությունների հետևանք չեն, այլ օրինաչափությունների դրսևորումներ, որ սկզբում կարող են թողնել սխալի պատրանք, բայց, աստիճանաբար տարածվելով, դառնում են սովորական ու կանոնավոր, մանավանդ եթե չեն հակասում լեզվի կառուցվածքին, զարգացման օրինաչափություններին: Եթե սեռային հին իմաստը նշանակենք Ա-ով, նոր

ձևավորվողը՝ **Բ**-ով, ապա բայի սեռափոխման ճանապարհը հետևյալ փուլերով կընթանա՝

Առաջին փուլում բայը միասեռ է՝ **Ա** սեռիմաստային նշանակությամբ:

Երկրորդ փուլում բայի սեռային հատկանիշը երկփեղկվում է, և առաջանում է **Բ** սեռիմաստը, բայց դեռ գերիշխող է **Ա** սեռիմաստը. բայն արդեն երկսեռ է՝ **Ա** և **Բ** սեռային հատկանիշների համատեղությամբ:

Երրորդ փուլում բայի **Ա** և **Բ** սեռային հատկանիշները քերականորեն հավասարազոր են՝ **Ա** = **Բ**:

Չորրորդ փուլում **Ա** սեռային հատկանիշին զուգահեռ **Բ** սեռային իմաստը աշխուժանում է. բայը նորից կրկնասեռ է՝ բայց հակառակ համամասնությամբ՝ **Բ** = **Ա**: Այս դեպքում բացառված չէ իմաստային օտարումը և քերականական համանունական զույգի առաջացումը:

Հաջորդ փուլում **Բ** սեռային հատկանիշը գերիշխող է, իսկ **Ա** սեռային հատկանիշը հնացած է, ոչ կենսունակ:

Վերջնական փուլում նոր սեռիմաստը հաղթանակում է, հինը մեռնում է կամ «օտարանում», և բայը լեզվագործածության մեջ է մտնում որպես միասեռ բայ՝ **Բ** սեռային հատկանիշով:

Սեռափոխությունն այս դեպքում նկատելի փոփոխություն է, որը կատարվում է չափազանց դանդաղ՝ քերականական մյուս փոփոխությունների նման: Պետք է հիշել, որ լեզվական կանոնը ոչ թե քարացած է, դոգմատիկ, այլ դինամիկ, անընդհատ փոփոխվող, շարժուն: Լեզվի մեջ լինում է մի այնպիսի շրջան, որ գրական կանոնի տեսանկյունից տարբերակային ձևերը լինում են հավասարաչափ ընդունելի, կանոնական:

Ասենք նաև, որ լեզվի արտահայտչական հնարավորությունների տեսանկյունից տարբերակային ձևերի գոյությունը նույնիսկ անհրաժեշտ է, քանի որ դրանք ունենում են ոճական-արտահայտչական նուրբ տարբերություններ:

Ո՞րն է կրկնասեռության վերջնակետը:

Վերջնակետը կարելի է հասկանալ երկու առումով. (սա զուգահեռությունների, զուգաձևությունների, իմաստային, քերականական տարբերակների ճակատագիրն է). առաջին դեպքում այդ զուգահեռ

ձևերի զարգացումը կարող է տանել-հասցնել իմաստային տարբերակման խորացման, և վերջնակետը կդառնա քերականական համանունության առաջացումը (նույն ձևով տարբեր սեռային հատկանիշներ ու իմաստներ ունենալուն), երկրորդ դեպքում՝ տարբերակային ձևերից մեկը կնահանջի, և բայը իր «կյանքը» կշարունակի որպես միասեռ բայ:

Քանի դեռ բայը իմաստային տարբերակման խորացման ու օտարացման ճանապարհով չի վերածվել բառական տարբեր միավորների, առաջ չի բերել նույն հիմքից գոյացող նույնանուն բայեր, միևնույն բայի մեջ իմաստային զանազանությունների հիման վրա ի հայտ են գալիս սեռային տարբերություններ, իսկ դրանցից էլ բխում են քերականական արժեքավորումները. մի խոսքով՝ սեռային զուգահեռությունների վերջնակետը համանունների առաջացումն է: Խնդիրն առավելապես բարդ է այն դեպքում, երբ իմաստային տարբերակումները դեռ նույն բայի նշանակության շրջանակի մեջ են, չեն անկախացել, չեն ինքնուրույնացել: Ժամանակակից հայերենում գոյություն ունեցող մի շարք բայերի իմաստային կողմի ուսումնասիրությունը ակնհայտորեն ցույց է տալիս, որ սեռային տարբերություններ են առաջ բերում իմաստային այնպիսի տարբերակումները, որոնք ի վիճակի են քերականական տարբեր հարաբերությունների հիմք դառնալ: Եթե բայի իմաստային տարբերակումը բնիմաստի նկատմամբ առաջ է բերում իմաստային այնպիսի նրբերանգ, որը արտահայտում է անմիջական անցման գաղափար, այս դեպքում իմաստային այսպիսի տարբերակման հետ բայն ընդունում է նաև քերականական նոր, լրացուցիչ հատկանիշ՝ ներգործական սեռի նշանակություն, իսկ եթե իմաստային տարբերակումն այնպիսին է, որ, ընդհակառակը, սահմանափակում է անմիջական անցման գաղափարը, անմիջական կրող, ենթարկվող օբյեկտի պահանջը, այդ օրինակ փոփոխության հիման վրա առաջանում է չեզոք սեռի հատկանիշ: Ուրեմն՝ քերականական հատկանիշը խարսխվում է բառիմաստային հատկանիշի վրա: Առանձնապես կարևոր է նկատի ունենալ այն, որ բայը քերականական նոր արժեքավորում է ստանում այն դեպքում, երբ նրա բառական իմաստի փոփոխությունը չի մնում լոկ իմաստաբանության սահմաններում, այլ թևակոխում է քերականության սահմանները և հող նախապատրաստում քերակա-

նական հատկանիշների համար: Հենց այս է պատճառը, որ սեռը չի դառնում լոկ իմաստաբանական կարգ, այն պայմանավորված է նաև իմաստով, սակայն վերածվում է քերականական կարգի: Չմոռանանք նորից հիշել, որ արձանագրվում և ուսումնասիրվում են կրկնասեռության այն դեպքերը, որոնք ակնառու են և քերականորեն հիմնավորված: Սովորաբար լեզվի զարգացման մեջ նկատելի է նորի հաղթանակը. հին ձևի կողքին նորի «մահը» նկատելի չի լինում: Քանի՜-քանի՜ բայեր առօրյա և հատկապես գեղարվեստական խոսքում նոր սեռիմաստներով են գործածվում, սակայն դրանք չեն տարածվում, օրինաչափության չեն վերածվում և «մահանում են» աննկատելի ու անհետևանք...

Կրկնասեռ բայերի ուսումնասիրումը, նրանց առաջացման ու գոյության պատճառների բացահայտումը կարևոր նշանակություն ունեն լեզվի զարգացման միտումները, լեզվական օրինաչափությունները պարզելու, լեզուն նորմավորելու հարցում: Զարգացումը հակադրամիասնությունների պայքար է, որն արտահայտվում է նաև լեզվի մեջ՝ ավանդականի և նորի՝ կողք կողքի հանդես գալով. զարգացումը տարբեր օրինաչափությունների, օրենքների «ծնունդ» է ու «մահ», համառոտության ձգտում և կանոնավորման և կանոնազանցության բախում: Այստեղ առկա է նաև տնտեսման և խնայողության օրենքը՝ նույն ձևով տարբեր իմաստներ արտահայտելու միտումը: Մյուս կողմից լեզուն հաղորդակցության միջոց է, իսկ հաղորդակցումը պահանջում է ճշգրտություն, որն առավել չափով գրավոր խոսքում է զգացվում: Ըստ որում ճշգրտության, որոշակիության ձգտումն ավելի մեծ գործոն է...

Կրկնասեռությունը լեզվական կանոնի տեսանկյունից գնահատելիս չպետք է միակողմանիորեն մի եզրը ճիշտ համարել, իսկ մյուսը՝ սխալ: Լեզվի մեջ ավանդականորեն ընդունված, ընդհանուր ճանաչում գտած և ճիշտ համարվող ձևերի կողքին ծնվում են նորերը՝ ինչ -որ չափով հակասելով ավանդականին: Նոր ձևերը ծնվում են ոչ պատահականորեն, այլ օրինաչափությունների դրսևորումներ են, որ սկզբում կարող են լինել սոսկ անհատական շեղումներ, բայց գործածվելով, աստիճանաբար տարածվելով՝ դառնում են սովորական ու կանոնական, եթե չեն հակասում լեզվի կառուցվածքին, զարգացման ներքին օրինաչափություններին: Բոլորովին այլ հարց

է, որ լեզվի զարգացման տվյալ փուլում սեռային զուգահեռության որևէ եզրը արդեն սխալ է դիտվում լեզվական նորմի տեսանկյունից: Այսօր մնում է ճանաչել այդ բայերը, ուշադրություն դարձնել խոսքի կառուցմանը, քանի որ ձևաբանական մակարդակում սեռային իմաստի չեզոքացումը վերանում է շարահյուսական մակարդակում, ուշադրություն դարձնել խոսքի կառուցմանն այն հաշվով, որ նրա բայական միավորները նույն ձևավորմամբ սեռային ճիշտ իմաստներով արտահայտվեն միմիայն մի նպատակի համար՝ ճի՛շտ խոսելու և դիմացինին ճի՛շտ հասկացնելու:

ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ-ԴԵՐԱՆՎԱՆԱԿԱՆ ՆՈՐՄ

ՇԵՂՈՒՄՆԵՐ ԵՎ ՋՈՒԳԱՁԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դերանուն խոսքի մասին վերաբերող տարակարծությունները նաև մեր օրերում են շարունակվում:

Լեզվաբանների մի խումբ, հետևելով Մ. Աբեղյանին, դերանունը՝ որպես խոսքի մաս, լուծարում է՝ տեղաբաշխելով գոյականի, ածականի, թվականի և մակբայի մեջ:

Հակառակ խմբի ներսում տարակարծությունները դերանվան ստորաբաժանմանը, ենթատեսակների մեջ մտնող բառերի ծավալին է վերաբերում[1]:

Դպրոցական նորմատիվ քերականություններում («Է. Աղայան, Հ. Բարսեղյան, Հայոց լեզու» և «Ֆ. Խլղաթյան, Հայոց լեզու 5») դերանունը որպես ինքնուրույն խոսքի մաս է առանձնացված և ներկայացված է անձնական, ցուցական, հարցական, հարաբերական, որոշյալ, անորոշ, ժխտական, փոխադարձ ենթատեսակների քննությամբ, բնականաբար, դերանվանական նորմն էլ այս համակարգը կարգավորող կանոնների ամբողջությունն է:

Վերջերս լույս տեսած դպրոցական նոր դասագրքում («Ֆ. Խլղաթյան, Լ. Խաչատյան, Հայոց լեզու, 7, 2006») դերանվան

---

[1] Ա.Ղարիբյանը ստացականը առանձին տեսակ է համարում, հետագայում՝ անձնական դերանունների սեռական հոլովաձևեր: Հ.Աճառյանը ընդունում է միայն գոյական դերանուններ, հատկանշային նշանակություն ունեցողները ածականի մեջ է քննում (տես՝ Հ.Աճառյան, Լիակատար գրականություն հայոց լեզվի, հատոր 2, էջ 4, Երևան, 1954) : Ս.Աբրահամյանը հարցականը և հարաբերականը ոչ թե դերանվան տարբեր տեսակներ է համարում, այլ միևնույն տեսակի դերանվան մի քանի հիմնական կիրառություններից երկուսը: Նա նաև ժխտականը չի առանձնացնում. ժխտական դերանունները տեղաբաշխում է որոշյալների մեջ՝ որպես նրանցից մի քանիսի ժխտական ձևեր (տես 8, էջ 45, և էջ118-119): Մ.Ասատրյանը ժամանակակից հայերենի «իսկական դերանունները» անձնականը, ցուցականը, փոխադարձը և հարցական-հարաբերականն է համարում, իսկ որոշյալ, անորոշ. ժխտական դերանունները միայն խիստ պայմանականությամբ է դերանունների բաժնում քննում՝ «հետևելով ժամանակակից հայերենի քերականական համակարգով ընդունված դրույթներին» (տես 33, էջ 167): Ֆ.Խլղաթյանը անձնական դերանունների մեջ առանձնացնում է նաև ստացական անձնական դերանունները, որոնք ցույց են տալիս խոսողին և խոսակցին առնչվող անձերը՝ մի դեպքում՝ առանց խոսողի (մերոնք), և մյուս դեպքում՝ առանց խոսակցի (ձերոնք) (տես 60, էջ 130):

ավանդական բաժանումը մի կողմ է թողնվել և առաջարկվել է նոր դասակարգում. կարծես միջին և «մեղմացված» տարբերակ է ընտրվել, տարբերակ, որը աբեղյանական դիրքորոշման վերահաստատման միտում ունի. դերանունը առանձին, ինքնուրույն խոսքի մաս է, բայց ուսումնասիրվում է այլ խոսքի մասերի համակարգում, կանոնարկվում դրանց վերաբերող օրինաչափություններով. «Դերանունը ինքնուրույն խոսքի մաս է, բայց իմաստային հատկանիշից ելնելով՝ դերանունների տարբեր խմբեր ուսումնասիրվում են համապատասխան խոսքի մասերի հետ» (էջ 38):

Դպրոցականների համար է նախատեսված, ուրեմն՝ նորմատիվ քերականություն է, իսկ սա նշանակում է, որ ձևաբանական-դերանվանական նորմը փոփոխվել է այնքանով, որ նոր ստորաբաժանում է ամրակայվել.

1) Գոյականական դերանուններ, որոնք կարող են արտահայտել դեմք, մատնանշում, հարցում առարկայի մասին, ընդհանրապես առարկայի որոշյալություն, առարկայի ժխտում, ընդհանրապես առարկայի անորոշություն, փոխադարձություն (նույն տեղում՝ էջ 39-45).
2) Ածականական դերանուններ (նույն տեղում՝ էջ 54-56):
3) Թվականական դերանուններ, որոնք գործածվում են քանակական և դասական թվականների իմաստներով (նույն տեղում՝ էջ 67-69):
4) Մակբայական դերանուններ՝ տեղի, ձևի, չափի, ժամանակի մակբայներին փոխարինողներ (նույն տեղում՝ էջ 128-131):

Այս հարցում ևս մեր նպատակը «ճիշտ» ու «սխալ»-ի զատումը չէ, այս կամ այն ստորաբաժանման սկզբունքի «արդարացումը» չէ, այլ առկա վիճակի նկարագրությունը: Հասկանալի է, որ դերանվանական նորմն ամբողջացնող կանոնները բավական անկայուն են, վիճելի, հակասություններ ստեղծող, բայց և անժխտելի է, որ հրապարակի վրա են երեք դպրոցական դասագրքեր, և այսպիսի պայմաններում դերանունը համակարգող օրենքների ամբողջությունը ապակայունանում է, երկփեղկվում է դերանվանական նորմը. այս չափով երկփեղկվում է նաև լեզվական դաստիարակությունը: Հաստատված ճշմարտություն է՝ մի ժողովուրդ մի

լեզու պետք է ունենա, մի լեզուն մեկ նորմով պետք է կանոնարկվի, որպեսզի ապահովվի լեզվի միասնական դրվածքը, նորմի միասնականության հատկանիշը չանտեսվի: Նման իրադրությունում պետական վերահսկողության գործոնն է կարևորվում, «կա՛մ... կա՛մ»-ի ընտրության հարցն է առաջնային դառնում: Որ «կամ»-ն էլ հաստատվի (ընտրությունը պետք է հիմնավորված լինի), կապահովվի նորմի միասնականությունը...

Ցանկացած լեզու հնի ու նորի հավերժական պայքարի, զուգիմաստությունների և զուգաձևությունների, հակասությունների լուծման ուղիների որոնման միջոցով է առաջ ընթանում. առաջացած դժվարությունները դանդաղեցնում են, բայց և չեն կասեցնում լեզվի զարգացումը...

Ժամանակակից հայերենում ուշագրավ է դերանունների հոլովական համակարգը: Միջին հայերենից և բարբառներից փոխանցված հոլովաձևերը, որոնք մոտ անցյալում գործածվում էին գրաբարյան ձևերին զուգահեռ և կարծես առանց ընտրության, այստեղ գործածության որոշ օրինաչափություն են դրսևորում: Բառերի ճիշտ ձևերի պահպանման հարցում կարևոր է ոչ միայն հիմքի և վերջավորության ճիշտ որոշումը, այլև բառաձևերի հիմքի հնչյունական կազմի, հնչյունափոխության օրենքների պահպանումը: Այսպես՝ անձնական դերանունները բացառական, գործիական և ներգոյական հոլովներում զուգահեռ ձևեր ունեն՝ հնչյունափոխված և անհնչյունափոխ: Կանոնական համազոր զուգաձևություններ են՝ **ինձնից // ինձանից, քեզնից // քեզանից, մեզնից // մեզանից, ձեզնից // ձեզանից, ինձնով // ինձանով, քեզնով // քեզանով, մեզնով // մեզանով, ձեզնով // ձեզանով, ինձնում // ինձանում, քեզնում // քեզանում, մեզնում // մեզանում, ձեզնում // ձեզանում,** որոնցից երկրորդները առավելապես բնորոշ են խոսակցական լեզվին, բայց մեր օրերում պաշտոնական խոսքում գերադասվող տարբերակներ են. առավել օրինաչափականը հնչյունափոխված ձևն է, կարճը՝ **ինձնից, ինձնով, քեզնից, քեզնով, մեզնից, մեզնով, ձեզնից, ձեզնով, ինձնում, քեզնում, մեզնում, ձեզնում**: Բանն այն է, որ Ս. Պալասանյանը և Ն. Տեր-Ղևոնդյանը գերադասությունը տվել են երկար ձևերին, իսկ Մ. Աբեղյանից սկսած՝ երկար ձևերի քիչ գործածական լինելու պատճառով գերադասությունը տրվել է կարճ ձևերին: Մեր օրերի

հայերենում ներգոյականի՝ **ա**-ով ձևերը ավելի սովորական են, քան հնչյունափոխված ձևերը: Եթե սրանք կանոնական համազոր տարբերակներ են, ապա **քո // քու, դու // դուն, իրեն // իրան, իր // իրա, իրենց // իրանց, քեզ // քեզի, ինձ // ինձի /ինձի/, մեզ // մեզի, ձեզ // ձեզի** զուգաձևություններում երկրորդները ոչ գրական տարբերակներ են, և նրանց ժողովրդա-խոսակցական երանգն ակնհայտ է. գրական լեզվում հանձնարարելի չեն:

Իր // յուր զուգաձևության մեջ վերջինը հնացած է և միայն ոճական կիրառություն ունի: Չևաբանական-ոճական զուգաձևություններ կարելի է համարել նաև **ես // ինքս, դու // ինքդ, նա // ինքը, մենք // ինքներս, դուք // ինքներդ, նրանք // իրենք** ձևերը, որոնք, սակայն, ունեն նրբիմաստային տարբերություններ. երկրորդների մեջ դեմքի քերականական իմաստն առավել ևս շեշտվում է: Սրանք կանոնական համազոր զուգաձևություններ են: Միայն **նա // ինքը** - ի դեպքում, թեպետև տարբերակները համազոր են, ոչ բոլոր դեպքերում կարող է մեկը փոխարինել մյուսին՝ առանց խոսքն աղարտելու: Լեզվական այս օրինաչափության չիմացությունն է, որ պատճառ է դառնում հիշյալ դերանունների և նրանց թեք ձևերի (**նրա // իր, նրան // իրեն, նրանից // իրենից, նրանով // իրենով**) ոչ տեղին գործածության: Հոգնակի թվի երրորդ դեմքի համար նորմատիվ քերականություններում նշվում է նաև **ինքները** դերանունը, որը համարյա գործածական չէ: **Ինքը, իրենք** դերանունները գործածվում են նաև **իրա, իրան, իրանից, իրանով, իրանք, իրանց, իրանցից, իրանցով** ձևերով, որոնք մինչև անցյալ դարի սկզբները կանոնական էին, օրինաչափ, մեր օրերում հնացած են և բնորոշ ժողովրդախոսակցական լեզվին. **իր // իրա, իրեն // իրան, իրենից // իրանից, իրենով // իրանով, իրենք // իրանք, իրենց // իրանց, իրենցից // իրանցից, իրենցով // իրանցով** զուգաձևություններում երկրորդները մերժելի են:

Նշենք նաև, որ վերոբերյալ զուգաձևությունները վերածվում են եռաձևությունների, եթե ավելացնում ենք **ես ինքս, դու ինքդ, նա ինքը, մենք ինքներս, դուք ինքներդ, նրանք իրենք** ձևերը, որոնք ոճական հատուկ դեր են կատարում՝ էլ ավելի շեշտելով դեմքի գաղափարը: Ուրեմն՝ դերանվանական համակարգում նրբիմաստային և ոճական տարբերություններով հանդերձ՝ կանոնական, համազոր

եռաձևություններ են՝ **ես // ինքս // ես ինքս, դու // ինքդ // դու ինքդ, նա // ինքը // նա ինքը, մենք // ինքներս // մենք ինքներս, դուք // ինքներդ // դուք ինքներդ, նրանք // իրենք // նրանք իրենք:**

Ամենքին հայտնի է, որ քաղաքավարական խոսակցության մեջ, լեզվական վարքի կանոններին համաձայն, **դու** ասելու փոխարեն գործածում ենք **Դուք**-ը: Նշանակում է՝ այն իր հոլովված ձևերով զուգաձևություն կկազմի **դու**-ի հետ, որում իմաստային տարբերակում չկա. **դու**-ն էլ է խոսակից նշանակում, քաղաքավարական **Դուք**-ն էլ, միայն արտահայտման ձևով են տարբերվում՝ **դու // Դուք, քո // Ձեր, քեզ // Ձեզ, քեզնից/քեզանից // Ձեզնից/Ձեզանից, քեզնով/քեզանով // Ձեզնով/Ձեզանով:** Նկատելի է. որ քաղաքավարական ձևերում բացառական և գործիական հոլովաձևերում ավելի շատ **Ձեզանից, Ձեզանով** տարբերակներն են օգտագործվում: Նույն ձևով զուգաձևություն են կազմում **Դուք** քաղաքավարական ձևը և **դուք**-ը, որն արդեն խոսակիցներ է նշանակում, և **Դուք // դուք, Ձեր // ձեր, Ձեզ // ձեզ, Ձեզնից/Ձեզանից // ձեզնից/ձեզանից, Ձեզնով/Ձեզանով // ձեզնով/ձեզանով** զուգահեռ ձևերը ձևականորեն նույնն են, տարբերվում են մեկի՝ մեծատառով գրությամբ, իսկ իմաստային առումով թվային հակադրություն են կազմում՝ խոսակից և խոսակիցներ:

Ձևաբանական-շարահյուսական զուգաձևություններ կարելի է համարել **ինձ մոտ // իմ մոտ, քեզ համար // քո համար** և նման ձևերը, որոնց երկրորդ տարբերակները սխալ են և այն էլ տարածված: Սրանք ընդգծված բարբառային երանգ ունեն, և լեզվական օրենքի հստակ գիտակցությամբ անհրաժեշտ է խուսափել նման գործածությունից: Ժամանակակից գրական հայերենում ընդունված և օրինաչափական են՝ **ինձ մոտ, քեզ համար**... և այլն: Լեզվական օրենքը սահմանում է՝ <u>**ես և դու** եզակիները, **մենք և դուք** հոգնակիները **մոտ, հետ, պես, վրա, չափ, համար** կապերի հետ գործածվելիս դրվում են տրական հոլովով:</u>

Հակառակ երևույթն է կատարվում **ինքը** դերանվան գործածության հարցում: Հաճախ այս դերանվան **իր** սեռականի փոխարեն գործածվում է **իրեն** տրականը, և ստացվում են ձևաբանական-շարահյուսական զուգաձևություններ՝ **իրեն համար // իր համար, իրեն չափ // իր չափ, իրեն գործերը // իր գործերը**. սրանցում առաջին-

ները սխալ են, և, անշուշտ, սխալն էլ համաբանության օրենքի գործառությամբ է պայմանավորված՝ առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանունների նմանակությամբ: Նույն ձևով **իր գիրքը // իրեն գիրքը, իր տունը // իրեն տունը...** զուգաձևություն-կապակցություններում երկրորդները սխալ են, քանի որ բազմիցս ընդգծվում է լեզվական այն օրինաչափությունը, որ <u>**իրեն** ձևը գոյականի հետ չի զուգորդվում:</u>

Բառական-ձևաբանական զուգաձևություններ պետք է համարել **այս, այդ, այն** դերանունների **էս, էդ, էն** հնչյունափոխված ձևերը և նրանցով բաղադրվածները. գրականը **այս, այդ, այն** ձևերն են, և հետևյալ զուգաձևություններում՝ **այսպես // էսպես, այդպես // էդպես, այնպես // էնպես, այստեղ // էստեղ, այդտեղ // էնտեղ, այնտեղ // էնտեղ, այսպիսի // էսպիսի, այդպիսի // էդպիսի, այնպիսի // էնպիսի, այսքան // էսքան, այդքան // էնքան, այնքան // էնքան**, օրինաչափական են առաջին տարբերակները: **Չափ** վերջնաբաղադրիչով կազմված դերանունների ժողովրդախոսակցական տարբերակները՝ **էսչափ, էդչափ, էնչափ,** հազվադեպ են հանդիպում: Անհրաժեշտ է նշել, որ այսօր խոսակցական լեզվում շատ են տարածված դրանց **ը**-ով տարբերակները, և **այստեղ // ըստեղ, այդտեղ // ըտ/տ/եղ, այնտեղ // ընտեղ, այսպես // ըսենց, այդպես // ըտենց** և նման զուգաձևություններում ճիշտը առաջիններն են, իսկ երկրորդները՝ ոչ թույլատրելի: Սխալ են նաև **սենց, հենց, նենց, տենց** և նման ժարգոնային ձևերը: **էսի, էտի, էնի** ձևերն առավել ևս մերժելի են:

Ինչպե՞ս // ո՞նց բառային զուգաձևության մեջ **ոնց**-ը խոսակցական է, նաև բարբառային:

Չևաբանական-հնչերանգային (արտասանական) տարբերակներ կարելի է համարել հարցական դերանունների շեշտված կամ բացականչական նշանով արտահայտված, երբեմն էլ հատուկ կետադրական նշանով չնշված ձևերը, ինչպես օրինակ՝ **ինչպե՞ս // ինչպե՞ս // ինչպե՛ս // ինչպես, որքա՞ն // որքա՞ն // որքա՛ն // ո՛րքան // որքան...**, որոնք կանոնական, համազոր տարբերակներ են. ունեն արտասանական-հնչերանգային տարբերություններ և խոսքին հաղորդում են զգացական այս կամ այն երանգը:

Ինչի/(՞) // **ինչու**/(՞) զուգաձևությունը բնորոշ է խոսակցական լեզվին, ուր դրանք սխալ կերպով միմյանց հետ շփոթում են. գրական լեզվում սրանք զուգաձևության եզրեր չեն դառնում, որովհետև գրական նորմը հստակորեն սահմանում է՝ **ինչու** դերանունը զուլգ է տալիս պատճառականության հարաբերություն, **իսկ ինչի**-ն նպատակի գաղափար է արտահայտում:

Բնականաբար եթե **ինչի**-ի հետ **համար** կապի գործածությունն ընդունելի է, ապա **ինչու**-ի հետ նրա գործածությունը սխալ է, և «ինչու համար» կապակցությունը, որն առավելապես բանավոր խոսքում է հանդիպում, սխալ է և մերժելի:

Փոխադարձ դերանուններից տարբերակային ձևով հանդես են գալիս **մեկմեկու** և **մեկմեկի** ձևերը: **Մեկմեկու // մեկմեկի** զուգաձևությունը կանոնական է, միայն թե, ըստ նորմատիվ քերականությունների, գերադասելի է առաջին եզրը: Երբեմն ժողովրդախոսակցական լեզվում **իրար** դերանունը ընկալվում է որպես ուղիղ ձև և հոլովվում է **ու** հոլովմամբ, սակայն **իրար // իրարու, իրարից // իրարուց** զուգաձևություններում երկրորդ ձևերը գրական չեն:

Զուգաձևություններ կարելի է համարել որոշյալ դերանունների հոդով և անհոդ կիրառությունները՝ **ամեն // ամենը, բոլոր // բոլորը, յուրաքանչյուր // յուրաքանչյուրը, ողջ // ողջը, ամբողջ // ամբողջը**, որոնցում անորոշ և որոշյալ ձևերն իրարից տարբերվում են հատկանշային և առարկայական նշանակությամբ: **Նույն // նույնը, սույն // սույնը** զուգաձևություններում տարբերակները համազոր են: **Ոչ մեկը // ոչ մեկ** զուգաձևության մեջ երկրորդն ակնհայտ բարբառային երանգ ունի և գրական հայերենի համար ընդունելի չէ: **Ամեն մեկը // ամեն մինը, մեկը // մինը** զուգաձևությունների մեջ **ամեն մեկը, մեկը** գրական են, իսկ **ամեն մինը, մինը**՝ ժողովրդականբարբառային: Զուգաձևություններ են նաև **որևէ // որևիցե, երբևէ // երբևիցե, ինչևէ // ինչևիցե,** որոնցում տարբերակները համանիշներ են /սրանք թեև համարվում են դերանուններ, բայց փաստորեն եղանակավորող բառերի արժեք ունեն/:

Լեզվական կանոն է՝ **այլ** անորոշ դերանվան հոգնակին կազմվում է եզակիից՝ **ք** մասնիկով՝ **այլք**, և **այլք // այլոք** զուգաձևության մեջ երկրորդ տարբերակը, որ սեռականի **այլոց** ճիշտ ձևի ազդեցությամբ է ձևավորվել, սխալ է:

Ըստ լեզվական նորմի՝ ոչ թույլատրելի տարբերակներ են նաև կրկնակի հոդերով ձևավորված դերանունները փոխանվանաբար գործածվելիս՝ **որպիսին // որպիսինը, այդպիսին // այդպիսինը, այնպիսին // այնպիսինը, ինչպիսիները // ինչպիսինները, որպիսիները // որպիսինները**... «Թող ընթերցողը հիշի նաև իր լսած այնպիսինն ու այդպիսինը, ինչպիսիններն ու որպիսինները և փորձի բացատրել, թե ինչի՞ համար են կրկնակի հոդերը՝ **ը**ը և **ն**ն, երբ նախորդ **ն**-ն արդեն կատարում է իր պարտականությունը՝ որպիսին, այնպիսին, ինչպիսին: Իբրև փոխանուն այս դերանունները ենթարկվում են նույն կանոնին, ինչ որ ասենք, փոխանուն ածականը...», մտահոգվում է Մ. Ավագյանը (34, էջ 46): Մեր օրերում, սակայն, այս ձևերը կարծես անտարբերության են մատնվել...

Մի շարք դերանուններ փոխանվանաբար գործածվելիս ունեն հոգնակի ուղղականի զուգաձևություններ՝ **-ներ** և **-ք** մասնիկներով, և **այդպիսիները // այդպիսիք, այնպիսիները // այնպիսիք, նույնպիսիները // նույնպիսիք, ինչպիսիները // ինչպիսիք, որպիսիները // որպիսիք** զուգաձևություններում տարբերակները համազոր են, բայց **ք**-ով ձևերը սահմանափակ կիրառություն ունեն և չեն հոլովվում:

«Խստապահանջ» բառեր են հայերենի դերանունները. ամեն մեկն ունի իր հատկացումը, իր առանձնահատկություններն ու նրբիմաստը. հատկապես դերանվանական շեղումներն են մտքի աղարտման պատճառ դառնում, աննպատակ ու ավելորդ կրկնաբանություններն են ծանրաբեռնում խոսքը, սխալ դերանվանագործածություններն ու ոճական անճշտություններն են աղավաղում լեզուն, ուստիև դերանուններից յուրաքանչյուրի տեղին օգտագործումը, նրբանկատ ընտրությունը, մայրենի լեզվի դերանվանական համակարգի կանոնակարգով առաջնորդվելը ճիշտ խոսելու լավագույն միջոցներից են:

Մնացած խոսքի մասերում նկատված զուգաձևություններն ավելի շատ առնչվում են բառագիտության, շարահյուսության հետ, դրանց կանոնականն ու անկանոնը որոշվում է բառակազմական և շարահյուսական նորմերի տեսանկյունից:

ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ - ԱԾԱԿԱՆԱԿԱՆ ՆՈՐՄ

Շեղումներ և զուգաձևություններ

Ըստ դպրոցական նորմատիվ քերականությունների՝ որակական ածականների արտահայտած հատկությունները համեմատելի են. նրանցում սահմանվում է. «Ածականի համեմատության աստիճանները ցույց են տալիս առարկայի հատկանիշի չափը» (13, էջ 85): Սրանցում չի ընդգծվում որակական ածականներից մի որոշ մասի՝ համեմատության աստիճաններ չունենալը, մյուս կողմից՝ որոշ հարաբերականների՝ համեմատության աստիճաններով հանդես գալու լեզվաիրողությունը: Բուհական քերականություններում ձևաբանական նորմը սահմանում է. «Ածականների համեմատության աստիճանները ձևաբանական այն քերականական կարգն է, որով որոշվում են նրանց արտահայտած որակային հատկանիշի տարատեսակները (տարաստիճանավորումները), և, բնականաբար, հատուկ են միայն այն առարկաներին, որոնք որակային համեմատելի հատկանիշ են ցույց տալիս, ինչպես, օրինակ՝ **ազնիվ - ավելի ազնիվ - ամենաազնիվ** (մարդ)...» (80, էջ 204): Որակական և հարաբերական ածականների քերականական սահմանը հարաբերական է, որը և ձևաբանական-ածականական նորմում փոփոխությունների պատճառ կարող է դառնալ: Նույն այդ կանոնի համաձայն՝ որոշ որակական ածականներ համեմատության աստիճաններ չեն կազմում իրենց իմաստային, բառակազմական յուրահատկությունների պատճառով (**ցանովի, կախովի, մերկ, կույր** և այլն):

Հարաբերական ածականները սովորաբար ցույց են տալիս առարկայի ոչ համեմատելի հատկանիշ և չունեն համեմատության աստիճաններ, և եթե անցյալ դարի երկրորդ կեսին դրանք որակվում էին որպես շեղումներ (5, էջ 27), ապա նորագույն քերականություններում կարդում ենք. « Յուրաքանչյուր հարաբերական ածականի մեջ այս կամ այն չափով առկա է նաև հատկանշային-որակական իմաստ, ուստի և հարաբերական ածականների իմաստային զարգացումը հաճախ հասցնում է նրան, որ գերիշխող, էական է դառնում հարաբերական ածականի հատկանշային-որակական նշանակութ-

յունը, իսկ առարկայական նշանակության հարաբերությունը խամրում, մթագնում ու երկրորդական է դառնում: Հենց դրանով էլ վերանում է հարաբերական ու որակական ածականների հիմնական տարբերությունը, և, այսպիսով, հարաբերական ածականները վերածվում են որակականների» (33, էջ 132): Անժխտելի է, որ մերօրյա հայերենում մի շարք հարաբերական ածականներ (հատկապես **-ային**, **-ական**, **-/ա/վոր** ածանցներով կազմվածները՝ **մարդկային**, **ներվային**, **դիվային**, **գազանային**, **բանական**, **բարոյական**, **դյութական**, **էական**, **ժողովրդական**, **նվիրական**, **ահավոր**, **լուսավոր**, **խորհրդավոր**, **հրեշավոր**, **տաղանդավոր**, **գլխավոր**, **վտանգավոր** և այլն) համատեղում են որակականի և հարաբերականի իմաստները և որակական ածականների վերածվելու ճանապարհին են. ձեռք են բերում վերջիններիս բնորոշ քերականական հատկանիշները: Օրինակ **մարդկային** հարաբերական ածականը ձեռք է բերել որակականին բնորոշ քերականական և բառակազմական հետևյալ հատկանիշները՝

ա/ ունի համեմատության աստիճաններ՝ **մարդկային - ավելի մարդկային - ամենամարդկային**.

բ/ կարող է կապակցվել չափի և աստիճանի մակբայների հետ՝ **մի քիչ մարդկային, չափազանց մարդկային, սաստիկ մարդկային, փոքր-ինչ մարդկային.**

գ/ ունի հականիշ՝ **անմարդկային** (**տմարդի**).

դ/ **-ություն** ածանցով կազմվում է վերացական գոյական՝ **մարդկայնություն**.

ե/ որակական ածականների նման կարող է գործածվել բայերի հետ, այսինքն՝ մակբայաբար կիրառվել (**մարդկային վարվել**):

Նրանից միայն փոքրացուցիչ-փաղաքշական կամ սաստկական իմաստ արտահայտող ձևեր չեն կարող կազմվել: Այս բառի կրկնությամբ կազմված բարդության (**մարդկային-մարդկային**) գործածությունը սոսկ գեղարվեստական խոսքում է ենթադրելի:

Այս դեպքում խախտվում է լեզվական կատարելության սկզբունքը՝ մի ձևին մի իմաստ, մի իմաստին մի ձև, և առաջանում են նույն ձևով արտահայտված երկիմաստային տարբերակներ՝ որակական և հարաբերական ածականների իմաստային, բառակազմա-

կան, քերականական հատկանիշների համատեղությամբ: Ածականական համակարգի զարգացման ընթացքը ցույց է տալիս, որ ածականի երկու տեսակների միջև անանցանելի սահմաններ չկան. գլխավորը որակականների խումբն է, և միտումը բազմաթիվ հարաբերական ածականների մեջ որակային հատկանիշի նշանակության աստիճանական զարգացումն է և նրանց վերածվելը որակականների: Եվ եթե այս միտումը համահունչ լինի կենդանի լեզվամտածողությանը, ապա ձևաբանական-ածականական նորմը այ՛ս մասում և ա՛յս չափով փոփոխություն կկրի:

Ածականական զուգաձևություններ առաջանում են որակական ածականների համեմատության աստիճանները կազմելիս: Ընդհանրապես հայերենն աղքատիկ է համեմատության աստիճանների արտահայտման ձևաբանական միջոցներից, և չկան համեմատության աստիճանների քերականական արտահայտման «մաքուր» ձևեր: Այս առումով հայերենը որոնումների մեջ է, որով և պետք է բացատրել արտահայտման բազմաձևությունը:

Բաղդատական աստիճանի իմաստն արտահայտվում է **ավելի**-ի միջոցով, որը հանդես է գալիս գրեթե բոլոր որակական ածականների հետ: Հաճախ նրան զուգակցվում է **էլ** բառը՝ **էլ ավելի**: Նույն իմաստը երբեմն արտահայտվում է շարահյուսորեն՝ **քան** ստորադասական շաղկապի միջոցով, գոյականի բացառականի և ածականի առդրմամբ. արդյունքում արտահայտման բազմաձևություն է՝ **ավելի գեղեցիկ // էլ ավելի գեղեցիկ // ...գեղեցիկ, քան... // արևից գեղեցիկ, ավելի հզոր // էլ ավելի հզոր // ... հզոր, քան // մարդուց հզոր** և այլն, որոնցում «գերտարբերակը» առաջինն է: Չնայած **ավելի** բառը չափազանց գործուն է, բայց բաղդատականի կազմության քերականական մասնիկի չի վերածվել, քանի որ այս կամ այն չափով պահպանում է իր բառային անկախությունը (բառիմաստը), և բաղդատական աստիճանի արտահայտության ձև լինելուց բացի կարող է դրվել բայերի վրա (**ավելի մեծացավ, ավելի հզորացավ**), հատկանիշ ցույց տվող մակբայների վրա (**ավելի արագ, ավելի շուտ**)՝ թելադրված վերջիններիս իմաստով:

Նվազական բաղդատականի իմաստի արտահայտման ձևաբանական միջոցներից են **նվազ, պակաս, փոքր-ինչ, քիչ** բառերի,

ավուն և այլ ածանցների հավելումը՝ **գեղեցիկ → նվազ գեղեցիկ // պակաս գեղեցիկ // քիչ գեղեցիկ // գեղեցկավուն, կարմիր → պակաս կարմիր // նվազ կարմիր // կարմրավուն // կարմրիկ, հզոր → նվազ հզոր // պակաս հզոր // քիչ հզոր // հզորավուն**... Սրանք արտահայտման ձևեր չեն, այլ միջոցներ են. հետագայում գուցե կընտրվի սրանցից որևէ մեկը, կամ կստեղծվի բոլորովին նոր ձև:

Միտումը **ավելի** բառի քերականական մասնիկի վերածվելն է:

Ըստ լեզվական կանոնի՝ ժամանակակից հայոց լեզվում կա գերադրական աստիճանի կազմության երկու հիմնական եղանակ:

ա/ Ածականի գերադրական աստիճան է կազմվում ԱՄԵՆԱ+ԱԾԱԿԱՆԻ ԴՐԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ բաղադրությամբ...

բ/ Ածականի գերադրական աստիճան կարող է կազմվել նաև ԳՈՒՅՆ վերջածանցով, բայց գերադրականի կազմության այս եղանակը գործուն ու տարածված չէ...

Ածականական համակարգում քիչ թվով ածականներ գերադրական աստիճանը կարող են կազմել երկու եղանակներով էլ, և արդյունքում ձևաբանական զուգածևություններ են՝ **ամենալավ // լավագույն, ամենաազնիվ // ազնվագույն, ամենաթշվառ // թշվառագույն, ամենաբարձր // բարձրագույն, ամենածանր // ծանրագույն,** որոնցում **ամենա-**ն շատ տարածված է և գրական խոսակցականին հատուկ, իսկ **-գույն**-ով ձևերը առավելապես բարձր ոճում են կիրառվում: Սրանք համարժեք տարբերակներ չեն. նախ՝ գործածական հաճախականությամբ գերազանցում է **ամեն(ա)**-ն. նրանով գրեթե բոլոր որակական ածականների գերադրականը կարելի է կազմել: Բացի դրանից՝ վերջինով առարկայի հատկանիշի գերազանցությունը առավել ցայտուն է արտահայտվում, **գույն**-ով՝ ոչ: Երբեմն այս աստիճանը կազմվում է այս երկու ձևերի համադրությամբ, և ստացվում է եռաձևության երրորդ ձևը՝ **ամենալավագույն**, որը եթե մի քանի տարի առաջ բացարձակ սխալ ձև էր, ոչ հանձնարարելի, ապա այսօր կարծես «չենք նկատում», քանի որ նման գործածությունները գնալով շատանում են, և **-գույն**-ը համեմատության աստիճանի ցուցիչ լինելուն զուգահեռ դրսևորում է նաև ածանցական իմաստ: Պատճառներից մեկը հավանաբար այն է, որ գրաբարում **-գույն**-ը ոչ թե գերադրականի, այլ բաղդատական աստիճանի ցուցիչն է եղել, մյուսը **-գույն** մասնիկի

իմաստի թուլացումն է, բացառված չէ նաև ռուսերենի ազդեցությունը: Այնուամենայնիվ՝ «Անխրախուսելի ձև է նշված երկու ածանցների համատեղումը մի բառի մեջ (ամենալավագույն)»,- սահմանում է ձևաբանական նորմը:

Ածականի գերադրական աստիճանը կարող է արտահայտվել և արտահայտվում է նաև լեզվական այլ միջոցներով՝

ա/ **ամեն, բոլոր** բառերի բացառական հոլովաձևի և ածականի առդրմամբ. երբեմն խոսակցական լեզվում սրանց վրա ավելանում է նաև **ավելի** բառը՝ իմաստի սաստկացման նպատակով (**ամենից ավելի մեծ**).

բ/ նույն ածականի հոգնակի բացառականի և ուղիղ ձևի կապակցությամբ (**գեղեցիկներից գեղեցիկ**).

գ/ գերադրական աստիճանի կրկնությամբ (**ամենահզորից ամենահզորը**).

դ/ սաստկական իմաստ ունեցող մի շարք բառերով (**շատ, խիստ, չափազանց, արտակարգ, հույժ, վերին աստիճանի, անսահման, բացառիկ**).

ե/ ածականի դրական աստիճանի կրկնությամբ.

զ/ **գեր-** նախածանցով.

է/ բանավոր խոսքում՝ նաև առոգանությամբ, երբ արտասանության երկարածգմամբ արտահայտվում է հատկանիշի մեծությունը, գերազանցությունը:

Օրինակ՝ կազմենք **սև** ածականի գերադրականի բոլոր հնարավոր տարբերակները՝ **ամենասև // սևագույն** (**գույն** բառի հետ կապ չունի) // **ամենասևագույն // ամենից սև // ամենից ավելի սև // բոլորից սև // սևից սև // սաստիկ, չափազանց, խիստ... սև // սև-սև // սեփ-սև // սևասև // սե՜ե՜ե՜վ // գերսև:** Սրանցից օրինաչափականը **ամեն(ա)**-ով կազմված ձևն է, մնացածները գերադրական աստիճանի արտահայտման տարատեսակներ չեն, ավելի շուտ առարկայի սև լինելու առավելագույն հատկանիշը ցույց տվող միջոցներ են: Ածականի գերադրական աստիճանի կազմության բազմազանությունը հիմնականում պայմանավորված է հայերենում քերականական այդ կարգի արտահայտման ձևաբանական միջոցի բացակայությամբ, այսինքն՝ այստեղ գերադրական աստիճանի կազմության ձևը միո-

րինակության չի հասել. չնայած որ **ամենա-**ն այսօր գերիշխող է, բայց մյուս ձևերի գոյությունը թուլացնում է նրա ձևակազմիչ էությունը: Կարծում ենք, որ ճիշտ է Ալ. Մարգարյանը, երբ գրում է, որ սրանք գերադրական աստիճանի արտահայտման տարատեսակներ չեն, բայց այնուհանդերձ դրանք իրողություններ են, «որոնք ցույց են տալիս, որ ածականների համեմատության քերականական կարգը յուրատեսակ բարդ համակարգ է և համալրվում է նաև այլ ձևերով կամ լրացուցիչ դրսևորումներ է ունենում» (80, էջ 211):

Ըստ ձևաբանական կանոնի՝ փոխանվանաբար գործածվելիս ածականները ևս հոլովվում են **ի** հոլովման սովորական հարացույցով: Միայն **ի**-ով վերջավորվող ածականներն են զուգաձևություններ կազմում, և, եթե **սիրելիի // սիրելու, հաճելիի // հաճելու, օտարազգիի // օտարազգու, զարհուրելիի // զարհուրելու** զուգաձևություններում գերադասելի են **ի**-ով տարբերակները, ապա **գեղեցկուհու // գեղեցկուհիի, բարու // բարիի** զուգաձևություններում նախընտրելի են **ու**-ով ձևերը: Նույն սկզբունքով պետք է առաջնորդվել բացառական հոլովի կազմության դեպքում՝ **սիրելիից, հաճելիից, օտարազգիից, զարհուրելիից,** բայց՝ **գեղեցկուհուց, բարուց:**

Դպրոցական քերականության մեջ կանոնի արժեք ունի այն, որ <u>ժամանակի ընթացքում որոշ ածականներ, երկարատև գործածության հետևանքով, կարող են ձեռք բերել գոյականի իմաստ և դառնալ գոյական</u> (13, էջ 89): Սա նշանակում է, որ անցման փուլում նմանները երկխոսքիմաստային արժեք ունեն, այսինքն՝ արտահայտության մի ձևով երկու խոսքիմաստային իմաստ ունեն, ձևաբանորեն տարարժույթ են: Լեզվի զարգացման ընթացքը թելադրում է իմաստներից մեկի կայունացումը և մյուսի աստիճանական մահացումը, իսկ լեզվական նորմի պատմությունն էլ հավաստում է, որ սովորաբար նորն է հաղթանակելու: Է. Աղայանի բառարանում կարդում ենք. «ՋԻՆՎՈՐԱԿԱՆ, ած. 1. Զինվորին՝ զինծառայողին հատուկ, վերաբերող: 2. Զորքին՝ բանակին հատուկ՝ վերաբերող, զինվորական ծառայության հետ կապված: 3. Տե՛ս Ռազմական: 4. գ. Զինծառայող, զինվորական ծառայության մեջ գտնվող մարդ» (11,

էջ 374): Ձևաբանորեն տարարժույթային միավորների զանազանումը խոսքային մակարդակում է կատարվում:

Մերօրյա հայերենին բնորոշ առանձնահատկություն է ածականների մակբայանալը, որը գալիս է դեռևս գրաբարից, և որը դպրոցական քերականություններում գրեթե չի հիշատակվում, սակայն բուհական քերականություններում նշվում է, որ հայերենի որակական ածականների մի զգալի մասը գործածվում է ոչ միայն գոյականների հետ՝ ցույց տալով առարկայի հատկանիշ, այլև գործածվում է բայերի հետ՝ ցույց տալով գործողության հատկանիշ՝ **լավ** (**լավ** *մարդ* և **լավ** *խոսել*), **բարձր** (**բարձր** *լեռ* և **բարձր** *պատմել*), **հիանալի** (**հիանալի** *տեսարան* և **հիանալի** *վերլուծել*), **գեղեցիկ** (**գեղեցիկ** *աղջիկ* և **գեղեցիկ** *գրել*) և այլն: Անկասկած, մեր քննությունից դուրս է նման բառերի խոսքիմասային սահմանների որոշման հարցը[1], բայց ածականական համակարգի նորմավորման ընթացքում անկարելի է անտեսել խոսքիմասային անցման փուլում գտնվող ձևաբանորեն տարարժույթ լեզվամիավորների գոյությունը, քանի որ երկխոսքիմասայինից միխոսքիմասային իմաստի անցման ավարտը ենթադրում է որևէ խոսքի մասի բառային-բառաձևային կազմի պակասում, մյուսի հավելում: Խոսքի մասերի փոխանցումը միանգամից տեղի չի ունենում. բառի երկրորդական, ածանցյալ իմաստի աշխուժացումը և բառի համար վերջնականապես բնորոշ դառնալը պատմական երկար ժամանակաշրջան է պահանջում. փաստն այն է, որ նախկին իմաստը միանգամից չի վերանում, նորն էլ միանգամից չի հաստատվում: Ընդհանրապես բոլոր լեզուներում

[1] Լեզվաբանական գրականության մեջ այս հարցի կապակցությամբ տարբեր կարծիքներ կան. որոշ քերականներ (Մ. Աբեղյան, Մ. Ասատրյան և այլք) պարագայական պաշտոնով գործածվող ածականները համարում են մակբայներ, որոշ քերականներ էլ (Գ. Սևակ և այլք) գտնում են, որ ածականը, անկախ այն բանից՝ գոյականի, թե բայի հետ է գործածվում, մնում է որպես ածական և մակբայ համարվել չի կարող: Քերականների երրորդ խումբը, ընդունելով, որ հայերենում ածականն ու մակբայը շատ դեպքերում ձևաբանորեն տարբերակված չեն և պետք է որոշվեն ըստ շարահյուսական կիրառության, այն հետևությանն են հանգում, որ դրանք ինչքանով ածականներ են, նույնքանով էլ մակբայներ են:

տարբեր խոսքի մասերի միջև տատանվող բառեր միշտ եղել են ու կլինեն...

Լեզվի զարգացման ընթացքը կանգ չի առնում, և, բնականաբար, նորից այլ միավորներ կհայտնվեն խոսքիմասային անցման ոլորապտույտի մեջ...

ՉԵՎԱԲԱՆԱԿԱՆ – ԹՎԱԿԱՆԱԿԱՆ ՆՈՐՄ

Շեղումներ և զուգաձևություններ

Քանակական թվականներն արտահայտվում են բառերով, թվային նշաններով, խառը՝ թվերով ու բառերով, և նման զուգաձևություններում՝ **մեկ // 1, հինգ հարյուր // 500 // 5 հարյուր, երեք հազար // 3000 // 3 հազար** և այլն, սրանք գրության համազոր ձևեր են, միայն բազմաբաղադրիչ հարադրական թվականների դեպքում «տեղ, ժամանակ, ջանք» խնայելու առումով, «նվազագույն ճիգի օրենքով» հարմար է թվերով կամ խառը գրությունը:

Մերօրյա հայերենում ճշտվել և կայունացել է քանակական թվականների ուղղագրությունը: Նորմատիվ քերականություններում բացարձակ թվականներից զուգահեռ ձևերով հանդես են գալիս հետևյալները՝ **մի // մեկ, երկու // երկուս, ինը // ինն, տասն // տասը**, որոնք կանոնական համազոր տարբերակներ են: **Մի // մին, երկու // էրկու, երեք // իրեք, տասը // տաս, հարյուր // հարուր** զուգաձևություններում **մին, էրկու, իրեք, տաս, հարուր** ձևերը խոսակցական-բարբառային են, ուստի և՝ ոչ հանձնարարելի: Հատկապես երիտասարդները հակում ունեն բառերը կրճատ, սղումներով արտասանելու և մեծ պատրաստակամությամբ որսում են համաժողովրդական լեզվում եղած նման ձևերն ու դարձնում իրենց սեփականությունը: **Չորս, հինգ, վեց, յոթ** և **ութ** թվականները հանդիպում են նաև **չորսը, հինգը, վեցը, յոթը, ութը** (կամ **յոթն, ութն**) ձևերով՝ հավանաբար **ինը, տասը** թվականների համաբանությամբ. **չորս // չորսը, հինգ // հինգը, վեց // վեցը, յոթ // յոթը, ութ // ութը** զուգաձևություններում երկրորդները խոսակցական տարբերակներ են և սխալ: **Ինը** թվականն ունի նաև **ինն** տարբերակը, որը համազոր է և կանոնական, միայն կիրառական ոլորտով են տարբերակված: **Տասնուհինգ // տասնևհինգ // տասնհինգ** եռաձևության մեջ եթե առաջինը և երկրորդը նախախորհրդային շրջանի լեզվական նորմով սահմանված միակ ճիշտ ձևերն էին, այսօր հնացած են և գործածությունից դուրս են եկել. այսօրվա նորմով սահմանվածը երրորդ ձևն է: Բնականաբար, եթե զուգահեռ ձևեր են **տասը** և **տաս**

թվականները, որոնցից առաջինը նորմով սահմանվածն է, իսկ երկրորդը, լեզվաբաններից շատերի կարծիքով, արդեն նորմի աստիճանի բարձրացածը, բնականաբար զուգաձևություններ կհամարվեն նաև նրանցով բաղադրված թվականները՝ **տասնմեկ // տասմեկ, տասներկու // տասերկու, տասներեք // տասերեք, տասնչորս // տասչորս, տասնհինգ // տասհինգ**..... , երկրորդները գերիշխում են խոսակցական լեզվում: **Երեսուն // եռեսուն // եռսուն, քառասուն // քառսուն, հիսուն // հիթսուն // հիցուն, վաթսուն // վաթցուն // վացուն, ութսուն // ութանասուն, իննսուն // իննհիսուն // իննսուն, հարյուր // հայրուր // հարուր** ձևերում կանոնական են, նորմով սահմանված են առաջին տարբերակները, մյուսները խոսակցական-ժողովրդական, բարբառային, հասարակաբանական տարբերակներ են, որոնք էլ երբեմն գեղարվեստական խոսքի միջոցով թափանցում են գրական լեզվի մեջ: **Եռեսուն**-ը հավանաբար **քառասուն**-ի ազդեցությամբ է առաջացել, **եռսուն** (**երսուն**) և **քառսուն** (**քարսուն**) ձևերն էլ **ե** և **ա** ձայնավորների սղմամբ են ստացվել, իսկ սղումը խոսակցականին հատուկ երևույթ է: **Հիթսուն**-ը՝ **վաթսուն**-ի, **ութանասուն**-ը՝ **յոթանասուն**-ի ազդեցությամբ են ձևավորվել: **Յոթանասուն // յոթսուն** և **ութսուն // ութանասուն** զուգաձևություններում ճիշտ են առաջին տարբերակները, իսկ երկրորդները փոխադարձ ազդեցության արդյունք են, փոխադարձ նմանակության հետևանք և մերժելի են: Քանի որ թվականները մարդու կյանքում ամենահաճախ օգտագործվող միավորներից են, ապա սպասելի է, որ հատկապես տասնավորներն արտասանելիս ժամանակի տնտեսման և նվազագույն ճիգի օրենքով ստիպողաբար կրճատվեն, և **երեսուն // եռ, քառասուն // քառ, հիսուն // հիս, վաթսուն // վաթ, երեսունմեկ // եռմեկ, քառասունմեկ // քառմեկ** և նման զուգաձևություններում կրճատված ձևերը հասարակաբանություններ են և հատուկ խոսակցական լեզվին:

Ուղղախոսական կանոնը պահանջում է բարդ բառերի բառամիջի բաղադրիչի **ե** և **ո** սկզբնատառերը արտասանել (**յէ**) և (**վօ**), եթե դրանց նախորդում է ձայնավոր. բաղաձայն նախորդելու դեպքում ըստ կանոնի պետք է արտասանել (**է**), (**օ**): Սակայն դիտումները ցույց են տալիս, որ կցական բարդությունները միտում են ցուցաբե-

րում շեղվելու այդ ընդհանուր կանոնից: **երկու** և **երեք** թվականները բարդություններում արտասանվում են այնպես, ինչպես անկախ բառ, բաղադրիչների անկախությունը ուժեղ կերպով զգացվում է, և արդյունքում ձևաբանական-արտասանական տարբերակներ են՝ **տասն(է)րկու // տասն(յէ)րկու, քսան(է)րեք // քսան(յէ)րեք, վաթսուն(է)րեք // վաթսուն(յէ)րեք**, որոնցում ճիշտը, կանոնականը առաջին ձևով արտասանություններն են: Թ. Ղարագյուլյանը հատկապես **երկու** բաղադրիչով կազմված բարդություններում սխալ՝ (**յէ**) արտասանելը բացատրում է նաև բարբառներում **երկու** թվականի **էրկու** հնչմամբ. «Մասնավորապես երկու բաղադրիչով կազմված բարդություններում (է)-ով արտասանությանը խոչընդոտում է նաև այն հանգամանքը, որ (է)րկու հնչումը համընկնում է բարբառային հնչմանը, օրինակ՝ քսան(է)րկու, տասն(է)րկու և այլն: Այդ պատճառով, բարբառային հնչմանը չնմանվելու և դրանից խուսափելու համար նախապատվությունը տրվում է քսան(յէ)րկու, տասն(յէ)րկու արտասանությանը» (116, էջ 93):

Բացի սրանցից, նշված թվականների արտասանական այլ տարբերակներ կան՝ **տասն(ըյէ)րկու, տասն(ըյէ)րեք** և **տաս(է)րկու** կամ **տաս(յէ)րկու**, **տաս(է)րեք** կամ **տաս(յէ)րեք**: Առաջին ձևերը համաբանության ազդեցության արդյունք են, քանի որ մի շարք թվականներում **տասն**-ից հետո լսվում է **ը**, ինչպես օրինակ՝ **տասն(ը)մեկ, տասն(ը)հինգ** և այլն, իսկ ձայնավորից հետո ճիշտը (**յէ**) և (**վօ**) արտասանելն է: Երկրորդ ձևերում պատճառը **ն**-ի անկումն է, որը բացառիկ երևույթ չէ. սրանք ոչ կանոնական ձևեր են, չնայած որ լեզվաբանների կարծիքով, օրինակ, **տասերորդ** (առանց **ն**-ի) ձևը ներկայումս գրական նորմից դուրս չէ:

Օրինաչափական չէ նաև **հնն // հնը** բաղադրիչով կազմված թվականների հնչումը: Ըստ հայերենի արտասանական օրինաչափության՝ պետք է որ հնչեին **հն(ը)նհարյուր, հն(ը)նսուն**, մինչդեռ ժողովրդական հնչմամբ կանոնական է դարձել **հնն(ը)հարյուր, հնն(ը)սուն**: Հատկանշական է նաև այն, որ երկրորդ **ն**-ից հետո **ը** արտասանելու պատճառով տարածվել և արմատացել է **հնը, հնն**

ձևերի **իննը** հնչումը (**ինը // իննն // իննը**), որը նույնիսկ գրավոր աղբյուրներում է երևում:

Գոյականաբար հոլովվելիս **երկու** և **հինգ** թվականները հնչյունափոխ և անհնչյունափոխ ձևերով են հանդես գալիս՝ **երկուսի // երկսի -երկուսից // երկսից-երկուսով // երկսով** և **հինգի // հնգի -հինգից // հնգից - հինգով // հնգով**, որոնցում երկրորդները ակնհայտ բարբառային-խոսակցական երանգ ունեն: **Երկու** թվականի հոգնակիակազմության դեպքում ևս առկա է զուգաձևություն՝ **երկուսներ // երկուներ**, որի եզրերը իմաստային տարբերակվածություն ունեն:

Բազմաձևություն կարելի է համարել դասական թվականների դրսևորման ձևերը՝ բառերով, արաբական թվանշաններով (որոնցից հետո դրվում է **-րդ** ածանցամասնիկը, որն արտասանվում է **-րորդ** կամ **-երորդ**), հռոմեական թվանշաններով, հայկական այբուբենի տառերով՝ իրենց թվային արժեքին համապատասխան՝ **երկրորդ // 2-րդ // II // Բ, հինգերորդ // 5-րդ // V // Ե,** և սրանցից յուրաքանչյուրն ունի իր կիրառության ոլորտը, համազոր, կանոնավոր տարբերակներ են: Կիրառական ոլորտի սահմանափակում ունեն հռոմեական նշաններով արտահայտված դասականները. սովորաբար գործածվում են մինչև 30-ը, նրանից բարձրի դեպքում փոխարինվում են կամ արաբական թվանշաններով, կամ էլ ստանում են բառային դրսևորում: Նման սահմանափակում ունեն նաև հայկական այբուբենի տառերով արտահայտվածները: Դասական թվականի իմաստով գործածվում է երբեմն արաբական թվանշանը, որից առաջ դնում են կամ **համար** բառը, կամ **№** նշանը: **Համար 5 // համար V** զուգաձևությունում երկրորդ եզրը սխալ է, քանի որ **համար** բառի հետ դասական թվականի գործածությունը սխալ է: **Առաջին // մեկերորդ** զուգաձևության մեջ **մեկերորդ** «կանոնական» ձևը միայն բարդ թվականի վերջին բաղադրիչ է լինում: Դպրոցական դասագրքերում (է. Աղայան, Հ. Բարսեղյան և Ֆ. Խլղաթյան) դասական թվականների արտահայտման ձևեր են համարվում նաև արաբական թվանշաններով և փակագծով ու արաբական թվանշաններով ու միջակետով ձևերը՝ **1/, 5/, 6/** և **1. 5. 6.**: Նաև՝ տառերով՝ **ա/, բ/, գ/ ա., բ., գ.**

Սխալ են **ութներորդ** և **տասերորդ** ձևերը, փոխանակ՝ **ութերորդ** և **տասներորդ:**

Հարյուրից բարձր դասական թվականների գրության մեջ երկվություն կա. Ալ. Մարգարյանը գրում է՝ **հարյուր քսանհինգ - հարյուրքսանհինգերորդ, հազար վեց հարյուր հիսուն – հազար վեց հարյուր հիսուներորդ, մեկ միլիոն ութ հազար յոթ հարյուր վաթսուն – մեկ միլիոն ութ հազար յոթ հարյուր վաթսուներորդ** (80, էջ 254), «Ժամանակակից հայոց լեզվում» գրվում են առանձին՝ **հարյուր հիսունմեկերորդ** (9, էջ 199), Մ. Ասատրյանը գրում է՝ **երկուհարյուրքսանչորսերորդ, հարյուրմեկերորդ** (33, էջ 158), Դպրոցական դասագրքում՝ **հարյուր երկուերորդ, հարյուր իննսունյոթերորդ, հազար ինն հարյուր վաթսունիններորդ** (13, էջ 97-98), Ֆ. Խլղաթյանի դասագրքում՝ **հարյուր հինգերորդ** (60, էջ 122): Նոր լույս տեսած «Հայերենի ուղղագրական նոր բառարանում» նշվում է՝ սխալ պետք է համարել հետևյալ բառերի երկրորդ ձևերը՝ **երկուհարյուրերեսուներորդ - երկու հարյուր երեսուներորդ** (83, էջ 23): Նման մեջբերումը վկայում է, որ տատանումներ կան, երկգրություններ: Մի կողմից տրամաբանությունը պահանջում է, որ քանակական թվականներից կազմված դասականը, ըստ բառակազմական նորմի սահմանած կանոնի, պետք է կազմվի նրանից՝ **-րորդ** կամ **-երորդ** ածանցով, այսինքն՝ **հարյուր մեկ – հարյուր մեկերորդ:** Մյուս կողմից՝ մերօրյա հայերենի բառակազմության մեջ միտումը հարադրականությունից համադրականության անցումն է, և արդյունքում դասական թվականների միացյալ գրությունն է՝ **հարյուրմեկերորդ:** Այս միտման գործընթացին խոչընդոտող մի հանգամանք կա՝ թվականների բազմաբաղադրիչ լինելը, այսինքն՝ այս նոր միտումին համաձայն պետք է գրենք՝ **մեկմիլիոնութհազարյոթհարյուրվաթսունհինգերորդ** և այլն: Դժվար է ասել, թե ինչու Ալ. Մարգարյանի քերականության մեջ **հարյուրքսանհինգերորդ**-ը գրված է բաղադրիչների միասնությամբ, իսկ մյուս երկուսը՝ անջատ գրությամբ (կամ վրիպակ է, կամ նոր ձևավորվող կանոնի սկիզբ): Նման զուգաձևությունների հարցի կարգավորման ելակետ կարելի է դարձնել Դ. Գյուրջինյանի հետևյալ դիտողությունը. «Անջատ գրվող թվականների բաղադրիչները սովորաբար կցվում են, երբ նրանց

որևէ վերջածանց է ավելանում, ինչպես՝ հինգհարյուրանոց, երկուհազարական: Բազմաբաղադրիչ թվականների պարագայում կանոնը չի գործում, ինչպես՝ երեք հարյուր հազար հիսունհինգերորդ, հազար ինը հարյուր ութսունական (թվականներ): Այդ թվականներն ավելի շուտ գրվում են թվանշաններով, որոնց զուգադրվում է համապատասխան մասնիկը՝ գծիկով, օրինակ՝ 1980-ական թվականներ, 552151-րդ և այլն» (47, էջ 17-18): Բառարան-տեղեկատուում միասին են գրված **երեքհազարերորդ, երկուհարյուրական, երկուհարյուրերորդ, իննհարյուրերորդ, հինգհարյուրական, ութհարյուրերորդ, չորսհազարերորդ, չորսհարյուրական, չորսհարյուրերորդ, ութհարյուրերորդ,** անջատ՝ **երկու հարյուր երեսուներորդ, երկու հարյուրերորդական:** Տարակարծություններից խուսափելու համար կարելի է լեզվական նորմով որևէ սահմանաթիվ ընդունել....

Ըստ լեզվական նորմի՝ **-երորդ** ածանցով կազմված բառերում **ե** տառն արտասանվում է իբրև (է), և **վեցերորդ, տասներկուերորդ, քսաներեքերորդ** բառերի՝ **վեց(յէ)րորդ // վեց(է)րորդ, տասներկու(յէ)րորդ // տասներկու(է)րորդ, քսաներեք(յէ)րորդ // քսաներեք(է)րորդ** և նման ձևաբանական-արտասանական զուգաձևություններում երկրորդներն են ճիշտ:

Կառավարությանն առընթեր լեզվի պետական տեսչությունը, նկատի ունենալով, որ պաշտոնական փաստաթղթերում և այլ գրություններում անմիօրինակություն է ստեղծվել արաբական թվանշաններով արտահայտվող դասական թվականները գործածելիս, այսինքն՝ անհրաժեշտ մասնիկները (**-ին**, **-րդ**) երբեմն գրվում, երբեմն չեն գրվում (օրինակ՝ **1-ին** *կետ*, և **1** *կետ*, **2-րդ** *հոդված*, **2** *հոդված*... և այլն), գործող կանոնների միասնականացման, ճշգրտման և անկանոնության վերացման նպատակով (2000 թ.) թվականական ենթահամակարգի դասական մանրահամակարգում հետևյալ կանոններն է սահմանել.

1. Դասական թվականները արաբական թվանշաններով արտահայտելու դեպքում անհրաժեշտ մասնիկները միշտ գրել. օրինակ՝ 1-ին կետ, 2-րդ հոդված....

2. Թվականների՝ առանց նշված մասնիկների գործածությունը թույլատրելի համարել հետադաս կիրառության դեպքում՝ վերնագրերում, ենթավերնագրերում, հղումներում և այլն. օրինակ՝ կետ 1, հոդված 2, գլուխ 3, մաս 4…
3. Հետադաս դիրքում անթույլատրելի համարել դասականի իմաստ արտահայտող թվանշանները և տառերը հոլովված ձևերով և հոդերով գործածելը, այսինքն՝ գրել ոչ թե կետ 1-ի, գլուխ II-ով, բաժին 4-րդի, նկար 5-ը, սյունակ VI-ը և այլն, այլ 1-ին կետի, II գլխով, գ մասից, 4-րդ բաժնի, 5-րդ նկարը, VI սյունակը և այլն» (66, էջ 48):

Բնականաբար **2-րդ** // **2** (*մաս*), **10-րդ** // **10** (*հոդված*), **3-րդ** // **3** (*գլուխ*), **6-րդ** // **6** (*աղյուսակ*) դասական-թվականական զուգաձևություններում ճիշտ է մասնիկով գրությունը: **1** *կետ* // *կետ* **1, 24** *հոդված* // *հոդված* **24, 3** *գլուխ* // *գլուխ* **3** և նման շարադասական տարբերակներից թույլատրելի են երկրորդները: (Սրանք նույնաձևություններ են քերականական տարբեր իմաստների արտահայտման առումով՝ առաջին տարբերակը քանակական թվականի իմաստ ունի, երկրորդը՝ դասականի): Ինչ վերաբերում է *կետ* **1-ի** // **1-ին** *կետի*, *գլուխ* **II-ով** // **II** *գլխով*, *մաս* **Դ-ից** // **Դ** *մասից*, *աղյուսակ* **VI-ում** // **VI** *աղյուսակում*, *բաժին* **IV-ում** // **IV** *բաժնում*, *սյունակ* **VIII –ից** // **VIII** *սյունակից* զուգաձևություններին, ապա դասականի իմաստ արտահայտող թվանշանները և տառերը հոլովված ձևերով և հոդերով գործածելը առաջադաս դիրքում է թույլատրելի, և կանոնական են, նորմատիվ երկրորդ ձևերը, առաջին տարբերակները մերժելի են:

Նույն որոշմամբ նաև արտասանական բարեշրջումներ են կատարվել, և **Տիգրան Երկրորդ** // **Տիգրան Բ, Վաղարշակ Առաջին** // **Վաղարշակ Ա, Խոսրով Երրորդ** // **Խոսրով Գ** և նման ձևաբանական-ուղղախոսական զուգաձևություններում անձնանունների հետ գործածվող դասական թվականների տառանվամբ արտասանությունը սխալ է. խոսելիս սխալ են երկրորդ տարբերակները:

Թվարկման դեպքում հայոց այբուբենի տառերով արտահայտված դասական թվականները կարող են կարդացվել երկկերպ, և **ա** *կետ* // **առաջին** *կետ*, **դ** *գլխում* // **չորրորդ** *գլխում*, **ժա** *ենթակետից* // **տասնմեկերորդ** *ենթակետից* և նման արտասանական-ուղղախո-

սական զուգաձևություններում տարբերակները կանոնական են, ազատ և համազոր:

Բաշխական թվականների մանրահամակարգում զուգաձևություններ են նույն թվականի կրկնավոր և **-ական** ածանցով բաշխականները՝ **երեք-երեք // երեքական, հինգ-հինգ // հինգական // հնգական, քսան-քսան // քսանական... Մեկ-մեկ // մեկական** զուգաձևության մեջ **մեկ-մեկ**-ը այժմ քիչ է գործածվում որպես բաշխական թվական. երկրորդ տարբերակը գործածության ավելի մեծ հաճախականություն ունի: **Մեկ-մեկ** ձևի փոխարեն, որը համարյա մակբայական արժեք ունի, աշխուժացել է **մի-մի** տարբերակը, և **մի-մի // մեկական** զուգաձևությունը կանոնավոր, համազոր զուգաձևություն է, իսկ **մի-մի // մին-մին // մեկական** եռաձևության մեջ երկրորդը՝ **մին-մին**, բարբառային է և ոչ գրական, հետևաբար՝ ոչ հանձնարարելի: Թվում է, թե այս ձևով զուգաձևություններ կկազմեն բոլոր թվականները, բայց սրանք կիրառական տարբերություններ ունեն. կրկնությամբ կազմությունը հատուկ է փոքր թվերին, իսկ **-ական** վերջածանցով կազմությունը՝ մեծ թվերին: Արտահայտության պլանում նաև այլ տարբերակներ կան. բաշխական թվականներն արտահայտվում են՝ ա/ բառակրկնությամբ (**մեկ-մեկ**), բ/ արաբական թվանշանի կրկնությամբ (**1-1**), գ/ **-ական** ածանցով (**մեկական**), դ/ արաբական թվանշանով և **-ական** ածանցով (**1-ական**): Ժողովրդախոսակցական լեզվում հանդիպում է նաև բաշխականի կազմության երկու ձևերի համատեղումը, և **երեք-երեք // 3-3 // երեքական // 3-ական // երեք-երեքական, հինգ-հինգ // 5-5 // հինգական // 5-ական // հինգ-հինգական** բազմաձևություններում (հնգաձևություններում) առաջին չորսը կանոնական, համազոր տարբերակներ են, **երեք-երեքական, հինգ-հինգական** տարբերակները խորթ և ավելորդ են գրական լեզվի համար: Իսկ **հինգական // հնգական, երեսունական // երեսնական, հիսունական // հիսնական, յոթանասունական // յոթանասնական** ձևաբանական-հնչյունափոխական տարբերակներում հնչյունափոխված ձևերն առավել հատուկ են մեր լեզվի հին շրջանին (վաղ աշխարհաբարին), բայց երբեմն-երբեմն հանդիպում են ժամանակակից գրական հայե-

րենում, որն իր զարգացման ներկա փուլում չհնչյունափոխվող տարբերակներն ընտրելու միտում ունի:

Գրության մեջ հարյուրից բարձր թվականների դեպքում նորից երկվություն կա՝ **հարյուրքսանհինգակա՞ն**, թե՞ **հարյուր քսան-հինգական, հազարվեցհարյուրութսունակա՞ն**, թե՞ **հազար վեց հարյուր ութսունական, հազարիննհարյուրիննսունակա՞ն**, թե՞ **հազար ինն հարյուր իննսունական:**

Կոտորակային թվականների արտահայտությունը երկձև է՝ **1/4** և **մեկ քառորդ, 2/3** և **երկու երրորդ**:

Զուգաձևություն են կազմում **մեկ քառորդ** և **մեկ չորրորդ** կոտորակային թվականները՝ **մեկ քառորդ // մեկ չորրորդ**. **մեկ երկրորդ-ն** ունի **կես** տարբերակը (**մեկ երկրորդ // կես**). կա նաև **0,5** ձևը, **և մեկ երկրորդ // կես // 1/2 // 0,5 // զրո ամբողջ հինգ տասնորդական, մեկուկես // 1,5 // մեկ ամբողջ մեկ երկրորդ // $1^1/_2$** բազմաձևություններում բոլոր տարբերակներն էլ կանոնական են: Երբ համարիչը **մեկ** բառն է, կարող է զեղչվել և, **մեկ երրորդ -ը** և **երրորդ-ը**, **մեկ քառորդ-ը** և **քառորդ-ը** (մասը) զուգաձևություններ են: Սրանք կանոնական են, լեզվական նորմի սահմաններում: **Մեկ տասներորդ // տասից մեկը, երեք ութերորդ // ութից երեքը** զուգահեռ ձևերում գրականը առաջինն է, իսկ երկրորդը ժողովրդական-խոսակցական լեզվին է հատուկ: Հաճախ կոտորակային թվականի հայտարար դասականի վրա ավելանում է **-ական** մասնիկը, և զուգաձևություններ են՝ **երկու երրորդ // երկու երրորդական, յոթ հարյուրերորդ // յոթ-հարյուրերորդական,** որոնք կանոնական են: Երբ **տասը** թվականն է հայտարար դառնում, եռաձևություն է՝ **մեկ տասներորդ // մեկ տասներորդական // մեկ տասնորդական**, որում գերադասելի է առաջին տարբերակը, երրորդ ձևը առաջանում է **տասներորդական**-ից՝ **եր** հնչյունախմբի զեղչմամբ, և երկրորդի համեմատությամբ՝ որպես կարճ ձև, գերադասելի դառնալու միտում ունի: Ձևաբանական-ուղղագրական զուգաձևություններ են՝ **հինգ վեցերորդական // հինգվեցերորդական, երեք ամբողջ չորս հինգերորդական // երեքամբողջչորսհինգերորդական, երկու հարյուրերորդական // երկուհարյուրերորդական** (սրանց մասին արդեն խոսվել է):

Իմաստային առումով դպրոցական նոր դասագրքերից մեկում քանակական թվականների դասակարգման մեջ փոփոխություն է կատարվել՝ առանձնացվել է «մոտավորական թվականներ» տեսակը: Այն սահմանվում է այսպես՝ «Մոտավորական թվականներն արտահայտում են առարկաների մոտավոր թիվ, քանակ: Բոլոր մոտավորական թվականները բաղադրյալ բառեր են կամ բառակապակցություններ: Նրանք կազմվում են մի քանի ձևով: 1. Բացարձակ քանակական թվական + ավոր ածանց. հարյուրավոր, հազարավոր, միլիոնավոր: 2. Բացարձակ քանակական թվական + ական ածանց. երեսնական, հիսունական («թվականներ» բառի հետ). երեսնական թվականներ, վաթսունական թվականներ: 3. Տարբեր նշանակությամբ բացարձակ քանակական թվականների հարադրությամբ. երկու-երեք, յոթ-ութ, երեսուն-քառասուն» (60, էջ 118): Բնականաբար ենթադրվում է եռատարբերակների գոյություն, բայց կազմության առաջին եղանակը միայն սահմանափակ թվով թվականների համար է՝ **10, 100, 1000, 10000** և այլն: Երկրորդ և երրորդ ձևերն են զուգաձևություն կազմում՝ **երեսնական // երեսուն-քառասուն // երեսունից քառասուն, վաթսունական // վաթսուն-յոթանասուն**, բայց նորից սահմանափակություն կա՝ սրանք միայն **թվականներ** բառի կողքին են զուգահեռ ձևերով հանդես գալիս: Ստորև ներկայացնում ենք թվականի տեսակներն ըստ տարբեր նորմատիվ քերականությունների, և պարզագույն համեմատությունը ցույց կտա ժամանակակից հայերենի ձևաբանական-թվականական նորմում կատարված փոփոխությունները թվականները դասակարգելիս.

ըստ Ա. Ղարիբյանի «Հայոց լեզվի դասագրքի» (1952 թ.)

Թ վ ա կ ա ն		
քանակական	դասական	բաշխական

ըստ Ս. Գ. Աբրահամյանի «Ժամանակակից հայերենի քերականության» (1969 թ)

Թ վ ա կ ա ն				
քանակական	դասական	բաշխական	կոտորակային	խառը

ըստ Մ. Ե. Ասատրյանի « Ժամանակակից հայոց լեզու» աշխատության (2002 թ.)

(Նույն դասակարգումն է «Ժամանակակից հայոց լեզու» և Ալ. Մարգարյանի «Հայոց լեզվի քերականություն» աշխատություններում:)

Թ վ ա կ ա ն			
քանակական	կոտորակային	դասական	բաշխական

ըստ է. Աղայանի և Հ. Բարսեղյանի «Հայոց լեզվի» դասագրքի (1992թ.)

Թ վ ա կ ա ն			
քանակական			դասական
բացարձակ	կոտորակային	բաշխական	

ըստ Ֆ. Խլղաթյանի «Հայոց լեզու 5» դասագրքի (2000թ.)

Թ վ ա կ ա ն				
քանակական				դասական
բացարձակ	կոտորակային	բաշխական	մոտավորական	

ՉԹԵՔՎՈՂ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՆՈՐՄ

Շեղումներ և զուգաձևություններ

Մյուս խոսքի մասերի մեջ զուգաձևությունները քիչ են, ձևաբանական նորմից շեղումներն զգալի չեն: Դասագրքերում և նորմատիվ քերականություններում ընդգրկված է այն, ինչ սահմանված է նորմով: Մակբայը, կապը, շաղկապը, վերաբերականը, ձայնարկությունը չթեքվող խոսքի մասեր են, հետևաբար նորմատիվ քերականություններում սահմանված են այս համակարգերը կանոնարկող օրենքներն ու օրինաչափությունները: Չթեքվող են, ուրեմն ձևաբանական զուգաձևություններ գրեթե չկան. սրանցում լեզվական նորմը փոփոխվում է սոսկ բառապաշարային, բառակազմական, շարադասական առումով. շաղկապների քննությամբ առավելապես շարահյուսությունն է զբաղվում: Նրանց բառային կազմը համալրվում է այլևայլ խոսքի մասերից կատարված փոխանցումներով: Եղած զուգաձևություններն էլ հիմնականում ձևաբանական-արտասանական, ձևաբանական-ուղղագրական, ձևաբանական-բառային-բառակազմական, ձևաբանական-շարահյուսական, ձևաբանական-շարադասական են:

Հիմա // հիմիկ // հիմի, մանկուց // մանկութ, վաղը // էգուց, վաղ // կանուխ, այստեղ-այնտեղ // դես-դեն, այսօր-վաղը // էսօր-էգուց զուգաձևություններում գրականը առաջին տարբերակներն են, մյուսները բարբառային-խոսակցական երանգ ունեն:

Հետ մակբայը (**հետ** *մնալ*) **հետ** կապից տարբերակելու և դրանց համանունությունը վերացնելու նպատակով, մասամբ նաև բարբառների և արևմտահայերենի ազդեցությամբ վերջին տասնամյակներում որոշ բարդություններում **հետ** (**ետ**) արմատը նաև գրվում և արտասանվում է **ետ:** Արտասանական և ուղղագրական այս նորամուծությունը, ըստ «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատուի», իր անհետևողական կիրառությամբ առաջ է բերել այդ արմատի և նրանով կազմված բառերի արտասանության և ուղղագրության անհարկի զուգաձևություններ և շփոթ: Այսպես՝ **հետ *գնալ* // ետ *գնալ*, հետ *գալ* // ետ *գալ*, հետ *տանել* // ետ *տանել*, հետ**

բերել // **ետ** *բերել*, **հետ** *կանչել* // **ետ** *կանչել*, **հետ-հետ** *քայլել* // **ետ-ետ** *քայլել*, **հետ** *մահու* // **ետ** *մահու*, **հետ** *ու առաջ* // **ետ** *ու առաջ*, **հետ** *ադրություն* // **ետ** *ադրություն*, **հետ** *քաշում* // **ետ** *քաշում*, **հետ** *հոկտեմբերյան* // **ետ** *հոկտեմբերյան*, **հետ** *նալեզվային* // **ետ-** *նալեզվային*, **հետ** *ադարձ* // **ետ** *ադարձ*, **հետ** *ընթաց* // **ետ** *ընթաց*, **հետ** *ևանց* // **ետ** *ևանց*, **հետ** *ամուտք* // **ետ** *ամուտք*, **հետ** *ճաշյա* // **ետ** *ճաշյա*, **հետ** *պատերազմյան* // **ետ** *պատերազմյան* և այլն: Նկատի ունենալով ավանդական արտասանությունը, նաև այն, որ **ետ** ձևը հակասում է այդ կարգի բառերում կատարված **յ-ի** ընդհանրական հնչյունափոխությանը (նույնիսկ գրաբար բնագրերում **յետ**-ը կարդացվում է **հետ**), և **հետ** ետադրությունը չի դառնում բարդ բառերի բաղադրիչ և չի կարող շփոթվել **-հետ** (**ետ**) արմատի հետ, «...**Հետ** (**ետ**) արմատի ու նրանով կազմված բառերի գրության և արտասանության անհարկի զուգաձևությունից ազատվելու և միօրինակություն սահմանելու նպատակով Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեն որոշում է.

Այսուհետև **հետ** /**ետ**/ արմատը ամենուրեք, անջատ թե բաղադրյալ, գրել և արտասանել **հետ**...

Ծանոթություն: Թույլատրել գրական երկերի մեջ խոսքի ոճավորման նպատակով գործածել ետ-ով կազմված ետևանց, ետիտես, ետնա, ետնուց, ետք, այլև՝ գրական համարժեք ունեցող ետ եկած, ետ մնալ, ետնաբնակ, ետնակին, ետնամուտք, ետնափակ և այլ բարբառային ձևերը» (115, էջ 208):

Ըստ այս որոշման՝ վերոբերյալ զուգաձևություններում գրական են **հետ**-ով տարբերակները, երկրորդները հնացած են կամ բարբառային, որոնց գործածությունը միայն ոճական նկատառումներով կարելի է արդարացնել:

ժամանակով // ժամանակավ, առավոտյան / առավոտով // առավոտանց, գիշերով // գիշերանց, հեռվից // հեռվանց, դրսից // դրսանց, ներսից // ներսանց զուգաձևություններում երկրորդները հնացած են և ժողովրդախոսակցական լեզվում են գործածելի:

Այսուհետև // այսուհետ, այնուհետև // այնուհետ զուգաձևություններում **այսուհետև** և **այնուհետև** մակբայների հաճախա-

բար գործածվող **այսուհետ, այնուհետ** ձևերը բառակազմորեն սխալ են և մերժելի:

Օր օրի // օր օրի վրա զուգաձևության եզրերը կանոնական են, երկրորդը խոսակցական երանգ ունի:

Չևաբանական-ուղղագրական զուգաձևություններ են կազմում նաև բաղադրիչների միասին և տարանջատ գրությամբ ձևերը՝ **իսկույն ևեթ // իսկույնևեթ, հև ի հև // հևիհև, զօր ու գիշեր // զօրուգիշեր, գիշեր ու զօր // գիշերուզօր, այս ու այն կողմ // այսուայնկողմ, մերթ ընդ մերթ // մերթընդմերթ, այժմ ևեթ // այժմևեթ...**, որոնք համազոր, կանոնական տարբերակներ են:

Առ-ով կապակցված միավանկ բառերով կազմված մակբայների և՛ առանձին, և՛ միասին գրությամբ ձևերը ճիշտ են, նորմի սահմաններում՝ **տող առ տող // տողառտող, բառ առ բառ // բառառբառ, կետ առ կետ // կետառկետ, էջ առ էջ // էջառէջ:**

Կանոնական համազոր զուգաձևություններ են **գիշեր-ցերեկ // գիշեր ու ցերեկ, սար-ձոր // սար ու ձոր, դես-դեն // դես ու դեն, ամառ-ձմեռ // ամառ ու ձմեռ, աջ-ձախ // աջ ու ձախ, ետ-առաջ // ետ ու առաջ, գլուխ-գլուխ // գլուխ առ գլուխ, կետ-կետ // կետ առ կետ,** որոնք իմաստային նուրբ տարբերություններ ունեն:

Մակբայական համակարգում զուգահեռ ձևեր են՝ **տխրորեն // տխրաբար // տխուր ձևով // տխուր կերպով // տխուր եղանակով, քնքշորեն // քնքշաբար // քնքուշ կերպով // քնքուշ ձևով // քնքուշ եղանակով** և այլն, որոնք կիրառական և իմաստային որոշ տարբերություններ ունեն:

-Բար, -պես, -որեն ածանցներն իմաստով իրար շատ մոտ են, կազմում են համանիշ բառեր՝ **ագահաբար // ագահորեն, գերազանցաբար // գերազանցապես // գերազանցորեն** և այլն:

Նկատելի է, որ վերջերս **-որեն** ածանցով կազմված մակբայներն սկսում են հանդես գալ գերադրական աստիճանով՝ բուն մակբայական գործածությամբ:

-Ովին // -ովի ածանցներով կազմված հետևյալ զուգահեռ ձևերում՝ **ազգովին // ազգովի, խմբովին // խմբովի, գլխովին // գլխովի,** երկրորդ տարբերակները խոսակցական-բարբառային երանգ ունեն: Գրական և խոսակցական հակադրությունն է ընկած

առավոտվանից // առավոտուց, առաջվանից // առաջուց ձևաբանական-ոճական զուգաձևություններում:

Տնովի // տուն-տնովի, մորուց // մորութ զուգաձևություններում երկուսն էլ խոսակցական-ժողովրդական երանգ ունեն:

Դրսում // դուրսը, ներսում // ներսը, առջևում // առջևը զուգաձևություններում երկրորդ տարբերակները ժողովրդա-խոսակցական են և ոչ հանձնարարելի: Ժողովրդախոսակցական է **նորեն** տարբերակը **նորից // նորեն** զուգաձևության մեջ:

Ի վեր, ի վայր // ի վար կապերով ձևավորված մակբայներում կապվող բառը միշտ **և** հոդով է հանդես գալիս, և **ը**-ով տարբերակը սխալ է. **սարն ի վեր // սարը ի վեր, գետն ի վեր // գետը ի վեր, ձորն ի վար // ձորը ի վար** և նման զուգաձևություններում ճիշտ են առաջին տարբերակները:

Գյուղեգյուղ // գյուղից գյուղ // գյուղե-գյուղ, քաղաքեքաղաք // քաղաքից քաղաք // քաղաքե-քաղաք, ձեռնեձեռ // ձեռքից ձեռ, տնետուն // տնից տուն // տնե-տուն և նման զուգաձևություններում առաջին և երկրորդ տարբերակները կանոնական են և համազոր: Երրորդները հնացած են և ոչ թույլատրելի. գծիկով գրությունը եթե նախկինում օրինաչափական էր, ապա այսօր սխալ է և ոչ նորմատիվ:

Երիցս // երիցս անգամ, եռակի // եռակի անգամ, քառակի // քառակի անգամ, բազմիցս // բազմիցս անգամ զուգաձևություններում երկրորդները սխալ են. **անգամ** բառի գործածությունն ավելորդ է, քանի որ առաջին տարբերակներն առանց **անգամ** բառի էլ նշանակում են «երեք անգամ», «չորս անգամ», «բազում անգամ»:

Նշմարվում է նաև մի այլ երևույթ, որը հատուկ չէր նախախորհրդային շրջանի հայերենին: **Ետ և առաջ** մակբայները այժմ յուրահատուկ ածանցի դեր են կատարում՝ կցվելով բայանուններին՝ **ետքաշում, առաջխաղացում, առաջքաշում:**

Կան մակբայներ, որ երկխոսքիմասային իմաստ են արտահայտում՝ ածականական և մակբայական: Լեզվի զարգացման արդի փուլում լայն տարածում է ստացել մակբայների ածականական կիրառությունը՝ բայանունների վրա. խոսքն այն մասին է, որ լեզվում ստեղծվում է մի նոր օրինաչափություն, որով այս կամ այն բայերի լրացնող մակբայը (խոսքը հիմնականում ածանցավոր մակբայների

մասին է) կարող է հիշյալ բայերից կազմված բայանունների էլ լրացնել. որոշ լեզվաբաններ դա բացատրում են նաև ռուսերենի ազդեցությամբ՝ **իսպառ բնաջնջում, հաճախակի օդափոխում, արագ որոշում, դանդաղ ընթացք, անարգել զարգացում:**

Նկատելի է նաև **ինչ-որ** դերանվան մակաբայական գործածության աշխուժացում:

Տարբեր քերականական իմաստների արտահայտումը մի քերականական ձևով առավելապես մակբայներին է վերաբերում: Լեզվի բազմաշատ փաստեր ցույց են տալիս, որ բացի երկխոսքիմասային (**մակբայ // ածական**) բառերից կա բառերի մի խումբ էլ, որոնք կարող են գործածվել՝

մակբայ // գոյական // ածական (իտալերեն, հայերեն...)

մակբայ // վերաբերական (դեռ...)

մակբայ // կապ (ետևից, առաջ, հետո...)

մակբայ // շաղկապ (ևս)

մակբայ //շաղկապ // վերաբերական (էլ)

մակբայ // ածական // կապ (մոտ)

մակբայ // գոյական // ածական // կապ (հեռու) խոսքիմասային նշանակությամբ: Մի կողմ թողնելով հարցի վերաբերյալ տարակարծությունները [«...բոլոր այն բառերը, որոնք գործողության հատկանիշ կամ հատկանիշի հատկանիշ են ցույց տալիս, մակբայներ են և այդպես էլ պետք է ներկայացվեն ոչ միայն բառարաններում, այլև քերականական աշխատանքներում և ուսումնասիրություններում» (80, էջ 498), կամ՝ «Ինչպես առիթ ենք ունեցել նշելու, որ որոշ քերականներ մակբայի շարահյուսական պաշտոնով հանդես եկող ածականները տվյալ շարահյուսական կապակցության մեջ համարում են հենց մակբայներ, իսկ որոշ քերականներ էլ գտնում են, որ ածականը իր շարահյուսական բոլոր կիրառությունների դեպքում մնում է որպես ածական և մակբայ համարվել չի կարող: Հասկանալի է, որ հարցի այս տարբեր լուծումները պայմանավորված են նրանով, թե էակա՞ն, թե՞ երկրորդական է համարվում խոսքի մասերի որոշման շարահյուսական հիմունքը: Մեր կարծիքով ճիշտ պետք է համարել առաջին տեսակետը» (33, էջ 334)], կարող ենք համոզված ասել, որ նույն բառերի տարբեր քերականական իմաստներ արտահայտելու

իրողությունը ևս լեզվի ներքին զարգացմամբ է պայմանավորված, և լեզվի ներքին զարգացումն էլ թելադրում է, որ դրանք ժամանակի ընթացքում խոսքամասային տարբերակվածություն ունենան՝ համաձայն լեզվի ձևաբանական համակարգի հիմնական օրենքի՝ մի քերականական իմաստին՝ մի ձև, մի քերականական ձևին՝ մի քերականական իմաստ: Լեզվական նորմում էլ մնում է արձանագրել այն օրինաչափությունները, որին վերահասու են լինում լեզվաբանները, լեզվի կյանքով ապրողները:

Կապեր և կապական բառեր: Ձևաբանական նորմը սահմանում է՝ կապերը, նյութական իմաստից զուրկ լինելով, արտահայտում են քերականական հարաբերություններ. դրանց մեծամասնությունը զուրկ է թեքման ձևերից, սակայն տարածական իմաստ արտահայտող կապերի մի զգալի մասը հոլովվում է և ընդունում ստացական հոդեր. առանձին նախադասության անդամ լինել չեն կարող:

Գործածությունից դուրս են եկել **վերա, քով(ը), վերաբերությամբ, ետ** կապերը, որոնց փոխարինել են **մոտ, կողք(ը), վերաբերյալ, հետ** բառերը: **Առաջ, մեջ, տակ** բառերի տրական հոլովաձևերը՝ **առաջին, միջին, տակին**, ժողովրդական-բարբառային են, և **մեջ // մեջին // մեջը, տակ // տակին // տակը, առաջ // առաջին // առաջը** զուգահեռ ձևերում գրական են առաջին տարբերակները:

Թեքվող (հոլովվող) կապերից **վրա**-ն է բացառական և գործիական հոլովներում գրական – ոչ գրական հակադրությամբ զուգաձևություն կազմում՝ **վրայից // վրից, վրայով // վրով**, որոնցում հնչյունափոխված (**այ**-ը ընկել է) ձևերը ժողովրդական լեզվին են բնորոշ: **Միջի // մեջի, միջից // մեջից, միջով // մեջով** հոլովական զուգաձևություններում գրական են հնչյունափոխված տարբերակները:

Կանոնական զուգաձևություններ են **շուրջ // շուրջը, ետև // հետև, մինչ // մինչև:**

Գրական հայերենում տարածական իմաստ արտահայտող **մեջ, վրա, տակ, մոտ, առաջ, առջև, դիմաց, հետ, դեմ** կապերը, դեռևս պահպանելով նյութական նշանակության որոշ հետքեր, ստացական հոդեր ընդունելու, նաև ստացական հոգնակիների ձևով հանդես

գալու հնարավորություն ունեն՝ **մոտս, մոտդ, մոտը, հետս, հետդ, հետը, դեմս, դեմդ, վրաս, վրադ, վրան, առջևս, առջևդ..., մոտներս, մոտներդ, մոտները, հետներս, հետներդ, հետները,** և այլն, որոնցից մի քանիսը զուգահեռ ձևեր ունեն, և **վրաս // վրես, վրադ // վրեդ, վրան // վրեն, մոտներս // մոտերս, մոտներդ // մոտերդ, մոտները // մոտերը** զուգաձևություններում գրականը առաջին տարբերակներն են, երկրորդները կա՛մ ակնհայտ բարբառային են, կա՛մ խոսակցական: Չևաբանական-շարահյուսական տարբերակներ են **վրաս // ինձ վրա // իմ վրա, վրադ // քեզ վրա // քո վրա, մոտս // ինձ մոտ // իմ մոտ, մոտդ // քեզ մոտ // քո մոտ** եռաձևությունների բաղադրիչ ձևերը, որոնցից ոչ գրական են երրորդները (և որոնց մասին համապատասխան հատվածում խոսվել է):

Կապերի հետ կապված հարցերը առավելապես շաղկապվում են շարահյուսության հետ, քանի որ նրանց գործածական առանձնահատկությունները, ճիշտ և սխալ օգտագործումները առավել ևս երևան են գալիս բառակապակցությունների մեջ: «Իսկ գիտե՞ք , թե ինչքան կապեր ենք գործածում, որ սխալ կիրառության պատճառով դառնում են հայերենի թշնամին: Ահա խնդրեմ՝ ինչքան ուզեք՝ **մարդու մոտ ամեն ինչ պետք է գեղեցիկ լինի** (այսինքն՝ ոչ թե մեջ, այլ կողքին՝ ինչ-որ տեղ), **մարդու մոտ մի սքանչելի միտք ծագեց** (դուրս է գալիս՝ ոչ թե մարդու մեջ, գլխում, այլ կողքին, մոտակայքում), գիրքը լավ ընդունվեց ընթերցողների մոտ (վերստին՝ ոչ թե մեջ, շրջանում, միջավայրում, այլ ընթերցողների մոտերքը): Չի՛ կարելի այսպես ասել ու գրել: Մինչդեռ և՛ գրվում է, և՛ ասվում: Իսկ կարո՞ղ է պատահել, որ ձեր տունը **գտնվի Ամիրյան փողոցի վրա** (ոչ թե փողոցում), **հրապարակի վրա** (ոչ թե հրապարակում), **շատ մարդ հավաքվի խաչմերուկի վրա** (ոչ թե խաչմերուկում): Իհարկե, հայերեն՝ չի կարող պատահել, բայց պատահում է, այն էլ՝ աղետալիորեն շատ: Ուրիշ վատ բաներ էլ պատահում են՝ **երկու ընկեր, որ անբաժան են իրար հետ** /ոչ թե իրարից/, **քեզ հետ ինչ պատահեց** (ոչ թե քեզ), **նրա հետ ինչ են արել** (ոչ թե նրան): Տեսնու՞մ եք՝ վրա, մոտ, հետ հայերեն կապեր, որ այսօրինակ կիրառություններով կապ չունեն հայերենի հետ» (63, էջ 143-144):

Եվ այսպես կարող ենք շարունակել՝ **հանձին ընթերցողների** և **հանձինս ընթերցողի**, փոխանակ՝ **հանձին ընթերցողի** և **հանձինս ընթերցողների**, քանի որ առաջինը կապակցվում է եզակի թվով գոյականների հետ, իսկ երկրորդը՝ հոգնակի, և **ս**-ն գրաբարյան հոգնակերտ մասնիկ է, որը չի գիտակցվում այսօրվա լեզվամտածողությամբ (ինչպես **ի զարմանս, ի փառս, ի հեճուկս** բառերի մեջ). **ի զարմանքս**, փոխանակ՝ **ի զարմանս** կամ **ի զարմանք** (**ի զարմանքս // ի զարմանս // ի զարմանք**). **ի հօգուտ**, փոխանակ՝ **հօգուտ** (**ի հօգուտ // հօգուտ**), **իրավմամբ**, փոխանակ՝ **իրավամբ** (**իրավմամբ // իրավամբ**), **ի շնորհիվ**, փոխանակ՝ **շնորհիվ** (**ի շնորհիվ // շնորհիվ**): Ոչ հաճախ են հաշվի առնվում **պատճառով** և **շնորհիվ** կապերի միջև եղած իմաստային և ոճական նրբերանգները: Սրանք ձևաբանական-շարահյուսական զուգաձևություն են կազմում, որոնցում տարբերակներն օրինաչափ են, կանոնական, սակայն կիրառական-իմաստային տարբերություններ ունեն: Նույնպիսի իմաստային-շարահյուսական տաբերություններ կան **համար** և **հանուն**, **մեջ** և **միջև** զույգերի միջև:

Ձերդ // զերթ զուգաձևության մեջ նախընտրելի է **զերդ**-ը, **մինչ // մինչև** -ում երկուսն էլ նորմի սահմաններում են:

2000թ. փետրվարի 1-ին ՀՀ լեզվի տեսչության թիվ 8/2 հրամանով հաստատվել են **ի վայր** (**վար**), **ի վեր** հետադրություններով կազմված բառակապակցությունների և բառերի գրության կանոնները: **Ի վայր // ի վար** զուգաձևությունը գրական և խոսակցական-ժողովրդական տարբերակներ են. առաջինը հատուկ է գրքային ոճին, երկրորդը՝ խոսակցականին, և **գետն ի վայր // գետն ի վար, ձորերն ի վայր // ձորերն ի վար, լեռն ի վայր // լեռն ի վար**... զուգաձևություններում տարբերակները ոճական-կիրառական տարբերություններ ունեն:

Ժամանակակից հայերենում գոյականներով և **ի վայր** (**վար**), **ի վեր** հետադրություններով կազմված կապակցությունների ու բառերի գրության մեջ առաջացել են ավելորդ զուգաձևություններ՝ **դար ի վեր // դարիվեր, զառ ի վայր // զառիվայր, լեռն ի վայր // լեռնիվայր, սարն ի վեր // սարնիվեր, փողոցն ի վար // փողոցնիվար**... Ուղղագրական այս անհարկի և շփոթեցնող զուգաձևությունները

վերացնելու նպատակով անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ կանոններով:

« 1. Անջատ կամ հարադրությամբ գրվում են.

գոյականներով և ի վայր (վար) ու ի վեր հետադրություններով կազմված կապակցությունները:

Դրանք են՝

ա/ հատուկ տեղանուն գոյականներով և ի վայր (վար) ու ի վեր հետադրություններով կազմված կապակցությունները...

բ/ հոգնակի գոյականներով և ի վայր (վար) ու ի վեր հետադրություններով կազմված կապակցությունները...

գ/ գոյականական բառակապակցությամբ և ի վայր (վար) ու ի վեր հետադրություններով կազմված կապակցությունները...

դ/ բառային անկախություն ունեցող շեշտակիր գոյականներով կամ մակբայներով և ի վայր (վար) ու ի վեր հետադրություններով կազմված կապակցությունները...

2. Անանջատ կամ հարադրությամբ գրվում են.

Գոյականներով և ի վայր (վար) ու ի վեր հետադրություններով բաղադրված այն բարդ բառերը, որոնք ունեն մեկ բառային շեշտ և մակբայի, երբեմն էլ ածականի կամ գոյականի խոսքիմաստային նշանակություն...» (66, էջ 21-22):

Ըստ այս կանոնների՝ ճիշտ են՝ **Մասիսն ի վեր, Արագածն ի վեր, Ծովասարն ի վայր, Արայի լեռն ի վայր, բերդի պատն ի վեր, դիմացի սարն ի վեր, սարերն ի վեր, ձորերն ի վայր, դաշտերն ի վեր**:

Նույն այս կանոններով նորից զուգաձևությունների գոյության համար տեղ է թողնվում. «Թույլատրվում է անանջատ գրության միավորների բաղադրիչների անջատ գրությունը, եթե առաջին բաղադրիչը նույնությամբ անկախ գործածություն ունի՝ դար ի վեր, երեսն ի վայր, հիմն ի վեր» (66, էջ 22): Այսինքն՝ **դարնիվեր // դարն ի վեր, երեսնիվայր // երեսն ի վայր, հիմնիվեր // հիմն ի վեր** զուգաձևություններում տարբերակները ազատ են և թույլատրելի: Նույն կանոններից մեկի համաձայն՝ անհանձնարարելի են անջատ գրություն ունեցող լեռն ի վայր (վար), լեռն ի վեր, պատն ի վայր (վար), պատն ի վեր, սարն ի վայր (վար), սարն ի վեր ձևերի՝ լեռնի-

վայր(վար), լեռնիվեր, պատնիվայր(վար), պատնիվեր, սարնիվայր (վար), սարնիվեր անանջատ գրությունը» (66, էջ 22): Արդյունքում նորից դժվարանում ես ընտրել՝ **կիրճնիվե՞ր,** թե՞ **կիրճն ի վեր, փոողոցնիվե՞ր,** թե՞ **փողոցն ի վեր, փողոցնիվա՞ր,** թե՞ **փողոցն ի վար, գետնիվա՞յր,** թե՞ **գետն ի վայր, լեռնիվե՞ր,** թե՞ **լեռն ի վեր, երեսնիվա՞յր,** թե՞ **երեսն ի վայր...**

Բերանքսիվայր-ը և **բերանքսիվեր-**ը, որպես մեկ բառային շեշտ և մակբայական խոսքիմասային նշանակություն ունեցողներ, անանջատ կամ հարադրությամբ են գրվում. **բերանքսիվայր // բերանսիվայր // բերանքսիվար // բերանսիվար, բերանքսիվեր // բերանսիվեր** զուգաձևություններում տարբերակները գրքային-գրական և խոսակցական-ժողովրդական են:

Ի վեր, ի վար // ի վայր կապերից առաջ կապակցվող գոյականներն անխտիր **ն** հոդով են հանդես գալիս. **ը**-ով զուգահեռ ձևերն անհանձնարարելի են:

Ըստ լեզվական կանոնի՝ <u>մի քանի կապեր կարող են գործածվել կապվող բառերից և՛ առաջ, և՛ հետո, այսինքն՝ հանդես են գալիս և՛ որպես նախադրություն, և՛ որպես ետադրություն:</u> Քերականական-շարադասական զուգաձևություններ են կազմում **անկախ** (անկախ եղանակից // եղանակից անկախ), **բացի** (բացի նրանից // նրանից բացի), **ընդդեմ** (ընդդեմ պատերազմի // պատերազմին ընդդեմ), **հակառակ** (հակառակ ցանկությանը // ցանկությանը հակառակ), **համաձայն** (համաձայն կանոնի // կանոնի համաձայն), **համապատասխան** (համապատասխան լուրերի // լուրերի համապատասխան), **հեռու** (հեռու քաղաքից // քաղաքից հեռու), **շնորհիվ** (շնորհիվ մարդու // մարդու շնորհիվ) կապերը. սրանցում տարբերակները կանոնական համազոր են: Սրանցից **ընդդեմ, հակառակ, համապատասխան** կապերը նախադաս դիրքում կապվող բառի՝ անհոդ տրականի ձևերի հետ հանդես գալու հակում ունեն, իսկ ետադաս դիրքում՝ հոդավոր ձևերի:

Որովհետև // քանզի // զի // վասնզի շաղկապական բազմաձևությունում միայն առաջինն է կանոնականը, իսկ մյուսները ավանդական են՝ գրաբարից ժառանգած, որոնց կիրառությունը զուտ ոճական նպատակներով է պայմանավորված: **Որովհետև //**

որտև զուգաձևության մեջ երկրորդը խոսակցական է. հնչյունախմբի սղումը կամ կրճատումը արագախոսության պատճառով է կատարվել:

Վերաբերականների համակարգում արտասանական զուգաձևություններ են՝ **ապա // հապա, երանի // երնեկ // երանի թե, ախար // ախր, խո // խոմ, ահա // հրես / հրեդ / հրեն**, որոնցում երկրորդները ժողովրդախոսակցական են, բարբառային, խիստ մերժելի:

Չայնարկությունների համակարգում հանդես եկող զուգաձևությունները հնչյունական-ձևաբանական են՝ **թյու՛ // թու՛ // թու՛հ // թյու՛հ, վի՞ // վի՞հ, վա՞շ // վա՞շշ, ու՞ֆ // ու՞ֆֆ, դե՛հ // դե՛, դըռ // դըռռ, ճըռ // ճըռռ, ճըզ // ճըզզ, թըռ // թըռռ, տըզ // տըզզ, չըխկ // չըրխկ, վըզ // վըզզ, թըշ // թըշշ, հեյ գիտի // հեյ գիդի, վա՞հ // վա՞, ուխա՞յ // օխա՞յ, հոպպա՛ // հոպլա՛, ֆու՛ // ֆու՛հ**: Որոշ ձևերի մեջ ձայնեղ և շնչեղ խուլ հնչյունների զուգահեռ գործածությունն է պատճառ դառնում զուգաձևությունների առաջացման՝ **դմբ // դմփ, դրմբ // դրմփ...**, որ կարելի է բացատրել բարբառային տարբերություններով. դրանք, իբրև բնաձայնական արմատներ, իմաստային որոշ նրբություն են արտահայտում:

Իրավացի է Մ. Ասատրյանը, երբ գրում է « Սակայն ինչպես էլ որ մոտենանք այս հարցերի լուծմանը, մի բան պարզ է ու որոշակի. լրիվ տրամաբանական ու հետևողական և հակասություններից բացարձակապես զերծ քերականական համակարգեր չեն եղել և ըստ երևույթին չեն էլ լինի, որովհետև կենդանի ու զարգացող և ժողովրդի բերանում հավերժ ծփացող այդ անհուն օվկիանոսը քերականական կաղապարներով ու կանոններով պարփակելն ուղղակի անհնար է, և լեզվաբանը միշտ վերահասու է լեզվի միայն ամենաընդհանուր օրինաչափություններին» (33, էջ 339):

ԼԵԶՎԱԿԱՆ ՆՈՐՄ ԵՎ ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Խոսքի մշակույթը (ասում են նաև **խոսքի կուլտուրա**, **լեզվական** (լեզվի) **կուլտուրա**, **լեզվական մշակույթ**) լեզվագիտության ճյուղերից մեկն է: Այն գրական լեզվի գրավոր և բանավոր տարբերակներն օրինակարգավորող նորմի իմացությունն է, հաղորդակցության գործառույթն ապահովելու նպատակով լեզվական միջոցների ճիշտ ընտրությունն է և դրանց տեղին ու պատշաճ կիրառությունը: Խոսքի մշակույթը հաղորդակցումն ապահովող գրական լեզվի առավել ճշգրիտ ու նպատակասլաց դրսևորումն է, մտքերը պարզ, քերականորեն ճիշտ ձևերով, համապատասխան արտահայտչականությամբ, ոճական նրբերանգներով արտահայտելն է: Նույնիսկ ամենաճշմարիտ ու խոր միտքը, եթե «վատ» լեզվով է շարադրվում, կարող է չհասնել լսողի գիտակցությանը: Բավական չէ իմանալ, թե ի՛նչ ասել, այլ նաև՝ ինչպե՛ս ասել. անգամ ամենաջերմ զգացմունքի նկատմամբ մարդն անտարբեր կմնա, եթե լեզվի հարուստ բառագանձից համապատասխան բառեր, բառաձևեր չգտնվեն նրա արտահայտման համար, եթե ընտրյալներն էլ համապատասխան հնչումով չարտաբերվեն ու հարմար պահին չասվեն: Ճիշտ գրելն ու խոսելը գրական նորմը տիրապետելն է, գեղեցիկ գրելն ու խոսելը արվեստ է: **Խոսքի մշակույթն էլ գրական լեզվի նորմը տիրապետելու արվեստն է**: Մտքերը ճիշտ և հասկանալի արտահայտելու ունակությունը, գրագետ խոսելը, ոչ միայն իր խոսքով ուշադրություն գրավելու կարողությունը, այլև լսողների վրա ազդելու հմտությունը, խոսքին տիրապետելը յուրօրինակ բնութագիր է տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց համար, նրանց արժեքավորման համար: Հատկապես ա՛յն մարդիկ իրենց խոսքի կուլտուրային պետք է հետևեն, ովքեր այս կամ այն ձևով անընդհատ շփվում են հասարակության մյուս անդամների հետ, կազմակերպում են նրանց աշխատանքը, զանազան ծառայություններ առաջարկում..

Խոսքի մշակույթը մարդու կուլտուրայի կարևորագույն կողմերից մեկն է, այն ձեռք է բերվում համառ և հետևողական աշխատանքով: Մարդուն դատում են ըստ արարքների: Կարելի է ավելացնել մարդուն դատում են նաև ըստ խոսքի. իզուր չէ, որ ժողովուրդն ասում է. «Ընդունում են՝ տեսքին նայելով, ճանապարհ դնում՝ խոսքին նայելով»:

Իսկ ի՞նչ բան է խոսքի մշակույթը և ի՞նչ կապ ունի գրական լեզվի նորմի հետ: Ըստ Առաքել Սյունեցու՝ քերականությունն ամենից ավելի առնչվում է ճարտասանության հետ, որն այն ժամանակներում խոսքի մշակույթի պարզունակ դրսևորումն էր: Ճարտասանությունը, որպես գեղեցիկ խոսելակերպի արվեստ, հիմնվում է քերականության վրա, հռետորական հնարքները ստույգ ու հիմնավոր դարձնելու համար օգտագործում է նրա կանոնները: Սակայն քերականությունն էլ իր հերթին հենվում է ճարտասանության վրա: Նրանից վերցնելով գեղեցիկ խոսքի կառուցման հնարանքները՝ քերականությունն իր կանոնները դարձնում է զարդարուն, գունեղ ու կենդանի (104, էջ 27-28):

Խոսքի մշակույթի հարցերով զբաղվել են դեռևս Հին Հունաստանում՝ կապված հռետորական արվեստի հետ. այս հին աշխարհում վաղեմի ժամանակներում հատուկ համակարգ է մշակվել «խոսելու» համար, խոսքի առավելություններն ու թերությունները են ընդգծվել, կանոններ են մշակվել, թե ինչպիսին պետք է լինի խոսքը, և ինչից պետք է հեռու մնալ, պահանջվել է հետևել խոսքի ճշտությանը, մաքրությանը, պարզությանը, ճշգրտությանը, տրամաբանությանը, տեղին, պատշաճ և արտահայտիչ լինելուն, նաև նշվել են այն ուղիները, որոնցով կարելի էր հասնել խոսքային բարձր կուլտուրայի: Ավելին՝ Արիստոտելը դեռևս իր ժամանակին պահանջում էր չմոռանալ խոսքի հասցեատիրոջը, ընդգծում էր, որ խոսքը կազմված է երեք բաղադրատարրից՝ հենց խոսողից, առարկայից, որի մասին խոսվում է, և այն անձից, որին ուղղված է խոսքը:

20-րդ դարի 20-ական թվականներին Մոսկվայում ստեղծվում է մի ամբողջ ինստիտուտ՝ «Институт Живого Слова», բայց և անվանումը չի փրկում այն փակվելուց, որովհետև նորաստեղծ խորհրդային պետության մեջ խոսքի մշակույթով, լեզվի նորմավորման հարցերով զբաղվելու ժամանակ չկար: Միայն նույն դարի վերջերին

սկսեցին առանձնակի հետաքրքրություն ցուցաբերել խոսքի մշակույթի նկատմամբ, որի տակ պարզապես հասկացվում էր գրական խոսել և գրել: Սկզբնական շրջանում այն ընկալվեց նեղ իմաստով և ճիշտ խոսելու արվեստի հոմանիշը դարձավ:

Նույն ժամանակներում էլ հայ լեզվաբանության մեջ խոսքի մշակույթի հարցերին անդրադարձան:

Մեր օրերում այս հարցերն առավել ևս կարևորվում են. նորագույն ժամանակների ցանկացած պետություն խոսքի մշակույթի, լեզվի նորմավորման հարցերով զբաղվելու համար ժամանակ պետք է հատկացնի...

Խոսքի կուլտուրան կամ խոսքի մշակույթը ներառում է և լեզվական, և՛ հաղորդակցական, և՛ գեղագիտական, և՛ բարոյագիտական նորմերը, և դրանցից յուրաքանչյուրի տեսանկյունից գնահատվում է խոսքը. բարոյագիտական նորմի առումով այն կարող է լինել **պատշաճ / ոչ պատշաճ, լավ / վատ, ընդունված / ոչ ընդունված:** Հաղորդակցական առումով՝ **հաջողված / ոչ հաջողված, ազդեցիկ / ոչ ազդեցիկ** և այլն: Լեզվական նորմի տեսակետից խոսքը կարող է լինել **ճիշտ / ոչ ճիշտ /սխալ/, տեղին / ոչ տեղին, հարմար / ոչ հարմար, հասկանալի / ոչ հասկանալի, տրամաբանական / ոչ տրամաբանական, արտահայտիչ / ոչ արտահայտիչ:**

Խոսքի մշակույթն ամենից առաջ լեզվական-գրական նորմի յուրացումն է: Լեզվական նորմը սոսկ կանոնների ամբողջություն չէ: Գործնականորեն վերջինիս իմացությունն անհրաժեշտ է, որ՝

- մարդիկ ճիշտ հասկանան իրար.
- կիրթ, գրագետ մարդը զատվի, տարբերվի լեզվական գորշ միջավայրից.

  հասարակության գրագետ խավը իր լեզվական բարձր ճաշակով ազդի մնացածների վրա՝ լեզվական դաստիարակության առումով.
- պահպանվեն լեզվական ավանդույթները:

«Լեզվաբանական բառարանում» այն այսպես է բնութագրվում. «Խոսքի կուլտուրա: Լեզվական մշակույթ: Լեզվի կուլտուրա: Գրական լեզվում նրա հիմնական՝ հաղորդակցման ֆունկցիային նպաստող հատկանիշների առավել ճշգրիտ ու նպատակասլաց դրսևորումը: Այս հասկացության տակ նկատի է առնվում

մտքերը պարզ ու քերականորեն ճիշտ, իրենց բոլոր նրբերանգներով հաղորդելու ունակությունը, բառապաշարի հարստությունն ու ոճական բազմազանությունը, խոսքի ոճական-տրամաբանական կուռ կառուցվածքը, խոսքում ավելորդ կամ հաղորդակցման պրոցեսում դժվար ըմբռնելի, արտահայտչական նշանակություն չունեցող բառապաշարային կամ քերականական շեղումների չօգտագործումը և այլն» (96, էջ 141):

Խոսքի կուլտուրան, ըստ «Հայերենագիտական բառարանի», բանավոր և գրավոր խոսքի (լեզվի) հնչյունաբանական, բառագիտական, քերականական, ոճագիտական նորմերին տիրապետելն է և դրանք ըստ նպատակադրման՝ տեղին գործածելը (95, էջ 285):

Կարելի է եզրակացնել, որ խոսքի մշակույթը ամենից առաջ գրական լեզվի նորմի իմացությունն է:

Քանի որ նորմը մեկընդմիշտ տրված, քարացած երևույթ չէ, այլ ժամանակի ընթացքում փոփոխվող, ապա անհրաժեշտ է ժամանակին արձանագրել այդ փոփոխությունները և ամրագրել կանոնական համակարգում: Իսկ թե ինչպիսի՞ն պետք է լինի այդ առումով լեզվական հոտառությունը, ինչչա՞փ՝ լեզվազգացողության աստիճանը, խոսքի մշակույթի հիմնահարցերից են: Լեզվաբանական գրականության մեջ շատ են քննարկվել այն հարցերը, թե ի՞նչն է օրինակելի և ընդունելի լեզվում, ի՞նչը՝ անթույլատրելի և մերժելի, ո՞րն է խոսքի այն իդեալը, որին ձգտում ենք, ինչպե՞ս հասնել լեզվական կատարելության: Լեզվական նորմը խոսքի մշակույթի կենտրոնական, առանցքային հասկացությունն է. այն կապված է խոսքի մշակույթի հետ, և նորմի ուսուցումը մտնում է խոսքի մշակույթի ուսուցման մեջ: Լեզվական միավորների նորմավորման խնդիրը, լեզվական ճշտության հաստատումը, լեզվական որևէ տարբերակի ընտրությունը, բառերի կապակցումը, խոսքի ձևավորումը խոսքի մշակույթի կարևորագույն խնդիրներից են դառնում: Պարզ ասած՝ խոսքի կատարելություն տանող ճանապարհը սկիզբ է առնում գրական լեզվի նորմի իմացությունից:

Խոսքի մշակույթը (խոսքի կուլտուրան) բանավոր և գրավոր խոսքի (լեզվի) հնչյունաբանական, բառագիտական, քերականական, ոճագիտական նորմերին տիրապետելն է, դրանց նպատա-

կային, տեղին օգտագործելը: Խոսքարվեստում ևս կարևոր խնդիրներից է տեղինությունը կամ պատեհությունը: Լեզվական կանոնների իմացությունից հետո խոսողը պետք է իմանա, թե ո՛ր բառի, բառաձևի, բառակապակցության օգտագործումն է տվյալ պահին տեղին, ճիշտ, հաշվի առնի իրադրությունը, թե՛ իր, թե՛ ունկնդրի կամ խոսակցի արժանապատվությունն ու շահը, չլինի շաղակրատ, պարծենկոտ, անհեթեթ ու աներես, իր խոսքի արժեքն իմանա, կարճ ասած՝ ունենա լեզվական կուլտուրա: Լեզվական մշակույթի դաստիարակությունը լեզվապահպանման միջոցներից է. մանկապարտեզից սկսած թե՛ տանը, թե՛ դպրոցում, թե՛ փողոցում, թե՛ բուհում անհրաժեշտ է առօրյա կյանքում նկատած լեզվական սխալները տեղնուտեղն ուղղել՝ ճիշտ ու լավ գրել-խոսելով, բացատրել-հասկացնելով, կարդալ-հասկանալով, «լեզուն կծելով». լավ խոսել մարդը սովորում է ամբողջ կյանքում. « լեզվի կապերն արձակելուց» մինչև վերջին օրերը նա պետք է կատարելագործի իր խոսքի երկու տեսակն էլ և գրավորը, և՛ բանավորը: Խոսքի մշակույթի հիմնադիրներից մեկը՝ Օժեգովը, խոսքի կուլտուրայի հերթական հարցերին անդրադառնալով, գծագրում է նրա հիմնական սկզբունքները և առաջնային ու կարևոր համարում լեզվի նորմավորման խնդիրը: Նա գրում է. «Ի՞նչ է նշանակում ունենալ խոսքի բարձր կուլտուրա: Դա լեզվի միջոցների օգնությամբ մտքերը ճիշտ, ճշգրիտ և արտահայտիչ արտահայտելու ունակությունն է: Ճիշտ է այն խոսքը, որում պահպանվում են ժամանակակից գրական լեզվի նորմերը..., բայց խոսքի բարձր կուլտուրան չի սահմանափակվում միայն նորմերին հետևելով: Այն ոչ միայն մտքերն արտահայտելու համար ճիշտ միջոցներ գտնելու մեջ է, այլև ամենահարմարը, ամենաարտահայտիչը, ամենատեղինը և ոճաբանորեն պատճառաբանվածը գտնելու» (120. 60):

Կարելի է եզրակացնել, որ խոսքի բարձր կուլտուրային տիրապետելու համար երկու աստիճան պետք է անցնել՝ ժամանակակից գրական նորմի յուրացման, լեզվական կանոնների իմացության աստիճանը, որը և դառնում է անհատական խոսքային կուլտուրայի հիմքը, և գրական լեզվի յուրացման բարձրագույն աստիճանը, երբ նորմը յուրացված է, ապահովված է խոսքի ճշտությունը, և խոսողը, գրողը տիրապետում են գրական լեզվի հարստությանը՝ պարզ, հասկանալի, արտահայտիչ, հիմնավորված և համոզիչ խոսք ստեղծելու

համար: Խոսքի ցածր կուլտուրան ենթադրում է լեզվի աղավաղում, բառերի, բառաձևերի ոչ ճիշտ ընտրություն, դժվար ըմբռնելի, արտահայտչականությունից զուրկ բառերի, քերականական շեղումների օգտագործում, խոսքի անհասկանալիություն, անտեղիություն, անպատեհություն, այլ լեզուներից արված աննպատակ պատճենումներ. գրական խոսքի մակարդակը իջեցնում են ամեն կարգի ավելորդաբանությունները, անհարկի կրկնությունները, քերականական անհամապատասխանության սխալները:

Խոսքի բարձր կուլտուրան ենթադրում է լեզվական կատարելություն, լեզվական բարձր ճաշակ:

Խոսքի կուլտուրան պահանջում է նաև խոսքային վարքի, կուլտուրայի նորմերի պահպանում: Նշանակում է՝ լեզվական նորմը անուղղակիորեն առնչվում է խոսքային վարքի հետ: Լեզվաբանները սովորաբար խոսքային վարքի տակ հասկանում են որոշակի լեզվական միջոցների ընտրությունը այս կամ այն իրադրությանը համապատասխան, և ինչպես խոսքի կուլտուրան մարդու կուլտուրայի կողմերից մեկն է, այնպես էլ լեզվական վարքը մարդու վարքի անբաժանելի մասն է: Ահա թե ինչու շատ հաճախ, ըստ այն բանի, թե մարդն ինչպես է կառուցում իր խոսքը, ընտրում բառերը, բառաձևերը, ինչպես է հետևում լեզվական նորմով սահմանված օրինաչափությունների պահպանմանը, դատում են մարդու լեզվական կուլտուրայի, անգամ բարոյական, հոգեբանական, գործնական որակների մասին: Դեռևս անտիկ ժամանակներում մեծ ուշադրություն էին դարձնում լեզվական նորմի յուրացմանը, անհատական խոսքի կուլտուրային, խոսքային վարքին: Հայտնի է, որ հին Լակոնիի պատանիներին սովորեցնում էին մեծերի հարցերին պատասխանել շատ կարճ. ընդարձակ պատասխանը համարվում էր չհարգելու նշան: Կամ շատ հնդկական ցեղերում տղաների դաստիարակությամբ զբաղվում էին մայրերը, և եթե տղան լեզվական նորմը չէր յուրացրել, խոսքի կուլտուրա չուներ, խոսքային վարքը վատ էր, ապա դա ամոթ ու խայտառակություն էր ընտանիքի համար, հատկապես մոր համար: Ս. Ի. Օժեգովը խոսքային կոպիտ սխալները, գրական նորմից կատարված լուրջ խախտումները անվանում է «լակմուսային թղթիկներ». նրանց միջոցով կարելի է որոշել խոսողի խոսքային մակարդակը, և ընդհանրապես, նրա կուլտուրան: Մեր

օրերում «լակմուսային թղթիկներ» են ժամանակակից հայերենի գրական նորմից կատարված շեղումները, ինչպես օրինակ՝ **կանանչ** (փոխանակ՝ **կանաչ**), **փողոցի վրա** (փոխանակ՝ **փողոցում**), **բարձրացրա՛** (փոխանակ՝ **բարձրացրու՛**), **թռնել** (փոխանակ՝ **թռչել**), **այգումը** (փոխանակ՝ **այգում**), **ինձի // ինծի** (փոխանակ՝ **ինձ**), **հարուր** (փոխանակ՝ **հարյուր**), **որտև** (փոխանակ՝ **որովհետև**) և այլն... Որքան քիչ լինեն այդ թղթիկները, այնքան լավ: Նման «թղթիկների» դեմ էլ իրենց ձայնը պետք է բարձրացնեն լեզվաբաններն ու լեզվագետները, գրողները, գիտնական-մանկավարժները, ուսուցիչ-բանասերները... Թե՛ գրավոր և թե՛ բանավոր խոսքը պետք է վերլուծվեն մի կողմից գրական լեզվի նորմի, լեզվական միջոցների ճիշտ օգտագործման տեսանկյունից, մյուս կողմից՝ գրական խոսքի արտահայտչականության հաշվառումով, պարզ, հասկանալի ու համոզիչ լինելու առումով...

Խոսքի մշակույթը պահանջում է 3 բաղադրամաս՝

ա. նորմատիվություն կամ նորմավորվածություն

բ/ հաղորդակցական պահանջմունքի բավարարում

գ/ էթիկական (բարոյագիտական) նորմերի պահպանում:

Խոսքի նորմատիվության կամ նորմավորվածության մասին արդեն խոսվել է: Խոսքի մշակույթն ամենից առաջ ենթադրում է խոսքի ճշտություն և կանոնավորություն, այսինքն՝ ըստ այն բանի, թե լեզվակիրները ինչքանով են հետևում գրական նորմին, պահպանում, նաև պաշտպանում. այդ դեպքում խոսքը որակվում է որպես «օրինակելի», «իդեալական»: Ուրեմն՝ լեզվի նորմավորված լինելը, կանոնարկված լինելը խոսքի մշակույթի ամենաառանցքային կողմն է, նրա միջուկն է: Միևնույն ժամանակ խոսքի մշակույթը չի կարող սահմանափակվել «ճիշտ է - սխալ է»-ի, «ընդունելի է անընդունելի է»-ի հակադրությունների շրջանակում: «Խոսքի մշակույթ» հասկացությունը կապված է լեզվի օրինաչափական և գործառական առանձնահատկությունների հետ, ինչպես նաև խոսքային գործունեության հետ: Այն իր մեջ լեզվական համակարգի իրացման կարողականությունն է ներառում, ընտրելու հմտություն և լեզվական միջոցների գիտակցական օգտագործման վերաբերմունք ձևավորում: Այդ նպատակի համար լեզվական միջոցների ընտրութ-

յունը խոսքի կուլտուրայի հաղորդակցական կողմի հիմքն է: Հայտնի լեզվաբան, խոսքի մշակույթի վաստակաշատ գիտնական Վինոկուրը գրում է. «**Ցանկացած նպատակի համար իր համապատասխան միջոցը. այսպիսին պետք է լինի կուլտուրական հասարակության լեզվաբանական լոզունգը, նշանաբանը**»:

Հաղորդակցական նպատակահարմարությունը համարվում է խոսքի մշակույթի տեսության գլխավոր բաղադրամասերից մեկը, դրա համար էլ անհրաժեշտ է իմանալ խոսքի հիմնական հաղորդակցական որակները և խոսքային փոխհարաբերության մեջ հաշվի առնել դրանք:

Խոսքային մշակույթի հաղորդակցական գործառույթին համապատասխան՝ լեզուն կրողները պետք է կարողանան տիրապետել լեզվի գործառական տարատեսակությանը (գործառական ոճերին)՝ քերականական նորմերի հաշվառմամբ, նորմեր, որոնք, ըստ էության, ազդում են տվյալ պարագայում տվյալ ընտրության և խոսքային միջոցների օգտագործման վրա:

Բարոյական-բարոյագիտական նորմով առաջնորդվելը թելադրում է խոսքային վարվելաձևը, խոսքային վարվելակերպը՝ ողջունելու, խնդրանքի, հարցադրման, շնորհակալական, շնորհավորական խոսքերի, հատկանունների (առանձնապես անձնանունների) լրիվ կամ կրճատ ձևերի ընտրությունը, դիմելաձևերը: Խոսքային էթիկայի նորմերի գործածության ժամանակ մեծ ազդեցություն ունեն արտալեզվական գործոնները (հանգամանքները)՝ խոսքային գործընթացի մասնակիցների հասակը, նրանց սոցիալական վիճակը, նրանց հարաբերությունների բնույթը (պաշտոնական և ոչ պաշտոնական), ժամանակը, տեղը և այլն: Խոսքի մշակույթի էթիկական կողմը արգելք է դնում հայհոյախոսությանը (պղծալեզվությանը, աղտեղաբանությանը), դատապարտում է բարձրատոն խոսակցությունը: Այստեղ է, որ լեզվական վարքը կարգավորելու, էթիկական նորմերը պահպանելու առումով կարևորվում է լեզվական դաստիարակության հարցը: Չեխ լեզվաբան Ա. Էլդիչկան «լեզվական դաստիարակության» տակ հասկանում է «լեզվական նորմի իմացություն և դրա օգտագործումը բանավոր և գրավոր խոսքում», իսկ իտալացի լեզվաբան Բ. Միլորինին համատեղում է «լեզվական դաստիարա-

կությունը» «լեզվական ճաշակի» դաստիարակության հետ. հենց սա է, որ տանում-հասցնում է լեզվական բարձր մշակույթի: Նա գրում է, որ «լեզվական դաստիարակության» ընթացքում դպրոցում «ձևավորվում է որոշակի ճաշակ, ավանդվում են բառային, քերականական, ոճական որոշակի սովորույթներ, որոնք համեմվում են լավ ճաշակով և ընտրության կարողականությամբ» (120, стр. 60):

Շչերբան ևս այն կարծիքին է, որ պետք է դաստիարակվի հատուկ լեզվական, գրական զգացողություն՝ հատկապես մեր ժամանակներում:

Կոպիտ, գռեհիկ լեզուն աղքատացնում է մարդու զգացմունքները. ճիշտ է գրող Լ. Յասիլի այն համոզումը, որ «եթե վաղ թե ուշ մարդ չազատվի լեզվական կեղտից, վերջիվերջո դա կկեղտոտի նրա հոգին ևս»:

Խոսքի մշակույթի կարևոր խնդիրներից է նաև լեզվի զարգացման ուղղվածության, այսպես ասած, լեզվի ապագայի բացահայտումը. ժամանակակից հայոց լեզուն սոսկ զանազան քարացած կանոնների հավաքածու չէ, դոգմատիկ օրենքների ամբողջություն չէ այն մասին, թե ինչպես պետք է հնչեն ու գրվեն բառերը, հոլովվեն, խոնարհվեն, կապակցվեն, նախադասություններ կազմվեն, խոսք կառուցվի, այլ անընդհատ գործընթաց է, անընդհատ շարժում: Եվ պետք է հասկանալ այդ շարժման օրենքները... Երբ ասում ենք, թե **ի** հոլովումը ընդհանրանալու, տարածվելու միտում ունի, կամ երբ շեշտում ենք, որ լեզվի բառակազմության մեջ միտումը հարադրականությունից համադրականության անցումն է, երբ ընդգծում ենք, թե չհնչունափոխվելն է այսօրվա միտումը, ապա այս և նման դեպքերում փորձում ենք «լեզվի ապագա» ընկնել, նրա զարգացման բնականոն, օրինաչափական ուղղվածությունը հասկանալ, լեզվական նորմի հնարավոր փոփոխությունները կռահել:

ԼԵԶՎԻ ՆՈՐՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԼԵԶՎԱՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԼԵԶՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կենդանի լեզվամտածողությունն է թելադրում լեզվական կանոնը, ուրվագծում լեզվական նորմի սահմանները, որոնցից դուրս գտնվող լեզվածևը նախընտրելի չէ, սխալ է, ոչ հանձնարարելի, ոչ կանոնական: Լեզվական նորմից դուրս գտնվող լեզվածևը չի կարող ընդունելի լինել նույնիսկ այն դեպքում, եթե անգամ բխում է նրա համակարգից, և, ընդհակառակը, նույնիսկ լեզվի համակարգին անհարիր լեզվածևը ի վերջո ընդունելի կարող է դառնալ, եթե լեզվում նրա գոյությունն արդեն իսկ անժխտելի փաստ է դարձել համատարած կիրառության միջոցով: Ուրեմն՝ լեզվական նորմի սահմանները գծելիս, նորմատիվ կանոններ հռչակելիս անհրաժեշտ է դառնում հաշվի առնել համակարգային, արտահամակարգային, խոսքային բոլոր իրողությունները. կարևորը լեզվի մեջ միայն տեսականորեն հնարավոր լինելը չէ, այլև գործնականորեն առկա լինելը: Նման դեպքում տվյալ փաստի կայունացման պայմաններում հասկանալի է, թե ինչքա՛ն նրբանկատություն պետք է ցուցաբերել, ինչպիսի՛ լեզվազգացողություն պիտի ունենալ, ինչպե՛ս պետք է զգուշանալ սխալ, անհարկի նորամուծություններից, խուսափել ամեն կարգի աղճատումներից և հատկապես մայրենի լեզվին հակասող ձևերից:

Հայոց լեզուն պետականության հիմքն է և մշտական հոգածության կարիք ունի... Լեզվական քաղաքականությունը, հսկողությունն ու հոգատարությունը լեզվի նկատմամբ անհրաժեշտություն են, մանավանդ նրա զարգացման արդի շրջանում: Գրական լեզվի նորմին հետևելը, նրա զարգացման ու հարստացման հարցերում միասնական չափանիշով ղեկավարվելը առավել ևս անհրաժեշտություն են մեզնում՝ մի կողմից տասնյակ բարբառների, մյուս կողմից՝ տարբեր լեզուների՝ ժամանակակից գրական հայերենի վրա ունեցած մշտական ազդեցության պայմաններում: Միայն թե լեզվական քաղաքականությունը խստորեն գիտական պետք է լինի և բխի լեզվի հասարակական դերի ճիշտ գնահատումից, տվյալ լեզվի կա-

ռուցվածքային և պատմական առանձնահատկություններից: Հարկավոր է էլ ավելի մեծ ուշադրություն դարձնել լեզվաշինության, լեզվի նորմավորման, լեզվաքաղաքականության հարցերին, որովհետև «...Լեզվի մշակվածությունը, նրա բառապաշարի հարստությունն ու բազմազանությունը, ոճերի ու դարձվածքների ճոխությունն ու կենդանությունը, սրանց ազգային ինքնատիպությունը յուրատեսակ չափանիշ են տվյալ ժողովրդի հասարակական, գիտական ու մշակութային զարգացման: Հայոց լեզուն նույնպես, իբրև աշխարհի հնագիր լեզուներից մեկը, ենթակա է այս ընդհանուր օրինաչափություններին» (114, էջ 5-6):

Լեզուն զարգանում է, այն ինքնահսկման և մերժելու հատկություն ունի, ինքնակարգավորվող է, ինքնակատարելագործվող, լեզվական շատ իրողություններում՝ ապագայի «նպաստավորությանը հանձնված», ժամանակից կախված, բայց մշակի ճարտար ձեռքի կարիք ունի, որը պետք է ուղղի, շտկի, ճշտի, նաև ընտրի, մի խոսքով՝ լեզվի «հոգսը քաշի». մշակելու գործիքների՝ քերականության ու բառարանի, ուղեցույցի կարիք ունի... Այս առումով տեղին է Ա. Այտընյանի համեմատությունը. իսկապես, լեզուն «մատղատունկ» է, «զորն որ ինչպէս ժամանակը ծնաւ, նոյնպէս նոյն ժամանակը կ՛աճեցընէ, կը հասցընէ, ձեւն ու կերպարանքը կու տայ, ճոխ կամ աղքատ, հզօր կամ տկար, գեղեցիկ կամ տգեղ՝ բոլորովին ապագային նպաստաւորութեանն ապաստան: Այս լեզուի տունկը՝ որչափ որ պարարտ գետնի հիւթովն եւ զուարթ երկնից օդովն ու ցօղովը սնանելու բախտ ունենայ, միշտ մշակի մը ճարտար ձեռքին կարօտ է, որ դարմանէ, ուղղէ, քշտէ եւ ազնուացընէ. - խնամով եւ մտադրութեամբ շարադրուած գրութեանց յաճախութիւն, քերականութիւն ու բառարան՝ լեզուին մշակութեան բուն ընտիր գործիքներն են», - գրում է նա: (25, էջ 41):

Սակայն լեզվի զարգացման գործընթացին միջամտելը պետք է ունենա իր սահմանները, որոնք որոշվում են ոչ միայն գիտական ու գործնական, այլև բարոյական չափանիշներով: Այս դեպքում հասարակական (նաև անհատական) միջամտությունը պետք է լինի գիտակցված, կանխամտածված, բխի լեզվի զարգացման օրինաչափություններից և չհակասի նրա զարգացման միտումներին. ար-

դարացված և թույլատրելի է այնպիսի միջամտությունը, որը **գիտականորեն հիմնավորված է, գործնականորեն նպատակահարմար է և բարոյապես արդարացված:**

Լեզուն ինքը սրբագործում է իրեն, և այն, ինչ այսօր հաստատուն և անձեռնմխելի է թվում, վաղը կարող է երերալ կամ դուրս ընկնել լեզվից:

Առհասարակ լեզուների պատմության մեջ լեզվի գրավոր տարբերակի նորմավորման մասին է խոսվում. գրական լեզվի բանավոր տարբերակի նորմավորման հարցերը, նրա՝ առօրյա-խոսակցական լեզվագոյաձևից եղած տարբերությունների վերհանումը մերօրյա լեզվաբանության խնդիրներից է: Եթե լեզվի պատմությունը հավաստում է, որ բանավոր խոսքը նախորդել է գրավոր խոսքին, ապա գրական լեզվի նորմի պատմության մեջ արձանագրվում է, որ, որպես կանոն, գրավոր լեզուն ավելի վաղ է կանոնարկվել, նորմավորվել, քան բանավորը: Վերջինիս կանոնակարգումը, նորմավորումը մեր օրերի հայերենի առանձնահատկությունն է: Ժամանակակից գրական լեզուների մեծ մասի լեզվաքաղաքականության գերխնդիր է դառնում գրական լեզվի բանավոր տարբերակի նորմը ձգել-հասցնել գրական գրավոր լեզվի նորմին: Այս գործընթացը կրում է սոցիալ-քաղաքական պայմանների ուղղակի ազդեցությունը, նաև լեզվակիրների կուլտուրական մակարդակով է պայմանավորված: Չմոռանանք նշել, որ լեզվաբաններից մի քանիսն այն կարծիքին են, թե բանավոր խոսքն ընդհանրապես հնարավոր չէ նորմավորել: Անժխտելի է, որ գրական խոսակցական տարբերակը շատ ավելի է ենթակա փոփոխության, նրա նորմի սահմաններն ավելի շարժուն են, բայց լեզվի զարգացման ընթացքն այսօր պահանջում է ոչ միայն գրական գրավոր լեզվի նորմը յուրացնել, այլև կանոնավորել բանավոր խոսքը, հետևել խոսքի ընթացքին:

Գրավոր խոսքի և բանավոր խոսքի միջև եղած հեռավորությունը կարճելու անհրաժեշտությունը նաև հայ լեզվաբանության կնճռոտ հարցերից մեկն է, լեզվակիր հանրության մտահոգիչ խնդիրներից մեկը՝ քաղաքակիրթ աշխարհում քաղաքակիրթ երևալու ձգտմամբ պայմանավորված: Անհրաժեշտ է, որ բանավոր խոսքը բարձրանա գրավոր խոսքի մակարդակի, իսկ վերջինս էլ թարմանա կենդանի խոսքի շնչով: «Առակ է՝ թէ խօսքը կը թռչի, գիրը կը մնայ:

Գիրը, որ ժամանակակից բացակայից միանգամայն եւ ապագայ հեռաւորաց ուղղուած մնայուն դրոշմ է, լեզուին անդադար կերպարանափոխութեան առջեւը բաւական ամուր թումբ մըն է», - գրում է Ա. Այտընյանը (25, էջ 35): Իսկապես, գրավոր խոսքը, որ մնայուն է իր օրինաչափություններով հանդերձ, բանավոր տարբերակի անընդհատ փոփոխությունը կասեցնող «ամուր թումբ մըն» է. հակառակ դեպքում բանավոր խոսքի անընդհատ փոփոխությունը կփոփոխի գրավոր խոսքը, վերջինիս զարգացումը քաոսային ընթացք կստանա. այս ճանապարհին առավել կարևորվում են լեզվական նորմի իմացությունը, նրանով առաջնորդվելու անհրաժեշտությունը և լեզվաշինական աշխատանքները, լեզվական ճիշտ քաղաքականությունը: Խոսակցական լեզվից անհրաժեշտ է ընտրել լեզվի ինքնազարգացմանը նպաստող նոր միտումները, քննել ու քննարկել նրանց անհրաժեշտությունը և նոր միայն նոր կանոններ մշակել ու հաստատել:

Ռուսաց լեզուն աչքի է ընկնում նախանձելի անկաշկանդությամբ ու կանոնավորությամբ, սրտաբուխ է ու անբռնազբոսիկ. պատճառն այն է, որ գրական ռուսերենը ավելի մոտ է խոսակցական լեզվին, քան բոլոր եվրոպական լեզուները: Այսօրվա հայերենի նորմավորման նպատակը պետք է լինի գրական լեզվի գրավոր և բանավոր գոյածևերի միջև եղած հեռավորության կրճատումը: Իսկապես, եթե գրական լեզուն չի հետևում խոսակցական լեզվի զարգացման ընթացքին, ապա կտրվում է նրանից և կորցնելով իր խոսակցական գործառույթը՝ մեռնում է: Գրական լեզուն հետևում է խոսակցական լեզվի զարգացման ընթացքին, աստիճանաբար մոտենում է նրան, իր հերթին ուղղություն տալիս նրա այդ ընթացքին, որի հետևանքով էլ բարձրանում է՝ շնորհիվ զարգացման այդ սերտ կապի և փոխազդեցության:

20-րդ դարավերջի հայ լեզվաշինության խնդիրներից էր նաև գրական լեզվի արհեստականության ու գրքայնության հաղթահարման խնդիրը. լեզուն նորմավորելիս այս հանգամանքը ևս չպետք է աչքաթող անել: Այսօր էլ լեզուն կենդանի խոսքով շնչավորելու անհրաժեշտություն կա. ծայրահեղ մաքրամոլությունն ու անզուսպ կաղապարայնությունը լեզվի զարգացումը կասեցնելու հատկություն ունեն...

Ըստ Ռ. Իշխանյանի՝ մերօրյա հայերենի համար առավելություն է, որ ժամանակի լեզվաբանները, քերականները, գրողներն ու բանաստեղծներն այլևս կաշկանդիչ շրջանակներ չէ, որ առաջարկում են, ոչ էլ «լեզվաբանական դատաստանագիրքն» են բացում ստեղծագործողի, խոսողի այս կամ այն լեզվական «զանցանքի» մեղադրական հոդվածը գտնելու համար, այլ, իրոք, լայն հայացքով են գնահատում ստեղծագործական լեզուն: Եթե ժողովրդախոսակցական լեզվածևերի օգտագործման հարցում նախկին լեզվաբանները խիստ, մերժողական դիրքորոշում ունեին, շատ էին գրողի, բանաստեղծի լեզուն ըստ լեզվաքերականական «դատաստանագրքի» կշռող և չափող լեզվաբանները» (54, էջ 30), ապա այսօր լեզվի նկատմամբ վերաբերմունքը փոխվել է:

Զարգացած երկրներում դեռևս հին ժամանակներից առանձնահատուկ ուշադրություն է ցուցաբերվել լեզվի նկատմամբ. լեզվի ուսուցման և կատարելագործման նպատակով են բացվել առաջին ակադեմիաները (Ֆրանսիա, Իսպանիա...). առաջին ակադեմիական կոչումները տրվել են լեզվաբաններին դեռևս 16-րդ դարում (123, էջ 24-25), գրական լեզվի ուսուցման նպատակով են բացվել առաջին դպրոցները: Դեռևս 1783 թ. ռուսաց լեզվի ուսուցման նպատակով Սանկտ Պետերբուրգում բացված Ռուսական ակադեմիան հրատարակել է վեցհատորյա բառարան (1789-1794 թթ.), որն ընդգրկել է շուրջ 43 000 բառային միավոր:

Հանուն լեզվի մաքրության պայքարում են շատ երկրներում: Տարբեր երկրներում տարբեր հաստատություններ իրենց վրա են վերցրել լեզվական հարցերի քննությունն ու վճիռը՝ լեզվի նորմավորումը: Լեզվական հանձնախմբերը, լեզվի ինստիտուտները, ակադեմիաները պետք է օգնեն լեզվին, որ նա իր ներքին օրենքներով զարգանա: Հայտնի է, որ ֆրանսիական ակադեմիան բավական ուշադիր հետևում է ֆրանսերենի անաղարտությանը և սահմանել է դրամական տուգանք՝ օտար բառերի գործածության համար: «Իզվեստիա» թերթի 1976թ մարտի 13-ի մի հաղորդման համաձայն՝ Ֆրանսիայում հայտարարություններում, պայմանագրերում, պաշտոնական տեքստերի մեջ օտար բառեր գործածողը պատժվում է 80-160 ֆրանկ տուգանքով, որը կարող է հասցվել մինչև 5000

ֆրանկի, եթե նման սխալները 3 տարվա ընթացքում կրկնվեն 2 անգամ: Այդ օրենքը Ֆրանսիայում ընդունվել է 1976 թ. և կոչվում է «Օրենք ֆրանսերենի մաքրության և պահպանման մասին»: Նման օրենք առավել ևս հայերին է պետք. փոքր ազգ.ենք, բնականաբար ավելի բծախնդիր ու զգայուն պետք է լինենք մեր լեզվի պահպանման հարցում: Կա ակադեմիա, լեզվի ինստիտուտ, որոնք քննում են հատկապես բառերի ուղղագրությունը, քերականությամբ կամ բառարանով որոշում ուղիղն ու սխալը: Այդ որոշումները դպրոցի միջոցով մտնում են կյանք և դառնում ընդհանուրի սեփականությունը: Խորհրդային տարիներին լեզվաշինության հարցը բարձրացել էր պետական մակարդակի: Այդ տարիներին էր, որ Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր ստեղծվեց տերմինաբանական կոմիտեն՝ լեզվաշինական և տերմինաբանական աշխատանքները կանոնավորելու, ժամանակակից հայերենի հարստացմանը նպաստելու նպատակով: Նույն տերմինաբանական կոմիտեն 1955 թ. հուլիսին հաստատել է (նախագիծը կազմել է Գ. Սևակը) հայոց լեզվի, նաև քերականության նորմավորման ընդհանուր սկզբունքների նախագիծը՝ կանխելու համար լեզվի զարգացման ընթացքի հնարավոր շեղումները, օժանդակելու գրական լեզվի անարգել զարգացմանը, ըստ որում միայն քերականական համակարգը կանոնակարգելու համար որոշվել է՝

1. Նկատի ունենալով, որ լեզվի քերականությունը զարգանում է իր ներքին օրենքներով՝ անհրաժեշտ համարել, առանց խախտելու այդ օրենքները, կանոնարկման ենթարկել հայերենի քերականությունը հետևյալ սկզբունքներով՝

ա/ Հայերենի քերականության մեջ գոյություն ունեցող զուգահեռ ձևերից ընտրել այն ձևերը, որոնք բացարձակ գերակշռություն ունեն գրական հայերենում կամ որոնք ներկայացնում են առաջադեմ միտում և նպաստում են քերականական ձևերի միօրինակությանն ու պարզեցմանը:

բ/ Բացի ոճական առանձին կիրառություններից, բացառել բարբառային ու գրաբարյան այնպիսի ձևերը, որոնց զուգահեռները՝ ընդունված ու համաժողովրդականները, գոյություն ունեն ժամանակակից հայերենում:

գ/ Թույլ չտալ այնպիսի ձևերի գործածությունը, որոնք խորթ են հայերենի քերականական կառուցվածքին, անհարիր են համաժողովրդական լեզվական մտածողությանը, շփոթում և խեղաթյուրում են հայոց լեզվի ներքին օրենքները և խանգարում նրա զարգացմանը...» (Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու (115, էջ էջ 22):

Տերմինաբանական կոմիտեն (1996 թ.-ից՝ ՀՀ կառավարության առընթեր լեզվի պետական տեսչության Հայերենի բարձրագույն խորհուրդ) այսօր էլ նույն սկզբունքներով է առաջնորդվում՝ պահպանել հայոց լեզվի անաղարտությունը, պայքարել չհիմնավորված նորամուծությունների դեմ, թույլ չտալ հայերենը խճողել բարբառային դարձվածքներով, ժողովրդական բառերով, նպաստել գրական լեզվի զարգացմանը, ըստ անհրաժեշտության կազմել նոր տերմիններ (եզրույթներ) ու բառեր, բառակապակցություններ և հապավումներ, նպաստել հայերենի քերականության նորմավորմանը, նրանում եղած զուգահեռ ձևերից ընտրել այնպիսիները, որոնք բացարձակ գերակշռություն ունեն գրական հայերենում և նպաստում են քերականական ձևերի միօրինակությանն ու պարզեցմանը, ըստ որում թույլ չտալ այնպիսի ձևերի գործածությունը, որոնք խորթ են գրական հայերենի քերականական կառուցվածքին, անհարիր են համաժողովրդական մտածողությանը, շփոթում և խեղաթյուրում են հայոց լեզվի ներքին օրինաչափությունները, խանգարում նրա զարգացմանը:

Եղե՛լ են հատուկ գրվածքներ՝ սխալները մատնանշելու և ուղղելու համար:

Կա՛ն հատուկ գրվածքներ՝ ճիշտ խոսելու, ճիշտ գրելու համար (Պ. Սևակ, Լ. Հախվերդյան, Մայա Ավագյան, Ն. Պառնասյան, Թ. Ղարագյուլյան, Պ. Բեդիրյան...), և դրանք նրա՛նց համար են, «ովքեր իրենց քաղաքակիրթ են համարում և քաղաքակիրթ ժողովրդի զավակ, ըստ այդմ էլ նախանձախնդիր են իրենց հայերենը շտկելու, հղկելու, ինչու՞ չէ, նաև մշակելու-զարգացնելու, հարստացնելու» (41, էջ 5): Հայոց լեզվի կանոնարկման, անարգել զարգացման նպատակով է կատարվել ՀՀ ԿԳ նախարարության լեզվի պետական տեսչության հայերենի բարձրագույն խորհրդի

որոշումների և դրանց վերլուծությունների ու մեկնաբանությունների ամփոփ ժողովածուի՝ «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատուի» հրապարակումը՝ «ի նպաստ հայոց լեզվի զարգացման». նրանում մեկնաբանվում են հայոց լեզվի կանոնարկմանը, լեզվաշինությանը, տերմինաշինությանն ու տառադարձությանը, ուղղագրությանն ու ուղղախոսությանը, կետադրությանը վերաբերող հարցեր:

Կգրվե՛ն հատուկ ուղեցույցներ, տեղեկատուներ, քերականություններ, բառարաններ՝ ճիշտն ու սխալը իրարից զատելու համար, զուգաձևություններում, զուգիմաստություններում ճշտորեն կողմնորոշվելու համար, լեզուն նորմավորելու, այդ նորմով առաջնորդվելու համար...

Նման գրքերը ստեղծվել են, ստեղծվում են ու ստեղծվելու են կյանքի թելադրանքով, նրա ստիպմամբ, որովհետև անկարելի է անտարբեր անցնել աղավաղումների ու շեղումների, լեզվական «վթարների» ու խաթարումների կողքով: Լեզվաբանները մտահոգված են մեր գործածած լեզվի աղքատությամբ, «հայերենի բառամթերքից կեսբուռ օգտվելու կամավոր մուրացիկությամբ», լեզվական կուլտուրայի ցածր մակարդակով, բայց չէ՞ որ «...Մեր լեզուն միայն մեզ չի պատկանում, այլև աշխարհին. նա միայն մեր սրբությունը չէ, այլև մասունքը հանուր մարդկության... Բայց այդ լեզվի խնամքը, նրա անաղարտությունը, նրա **պահպանությունն ու պաշտպանությունը** դրված է մեզ վրա: Օտար համալսարաններն ու ակադեմիաները ի վիճակի չեն անելու այն, ինչ պարտավոր է անել հայկական համալսարանն ու հայկական ակադեմիան՝ նաև այդ համալսարանների ու ակադեմիաների բարոյական պարտադրանքով: Եվ պարտավոր է անել Հայաստան աշխարհը՝ համայն աշխարհի հոգեկան պարտադրանքով» (112, էջ 155):

Գ. Մագիստրոսն այն կարծիքն է հայտնում, որ մարդիկ, ի տարբերություն մյուս արարածների, թեպետև օժտված են բանականությամբ, գիտակցությամբ, բայց ոմանք խոսում են գրական լեզուն աղավաղելով, ոմանք էլ՝ նրան բարբառային բառաձևեր խառնելով: Երկու դեպքում էլ ինքը՝ քերականը, պետք է հոգ տանի լեզվի մաքրության, անաղարտության մասին: Նա պարտավոր է լեզուն ուղղել, կոկել, փայլեցնել ճիշտ այնպես, ինչպես հյուսնը, փայտը մաքրելով

ոստերից, փուտ ու ծուռ մասերից, այն հարթում է ու գեղեցիկ տեսքի բերում: «Ուրեմն խորհող ու խօսող մարդկութիւնն է իւր լեզուին ձեւն ու կերպը տուողը: Առատ գաղափարաց տէր ժողովուրդ մը՝ առատ ու ճոխ լեզուի ալ տէր է, գեղեցիկ մտաց տէր ըլլողը՝ գեղեցիկ լեզուի, եւ այլն.., ուստի եւ պատմական դիրքը կամ քաղաքական անցքերն ալ, որ որոշ բնաւորութիւն մը կու տան ժողովրդոց, առանց մեծ ազդեցութեան չեն մնար լեզուին կերպաւորութեանը և փոփոխութեանցը վրայ: Հին աշխարհի մէջ Ելլադայի նուրբ ու փափուկ ատտիկերէնը ե: Լատիոնի հզօր եւ պերճ լատիներէնը՝ Յունաց գեղեցկասէր մտացն ու Հռոմայեցւոց յաղթասէր բնավորութեանը ան ճշգրիտ հայելիներն էին» (25, էջ 33-34): Հարուստ ու ճոխ հայերենն էլ հայի բնավորության հայելին է, ուրեմն այնպե՛ս գրենք ու այնպե՛ս խոսենք, որ չսարսափենք հայելուց անդրադարձվող կերպարանքին նայելիս...

Ո՞րն է լեզվի մաքրությունը որոշող միջոցը, ի՞նչ ձև ու կերպ տալ լեզվին...

Լեզվի մաքրության միջոցի որոնման ամենակարճ ճանապարհը դասական հեղինակների լեզվին դիմելն է, բայց դասականները միշտ հին են, ու անտեղի բան է «հնով նորը կարկատել»: Ավելացնենք նաև, որ գրողների լեզվում էլ շատ են շեղումները. ժամանակակից բանաստեղծները հաճախ են հանգի ու չափի հետևից ընկնում և լեզվական նորմը խախտում, արդարանալով, թե բանաստեղծը նաև բառաստեղծ է, «բառաձևստեղծ» է, ինչու՞ փակել նորի ճամփան...

Զգալի է հայկական հեռուստատեսության և ռադիոյի ծառայությունը լեզվի նորմավորման, խոսքի մշակույթի բարելավման գործում, բայց ներկա օրերում ավելի շատ աղավաղված հայերենն է հնչում կապույտ էկրանից, և ականջ են ծակում լեզվական շեղումները...

Լեզվի մաքրությանը նպաստող բացարձակ միջոց չէ նաև լրագրությունը (մամուլը), որ հաճախ խմբագրված է լինում այնպիսի անձանց կողմից, ովքեր ավելի շատ հասարակական գործիչներ են. մեր թերթերում, ամսագրերում, թարգմանական գրականության մեջ շատ են մեր լեզուն աղճատող օտարաբանությունները, այնպի-

սի աղավաղումներն ու սխալները, որ քիչ է մնում օրինակելիության ուժ ստանան...

Ժողովրդական լեզուն, հասարակության լեզուն ևս հեռու է «մաքուր» լեզվից: Այստեղ կարելի է ձայնը տալ մեծամասնությանը, բայց մեծամասնություն չի նշանակում նաև արդարություն: Ամենից ավելի շատ գործածվող ձևը կարող է սխալ լինել: Այստեղ էլ սովորությունն է արդարացնում գործածական հաճախականությունը. նոր բառը, նոր բառաձևը երկու, երեք, չորս անգամ գործածվելով սովորույթի ուժ է ձեռք բերում, իսկ «Ամենավատ բռնակալը եթե հաստատվեց իր գահի վրա, օրինական է դառնում»: Երիտասարդներից շատերի լեզուն ծայրաստիճան աղքատ է, անհարդար, անփույթ, անխնամ. մեծ մասամբ խոսում են այնպես, կարծես վրեժ են լուծում լեզվից, գրում են՝ բառերը տանջամահ անելով. կեսբուռ են օգտվում բառապաշարից, քերականությունն արհամարհում են, լավագույն դեպքում անտարբեր են դառնում իրենց լեզվի նկատմամբ՝ չհասկանալով, որ իրենց հոգու աղքատությունն են ցուցադրում, մտքի կարճությունը, մտածողության պարզունակությունը. կարելի է վստահորեն ասել, որ հասարակության այն մասը, որը խոսում է լավ լեզվով, մաքուր, հարուստ լեզվով, ավելի լայնախոհ է, քան այն մասը, որ խոսում է վատ լեզվով և աղքատիկ լեզվով:

Հայերենի մաքրության համար պայքարը հեշտ չէ, ուղղակի պետք է համբերատար ու անզիջում լինել:

Ըստ Եսպերսենի (Եսպերսընի)՝ լեզվի մաքրությունը որոշելու միակ միջոցը լեզվական նորմն է: Մայրենի լեզվի քերականությունն ուսանելը, քերականական նորմին տիրապետելը «պարապ վախտի խաղալիք չէ»: Որքան էլ անհետաքրքիր թվա այդ առարկան, անհրաժեշտ ու պարտադիր է գրական լեզվով ճիշտ խոսելու և գրելու համար: Միանգամայն իրավացի է Մ. Ավագյանը, երբ գրում է. «Պետք է հասնել այն բանին, որ գոնե մեր գրագետները, իմանալով հանդերձ՝ լիովին կիրառեն լեզվի «կանոնադրությունը»... Լեզվական սխալները բացառող կանոններն այնպես հաստատ են տեղաբաշխված լեզվի համակարգի՝ իրենց հատկացված բաժիններում, որ խղճի դեմ է այդ կուռ համակարգի այսպիսի խառնշտորումը» (34, էջ 72-73):

Լեզվի նկատմամբ յուրաքանչյուր մարդու վերաբերմունքով կարելի է միանգամայն ճշգրիտ դատել ոչ միայն նրա կուլտուրական

մակարդակի մասին, այլև քաղաքացիական արժեքի մասին: Լեզվի գործող նորմերին համապատասխան անսխալ գրելն ու արտասանելը մարդու գրագիտության առաջին և տարրական չափանիշներն են: Լեզվական յուրաքանչյուր կանոնի օգտակարությունը նրա հետևողական և անսխալ կիրառման մեջ է: Ողջ գիտաուսումնական աշխատանքի վերջնական նպատակը գրական լեզվի օրինաչափությունների պահպանումն է և կիրառումը գործնականում, կենդանի խոսքի մեջ. հայերենը մի հետաքրքրական հատկություն ունի՝ «ինքնավերահսկում», բայց յուրաքանչյուր լեզվակիր անձ ինքն էլ պիտի ունենա ինքնահսկում՝ կարողանա ջոկել ճիշտն ու սխալը, կարողանա կենդանի գործընթացում կիրառել իր քերականական գիտելիքները, կարողանա ժամանակին նկատել ի՛ր խոսքի, ուրիշի՛ խոսքի աղավաղումն ու շեղումը, որպեսզի ապահովի սեփական խոսքի գրական որակն ու մակարդակը, ցուցաբերի խոսքի բարձր կուլտուրա, որը և նրա կուլտուրայի անբաժան մասն է: Ա. Չեխովը ճիշտ է նկատել՝ «նորօրյա մարդու համար վատ խոսելը, ըստ էության, նույնքան անվայելուչ բան է, ինչպես գրել -կարդալ չիմանալը»: Նորագույն մարդու համար վատ խոսելն աններելի է, նորագույն հայի համար՝ առավել ևս: 21-րդ դարի յուրաքանչյուր քաղաքացի պետք է կարողանա կատարել լեզվի պահանջը՝ խնամքով ընտրել այն լավագույնը, որ կա լեզվի մեջ՝ հստակը, ճիշտը, գեղեցիկը, հնչեղը, դյուրահունչը. 21-րդ դարամուտին ցանկացած պետություն պիտի կարողանա ճիշտ լեզվաքաղաքականությամբ իր լեզուն արժեքավորել:

Իսկապես՝ յուրաքանչյուր հայ պարտք ունի իր լեզվի հանդեպ. լեզուն ազգի հոգին է, լեզվի «հոգին» էլ ազգային լեզվամտածողությունն է: Ինչքան բարձր է ազգային ինքնագիտակցությունը, ինչքան բարձր է ազգային լեզվամտածողությունը, այնքան տվյալ ազգը մեծ նշանակություն է տալիս լեզվի անաղարտության, մաքրության պահպանմանը, նրա զարգացման ճիշտ ուղիներ փնտրելուն և անհրաժեշտ պայմաններ ստեղծելուն: Վերակառուցման ժամանակաշրջանը նաև լեզվի նկատմամբ անտարբերությամբ հատկանշվեց: Մեր օրերում կարծես նորից շունչ ենք առնում՝ հայ լեզուն, հայ խոսքը անաղարտ պահելու: Անգամ «Մայրենիի օր» է հռչակվել: Բայց մտահոգվելու պատճառ կա. օրինակ՝ դեռևս 50-ական թվականներին Հ. Բար-

սեղյանը գրում է «Մեր թվարկած վերջին բոլոր ձևերը, որոնք ավելի ժողովրդական, խոսակցական ձևեր են, քերականների կողմից ճանաչվում են որպես անկանոն կազմություններ, բայց նրանցից շատերը (ինչպես՝ մի՛ գրի, մի՛ խոսի, մի՛ կարդացեք, մի՛ խաղացեք և այլն) ավելի գործածական են, քան կանոնավոր ճանաչված ձևերը և արդեն իրենց գործածությամբ աստիճանաբար նվաճում են կանոնավոր ձևեր համարվելու իրավունքը» (37, էջ 319): Մերօրյա լեզվաբանական ուսումնասիրություններում ևս նշվում են այդ ձևերի կանոնական մակարդակին բարձրանալու-հասնելու մասին, բայց արվու՞մ է ինչ-որ բան դրանք օրինականացնելու ճանապարհին, լեզվական նորմը փոփոխելու և լեզվի զարգացում արձանագրելու համար, դեռևս՝ ոչ: Իսկ նման լեզվաիրողություններ շատ կան, դեռ շարունակում ենք «այսպես էլ կարելի է, այդպես էլ» սկզբունքով առաջ շարժվել:

Ինչպե՞ս ընտրել զուգաձևություններից նախընտրելին, ճիշտը, այս առումով ինչպիսի՞ն պետք է լինի լեզվազգացողության աստիճանը. ո՞րն է օրինակելին և ընդունելին, ո՞րը՝ սխալ ու մերժելի: Ո՞րն է նորմով սահմանվածի և արդեն նորմավորվողի սահմանագիծը: Սա հասկանալու համար անհրաժեշտ է գիտակցել, որ լեզուն քարացած կանոնների ամբողջություն չէ, կանոններ, որոնք այն մասին են, թե ինչպես պետք է հնչեն բառերը, ձևափոխվեն, կապակցվեն և այլն, որ լեզվական նորմը փշալարված սահման չէ: Լեզուն գործընթաց է, անընդհատ շարժում, ուղղակի պետք է հասկանալ այդ շարժման օրենքները, որպեսզի կարողանալ կանխորոշել նրա ապագան:

Ինչքան եռանդուն լինի միջամտությունը նշված զուգաձևությունների լուծման հարցում, որքան շուտ հասնի լեզվաբան-մասնագետների ձայնը օրենքի, պետության ականջին, այնքան սակավ կլինեն անհարկի շեղումները. չէ՞ որ լեզվաբանները լեզվի զարգացման նոր օրենքներ չեն հորինում, ուղղակի նրանք կարողանում են կռահել լեզվի ինքնազարգացման ներքին օրենքները, ինչ-որ չափով ապագա ընկնելու հատկություն ունեն: Անիշխանությունը լեզվի մեջ կարող է հանգեցնել կատարյալ քաոսի, մինչդեռ լեզվական նորմը, նրանով սահմանված կանոններն ու օրինաչափությունները կասեց-

նում են ապօրինածին այն բոլոր ձևերի ծավալումը, որոնք չեն համապատասխանում տվյալ լեզվում ընդունված կաղապարներին, որոնք չեն բխում տվյալ լեզվի զարգացման ներքին օրենքներից: Նորմատիվ քերականություններում, հատկապես դպրոցական դասագրքերից հնացած կանոնները պետք է հանել, փոխարինել ընդհանուր ճանաչում գտած, բայց և ձևականորեն դեռևս նորմի մակարդակին չբարձրացած ձևերով: Այստեղ է, որ անժխտելի է դառնում վիճակագրական տվյալների դերը լեզվական կանոնի ճշգրտման հարցում, հատկապես զուգաձևությունների ընտրության հարցում. թեև դրանց դերը գերագնահատել չի կարելի: Կարելի է դիմել հարցաթերթիկների լրացման, հարցման մեթոդին: Լեզվի զարգացման հարցը, նրա նորմավորման, կանոնարկման հարցը համաժողովրդական բնույթ պետք է ունենա. յուրաքանչյուր քաղաքացի իր լեզվի օրենքի կիրառողն է ու իր լեզվի օրենքի փոփոխողը պետք է լինի, մի խոսքով՝ իր լեզվի տերը պետք է դառնա:

Հայ ժողովրդի՝ իր լեզվի նկատմամբ ունեցած վերաբերմունքով է որոշվում նրա զարգացվածության աստիճանը. նրա յուրաքանչյուր անհատը լեզվական ճիշտ դաստիարակություն պետք է ստանա, լեզվաօրինապահ լինի ու խոսքային բարձր կուլտուրա ունենա: «Հայագետ» հայը, ուղղախոս հայը, օրինապահ հայն է իր լեզվին ձև ու կերպարանք տվողը, իր լեզվի «ապրելու» իրավունքը պաշտպանողը: Հարկ է՝ մտածենք մեծ լեզվաբանի նման, «թէ մէկու մ՛ալ անիրաւած չենք ըլլար, եթե պահանջենք որ լեզուին օրէնքները ծանօթանան, անհայագէտն հայագէտ ըլլայ, եւ հայախօսը միանգամայն ուղղախօս, կանոնն ըլլա տիրող, եւ անտէրնչութեան վիճակի մը մեջ աղաւաղութիւններն չզօրանան օրէ օր» (25, էջ 329):

Մի սխալը, մի շեղումը չեն կարող աղարտել մայրենի լեզուն, բայց կրկնվող, հաճախացող, շարունակաբար գործածվող նման սխալների ամբողջությունը կարող է կասեցնել լեզվի զարգացումը... Լեզվաշինական աշխատանքների նպատակը եղած ու սաղմնավորվող սխալների, շեղումների քննությունը պետք է դառնա, լեզվի զարգացման ընթացքին խթանող, այլև խոչընդոտող լեզվահիրողությունների հստակ զանազանումը պիտի լինի. այդ ժամանակի համար կարևորն ու անկարևորը իրարից հստակորեն զանազանելը

պիտի լինի. լեզվաշինության խնդիրը լեզվի զարգացմանը վտանգ սպառնացող ձևերի մերժումը պիտի լինի:

Նկատելի է, որ վերջին տասնամյակներին հայերենի քերականական կառուցվածքում գրական լեզվի նորմը ավելի է կայունացել, միօրինակությունները և շեղումները համեմատաբար նվազել են, տեղի են ունենում քերականական իմաստների և քերականական ձևերի ճշգրտումներ: Սա, իհարկե, ամենից առաջ լեզվի բնականոն զարգացման արդյունքն է: Պետք է նշել, որ նորմի կայունացմանը նպաստել են քերականական դասագրքերը, քերականության ուսուցումը, գրականության տարածումը: Լեզուն, որ ինքնանպատակ համակարգ չէ, կարիք ունի կարգավորման:

Լեզվաշինական ճիշտ քաղաքականությունը շատ կարևոր նախապայման է լեզվի մաքրության, նրա համակարգի ազգային կերպարանքի պահպանման համար: Ռ. Իշխանյանը գրում է, որ «Մենք ունենք բառային համանիշների բառարան: Թվում է, վատ չի լինի, եթե ուրիշ ազգերի նման ունենայինք նաև քերականական և բառաձևային համանիշների (զուգահեռ ձևերի) ուղեցույց, որպեսզի յուրաքանչյուր կասկածող իր համար պարզի, որ օրինակ, հավասարապես ճիշտ ու գրական ձևեր են՝ **հիացման - հիացումի, արյան - արյունի, խնդությամբ - խնդությունով, մի՛ կարդացեք - մի՛ կարդաք, միք կարդա, պատրաստվեց գնալ – պատրաստվեց գնալու, մեկին հինգ է պակաս - մեկից հինգ է պակաս, կառչեց հորը - կառչեց հորից, կպավ պատին - կպավ պատից, խուսափեց գրելուց – խուսափեց գրել, տիրեց երկրին – տիրեց երկիրը, ուրախ եմ քո գալուն - ... գալու համար** և այլն» (54, էջ 66-67):

Նման բառարան –ուղեցույց (ներ) չունենք, բայց նկատելի է, որ մեր օրերում զուգահեռ ձևերի, լեզվի տարբերակայնության հարցերը շատերին են մտահոգում:

Մի առիթով իր բանավոր խոսքում Հ. Բարսեղյանը շեշտել է. «Ամենամեղքը գրական լեզուն է. մենք պիտի փրկենք այն բարբառներից՝ բարբառները փրկելով հանդերձ»: Լեզվի «փրկությունը», լեզվի անաղարտության և մաքրության պահպանումը լեզվակիր հանրության գործն է. յուրաքանչյուր հայ պարտավոր է լեզվական կանոնների հարցում օրինապահ լինել, այլապես ամենակատարյալ օրենքն անգամ չի կարող գործնական արժեք ունենալ:

Լեզվի մաքրության, իմաստային ճշտության համար պայքարը պայքար է հանուն կուլտուրայի զենքի: Որքան սուր է այդ զենքը, որքան ավելի ճիշտ է նպատակամղված, այնքան նա հաղթական է: Յուրաքանչյուր ժողովրդի՝ իր լեզվի նկատմամբ ունեցած վերաբերմունքով որոշվում է նրա զարգացածության մակարդակը: Խոսելով գրվածքի և հնչման միջև եղած տարբերության մասին՝ Հ. Աճառյանը գրում է. «Երբ գրվածքի և հնչման մեջ եղած տարբերությունը շատ խոշոր չէ, տանելի է, իսկ երբ նրանք շատ մեծ չափերի են հասնում, պատճառ են դառնում մեծամեծ դժվարությունների: Պահպանողական ժողովուրդները տանում են այն բոլոր դժվարությունները, ճիշտ այնպես, ինչպես ֆեոդալական երկրներում ճորտը տանում է ազնվականների բռնակալությունը: Բայց երբ մարդիկ դառնում են ավելի ազատախոհ, սկսում են մտածել, թե հանուն ինչի՞ է այդ դժվարությունը, պահանջում են գրել այնպես, ինչպես հնչում են. ուղղագրական բարեփոխությունը օրվա հարց է դառնում» (24, էջ 86): Մեջբերումն ինքնանպատակ չէ. լեզվաշինության, լեզվական քաղաքականության հարցերով զբաղվելը առավել շատ ազատախոհ, կուլտուրական ժողովրդի հատկությունն է, իսկ ոչ մի ժողովուրդ պահպանողական որակվել չի ուզում, առավել ևս՝ հայերը: Եթե Ա. Այտընյանը գրաբարի մահացման՝ «ավրվման» պատճառը համարում է «անվարժ ձեռք մ'ինկած ըլլալը, գրաբարի թերակատար ուսումը՝ զարդարուն կամ բարձր գրելու տենչանքին հետ միացած», որի պատճառով ստեղծվել էր «նորանշան բռնազբոս լեզու մը», ապա մերօրյա հայերենը նման վախճանի կհասնի **թերակատար ուսման, անտարբերության** և մայրենի լեզվին չտիրապետելով հանդերձ **մոդայիկ օտար լեզուների գործածության**-պատճառով: Ղ. Աղայանը Ավետիք Իսահակյանին գրած իր նամակներից մեկում արդարանում է. «Եղբայր սիրելիս, ...մենք մեր պարտքը դեպի մեր լեզուն բարձիթողի ենք արել: Բայց մենք, մի քանի ջահել ջհուլներս գիտությամբ գինու և քեփի ենք տալիս մեզ, որ մեր թերությունը չնկատեք» (17, էջ 8): Կուլտուրական ժողովուրդը աշխատում է «բարձիթողի չանել» կատարել իր պարտքը նաև լեզվի նկատմամբ, նկատում է իր թերությունը, իր լեզվի «թերությունը» սխալն ու շեղումը, և «գիտությամբ իրեն գինու և քեփի տալու» փոխարեն

«գիտությամբ», գիտակցորեն նորմավորում է իր լեզուն, կանոնակարգում:

Լեզվաշինական աշխատանքների արդյունքները կարող են օրենքի ուժ ստանալ. նշանակում է այստեղ մեծ է նորմավորման և լեզվաշինության աշխատանքներով զբաղվողների բարոյական պատասխանատվությունը: Մեծ զգուշություն է պահանջվում նման հարցեր լուծող պաշտոնական հաստատություններից, որպեսզի ոչ միայն չբացառվեն սխալներն ու բռնի միջամտությունները, այլև չճնշվեն անկաշկանդ լեզվաշինությունն ու լեզվաստեղծագործությունը: Լեզվի նորմավորումը, լեզվաշինությունը և լեզվաքաղաքականությունը փոխադարձաբար կապված են իրար հետ. հիմնաքարը լեզվական նորմն է, այսինքն գործող օրենքների, օրինաչափությունների ամբողջությունը: Լեզվաշինությունը լեզվի զարգացման ընթացքի այնպիսի միջամտությունն է, երբ կանխամտածված ձևով փոփոխվում են լեզվական ձևերը, ստեղծվում են նորերը՝ լեզվում ստեղծված բացը (բաց վանդակները) լրացնելու, այն կատարելագործելու նպատակով: Իսկ երբ լեզվական միջամտության նպատակը դառնում է լեզվի և նրա տարբերակային ձևերի փոխհարաբերությունների կարգավորումը, նրանց գործառումը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, լեզվի նորմավորման և լեզվաշինության ընդհանուր սկզբունքների մշակումն ու նրա ընթացքի կարգավորումը, արդեն գործում է լեզվաքաղաքականությունը: Այն իրականացվում է պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների կողմից: Սովորաբար լեզվի տարածման միջոցներն են գլխավորապես պետականությունը և խոսողների քանակը. հայերենը խոսողների քանակությամբ չի կարող տարածվել և «ուժեղանալ», այսչափով էլ կրկնապատկվում է պետականության, պետության դերը: Հայերենը ՀՀ-ի պետական լեզուն է, հետևաբար նրա ազգային քաղաքականության բաղկացուցիչ մասը, նրա հոգածության առարկան: Սա նշանակում է, որ հայերենի իմացությունը պարտադիր է ՀՀ-ի յուրաքանչյուր քաղաքացու համար, կյանքի բոլոր ոլորտների ու օղակների մեջ հայերենը մուծելը անհրաժեշտություն է: Պետական հովանավորություն լեզվի նկատմամբ նշանակում է լեզվաշինական աշխատանքների իրականացում, նրանով գրականության, բառարանների, քերականությունների հրատարակում,

այն կրող հանրության տնտեսական, սոցիալական, մշակութային ու քաղաքական տարբեր գործոնների միջոցով հայերենի հեղինակության բարձրացում, լեզվաքաղաքականության բարոյական ու գիտական սկզբունքների մշակում ու կիրառություն: Տարբերակային ձևերի ընտրության հարցում ևս մեծ է լեզվաքաղաքականության դերը: Մասնավորապես կարևոր է վերաբերմունքը բարբառների նկատմամբ. պետք է փրկել բարբառները, բայց գրական լեզուն էլ բարբառներից պետք է փրկել... Անհեռատես, ոչ գիտական լեզվաքաղաքականությունը կարող է հանգեցնել ոչ ցանկալի արդյունքների. ճիշտ լեզվաքաղաքականությունը թելադրում է **ոչ թե լեզվի մյուս գոյաձևերի բռնի վերացում, այլ դրանցից անկախ գրական լեզվի կատարյալ իմացության ապահովում:**

Ճիշտ լեզվաքաղաքականությունը հատկապես հայ ժողովրդին է պետք, որ, լինելով «փոքր», չհայտնվի ոչ մի գիտական, բարոյական օրենքով չարդարացված «մեկ լեզվի տեսության» ոլորտում և լեզուների մրցակցության և երկլեզվության, եռալեզվության խորացման պայմաններում չանտեսվի, չմեկուսանա: **Հայ ժողովուրդը իր լեզուն կիրառելու, զարգացնելու, պետականորեն հովանավորելու իրավունք ունի, հայոց լեզուն էլ իրեն կրող հանրության կողմից ազատ ու անկաշկանդ գործածվելու իրավունք ունի. այն աշխարհի լեզուների շարքում գոյության ու զարգացման հավասար իրավունքներ ունի...**

Մեր օրերում հայոց լեզվի կանոնարկման, նորմավորման համար ՀՀ Կառավարությունը իրականացնում է հստակ քաղաքականություն, որի լավագույն վկայությունը լեզվի մասին օրենքի հռչակումն է, որով սահմանվում են ՀՀ լեզվական քաղաքականության հիմնական դրույթները, կարգավորվում են լեզվավիճակը, պետական իշխանության և կառավարման մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների ու կազմակերպությունների լեզվահարաբերությունները (տես՝ 115, էջ 298-301):

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենքների շարքում նաև ՀՀ ուսումնական հաստատություններում առարկաների հայերեն դասավանդումը և հայոց լեզվից ընդունելության քննությունը (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի) չապահովելը, գործավարությունը ոչ հայերեն վարելը, ցուցանակները,

ձևաթղթերը, գովազդները և այլն ոչ հայերեն ձևավորելը, պաշտոնատար անձանց՝ հայերենին չտիրապետելը առաջացնում են տուգանքների համապատասխան նշանակում... (115, էջ 307-310):

Լեզուն ունի իր սահմանները, իր օրենքները, և կուլտուրական ժողովուրդները օրինապահ են. մենք՝ հայերս, օրինազանց չենք ուզում լինել

Լեզվաշինության և լեզվաքաղաքականության վերջնաքարն էլի լեզվի նորմավորումն է, այսինքն՝ լեզվական միջոցների կարգավորումը, տարբերակային ձևերի, զուգաձևությունների գնահատումն ու ընտրությունը, ինչպես նաև գրության, արտասանության և քերականության կանոնների շարադրումը բառարանների, նորմատիվ քերականությունների, դասագրքերի ու ձեռնարկների, ուղեցույցների ու տեղեկատուների ձևով, մի խոսքով՝ լեզվի օրինակարգավորումը՝ կոդավորումը, որը կարող է փոփոխություն առաջացնել լեզվական նորմում, և լեզվական նորմը այ՛ս չափով կնորացվի. ա՛յս չափով լեզվի զարգացում կարծանագրվի...

Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. **Աբեղյան Մ.**, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:
2. **Աբրահամյան Ա.**, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953:
3. **Աբրահամյան Ա.**, Բայը ժամանակակից հայերենում, գիրք 1, Երևան, 1962:
4. **Աբրահամյան Ա.**, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976:
5. **Աբրահամյան Ս.**, Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1965:
6. **Աբրահամյան Ս.**, Աշակերտի խոսքի զարգացումը, Երևան, 1973:
7 **Աբրահամյան Ս.**, Ժամանակակից գրական հայերեն, Երևան, 1981:
8. **Աբրահամյան Ս.**, Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1969:
9. **Աբրահամյան Ս.**, **Պառնասյան Ն.**, **Օհանյան Հ.**, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Երևան, 1974:
10. Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Բ, Երևան, 1975:
11. **Աղայան է.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976:
12. **Աղայան է.**, Լեզվի գոյության տարբերակային ձևերը, Բանբեր Երևանի համալսարանի, 2, 1973:
13. **Աղայան է.**, **Բարսեղյան Հ.**, Հայոց լեզու (դասագիրք 5-6-րդ դասարանների համար), Երևան, 1992:
14. **Աղայան է.**, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967:
15. **Աղայան է.**, Լեզվաբանական հետազոտություններ, Երևան, 2003:
16. **Աղայան է.**, Լեզվաբանության հիմունքներ, Երևան, 1987:
17. **Աղայան Ղ.**, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1963:
18. **Աղաջանյան Խ.**, Նույնանունների և դարձվածքների համառոտ բացատրական բառարան, Երևան, 1989:
19. **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի (Համեմատությամբ 562 լեզուների), հ 1, Երևան, 1952:
20. **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի (Ներածություն), Երևան, 1955:
21. **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ 3, Երևան, 1957:

22. **Աճառյան Հ.** Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 4, Ա. գիրք, Երևան, 1959:
23. **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 4, Բ գիրք, Երևան, 1961:
24. **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Երևան, 1971:
25. **Այտընյան Ա.**, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, 1987:
26. **Առաքելյան Վ.**, Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Երևան, 1981:
27. **Առաքելյան Վ.**, Հայերենի շարահյուսություն, հ 1-2, 1958-1964:
28. **Առաքելյան Վ.**, Բայասեռերը գրաբարի տարբեր խոնարհումների առնչությամբ, Պատմա-բանասիրական հանդես, 1, 1968:
29. **Ասատրյան Մ.**, Բայի սեռերը ժամանակակից հայերենում, Երևան, 1959:
30. **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա, Երևան, 1970:
31. **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Բ, Երևան, 1973:
32. **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Գ, Երևան, 1977:
33. **Ասատրյան Մ.**, Ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն, Երևան, 2002:
34. **Ավագյան Մ.**, Խոհեր մայրենի լեզվի մասին, Երևան, 1988:
35. **Ավետիսյան Տ.**, Հայկական ազգանուն, Երևան, 1987:
36. **Ավետիսյան Յու.**, Արևմտահայ բանաստեղծության լեզուն, Երևան, 2002:
37. **Բարսեղյան Հ.**, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Երևան, 1953:
38. **Բարսեղյան Հ.**, Հատուկ անուն, (Տեսական-նկարագրական ակնարկ), Երևան, 1964:
39. **Բարսեղյան Հ.**, Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Երևան, 1980:
40. **Բեդիրյան Պ.**, Հայերեն շրջասությունների բառարան, Սբ. էջմիածին, 2002:
41. **Բեդիրյան Պ.**, Հայ լեզուն և մեր խոսքը, Երևան, 1999:
42. **Գալստյան Ս.**, Հայոց լեզու, Երևան, 1968:
43. **Գևորգյան Ե.**, Ժամանակակից հայոց լեզվի համանունների բառարան, Երևան, 1978:
44. **Գևորգյան Ե.**, Բառաքերականական համանունները ժամանակակից հայերենում, Երևան, 1983:

45. **Գյուրջինյան Դ.** Անուն խոսքի մասերի թվի կարգը արդի հայերենում (Քերականական բառարան-տեղեկատու), Երևան, 2005:
46. **Գյուրջինյան Դ.**, Մեծատա՞ռ, թե՞ փոքրատառ (Հայերեն բառարան-տեղեկատու), Երևան, 2001:
47 **Գյուրջինյան Դ.**, Հայերեն բառարան-տեղեկատու, Միասին, անջատ կամ գծիկով գրվող բառեր, Երևան, 2001:
48. **Եզեկյան Լ.**, Ոճագիտություն, Երևան, 2003:
49. **Եզեկյան Լ.**, Հայոց լեզու, Երևան, 2005:
50. **Զաքարյան Հ.**, Կետադրական բառարան, Երևան, 1988:
51. **Էլոյան Ս.**, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Երևան, 2002:
52. **Իշխանյան Ռ.**, Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1971:
53. **Իշխանյան Ռ.**, Նոր գրական հայերենը XVII-XVIII դարերում, Երևան, 1979:
54. **Իշխանյան Ռ.**, Մայրենին, Երևան, 1986:
55. Ժամանակակից հայերեն խոսակցական լեզուն, Երևան, 1981:
56. Ժամանակից հայոց լեզվի բացատրական բառարան (ԺՀԼԲԲ), 1-4 հ, 1969- 1981, Երևան:
57 Լեզվի և ոճի հարցեր, III, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1975:
58. Լեզվի և ոճի հարցեր, IV, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1977:
59. **Խլղաթյան Ֆ.**, Բառարան-տեղեկատու, Երևան, 1982:
60. **Խլղաթյան Ֆ.**, Հայոց լեզու, (5), Երևան, 2000:
61. **Խլղաթյան Ֆ.**, Հայոց լեզու (6), Երևան, 1999:
62. **Խլղաթյան Ֆ.**, Ոճաբանական բառարան, Երևան, 2000:
63. **Հախվերդյան Լ.**, Զրույցներ լեզվի մասին, Երևան, 1993:
64. Հայերենագիտությունը 60 տարում, Երևան, 1981:
65. Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում, Երևան, 1973:
66. Հայոց լեզվի կանոններ (Գերատեսչական նորմատիվ ակտեր), Երևան, 2004:
67 Հայոց լեզվի կառուցվածքը, Երևան, 1975:
68. Հայոց լեզվի պատմական քերականություն, ի. 2, Երևան, 1975:
69. Հայոց լեզվի պատմության հարցեր, 3, Երևան, 1991:
70. **Հարությունյան Հ.**, Հետաքրքրաշարժ հայոց լեզու, Երևան, 1979:
71. **Հարությունյան Հ.**, Կառավարման տարբերակներ, Բանբեր Երևանի համալսարանի, 2, 1987:

72. **Հարությունյան Հ.**, Կառավարումը ժամանակակից հայերենում, Երևան, 1683:
73. **Հյուբշման Հ.**, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1990:
74. **Ղազարյան Ս.**, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1981:
75. **Ղարիբյան Ա.**, Հայոց լեզվի դասագիրք, Երևան, 1952:
76. **Ղափանցյան Գ.**, Ընդհանուր լեզվաբանություն, հ. 1, Յերեվան, 1939:
77. **Մալխասեանց Ս.**, Հայերէն բացատրական բառարան (ՀԲԲ), հ 1-4, Երեւան, 1944-1945 թ.թ.:
78. **Մարգարյան Ալ.**, Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966:
79. **Մարգարյան Ալ.**, Հայերեն դժվարհասկանալի բառերի բացատրական բառարան, Երևան, 1998:
80. **Մարգարյան Ալ.**, Հայոց լեզվի քերականություն (Ձևաբանություն), Երևան, 2004:
81. **Մարության Ա.**, Հայոց լեզվի ոճաբանություն, Երևան, 2000:
82. **Մեյե Ա.,** Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1978:
83. **Մեյթիխանյան Փ.**, Հայերեն ուղղագրական նոր բառարան, Երևան, 2005:
84. **Մուրվալյան Ա.**, Բայի սեռերը գրական նոր հայերենում, Պատմա-բանասիրական հանդես, 3, 1958:
85. **Մուրվալյան Ա.**, Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն, Երևան, 1959:
86. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1 (Ա-Կ), Երևան, 1979:
87. **Շալունց Ռ.**, Արդի հայերենի համանունների դպրոցական բառարան, Երևան, 1980:
88. **Պալյան Տ.**, Արդի հայերենի սակավադեպ բառերի առձեռն բացատրական բառարան, Երևան, 2004:
89. **Պապոյան Արտ.**, Պարույր Սևակի աշխատությունների և թարգմանությունների բառարան, Երևան, 1986:
90. **Պապոյան Արտ.**, Պարույր Սևակի չափածոյի բառարան, հ 1-2, Երևան, 1981-1982:
91. **Պառնասյան Ն.**, Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1970:
92. **Պառնասյան Ն.**, Քերականական համանունները ժամանակակից հայերենում, Երևան, 1979:
93. **Պետրոսյան Հ.**, Գոյականի թվի կարգը հայերենում, Երևան, 1972:
94. **Պետրոսյան Հ.**, Ակնարկներ հայերենի պատմական ձևաբանության, Երևան, 1976:

95. **Պետրոսյան Հ.**, Հայերենագիտական բառարան, Երևան, 1987:
96. **Պետրոսյան Հ., Գալստյան Ս., Ղարագյուլյան Թ.**, Լեզվաբանական բառարան, Երևան, 1975:
97 **Պողոսյան Պ.**, Ոճագիտական ըմբռնումների ծագումն ու զարգացումը Հին Հունաստանում և Հռոմում, Երևան, 1975:
98. **Ջահուկյան Գ., Աղայան Է, Առաքելյան Վ., Քոսյան Վ.**, Հայոց լեզու, 1-ին մաս, Ա պրակ, Երևան, 1980:
99. **Ջահուկյան Գ.**, Գրաբարի քերականության պատմություն (XVII–XIX դդ.), Երևան, 1974:
100. **Ջահուկյան Գ.**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974:
101. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969:
102. **Ջահուկյան Գ.**, Հայոց լեզվի պատմություն (նախագրային շրջան), Երևան, 1987:
103. **Ջահուկյան Գ.** Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Երևան, 1959:
104. **Ջուհարյան Թ.**, Հայոց լեզվի մեթոդիկա, Գիրք առաջին, Երևան, 1978:
105. **Սարգսյան Ա.**, Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ (Ջուգադրական-տիպաբանական քննություն), Երևան, 1985:
106. **Սաքապետոյան Ռ.**, Արևմտահայերենի դասագիրք, Երևան, 2006:
107 Սաֆարյան Տ., Իմաստային կրկնասեռությունը արդի հայերենում, Բանբեր Երևանի համալսարանի, 3, 2003:
108. **Սաֆարյան Տ.**, Կրկնասեռության քերականական դրսևորումները արդի հայերենում, Բանբեր Երևանի համալսարանի, 1, 2005:
109. **Սևակ Գ.**, Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, Երևան, 1948:
110. **Սևակ Գ.**, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955:
111. **Սևակ Գ.**, Ժամանակակից հայոց լեզվի տեսություն, Երևան, 1939:
112. **Սևակ Պ.**, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1974:
113. **Սուքիասյան Ա., Սուքիասյան Ք.**, Արդի հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարան, Երևան, 2002:
114. Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու, Երևան, 1988:
115. Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու (1956 – 2006), Երևան, 2006:
116. Տերմինաբանության և խոսքի մշակույթի հարցեր, 1, Երևան, 1976:

117. Տերմինաբանության և խոսքի մակույթի հարցեր, 2, Երևան, 1987:
118. **Քոսյան Վ.**, Բառակապակցական կաղապարների զարգացումը հայերենում, Երևան, 1990:
119. **Քոսյան Վ.**, ժամանակակից հայերենի բառակապակցությունները , Երևան, 1975:
120. **Бельчиков Ю. А.**, Стилистика и культура речи, Москва, 2002.
121. **Введенская Л. А., Павлова Л. Г., Кашаева Е. Ю.**, Русский язык и культура речи, Ростов-на-Дону, 2003.
122. **Введенская Л. А., Павлова Л. Г., Кашаева Е. Ю.**, Русский язык и культура речи, Ростов-на-Дону, 2004.
123. **Введенская Л. А., Пономарева А. М.**, Русский язык: культура речи, текст, функциональные стили, редактирование, Москва Ростов-на-Дону, 2003.
124. **Гречко В. А.**, Теория языкознание, Москва, 2003.
125. **Ипполитова Н. А., Князева О. Ю., Савова М. Р.**, Русский язык и культура речи, Москва, 2005.
126. Русский язык и культура речи, Москва, 2004.
127. Языкознание, Большой энциклопедический словарь, Москва, 2000.

ՋԱՐԻԿ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՋԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՆՈՐՄ ԵՎ ԽՈՍՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՐՑԵՐ

Պատվեր՝ 62: Տպաքանակ՝ 200:
Չափսը՝ 60x84/16: 28.25 տպ. մամուլ:

Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում